



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



5186

9(47.925)

U-38







ԶԷՅԹՈՒՆՑԻ (- Աեհրաբյան ԿԵ.)

9(47.925)

U-38 պր.

# ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԵՆ

Ե Ի

## ՆԵՐԿԱՅԷՆ



Ա. ԵՒ Բ. ՄԱՍ ԼԻԱԿԱՏԱՐ

1009  
394102

4036

12004

Սեփականութիւն Հեղինակին



1911





Ջ Է Յ Թ Ո Ի Ն Յ Ի

(= ԱԵՆԿՐԵԿՅԱՅ ՎՃԱՅԱՐՔԱՆԸ)

ՋԷՅԹՈՒՆԻ ԱՆՅԵԱԼԷՆ

ԵՒ

ՆԵՐԿԱՅԷՆ

Ա. Բ. Մ Ա. Ս ԼԻՍԿԱՏՍԻՔ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՂԻՆԱԿ Ս. ԲԻԻՐԱՏ  
Կ. Պոլիս. Սուլթանի Համամ Մօլա Թառք

1911

ԵՐԿՈՒ ԽՕԾԻ

Զեյթունի Անցեալէն եւ ներկայէն աշխատասիրութեամբ Ա. Տպագրութիւնը աւարտած ըլլալով, ձեռնարկեցի Բ. Տպագրութեան :

1910 Դեկտեմբեր 27

ԶԷՅԹՈՒՆՅԻ



-Յայտնի բարեբաւ Մ. Է. Խեբեանի նուիրած 1000 ոսկի դուճարով եւ Տանն Արևիկոյ վ.ե. Տ. Տ. Սահակ Բ. Կարողիկոսին ձեռնով հոյաւելն բաղնիք մը կառուցուած է բաղաճին կեդրոնը :

# Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

## Դ Ի Ր Ք Ե Ի Ս Ա Հ Մ Ա Ն Ք Զ Է Յ Թ Ո Ւ Ն Ի

Զէյթուն Միջերկրական Ծովու Հայոց (Սլէքսանդրէաի) ծոցէն 46 ժամ հեռաւորութեամբ և ծովուն երեսէն 3,500 սաք բարձրութեամբ լեռնային երկիր մ'է, Մարաշի հիւսիւսային արեւմտեան կողմը, և կիլիկիոյ մայրաքաղաք Սսի արեւելեան հիւսիւսային կողմը, 36 ժամ հեռու, Հալէպի կուսակալութեան տակ կ'իյնայ: Զէյթունի բարձրաւունդակի գլխաւոր լեռներն են, հիւսիսէն Չըրըզ, Պէրիտ, Սաղ-տալ (աջ թև), Աղաջ-առը և Եէտի-գարտաշ (Եօթն եղբայրներ), արեւելքէն՝ Պէրզի'ն կաշ, Մալըլը և Սւազ, հարաւէն՝ Կիւրէտի'ն (կրատուն) լեռը համանուն բերդով մը, արեւմուտքէն՝ Սօլախ-տէտէ լեռը:

Այս լեռանց մէջ նշանաւոր է Պէրիտիւր բարձրութեամբը, իսկ Չըրըզ, որ Զրիկի աղաւաղութիւնն է, իւր լանջի վրայ ունեցած վաքրիկ ալբիւրի մը պատճառաւ այսպէս կոչուած է և չունի իւր վրայ ու է բուսաբերութիւն, այլ լերկ ապառած մ'է, ասոր համար ի նուձն Այրած լեռ կը կոչուի եղեր: Սորա հատած տեղը, ոչ տեղակական բարբառով Քերծէր (քարծայր) կը կոչուի, կը բնակին 30 տուն Հայեր:

Այս լեռներ, որք բնական պարիսպ մը ձեւացուցած են Զէյթունի շուրջը անառիկ երկրի մը հանգամանքը տուած են անոր, ժողովուրդն ալ օգուտ քաղած է միշտ իւր դիրքի այս առաւելութենէն, բայց և այնպէս՝ բաղդատմամբ Հաճի'նի՝ Զէյթունի դիրքն այնքան անառիկ չէ:

Զէյթուն առանձինն 1600 տուն կը պարունակէ:

ամբողջովին հայ (24 տուն միայն թուրքեր կային, որոնք 1896ին գաղթեցին), իսկ ամբողջ Չէյթուների գաւառակը, որ ընդամենը 32 հայ և թուրք գիւղերէ կը բաղկանայ, ունի 21,500 բնակիչ, յորոց 18,500ը հայ, մնացեալը թուրք: Գլխաւոր գիւղերն են Ա. ր. և գ. ի. ն., Ա. ւ. ա. գ. կ. ա. լ.; Ֆ. ր. ն. ո. ւ. ղ (տե՛ս «Յաւելուածներ»):

Սոյն գաւառակին սահմանը հիւսիսէն կը հասնի մինչև Ե. ր. ի. ճ. է. կ. գիւղը կամ է. ս. է. ն. - տ. է. ր. է. - պ. ո. ղ. ա. զ. ը (Չէյթուներէն 10 ժամ հեռաւորութեամբ), արեւելքէն՝ Մ. ա. լ. ա. թ. ճ. ա. տաճկաբնակ գիւղը՝ 9 ժամ հեռու, հարաւէն Արեգիսի Ե. կ. ա. ն. և ա. ն. ք. հայաբնակ գիւղը՝ նոյնպէս 9 ժամ հեռու, արեւմուտքէն՝ Չ. ո. ւ. ք. ո. ւ. ր. - հ. ի. ս. ա. ր. (հաշիւրէն կանչի) տաճկաբնակ գիւղը՝ 10 ժամ հեռու:

### ԿԼԻՄԱՅ

Չէյթուների կլիման բարեխառն է և ամողջարար (ձմեռը քիչ ցուրտ, ամառը՝ մեղմ) և թէև տեղ տեղ բարձր ու ցած դիրքերուն համեմատ կը տարբերի, սակայն ընդհանրապէս օգտակար և կաղզուերիչ է, այնպէս որ ժողովուրդը ամառ ատեն առ հասարակ տանիքներու վրայ և այլ բացօդեայ տեղեր կը գիշերէ:

### ԼԵՌՆԵՐ

Բաց ի վերոյիշեալ լեռներէն՝ Չէյթուների շուրջը կան բազմաթիւ մանր մունր լեռներ ալ՝ մեծ մասամբ միւսներէն ձեւացած, յիշենք հետեւեալները.

Ա. Ի. Ա. Չ. - Կ. է. Տ. Ի. Կ. Ի, որ Պէրզինկայի ետեւը կիրճ մը կը ձեւացնէ:

ՉԱ. Թ. ՕԼ. - Ք. ՕՐ (չաթալ քար, երկճեղ) Սօլախ-տէտէի վերջացած ծայրը:

ՍԱ. ԽՕՐ. - է. Գ. է. Չաքարի այգի):

Ա. Ն. Կ. Ը. Չ. Ո. Կ., Ք. է. Շ. Ի. Շ. - ՏԱ. Ղ., ՂԱ. Ն. Տ. Ը. Լ., ՉԱ. Կ. Տ. ՕՐ., ԿԱ. Ր. -

ՄԸՐ, ՇԷՆՊԷԿ և ԲԱՐՕԿՍՕՂ, սրածայր լեռ մը, որոյ գագաթէն ճանապարհ մը կայ դէպ ի Մարաշ:

ԴՐԱԽՏԻԿ, որ Ֆրնուզի Ս. Կարապետի վանքին հիւսիսային արեւմտեան կողմը կը գտնուի՝ Չ ժամ հեռաւորութեամբ: Արդարեւ ճշմարիտ դրախտ մը՝ իւր դալարագեղ բոյսերով և քաղցրաբոյր ծաղիկներով, զորըս կը վայելեն տեղացիք ամառն այն լեռան գլուխը բարձրանալով իրենց հօտերով և արջառներով:

ԱՂԱԼԸ, ԱՍՎԽԼՐԳ, սրագագաթ լեռ մը, ուրկէց ճանապարհ կ'անցնի դէպ ի Մարաշ:

ՍԱՂԻՐ, փոքր լեռ մը արեւելեան կողմէն, ուսկից կուգայ միշտ թշնամուսն բանակը Չէյթունի վրայ:

Սոյն լեռանց մէջ կան բազմաթիւ ու կարեւոր քարայրներ, իսկ իրենց ստորոտները գեղեցիկ արօտատեղիներ, ինչպէս ՖԼՆՏԸԳ, ԽԼՆԸԽԷՕԶ, ԷԼԼԷԶ-ՕՂԼՈՒ, ԳԱՆԿԸԼ-ԱԼԱՂԸ, ԳՕՐԳՄԱԶ, ԱԼԱ-ԶԱՅԸՐ, ՉԱՎՏՕՐ՝ եժ ու փոքր մարգագետիններ:

Ասանց մօտ կը գտնուի նշանաւոր Ս ի լ ի ւ կ լ ի ւ կ է լ ր (աղբուկի լիճ):

### ԳԵՏԵՐ

ՇՈՒՂՈՒՐ, սր՝ Պէրիտ լեռան ստորոտէն հասող ջրերէն կազմուելով՝ Չէյթունի արեւելեան կողմէն կ'անցնի և կը հոսի դէպի հարաւ՝ սեւ աղբիւրն ալ մէջը ունենալով, ասոր վրայ, բաց ի միւս կամուրջներէն, Չէյթունի սահմանին մէջ կայ երկու կամուրջ: Մին կ'արսի կամուրջ (ՅՅ մէթր բարձրութեամբ), զոր Պալճեանք շէնել տուած են, կը տանի Եալուպեան թաղը: Շուղուրին տարածութիւնը թէեւ խիստ քիչ է, սակայն գարնան եղանակին անկարելի է անցնիլ այս գետակէն առանց կամուրջի, զոր տեղացիք կ'անտարոյ կ'անւանեն:

ՉՈՐ ԳԵՏԱԿ, որ Ս ա ղ - ա ղ ր ր շերան աղբիւրնե-  
րէն ձեւացած է, Պերզընկա շերան սասորտի ձորէն հո-  
սելով, հիւսիսէն դէպի հարաւ կ'երթայ և ապա յարեւ-  
մուտս խոտորելով, կը միանայ Ծուղուր գետին հետ,  
որով Չէյթուէր թերակղզի մը ձեւ կը ստանայ: Չոր  
գետակին վրան ալ շինուած է երեք կամուրջ՝ Պ ա ղ -  
ա ղ ր ր ւ ր ր կամուրջ, Ս. Պ օ ղ ո ս - Պ ե տ ր ո ս ր կա-  
մուրջ, Կ ս ա ո ր ա ծ ր ձորի կամուրջ:

ՉԱՀԱՆ՝ Չէյթուէրի հարաւային արեւելեան կողմը  
կը գտնուի, անկէ հինգ ժամ հեռաւորութեամբ, այս գե-  
տը օկիղբ կ'առնու Էլպիստանէն (Էպլէսթէյն), որ Չէյ-  
թուէրի հիւսիսային արեւմտեան կողմն է:

ԱՆՏՕԼՊ՝ Չէյթուէրի հարաւային արեւմտեան կողմը  
2 ժամ հեռաւորութեամբ:

ՏԱԼԱԽՆՆՁԸ ՉՈՐ, արեւմտեան կողմը 8 վայրկեան  
հեռու:

ԹԷԹԻՐ, 8 ժամ հեռու:

ՍՈՒ-ՉԱԹԸ, 6 ժամ հեռու:

ԱՆԻ ՉՈՐ, 3 ժամ հեռու:

Առքա՝ Ծուղուրի և Ֆրնուղի գետակին հետ միասին  
դէպի հարաւ հասելով՝ կը միանան Ջահան գետին հետ:

### ԱՂԲԻԻՐՆԵՐ

Նշանաւոր է Պ օ ղ - ա ղ ր ր ր (պաղ աղբիւր) կոչ-  
ւածը, որ իւր սնուանը համեմատ խիտ պաղ է, այն-  
պէս որ ամբան և զանակին իսկ չի կրնար մէկը երկար  
ժամանակ թողուլ ձեռքը անոր մէջ: Այս աղբիւրին  
չէնքը Գարա-Պօյաճի անուն մարաչցի գաղթական մը չի-  
նել սուած է մարմարիոնէ: Երեզ և դեղեցիկ քանդակ-  
ներով զարդարուն հսկայ կամարի մը երեք կամարակ-

(1) Չէյթուէրի նախակին գաղթականներուն մէջ կա-  
յին եան կարսեցիներ՝ որոնցմէ մնացած է այս անունը:

հերոսն մէջէն երեք բերանով կը հոսի ջուրը առատութեամբ :

ՓԱԼԹԵՆՅ ԱՂԲԻԻՐ , որ կը դանուի Ս . Աստուածածնայ վանքին մօտ . ջուրը խիստ պօղ ու առատ է և մարտեցուցիչ յատկութիւն մ'ունի՝ ինչպէս վանքի մէջի եւ դրսի ուրիշ աղբիւրներու ջուրը :

ՆԱՀԱՏԱԿ ԱՂԲԻԻՐ . սորա մօտ ժամանակաւ Յակոբ անուն մարտչի կօշկակար մը սպաննուած է Ի պիշ անուն միւսիւլմանի մը ձեռամբ , որը վախնալով զէյթունց վրէժխնդրութենէն՝ խոյս տուած է Մարաշայս պատճառով նահատակ աղբիւր կոչած են այս աղբիւրը , որ կարսի կամուրջին և Չէյթունի մէջտեղն է :

Այ ԱՂԲԻԻՐ՝ կէս ժամ հեռու քաղաքէն դէպի արեւմուտք . այստեղ կուգան զէյթունցիք զքօսանքի համար , եւ աշուղները նուազարաններով կ'երգեն իրենց հերոսներու քաջագործութիւնները : Ս ու ս - ա զ բ ը ը (սօսի աղբիւր)՝ արեւմտեան հիւսիս մէկ ժամ հեռու , ունի առատ ջուր , այնչափ ցուրտ՝ որ մէջը դրուած խաղողը կէս ժամէն կը ճաթաթի ամբան մէջ իսկ : Այ բ ա ն բ ու ն ա բ ը (Տ ժամ հեռու , Պէրիտ լեյան ստորտար , դէպ հիւսիս) , որոյ ջուրը կաթի նման սպիտակ է ու փրփրուն : Ասոնցմէ զատ նշանաւոր է եւ Խ է ա տ - ա զ բ ը ը (Ա) :

ԵՏԻ-ԳԱՐՏԱՇ (եօթն կղբայր)՝ համանուն լեռան ստորտէն եօթն ակէ կը բխի և անկէ առնուած է իւր անունը : Ասոնք կը միանան և Շուղուր գետակը կաղմելով՝ Չէյթունի քալէն կ'անցնին , սոցա տեսարանի

(Ա) Խէատ Ուլնիոյ բարբառով կը նշանակէ խատուտիկ , պիսակաւոր , աղբիւրը այսպէս կոչուած է իւր մէջ դանուած խատուտիկ խիճերուն պատճառաւ . թուրքերէն եւս կ'ըսուի Ալա-բունար , որ նոյն նշանակութիւնն ունի :

գեղեցկութիւնը հրապուրելով աշուղները՝ հետեւեալ տողերը ներշնչած է անոնց. ցաւալի է, որ թուրք լեզուաւ երգած են(Ա) :

## 1.

Հէր գոյագտան սուլուն ագար .  
Իմա կէյիքլէրին պագար .  
Պայթարան, զիւմպիւլիւն գոգար .  
Խօշ սէֆալը պաշըն, Պ է ր ի տ :

## 2.

Ուռ քէքլիկ էօթէր պաշընտան .  
Քիմսէ պիլմէզ եաշընտան .  
Տէմիր քէսէրլէր թաշընտան .  
Քիսպի քեարտըր իշին, Պ է ր ի տ :

## 3.

Սաղ տալընտա Նէտի գարտաշ .  
Ճիւհէրտէն օլուր տէմիր թաշ .  
Գար սուվալը կէօսթէրին պաշ .  
Էրճիաստըր էշին Պ է ր ի տ :

## 4.

Մատէնլէրէ կիրէնլէրին ,  
Միւրատլարա էրէնլէրին ,  
Թիփի, եաղմուր, պօրալարըն ,  
Նէ պէլալը գըշըն, Պ է ր ի տ :

## 5.

Աշըգ օլմուշըմ իւնիւնտէն .  
Քիմսէ պիլմէյօր սիննինկտէն .  
Հաղրէթի Ստէմ, Նուհ կիւնիւնտէն .  
Հիշ պիլինմէզ եաշըն, Պ է ր ի տ :

(Ա) Այս և հետեւեալ բոլոր թուրքերէն ստանաւորները հայերէնի թարգաններ է մեր բարեկամներէն մին՝ Հ. Ա., որու անունը անյարմար կը գտնենք առաջին և որուն կը յայտնենք մեր սրտագին շնորհակալիքը :



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1.

Ակներէդ ջրեր կը հոսեն .  
Եզնիկներդ մեծ մեծ՝ չորս կողմ կը դիտեն .  
Պայթարան , սմբուլ կը քուրեն .  
Հեշտալի է գլուխդ , Պէրիտ :

2.

Ուռ կաքաւը կ'երգէ սարերէդ ,  
Անձանօթ ենք տարիներէդ , դարերէդ .  
Առատ երկաթ կը հանեն քու քարերէդ .  
Ամբողջ շահ է գործդ , Պէրիտ :

3.

Քու աջ թեւդ է Եօթն-կղբայր .  
Հանքերէդ կ'ելլէ երկաթ , քար .  
Զիւնով պատած է միշտ քու սար .  
Էրճիաան է նմանդ , Պէրիտ :

4.

Հանքերուդ մէջ մանողներուն ,  
Նպատակի հասնողներուն ,  
Մրրիկդ ու փուքդ , անձրեւդ ու ձիւն ,  
Ի՛նչ փորձանք է ձմեռդ , Պէրիտ :

5.

Աշուղ ըրեր է զիս քու մեծ անուն .  
Քու տարիքդ ծանօթ չէ մէկուն .  
Կայիր Ագամի , Նոյի օրերուն .  
Զհասկցուիր բնաւ տարիքդ , Պէրիտ :

Այս բանաստեղծութեամբ անմահացած Պէրիտ լե-  
րան վրայ՝ պայթարան , սարը-սիւն պիւլ-  
ներկիզ և այլ ազգի ազգի քաղցրարոյր ծաղիկ-  
ներէ գատ կը գանուի նաև կէյիկ կէօպէկի (միւշկ)  
կոչուած ծաղիկը , որոյ հոտը խիստ ախորժելի է , և փոր-  
ձով տեսնուած է , որ չորնալէն քսան տարի վերջն ալ

իւր հոտը կը պահէ : Ասոր ծաղիկին չորցածո մեյթ ընդ մերթ ընծայ կը զրկուի Երուսաղէմի պատրիարքին և Հալէպի կուսակալին :

Թէ այս և թէ Ծրնուզի լերանց վրայ մայիսի ամսուն կ'աճի նաև գօք (գաք, խաւքրժիլ բոււած բոյսը, որ իւր մէջտեղէն կուտայ ծիլ մը թթուաչ և ախորժահամ, որ մինչև մէկ կանգուն երկայնութիւն կ'ունենայ :

### ԿԵՆԴԱՆԻԹ ԵՒ ԹՌՉՈՒՆԹ

Ընտանի և վայրենի կենդանիներէն կը գանուին կով, ևզ, այծ, ձի, ջարի, էշ : Արեգնի մէջ ա՛յ ահագին մեծութեամբ շուներ : Լերանց մէջ՝ գայլ, արջ վարազ, կուզ, աղուէս, նապաստակ, երէ (եղջերու), էօշէկ (վարչակ-քաւթար), որուն մօրթը մինչև 2-3 հարիւր գահեկան կ'արժէ :

Գետերուն մէջ կան պատուական կարմրիւտ (կարմրախայտ), դեղին ուրա և օձաձուկ, նաև շնջրակ (ջրչուն) : Թռչնոց մէջ կայ սւաքէքլիք գեղեցիկ տեսակ կաքաւ մը որ միայն Պէրիտ լեռը (A) կը գանուի և սրմէ Պոլիս զրկուեցաւ Սուլթան Համիտին Տէտէ բաչայի ձեռքով : Կան նաև հասարակ կաքաւ, տաարակ, աղաւնի, սագ, սոխակ կուկիու (կկու) արծիւ, բաղէ, հոբօլ (ամբալ), բաղ, սարեակ, ագուա, մեղաւթաչուն, ճաղաով (ճայ ագուա), խրով, որ խայտ թռչուն մ'է (տօճկ, քէրքէղ), ճուճք եւն :

---

(A) Պէրիտ լեռը ուրիշ առաւելութիւն մ'ալ ունի, — անոր վրայ արածող կենդանեաց ակռաները կ'ոսկւզօժուին գարնան եղանակին :

ԲԵՐԲ ԵՒ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Զէյթուն թէև լեռնային և քարուտ սակայն իւր  
 փոքրատարած դաշտօրէից մէջ կ'արտադրէ շերամ, դո-  
 բնն, դարի, սապ, սիսեռ, լուրիա, սլոր, եգիպտացո-  
 բնն, քիւչնէ, շողգամ, գեանասինձօր, փաթաթէս,  
 բալկ, ճակնդեղ, դոսողխօտէր (աղատգեղ), ստեպղին,  
 պամնջան, խալող, որ մինչև 21 տեսակ կը համրուի  
 (ասոնց մէջ խիստ նշանաւոր է թ ա գ ա լ ո թ ի խ ա դ ող  
 կոչուածը, որ ընկուղի մեծութիւն ունի), այլ և այլ  
 տեսակ խնձորներ, որոնց մէջ մինչև 100 տրամ կչոող-  
 ներ կան, սալոր՝ հաւկթի մեծութեամբ, թուղ՝ մի քա-  
 նի տեսակ, դեղձ ու տանձ՝ շատ պատուական, նուռ,  
 սերկեւիլ, կեռաս, թութ, ընկուղ, աղտօր (սուժաղ),  
 սամարլ, ունկուժիղ, ալոճ, ձիթադտուլ՝ ախորժանամ,  
 նուշ, պիստակ, մորենի, շինկիրօր(1), վարունկ, ձմե-  
 րուկ, ասոնցմէ զատ կ'արտադրէ ընտիր ու պատուական  
 մեղրը, որ շատ անգամ հեռաւոր տեղեր կը զրկուի իր-  
 բեւ նուէր:

Ունի նաեւ վայրի ծառեր, լնչգէս խնկեկի, լու-  
 տունդրութիւնէ, ճագիկի, բաղիկնոց, մայրի, փիճի, գէ  
 (գիճի), բեւեկնի, կաղնի, թեղի, թընսի, աօ.ախ, մա-  
 թուղը, բարդի, ուռնի, սօսի, թմբի, մաղտաքի,  
 ճրրղը (ցրղի), փշտաի ևն: Բանջարանոցի ծաղկանց  
 մէջ նշանաւոր է սէհանը՝ կանանչագոյն ու մանիշակա-  
 գոյն խոշոր տերեւներով:

Ամէն բերքերուն մէջ խաղողը միայն առատ կ'ըլ-  
 լայ, յորմէ կը պատրաստուի ընտիր գինի, համիչ, պաս-  
 տեղ, բուփ, շարոց (սուճուխ), օղի ևն: Իսկ միւսները  
 նուազ քանակութեանչ արտադրուելուն՝ Զէյթուն պար-  
 տաւորուած է իւր անհրաժեշտ պէտքերը հոգալ ուրիշ

(1) Ալպիսթանցիք կը կոչեն աճուռ, մարաչցիք  
 խըթա:

տեղերէ . ցորենն ու գարին կը ստանան Ալպսթանէն ,  
Եարիուզէն ու Կօկիսօնէն :

Հանքերուն մէջ ունի միայն երկաթ՝ ամենաբնախիտ  
տեսակէն , զոր Պէրիտ լեռնէն կը հանեն նահապետական  
ձեւով և որով տեղացիք կը շինեն հրացան , ատրճա-  
նակ , սուր և այլեւայլ գործիքներ : Կը պատրաստեն  
նաև ընտիր վառօղ՝ գրեթէ անգլիականին հաւասար :  
Բազմատեսակ ներմուծութեանց փոխարէն՝ կ'արտադրու-  
նեն միայն չարմիչ , մեղր , սուփ , մորթ , երկաթ և տախ-  
տակ :

ԱՐ ՀԵՍՏԻ

Քլիսաւոր արհեստներն են այգեգործութիւն , խա-  
ղախորդութիւն , վառօղաշինութիւն , կօշկակարութիւն ,  
համետագործութիւն , ստաղձագործութիւն , որմնաշի-  
նութիւն , մսագործութիւն , ջորեպանութիւն , և գարբ-  
նութիւն :

ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉԻ ԶԷՅԹՈՒՆԻ

Աւանդութեամբ կ'ըսուի , թէ Զէյթուն ի սկզբան  
եօթն բնակիչ ունի եղեր(1) (բնիկ տեղացիները՝ յոյն) :  
Այդ հայերը կառուցեր են Ս . Լուսաւորիչ անուն մի մա-  
տուռ յանուն նախնին Լուսաւորիչին Բարգողիմէի . յետ  
ժամանակաց՝ սորայ վրայ կառուցուեցաւ արդի Ս . Գրի-  
գոր Լուսաւորիչ անուամբ եկեղեցին : Այս փոքր հաս-  
ւածին վրայ տակաւ կ'աւելնան մեծաւ մասամբ ուլնե-  
ցիներ և նոյնպէս Անիէն գաղթող շէրիբձօկցիները , որոց  
նախկին բնավայրն Շէրիբձօկ(2) ամայի է այսօր և որոնք

(1) այս եօթն տուն հայերը կը կարծուի թէ Եղե-  
սիայէն գաղթած են Զէյթուն :

(2) Ասոր նախկին անունը մեզի յայտնի չէ . երբոր  
գաղթականներ Անիէն եկան , Շէրիբձօկ անունը ըտա-  
ցաւ . Շէրիբձօկի առջև կը գանուի ձոր մը , որ կը կոչ-  
ուի Անի-ձիւր որով կ'ապացուցուի այն տեղի հայոց  
Անիէն գաղթած ըլլալու աւանդութիւնը :

բռնակալներու ճնշումէն ներդուած կը թողուն իրենց ծննդավայրն և կը հաստատուին Չէյթունի մէջ : Ուլնեցի գաղթականներուն պատճառաւ Ուլնիա անունն ալ կը տրուի Չէյթունի, մինչդեռ Ուլնիա կը գտնուի Ֆրանսուզի կողմը, Հին-գեղ կ'ըսուի և Չէյթունէն 6 ժամ հեռու է : Հոն կը մնան միայն Ապլղարիպեան բերդատէրք, որք այժմ կը կոչուին Ալիպարենք և հիմա գաղթած են թէ լ է մ է լ ի ք :

Բագրատունեաց անկումէն յետոյ (1043)՝ Անիի գաղթականներէն մաս մըն ալ Ռուբէն իշխանին առաջնորդութեամբ կուգայ կ'ապաստանի Հարգան (Հաճըն), որ Տաւրաս լեռանց մէջ խիստ ամուր և անառիկ դիրք մը ունի : Ասոննցմէ կարեւոր հայրուած մը եւս Չէյթուն կուգայ, և այսպիսով բաւական կը ստուարանայ սոցա թիւ ու գրեթէ 700 տան կը հասնի, այս թուական առաւելութիւնն համարձակութիւն կուտայ սոցա վանելու իրենց մէջէն բնակակից յոյները, որք ամէն հայու ատելի դարձած էին արդէն : Չէյթունի ազատութեան ձգտումը կը սկսի այս թուականէն :

ԹԷ ԻՆՉՈՒ Ի ՉԷՅԹՈՒՆ ԿԸ ԿՈՉՈՒԻ ԱՅՍ ԵՐԿԻՐԸ

Չէյթունի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ գտնուած Գանձ անուն մի ձեռագիր պատմութիւն, որ Քրիստոսի 1624 թուականին գրուած է, հետեւեալ կերպով կը բացատրէ այս հարցը :

Երբ գաղթականաց յաջորդաբար աւելնալովը Չէյթունի ժողովրդեան թիւն աճեցաւ, դատաւոր-կառավարչի մը պէտքը զգալի եղաւ, ուստի մի արժանաւոր անձնաւորութիւն ընտրելու համար ժողով կազմեցին և միաձայն հաւանութեամբ իրենց պետ նշանակեցին Սեթանուն բարձրահասակ ու հսկայ մի անձ, որ Չէյթունի հին եօթն տան սերունդներէն միոյն կը պատկանէր : Սարգարութեամբ ու անաչառութեամբ կառավարելով ժո-

ղովաբղը՝ մեծ անուն և համբաւ ստացաւ, այնպէս որ շրջակայ գիւղօրէից ժողովուրդը, նոյնպէս օտարաղ- գիք, փոխանակ Մարաշի պէյին գիմելու ատո՛ր կը գի- մէին, իրարու յորդուք կարդալով, թէ Ս է թ ի ն գնա- ցէ՛ք. այս յորջորջումը այնչափ կրկնուած է, որ հուսկ ապա երկրին անունն ալ Ս է թ ի ն՝ յետոյ Չէթին կամ Չէյթինի փոխուած է ԱՅԿՅին :

Սոյն ձեռագրի վերջ կայ մի այսպիսի յիշատակա- րան. «ԱՅՁԿ յուլիս Կ. դրուեցաւ Գանձ գրքոյկս ընդ հո- վանեաւ սրբոյն Սարգիս, զօրաւարին և սրղւոյ նորա Մարտիրոսին և չարեքտասան զինւորացն» :

«Յիշեցէ՛ք միով հայր մեզայիւ տրուող քահանայս Օհիժաղանեան՝ Ուսկան երէց, յառաջնորդութեան Տէր Մկրտիչ արքեպիսկոպոսի» :

Վերոյիշեալ բացատրութենէն տարբեր՝ կայ մը ու- րիշ կարծիք եւս, որ աւելի պարզ և բնական կը թուի այսինքն՝ զէյթունցիք իրենց անկամ այգիներուն հետ մեծ քանակութեամբ ձիթենիներ ալ անկելով, որոց հետքեր դեռ եւս կը տեսնուին աստ անդ, ասկէ Չէյ- թուն յորջորջուած է երկիրն ալ (Ա) :

ՄՈՒՏԲ ԲՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ Ի ՉԷՅԹՈՒՆ ԵՒ

ՏԵԿՆԱԳՆՆ ՍԷՐՈՎԱՅԻՐ

Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քահանաներէն Ենովք քահանայ Գաւիմ-Երէցեանի յունական գրով ու հին հայերենով գրած մագաղաթեայ ձեռագիր Աւետարանին ետեւը կար մի ծանօթութիւն զէյթունցւոյ քրիստնէութիւն ընդունելու մասին :

(Ա) 1780 թուականին Էօսէր բաշան Չէյթունի վրայ գալով՝ բոլոր այս ձիթենիները կտել տուաւ իւր զօրաց :

Սոյն Աւետարան, որ Մանկութեան Աւետարան կը կոչուէ, գրուած է Քրիստոսի 230 թուականին: Աւանդ որ այս անգին հաստիւնը Գալ Վասիլի հռչակաւոր Աւետարանին և ուրիշ կարեւոր ձեռագիրներու հետ այրեցաւ 1884ի մեծ հրդեհին: Այս իրողութիւն հետեւեալ կերպով կը պատմուէր յիշեալ ձեռագրին մէջ:

«Յամի տեառն ԱՅ Ս. Բարդուղիմէոս առաքեալ, երբ Հայաստան կ'երթար զՔրիստոս քարոզելու, կը հասնի Գերմանիկ (Մարաշ) ու քաղաքէն քառորդ ժամ հեռաւորութեամբ Ք ա ա ա ս ս լ ն-ա կ (Գրրգ-կէօղ) կոչուած տեղը, որ Ա զ բ ի լ ը ը ը գ լ ս լ խ (Փունար Պաշի) ալ կ'ըսուի, հրաւիրելով զքաղաքացիս կը քարոզէ նոցա և հաւատացեալները կը մկրտէ նոյն ջրով յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Այժմ այս տեղ կը կոչուի Թաքս-առաքէօլ (2) (Թաղէս առաքեալ):

Յետոյ Բարդուղիմէոս առաքեալ այս քաղաքէն հեռաւորով կուգայ Չէյթուէնի հարաւային արեւելեան կողմը Շէհրճօկ (քաղաքիկ) կոչուած տեղը, որ Չէյթուէնէն 2 ժամ հեռաւորութիւն ունի, ու այնտեղ բնակող կապալաշտ ժողովրդեան ալ կը քարոզէ իւր վարդապետութիւնը, բայց նաքա մերժելով զայն՝ սասաիկ կը բարկանան անոր դէմ և վրան յարձակելով կ'ուզեն սպաննել, իսկ նա մօտակայ անտառ մը փախչելով կ'ազատի. այն գիշեր բոլոր քաղաքացիք բարատութեան տխրաւով վարակուելով՝ այս դժբաղդութիւնը կը վերադրեն առաքելոյն և ի խոյզ կը լինին նմա սրաի զղջմամբ, որպէս զի գայ և բժշկէ զիրենք. երեք օր յետոյ Աստուծոյ հեշտակը երազին մէջ երեւնալով տեղւոյն քաղաքապետին՝ կը յանդիմանէ նոցա չարութիւնը և կը հրամայէ անպատճառ գաննել առաքեալը և հետեւիլ ա-

(2) Յոյն անուանակոչութիւնը և վերոյիշեալ ձեռագրի նշանակուած Բարդուղիմէոս առաքելոյն վերագրուած քարոզութիւնը կը հակասեն իրար:

նոր քարոզութեանց, եթէ կուզեն բժշկուիլ իրեց հիւանդութենէն, երբ քաղաքացեալը երբկիւղածութեամբ անոր տեղը կը հարցնէ, «քաղաքին արեւելեան կողմը անտառին մէջն է» պատասխանելով անյայտ կ'ըլլայ հըրեշտակը :

Հետեւեալ առաւօտ քաղաքացեալին հրամանաւ բոլոր ժողովուրդը կուստուն հաւաքուելով կ'ուենկնդրեն քաղաքացեալին երազին, և անոր հետ դիմելով նշանակեալ վայրը՝ կը գտնեն Աստուծոյ մարդը, որ կ'աղօթէր. արտասուակից աչօք կը պաղատեն զայն, որ բժշկէ զիրենք, նա ալ ի գութ շարժելով կ'առաջնորդէ զանոնք քաղաքին հիւսիսային կողմը, քառորդ ժամ հեռաւորութեամբ, ուր կայ ծծմբահամ ջերմուկ մը, և կը հրամայէ անոնց լուացուիլ այդ ջուրին մէջ, ապա Աւագ լերան լանջակողմը հասնելով ծնրադիր կ'աղօթէ Ս. Առաքեալը, պատուիրելով միանգամայն բոլոր ժողովրդեան աղօթակից ըլլալ իրեն, նոյն պահուն երկնային պայծառ լոյս մը ցոլանալով կ'ողողէ ամբողջ վայրը, և Ս. առաքելոյն աղօթած տեղէն ալ ջուր մը բղխելով կ'արբուցանէ բոլոր ժողովուրդը, այդ ջուրէն ներկայք աւազան կազմելով Առաքելոյն հրամանաւ կը մկրտուին և իոկոյն բժշկութիւն կը գտնեն իրենց ախտէն, այս պատճառաւ տեղւոյն անունը Փրկիչ կը կոչեն. յետոյ նոյն անուամբ մատուռ մը ևս կը կանգնեն, ուր ջերմեռանդ քրիստոնեայք ուխտի կ'երթան, Չ ժամ տեղ բոկոսն քալելով» :

1829ին հոգելոյս Տ. Յովհաննէս Եպիսկոպոս Այնթապի առաջնորդ չարսանջախցի և Տ. Յակոբոս Եպիսկոպոս գէյթունցի տեղւոյն ժողովրդեան աջակցութեամբ՝ այն մատրան տեղը գմբեթաւոր շքեղ եկեղեցի կառուցին ձեռամբ եւդոկիացի ճարտարապետած, յոյժ գեղեցիկ նկարներով ու պատկերներով, սակայն 1893



դեկտեմբ. Չի թրքական կռուոյն ժամանակ գմբէթը քանդուեցաւ :

Սոյն եկեղեցւոյ շրջակայքը այնպիսի գեղեցիկ ու զմայլելի տեսարան մ'ունին, որ բոլոր տեսողաց հիացում կը պատճառեն : Սորա հիւսիսային արեւելեան կողմը քառորդ ժամ հեռաւորութեամբ կը գտնուի Ե զ ի ալ օր կոչուած գիւղը, որ Ղ ա լ ը ճ լ ա ր ալ կ'ըսուի (Ղըլըճը) : Սորա բնակիչք ի սկզբան անկրօն(Վ) քիւրտեր են եղեր ու յետոյ քրիստոնէութեան դարձեր, այժմ ջերմեռանդ հաւատացեալներ ու քաջ պատերազմողներ են :

Մարաշու իշխանութեան տակ Փ ա զ ա ր ճ ը դ կոչուած աւանին մէջ զարդիս գտնուած զըլըճը մականւանեալ քիւրտերու գոյութիւնը կենդանի ապացոյց մ'է սոյն աւանդական պատմութեան ճշմարտութեան : Միեւնոյն բանը կ'ըսուի նաեւ Ա լ ա գ լ օ ր (Աւագ լեռ) կոչուած գիւղի հայ բնակչաց համար ալ : Այս երկու գիւղերն ալ Արեգնի(Չ) կը պատկանին :

Բաց ի Ս. Փրկչէն՝ Բարդողիմէոս առաքեալը Ս. կարապետ անուամբ մենաստան մ'ալ շինեց ջերմուկի հիւսիսային արեւմտեան կողմը, այժմ աւերակ, բայց ջերմեռանդ հայը չի մոռնար երբէք իւր ուխտատեղին, թէ-

(Վ)Մինչև այժմ ալ այդ տեղեր քիւրտեր, որոնք անկրօն են կամ, աւելի ճիշտն ասենք, տարօրինակ կրօն կը դաւանին. կը հաւատան հոգեփոխութեան ելն : Այդ քիւրտեր թուրքերուն եղիտ կ'ըսեն, քուրտերն ալ անոնց եղիտ-գըղըլպաշ կ'ըսեն :

(Չ) Արեգին կամ Ալապաշ, որ Չէյթունի հարաւային արեւելեան կողմն է, նշանաւոր եղած է Ռուբինեանց ժամանակ : Մեծն Լեւոն երբ փառաւոր հանդիսով թագաւոր օժուեցաւ Սսոյ մէջ՝ հանդիսադիր ՂԱ եպիսկոպոսներէն մին ալ Արեգնի եպիսկոպոսն էր :



Լ է մ է դ-տ է բ է ս ի (Անխոսի ձոր) կը կոչեն մինչեւ  
ցայսօր :

Չէյթունի արևելեան կողմը մէկ ժամ հեռաւորու  
թեամբ Պէրզինկայ լեռան կողին վրայ շինուած է Ս.  
Աստուածածին անուն վանք մը , ուր կը գտնուի Անա  
նիա առաքելոյն Ս , Ս.Ջը : Նոյնպէս Չէյթունի արևմտ  
եան կողմը անկէ 6 ժամ հեռաւորութեամբ Դ ր ա խ  
տ ի կ լեռան ստորաւոր Ս . Փրկչի վանից դէմ առ դէմ  
կայ Ս . Կարապետ անուն երկրորդ վանք մ'ալ , որ Ֆրբ  
նրդցաց կը պատկանի . ասոնք եւս Ս . Առաքելոյն գոր  
ծունէութեան պատշաճներն են :

Ս . Փրկչի վանքի առաքելական հաստատութիւն մը  
ըլլալը հետեւեալ ժողովրդական ին կրգն ալ կ'ապա  
ցուցանէ .


Բարդուղիմէ յայս աղօթեաց ,  
Լոյս ի վերայ կամար կապեաց ,  
Ծնգատեղաց սուրբ ջուր բղխեաց ,  
Ո՛վ սուրբ փրկիչ և ազատիչ ,  
Ազատեա՛ դմեզ , Յիսուս փրկիչ ,  
Յոյս , ապաւէն քրիստոնէից :

Աւագ լերին կոչի տեղի ,  
Ծաղկունք բուսեալ ի չորս կողմի ,  
Փառք և պարծանք Ունիա քաղքի ,  
Ո՛վ սուրբ փրկիչ և ազատիչ , ևն :

Յիսուս Բրիստոս յերկնից իջաւ ,  
Առաքելոցն երեւցաւ ,  
Մարդկան ազգի մեզքն բարձաւ ,  
Ո՛վ սուրբ փրկիչ և ազատիչ , ևն :

Եօթանասուն և հինգ թուոյն ,  
Ի գալ սրբոյ առաքելոյն ,  
Յախա՛նք բութեաց փրկչին անուն ,  
Ո՛վ սուրբ փրկիչ և ազատիչ , ևն :

2661-59



Իբրեւ նուիրական սրբութիւններ՝ զէյթունցին յարգական խորին զգացում մը կը տածէ նաև հետեւեալ առարկաներու նկատմամբ :

ԱՅԸՆԱ.-ՔԱՐՏՕԿ (անբանի քարտակ) մեծ քար մ'է, որոյ գագաթը տնկուած կայ երկաթեայ մի օծեալ խաչ, յոյժ վաղեմի ժամանակներէ հետէ : Ամառ ատեն ասոր տակը անգործ մարդիկ կուգան զովանալու համար : Կը գտնուի քաղաքին արեւելեան կողմը Ծ—Յ վայրկեան հեռաւորութեամբ :

ՍՈՒԼՈՒՐ-ՔՕՐ (կլոր քար), արեւմտեան կողմը՝ միւնսոյն հեռաւորութեամբ, նոյնպէս ունի վրան երկաթեայ մեծ խաչ մը :

ՏԱՓՕԿ-ՔՕՐ (տափակ քար) հարաւային կողմը :

ԹՕԶԼԵՆՑ-ՔՕՐ (թօղլեանց քար) հարաւային արեւելք :

ՊՈՒԶԱԽՅԻՒՆՑ-ՄՕՏ (Պուչախցեանց բլուր) արեւելք :

ՂՈՒԼՑ (մարտկոց) հարաւային արեւմուտք :

Այս նշանակեալ քարերը Զէյթունի իբրեւ անանցանելի պատնէշներ նկատուած են, շնորհիւ իրենց նուիրագործեալ հանգամանքի, զոր կը վայելեն սոքա անյիշատակ ժամանակներէ հետէ, և արդարեւ այնքան բազմաթիւ կռիւներու և պատերազմներու մէջ չէ պատահած զէթ մի անգամ, որ թշնամւոյն ստքն այս սահմաններէն ներս անցնելու յանդգնած ըլլայ :

**ԶԷՅԹՈՒՆԻ ԹՄ.Ղ.ԵՐԸ**

Բնական ամրութիւններով ու սրբագործեալ պատնէշներով պահպանուած սոյն քաղաք, որ գրեթէ քառակուսի ձեւ մը ունի, բաժնուած է չորս գլխաւոր թաղերու :

Ա. ՇՄՎՐՕԵԱՆ ԹԱՂ (Պօզ-պայիր), արեւմտեան կողմը, որուն հարաւն ու արեւելքը կտրելով կ'անցնի Չոր գետակը :

Բ. ԵՅՂՈՒՊԵԱՆ ԹՎՂ (Գարկըլար)՝ հարաւային կողմը. նոյն գետն ասոր ալ հարաւէն կ'անցնի :

Գ. ԵՆԻՏԻՒՆԵՍ ԹՎՂ (Վերի թաղ), հիւսիսային կողմը՝ Ք ե Ր ծ է Ր ի ստորոտը, որուն արեւմտեան կողմէն կը հասի Շուղուր գետն և արեւելքէն Չոր գետակը :

Դ. ՍՈՒՐԷՆԵՍ ԹՎՂ (Միջին թաղ) Ենի-տիւնեաւ Եաղուպեան թաղերու մէջտեղն և Շուրոսեան թաղի հիւսիսային կողմը կ'իյնայ : Սորա և Եաղուպեանի արեւմտեան կողմէն կը հասի նոյնպէս Շուրուր գետը :

Սոյն թաղերէն իւրաքանչիւրն իւր յորջորջումն ստացած է իւր վրայ իշխող հայ ցեղերու մականունէն, որոնք նշանաւոր հանդիսացած են յրենց խելքով, քաջութեամբ ու հայրենասիրութեամբ :

### ՀԻՄՆԱԴԻՐ ՉՈՐԻՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ

Սուրէնեան թաղի իշխանութիւնը կը սկսի 1545 թ. վերոյիշեալ Սեթէն և իւր յորջորջումն ստացած է սորա եղբոր Սուրէն իշխանի անունէն : Ամենահինն է սա այս իշխանութեանց մէջ : Չէյթունի բերդին (\*) տէրն ըլլալով սաքա՝ մինչեւ հիմա այնտեղ կը բնակին, 30 տունէ կը բաղկանան և եօթն ճիւղ ունին : Սուրէնեան, Սեթեան (Սեթենք), Բասիլոսեան, Կէյիկեան, Մահաթի վարդիվարեան, Ախպաշեան և Թումիկեան :

Եաղութեանց հիմնադիրն է Յակոբ անուն մի անձ. որ 1780 թուականին Չէյթունի վրայ արշաւող Էօմէր բաշան սպանեց տարօրինակ միջոցաւ մը ու զարմանալի ճարտարութեամբ : Այս ամենը պիտի պատմենք իրենց կարգին :

Ենի-տիւնեա թաղի իշխանութիւնն ի սկզբան Ս. բալտեան ցեղին կը պատկանէր, սակայն յետոյ Ենի-

(\*) Այս բերդի բարձրութիւնը 70 մէթր կը հաշուուի գետի կողմը. միւս կողմէն այնքան բարձր չէ. միջնաբերդ մըն է սա :

տիւնեա Հաճի Ղազար աղայի հօր <sup>մ</sup> առն անուը դրժ-  
 քաշդարար դեռ անժանօթ մնացած է, յանձնուեցաւ  
 համանաճութեամբ Զէյթունի կրօնական և աշխարհական  
 երեւելիներու, վասն զի սա Կարանի մէջ տիրապետող  
 նշանաւոր թուրք հարստահարիչ մը սպաննելով անոր ձեռ-  
 քէն ազատեց հայ հարս մը, 1799 թուականին, ու ինքն  
 լեկաւ Արեգին. հօրեղբորորդին ալ Հաճըն փախաւ:  
 Սպանութեան դէպքը յաջողցընելէն վերջն ըսեր են «Ենի-  
 տիւնեայա կէլտիք» նոր աշխարհ կեանք:

Շօվրօեան թաղի իշխանութիւնը կը սկսի 1800ին  
 հաճի Սահակ աղա Շօվրօեանէն, որ իւր քաջութեամբ  
 նշանաւոր հանդիսացած է Ղալէնտէր բաշայի դէմ մրդ-  
 ւած պատերազմին մէջ և ամիսի մը չափ շուրջ  
 յօրպա, ապաւր) կերցուցած է աղքատ ժողովրդեան, և  
 անկէ ծագում առած է այս ցեղին Շօվրօեան մական-  
 անը:

Այս(\*) չորս իշխաններէն իւրաքանչիւրն իւր թաղի  
 լրայ միայն կ'իշխէր(\*\*), այդ հանձնէն դուրս չունենաւ

(\*) Այս չորս իշխանաց սերունդէն մնացած յիշա-  
 սակք, 1. Եալուպեան Մկրտիչ աղայի թուր Լեւոն է-  
 ֆէնտի, 2. Շօվրօեան Հազօր աղայի եղբորորդի Կարա-  
 պետ էֆէնտի, 3. Սուրէնեան Նազարէթ էֆէնտի, 4.  
 Ենիտիւնեայեան Սաստուր աղայի դաւակ Յակօբ էֆէն-  
 տի: Սոքա ներկայիս ողջ և առողջ են և սրատուաւորք  
 Զէյթունի հասարակութեան:

(\*\*) Բացի Զէյթունէն իշխանք 1805էն առաջ կը  
 սիրէին նաև քանի մը գիւղօրէից. 1. Սուրեան՝ Ղօղ-  
 ուղաղ, Հաճի-տէրէ, Թանըր (տաճկաբնակ) և Տէօնկէլ,  
 (տաճ.), 2. Եաղուպեան՝ Աւաղ-կալ, Սէրէղէճ, Ղու-  
 ր, Գարու-գայա, 3. Ենի-տիւնեա՝ Արեգին, Եյլէնճէ,  
 Էթման (տաճ.): Սարը-Կէօղէլ կամ Քիւրէճիք (տաճ.)  
 4. Շօվրօեան՝ Փէնկ կամ Սէյի (Քէլլօր) և Տէօնիւք-

լով ու է ազդեցութիւն, իսկ իրենց սահմանին մէջ ամենազօր էին գրեթէ, իրենց հպատակաց կեանքին վրայ իրաւունք ունենալով, այնպէս որ շնացող այր մը կամ մը երկու երեք անգամ խրատուելէ յետոյ երբ անսաստէր՝ իշխանին հրամանաւ կը սպաննուէր, իսկ մարդասպան մը կրնար ազատուիլ միայն միայն իւր թաղէն ուրիշ թաղ խոյս տալով և տեղւոյն իշխանին պաշտպանութեան տակ մտնելով: Այս պարագային ԱՉ ղ ա պ ա տ այ ի ն ե ր ք, որոնք՝ իբրև խորհրդական ու զինակիր՝ իւրաքանչիւր իշխանի կ'ընկերանային ամեն կարեւոր խնդրոց մէջ, մարդասպանին տունը երթալով հիմնայատակ կը քանդէին զայն իշխանին հրամանաւ, և այնպէս գոհացում տուած կ'ըլլային սպանելոյն ընտանեաց, ժամանակ անցնելէ յետոյ, երբ այդ ընտանիք ներէր(\*) մարդասպանին ու հաշտուէր անոր հետ՝ կարող էր նա այլ եւս ազատօրէն շրջիլ ամեն տեղ, ոչ ոք իրաւունք ունէր անոր մի ո'ւ է մնաս հասցնելու, որովհետև հակառակօրէք երբ կը հաշտուին, արդէն կ'եղբայրանան իրարու:

Իշխանական այս առաձնաշնորհում վերցաւ 1863ին, երբ թուրք կառավարութիւնը մուտ գտաւ ի Չէյթուն: Չորս թաղերու պետերը, որոնք ը ի ս թ ի յ օ ր (ծեր) կը

լէր (տաճ.) : Իշխանները կամ անոնց զրկած մարդիկ ամեն տարի այդ գիւղերուն կալերը կը չափէին և 20 չափին մէկը կը վերցնէին իբրև իշխաններու ձիերուն արփալըխ (գարինոց) :

(\*)Ներումը սապէս կ'ըլլար՝ թաղին իշխանն և միւս պաշտպան եղեալ իշխանը՝ ԱՉ ղ ա պ ա տ այ ի ո վ միատեղ, մարդասպանը ուսին վրայ մէկ կանգուն ձերմակ կտաւ իբր պատանք կրելով՝ կուգան սպաննուածին տունը. այս ատեն կը ներուի:

կոչուին, ժառանգական իշխանութիւն ունէին, այնպէս որ՝ երբ անոնցմէ մին մեռնէր, բոլոր եկեղեցական դասը, միւս իշխանները և իրենց ղ ա պ ա տ ա յ ի ն եր ը հանգուցելոյն տունն երթալով՝ նորա որդին կամ եղբայրը (եթէ չ' ունէր որդի) մէջտեղ կը բերէին և եկեղեցականք անոր վրայ պահպանիչ և օրհնութիւն կարդալով կը նստէցնէին զայն բարձր բաղմոցի մը վրայ և այնպէս կը հրատարակէին իշխան նոյն թաղի, այնուհետև բոլոր թաղեցիք պարտաւոր էին պատկառանօք հնազանդիլ անոր, թէև ըլար տիօք անշափահաս, անհնազանդ անձինք նոյն իսկ մահուամբ կը պատժուէին : Այժմ եւս թէև այդ պաշտօնական ձեւակերպութիւնք վերցած են, սակայն ժողովուրդը միշտ յարգանօք կը վերաբերուի դէպի իշխանական ցեղերը, մանաւանդ պատերազմներու ժամանակ, յորս ի վաղուց անտի մեծ դործունէութիւն ցոյց տուած են նաքա իրենց միաբերան դործակցութեամբ :

ԿՐՕՆԻ, ԴՊՐՈՅԻ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ ԵՒ ՆԱՀԱՏԱԿԻ

1500 տունէ կը բաղկանայ Ձէյթուն քալաքը, զուտ հայ և կրօնով լուսաւորչական : Ունի այժմ չորս եկեղեցի, — Ս. Աստուածածին՝ Սուրէնեան թաղի մէջ, Ս. Սարգիս՝ Եաղուպեան թաղի մէջ, Ս. Յովհաննէս՝ Շօվբօեան թաղի մէջ և Ս. Լուսաւորիչ՝ Ենի-տիւնեա թաղի մէջ : Թէև փոքր մատուռներ կային, բայց մեծ հրդեհին այրեցան, այն է՝ Ս. Հրեշտակապետ, Ս. Բարսամ, Ս. Թորոս, Ս. Պօղոս-Պետրոս ինչպէք և Ս. Յակոբ մեծ եկեղեցին :

Ասոնց իւրաքանչիւրն ունի մէյմէկ նախակրթարան դպրոց իւր մօտ, հատ մ'ալ աղջկանց վարժարան : Վերոյիշեալ Ս. Յակոբ անուամբ մեծ եկեղեցին մեծ հրդեհի ժամանակ այրելով՝ նորա տեղ հրկիզելոց օգնող մասնաժողովին կողմէն ղրկուած դրամական նպաստի շնոր-



հիւ գեղեցիկ վարժարան մը կառուցուեցաւ՝ կեսարացի Գույումճեան Քերովրէ էֆէնտիի հսկողութեամբ. 1866—67 թւին կրօնական բաժանում մը մտաւ Չէյթուէի մէջ, մի քանի տուներ կաթողիկոսեան, մի քանիներ ալ բողոքականութեան յարելով, սակայն ասոնք մինչեւ հիմա չունին իրենց յատուկ կրօնական ո՛ր և է հաստատութիւն(\*), վասն զի շատ սակաւաթիւ են, գրեթէ 20ական տուն:

Այս բաժանումը քաղաքական տաղնապի մը հետեւանքն էր, ապա թէ ո՛չ զէյթուէցի հայր սաստիկ ջերմ սիրով յարած է իւր մայրենի Ս. եկեղեցւոյն, և այս սէր միշտ վառ պահելու ջանադիր եղած են եկեղեցական Ս. Հարք, որք ի սկզբանէ անտի կարեւոր դիրք մը ունեցած են այս արկածաշատ երկրի ամեն յեղաշրջմանց մէջ: Ասոնցմէ նշանաւոր անձնաւորութիւններ ալ եղած են, մեծ մասամբ Ս. Աստուածածնի վանքին մէջ դաստարակուած, որք եկեղեցական ամենաբարձր աստիճաններով օգտակար հանդիսացած են նաև ընդհանուր հայութեան: Սուքա են:

|              |           |            |      |          |
|--------------|-----------|------------|------|----------|
| Սիմէօն       | Կաթողիկոս | Սսոյ       | 1539 | թուականի |
| Ղազար        | »         | »          | 1545 | »        |
| Խաչատուր     | »         | »          | 1570 | »        |
| Կարապետ (**) | Գ.        | Ս. էջմիճնի | 1726 | »        |
| Սարգիս       | Պատրիարք  | Կ. Պոլսոյ  | 1587 | »        |
| Յովհանէս     | »         | »          | 1590 | »        |

(\*) Բողոքականներն ունին մի փոքր ժողովարան. իսկ Կաթողիկները կը պատարագեն սոսկ սենեակի մը մէջ:

(\*\*) Ասիկա, Աստուածաշունչ գրոց յիշատակարանին մէջ երկարօրէն կը պատմէ իւր անձին վրայ. «Եօթնամսնի ծնեալ ասէ, ես եօթն ամ դկաթն առեալ ի մօրէս, յաղադս որոյ ծծկեր իմ մակաձայնեց-

Աւելորդ չենք համարիր այս բարձրաստիճան եկեղեցականաց կարգին յիշել նաև այն եպիսկոպոսներն

ևայլ» . սա Ջէյթուն ծնած է 1661ին , իր յօրն անունն է Մարտիրոս (Մերտիրիւս) դ ա ՚ ու կ մականուանեալ , մօրն անունը Մարիամ (Մայրօմ) . դահուկէն աղաւաղեալ Գահոնց կամ Գէգիւնց կը կոչուի . այժմ Գահոնց սերունդը կայ քաղաքին վերի թաղը , Քեր-ժէր ըսուած տեղը . դ ա ՚ (դօ՛) Ջէյթունի բարբառով տարիքոս մարդ կը նշանակէ : Իւր ծնողաց մեռնելէն ետք լսելով իւր հայրենակից Սաչլու կոչեցեալն Ստեփան վարդապետի՝ Գաղատիոյ վիճակին վրայ եպիսկոպոս ձեռնադրուելը , անոր քով գնաց Անկիւրիա և անոր ձեռաց տակ վարժուելով (1681) արեղայութեան կարգ առաւ անկէ , իսկ 1684—87ին ծայրագնութեան աստիճան , և վանքի նորոգութեան համար շատ աշխատեցաւ ու շատ մը սպասներ ձգեց հոն և ապա զրկուեցաւ Նահապետ կաթողիկոսին քով եպիսկոպոս ձեռնադրուելու ու յետոյ տեղւոյ յաջորդ եղաւ և 30 տարիէն աւելի աշխատեցաւ վարեց 1694—1726) . Դազար Չահկեցին նորին սրբադնութեան համար կ'ըսէ որ «էր այր շքեղ և փառադարդեալ» : Իւր աթոռակալութեան երկար տարիներու մէջ շատ մը նորոգութիւններ և շինութիւններ ըրաւ , գրքերով ու սպասներով ճոխացուց : Յետոյ իւր ձեռնասունն աշակերտ Մովսէս վարդապետի հետ (1703) ուխտի գնաց Երուսաղէմ , Հռոմկլայ և իւր հայրենիք , ուր չորս ամիս կեցաւ թէ՛ իւր եղբայր Ստեփանոս Երէցի հետ տեսնուելու համար և թէ՛ ապստամբաց երեսէն ճանապարհներ եղած երկիւղներու պատճառաւ , այս մասին իւր ընկեր Մովսէս վարդապետ կը գրէ թէ՛ «Անդ

ու վարդապետները, որ յաջորդաբար պաշտօնավարեցին  
 Ի Չէյթուեն իբրև առաջնորդ կամ իբրև վանահայր :

(Ի Չէյթուեն) զուխտս մեր կատարեցաք, թէ՛ Ս. Փրկիչն,  
 թէ՛ Ի Ս. Աստուածածնայ վանքն և թէ՛ յԱնանիա Առա-  
 քելոյն Ս. Աջն, որ Ի Չէյթուեն վանքն կայ և սևուցչին  
 մերոյ գերեզմանն (Ստեփանն եպիսկոպոսի), և արդէն  
 զտեղի կալաք աւուրս հարիւր քսան յանէ թորգումանց՝  
 որ իբրև զառիւծ շրջէին շուրջ զմեղօք, բայց յետոյ  
 փախստեայ ճանապարհաւ որ հազիւ հասաք Ի Հաճնայ  
 վանքն, առ Ովհաննէս Կաթողիկոսն» : Ուրիշ շինու-  
 թիւններէն վերջ, Աստուածատուր Կաթողիկոսին վախ-  
 ճանելէն ետք, Կ. Պոլսոյ մէջ Կաթողիկոս օծուեցաւ 17  
 փետ. 1726ին, ուր տեղ Յովհաննէս վարդապետ (Կոլոս)  
 եպիսկոպոս ձեռնադրեց, որը եղաւ Պատրիարք Կ. Պոլ-  
 սոյ, և ապա ինք մեկնեցաւ Ի Ս. Էջմիածին և չորս  
 տարի գահակալելով վախճանեցաւ 1730 թուականին  
 (Համեմատէ «Սիսուան» Հ. Ալիշանի) :

Եպիսկոպոսութեան ժամանակ Չէյթուեն այցելած  
 ատեն Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն փոքր և պատ-  
 ւական սկիհ մը նուիրած է հետեւեալ յիշատակարանով,  
 որ մինչև զայսօր կը մնայ :

«Յիշատակ է Ս. Սկիհս Ուլնիոյ Ս. Հրեշտակապետ  
 եկեղեցւոյ Ս. Սեղանին : Յամի Տեառն 1705 նուիրատուս  
 ծծկեր Կարապետ Եպիսկ. Գանկոնց :

Առաջնորդ Գաղատիոյ»

Գերեզմանը կը գտնուի Վարդարշապատի Ս. Հռիփ-  
 սիմէ վանքի գաւթին աջակողմը, բայց տապանաքարը  
 լատ. չի որոշուիր շրջակայ սալերէն :

|                         |  |
|-------------------------|--|
| Սոքա են. —              |  |
| 1586 Յովհաննէս Ա. Եպիս. |  |
| 1595 Ծերուն Արք.        | »  |
| 1624 Մկրտիչ             | »  |
| 1666 Մովսէս             | »  |
| 1694 Ստեփան             | » (Սաչլու մականուանեալ)  |
| 1720 Կարապետ Ա.         | »  |
| 1800 Յովհաննէս Բ.       | »  |
| 1806 Յարութիւն          | »  |
| 1808 Միքայէլ            | »  |
| 1817 Մարտիրոս           | »  |
| 1821 Պօղոս              | »  |
| 1823 Յակոբ              | » Պըշտեան  |
| 1826 Մատթիա             | » Ղազիկեան   |
| 1828 Յակոբոս            | » Պօստանեան պարմաղը<br>քէսիք (մամնատ)                                |
| 1832 Սարգիս Ա.          | » Խանդըօրեան   |
| 1851 Յովհաննէս Գ.       | » Էօքսիւղեան, սա մեծ ծա-<br>ռայութիւն մատուց Ս.<br>վանքին շինութեանը |
| 1861 Սարգիս Բ.          | » Գուլիկեան  |
| 1883 Կարապետ Բ.         | » Բէչէեան. 1904 վա՛սճ.   |
| Մարտիրոս վարդ.          | Պալեան Մարաշցի   |
| Յարութիւն               | » Տ. Գաւթեան. Վ. — քէօփրիւ վախճ.                                     |
| Պետրոս                  | » Բէչէեան. Զէյթուն վախճանած  |
| Պօղոս                   | » Տատիշեան » »   |
| Սարգիս                  | » Գուլիկեան Գարաման քաղ. »   |
| Ստեփան                  | » Ա. աճէպիկեան Պրուսա »  |
| Գալուստ                 | » Տ. Գալուստեան Աղիղ քաջայի պա-<br>տերաղ. նահատակուեցաւ 1862 ին      |
| Մամբրէ                  | » Զմշկածակցի Ս. Փրկչի վանքը նա-<br>հահատակ. նոյն պատերաղ. 1862       |
| Յովհաննէս               | » Զօփուրեան Զէյթուն վախճ. 1896                                       |
| Գրիգոր                  | » Արարեան Կ. Պոլիս վախճ. 1909  |

Նշանաւոր եկեղեցականներէ զատ Չէյթուն ունի նաեւ իւր նահատակներն ու ճգնաւորները, որոնցմով կը պարծի նա կրօնասիրական հպարտութեամբ :

Քրիստոսի Յոսկան թուականներուն Ստեփաննոս(Ա) անուն ջերմեռանդ քրիստոնեայ մը, իւր մօր և Յ<sup>4</sup> ընկերաց հետ, իւր կրօնքին սիրոյն համար կռապաշտ դատաւոր Սոկրատի հրամանաւ նահատակուելով, կը թաղուի Կանչիի մէջ, որ թուրքերը Չուգսեր-հիսար կը կոչեն, Ֆրնուղէն 4 ժամ հեռաւորութեամբ, վրան կայ մի փոքր մատուռ, ուր կրօնական պաշտօն կը կատարուի տարին միանգամ Եղիական պահոց յաջորդ կիւրակէ օրը, և այն պահքն ալ Ս. Ստեփաննոսի պահքը կը կոչեն զէյթունցիք. «Սըբդըփենիւսօ պօքը իկիք» — սուրբ Ստեփաննոսի պահքը եկաւ, կ'ըսեն :

Վերջերս ալ կար Մելքոն անուն մի ճգնաւոր, որ խիստ ժուժկալութեամբ ու սակաւապետութեամբ կ'ապրէր, օրը մի անգամ թեթեւ անունդ մ'ընդունելով, ժամանակին ամենամեծ մասը աղօթքով կ'անցընէր. Յ տարի Ս, Երուսաղէմ, Յ տարի Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը, ԱՅ տարի ալ Չէյթունի Ս. Աստուածածնի վանքին մէջ բնակելով՝ մեռաւ 1896 Ս.պրիլ 7ին ութսունամեայ հասակին մէջ. ԳՅի պատերազմին ժամանակ իւր աղօթից ու մաղթանաց միակ նիւթն էր հայոց ազգի փրկութիւն և Չէյթունի զինուց յաջողութիւնը : Զերմեռանդ ուլնիացին սորա մաղթանքներուն կը վերագրէ իւր փառաւոր յաղթանակը :

Բայց յայսցանէ յիշատակելի անձնաւորութիւնք պէտք է համարուին Չէյթունի տարեգրութեանց մէջ որպէս հայրենասիրութեան նահատակներ ու անձնուէր


---

(Ա) Ուլնեցի Ս, Ստեփանոս տարին անգամ մը հա Ս. Եկեղեցին կը տօնէ և յատուկ շարական ունի :

մարտիրոսներ՝ երկու օտարազգիք, Ֆէրիզ օղլու Մէ-  
հէմմէաճիկը և Չէքիւկ Մէհէմմէտը, 1852, պատերազմին  
մէջ հայոց հետ միացած քաջարար կռուեցան Ազիզ բա-  
շայի զօրաց դէմ, և Չ ա ք ը ր-տ է ր է-ք է փ ի ր կոչ-  
ւած տեղը կարէվէր խոցուած ինկան մեռան: Քա՛նա-  
նայք ասոնց վրայ «հոգոց» կարդալով՝ յաւիտենական  
հանգիստ մաղթեցին իրենց ազնիւ հոգիներուն:

Ասոնց հախնիք, թուով 14 հոգի, որք լազ կոչ-  
ւած ցեղէն էին, 1347ին Տրապիզոնէն Չէյթուն գաղ-  
թեցին: Ասոնց գլխաւորներն էին Հաճի Իպրահիմ ու  
իւր որդին Օսման և եղբարքը Աճէմ Ալի ու Չէօքիւկ  
Մէհէմմէտ, որք սոսկալի ոճրագործներ էին ու տեղական  
կառավարութեան ձեռքէն խոյս տուած իրենց ընտան-  
եօք հանդերձ: Սեթ իշխանին քաջութեան ու մարդա-  
սիրութեան համբաւը մինչև անոնց հասած ըլլալով՝ ե-  
կան անոր ապաւինեցան. նա ալ ընդունեց զիրենք և  
տեղացւոց վայելած ամեն ազատութիւնները շնորհեց  
անոնց, այնպէս որ իրենց կրօնական պաշտանմունքը  
անարգել կը կատարէին ու ամեն տեսակ շահագործա-  
կան ձեռնարկներ կ'ընէին. ասոր համար քիչ ատենէն  
հոգերու և այգիներու տէր դառնալով հարստացան,  
Սուրէնեան թաղին մէջ ալ բնակարան շինեցին: Ասուք  
իրենց վայելած շատ մը բարիքներէ զատ՝ հարկատուու-  
նեէ և զինւորական ծառայութենէ ալ ազատ մնացին  
մինչև 1853 թուականը, որ ատեն Քա՛նի բաշան 200  
զինւորներով Չէյթուն գալով՝ Ս. Աստուածածնի վան-  
քը իջեւանեցաւ և պահանջեց, որ զանոնք զինւորական  
ծառայութեանց մէջ մտնելով ըստ օրինի կատարեն ի-  
րենց պարտականութիւնը: Նոյն ժամանակի հայոց ա-  
ռաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս էօքսիւղեան, որ բա-  
շային ըրած մեծամեծ պատիւներուն համար շատ հա-  
մարում ունեցած էր անոր քով, ազաչեց զայն, որ իւր

դրակից այդ մահմէտականները ազատ կացուցանէ այդ  
 պարտականութենէն . նա ալ չկրնալով մերժել անոր  
 խնդիրը՝ ընդունեց . այս կերպով սոյն եկամուտ թուր-  
 քեր կրինապէս երախտապարտ մնացին հայոց և ի մաս-  
 նաւորի բարեսիրտ սրբազանին : Ուստի մշտնջենական  
 հաւատարմութեան ուխտ ու երդում անելով խոստա-  
 ցան անոնց հետ ապրիլ ու անոնց հետ մեռնիլ : Ահա՛  
 այս երախտագիտական զգացմամբ անձնազոհ եղան ի-  
 րենց յաջորդող այս երկու թուրքեր , որք լեզուով ու  
 բարքով արդէն հայացած էին :



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



Ա.

Չ Ա Ր Մ Ա Ն Ո Ւ Հ Ի .

ՀԵԹՈՒՄ. ՄՈՒՐԱՏ Գ-Ի ՀՐՈՎԱՐՏԱԿԸ,

Ձէյթուէնի հողն ու քարը, օղն ու ջուրը, որ կարծես քաջութեան, Հայրենասիրութեան ու ազատասիրութեան հողի կը ներշնչէ իւր բոլոր բնակիչներուն՝ նոյն իսկ տկար կոչուած սեռին և որոյ գերեզմանը դիւցադանց քնանան կոչելնիս չափազանցութիւն մը չ'ըլլար, դարեր առաջ սնուցած ու ննջարան հանդիսացած է մի նշանաւոր հայ հերոսուհւոյ: Այդ հերոսուհին էր Ռուբինեանց Հեթում սպարապետի տիկին Չարմանուհի, որ Գրիգոր անուն մի վատ հայի ձեռամբ իւր սիրելի ամուսնոյ սպանուածէն յետոյ (Ռուբինեանց անկումէն վերջը) փախաւ եկաւ Կօկիսօնի եւ Ռւշնիոյ լեռները եւ՝ աչն տեղեր հինգ տարիի չափ թափառական պատելով իւր Գէորգ որդւոյն հետ՝ յաջողեցաւ վերջապէս 300 քաջ լեռնականներ հաւաքել իւր մօտ ու անոնց գլուխն անցնելով յարձակեցաւ տաճկած վրայ, զորս յաղթելով տիրեց Կապանու 63 տարի: Սորա գերեզման որ կողմ ըլլալը թէեւ անյայտ՝ սակայն տեղացիք աւանդութեամբ կ'ըսեն, թէ Ձէյթուէնի տէրն է եղեր նա եւ առանց կերակուրի լոկ մրդեղէններով եւ անուշեղէններով կերակրեր է միանգամ իրեն հիւր եկող 60 հողի տաճիկ հեծեալներ:

Ի սէր եւ ի յիշատակ այս քաջարի տիկնոջ՝ շատերու ջանքով Գլուխուհի կը կոչեն իրենց ազգականց անունը եւ անցնան անոր անունը իրենց խիստ շատ կան մինչեւ ցայսօր: Սորա որդւոյն Գէորգայ սերունդէն էր Հեթում անուն



ուսեալ եւ արիասիրտ քահանան, որ կը պաշտօնավարէր Միջին թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւ որոյ համար աւանդութեամբ կ'ըսուի, թէ Կ. Պոլիս երթալով յաջողած է ձեռք բերել Սուլթան Մուրատ Գ. -ի այն նշանաւոր հրովարտակը, որ այրեցաւ 1884ի հրդեհին շատ մը անգին նստօթիւններու հետ :

Ահաւասիկ յիշեալ հրովարտակին ամբողջ պարունակութիւնը ,

«Ձէյթուն գասապասը թաշլըդ օլուպ կէնիշ արազիսի պուլունմատըրընտան՝ իտարէի թէայիւշլէրի իշիւն կիւճիւք շէքմէլէրի վէ հընթա, շայիր վէ ճէմի հուպուպատ թաշրալարտան կէլմէսի իյճապ իթտիկի տէրքեար օլտուղընտան՝ մէմալիքը մահրուսէմտէ պուլունան ճիւմլէ թէպաամտան Մարաշ սանճաղընա թապի Ձէյթուն գասապասը միւսթէնա թութուլարադ թէտիյէ իտէճէքլէրի խարան վէրկիւսինտէն աֆվը շահանէմ օլմուշտուր, եալընըդ սէնէլի մադթու վէրկիւլէրի օն պէշ պին դուրուշ օլուպ՝ պու մըգտար ադճէի տէ Սյա Սօֆիա ճամիի շէրիֆին միւթէվէլլիսինէ թէտիյէ օլունսուն, քի գանտիլլէրէ դէյթ եաղը ալուպ ճամիի շէրիֆէ նուր ու լէման օլսուն, օնպէշ պին դուրուշ տա քէնտու քիլիսալէրընէ էտա էյլէսոււլար, եինէ գանտիլլէր իշիւն, իպատէթիսանէլէրի միւնէվվէր օլսուն, կէրէք Սյա Սօֆիա ճամիսինէ վէ կէրէք քէնտուլէրին քիլիսալէրինէ վազըֆ սայրլսընլար, պաշգա հիշ պիր հիւքիւմտար միւտախէլէ իթմէսուն թէվէճճիւ հը շահանէմէ նայիլ օլան Ձէյթունայ, վէ տախի Օսմանլը մէմուրէյն տէրունը գասապատա պուլունմասուն, հէմտէ Օսմանլը մէմուրէյնտէն պիրիսի եօլճուլուգլա գասապայա թէսատիւֆ իտէր իտէ՝ օ սէյան տէրունը գասապատա եաթմայուպ շէրին տըշարըսընտա եաթսուն, շէօյլէ քի վէրմիշ օլտուղըմ իսթիսնայիլէթ ու իսթիգլալիյէթէ հիշ պիր

Թարափտան խալէլ կէլմէյուպ՝ քէնտու քէնտուլէրինի  
խտարէ էյլէսուէնլար, շէօյլէ պիլէլէր, ալամէթը շէրիֆէմէ  
իթիմատ գըլալար

սէնէ սիթթէ ութէլէթին ու էլֆ

Ա.սիթանէի իսթամպոլ, Փի շէր իւլ շէվլալ 29.

Մ Ո Ի Ր Ա Տ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Չէյթուէի գաւառակը քարոտ ըլլալով, բնակիչք  
ընդարձակ հողեր չունենալուն, իրենց պարէնը հայթայ-  
թելու համար շատ դժուարութիւններ կը կրեն, այնպէս  
որ ցորեն, գարի և այլ ամեն ընդեղէններ դուրսերէն բե-  
րելու հարկադրուած են, յիշեալ գաւառակը, որ կայ-  
սերական կառավարութեան մասը կազմող Մարաշի  
կառավարութեան տակն է, որպէս արտօնացեալ երկիր՝  
զերծ կը կացուցանեմ գլխահարկի տուրքէն, զոր պար-  
տաւոր էին վճարել կայսերական Գանձուն, միայն տա-  
րուէ տարի 15,000 դահեկան որոշեալ քանակութեամբ  
տուրք մը պարտին հատուցանել Այա Սօֆիա մզկիթի  
հոգաբարձուն, որպէս զի կանթեղներուն համար ձեթ  
առնելով լուսաւորուի մզկիթը. 15,000 դահեկան ալ  
իրենց եկեղեցեաց կանթեղներուն համար վճարեն, որ  
անոնք ալ լուսաւորուին: Թէ՛ Այա Սօֆիա մզկիթին  
և թէ՛ իրենց եկեղեցիներուն՝ որպէս կրօնական տուրք  
(վագրֆ) համարուի այս գումարը, ասկէ աւելի պահան-  
ջելու համար իմ յաջորդներէս ոչ ոք համարձակի կայսե-  
րական շնորհացս արժանացող Չէյթուն գաւառակի վը-  
րայ ծանրանալու: Բաց յայսմանէ սոյն գաւառի մէջ  
թուրք պաշտօնեայ չի պիտի գանուի, նոյն իսկ ճանա-  
պարհորդութեամբ այստեղ հանդիպող թուրք պաշտօն-  
եան քաղաքէն ներս չմտնելով՝ պէտք է դուրս տեղ մը

պառկի, այնպէս որ բնաւ մէկ կողմէ մը մնաս չհասնի,  
այն բացառիկ ու ինքնավարական դրութեան, զոր շը-  
նորհած եմ անոնց՝ ինքզինքնին կառավարելու առանց  
արտաքին միջամտութեան:

Այսպէս պէտք է գիտնան ու կասերական կնքոյս  
վստահին:

Կ. Պոլիս. 29 շէվվալ 1036, 1618 Փետր. 17

Մ Ո Ւ Ր Ա Տ

Այս հրովարտակի տրամադրութեան համեմատ նշա-  
նակեալ 15.000 դահեկան դումարը, որ յետոյ մինչեւ  
24.000ի բարձրացաւ, տարուէ տարի հաւատարիմ անձի  
մը ձեռքով ուղղակի Պոլիս կը դրկուէր Այա Սօֆիայի  
մզկիթի վերատեսչին:

Բ.

ԷՅՄԷՐ ԲԱՇԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ. ԽՈՅ ՅԱԿՈՒԲ,

Զէյթունցիք թէ՛ իրենց երկրի դրից պատճառաւ եւ  
թէ՛ իբրեւ առանձնաշնորհեալ ժողովուրդ մը՝ շատ ազատ  
եւ համարձակ վարմունք ունէին ոչ միայն իրենց լեռ-  
ներու մէջ, այլ նաեւ այդ սա մաններէն դուրս ալ.  
միւս կողմանէ որոշեալ 15.000 դահեկան տուրքն ալ  
ուղղակի Պոլիս դրկելով Մարաշի կառավարութեան,  
ինչպէս նաեւ թուրք հասարակութեան նախանձը կը  
շարժէին իրենց վրայ. այս նախանձը գնալով ատելու-  
թեան ու թշնամութեան փոխուեցաւ մինչեւ պատերազմ  
յառաջ բերելու աստիճան:

Սուլթան Համիտ Ա.-ի օրով պայթեցաւ այս կռիւը

ընդ մէջ Հայոց եւ թուրքաց, երբ Մարաշի կառավարիչ էր Էօմէր քաշան, որը սաստիկ գրգռեցին թուրքերը ուղղութեան բերելու համար այս անպատկառ զէյթունացիները, որոնք սարկաբար գլուխ չէին խոնարհեցներ իրենց :

Էօմէր համաձայնեցաւ իւր կրօնակիցներու արած պահանջումին եւ՝ բաւական թուով զօրք առած 1780 թուականին եկաւ բանակեցաւ վարի թաղի ջրաղացներուն առուին մօտ, պահանջելով զէյթունացիներէն, որ տուրքը իրեն վճարեն. նոքա մերժեցին այս առաջարկը, դիմնալով մանաւանդ թէ առ երկույթ պատրուած մ'էր այս իւր ներքին թշնամութիւնն սքօղելու համար, եւ պատրաստուեցան դէմ դնելու: Բաշան լաւ դիտէր, թէ ուղղակի յարձակում գործելով չէր կարող արդիւնք ձեռք բերել, այլ աւելի ինք պիտի մնասուէր, այդ պատճառաւ նեղել ուզեց զանոնք պաշարումով, որ 7 ամիս տեւեց եւ որուն հիանալի համերութեամբ ու արիասրտութեամբ տոկացին բոլոր քաղաքացիք, այնպէս որ սպառած Հացին եւ ուրիշ պաշարեւէններու փոխարէն չամիշ կ'ուտէին, երբ այն ալ սպառեցաւ՝ անոր կուան աղալով իբր հաց կ'եփէին ու կ'ուտէին:

Էօմէր՝ տեսնելով, որ զէյթունցիք բնաւ անձնատուր ըլլալու մտադրութիւն չ'ունին, եւ ինք անոնց մէկ մաղին անգամ մնասելու անկարող կը գտնուի՝ բոլոր բարկութիւնը թափեց խեղճ ձիթենիներուն վրայ, որք բաւական ընդարձակ տարածութեան վրայ կը գլուխուէին այն կողմը, եւ ուրիշ շատ մը այգիներու ծառոց հետ անոնք ալ կարել տուաւ իւր քաջարագուկ զօրաց, որոնք մեծ հրճուանք կը զգային ամեն անգամ, որ ահագին շառաչմամբ թառալգլոր կ'ուզային անոնք. կարծես մէյմէկ զէյթունցիներ կը տապալէին յերկիր:

Երբ քաղցն ու նեղութիւնը ծայրաստիճանն առաւ-  
կացաւ քաղաքին մէջ, գլխաւոր անձինք ի ժողով գում-  
մարուելով այս վիճակին վախճան մը տալու միջոցնե-  
րուն վրայ կը խորհէին. այն ատեն վարի թաղէն Յակոբ  
անուն կարճահասակ, բայց ճարպիկ ու արիասիրտ մարդ  
մը, որ ամենուն քով ալ յարգանք կը վայլէր, յանձն  
առաւ սպաննել էօմէր բաշան. «Ես տեսայ երազիս մէջ,  
բաւ, որ այդ անօրէնը իմ ձեռքով պիտի սատկի», ու  
անմիջապէս դուրս ելլելով խոյ մը մօրթեց ու անոր  
մօրթը եւ լաւ ատրճանակ մը հետն առած գաղտագողի  
եւ զգուշութեամբ գնաց պահուեցաւ ժայռի մը ետեւ,  
որուն մօտ կ'արածէր թրքական բանակին պատկանող  
ոչխարներու երամակ մը. երբ գիշեր եղաւ, մթութենէն  
օգուտ քաղելով խոյին մօրթը վրան առաւ ու ձեռքերն  
ալ ոտքի տեղ գործածելով իբրև չորքոտանի մտաւ  
հօտին մէջ. ոչ ոք կարողացաւ նշմարել այս նորեկ խոյը,  
եւ երբ իրենց արօտավայրէն դառնալով ոչխարք մակա-  
ղեցան բանակին մօտ, մեր խոյակերպ Յակոբիկն յաջո-  
ղեցաւ թշնամեայն բաղմաթիւ վրաններուն մէջէն սպր-  
դելով նրաձանատար բաշայի վրանին մօտ անկիւն մը  
կծկուելու. բոլոր բնութիւնը լռութեան եւ ամբողջ բա-  
նակը խոր քնոյ մէջ ընկղմած էր. Նախախնամութեան  
ամենատես աչքը միայն անքուն կը հսկէր իւր այս  
տկար արարծի վրայ, որ օրինակելի անձնութեամբ  
մը իւր կեանքը կը վտանգէր յօգուտ հասարակաց  
բարւոյն :

Յակոբ անհամբեր կը սպասէր արշալուսի ծագման :  
Ժամերը եւ վայրկեանները կարծես սովորականէն աւելի  
դանդաղ կերպով կը յաջորդէին իրարու. հասաւ վեր-  
ջապէս ցանկալի բոպէն, բաշայի ձայնը լսելի եղաւ  
վրանին մէջ, եւ քիչ վերջը ջուրի սափորն ձեռին դուրս  
ելաւ ապտէս թ ընելու. Յակոբ ծունկի եկաւ եւ

«անուն իւսիւս քիւրիւստիւս» ասելով քաշեց ատրճա-  
նակին ըլթակը, պ ու մ պ ձայն մը եւ անա էօմէր ա-  
րիւնաշաղախ ինկաւ գետին եւ «օգնութեան հասէք...  
զարնուեցայ» ըսելով հոգին փչեց: Իսկ արիասիրտն  
Յակոբ առանց ժամանակ կորուսանելու կայծակի արա-  
զութեամբ հասաւ իւր ընկերաց մօտ, որք արդէն ոչ  
չատ հեռի յարմարագոյն վայր մը պատրաստ իրեն կը  
սպասէին եւ ատրճանակի ձայնն առնելով սկսած էին  
արդէն արշաւել թուրքաց վրայ, մինչդեռ սոքա հազիւ  
թէ դժբաղդ իրականութեան վերահասու եղած՝ անարեկ  
ու մոլորուն չէին գիտեր, թէ ի՛նչ ընել պէտք էր: Հայ  
խմբակի անակնկալ յարձակումէն ալ բոլորովին շուարած՝  
խեղճ մարդիկն ամէն բաներնին թողուցին ու սկսան  
խառնիխուռն փախչիլ: Իսկ Յակոբ սուսերամերկ՝ իւր  
ընկերաց գլուխն անցած ինկաւ գեղարդակիր դօրաց  
ետեւէն ու անոնցմէ շատերը ջարդեց: Այս կռուոյն,  
մէջ գէյթունցիք զինեալ էին ոմանք հրացանով ու սու-  
րով, ոմանք ալ ճ՛լուռով (կացինով):

Պատերազմին աւարը Սուրէնեան իշխանի ձեռքով  
բառնուեցաւ գէյթունցաց, որք այսպէս ծայրայեղ աղ-  
քատութենէն յանկարծ հարստացան թէ՛ պարէնով եւ  
թէ՛ զէնքով, գեղարդներն ալ վարի թաղեցւոց բաժին  
ինկան, այս պատճառաւ անոնց Ք ա ո կ ը լ ա թ անունը  
կուտան Տաճիկներ, այժմ ալ աղաւաղելով Ք ա թ կ ա լ ա թ  
կ'ըսեն:

Մեր հայրենակիցք ըստ սովորութեան սոյն պատե-  
րազմի յիշատակին մէկ-երկու տող նուիրած են:

էօմէր փաշա սպտէսթինի էյուճէ ալար,

Քօչտան գուրչուն կէլուպ էօմրիւն գալարարար,

Կաշէսի շաարր գափուսընտա տէվրիլտի գալար,

Եագուպ իշխան իկիթլիյին պիլտիրտի:

Թարգմ. էօմէր բաշան իր աղօթքը կատարեց,

Խոյէն դնդակ մ'եկաւ, հողին դուրս հանեց,  
Դին վրանի դրան առջեւ գլտորեց,  
Եագուպ իշխան քաջութիւնը ցոյց տուեց:

Այս պատերազմի սոյն փառաւոր վախճանը խնդու-  
թեամբ եւ երախտագիտական զգացմամբ լեցրնելով  
համօրէն զէյթուցւոց սիրտը՝ Սուրէնեան իշխանին ու-  
րաւոր եկեղեցական դասուն հետ միացած Գաւկըլար  
թաղին վրայ իշխան կարդեցին զՅակոբ, մաղթանքներ  
եւ օրհնութիւններ կարդալով անոր վրայ:

Այս պատմութիւնը քաղուած է Ձէյքունի Ս. Հրեշ-  
տակապետ եկեղեցւոյ ձեռագիր այսմաւուրին վերջը  
գրուած արձանագրութենէն, որոյ հեղինակն է տէր  
Պապուկ անուն քահանայ մը (1781 փետրուար 24ին):

Գ.

## ԱԼԻ ԲԱՇԱ. ԿԻՒՐԵՏԻՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ,

Էօմէր բաշայի կորուստը եւ թուրք զօրաց չարաչար  
պարտութիւնը շատ անմարսելի եկաւ տաճկաց. ուստի  
նորա յաջորդ Ալի բաշան թելադրեցին վրէժխնդիր ըլ-  
լալ այս ափ մը կ ե ա վ ու ը ն ե ր է ն, որք կը նսեմացը-  
նէին մ ե ծ մ ա ր գ ա ր է ի հաւատացելոց զինուորական  
փառքը: Այդպիսի թելադրութեան մ'ալ պէտք չկար.  
Ալի իսկ կը զգար ինքնին իւր ներսը ճշմարիտ իսլամի  
մը ունեցած պարտականութիւնը, ուստի 1782ին բաղ-  
մաթիւ զօրքերով եկաւ Կիւրեստին, որոյ կիրճը իսկոյն  
բռնելով հայերը թոյլ չը տուին թշնամւոյն, որ աւելի  
յառաջ գայ: Այնտեղ սկսաւ պատերազմը, եւ կարճա-  
տեւ ընդհարումէ մը յետոյ խեղճ Ալի յաղթահարուած  
սկսաւ խոյս տալ իւր անվեհեր բանակովը մէկտեղ, եւ



Թէպէտ յաջողեցաւ ողջամբ Մարաշ հասնիլ, սակայն  
կեալուրներէն յաղթուած ըլլալու ամօթը եւ զայրոյթը  
այնքան սաստիկ էր, որ հազիւ մէկ ժամ ապրեցաւ  
այնտեղ ու կաթուածահար ըլլալով մեռաւ :

Կ'ըսուի թէ այս պատերազմին մէջ նշանաւոր հան-  
դիսացած էր Ճիկիր իշխանը, որ 300ի շափ հայ կարիճ-  
ներով հալածեց թշնամին մինչեւ Իւն կիւթիւ կա-  
մուրջը, Չէյթուէն Ծ ժամ հեռու, եւ անոնցմէ շատերը  
սպաննեց՝ մեծ սարսափ ձգելով բանակին մէջ :

Սորա քաջագործութեան համար շնորհակալութիւն  
յայտնելով զէյթուէնցիք՝ հրաւիրեցին զինքը քաղաք եւ  
հող, բնակարան տալով անոր՝ Պ ո զ պ ա յ ի ր թ ա ղ ի ն  
մէջ բնակեցուցին՝ իրեն հետ ընկերացող 40 տուն հա-  
յերով մէկտեղ : Իսկ իրենց նախկին բնակավայրը, որ  
Չէյթուէնի հարաւային արեւմտեան կողմը կը գտնուի 8  
ժամ հեռաւորութեամբ եւ կը կոչուի Ճիկէր տէրէսի  
(Ճիկիրի ձոր), այժմ կը գտնուին միայն 6 տուն հայ :

Ժամանակ անցնելով Ճիկիրեանք բաւական զօրա-  
ցան ու հարստացան եւ երկու ճիւղի բաժնուելով՝ մին  
կոչուեցաւ Չ ա ի ս ը ր ե ա ն, իսկ միւսը Չ ա լ ը խ ե ա ն .  
այս վերջին ճիւղէն էր Յարութիւն պատուելին, որ նը-  
շանաւոր հանդիսացաւ 1878ի պատերազմին մէջ ու  
մեռաւ 1899ի տարին Բաքրեշտ եւ որ սակայն Չա-  
քրեան կը ստորագրէր :

Չալըխեաններ թէեւ ժամանակ մը փայլեցան հարրս-  
տութեամբ, բայց պրուսացի Գրիգոր անուն գործարա-  
նատիրոջ մը խորհրդով Չէյթուէնի մօտ գործարան մը  
չինելու ձեռնարկելով՝ չյաջողեցան ի գլուխ հանել, եւ  
այս պատճառաւ իրենք ալ փճացան : Իրենց հարստու-  
թեան միակ յիշատակ մնացած է այժմ նոյն գործարա-  
նին մէջ գործուած մետաքսեայ եւ առանց կարի խիստ  
գեղեցիկ շուրջառ մը, զոր նուիրած են Ս. Յովաննէս  
Եկեղեցեացի :

Այլի բաշա տաճկաց կողմանէ կը կոչուէր Հազրէթի  
Ալի, իսկ անոր յաղթուած տեղը կոչեցին Ալի-դա-  
յասի, որ այժմ կ'անուանուի Ալա-դայասը:

Ասոր համար ալ այսպէս կ'երգեն զէյթունցիք.

Այլի բաշա կիւրեատինէ եէթիշտի,

Չէյթունլուար իլէ օրտա թութըշար,

Մազլուպ դաշուպ, կիւճիլէ Մարաշա տիւշտիւ,

Տամլա էնտիրիւպ, ախրէթինէ դավուշար:

Թարգմ. Այլի բաշան կիւրեատին հասաւ, եկաւ

Չէյթունցիներուն հեա բանուեցաւ,

Յալթուած փախաւ, հազիւ հազ Մարաշ ինկաւ,

Կաթուածն իջաւ, օրհասը դաւաւ:

Գ.

## ԳՍԼԷՆՏԷՐ ԲԱՇԱ, ԿԻՐԱԿՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Էօմէր և Այլի բաշաներու պարտութիւններուն վրայ  
անցան շատ տարիներ, եւ Չէյթուն իր ազատութեան  
ու կէս անկախութեան բարիքը կը վայելէր լիովին մին-  
չև 1808 թուականը, որ ատեն Մարաշի կառավարիչ  
Գալէնտէր բաշա կեդրոնական կառավարութեան դադա-  
նի հրահանգներովը յանկարծ Չէյթունի վրայ եկաւ մեծ  
բանակով մը եւ, իւր նախորդի օրինակին հետեւելով,  
փոխանակ յարձակում գործելու՝ պաշարուածով նեղեց  
դայն 9 ամիս շարունակ:

Ժողովուրդը մի քանի աննշան ու փոքր կռիւներէ  
յետոյ յանձն առաւ վերջապէս վճարել տարեկան 60  
քսակ (մէկ քսակը՝ 300 դահեկան) կամ 30,000 դահե-  
կան տուրքը, զոր կը պահանջէր Գալէնտէր, և այսպէս  
հաշտուելով իրարու հեա՝ հեռացաւ այն տեղէն բաշան:

Բայց դժուար էր զէյթունցւոց այս պայմանը, մաւ

Նաւանդ իրենց ունեցած առանձնաշնորհման հակառակ . հետեւաբար և դրժելով իրենց խոստման՝ չվճարեցին զայն ընդ երկար , յայտնի կերպով ապստամբելով կառավարութեան դէմ : Գալէնտէր բաշա փոխանակ պատերազմի մը անստոյգ հետեւանքներուն մատնելու գործը անուշ տեղը կապեց :

Այդ միջոցներուն կիլիկիոյ մեծանուն կիրակոս կաթողիկոսը Սսոյ վանքին շուրջը բարձր ու ամուր պարսպով մը պատած ըլլալուն՝ կանկածելի դարձած էր կառավարութեան իրբև գործակից ու խորհրդակից զէյթունցի ապստամբներուն , ուստի Գալէնտէր հրամանատարացած էր , որ զայն ձերբակալելով կախազան բարձրացնէ : Բայց անկարելի էր իրեն գործադրել այդ հրամանը , վասն զի Չատրրճողլու կոչուած պէյը , որ կ'իշխէր Սսոյ , մտերիւ բարեկամ ու պաշտպան ըլլալով կաթողիկոսին՝ անշուշտ պիտի չյանձնէր զայն Գալէնտէրի ձեռքը : Սորամանկ բաշան պարագաներէն օգուտ քաղել ուզեց : Իւր մօտ կանչելով Մարաշի հայ երեւելիները՝ համոզեց զանոնք , որ կաթողիկոսը այնտեղ հրաւիրելով՝ զէյթուն գրկեն , որ երթայ ապստամբ հայերը յորդորէ չ'ըմբոստանալ ընդդէմ կառավարութեան , այլ վճարել իրենց խոստացած 30,000 դահեկան տուրքը :

Մարաշցիք բոլորովին տնդիտակ բաշայի չար դիտաւորութեանց՝ համակերպեցան նորա առաջարկութեան եւ հրաւիրեցին նորին Սրբազնութիւնը գալ ի Մարաշ : Եւզճ կաթողիկոսն եւս չգիտնալով , թէ ի՞նչ օտակալի դաւադրութիւն մը կը նիւթէր իրեն դէմ , միամտաբար գիմնելով Չատրրճողլուի՝ նորա հրամանն ստացաւ ու Ս. Ծննդեան Աւագ տոներուն հասաւ Մարաշ , ուր հազիւ մի քանի օր հանգիստ առաւ եւ ահա Ծննդեան խթման երեկոյին բաշայի աղաներէն թիւ ֆէն կճի պաշի Գէյզուլլահ պէյը 10 ստիկանով եկաւ առաջնորդարան ,

ուր իջեւանած էր սրբազան կաթողիկոսը, ձերբակալելու դայն՝ մինչ կը ճաշէր :

Կառավարութեան հրամանը իրեն հաղորդելէ յետոյ՝ առաջնորդեցին դայն դէպ ի բաշայի պալատը եւ այնտեղ առանձին խուցի մը մէջ բանտարկեցին՝ առաւօտուն կախազան բարձրացնելու դիտումով :

Ենզճ կաթողիկոսը յուզուած, յայլայլած՝ ինքզինքը յանձնեց Նախահնամութեան կամաց, «Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յուժմէ երկեայց» սաղմոսը մրմնջելով : Միւս կողմէն այս տխուր դոյժը վարկենապէս ծաւալելով քաղաքին ամէն կողմը՝ ի խոր սուգ համակեց ամբողջ հայ ժողովուրդը, որոց գլխաւորները քահանայից հետ մէկտեղ դիմեցին բաշային՝ կաթողիկոսին արձակումը խնդրելու համար, իսկ նա կայսերական հրամանագիրը ցոյց տալով անոնց՝ մերժեց ո՛ր եւ է միջնորդութիւն : Շատ մը թախանձանքներէ յետոյ հարիւր հազար դանեկան կաշառքի շնորհիւ յաջողեցան վերջապէս ԱՊ օրից պայմանաժամով արձակում ստանալ իրենց երաշխաւորութեան տակ : Այդ ահագին դումարը նոյն իսկ այն գիշերը հանդանակելով իրենց մէջ հայերը՝ յանձնեցին ընչաքաղց Գալէստէրին, որուն անկման պատճառ պիտի դառնար այն յետոյ :

Մէկ օրուան մէջ կենդանութենէ ի մահ եւ մահւանէ ի կեանս վերադարձող Ս. Հայրապետը անհուն երախտագիտութեամբ ի առ Աստուած եւ առ սիրեցեալ իւր հօտը՝ արտասուածօրմ աչքերով կատարեց Ս. Ծննդեան պատասազը եւ արտաբուխ մաղթանքներով օրհնեց բոլոր ժողովուրդը, որոնց վիշաք ուրախութեան փոխուելով՝ սկսան կրկնապէս շնորհաւորել զիրար բար ի Ս. Ծննդի կոչելով այն Ծնունդը, որ պատահեցաւ Քրիստոսի 1818 թուականին :

Այնուհետեւ՝ վտեթացին այս եղելութիւնը տեղե-

կազմել առ Պատրիարքն Կ. Պոլսոյ Տ. Աբրահամ Աբրահամի Սեբաստիական, որ առանց ժամանակ կորուսանելու բողոք բարձաւ Բ. Գրան ԱՅՍ կղերականներով հանդերձ: Շուտով երեւցաւ այս բողոքի արդիւնքը: Քառասնօրեայ պայմանաժամը գեռ լրացած չէր, եւ ա՛նա Գալէնտէրի պաշտօնանկութեան հրամանը դուրս եկաւ: Այս հրամանագրով իւր ստացած 100,000 դահեկանի կաշառքը վերադարձնելու և իւր ամբողջ գերդաստանով Մալաթիոյ մէջ ցկեանս աքրոր մնալու կը դատապարտուէր նա:

Հայերը երբ ստացան Բ. Գալէնտէն ելած այս էմբրո Սամիւն (հրամանագիր) բամազան պայրամի Արիֆէին\* օրը՝ հաղորդեցին բաշային, որ կարծես շանթա՛նար եղաւ և առանց ամչնալու կ'աղաչէր հայ մեծամեծներուն որ միջնորդեն ու ներում բերել տան իրեն: Անօգուտ էր այդ խնդիրը, հետեւեալ օրն իսկ պարտաւորեցաւ վճարել իւր առած գումարը Հարուն-Նուսուֆ անուն հրէայէն փոխառութիւն անելով, իսկ սա՛ բաշայի կահկարասիքը ու ամէն ունեցածը աճուրդի հանելով՝ ստացաւ իւր պահանջքը: Պայրամի Գ. օրն ալ ինք մեկնեցաւ դէպի Մալաթիա, ուր երեք օր միայն ապրեցաւ ու կաթուածահար ըլլալով՝ մեռաւ:

Մարաշի թուրքեր շատ սգացին անոր վրայ, մահաւանդ իրենց անցուցած տխուր պայրամին համար: Ահաւասիկ ինչ կ'երգեն զէյթունցիք ասոր համար.

Գալէնտէր բաշա տա Զէյթունա կէլտի,  
 Տէվլէթ վերկիւսինի թալապ իյլէտի,  
 Զէյթուն գուրու իւզիւմը էքմէք պէլլէտի,  
 Գալէնտէր օսանուպ սուլհա մէյիլլէտի:  
 Սօնրա Զէյթունլուար վերկի վերմէտի,  
 Բաշա իսէ միւրաարնա էրմէտի,

---

\* Զարմանալի գուգաղիպութիւն, Ս. կաթողիկոսը՝ Ս. Ծննդեան խթման իրիկունը, իսկ բաշան՝ Արիֆէի օրը համանմա՛ն ձախորդութեան հանդիպեցան:

Չէյթուհու ուրմաղա ազլը սարմաար ,  
Կիրակոս կաթողիկոսը պու սրմարլաար :

Թարգմ. Գալէնտէր բաշան ալ Չէյթուհու աշաւեց ,  
Տէրութեան հարկը անկէ պահանջեց ,  
Չէյթուհու չոր չամիչը հաց նկատեց ,

Գալէնտէր ձանձրացաւ , հաշտութիւն առաջարկեց :

Յետոյ Չէյթուհոցին հարկը չը տուաւ ,  
Բաշան իրեն նպատակին չհասաւ ,

Չէյթուհու դարնելու խելքը չհասաւ ,

Կիրակոս կաթողիկոսն ինքն ապսպրեց :

Անակնկալ մահէ մը այսպէս աղատուելէ յետոյ Տ. Կիրակոս կաթողիկոս Բ. Դրան պահանջման համեմատ Կ. Պոլիս գնաց 1819ին պատրիարքարանի հրաւիրանօք և այնտեղ իւր անմեղութիւնը հաստատելով՝ մեծ պատիւ դատաւ թէ՛ սուլթան Մահմուտ Բ. ի և թէ՛ մեր ազգայնաց կողմէ : Իւր այս դիրքէն օգուտ քաղելով ազգասէր կաթողիկոսը միջնորդեց սուլթանի մօտ ի նպատակ Չէյթուհու , անոր գթութիւնն հայցելով այս աղքատ ժ ղովրդեան վրայ , և յաջողեցաւ 20,000 դահեկանի իջեցնել կառավարական տուրքը , որ 30,000 ի բարձրացած էր : Այն տարին 20,000 ամբողջ վճարուեցաւ , իսկ յաջորդ տարիները սուլթան Մուրատի հրովարտակին համեմատ 15,000ական դահեկան միայն հաւաքուելով՝ կը դրկուէր Պոլիս յատուկ մարդու մը ձեռքով՝ որպէս սովոր էին կանխաւ : Իսկ Ս. կաթողիկոսը միեւնոյն տարին Սիս իւր աթոռը դարձաւ և երեք տարի ալ ապրելէ յետոյ իւր նախկին պաշտպան Չատրըճօղլուի ձեռամբ թուհաւորուելով վախճանեցաւ :

Կ'ըսուի թէ՛ կաթողիկոսը սուլթանին ներկայացած ատեն , սա երկու հրեշտակներ տեսնելով անոր ուսերուն վրայ՝ անարեկեր է , նոյնպէս իւր բոլոր զրպարանիչք հը-

բաշխւք իմն յերկիր կործաներ են, երբ սա քրիստոնէա-  
կան հեղութեամբ ներելով անոնց օրհնութիւն կար-  
թացեր է վրանին եւայլն :

Ե .

### Չ Ա Ք Ա Ն - Օ Ղ Լ Ո Ի

1810 թուականի ատենները Հալէպի մէջ կար մի  
նշանաւոր թուրք անձնաւորութիւն Հիւլպիւլ-օղլուն  
մականուամբ, որ այն ժամանակները թիւրքիոյ մէջ  
գտնուած շատ մը ուրիշ պէյերու նման ինքն ալ ըստ  
հաճոյից կ'իշխէր երկրին գրեթէ ինգնագլուխ եւ շատ  
անգամ ալ կ'ըմբոստանար սուլթանին կառավարութան  
դէմ : Այսպիսի մէկն էր նաև Եօզկատի բռնակալ Չա-  
բանօղլու ձէլալ Մէհմէտ բաշան :

Սուլթանը ուզելով գայլը գայլին խեղդել տալ,  
հրամայեց այս վերջնոյն երթալ տիրել Հալէպի եւ հնա-  
զանդութեան բերել Հիւլպիւլ-օղլուն : Նա ալ 30,000  
պաշրպօզուզներէ բաղկացեալ բանակ մը կազմելով  
եկաւ յարձակեցաւ ապստամբ քաղաքին վրայ եւ ա-  
ռանց դժուարութեան, քիչ ատենէն կատարելապէս նը-  
ւաճեց զայն : Վերադարձին (1819 թ.) երբ Մարաշէն  
կ'անցնէր, տեղացի թուրքերն աղաչեցին, որ Չէյթունի  
հաշիւն ալ կարգադրէ ու այնպէս երթայ. «Շու պիւք-  
տէ պիր թագրմ ուղուրսուզ տօմուղլար վար տըր, քի  
տախմա պիզի թաճիզ էթմէքտէ տիրլէր, պունլարը տա  
բաքլէյուպ էօյլէ կիտէսին.—սա անտառին մէջ կարգ  
մը անդգամ խողեր կան, որոնք միշտ անհանգիստ կ'ա-  
նեն մեզ, ասանք ալ մաքրէ ու յետոյ դնա՛», ըսին :

Չարան-օղլուն Չէյթունն ալ Հալէպի նման դիւրա-  
պատրաստ որս մը կարծելով յօժարակամ յանձն առա-  
ղած առաջարկը, եւ իր անկանոն դօրաց անազին բա-

նակով յարձակեցաւ անոր վրայ արեւելեան կողմէն մինչեւ Քրսրդ կոչուած տեղը, որ անկէ 6 ժամ հեռաւորութիւն ունի :

Գարուն ըլլալուն Ջահան գետը յորդած էր, հետեւաբար եւ վրայէն անցնիլն անկարելի. այժմու վարդապետին կէնտէրէն (վարդապետին կամուրջը) ալ, որ կօքսիւղեան Յովհաննէս եպիսկոպոսը շինել տուաւ, դեռ եւս գոյաւթիւն չ'ունէր, ուստի գանուած նեղ կամուրջէն հաղիւ 500 դօրք կարողացաւ անցնիլ մըս կողմը : Ասոնք ու առանց բան մը անել կարենալու Չ հոգի կորուստ տալէ յետոյ ամէնն ալ գերի ընկան զէյթունցւոց ձեռքը ու 6 ամիս ամենայն հանգրստութեամբ խնամուեցան : Իսկ Չարան-օղլու յուսակրտուր եղած ձգեց զնայ Եօղղատ եւ այնտեղի հայերուն աղաչեց, որ գրեն կիլիկիոյ կաթողիկոսին միջնորդ հանդիսանալ զէյթունցւոց մօտ թուրք գերեաց աղատութեանը համար :

Այս միջնորդութիւնը կատարուելով՝ գերիներն արձակուեցան եւ երթալով իրենց տեղերը շատ գովեստով խօսեցան զէյթունցւոց կողմանէ իրինց ցոյց տուած հիւրասիրութեան եւ մարդասիրութեան համար : Շատ գոհ մնալով Չարան-օղլու՝ շնորհակալութեան նամակ գրեց կաթողիկոսին եւ մեր իշխանաց, ուր ի միջի այլոց ըսած էր, «Ձեզի պէս կարիճներու հետ չէր վայելեր որ ես կռիւ մղէի, բայց յանցանքը իմս չէ, այլ մարաչցիներուն, որոնք թելադրեցին զիս» : Ասոր դէմ զէյթունցիք ալ բարեկամական նամակով մը պատասխանեցին եւ նամակին հետ տեղական ձեւով շինուած գեղեցիկ հրացան մը եւս ընծայ զրկեցին անոր Պերսեան Մանուկ աղայի ձեռամբ, ինքն ալ փոխադարձ 4 ձի ընծայ զըրկեց 4 իշխանաց :

Ասոր համար ալ հետեւեալ կերպով կ'երգեն զէյթունցիք.



Օսմանյը թիւֆէնկի հէք չաթըր բաթըր ,  
 Ձէյթուէն թիւֆէնկէրի սայմատը խաթըր ,  
 Չարան ասքէրլէրին վուրտուգճա եաթըր ,  
 Տօսթում Չարան օղլու , վազ կէչ Ձէյթուէնտան :

Թարգմ. Օսմանեան հրացաններուն խուլ որոտին  
 Ձէյթուէնի հրացաններն արժէք մը չտուին ,  
 Չարանի գօրքերն կը փռեն գետին ,  
 Սիրելիս Չարան օղլու , ձգէ սա Ձէյթուէնը :


2,

1009  
 392/10  
 01/165

ՔԷՕՍԷ ԲԱՇՍ. ԿՈԿԻՍՈՆԻ ԿՈՒԻԻԸ,

Թիւրքիոյ մէջ հպատակ ազգաց շարժումը եւ անոնց  
 ձգտումը դէպի անկախութիւն սկսած էր անհանգիստ  
 անել կառավարութիւնը եւ մտատանջութիւն պատճառել  
 իւր ապագայի մասին : Յունաստան նոր ստացած  
 էր իւր կազմակերպութիւնը ու Եգիպտոս կը խլրաէր .  
 Ալի բաշա մը Եանսեայի մէջ ինքնագլուխ դիրք կը բռն-  
 'սէր ու Ձէյթուէն՝ իւր ունեցած մէկ հրովարտակի կոթը-  
 'սած՝ կառավարական ամեն նոր առաջարկ կը մերժէր .  
 ասոնք լաւ ապագայ մը չէին խոստանար թիւրքիային ,  
 ուստի թիւրքիա նպատակ դրեց իրեն ջնջել այս նորա-  
 ծիլ սերմերը իրենց սաղմնային վիճակին մէջ իսկ : Մէկ-  
 դի թողով այն ձեռնարկները , որոնք նա ի գործ դրաւ  
 վերոնշանակեալ մէն մի երկրաց համար , մենք կը պատ-  
 մենք այն ամէն դէպքերը , որք յաջորդաբար տեղի ու-  
 'նեցան Ձէյթուէնի մէջ կեդրոնական կառավարութեան  
 գաղտնի կամ յայտնի թելադրութեամբ :

Մարաշի կաթարիչները անյաջող ելած էին իրենց  
 արշաւանքներու մէջ , նայնպէս Չափան-օղլու պարտը-  
 ւած ու ձեռնուսայն վերադարձած էր , ուստի Ձէյթուէնը



նուաճելու գործը յանձնուեցաւ Կեաարիոյ կառավարիչ  
Քէօսէ բաշային, որ 1829 թուականին բաղմաթիւ հեծ-  
եալներով եկաւ մինչեւ Կէօքսիւն (Կոկիսոն)՝ Ձէյթունէն  
12 ժամ հեռաւորութեամբ. հայերն ալ իրենց փոքրաթիւ  
զնդով արդէն հոն հասած էին, արգիլելու համար  
զայն, որ աւելի առաջ չի գայ: Պատերազմը սկսաւ  
այնտեղ:

Հաղիւ տաք կերպարանք մը առած էր կռիւը եւ  
ահա իւր վախճանին հասաւ այն՝ Տաճկաց կորսկոր  
փախստեամբ, վասն զի Ձէլլադ մականուանեալ Եա-  
ղուպեան Հաջի Աստուածատուր աղան, թշնամւոյն դրօ-  
շակակիրը մէկ զնդակով գետին փռելով, մեծ վախ ճը-  
գեց անոնց սրտին մէջ, եւ անոնք այլ եւս պատերազմը  
չարունակելու սիրտ չ'անելով՝ գլուխն ազատողը փա-  
խաւ:

Ձէյթունցին չէ մոռցած յիշատակել այս գէպքն ալ  
իւր երգերուն մէջ.

Ձէյթուն իկիթլէրի Կէօքսիւնէ կիրաթի,  
Բաշա պայրադտարը դարչույա տուրտու,  
Եաղուպեան իշխան իսէ անը թամ վուրտու,  
Աթրնտան երգըլուպ ճան թէսլիս օլտու,  
Փաշանըն օրտուսու հէման պօզուլտու:

Թարգմ. Ձէյթունի քաջ զօրքը Կոկիսոն մտաւ,  
Փաշային դրօշակիրը անոնց դէմ կեցաւ,  
Եաղուպեան իշխան ճիշտ նշան զարկաւ,  
Ձիէն գլտորելով հոգին դուրս ելաւ,  
Բաշային բանակը իսկոյն ցրուեցաւ:

է

ՆԵՐՔԻՆ ԽՌՈՎՈՒԹԻՒՆ, ՍՈՒԼԷՅՄԱՆ ԲԱՇՍ,

Զէյթունցիք հակառակ իրենց վրայ ի գործ դրուած ճնշումներու՝ կը շարունակէին ըստ առաջնայն հաստուցանել իրենց տարեկան տուրքը՝ 15.000 դահեկան՝ ուղղա՛լի Պոլիս զրկելով :

1830 թուականին նոյն գումարը յանձնուեցաւ Զէյթունցի Պերսեան Մահաթի Մանուկի, որ անձամբ տանելով յանձնեց Այա Սօֆիա մզկիթի միւթէվէլլին, որ շնորհակալութիւն յայտնելէ եւ ըստ սովորութեան զայն պատուասիրելէ յետոյ՝ հարցուց անոր թէ «Զէյթունի մէջ տաճիկ կա՞յ եւ թէ ի՞նչպէս կը վարուիք անոնց հետ», Մանուկ պատասխանեց, «14 տուն տաճիկ կայ եւ անոնց հետ կը վարուինք այնպէս, ինչպէս կը վայելէ բարի դրացւոյ մը» : Թուրք միւթէվէլլին, չը գիտեմ ո՞րպիսի խորհրդով եւ ի՞նչ զգացմամբ, կրկնեց այն ատեն, «Երբ որ հայրենիքդ դառնաս՝ իմ կողմանէ բարեւ խօսէ չորս իշխանաց, թող ջանան ա՛ եւ իցէ միջոցաւ մը իրենցմէ հեռացնել այդ մարդիկը, վասն զի իմ ցեղակիցներուս վաստ գործերը ծանօթ եւ ինձ. երբ կարեւոր ոյժ մը կազմեն՝ վարձանք պիտի ըլլան ձեր գլխուն. բարեկամ արար կ'ազդարարեմ ձեզ այս, ինչպէս կ'ուզէք՝ այնպէս գործեցէ՛ք» :

Մանուկ շնորհակալութիւն յայտնելով մեկնեցաւ անկէ եւ Զէյթուն վերադառնալով՝ այս խօսակցութեան բովանդակութիւնը հաղորդեց իշխանաց, որոնք խորհրդակցելով վճռեցին գործադրել այդ խորհուրդը Սուրէնեան իշխանի յղացած միջոցաւը, որուն ամենն ալ հաճութիւն տալով՝ իրարմէ զատուեցան :

Սուրէնեան այն իրիկուն մի քահանայի ընկերակցութեամբ գնաց Հաճի Ի պրահի մեան Հասան աղայի տունը եւ առաջարկեց անոր, որ Ռազիէ անուն դուստրը իւր որդւոյն Մարտիրոսին կնութեան տայ. «Ալլահըն էմրի իլէ փէյղամսէրինիդին գավլը իլէ Ռազիէ քերիմէնիդի մախտոււմը՝ Մարտիրոսա վէրմէնիդի թալապիաէրիմ» — «Աստուծոյ հրամանաւ եւ ձեր մարգարէին կանոնաւ Ռազիէ անուն դուստրդ Մարտիրոս անուն որդւոյս տալերնիդ կը խնդրեմ» սովորական բանաձեւով :

Հասան աղան իսլամի մը աղջիկ քրիստոնէի մը արուիլը անկարելի եւ օրինաց դէմ ըլլալը առարկելով՝ աղաչեց, որ հրաժարի իշխանը այդ խորհուրդէն : Սուրէնեան սնդեց իւր պահանջման վրայ՝ ըսելով, որ «Աղջիկդ թո՛ղ նորէն իսլամութեան մէջ մնայ, իւր կրօնական պարտականութիւնները ազատօրէն կատարէ, բաւական է որ հաճիս հարսնացնել զայն որդւոյս հետ, ասով աւելի եւս կ'ամրասնդի մեր մէջ եղած բարեկարգութիւնը. հակառակ պարագային պէտք է ելլես այսանդէն քո բոլոր աղգակիցներովդ. մինչեւ առաւօտ այս երկու պահանջումներէս մին պիտի գործադրես անպատճառ.» այսպէս ըսելով՝ մեկնեցաւ :

Թուրքերը որովհետեւ շատ հողերու եւ կալուածներու տէր դարձած էին, անկարելի էր զանոնք թողլով հեռանային երկրէն, իսկ միւս պահանջման համակերպին ալ իրենց կրօնական զգացման կը հակառակէր. ուստի ուրիշ միջոց մը խորհեցան ու գործադրեցին, եւ այս բանը շատ աղէտալի եղաւ Հայոց համար :

Նոյն գիշերը թուրքերը ընդ ամենը ՂԱ տուն թողլով Սուրէնեան թաղը գնացին ապստամբեցան Ետիուպեանց թաղը : Իշխանը ի սկզբան մերժեց զանոնք, սակայն ի վերջոյ անոնց սաստիկ թախամբանքներուն չի

կրնալով դիմադրել՝ զիջաւ իւր հովանւոյն տակ առնել զանոնք : Հետեւեալ օրը, երբ իշխանք իրարու մօտ եւկան, Սուրէնեան Հաճի Խաչիկ ազան բացատրութիւն պահանջեց Եաղուպեանի վարմանց մասին, նա ալ ի պատասխան՝ «Ս.ա այժմ թոյլատրեցի իմ թաղիս մէջ բնակութիւն հաստատելու, վասն զի շատ աղաչեցին եւ խոստացան հաւատարիմ հպատակ մնալ ինձ եւ ձեզ միանգամայն, սակայն մի քանի ամիս յետոյ կը վանեմ ամենն ալ, ուստի ներողամիտ եղէ՛ք ինձ» ըսաւ : Երբ Սուրէնեան նոցա անյապաղ հեռացումը պահանջեց, Եաղուպեան մի ամբօս պայմանաժամ խնդրեց, առարկելով թէ իւր արժանապատուութեան դէմ էր միանգամ հիւրընկալութիւն չնորհելէն յետոյ ելլել մէկէն զանոնք վանելը, միւս իշխանք ալ այս առարկութիւնը իրաւացի դատելով՝ ի նպատակ Եաղուպեանի սկսան միջնորդել, սակայն Սուրէնեան իւր պահանջման վրայ անդրդուելի մնալով՝ ընդդիմաբանին զայրոյթը շարժեց, որը խըստութեամբ դռաց՝ «Թուրքերը պաշտպանութեանս տակ առած եմ, ինչ որ կարող ես անել՝ արա՛», եւ այսպէս բաժնուեցան նոքա իրարմէ :

Հետեւեալ օրը Սուրէնեանք պատերազմի յայտարարութիւնն արին՝ Եաղուպեան թաղի Չրաղացին ջուրը կտրելով, այս վերջինք վանք երթալով բողոքեցին եւ պիսկոպոսոսաց այս իրողութեան դէմ, սրբազաններն ու թաղեցիք Սուրէնեանի տունն երթալով յորդորեցին, համողեցին զայն, որ թողու իւր բռնած այս թշնամական դիրքը, որ ժանտ աղէտներու դուռ պիտի բանար իւր ազգակից եղբարց համար, մանաւանդ որ իւր հաւկառակորդը ոչ միայն իրեն արենակից ու կրօնակից եղբայրն էր, այլ նաեւ խնամութեամբ ալ կապուած էր իւր տան հետ :

Այս ամեն յորդորները բնառ ներդործութիւն չ'արին

Նորա արաին, վասն զի որոշած էր նա այլ եւս զէնքով  
չափուիլ իւր հակառակորդին հետ, ուստի սրբազան ե-  
պիսկոպոստոնք ճարահատեալ զիմեցին Յաղուպեանին,  
որ խոստացաւ հետեւեալ օրն իսկ վանել թուրքերը:

Նորա այս զիջումը հաշորդուեցաւ թէեւ Սուրէնեանի  
բայց անօգուտ, իրեն համար իւր հակառակորդն այլ եւս  
ուխտադրուծ մ'էր, ուստի կ'ուզէր անդատճառ պատ-  
ժել նորա ուխտազանցութիւնը:

Հաշտութեան համար եղած բանակցութեան այս  
անյաջող ելքը սաստիկ վշտացուց բարեսիրտ եկեղեցա-  
կանները, որոնք լալով մեկնեցան զէպ իրենց վանքը,  
եւ պատերազմն սկսաւ:

Յաղուպեանի միացաւ եւ Շօլքոեան, իսկ Սուրէն-  
եանի միացաւ Յնի-տիւնեա իշխան, հետեւաբար եւ ամ-  
բողջ Ջէյթուն բաժնուեցաւ երկու հակառակ կուսակ-  
ցութեան եւ երկու թշնամի բանակներու, որոնց իւրա-  
քանչիւրը կարեւոր զիբքեր բռնելով իրարու դէմ՝ ճա-  
կատեցան, այնպէս որ մէկ կողմէն միւսն անցնող անա-  
սունն իսկ անխնայ կրսպաննուէր:

Այս պահուն սարսափով խոյս տուած էին բոլոր  
թուրքեր, որոնք անգիտաբար պատճառ դարձած էին  
սոյն եղբայրասպան պատերազմին, եւ թ' ա'ն ըր կոչուած  
տաճկական զիւզն ապաստանած՝ Ջէյթունէն զէպ արեւ-  
մուտք Յ ժամ հեռաւորութեամբ:

Երբ պատերազմը սաստկացաւ՝ Մարաշու կառավա-  
րիչ Պայագիտ-օղլու Սիւլէյման բաշան, որ արդէն պա-  
տեհութեան կը սպասէր իւր նահորդաց վրէժը լուծելով  
հանդերձ կեդրոնի հրամանգն ալ գործադրելու, խորա-  
մանկութեամբ լուր դրկեց Յաղուպեանի այս իմաստով՝  
«Որովհետեւ դուն իմ կրօնապիցներուս պաշտպանութիւն  
արիր, իմ եւ բոլոր միւսիւլիմանաց երախտագիտութեանս  
արժանի ես, ասոր փոխարէն ես ալ կ'ուզեմ օգնել քեզ

քո թշնամւոյդ դէմ, եթէ կ'աւզես՝ ամբողջ բանակովս  
գամ եւ բոլոր հակառակորդներդ բնաջինջ անեմ» :

Եաղուպեան վեհանձնաբար պատասխանից, «Ես իմ  
հակառակորդէս վրէժ լուծելու համար օտարազգիի օգ-  
նութեան չեմ կարօտիր, երբեք բան մըն ալ չեմ սպասեր .  
Եաղուպեանը վատ մի կարծեր, եւ եթէ այս ազգարա-  
քութեանս հակառակ՝ յանդգնիս ստք կոխել Չէյթունի  
հողը՝ լաւ գիտցի՛ր, որ զէնքերս վրադ պիտի դար-  
ձնեմ» :

Նենգաւոր բաշան, երբ այս բացասական պատաս-  
խանն ընդունեց խրոխտ իշխանէն, Սուրէնեանին դի-  
մեց միեւնոյն առաջարկով՝ Մարաշ հրաւիրելով զայն  
միանգամայն : Այս վերջինս վատաբար ընդունեց հա-  
սարակաց թշնամւոյն սոյն ազգամիլաս խորհուրդը եւ  
զնաց Մարաշ, ուր իրեն կը սպասէին թուրք ջոկատներ,  
որոնց առջեւն ինկած բերաւ բանակեցուց Ս. Սասունա-  
ծածնի վանքը 1831 ին :

Եաղուպեան տեսնելով զայս՝ կատղեցաւ եւ ամէն  
ճիգ թափեց, որ ի պարտութիւն մատնելով իւր հակա-  
ռակորդը՝ օտա : թշնամւոյն ալ խորհուրդը ի դերեւ  
հանէ, ուստի գիշեր մը խուժք մը սպառազէն մարդոց-  
մով յաջողեցաւ անոր ամրացած բերդի պարսպէն ներս  
անցնիլ չուանէ սանդուղներու օգնութեամբ : Բոլոր  
պատասպարեալք խոր քնոյ մէջ էին, հետեւաբար եւ ա-  
ռանց դեմադրութեան մը հանդիպելու ամենն ալ սուրէ  
անցուց, միայն մանկիկ մը աղատեցաւ օրօրոցին մէջ եւ  
ուրիշ չորս անձինք, որոնք դիպուածով այն գիշեր  
բացակայ մնացած էին, ասոնք էին Մարտիրոս Սուրէն-  
եան, Բասիլոս Սուրէնեան, Ախպաշ Սուրէնեան եւ Մ.  
Վարդեվար Սուրէնեան, որոնք վերադառնալով երբ  
տեսան իրենց պատահած այս ահագին աղէտը՝ սարսա-  
փահար մնացին, այսու ամենայնիւ փոխանակ լքանելու՝

աւելի սաստկացուցին պատերազմը :

Բաշան խճանալով այս դէպքը՝ ա՛ն ու դողով պաշարուեցաւ եւ ըսաց . «Պու Նաղուպեանլար ազկըն աւամլար տըր , քէնտի միլլէթտաշլարընը պէօյլէ գըլըճտան կէչիրտիլէր իսէ , արթըդ պիզի պու թէքքէնին իչինտէ տիրի տիրի եէրլէր» .

— «Այս Նաղուպեանները կատաղի մարդիկ են , իրենց ազգակիցները քանի որ այսպէս սուրէ անցուցին՝ անկասկած մեզ այս վանքին մէջ կենդանւոյն կը կլլեն» : Եւ այս սարսափի ազդեցութեան տակ , թողլով վանքը մեկնեցաւ դէպի Մարաշ : Տեղւոյն տաճիկ մեծամեծները որոնց գրգռութեամբը շատ մը թուրքեր բաշայլէք բանակը մտած էին իբրեւ կամաւոր , եկան նորա մօտ տեղեկութիւն հարցնելու , նա ալ , ծածկելով իւր արկարութիւնը , բաւականացաւ միայն Սուրէնեանց կոտորածը պատմելով՝ մխիթարել իւր ունկնդիրները , որոնք դժուանակութեամբ կրկնեցին իրենց սովորական եղած խօսքը « իթին տիչի տօմուզուն տէրիսի—շանը ալուան խոզին կաշին» :

Մինչդեռ թշնամիք կ'ուրախանային այս տխուր վիճակին վրայ , միւս կողմէն ամբողջ Չէյթուն , մանաւանդ եկեղեցական դասը , խորապէս յուզուած՝ երկու եպիսկոպոսներու առաջնորդութեամբ դիմեցին գերեզմանատուն , որ թաղուած էին սպանելոց մարմինները , եւ այնտեղ հանդիսաւոր Ս . պատարագ մատուցանելով եւ հողեհանգիստ կատարելով մխիթարեցին նոցա ընտանիքը , ապա նոյն հանդիսով բերդը գնացին Սուրէնեանց մօտ եւ շատ ջանքերով յաջողեցան վերջապէս հաշտութիւն կայացնել երկու հակառակորդ կուսակցութեանց մէջ հետեւեալ պայմաններով :

Նաղուպեանք բոլոր իրենց ցեղով ելիւ տարի շաբաթնակ Միջին թաղը ոտք չի պիտի կոխէին՝ Սուրէն-



եաններուն աչքին չ'երեւնալու համար, իսկ Շովրոեանս  
բոլոր իրեններով պիտի գաղթէր գէպ ի Կէօճէկ, որ  
Չէյթուէի հարաւային արեւմտեան կողմը կը գանուի՝  
13 ժամ հեռաւորութեամբ (թէև այս վերջին պայման  
Եաղուպեանի ալ առաջարկուեցաւ, բայց նա մերժեց Ա.  
պայմանին միայն համակերպելով) : Այսպէս փոխադարձ  
դիջումներով իրարու ներեցին ու հաշտուեցան : Սակայն  
չատ կորստարեր եղաւ այս պատերազմը, որ ամբողջ 7  
ամիս տևած էր եւ որուն զո՛հ գնացին 300 հոգի պա-  
տերազմիկ կարիճներ : Այս միակ գէպքն է, որ սեւ բիժ  
մը կը թողու մեր իշխանաց տարեգրութեան մէջ :

Ը -

## ԻՊՐԱՀԻՄ-ՈՒՇԱՂԻՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՒՌՆԱԶՆԵՐՈՒ ԶԱՐԴԷ, ՍԻԼԷՅՄԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՐԶԱԿՈՒՄԸ

Վերը նշանակուած ցաւնալի պատահարներէն 9 ամիս  
յետոյ Սուրէնեանք՝ որոնց սրաէն բնաւ մարած չէր վը-  
րէժինդրութեան բոցը՝ յարձակեցան Թանըր տաճկա-  
բնակ գիւղին վրայ, ուր կը գանուէին Հաջի-ի պ-  
րա հիմ-ու շաղի ներքեւ Գուռնազները,  
որոնք պատճառ դարձած էին իրենց միութեան քայ-  
քայուելուն ու այն ներքին պատերազմին, 16 մարդ  
սպաննեցին անոնցմէ ու վերադարձան : Թանըրցիները  
սպանելոց արևնաթաթախ ու արևնաշաղախ զգեստ-  
ները Մարաշ Սիւլէյման բաշային ներկայացնելով՝ սաս-  
տիկ բողոքեցին Չէյթուէնցոց դէմ : Բաշան առիթէն  
օգտուելով իսկոյն գրեց Պոլիս այս գէպքին մանրամաս-  
նութիւնը եւ այնտեղէն հրահանգ ուղեց : Բիշ ատենէն  
հրաման ստացաւ, որ անյապաղ Չէյթուէի վրայ երթայ  
ու ամբողջ քաղաքը հիմնայատակ կործանէ :

Մեծ էր Սիւլէյմանի ուրախութիւնը, կարծելով թէ այս անգամ պիտի յաջողէր իր չար խորհուրդն իրագործելու եւ կայսերական բարձր շնորհաց արժանանալու։ Ուստի ամենայն փութով պատրաստութեան ձեռնարկելով կազմեց անադին բանակ մը՝ որուն գլուխն անցած եկաւ բանակեցաւ Ջերմուկի դաշտը 1832ին։

Սրբազան եպիսկոպոսունք (1) տեսնելով երկրին սպառնացող այս ծանր վտանքը՝ գօտեպնդեցան հայրենասիրական ու կրօնասիրական ջերմ ոգւով, նոքա գիտէին, թէ թշնամւոյն յաղթելու ամէնէն կարեւոր պայմանը սէրն ու միութիւնն է, վասն որոյ իրենց մօտ կանչելով Սուրէնեանները՝ համոզեցին, որ հաճութիւն տան Շօվրօեանց վերադարձին ի Ջէյթուն, անոնք ալ, որ վտանքին ծանրութիւնը ըմբռնելու չափ խելք ունէին եւ ընդհանրութեան շահը իրենց անձնական կիրքէն վեր դասելու չափ հայրենասիրութիւն, սիրայօժար յանձն առին սրբ. եպիսկոպոսաց առաջարկը եւ նոյնիսկ իրենք բազմաթիւ ջորիներով կէօճէկ երթալով անձամբ Շօվրօեանները բերին մտցուցին Ջէյթուն իրենց ամէն կարկարասիներովն հանդերձ։

Եպիսկոպոսները մեծ ուրախութեամբ չորս իշխանները միանգամայն վանքը իրենց մօտ կոչեցին ու այնտեղ երդմամբ կատարեալ հաշտութիւն կայացնելով անոնց մէջ՝ օրհնեցին զանոնք խաչով եւ աւետարանով աքաղաղական խօսքերով խրախուսեցին կռիւր թշնամւոյն դէմ մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը։ Անոնք

---

(1) Այն ժամանակ բացի Ջէյթունի առաջնորդ Բօստանեան Յակոբոս եպիսկոպոսէն՝ Ջէյթուն կը գտնուէր եւ Այնթապու առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս, որ աքսորուած էր Ջէյթուն։

ալ եղբայրաբար ու անկեղծ սիրով զիրար համբուրե-  
լով՝ մեծ պատրաստութեամբ դիմեցին Ղ. ու լ ա ն ե բ ը  
(մարտկոց) փաշային բանակին դէմ :

Լսեց բաշան անոնց միութիւնը եւ մեծ տազնապի  
մէջ ինկաւ, ուստի առաջուց բանեցուցած հնարքը այս  
անգամ ալ փորձեց՝ անոնց մէջ նորէն բաժանում ձը-  
գելու համար : Իր մօտ կանչեց Եաղուպեան Մ. Վար-  
դեւար իշխանը ու ըսած՝ «Ես յատկապէս քեզի համար  
եկած եմ այս անգամ, թագաւորին հրամանաւ քեզ իշ-  
խան պիտի կարգեմ ու գերդաստանիդ բոլոր անդամնե-  
րուն՝ նոյն իսկ օրօրոցի մանկան թոշակ կապել պիտի  
տամ, եւ որովհետեւ միւս իշխանները կ'ընդդիմանան  
ինձ՝ դուն քո կալիճներովդ իմ կողմս անցի՛ր, որ Ձէյ-  
թուն մտնենք» :

«Լա՛ւ — պատասխանեց Եաղուպեան, որ խորա-  
մանկութեան կռւմէն փաշայէն վար չէր մնար — երթամ  
գինւորներս առնեմ ու դառնամ, միայն թէ զօրքերդ  
պէտք է գինաթափ ըլլան, որպէս զի ժողովուրդս ա-  
նոնց վրայ կասկած մը չունենայ. դէնքերը պէտք է մեր  
մարտկոցներուն կողմը վրաններու մէջ մթերուին աչքիս  
առջեւ, այն ատեն զօրքերովս կուգամ գիշերայն կը  
խառնուիմ ձեր հետ, շատ դիւրութեամբ կը նուաճենք  
Ձէյթունը. դուն տեղդ հանգիստ եղի՛ր, ես յանձն կ'առ-  
նում հրամանատարութիւնը» :

Բաշան, փոքր ինչ կասկածելով նորա անկեղծու-  
թեան վրայ, ըսաց՝ «Այս գիշեր սպաներուս հետ խոր-  
հրդակցութիւն մը կատարենք ու ըստ այնմ գործենք.  
ուստի հետեւեալ գիշեր պէտք է գաս» : Այս առաջար-  
կին ալ համակերպութիւն ցոյց տալով Եաղուպեան՝  
մեկնեցաւ դէպի վանքը, եւ այս խօսակցութիւնը մի  
առ մի պատմելով միւս իշխանաց՝ անկեղծ սրտով բա-  
ցատրեց բաշային ունեցած շար գիտումները. «Պէտք է

ուրեմն , ըսաց , որ մենք կանխենք առանց ժամանակ  
կորսնցնելու . նոյնիսկ այս գիշեր յարձակինք ու վանենք  
այդ անպիտան մարդը իւր անպիտան բանակով» :

Իշխանք ու եպիսկոպոսունք ամէնն ալ համամիտ  
դանուեցան այս առաջարկին ու այն գիշեր յարձակե-  
ցան թշնամուոյն վրայ չորս կէտերէ ու լաւ ջարդ մը  
տալով անոնց՝ մնացեալները փախուցին :

Խեղճ Սիւլէյման հազիւ կեանքն ազատելով՝ շուշ-  
չը Մարաշ առաւ՝ Ջերմուկի դաշտին վրայ թողլով 300  
խալամներու դիակներ ու շատ մը կողոպուտ , որոց կո-  
րուստէն աւելի կ'աւաղէր իւր դժբաղդութիւնը , վասն-  
զի այս կերպով խապառ կը դրկուէր «Չէյթունի յաղ-  
թականը» կոչուելու մեծ փառքէն եւ իւր տիրոջ ա-  
նըսպառ շնորհներէն :

Այս կռուոյն մէջ հայերը 5 անձի կորուստ միայն  
ունեցան :

Իւր մօտ եկողներուն սրաի դառնութեամբ կ'ըսէր  
բաշան , «Եաղուպ օղլու տօմուզու իսկեաթ էտէմէտիմ ,  
թամ գուրնազ թիլքի իմիշ . — Եաղուպեան խողը չի  
կրցայ համուել , կատարեալ խորամանկ աղուէս մ'է ե-  
ղեր» . կ'աւելցնէր նաև թէ «այդ կեամբներուն հետ  
թշնամանալը օգուտ չունի , աւելի լաւ է բարեկամու-  
թեամբ վարուիլ» :

Այս կռուոյն յիշատակին ալ հետեւեալ տողերը  
նուիրուած են .

Մարաշ , պայազխաղի Սիւլէյման բաշա  
Թէքրար ուրուշմագլա չըգմատը պաշա ,  
Տէտի Չէյթունուլարլա տօմթլուզլա եաշա  
Անլարլա ճէսկլէշմէք հաշարար հաշա :

Թարգմ. Մարաշ , պայազխաղի Սիւլէյման բաշան է ,  
Նորէն կը կռուէ՝ կը կորսնցնէ ,  
կ'ըսէ Չէյթունցլաց հետ հաշտ ապրիլ պէտք է ,  
Անոնց հետ կռուիլ Աստուած չցուցնէ :

Թ.

## ԹՕՍՈՒՆ, ԲԱՇԱ. — ՍՈՒՐԷՆԵԱՆ ՄՄՐՏԻՐՈՍ

Մարաշի կառավարչութեան մէջ Սիւլէյման բաշայի յաջորդած էր Թօսուն բաշա՝ որ նոյնպէս պէտք տեսաւ Չէյթունի հետ չափուելու, բայց խարդախ միջոցներով:

Սա 1833ին Սուրէնեան Մարաիրոս իշխանը Մարաշ հրաւիրեց, որպէս թէ յանձնարարութիւն մ'ունէր անոր ընելու: Սուանց կասկածելու զնաց իշխանը, զոր իսկոյն բանտարկել տուաւ բաշան՝ ըսելով թէ «Չէյթունի Տ տարուան անվճար մնացած տուրքը՝ տարեկան 30,000 դահեկանի հաշուով՝ մինչև որ ամբողջ չի վճարուի՝ ազատութիւն չի կայ քեզ. եթէ կ'ուզես շուտ արձակելի, գրէ՛ ժողովուրդիդ, որ ժամ առաջ վճարեն այդ գումարը»:

Սուրէնեան արդարեւ գրեց նամակը Չէյթունի բարբառով, բայց ոչ բաշային ըսած ձևով, այլ բոլորովին տարբեր իմաստով, ինչպէս որ կը վայելէր ճշմարիտ Չէյթունցիի մը:

«Բաշան զիս բանտարկեց, կ'ըսէր նա իւր նամակին մէջ, տեսնեմ ձեր քաջութիւնը. մէկի տեղ տասը ձերբակալէք, ինչպէս սովոր ենք: Այս օրեր տեղւոյս թուրք երեւելիները Գ ա ղ մ ա (Ղ) պիտի երթան զբօսանքի համար, յարձակեցէք անոնց վրայ ու ձերբակալելով բանտարկեցէք բերդին մէջ. այն ատեն ես կ'ազատուիմ, ապա թէ ո՛չ՝ անկարելի է»:

Չէյթունցիք առնելով այս նամակը՝ կրակ կտրեցան, եւ Սուրէնեան ցեղէն 60 հոգի կտրիճներ առիւծի

---

1. Չէյթունի հարաւային արեւելեան կողմը 9 ժամ հեռաւորութեամբ այգիներ կամ այս անուամբ:

Նման մունչելով յարձակեցան էմիր-Մահմաւա-օղլի վեհ-  
պի էֆէնտիին այգին՝ ուր խնջոյքի հրաւիրուած էին  
յիշեալ թուրք մեծամեծները իրենց ընտանեօք հանդերձ  
որք առանց դիմադրութեան անձնատուր եղան :

Սոքա էին .

1. Պայաղիտ-օղլի Սահէտ պէյ , որ յետոյ բաշայու-  
թիւն ստացաւ :

2. Պայաղիտ-օղլի Սայիտ պէյ .

3. Տուլ-Քատրր-օղլի Յալիլ պէյ , որ թագաւորա-  
կան ցեղէ է եւ Զիւլ-Քատրր ալ կ'ըսուի .

4. Տուլ-Քատիր-օղլի Սիւլէյման պէյ .

5. Քանատր-Քըրրգղատէ էօմէր էֆէնտի միւլտէրրիս  
(ուսուցչապետ) .

6. Քարաքիւչիւ քղատէ Մըսթաֆա պէյ .

7. Վէլի-էֆէնտի օղլի Օսման էֆէնտի .

8. Սօլաղըն-քէլքի անուն տաճիկ մը .

9. Այգիին տէր Վէհպի էֆէնտի :

Սոցա կանայք ազատ թողուեցան , միայն նոցա բե-  
հեղեայ ներքնազգեստներն առնելով՝ ձողերու վրայ  
անցնցին ի նախատինս նոցա այրերուն . ալ պէտք է  
խոստովանել թէ այդ կանանց պատուոյն արատ բերե-  
լու բնաւ փորձ մը չարին , եւ միշտ այսպէս վարուած  
են նոքա , զի ընտանեկան սրբութիւնը անբռնարարելի  
համալուած է միշտ յաչս զէյթունցի հայուն եւ աս  
նուազ վկայութիւն մը չէ այս խորխտ լեռնականաց  
բարոյականին :

Իսկ 9 ձերբակալուածները ի գերութիւն վարելով  
կրբ հասան Ջահան գետին մօտ , որուն վրայ դեռ եւս  
կամուրջ չինուած չէր , գերեվարներն խեղճ պէյերու  
կռնակը կլիելով Զուրէն անցան և հրամայեցին անոնց ,  
որ այդ կերպ ապա էս թ առնելէն ետքը նամազ-

ն ի ն (աղօթք) կատարեն խողի կաշիներու վրայ, զորս  
տարածած էին կանխաւ գետեզերքը :

Մարգարէի ջերմեռանդ որդիքը պարտաւորեցան  
ակամայ համակերպիլ նոցա հրամանին : Այնտեղ զգացին  
՛նոքա թէ՛ ո՛ր աստիճան դառն էր բռնապետութենէ ա-  
ռաջ եկած անազորոյն հրաման մը, զոր դործադրելու  
կը հարկադրուի մարդ հակառակ իւր խղճի եւ զգացման  
և զոր սովոր էին իրենք միշտ արձակել ըստ հաճոյից՝  
իրենց ճիրաններու տակ հեծող խեղճ քրիստոնէից դէմ :

Սոքա, բերդին մէջ շղթայակապ բանտարկուելով,  
արտօնուեցան հայ իշխաններէն՝ նամակ գրել Թօսուէն  
բաշայի, ուր իրենց բանտարկութիւնը եւ կրած տառա-  
պանքը նկարագրելով՝ կ'աղաչէին զայն որ արձակէ Սու-  
րէնեանը ու պատուով տեղը դարձնէ, «ապա թէ ոչ,  
կ'ըսէին, մեր մօտ ո՛չ կրօնք մնաց, ո՛չ հաւատք» :

Բաշան նամակը կարդալով կամայ ակամայ համա-  
ձայնեցաւ արձակել հայ իշխանը ի սէր ազատութեան Ծ  
խալամ գերելոց եւ ձեռք մը փառաւոր զգեստ հագցնե-  
լով ու գեղեցիկ ձի մ'ալ ընծայ տալով անոր՝ առօք  
փառօք զրկեց Ձէյթուէն : Տեղացիք ալ փոխադարձաբար  
թուրք պէյէրն արձակելով՝ շարաթի մը շափ պատուով  
պահեցին իրենց մօտ և խնջոյքներ տալով անոնց՝ հաշ-  
տըւեցան իրարու հետ ու այնպէս զրկեցին իրենց տե-  
ղերը :

Ձէյթուէնցիք այսպէս կ'աւչեն (կ'երգեն) :

Թօսուէն բաշա Սուրէնեանը դալարբար,

Մահաբու իտիւպ զընտանքնա էնտիրտի,

Զընտանտան չրգարուպ աթա պինտիրտի :

Խիլաթլայրպ վաթանընա կէօնտէրտի :

Թարգ . Թօսուէն բաշան բունելով զՍուրէնեան ,  
Բանտարկեց զայն , եւ զայն իջուց ի պրնտան ,  
Բանաէն դուրս հանելով հեծցուց ձիուն վրան ,  
Զգետտներ բաշխեց , ուղարկեց իր վաթան :

Փ .

### ՏԷԼԻ - ՔԷՇԻՇ

Զէյթունի պատմութիւնը ցոյց կուտայ թէ՛ այս  
Հայ Լեռան ազատասէր ժողովուրդը , կղեր ու աշխարհ-  
հական , միշտ միասին դորձած են պատերազմի ասպա-  
րէզին մէջ : Ուր տեղ որ աշխարհական մարդը կ'ընկըր-  
կէր՝ եկեղեցականն առաջ կ'անցնէր , ուր որ սուրը ան-  
զօր կը մնար՝ խաչը իր զօրութիւնը ցոյց կուտար : Սյա-  
պէս եղած է միշտ հայու ճակատագիրը դարերէ ի վեր .  
քաղաքականութեան հետ ձեռք ձեռքի տալով քալած  
է հայաստանեայց եկեղեցին . աշխարհական իշխանին  
մօտ բաղմած է դրեթէ միշտ եկեղեցւոյ պաշտօնեան , եւ  
առանց կողմնակալութեան պէտք է խոստովանիլ , թէ՛  
վարչական այս եղանակն եթէ ունեցած է իւր յոռի կող-  
մեր՝ շատ անգամ , խիստ շատ անգամ օգտակար եղած  
է եւ պիտի ըլլայ այն , միայն թէ իրենց կոչումը եւ  
պարտականութիւնը լաւ ըմբռնելով մեր սրբազան ու  
սուրբ հայրեր՝ հետեւող լինին իրենց հայրենասէր ու  
անձնուրաց նախորդաց օրինակին , որոց ազնիւ ու  
պաշտելի յիշատակը յաւէտ անմոռանալի մնացած է  
ամէն հայու սրտին մէջ :

Զէյթունցիք տեսնելով , որ Մարաշի կառավարչաց  
յաջորդաբար մզած պատերազմներու առերեւոյթ պատ-  
ճառը սուրքերուն գանձման խնդիրն է , զոր միշտ կը  
պատրուակէին նոքա , ուղեցին մէջտեղէն վերջընել այս



պատճառը, նորոգել տալով այն հրովարտակը, զօր յա-  
 ջողած էր Հեթում քահանայն ձեռք բերել սուլթան Մու-  
 րատ Դ.ի կողմանէ: Ուստի խնդրեցին Տ. Օհանէն, որ  
 Պոլիս երթալով՝ դիմէ սուլթան Մահմուտին նոյն խնդ-  
 րոյ կարգադրութեան համար: Հայրենասէր քահանայն  
 յանձն առնելով իւր ժողովրդեան խնդիրը՝ մեկնեցաւ  
 դէպ ի մայրաքաղաքը իւր հետ տանելով ծանօթ հրո-  
 վարտակը:

Երբ պատրիարքարան մտնելով ողջունեց ժամանա-  
 կին Ստեփան Սղաւնի կոչեցեալ պատրիարքը՝ սա ա-  
 ռանց փոխադարձ ողջոյնի սկսաւ յանդիմանել դքահա-  
 նայն որդէս աստատմբապետ ( նորա ո՛վ եւ ի՛նչ նպա-  
 տակաւ գալը պատրիարքարանի ծառաներէն իմացած  
 էր)՝ «դուն քահանայ չես, ո՛չ ալ քու ժողովուրդդ  
 քրիստոնեայ, վասն զի քրիստոնէիւ չի վայելեր դէնք  
 կրել ու սուր գործածել թագաւորին դէմ, որ Աստու-  
 ծոյ փոխանորդն է»: Տէրտէրը զայրացած պատասխանեց  
 «Հայր սուրբ, մենք աստատմբ չենք, այլ քաջութեամբ  
 կը պաշտպանենք մեր արդար իրաւունքը եւ սուլթան  
 Մուրատէն մեզի շնորհուած առանձնաշնորհութիւնը՝ որ  
 այժմ խել կ'ուզեն մեր ձեռքէն բռնի ու սուրի զօրու-  
 թեամբ, ատոր համար կը պարտաւորինք մենք ալ հարկ  
 եղած ասեն սուր գործածել. եթէ այսպէս չանէինք,  
 շատոնց Չէյթուեր իմնահատակ կստանամ էին, մեր  
 անունն ալ ջնջած երկրիս երեսէն. — իւր անձը եւ իւր ի-  
 րաւունքը պաշտպանելը աստատմբութիւնն է, հայր  
 սուրբ»:

«Պատրիարքի մը հայր սուրբ կ'ըսեն, անպի-  
 տան, գոռաց բարձրաշնորհ սրբազանը. դու բնաւ քա-  
 ղաքավարութիւն չ'ունիս եղեր»: — «Հապա դո՞ւն հայր

թիւն մը եւ անհրաժեշտութիւն կը համարուէր եւ հետե-  
 ւարար չենք կրնար դատապարտել Տէր Օհանի ընթաց-  
 քը: Չմոռնանք սակայն յիշելու այն կէտը որ Չէյթուե-  
 ցին շատ մնասուած է իր անուսութեան պատճառաւ.  
 ամբողջ քաղաքի մէջ եւրոպական լեզու մը գիտցող չկայ  
 բաց ի ծանօթ Պ. Սմբատ Բիւրատէն, ան ալ դժբաղդա-  
 բար բացակայ է, եւ այս իր անհաճոյ հետեւանքները  
 կունենայ, երբ հիւպատոսներ կամ եւրոպացիներ այցե-  
 լեն Չէյթուե:

սուրբ , ես ողջուենցի զքեզ , երբ ներս մըտայ , դուն  
առանց ողջոյնս ընդունելու եւ այս երկար ուղեւորու-  
թեանս սրպիսութեան մասին առանց բառ մը արտասա-  
նելու՝ սկսար նախատինքներ թափել գլխուս . ես քեզ  
չայր սուրբ կոչեցի , թէ եւ այդ անուանակոչութեան ար-  
ժանի մէկն ըլլալու երեւոյթը չ'ունիս , բայց դուն իմ  
աստիճանիս համադատասխանող տխուրսն իսկ զլացար ,  
քահանայութիւնս անգամ կ'ուրանաս , մինչդեռ գիտես  
թէ՛ Չէյթուէի եկեղեցեաց աւագ քահանայն եմ եւ տի-  
օք երկցագոյն քան զքեզ , մանաւանդ գիտես , որ հա-  
սարակաց վերաբերող գործի մը համար եկած եմ . եթէ  
այսպէս վարուելով քու պարտականութենէդ խոյս տալ  
եւ ֆէրմանի նորոգութեան խնդիրը խամբանել կ'ու-  
ղես , ըսէ՛ ինձ , որ գլխուս ճարը նայիմ . այսուամենայ-  
նիւ եթէ այս գործին յաջողութեանը համար չաշխատիս  
կամ արքելք ըլլալ ուղես՝ քեզի կը ճանչցընեմ , թէ  
ս'վ է Տէլի-Քէշիչը :

Պատիարքն այս յանդուգն խօսքերը լսելով աւելի  
բորբոքեցաւ եւ ես սախճի ներք կանչելով հրամա-  
յեց՝ որ այս խէնթը խուցի մը մէջ փակեն առանց հաց  
ու ջուր տալու . ես սախճիները շատ դժուարութեամբ  
յաջողեցան պատրիարքի հրամանը կատարել . կը մա-  
քառէր նա կատաղութեամբ , ինչպէս առիւծ մը՝ զոր  
կ'ուղեն դառագեղի մէջ փակել :

Հետեւեալ օրը Պոլսոյ առաջնակարգ գերդաստան-  
ներէն մէկին ներկայացուցիչք՝ Թիւթիւնճեանք , իմա-  
նալով այս դէպքը , պատրիարքարան եկան ու Տէր  
Օհանը պատրիարքի ձեռքէն առնելով իրենց տունը տա-  
րին ու խորհուրդ տուին իրեն , որ առանց պատրիար-  
քէն ու պարիարքարանէն բան մը սպասելու՝ ինքն ան-  
ձամբ ներկայանայ սուրբան Մահմուտ կայսեր , եթէ  
կ'ուզէ որ իւր խնդիրը շուտով լուծուի , վասն զի , ըսին ,  
պատրիարքարանը աշխատելու ալ խոստում տայ՝ ամիս-  
ներով , տարիներով կը ձգձգեն խնդիրը եւ այս կերպով  
մեծամեծ մեծներու եւ վտանքներու կ'ենթարկուի դարձ-  
եալ Չէյթուէն : Այսու ամենայնիւ եթէ խնդիրդ հաճելի  
չթուի սուրբանին՝ կեանքդ վտանքի մէջ կ'իյնայ :

« Ի սէր ազգիս ու հայրենեացս պատրաստ եմ  
կեանքս տալու » , պատասխանեց քաջասիրտ եկեղեցա-  
կանը : Այնուհետեւ ազդու բողոքագիր մը պատրաստել  
տալով յիշեալ Թիւթիւնճեանք՝ յանձնեցին քահանային

առաջարկելով միայնդամայն, որ իւր զգեստի ձեւն ալ փոխել տան եւ Պոլսոյ քահանայից տարազովն զգեստ հագցընեն իրեն, վասն զի իւր հագածն էր «չուխա շալվար», մէջքը «լահորի շալ», ոտքը «կիւլ շէֆտալի» կոչուած Այնթապու կարմիր կօշիկ, գլուխը մեծ ֆէս մը եւ ֆէսին վրայ փաթաթուած թանկագին լահորի շալ մը, այնպէս որ զինքը տեսողները թիւրքմէններու ցեղապետ մը կը կարծէին :

Տէրտէրը չընդունեց այս ձեւափոխութիւնը՝ ըսելով «իմ քահանայութիւնս հողով է եւ ոչ ձեւով, եթէ Աստուած ուզէ՝ կարող է օգնել ինձ այս ձեւին տակն ալ» : Եւ այսպէս 3 օր վերջը աղերսագիրը ի ձեռին գնաց կեցաւ Սուլթան Պայագլիարի հրապարակը, ուրկէ պիտի անցնէր կայսրը մզկիթ երթալու համար, Բիշ վերջը այնտեղ հայաքուռող ահագին բազմութիւնը սկսաւ տատանիլ ծովածուփ ալեաց նման, եւ պերճազգեստ հեծեալ պաշտօնակալներու ետեւէն երևցաւ սուլթան Մահմուտի վեհափառ գէմքը, որ խորին տպաւորութիւն մը կը թողուր բոլոր տեսողաց վրայ :

Քահանան մօտեցաւ ու բարձրագոյ ձայնիւ աղաղակեց՝ «Բատիշար՝ մ'նազար գըլ արզուհալըմա — Տէ՛ր արքա, ո՛ւշ դիր աղերսագրոյս» : Ամէն կողմէ «Սուս օլ — լուէ՛» ձայնին հետ մը քանի տղտակներ ալ իջան խեղճ քահանային քթին բերնին, բայց նորա աղաղակ արդէն արձագանք տուած էր հրապարակին մէջ և մինչեւ կայսեր ականջը հասած, որը ձին կեցընելով՝ հրամայեց իր մօտ տանել քահանան : Բազմութիւնը իսկոյն ձեղքուելով ճամբայ բացաւ յաղուզն եկեղեցակոնին եւ հիացմամբ կը նայէր նորա գրաւիչ կերպարանքին, յազթ հասակին ու համարձակ շարժուածքին :

Երբ ներկայացաւ սուլթանին՝ անոր քղանցն համբուրելով բարձրացուց աղերսագիրը, զոր առաւ անմիջապէս ու կարդաց նա, և ստորագրութեան նայելով ըսաւ՝ «Իմզանըզ բարազ տըր, սիզտէ բարազ գըլըզը կօք, սահիւէն բարա՞զ մը սընըզ, — քահանայ ստորագրած էք, բայց քահանայի կերպարանք չ'ունիք, արդարեւ քահանայ էք» : — «Էվվէթ, շէվքէթլում, գուլունըզա Տէլի քէշիշ տէրլէր. օն իքի սէէէ միւթէմատիյէն պին իքի եիւզ աթլը իլէ Հալէպ, Ստանու, Գօնեա վէ Պաղտատ ճիւլարլնտա տէլիպաշըլըզ իտէրէք աէվլէթիմին խըզմէթինտէ պուլունմըշըմ, — Այո՛, վեհափառ

տէր. ծառանիդ խենդ. տէրտէր կը կոչուի որ 12 տարի  
շարունակ 1200 ձիաւորներով ծառայած է տէրութեանս  
Բերիոյ, Ատանայի, Իկոնիոնի եւ Պաղտատի կողմերը  
տէլի պաշտօնիւն ընելով» (տեսակ մը զինւորութիւն) :

Սուլթանը տէր Օւանի այս խօսքերը լսելով դա՛  
մնաց եւ հրամայեց երեք սուսերակիր փաշաներու, որ  
զանի ձիու վրայ նստեցնելով պատրիարքարան տանին,  
վասն զի, ըսաց, շատ սիրեցի այս մարդը իւր համար-  
ձակախօսութեանը համար. խոստացաւ միանգամայն ա-  
նոր, որ երեք օրէն պիտի կատարուի իւր խնդիրը : Եւ  
իրօք երեք օր վերջ վաւերացեալ հրովարտակը պատրի-  
արքարան եկաւ յատուկ պաշտօնէի մը ձեռամբ ոսկե-  
կուռ խաչի նշան մ'ալ հետը մէկտեղ՝ իւր արքայական  
բարեւներն ալ կը զրկէր նորա հայրենակիցներուն : Այս  
խաչը, որ շատ գեղեցկակերտ շինուածք մ'էր, իւր կեն-  
դանութեան՝ գլխարկին վրայ կը կրէր Տ. Օւան, իսկ  
այժմ Ս. Սարգիս եկեղեցւոյ սաղաւարտին ձակատը  
գամուած է :

Երբ որ քաշաներու առաջնարդութեամբ եւ հետեւ-  
ւորդներու խուռն բազմութեամբ պատրիարքարան հա-  
սաւ քահանան, ապշեցաւ պատրիարք սրբազանը եւ  
յարգանօք ու ակնածութեամբ ներս հրաւիրելով քահա-  
նային ուղեկցող պաշտօնեաները՝ պատուասիրեց զանոնք  
ըստ սովորութեան, նոքա ալ իրենց եզամ հրամանին  
համեմատ ըսին՝ «Մեր վեհափառ տիրոջ կողմանէ կը  
յանձնարարեմք ձեզ այս ազնիւ քահանան, որ արժա-  
նավայել կերպով հիւրասիրես» : — Ամենայն սիրով կ'ըն-  
դունիմ», պատասխանեց պատրիարքը եւ քահանային  
ձակատը համբուրելով՝ իրմէ վեր նստեցուց :

Տէլի քէշիշ, որ խօսելու կարգը եկած ատեն ամե-  
նեւին չէր գիտեր համբերել, ըսաց. «Սրբազան հայր,  
ասկէ առաջ, երբ քեզի ներկայացայ ու՛րիստոսով խօ-  
սեցայ, անարգեցիր զիս ու բանտարկեցիր, իսկ այժմ,  
որ աշխարհային իշխանութեան կողմէ կուգամ, կը պատ-  
ւես զիս ու կը համբուրես՝ տեսնելով որ յաջողութիւնը  
իմ կողմս է, — այսպէ՛ս պէտք է ըլլալ պատրիարք մը» :  
Սրբազանը կարմրելով իւր ունեցած անվայել վարմուն-  
քին համար՝ ներողութիւն խնդրեց անկէ եւ ազաչեց, որ  
անյիշաչար ըլլայ՝ ինչպէս կը վայելէր եկեղեցականի մը :

Այս քահանային համբաւը արդէն տարածուած ըլ-  
լալով Պոլսոյ ամէն կողմը, ընդհանուր համակրութեան

առարկայ դարձաւ նա, եւ որպէս նայ դիւցազն կը մեծարեի՛ն զի՛նքը: Բայց յայտնե՛լ կարեւոր գումար մը յանգանակելով յանձնեցին իրեն: Իսկ Թիւթիւնճեանք որոնց մեծ ուրախութիւն պատճառած էր յաջողութիւն, իբրեւ մշանջենական յիշատակ իրենց սիրոյն առ Ս. եկեղեցիս Չէյթու՛նի՝ նուիրեցին ձեռք մը թանկագին եկեղեցական զգեստ իողաթափով, երկու շապիկով ու երկու ուրարով հանդերձ, հաստ մըն ալ թաւշապատ իւղաբերից աւետարան, արծաթեայ սակեզօծ գեղեցիկ նըկարներով՝ նոյնպէս մէջի պատկերները ու գլխագիրները սակեզօծ: Այս ձեռագիր աւետարանը, որ խիստ մաքուր ու գեղեցիկ դրուած է եւ որուն ձեռագիր բլրալը մանրակրկիտ դնուեթենէ մը յետոյ միայն կարելի է յասկանալ, հնագէտներ ՅՍ սակեզօծ գնահատեցին և ուզեցին առնել, բայց Չէյթու՛նցիք չի աճեցան վաճառել ազնիւ անձեւաւորութեան մը մէկ յիշատակը:

Անոր յիշատակարանն այսպէս դրուած է.

«Սաբր աւետարանս Ռւլնիոյ Ս. Սարգիս եկեղեցւոյ նուիրեցի ձեռամբ քաջարի Տ. Օհան քահանայի, ի յիշատակ Թիւթիւնճեանց տոհմի Կ. Պոլսեցւոյ:»

«1833 Սեպտ. 14.»

Քիչ մը ատեն Պոլիս մնալէ յետոյ Տ. Օհան նորօքեալ իրավարտակը և ստացած նուէրները հետն առած՝ փառքով պատուով վերադարձաւ Չէյթու՛ն, ու 1835ին Եւզոկիացի ճարտարապետաց ձեռքով դմբեթաւոր գեղեցիկ եկեղեցի մը շինել սուաւ իւր բերած դրամներովը յանու՛ն սրբոյն Սարգսի՝ նոյն անուամբ մատրան տեղը, որ արպէն նեղ կուգար ժողովրդեան և որոյ մէջ կը հանգչի այժմ իւր մարմինը:

\*  
\* \*

Տ. Օհանի օրովն էր 1836ին՝ Եգիպտոսի փոխարքայ Մէլէմէտ Ալիի որդին Ի գրահիմ փաշա Սուրիա արշաւելով՝ անկէ Փոքր Ասիա անցած ու մինչև Մարաշ հասած էր: Քիտէր զէյթու՛նցւոց քաջութիւնը, ուստի չուզեց այնտեղ յարձակում առլ՝ մտածելով թէ մի գուցէ ձախող հետեւանք մը արատ բերէր ցոյն վայր ձեռք բերած իւր դիւնուարական փաշու՛ն յաջողութեան. «Չէյթու՛նը քաջ է, չեմ ուզեր անոր դպչիլ», ըսած էր նա. այս խօսք հաճելի եկած էր մեր լեռնականաց, եւ կ'ուզէին մեծարանք մ'ընել նմա, ընդ առաջ գնալով

անոր, բայց այն օրեր դեպք մը պատահած էր : Բաշային Այնթապ դաժնուած ատեն 7 Հայ հերոսներ Մարաշու հայ երեւելիներէն Թօփալեանը պատահմամբ սպաններ էին Իւնկիւթիւ կամուրջին վրայ : Այս արկածէն քիչ վերջը Իպրահիմ փաշան երբ Մարաշ մտաւ՝ Թօփալեանք սպանելոյն արիւնաշագափս շապիկը անոր ներկայացնելով բողոքեցին զէյթուէնցւոց դէմ :

Արդ զէյթուէնցւոց մեծարանքը նորեկ բաշային յայտնելով շանդերձ՝ այս սպանման խնդրոյն մէջէն ապահով դուրս գալու համար միջնորդ մը պէտք էր : Այս միջնորդը եղաւ դարձեալ Տ. Օհանր՝ որ գրեթէ միեւնոյն ատենները շասած էր ինքն ալ Պոլիսէն : Աղաչեցին անոր, որ՝ յարմար դատած անձինքը հետն առնելով՝ երթայ բաշային իբրեւ ներկայացուցիչ Չէյթուէնի եւ այն խնդիրն ալ անուշ տեղը կապէ :

Սիրով յանձնառու եղաւ քահանան եւ յիշեալ 7 հերոսները հետն առնելով դնաց ներկայացաւ փաշային՝ մինչ սա պալատին բակը աթոռի մը վրայ նստած էր : Մարաշի բնակիչք Հայ եւ տաճիկ խուռն բազմութեամբ դիմեցին ասոնց կտեւէն, յուսալով թէ բաշան իսկոյն կախաղան բարձրացնել պիտի սար ասոնք ի պատիժ իրենց սճրագործութեան :

Բաշան չարցուց՝ «Ո՞վ ես դու» : « Չէյթուէնցի Տէգի-քէչիչն եմ », պատասխանեց քահանան : Բաշան կրկնեց՝ «Ո՞վ սպանեց Թօփալեանը եւ ինչո՞ւ» : Ես, պատասխանեց քահանան, վասն զի Պոլիսէն դառնալու երբ իմացայ Ձեր բարձրութեան Այնթապ մտնելը ու Մարաշի վրայ քալելու խորհուրդը՝ ուղեցի ծառայութիւն մը մատուցանել ձեզ : Հետս դաժնուող այս 7 անձանց հետ դնացի ճամբան կտրելու Մնարալնի թուրքաց պետ Չիլֆար-օղլու Պաթթալ աղային՝ որ Մարաշի կառավարիչ Պայաղիտ-օղլու Սուլէյման բաշային խորհրդով կառուարութեան դանձն առած կը փոխցնէր, ես կը փափագէի ամբողջովին ձեզ դարձնել դայն, բայց չի յաջողցայ : Չիլֆար-օղլուն փախաւ, ես ալ չբացանս անոր կտեւէն սրտակցի, սակայն դժբախդաբար վրիպեցաւ դնուակը եւ փոխանակ դայն սպաննելու՝ պատահմամբ Թօփալեանը սպաննեց. — այս է եղելութիւնը : Այսուամենայնիւ չուղելով դարձեալ ձեռնուէնային երեւնալ Ձեր բարձրութեան առջեւ՝ յիշեալ Սուլէյման բաշայի 18 հատ փայտակիր Չորիները խլելով նուէր բե-

բի ձեզ : կ'աղաչեմ , որ հաճիք ընդունիլ զանոնք՝ որ-  
չափ ալ որ արժանաւոր ընծայ մը չի համարուին» :

Բաշան տեսնելով քահանային այս աստիճան պարզ  
ու անկեղծ խոստովանութիւնը եւ առ ինքն ցոյց տուած  
յարգանքը՝ պատասխանեց . «Շատ լաւ ըրած էք , շնոր-  
հակալ եմ . շատ սիրեցի քեզ միանգամայն եւ Ձէյթունը ,  
ուր թուրք միւսելլիմ մը կառավարիչ պիտի ղրկէի ,  
բայց այժմ կը փոխեմ այդ խորհուրդս եւ քեզ կը նշա-  
նակեմ մէլսելլիմ Ձէյթունի , վասն զի արժանաւոր ես» .  
այս ըսելով թանկագին սուր մը բերել տուաւ այնտեղ  
որ իր ձեռքով կապեց քահանային մէջքը հետեւեալ  
նշանակալից խօսքն աւելցնելով . «Սուլթան Մահմուտ  
քեզի խաչ տուեր է , ես ալ սուր կուտամ , որ ըստ  
հարկին գործածես երբեմն միւսը» : Յետոյ հրամայեց ,  
որ բերած ջորիներուն կէսը թողլով՝ միւս կէսն ալ իւր  
հետ առնէ ու մեկնի խաղաղութեամբ :

Գահանան բաշային առջեւէն դուրս եկաւ զէյթուն-  
ցիի մը յատուկ խոխտութեամբ եւ ԱՅ հեծեալներով ,  
փողերով ու թմբուկներով մտաւ Ձէյթուն՝ ուր մեծ  
պատուով ընդունեցին զինքը :

Պատկերը լրացնելու համար ասենք եւ այն , որ այս  
եկեղեցականը վեց նշանաւոր գործ ալ կատարած ունի :  
Երուսաղէմի Չաքարիա պատրիարքին օրովը 47 անձէ  
բաղկայած զէյթունցի ուխտաւորներու մը խումբ՝ ո-  
րոնցմէ 17 հոգի կին , իսկ մնացեալը տղամարդ՝ ճանա-  
պարհորդութիւնը կ'ընէր ցամաքային ճանապարհով դէ-  
պի Ս . երկիրը : Ճանապարհին , Բամասկոսին օր մը  
մնացած՝ որ հասնէին , է'ն ա զ է կոչուած արաքներու 70  
հոգիէ կազմուած աւաղակախումբ մը կարաւանի առաջ  
կ'ելլէ կողոպտելու համար . զէյթունցիք անձնատուր  
չ'ըլլալէն զատ՝ աւաղակներէ 3 հոգի կըսպաննեն եւ 3  
գերի կը բռնեն , որոնց մէջ եւ աւաղակապետ Շէյխ  
Սէյաի , իսկ իրենցմէ մըայն մէկը կը վիրաւորի , որ ետ-  
քէն աղեկցաւ , Ընդհարումին մէջ Տէլի-քէշիշի ձին ճա-  
թեցաւ , սատկեցաւ , վասն զի տէր հայրը շատ աշխա-  
տած էր կուսին մէջ : Գերիները տարին Բամասկոս կամ  
Շամ , ուր երկրին կուսակալը քաջարի քահանային լաւ  
արարական , մինչեւ 200 ոսկի արժող ձի մը եւ արուա-  
նի ա մը (թանկագին վերարկու) նուիրած էր՝ փոխա-  
րէն իւր սատկած ձիուն եւ քաջադործութեան ու յաղ-  
թութեան աւաղակախումբին դէմ : Նուիրած արուանիան ,

օճիքը, թեւերը եւ քղանցքին ծայրերը ոսկի թելով բա-  
նուած էր :

Երբ որ Ս. Երուսաղէմ կը հասնին՝ Աւագ շարաթ—  
«լուսաւորեա»ի օրը Ս. Գերեզմանի շուրջը յոյներու հետ  
մեծկակ կռուի մը կը հանդիպին զէյթունցի եւ այլ հայեր .  
այստեղ ալ յաղթութիւն կը տանին լեռնցիք : Չաքա-  
րիա սլաարիարք իւր վրայ առած թանկագին ծաղկեաց  
փղանը կը նուիրէ Տէլի-քէշիչին— Տ. Օհանին ի նշան  
յաղթութեան, զոր նա մինչեւ ցժա՛, կոնդակաւ մը  
արտօնեալ, եկեղեցւոյ մէջ իւր վրան կ'առնէր :

Մի դէպք ալ Տ. Օհանի կեանքէն :— Թուէս 80  
տարի առաջ Մարաշի մէջ հայ վարդապետ մը կը տաճ-  
կընայ : Հայեր որչափ որ կը փափագին յետս դարձնել  
չեն յաջողեր, ուստի Մարաշու երեւելիներ կը գրեն  
Չէյթունի առաջնորդին այս եղելութիւնը եւ կ'աղաչեն,  
որ այս ուրացողը վանքը բերել տայ եւ յետս դարձնէ  
իւր նոր կրօնէն : Անոնք կը գրեն, թէ երկու օրէն ու-  
րացողը պիտի մեկնի կեսարիա Սու-Չաթըրի գծով, ուս-  
տի մարդ դրկելու է անոր կտեւէն : Առաջնորդն ալ  
Տէլի-քէշիչը կը կանչէ եւ կը հրամայէ երթալ բերել,  
իսկ եթէ անոր դալն անկարելի ըլլայ՝ իրաւունք կու-  
տայ կենադրաւ անել զնա : Տէր Օհան ՅՍ մարդ առ նե-  
լով իւր հետ կ'երթայ Սու-Չաթըր ըսուած տեղը, որ Չէյ-  
թունի արեւմտեան կողմը 6 ժամ հեռաւորութիւն ունի :  
Անդիէն տեսնելով՝ որ հարիւրաւոր բազմութեամբ կա-  
րավանը կուգայ՝ տէր հայրը սուրը կը քաէշ, կը կայ-  
նի կարավանի առջնու կ'ըսէ «Տուցուցէք ինձ մի  
մարդ, որ հաւատք ուրացեր է, եթէ թաքուցանէք՝ ա-  
մենքդ ալ կը կողոպտեմ եւ կը մահացունեմ ալ» . Ետքս  
ամենքն ալ տաճիկներ էին : Երբոր Տէլի-քէշիչի մերկա-  
ցուցած սուրը տեսան եւ սպառնալիքը լսեցին՝ տաճիկ-  
ները ճարահատեալ զոյց առին ուրացողը, որ գլուխը  
կանաչ փաթաթած պարթեւ մարդ մըն էր : Կրօնասէր  
եւ ջերմեռանդ քահանան տեսածին պէս մէկէն ի մէկ  
ուրացողին ձիուն առ դանդակը եւ անոր սաքը համբու-  
րեց լալագին ձայնով . աղաչեց, պաղատեց, աղերսէց՝  
«Հայր սուրբ, արի՛ երթանք մեր վանք, ամբշտակեալ  
վեզար, փիղան տալ կուտամ քեզի մեր ազգասէր ա-  
ռաջնորդէն եւ զքեզ փոխ առաջնորդ կարգել կուտամ .  
ահա՛ նորին սրբազնութեան արտօնագիր առ ձեզ ուղ-  
եալ, կրկնեց անբռնէրը, —արի՛ երթանք, արի՛ . . .» :



Ուրացողը յամառեցաւ անկարելիութիւն ցուցուց. — բռնոր աղաչանք պաղատանք աէր հօր կողմէ՛ իզուր: Տէր յայրը այն տանն կարավանի տաճիկներուն պատուրեց հանդիսատեսս ըլլալ նորակրօն Մուհեմէտը Սատրգ էֆէնտիին սպաննուելուն. եւ ապա կապել տուաւ զանի չամի ծառի մը (մայրի): Գէր և մախրտա էր ծառն ալ: Ս. յատեղ այրել տուաւ ուրացողը, վերադարձաւ Չէյթուն, եղածը պատմեց առաջնորդին և չորս իշխանաց. առաջնորդը անոր ճակատը համբուրելով՝ շնորհակալութիւն մատուցց քահանային և հրամանս ըլաւ Ս. Պատարագ մատուցանել. նա ալ կատարեց աէր Յակոբոս եպիսկոպոս Պոստանեանի հրամանը:

Նահիյէ տէրէպէյի Գայիշ-օղլու (1) Սիւլէյման աղամբւսէլլիներ (տեսուչ) 1849 դեկտ. ամսուն մէջ 30 հեծելազօրքով եկաւ Ֆրնուզ և տուք պահանջեց: Ֆրնուզի նախկին վանայր, ձերունազարդ Տ. Նիկողայոս եպիսկոպոսը, հիմակուան Նիկողայոս եպիսկոպոսի — սր առաջինի եղբօրորդին և տանով անոր փոքրաւորը եղած է տիրացու Եղիա անունով — խորուրդին վրայ Չէյթունէն օգնութիւն խնդրեց:

Չէյթունի Սարգիս եպիսկոպոս Սանթքսրեան և 4 իշխաններ Տէլի-քէշիշ Տ. Օ. անին առաջարկեցին որ շուտով երթայ Ֆրնուզ և անխիղճ միւսէլլիմ Գայիշ-օղլուն իրեններով բռնէ ու Չէյթուն բերէ: Գաջարի Տ. Օ. անը քսան կտրիճ առած ձար շատաւ, Ֆրնուզը պաշարեց: Գայիշ-օղլուն սարսափաւոր, առանց դիմադրութեան անձնատուր եղաւ: Հայերը այդ երեսուն հազին թեւ թեւի կապած շղթայաբար, իրենց ձիաններով մէկտեղ, բերին Չէյթունի վանքը, ուր մէկիկ մէկիկ ախտաներուն մէջ կապելով բանտարկեցին: Վերջապէս երեք օր կտքը, մա՛մեատական ծէսով երգութեանցնելով զանանք՝ որ անգամ մըն ալ Ֆրնուզ ոտք պիտի չի կոխեն, ետ ճամբեցին նորէն, բայց հեախան, որովհետեւ նախադէս անանց ձիերը և ունեցածները գրաւած էին, մինակ Սիւլէյմանին ձին վար չղրին: Սմբազ Չէյթունը

1 Գայիշ-օղլու Եհնիճէ-գալէ գեղէն էր, որ կը գրանուի Չէյթունի արեւմտեան հարաւ 20 ժամ հեռաւորութեան վրայ. հոս պաննուեցաւ 1895ի կռուին հայ Սալվատոր: Իսկ Ֆրնուզ Չէյթունի արեւմտեան կողմը 6 ժամ հեռաւորութիւն ունի:

հանդիսատեսն եղաւ այդ երեսուցաներու ձիւն ձմեռով կորակոր վերադարձին : Այդ առթիւ Տէլի-քէշիշը Չէյ-թունի վանքի մէջ Նիկողայոս եպիսկոպոսին ուղղեալ բարձրաձայն սա համբաւաւոր խօսքը արտասանեց . « Հա՛յր սրբազան , ֆէրման տէրման իսթէ : , տէրման , տէրման » (հրովարտակը ուժ կ'ուզէ) : Մինչեւ օրս Չէյ-թունի մըջ այդ խօսքը առածի կա : գ անցած է՝ ֆ է բ մ ա ն տ է բ մ ա ն ի ս թ է բ :

Նիկողայոս եպիսկոպոսը այդ ձմեռը բոլոր զէյթուն-ցիներուն պատուաւոր իւրն եղաւ մինչեւ դարուն : Աւագ երկուշաբթիէն Տ . Օհան մասնաւորապէս իւրրն-կալուեցաւ մինչեւ Աւագ իննգշաբթի , որ օրը , 1830 ասորիլ 3 , հանդիսաւոր ճաշու պատարագ ընելով , Ս . Սարգիս եկեեեցիին մէջ , վերադարձաւ իր վանքը :

Վերայիշեալ դէպքէն տալի մը առաջ արդէն Ֆրնու-ղի եպիսկոպոսը Պոլլիս գացած և սուլթան Մէճիտէն ֆէրման աւեր էր , որ Գայիշ օղլուն անգամ մըն ալ Ֆրնուղ ստք չպիտի կոխէ ևն :

Ուրիշ դրուագ մը եւս Տ . Օհանի կեանքէն : 1831ին Կիւրինի մէջ Չափառ Թօրոս անուն կարիճ շայ մը տաճ-կըցուցեր էին . Տէլի-քէշիշը գնաց եւ թուրքերու ճի-րաններէն ազատելով դայն իր կնոջ Վառվառէի և եր-կու զաւակներուն հետ Չէյթուն բերաւ : Չափառ Թօրո-ստքէն Չէյթունի մէջ մանչ զաւակ մըն ալ ունեցաւ , որուն զէյթունցիք , անոր մօրը բարեպաշտութեանը հա-մար , Վառվառ անունը տուին : Այդ բարեպաշտ կիներ տեսնելով որ իր անուսիսը տաճկութիւն կ'ընդունի լուր կը դրկէ Տ . Օհանին որ գայ զիրենք ազատէ . ա-նոր համար զէյթունցիք մեծ համակութեւն ցոյց տուին ազնիւ տիկնոջ :

Չափառ Թօրոսին ազատումին համառօտ պատմու-թիւնը այնպէս է . Տէլի-քէշիշը տասը զինուած մարդով կը մանէ Կիւրին և կ'երթայ ուղղակի շուկան : Բոլոր շուկայի մարդիկը ստքի կ'ելնեն յարգանքով ու թ է մ է ն ն ա ն ե բ ո վ կ'ընդունին տասը նորեկ հիւրերը . բայց շատեր չէին դիտեր անանց ս'ի ըլլալը և ինչո՞ւ գայր : Չարմանքով կը նայէին Տ . Օհանի , որ կարմիր նոսրի մը վրայ հեծած իր 80 ասորիներու սպիտակա-փառ մօրուքով ու աշխայծ նայուածքով պատկառանք կ'ազդէր հանդիսականներուն . հագած էր ս բ մ ա լ ը (ոսկեթել) շուխա շալվար , մէջքը կապած էր լաճօրի

չալ, վրայէն հագած էր «ճամատան ակնիր գորտան»  
և սրմալը ար վա նի է մը (մեծ վերարկու), գլուխը  
դրած ա ա լ ֆ է ս (կուկլակի պէս մեծ ֆէս մը)։ Ֆէ-  
սին վրան ալ ոսկէ խաչ մը կար զոր նուիրած էր սուլ-  
թան Մահմուտ. մէջքէն կախ ինկած էր արծաթէ թուր  
մը զոր Եգիպտոսի Իպրահիմ փաշան ընծայած էր. գոյգ  
մը արծաթէ ատրճանակ ալ ճիւղն թամբին երկու կողմը  
կախած էր։ Կիւրինի հայերը կը հասկնան որ Չէյթուլի  
նշանաւոր Տէր Օհանն է. իսկոյն տեղին երեւելիներէն  
Գոչուենեան Մարգար աղան զայն իր տունը կը հրաւիրէ,  
բայց Տ. Օհան մերժելով հայուն հրաւերը, կը խնդրէ որ  
զինքը քաղքին ամէնէն երեւելի թուրքին տունը ա-  
ռաջնորդեն։ Մարգար աղան կը վազէ իմաց կուտայ  
տեղին ամէնէն երեւելի թուրքին՝ Հաֆրս Ալիգատէ Սա-  
տրգ աղային, որ անմիջապէս իր աղան կը զրկէ Տէլի-  
քէշիչին և առօք փառօք իր տունը կը հրաւիրէ զայն  
իր մարդիկներով։ Իրիկունը Տէր Օհանը կը բացատրէ  
իր Կիւրին գալուն պատճառը և կը պահանջէ Չափառ  
Թօրոսը իրեն յանձնուի։ Սատրգ աղան կ'աւաչէ որ ի-  
րեն ժամանակ տրուի գայմագամին, միւֆթիին, գա-  
արչին հետ տեսնուելու համար, որովհետեւ կը յարէ.  
«Ասիկայ կրօնական խնդիր մը ըլլալով բաւական ծանր  
բան է. դուն համբաւաւոր մարդ մըն ես, եթէ գաւակա  
ուզես՝ չես խնայեր, բայց այս պարագային այդ պաշ-  
տօնական մարդոց հաւանութիւնը անհրաժեշտ է»։

Տէ. հայրը հրամայօրէն կ'ըսէ Սատրգ աղային, «Գը-  
նա՛ դուրցէ գատրչին, միւֆթիին եւն որ վաղը կէսօրին  
Չափառ Թօրոսը իր ընտանիքով ու կանկարասիքը տա-  
ւը ջորիի վրայ բեռցած, առջեւ խառնէք որ Չէյթուլն  
տանիմ, հակառակ պարագային կ'իջնեմ Գրսրգի (Ա)  
կիրճը չորս մարդուն տեղ Ա Վ Կիւրինցի տանկ կը բռն-  
նեմ ու Չէյթուլն կը տանիմ զօրքով կը հայացնեմ»։

Վերջապէս գայմագամ, գատր, միւֆթի եւ Սատրգ  
աղա՛ ամէնքը մէկտէյ կուգան և կ'որոշեն Եէնի Մու-  
համմէտը (Չափառ Թօրոսը) յանձնել։ Թուրքերը կը

---

Ա. Կիւրինցիներուն քերվանը Մարաշ, Այնթապ,  
Հալէպ երթալու համար Գրսրգ կիրճէն կ'անցնի։ Այդ  
տեղ կը գտնուին զէյթուլնցի Աճը Թէյեկեաններու  
ազարակատները։ Չէյթուլին, արեւելեան կողմը, Յ  
ժամ հեռաւորութիւն ունի։

խնդրեն որ գիշերով յանձնուի . Տ . Օհանր . «Ձէ , կը պընդէ , պէտք է ցերեկով յանձնուին որ ամէն մաւղ տեսնէ» : Տէլի-քէշիշին կամքը կը կատարուի : Սատրգ ազա 100 ոսկինաց ձի մըն ալ կը նուիրէ Տ . Օհանին :

1852ին Տ . Օհան իններորդ անգամը ըլլալով Երուսաղէմ գնաց , և վերջինը եղաւ աս : Նոյն տարին Մարաշի միւթէսարրըֆ եղաւ Շկօտրացի Մուսթաֆա բաշան : Տեղին թուրքերը գրգռեցին նորեկ բաշան որպէս զի զէյթուէնցիներուն անվճար թողած 150,000 դրամուրքը պահանջէ , ատով , կ'ըսէին , գոտի ժողովուրդը ձեզմէ պիտի վախնայ ու նազանդի և տուրքերը դիւրաւ պիտի գանձէք :

Բաշան ճամոզուեցաւ գրգռել թուրքերուն խորուրդին և թիւֆէնքճրպաշի Հասան ազան Չէյթուէն զրկեց որ անոնց տալիք տուրքը պահանջէ : Չէյթուէնցիք բերին տուրքի տեղ թիւֆէնքճրպաշիին առջեւը լեցուցին երկաթ , պայտ և այլ երկաթեղէններ , ըսելով թէ երկիրն ինչ տեղ մ'ըլլալով փող չունին և ինչ որ ունին աս կուտան : Հասան աշան տեսնելով որ նշուն դրամ չէ կարող ստանալ , ձեռնուէնացն ևս դարձաւ :

Մուսթաֆա բաշան կանչեց Մարաշու մեծերը , յայտնեց անոնց եղելութիւնը և իրեն եղած մերժումը ու պզտիկութիւնը : Ան ասան զիմեց նորէն ազաներու խորուրդին , որոնք կրկին ճամոզեցին զյինքը որ և առաջ (արգելք) նանէ , այսինքն Մարաշի գաւառին մէջ եղած բոլոր գայմազամներուն և մուսթիներուն նրանոց զրկէ ուր որ զէյթուէնցի գաւան բանն և նսկողութեամբ Մարաշ ուղարկեն :

Փաշան սաստիկ և առաջ նանեց չորս կողմը : Այդ ժամանակ զէյթուէնցիք փայեկ (լրատար) զրկեցին Տ . Օհանի ընդ առաջ , որ Երուսաղէմէն կը վերադառնար որպէս զի Մարաշ չի նանդիպի : Դժբախտաբար փայեկը ճամբան չի կրնալով նանդիպիլ անար , Տ . Օհան միամիտօրէն ուղղակի Մարաշ կուգայ և ծուղակը կ'իջնայ : Բաշան անմիջապէս բանտարկել կուտայ զայն (ապր . 15) :

Չէյթուէնի իշխանները աս տխուր միջադէպը լսելուն գրեցին պատրիարքարան , ծանօթ ամիրաներու բողոքելով բաշային անկարգութիւններուն դէմ և անոր պաշտօնանկութիւնը խնդրելով : Պոյսէն «կ'աշխատինք» լուր մը եկաւ միայն : Ալերսագիր մըն ալ զրկեցին Մարաշու բաշային , որպէս զի արձակէ Տ . Օհանը : Ապարդիւն մնաց :

Իշխանները խորամանկութեան դիմելով, երկրորդ  
 աղերսագիրք մըն ալ գրեցին բաշային սա սլարուհապու-  
 թիւսով. «Բաշա՛ էֆէնտի, լսեցինք որ նոր թիւֆէնկճի  
 պաշի մը եկեր է Թէմիր աղա անուսով, ըլլալով ուժեղ  
 մարդ մը՝ մարաշցիք կը դողան եղեր անկէ: Եթէ այդ  
 մարդը 60 հեծելազօրքով և տէրտէրն ալ հետը Չէյթուհ  
 դրկէք, զէյթուհցիք վախնալով իրենց անվճար պարտքը  
 կը հատուցանեն. կը խնդրենք առաջարկնիս մի՛ մեր-  
 ժէք և ե ա ս ա ք ն ալ վերցուցէք»:

Բաշան իշխաններուն առաջարկը խելքի մօտիկ  
 գտնելով, կատարեց անոնց պահանջը: Թէմիր աղան  
 թմբուկներով, հեծելազօրքով և Տէլի-քէշիչով (երեք  
 ամիս բանտարկութենէ ետք) մէկտեղ մտաւ Չէյթուհ:  
 Իշխանները համոզեցին Թէմիր աղան, որպէս զի գրէ  
 բաշային որ տուրքը երկու ամիսէն պիտի գանձուի:  
 Ետեւ քն ալ վերցաւ: Չէյթուհցիք այդ երկու ամսու-  
 մէջ, դիշերը ցերեկի խառնելով, սկսան Ալպիստանէն,  
 Եարփուզէն, Կէօքսիւնէն, Մարաշէն եւն, մրջիւնի պէս  
 ցորեն, գարի, աղ, սապոն եւ այլ պաշարեղեններ կրել  
 Չէյթուհ:

Թէմիր աղան՝ բնիկ երզնկացի համբաւաւոր զօրա-  
 պետ մըն էր: Իշխանները, անոր ժամանելուն երկրորդ  
 օրը, առին իր ձիաւորներով տարին Պէրիտ լեռը քէյ-  
 ֆեք ընելու համար: Օրական հինգ տուար կը մօրթէ-  
 ին: Չէյթուհի ախորժահամ գլխիով և ողիով պատուա-  
 կանապէս կերան խմեցին մինչեւ տասնըհինգ օր: Յու-  
 զիս 30ին վերադարձան Չէյթուհ. իշխանները, որպէս  
 զի ժամանակ չափին, Թէմիր աղային առաջարկեցին որ  
 ջ ե բ մ ու կ ը գ ն ա յ եւ օ գ ո ս ա , ամիսն ալ հոն քէյֆ ընէ.  
 բայց նախապէս խնդրեցին որ իր ձիաւորներուն 40ը  
 ետ դրկէ եւ քսանը միայն թողու: Թէմիր աղան ատ  
 ալ կատարեց և քսան հողով գնաց Չերմուկ, ուր օ-  
 գ ո ս ա տ ս ա միտը նմանապէս կերուխուժով անցուց:

Օգոստոսի վերջերը կրկին վերադարձան Չէյթուհ:  
 Չէյթուհի իշխանները խնդրեցին Թէմիր աղայէն որ ի-  
 րենց տուրքի հաշիւը ներկայացնէ, որ 150,000 դահ.ի  
 կը հասնէր: Ան ատեն զէյթուհցիք բացէ ի բաց յայտա-  
 բարեցին Թէմիր աղային թէ՛ իրենք նոր տարւան 30,000  
 դահ. մ ա գ թ ու տուրքը կրնան միայն վճարել.  
 աւելի բուլ մը չեն կրնար տալ: Այդ 30,000էն 15,000ը  
 արդէն եկեղեցիներուն պատկանելով, մնացած 15,000

դահեկանը միայն կառավար ութեան իրաւունքն էր (1 = թէմիր աղան կը յորդորէին որ 15,000ը առնէ ու ելլէ երթայ : Իրաւ է թէ, կ'ըսէին, մեր երկիրը դրախտի պէս կ'երեւայ, բայց պատուի ծառեր են սատնք, իսկ դարի, ցորեն եւ այլ կենսական արմախքներ չեն ածիր, ունինք մարսողական պազ ջրեր, բայց սատնք ստակ չեն շահեցներ մեզի եւն :

Թէմիր աղան իշխաններուն առաջարկին վրայ կրակ կտրեցաւ եւ մերժողական դիրք առաւ, «պէնի պիլի<sup>ո</sup>ր մի սինիզ, եօքսա իամրմր իշխմ'ըսինիզ, 150,000 դրշ .ը նազա ազճէյի եարրն պու վազրթա գատար իսթէրիմ» (Փրաէ<sup>ք</sup> զիս, չէնէ անուես մրայն լսեր էք. 150,000 դահեկանը, զուտ ստակ, վաղը այս առեն կ'ուշեմ) :

Իշխանները պազարիւն կերպով ըսին «ձեր բարկութեանը համար մենք պատասխան չենք տար, մեր պատասխանը՝ մեր կողմէն բարազ էֆէնաին թող տայ» : Կանչեցին Տ. Օհանը եւ «Տ. Հայր, ըսին, սա թուրքին դուն պատասխանէ, չէնէ՛ իմա կտո, կտոր կ'ընենք, եւ շուներու առջեւ կը նետենք, այս մարդը մեր պատիւները տեսնելով ուրիշ քաղքի հայերուն նմանցուց մեզ» :

Տ. հորը պատասխանը սա եղաւ թէմիր աղային. «Աղա՛, մեր Զէյթունը 150,000 դրշ. պարտք ունեցեր է. լաւ, ես երեք ամիս բանտարկուեցայ, ամէն ամիս 50,000ական դրշ. հաշուելով, պէտք է 150,000 դրշ. ինծի վճարուի : Ես սուլթան Մահմուտէն նշան, ֆէրման ունիմ, Մըսրրի Իպրահիմ բաշայէն սուր ունիմ մանաւանդ որ հայ եկեղեցական մըն եմ, չէ՞ որ Մարաշ բաշային պոռացի գոռացի, դուք ալ այնտեղ ունկընդիր էիք, չըսի՞ որ ինծի պէս մարդ մը մի՛ բանտարկեր, մանաւանդ որ Ս. Երկրէն կուգայի, մեզք է, խղճի դէմ է, ամօ՛թ է, չլսեց, չըսի՞ որ ասիկա վրադ սուղի կը նստի : Մեր իշխանները քեզ սահրայէ սահրա, գրօսանքէ գրօսանք պարտցուցին, դեռ քէյֆդ ի՞նչ կ'ուզէ. 15,000 դրշ. ալ կուտան. ա՛ռ, գո՛հ եղիր՝ ելիր :

1. Զէյթունցիք սուլթան Մուրատէն եւ սուլթան Մահմուտէն ձեռք բերած ֆէրմաններուն վրայ կոթընած էին, որոնք Զէյթունցիներու «մազթու» 30 հազար սուրքին կէսը՝ անոնց եկեղեցիներու, կէսն ալ Այա Սօֆիայի յատկացուցած էին :

գնա : Չէ՞ որ դուք դիս երեք ամիս բանտը թողուցիք, թէեւ մենք քեզ չը բանտարկեցինք. ուզած տեղդ ալ պտըտցուցինք : Ի՞մ երեք ամսու բանտարկութեան համար օրական մէյձէկ ոսկիէն պէտք է վճարէք 90 ոսկի, 10 ոսկի ալ անոր շուքը, 100 ոսկի. 100 ոսկի ալ ձեր ձիերուն կերածնուն փոխարէն, կ'ընէ 200 ոսկի : Հիմա, այդ 200 ոսկին ցնծաւ ու մեկնիս» :

Թէմիր ազան չորս կողմը նայելով, տեսաւ որ բռնորն ալ սպառադիսուած են, ճարահատ ըսաւ. «բարազ էֆէնաի, վրաս երեք ոսկիէն դատ բան չունիմ, նոր եկեր էի Մարաշ, դեռ ամսական մը իսկ առած չէի» : Տէր հայրը պահանջեց որ բաշային գրէ որպէս զի 200 ոսկին գրկէ : «Աս ալ չէինք առնել, բայց դուք օսմանցի էք, եթէ չառնենք, մեզք դործած կ'ըլլանք, ինչու որ մեր երկիրը առած մը կայ որ կ'ըսէ. «հայր օսմանցիին ծունկին վրայ կ'ըլլայ», այսինքն օսմանցի պաշտօնեան ապերախտ կ'ըլլայ, որքան պատիւ ընես, վախէն ըրաւ կ'ըսէ. «ատոր համար ձեր ձիաններուն գարիի, խոտի գինը կը պահանջենք» :

Թէմիր ազան յուսահատ, գրեց Մարաշու բաշային որ շուտով 200 ոսկի գրկէ իբր փրկանք :

Չէյթուցիք Թէմիր ազան առօք փառօք, խայտառակօք, առին տարին Սուրէնեան Մարտիրոս իշխանի բերդը բանտարկեցին իր քսան ձիաւորներով :

Բաշային նամակատար զինուորը երեք օրէն վերադարձաւ 200 ոսկին հետը բերելով : Տէլի-բէշիշը 200 կարմրուկ ոսկիները առաւ, 100 ոսկին Ս. Մարգիս եկեղեցիին նոսիրեց, հարիւրն ալ իշխաններուն շնորհեց, սրանք սակայն մերժելով, հէլալ ըրին տէ : Օհանին :

Թէմիր ազան պատրաստուեցաւ մեկնել : Մեկնելէ առաջ շուկայի մէջ, ձիուն վրայ նստած, և բազմութեան ներկայութեան իր խօսքը չորս իշխաններու եւ Տ. Օհանին ուղղելով ըսաւ. «պաքընըդ աղալար, պէյլէր, պէն 60 սիննինտէ պիր առէմ իմ. եիրմիտէ իքէն սիլքի օսմանըլըղա տախիլ օլմուշըմ, տէմէք 40 սէնէտէն պէրի պու մէմուրիյէթտէ պուլունմըշըմ, պէն պէօյլէ ֆէրսանայըգ կէօրմէմիշ իրիմ, աշդ օլսուն սիղլէրէ. մէկէր Չէյթուն Չէյթուն տէրլէր իսէ, եուտուլամագ շէյ տէյիլ իմիշ. կէլիյօր իքէն տավլումպագ իլէ կէլտիմ, շիմաիք սիւքիւթ կիտիյօրըմ» :

«Տեսէ՛ք, ազանն'ը և պէյեր, ես 60 տարեկան մարդ մըն եմ. 20 տարեկան էի օսմանցիութեան պաշտօին»

կ արդ<sup>ե</sup> անցայ . ըսել է 40 տարիէ ի վեր այս պաշտօնով մէջ կը գտնուիմ . ես ասանկ հնարքներ չէի տեսած կեանքիս մէջ . ուրեմն կեցցէք դուք : Չէյթուն Չէյթուն կ'ըսէին՝ կլլուելիք բան չէ եղեր . եկած ատենս թմբկահարութիւնով եկայ , հիմա սուսփուս կ'երթամ» :

Իշխանները պատասխանեցի . «թմբուկդ դարնել տուր նորէն» : «Չէ , չէ» , ըսան ալուխօրէն թէմիր աղան : — «Դուք գիտէք» , եղաւ իշխաններու պատասխանը , բայց աւելցուցին իշխանները , բաշային մեր բարեւները տար եւ ըսէ . «ուխտաւոր տէրտէր մը բանտարկելը ասանկ չրլլար , ասանկ կ'ըլլայ վարդեսութիւնը» : Իսկ Տ , Օ անը իր կողմէն վրայ բերաւ . «ըսէ բաշային որ մենէ հեռու պտըտի : Մարտը իր գլխուն նեղ կը բերենք , հա՛ , դուք ալ երթաք բարով» :

Թէմիր ալան գնաց եւ քիչ օրէն բաշան պաշտօնանկ եղաւ :

Չէյթունի քաղաքականութիւնը Չէյթունցին ինքը լաւ գիտէ :

Տէր Օնան աղքատ դատակարգէն քանի մը տասնեակ մարդիկ իր ծախքովը Երուսաղէմ տարաւ , նոյնպէս նա իր ծախքով ամուսնացուցեր է 6 երիտասարդներ , անոր ըրած բարեգործութիւններն հաշիւ չունէին . ե դեռ մինչև օրս ամէն մարդ գովեստով կը խօսի անոր մասին : Տէր Օնան 1852 թուականին իններորդ անգամը լինելով Երուսաղէմ գնաց եւ անկից յետոյ վեց տարի ալ ապրեցաւ եւ 1858 ապրիլ 3ին , ըստ թրքաց ժամը 4ր քառորդ անցած , իր տանը մէջ յանկարծամահ եղաւ 93 ամեայ : Նոյն օրն Աւագ չորեքշաբթի լինելով , հետեւեալ օր , Աւագ հինգշաբթի , Չէյթունի առաջնորդ Տ . Յովհաննէս Եպիսկոպոսին ձեռօք վերջին օծման արարողութիւնը կատարուեցաւ եւ մեծ հանդիսով թաղուեցաւ Ս . Սարգիս եկեղեցւոյն մէջ : Յիշատակն արդարոյ օրհնութեամբ եղիցի , հանգիստ իր ոսկորներուն :



ԺԱ -

### ԱՂՃԱՏԱՂԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հրովարտակի նորոգմամբ Չէյթուենի վիճակը փոքր ինչ բարւոքուելով՝ ժամանակաւոր հանդարտութիւն մը տիրեց, բայց խաբուսիկ երեւոյթ մ'էր այս եւ վաղանցիկ, մանաւանդ կառավարութեան ամբողջ միտքը զբաղեցնող մեծամեծ ու կարեւոր դէպքեր տեղի կ'ունենային, ինչպէս էր եգիպտական խնդիրը, որոյ լուծումէն յետոյ նա նորէն ուշադրութիւնը դարձուց փոքր ազգութեանց վրայ՝ գէթ անոնք իւր ասիին մէջ ուժով սեղմելու տխուր քաղաքականութեամբ: Եւ այս անգամ փոխանակ Չէյթուենի՝ անոր դրակից քիւրտ ցեղի մը վրայ փորձեց իւր առաջադրած կեդրոնացման խորհուրդի գործադրութիւնը: Այս ցեղը կը բնակէր Աղճատաղ կոչուած լեռը, բաւական ստուար թուով, Չէյթուենէն 27 եւ Ալպսթանէն 13 ժամ հեռաւորութեամբ վայր մը: Ասոնք ո՛չ զինուորական ծառայութիւն կը կատարէին եւ ո՛չ տուրք կը վճարէին կառավարութեան երկար տարիներէ հետէ: Ուստի մեծ վէզիր Հաֆըզ Ալի բաշա 1840ին ասոնց վրայ եկաւ սուլթան Մէճիտի օրով: Քիւրտները բերդին մէջ ամբացած ըլլալով՝ դժուար էր անոնց հետ գլուխ ելնել. թուրք ջոկատներէն ոչ մին կը համարձակէր յարձակում գործել բերդին վրայ:

Ալի բաշա դէյթուենցի հայերը իրեն օգնութեան կոչեց ոչ միայն անոնց անվեհեր քաջութենէն օգտուելու դիտումով, այլ եւ հայոց եւ այս հեռաւոր մահմետական ցեղերու մէջ ատելութեան ու թշնամութեան սերմեր ցանելու նուրբ քաղաքականութեամբ:

Չէյթուենցիք յօժարակամ յանձն առնելով եղած հրաւերը եկան եւ մէկ յարձակումով բերդին դուռը կոտ-

րեցին եւ մտան ներս , ուր ապաստանող ապաստամբք  
տկար դիմադրութենէ մը յետոյ անձնատուր եղան : Այս  
կուռոյն զո՛հ գնաց հռչակաւոր տէր Օհանի մէկ հատիկ  
զաւակը , որ հայ գուռնդին հրամանատարն էր եւ իւր  
մահ խորին ցաւ պատճառեց բոլոր զէյթունցւոյ :

Բաշան տեսնելով հայոց քաջութիւնը ըսաւ . «Տէվ-  
լէթին եփկերմի պին ատէմի օլմատան իսէ Զէյթունտան  
պին ատամը օլսա էվլա տըր . — Զէյթունի 1000 մարդը  
տէրութեան 20,000 մարդէն լաւագոյն է» : Եւ խորին  
շնորհակալութիւն մատուցանելով նոցա՝ որ ընդ ամենը  
500 հոգի էին՝ պատուով դրկեց զանոնք իրենց տեղերը ,  
իւրաքանչիւրին պարգեւելով երկու քական սակի եւ մէյ-  
մէկ ձեռք ճերմակեղէն :

Այս կռիւն ալ իւր յիշատակութիւնն ունի Զէյթուն-  
նի երգոց մէջ .

Աղճատաղտա Տէլի քէշիշին օղլու

Հիւճիւմ իթտի գալէյէ գօշտու տօստօղլու ,

Գուրշունլա վուրուլուպ սէրիլտի պաղըր ,

Եար ու աղեարէտէ վէրտի չօգ աղըր :

Թարգմ . Աղճատաղը Տէլի-քէշիշի որդին

Յարճակեցաւ , վաղեց ուղղակի բերդին ,

Հասաւ գնդակը զարկաւ իւր լերդին ,

Մեծ ցաւ պատճառեց բոլորի սրտին :

ԺԲ

### ԽԱՍԷՔԻԻ ՊԱՀԱՆՁՈՒՄԸ

Աղճատաղի գէպքէն հաղիւ մէկ տարի անցած՝ 1841  
ին էր , Սասէքի մականուանեալ զինուորական պաշ-  
տօնեայ մը 500 հեծեալներով Զէյթուն մտաւ իբրեւ  
չիւր . հայերը զանի պատուով ընդունեցին եւ իւր մար-

դիկն ալ 2—2 բաժնեցին տուներու մէջ : Բայց հիւրը քիչ ատենէն իւր իսկական գոյնը գուրս տուաւ Յ տա-  
րուան յետամնաց տուրք պահանջելով անոնցմէ, երեք  
օր միայն պայմանաժամ չնորհելով անոնց :

Զէյթունցիք անպատե՛հ համարելով առ այժմ հա-  
կառակել անոր դէմ, երեք օրուան մէջ բաւական քա-  
նակութեամբ երկաթ ու պայտ հաւաքեցին մէջերնին ու  
առաջարկեցին պաշտօնեայ Սասէքիին, որ իրենց ունե-  
ցած պարտուց փոխարէն ընդունելով զանոնք՝ ընկալա-  
դիր մը տայ իրենց : Սասէքի մերժեց նոցա առաջարկը,  
հնչում դրամ միայն պահանջելով :

Այն ատեն քովը դռնուող չորս իշխանք՝ «ունե-  
ցածնիս այս է, ուրիշ բան չենք կարող տալ», ըսելով  
մեկնեցան, ազդարարելով միանգամայն իրեն, որ գուրս  
չ'ելլէ, «վասն զի, ըսին, մեր երիտասարդները հոս ձե-  
րիններէն մէկը տեսած չ'ըլլալուն համար՝ ծանր պիտի  
թուի իրենց ներկայութիւնը եւ առաջին անգամ հանդի-  
պողը պիտի սպաննէ քեզ» :

Շատ բարկացաւ Սասէքի անոնց այս վարմունքին  
համար, բայց անկարող էր բան մ'անելու, որովհետեւ  
թէ՛ ինք եւ թէ՛ իւր գօրքեր անոնց ափին մէջ էին :  
Զոջաց երկաթները չ'առնելուն համար, այժմ այն ալ  
ձեռքէ ելաւ, կը փափագէր՝ որ գոնէ իշխանք գալով  
խաղաղութեամբ արձակէին զինք իւր տեղը դառնալու,  
բայց անոնք իրենց տեղ մի քանի հրոսակապետներ զըր-  
կեցին՝ Ա ճ ի-թ է յ է կ, Գ ա բ ա-ք ի ւ լ ա հ, Մ ե բ կ է-  
ն ե ա ն Ա ղ ճ ա պ է կ, Ղ բ ա ն ֆ ի լ ե ա ն - Բ է օ ս է,  
Գ ա բ ու -գ ը բ ա ն, Գ ա բ ա Տ ի ւ մ ա ն, Կ ի ւ ճ ի ւ կ  
Մ ն ա ց ա կ ա ն եւ Վ է զ ի բ -օ ղ լ ու անուններով՝ որք  
ի դիմաց իշխանաց յայտարարեցին նմա ըսելով, «էֆէն-  
տիմ, պիզիմ տէօրթ տէրէպէյլերինին էմրի պու տըր,  
չիմտի աթընըզա պինիպ կիթմէլիսինիզ, պիզ տախի քէ-

մայ իսթիրահաթ իլէ Մարաշ քէօփրիւսիւնէ դատար սի-  
 դի եօլճու իտէճէլիդ . — տէ՛ր , մեր չորս իշխանաց հը-  
 րամանն այս է , որ դուք հիմա ձիերնիդ հեծնելով մեկ-  
 նիք , մենք ալ ամենայն հանդատութեամբ ձեզ մինչև  
 Մարաշի կամուրջը պիտի առաջնորդենք .» «սակայն —  
 աւելացուցին — իբրև վարձք մեր ուղեկցութեան պէտք  
 է տանական ոսկի վճարէք , հակառակ պարագային կը  
 կողոպտենք զձեզ եւ մերկամարմին ու հետիտան կը  
 ճամբենք . ձեր մարդիկը երէկ ուղարկեցինք Կիւրեստինի  
 ճամբով , ուր մեր հրոսակներ զանոնք ամենն ալ կո-  
 ղոպտեցին . մեզ ալ մի եւ նոյն հարկին մէջ մի՛ դնէք» :

Խեղճ մարդը պարտաւորեցաւ կամայ ակամայ տաս-  
 նական ոսկին վճարելով գլուխը փորձանքէ ազատել ,  
 եւ ինք որ եկած էր Չէյթուներ կողոպտելու՝ կողոպտուած  
 եւ ամօթահար դարձաւ Մարաշ :

ԻՖ .

ԹԷՃԻՐԼԵՅԻՈՅ ԿՈՒԻԼ

1842 թուին , յաջորդ տարին , դարձեալ զէնք առ-  
 նելու հարկադրուեցան մերայինք , վասն զի Թեճիլլի  
 թիւրքմէնները , որոնք Սղճատաղի քրդաց նման ապրս-  
 տամբ էին , սաստիկ նեղուելով իրենց վրայ եկող Եու-  
 սուֆ բաշայէն , զէյթուներուց օգնութիւնը խնդրեցին :

Թէև շատ անգամներ սաստիկ վէճեր ու կռիւներ  
 տեղի ունեցած էին ասոնց ու հայոց մէջտեղ , սակայն  
 զէյթուներին իրեն սովորական եղած վեհանձնութեամբ  
 իրեն բարի դրացութեան պարտականութիւնը կատարեց  
 նեղը մնացող թշնամուոյն օգնութեան ձեռք կարկա-  
 րելով :

Բաշան Ղանարը կոչուած տեղը դրած ըլլալով իւր

բանակը՝ պաշարած էր Թեճիրլիցիները՝ որոնք այլ եւս  
յուսահատ՝ անքերնին յառած էին Չէյթուենի վրայ :

Իրենց ակնկալութիւնն ի դերեւ չ'ելաւ : — Երեք  
իշխանք Տ. Օնանի հետ մեկտեղ 500ի չափ քաջարի  
հայոց դլուխն անցած յարձակեցան Եուսուֆի բանակին  
վրայ, որ Չէյթուենէն Տ ժամ հետու կը գտնուէր : Կար-  
ճատեւ կռուէ մը յետոյ չարաչար յաղթեցին զանոնք ու  
ցիրուցան փախուցին : Զուգադիսութեամբ ըսենք կամ  
բախտի առանձին քմահաճոյքով մը՝ այս անգամ ալ  
Եաղուպեան Մ. Սատուածատուր աղան իւր հիանալի  
հշանառութեամբը բաշային դրօշակակիրը զարկաւ ըս-  
պաննեց, իսկ բաշան խոյս տալով միայն կարողացաւ  
իւր կեանքն աղատել ու կէօքսիւն ապաստանել :

Թեճիրլիցիները յանձուես շնորհակալութիւն յայտ-  
նելով հայոց՝ շատ մը ընծանեց տուին եւ մշանջենապէս  
բարեկամ մնալու խոստումներով ճամբեցին զանոնք :

Այս ալ իւր տեղն ունի Չէյթուենի երգոց մէջ .

Տէլի քէշիշ տէր քի չըգարմ տէօյիւղէ ,  
Գարթալը գուզղուենու տէօքտիւմ իւլեշէ ,  
Մընաֆըգա ույմա կէլ , Եուսուֆ բաշա ,  
Տուվալարը հագգա պաղլը Չէյթուենու :

Եաղուպ օղլու տէտի՝ պիլիշ հալիմտէն ,  
Նիշէ շահպաղլարոմ չըգար գօլոււմտան ,  
Կէօղիւմ գան պիւրիւմիւշ գօրգմամ էօլիւմտէն ,  
Տէօյիւշէ տէօյիւն պայրամ թօյ տըր Չէյթուենու :

Սուրէն-օղլու տէտի՝ աշրէթ , աղլաման ,  
Իմտատճա հաղըրըզ պօշա պէլլէմէն ,  
Ենի-տիւնեա տէտի՝ գահըր էյլէմէն ,  
Շիմտէն սօնրա տէօյիւշ պէնիմ , Չէյթուենու :

Շօվր-օղլու տա տէտի՝ էյ Եուսուֆ բաշա ,  
Թեճիրլի աշրէթէ օլտուն թամաշա ,  
Չէյթուենուլար իլէ չըգաման պաշա ,  
Արշը ալայէ չըգմըշ իւնիւ Չէյթուենու :

Աչըդ խալիլիժ պէն , ճիւմլէտէն կէտա ,  
Թեճիրլի աչրէթի օլմուշտուր դատա ,  
Չէյթուենու շափուճագ եէթտի խմտատա ,  
Ղանարլ տաղը օլտու շանըն , Չէյթուենու :  
Թարգմ . Տէլի-քէշիշը կ'ըսէ .— «Ես կռուի ելայ ,  
Անգղ ու ագուաւ իջուցի դիականց վրայ ,  
Չար մարդերու մի' նայիր , ո'վ Եուսուֆ բաշա ,  
Չէյթուենց աղօթքը Աստուծոյ հետ կապուած է» :  
Եաղուպեան կ'ըսէ .— «Դուն իմ վիճակս գիտես ,  
Քանի-քանի առիւծներ դուրս կ'ելլան խմբէս ,  
Աչքս արիւն լեցուեր է , չեմ վախնար մահէս ,  
Պատերազմը հարսնիք կ'ընդունենք մենք Չէյթուենցիք» :

Սուրէնեան կ'ըսէ .— «Աչրէթ , մի' արտասուէք .  
Օգնութեան պատրաստ ենք , ի դուր մի' կարծէք» :  
Ենի-տիւնիա կ'ըսէ .— «դուք վիշտ մի' քաշէք ,  
Ասկէ ետքը կռիւն իմս է , Չէյթուենցիք» :

Շօվրօեան կ'ըսէ .— «Ո'վ Եուսուֆ բաշա ,  
Թեճիրցւոց առջեւ խայտառակ ես եղեր ,  
Չէյթուենցւոց հետ գլուխ չես կրնար ելլեր .  
Չեր անունը երկինք հասաւ , Չէյթուենցիք» .

Աչըդ խալիլն եւ՛ խղճուկ մուրացկան .  
Թեճիրլի աչրէթը եղաւ թշուառական .  
Չէյթուենը շուտով հասաւ օգնութեան .  
Ղանարլ լեռը ձեր փառքն եղաւ , Չէյթուենցիք :

ԺԳ .

### ԱԼՊՈՒՍԹԱՆՅԻ ՀԱՃ ԱՂԱՆ

Թուրք կառավարութիւնը , որ միշտ առիթ կը փրնտըռէր Չէյթուենը հանելու իւր բացառիկ վիճակէն , ի-

լաւացի պատճառ մը նկատեց 1842 ի դէպքը, յորում  
Չէյթուենցիք օգնութեան հասան Թեճիրլիցւոց ընդդէմ  
Նուսուֆ բաշայի, որ զանոնք նուաճելու եկած էր :

Ուստի այս դարձը ի գլուխ հանելու համար ընտ-  
րուեցաւ Ալպուսթանցի Հաճ' աղան, որ Պոլիս երթալով  
խնդիր մատուցած էր արդէն սուլթան Մէճիտի այս քա-  
նին համար : Իւր ծրագիրն էր՝ արգիլել Չէյթուենի ցո-  
րենը եւ ուրիշ ամեն ուտելիքնիրը, որք Ալպիսթանէն  
կը ստանային, եւ այսպէս նեղել զանոնք քաղցով :  
Նոյնպէս խափանել անոնց երկաթահանքը, որ անոնց  
շահաւաճառ գլխաւոր աղբիւրն էր եւ որ դարձեալ Ալ-  
պիսթանի մօտ կը գտնուէր : Չանոնք այս եղանակաւ  
նեղը ձգելէ յետոյ շատ մը պաշար պօղ ու զն եր է  
քաղկացեալ բանակով մը պիտի յարձակէր անոնց վրայ,  
որոնք ստիպեալ պիտի պարտաւորէին անձնատուր ըլ-  
լալ : Այս ծրագրին յաջողութիւնն ստոյգ կը թուէր,  
հետեւաբար եւ պէտք եղած արտօնութիւնը տրուեցաւ  
1844 ին :

Սակայն Հաճ' աղային ամեն հաշիւները ի դերեւ  
ելան, վասն զի երբ նա Ալպիսթանի պաշարն արգիլեց  
Չէյթուեն մտնելը, անոնք ալ այլազգ գիւղերը աւարի  
տուին ու իրենց վրայ եկող պաշարպօղուզներուն անանկ  
Չարդ մը տուին՝ որ բամբակնին ելաւ :

Ա Վ Ա Չ Ք

(Ե Ր Պ)

Ալպուսթանը Հաճի աղա, չէ՛մ տէրէ պէյի,  
Ֆէրման թահսիլ էթտի էյիտէն էյի,

Չէյթուենլա վուրուշտու ալուրը՛մ տէյի,

Ճէպրի մազուպ էթտի Չէյթուենըն քէօյի :

Ճիհան նէհրին կէօղիւ Ալպուսթանտա տըլ,

Տէմիր մատէն իսէ Պէրիտ տաղտա տըր,

Ձէյթուն շէճիլէրի եիւղ աղարտան տրր ,  
Հաճ' աղա ենիլտի էլպէթաէ առ տրր :

Թարգմ . Սլպիսթանցի Հաճի աղան , արէ-պէյի լինելով ,  
Սուլթանէն ֆէրման մը ձեռք բերելով ,  
Ձէյթունի հետ կռուեցաւ «կ'առնում» ըսելով :  
Ձէյթուն գիւղը իր թշնամին նուաճեց :

Ճիւան գետին ալը Սլպիսթանի մէջն է .  
Երկաթի հանքն ալ Պէրիտի մէջն է .  
Երես ճերմկցնողը Ձէյթունի քաջն է .  
Հաճ' աղան յաղթուեցաւ . հարկաւ ամօթ է :

ԺԵ .

### ԹՕՓԱԼ-ՍԱՏՕ

Ինչ որ Հաճ'աղան չի յաջողեցաւ , կը կարծէր թէ  
գլուխ հանել թօփալ-Սատօ անուն զօրապետը , որ բազմաթիւ անկանոն զօրքերով եկաւ Ձէյթուն 1847 ին եւ  
ամեն օր կը սպառնար Հայոց՝ լրբաբար մունեաիկ կանչել տալով « Օն իքի սիննինաէ գըղ իսթէրիմ . — տասներկու տարեկան աղջիկ կ'ուզեմ » : Ձէյթունցիք կը պատասխանէին « էֆքեարը մէքրուհէնիղ իչիւն ինչալլահ բէղալէթը քեամիլէ իլէ բիւսվայ օլուպ լաշէնիղ պաւտաղլարտա գուշարա հաֆադա օլաճագ տրր . — ձեր այդ պիղծ խորհուրդներուն համար Սատուծով կատարելապէս պիտի խայտառակուիք ու ձեր դիակը այս լեռներուն վրայ թռչնոց կերակուր պիտի ըլլայ » :

Սատօ իւր բանակը դէմ յանդիման մօտեցուց Ձէյթունի , վասն զի հայերը դանի հալածելու համար շատ առաջ չի գնացին , այլ դիմամբ թոյլ տուին , որ կարելի եղածին չափ մօտ դայ . այնուհետեւ անոր ետեւի կողմէն ճամբան կարեցին 1000 մարդով , որ չկարողանայ փախչիլ , 2000 հոգի ալ բիրերով ու կացիններով



զինեալ անոնցմէ քիչ մը հեռու դարանի մտած էին, իսկ  
ուղղակի թշնամւոյն դէմ 120 մարդ միայն կար՝ կոխու-  
ւած յարդի 40 հակերուն ետեւ՝ զորս զիշերով կամաց  
գլորելով թշնամւոյն բանակին մօտեցուցած էին եւ  
իրբեւ պատնէշ կը գործածէին, 500 մարդ ալ առաջի  
120 մարդոց ետեւի կողմը կեցած էին: Ստոնց ամենն ալ  
կէս զիշերին հրացանաձգութեան պիտի սկսէին, երբ ե-  
կեղեցեաց կոչնակները դարնուէին, — այս էր իրենց  
հշանը:

Մուկը, որ ինք զինք առիւծ կը կարծէր, բոլորու-  
վին բռնուած էր թակարդին մէջ, բայց առանց վերա-  
հաս վտանգին տեղեակ լինելու՝ անուշ - անուշ կը քը-  
նանար, եւ ահա մէկէն կոչնակներու ձայնին հետ հրա-  
ցաններն ալ պայթեցան ամեն կողմէ: Սաստ եւ իւր  
զինուորք դարհուրած վեր թռան իրենց անկողիններէն,  
ամեն բան թողուցին այնտեղ եւ սկսան փախչիլ խու-  
ճապով, բայց ուր որ կը դիմէին՝ իրենց առջեւ կը տես-  
նէին հայ սպառազէնները:

Փոթորկալից քամիին զօրութեամբ ծառերէն վար  
թափուող աշնան տերեւներու նման իրարու ետեւէն  
կ'իյնային խեղճերը գնատակներու եւ սուրերու հարուա-  
ծին տակ, այնպէս որ յուսահատ ու սրտաբեկ սկսան  
աղաղակել՝ «Աման, դարտաշլա՛ր, եթիշիր, օրտույու  
թիւքէթարինիզ, մէրհամէթ խախուղ ճանրմըզու գրչմայրն,  
պիզի եսիր թութուն, — աման, եղբայրնե՛ր, բաւական  
է, բանակը սպառեցիք, յանուն զթութեան մեր կեան-  
քերուն խնայելով՝ գերի վարեցէ՛ք զմեզ»:

Կատորածը գաղբեցաւ, բայց արդէն մարդոց ու  
կենդանեաց դիակներով լեցուած էր ամեն կողմ, հրա-  
մանատար Սաստն եւս ինկած էր անկենդան ու գրեթէ  
անճանաչելի, իւր վրայի սուրէն միայն ճանչցուեցաւ  
անոր ինքնութիւնը, վասն զի անունը գրուած էր սու-

քին վրայ . 500 հատ ալ մահմուտիյէ ոսկի ելաւ զէյ-  
թունցւոց , որոնք լաւ մը կողոսկտեցին բանակատեղին  
եւ ինկած ու գերի մնացած բոլոր զօրքերը :

Այս ձախող պատերազմով Սատօ ալ բազմ ունեցաւ  
զէյթունցւոց բանաստեղծական կրգերուն մէջ յիշուելու :

Թօփալ Սատօ կէլտի Չէյթուումուզա ,  
կէօզ տիքտի օն իքի եաչ քըզարամըզա ,  
Թիւֆէնկ նչան ալտըգ տիզլէրիմիզէ .  
Սատօ պէկ գաթլ օլտու էլլէրիմիզլէ :

Թարգմ . Թօփալ Սատօն ալ արշաւեց Չէյթուն ,  
Աչք անկեց մեր տասներկու ամեայ կոյսերուն .  
Հրացանը անկեցինք մէջ մեր ծնկերուն ,  
Սատօ պէկ գո՛ն եղաւ մեր քաջ ձեռքերուն :

ԺԶ .

### ՀԱՅԹԱՆԵՐԸ

Թրքական բանակին պատահած դժբաղդութեան  
անտեղեակ կարգ մը կամաւոր անկանոն զօրքեր , որոնք  
հայ թա կը կոչուէին , հազարաւոր բաղմութեամբ  
էյէր-պէլի անցքէն անցնելու նպատակաւ կէօքսիւն  
եկած էին ու անկէ Սատօ զօրապետին բանակին հետ  
միանալու մտադրութեամբ ճամբայ ելլելու կը պատրաս-  
տուէին : Ասոնք ցեղով առնաւուտ էին և իրենց աղգա-  
յին սովորութեան համեմատ սպիտակ շրջագգեամ հա-  
գած էին :

Երբ այս լուրն առին՝ ֆրնուզցիք առանձին լրա-  
տարի մը միջոցաւ իսկոյն հաղորդեցին զէյթունցւոց՝  
պէտք եղածն ի գործ դնելու համար : Պատերազմական  
ազեւորութիւնը դեռ եւս անցած չէր , վասն զի Սատօի  
խորտակումէն մէկ շաբաթ միայն անցած էր . ուստի բո-

լոր սպառազէնները դիմեցին Աթ Օլուղու կոչուած տեղը, Թեքիր գետակին միւս եզրը, որ Չէյթունի արեւմտեան կողմը կը գտնուի՝ 7 ժամ հեռաւորութեամբ: Երկու ժամի չափ դադարուէ յետոյ երեւցան հայթափան երը, որոնք կոտորածի ու կողոպուտի փափաքով սգեւորուած դեղեցիկ երազներ կը տեսնէին, բայց այդ երեւակայական ամեն ցնորքներն յանկարծ օդը ց՛ղեցան, երբ առջեւնին տեսան Չէյթունի կազմ և պատրաստ գունդը: Այնտեղ սկսան պատերազմը, որ տեւեց 2 ժամ: Այդչափ կարճ ժամանակի մէջ 2000 Ալպանացիներէն հազիւ 24 մարդ ողջ ազատեցաւ, միւսները ամենն ալ չարաչար կոտորուեցան: Պատերազմին տեղը կը կոչուի մինչև ցայսօր Հայթափան կամ Գատը գրան, որովհետեւ հայթափաները գատը գրրան ալ կը կոչուէին:

ԺԷ -

ՊԱՅԱՋԻՏ—ՕՂԼՈՒ ԱՀՄԷՏ ԲԱՇԱ

Չէյթունի անընկճելի ոյժը և յաղթական պատերազմները այլ եւս ակնածելի դարձուցած էին դինքը ամենեցուն, և շատեր կը փափագէին ստանալ անոր բարեկամութիւնն ու աջակցութիւնը իրենց անհատական կամ հասարակական կեանքին մէջ ունեցած խորհուրդներու յաջողութեան համար: Այսպէս Հաֆրզ Ալի բաշա անոր ուժին պէտք տեսաւ Աղճատաղի կռուոյն մէջ Թեքիրլիցիները անոր կոթնեցան՝ Եուսուֆ բաշայի դիմադրելու համար, նոյնպէս մարաշցի Պայաղիտ օղլու Ահմէտ բաշան ուղելով անդուոյն կառավարչութիւնը ձեռք բերել՝ Չէյթունցւոց պաշտպանութեանը դիմեց: Սա 1853ին 20 հեծեալներով Չէյթուն գալով իւր

խորհուրդը յայտնեց և՛ Էօքսիւղեան Տ. Յովհաննէս և պիսկոպոսին թանկագին մատանի մը ու Ս. Սատուածածին վանքին ալ 30 ոսկի արժողութեամբ գեղեցիկ ջորի մը, չորս իշխանաց և Տէլի-քէշիչ Տ. Օհանի ալ մէյմէկ արժանավայել ընծաներ տալով՝ աղաչեց անոնց, որ իրենց սեփական ուժերով Մարաշ իջեցնեն ու այնտեղ պաշտօնավարող կառավարչին տեղ հաստատեն զինքը, պատճառելով թէ նա օտար մըն է, իսկ ինքը տեղացի, հետեւաբար և աւելի օգտակար պիտի ըլլայ հանրութեան և մասնաւորապէս Չէյթուհի: Հաւանականաբար ուրիշ փառասիրական ձգտումներ ալ ունէր աւելի ընդարձակ ծրագրով, եթէ հանգամանքները թոյլ տային անոնց գործադրութեանը:

Չէյթուհիք ընդունեցին նորա առաջարկը պայմանաւ՝ որ իւր կնքով ու ստորագրութեամբ ապահովէ զիրենք այս առթիւ, ամեն պատասխանատուութիւն ինքը ստանձնելով: Անմէտ յանձն առաւ այս պայմանը և տուաւ անոնց պահանջուած ապահովագիրը:

Այն ատեն իշխանք իրենց մօտ հաւաքելով 500 կարիճ պատերազմիկներ, Տ. Օհանն ալ ի միասին, աւելին Անմէտ բաշան (այս տիտղոսը ունէր արդէն) և Ախրատագիլի գազաթէն սկսեալ անընդհատ հրացան արձակելով իջան Մարաշ ու այնտեղ հաստատեցին զանի իւր փափագած պաշտօնին մէջ՝ առանց ո՛ր և է ընդդիմութեան հանդիպելու:

Եստ գո՛ն մնալով բաշան՝ մեծ ընդունելութիւն աւրաւ անոնց և Մարաշի գիշերապահութիւնը անոնց յանձնեց: Մեծ վախի մէջ մնացին տեղացի տաճիկները՝ կարծելով թէ այսպէս Մարաշ զէյթուհեաց ձեռքն անցաւ անոր համար շատերը խանութ բանալու ալ սիրտ չէին աներ, բայց մէկ ամիսէն զէյթուհիք վերադարձան իրենց տեղը, և Անմէտ բաշան ալ հազիւ 5 ամիս կարա-

դապարտու ազանել իւր դիրքը. այնուհետեւ պաշտօնանկ  
եղաւ :

Ժ Ը.

ԱՌԱՋԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՔԲՐՈՉԻՉԸ

Այս ատենները ( 1853 թ. ) Պոլսէն Չէյթուէն եկաւ  
Մէլիքեան Արծրունի Յովակիմ աղան՝ իբրեւ գործիչ՝ ու  
հին պանդուկը (քէրվանսարայ) կառավարական պալատի  
ձեւ մտցնելով՝ ինքը եղաւ կառավարիչ, չորս իշխանները  
ժողովոյ անդամ և Տիրացուեան Տէր Մարտիրոսն ալ  
դատաւոր, ու այսպէս սկսաւ կառավարել շատ կանո-  
նաւոր կերպով : Մէկ տարի վերջ Կիւրեաթի նի բերդին նու-  
րողութեան ձեռնարկեց և այս բանին համար չի կրնա-  
լով պէտք եղածին չափ դրամ հասցնել՝ խորհեցաւ Ռու-  
սիա երթալ այնտեղէն դրամ ձորելու համար : Արեւել-  
եան պատերազմին բորբոքած ժամանակն էր, հետեւա-  
բար և խիստ վտանգաւոր այսպիսի ճանապարհորդու-  
թիւն մը, ուստի իշխանք ընդդիմացան, բայց նա պնդելով  
իւր որոշման վրայ ճամբայ ելաւ ու Կարնոյ մէջ ճանչ-  
ցուելով ձերբակալուեցաւ և տեղւոյն առաջնորդ Գրի-  
գորիս եպիսկոպոսի գործ դրած սաստիկ ջանքերուն հա-  
կառակ՝ չի կրնալով ազատուիլ՝ կախատղան բարձրացաւ :

ԻԹ.

ՔԻՐՄԵՐՆԻ ՀԱՎԱՃԱՅ

Որովհետեւ Արեւելեան պատերազմը բացուած էր՝  
Թոշակաւոր կամաւոր զօրք գրելու համար մէկը եկած էր  
Մարաշ Անգլիոյ կողմանէ՝ Քիրմէնի Հավաճայ անուէնով,  
որ լիբանանցի էր՝ ազգաւ մարօնիտ (1854) : Այդ կամա-  
ւոր զօրաց պէտքերու հոգն ալ ինք ստանձնած ըլլա-

լով մազէ վրաններ ալ հիւսել կուտար անոնց համար :  
Ինքը ստանձնած ըլլալով մազէ վրաններուն չափն ու ձևը  
տուած ու հորկաւոր եղած յանձնարարութիւնն արած էր  
Մազմաններու թուրք շէյխին, բայց սա իրեն տրուած  
չափէն պակասհանած ու խարդախած ըլլալուն վէճի  
բռնուեցան Հավաճային հետ, և չի կրնալով համաձայնիլ  
դատաւորին վճռոյն դիմեցին. դատաւորը առանց ուշ  
դնելու Հավաճայի առարկութիւններուն՝ դատը վերջա-  
ցուց ի նպաստ շէյխին : Այս անարդարութեան դէմ սաս-  
տիկ դայրացած Հավաճան, մանաւանդ զօրաւոր պետու-  
թեան մը կազմանէ դործակատար նշանակուած ըլլալուն  
վրայ ինքնավստահ, աղաղակեց դատարանին մէջ «փե-  
ղեւն'նկ, պէօյլէ՞մի շէրիաթ քեսէլլէր. — կաւա՛տ, այս  
պէ՛ս կը կարեն դատաստանը» :

Եթէ յանկարծ ա՛նդին ուռմբ մը պայթէր մոլեռանդ  
դատաւորին ոտքերուն տակ՝ այնչափ պիտի չի սոսկար  
նա, որչափ սոսկաց այս մէկ խօսքէն՝ որ կեավուրի մը  
բերնէն արտասանուեցաւ այսպէս անսպասելի յանդըզ-  
նութեամբ : Իսկոյն շուկան իջաւ, գրգռեց խուժանը,  
«մեր սուր օրէնքը և կրօնքը անարգուեցաւ, պէտք է  
վրէժխնդիր ըլլալ» աղաղակելով :

Տղէտ ու կատաղի ժողովուրդը, որ բռնկելու հա-  
մար կայծի մը կը սպասէ միշտ՝ բորբոքեցաւ մէկէն դա-  
տաւորին գրգռիչ խօսքերէն, դիմեց ա՛նդին բազ-  
մութեամբ Հավաճային բնակած տունը և կրակ տալով  
շէնքին՝ կենդանւոյն այրեց խեղճ մարդը իւր արկնոջ և  
դաւկին հետ. երկրորդ զաւակը աղատուեցաւ Հասան  
Քէօչէկ անուն անձի մը միջոցաւ :

Ասոնց համար յօրինուած երգին հետեւեալ տողերը  
կը նշանակենք .

Մազմանլարըն շէյխի չալարը պիր մէհէնկ,  
Հավաճա դատըյա տէաի փեղէվենկ,

Գաւոր զազէպլէնտի, չէկտի պիր թիւֆէնկ .  
Պագըն շիմտի Հաւաճանըն հալընա :

Սենէ պին իքի իւղ եթմիշ իքիտէ  
Օլտու պու ալամէթ թարիխ իսլամտէ,  
Ինթիհասը մարտըն օթուղ պիրինտէ,  
Սոն կիւնիւնտէ էօյլէն կանտը Հաւաճա :

Թարգմ . Մաղճաններուն շէյխը փորձանք մը բերեց,  
Հաւաճան զատըին «կաւա'տ դու» գոչեց,  
Գաթին ալ կատղեցաւ, հրացանը քաշեց,  
Տեսէ՛ք շիմա Հաւաճային վիճակը :

Հազար երկու հարիւր եօթանասուն երկուքին՝  
Պատահեցաւ այս դէպք թուրք թուականին,  
Խնդիրը վերջացաւ մարտ երեսուն մէկին,  
Վերջին օրուան ցերեկ Հաւաճան ալ վառեցին :

Ի լուր այս քսամնելի ոճրոյն՝ արդար զայրոյթով  
բորբոքած զէյթունցիք վճռեցին վրէժխնդիր ըլլալ Մա-  
րաշի բոլոր թուրքերէն և քրիստոնէութեան պատիւը  
պաշտպանել ընդդէմ բարբարոս մուսուանդութեան, ուս-  
տի այնտեղի Հայերէն մի քանին կանչելով պատուիրե-  
ցին, որ տաճկաց թաղերէն զատուելով մեկուսանան,  
որպէս զի յարձակման ժամանակ չի մնասուն իրենք  
ալ : Բայց մարաշցիք այս ահագին դործին իրենց համար  
ունենալիք ծանր հետքեւանքներուն վրայ մտածելով՝  
աղաչեցին, թախանձեցին, որ այս խորհուրդէն հրաժա-  
րին : Շատ դժուարաւ հանդարտեցան զէյթունցիք՝ միայն  
Մարաշի հայոց ապագան մտածելով, բայց և այնպէս  
իրենց խղճին վրայ ծանրացող ճնշումէն այն ատեն մի-  
այն ազատեցան, երբ տարաբաղդ զոհերու աճիւնին  
նուիրեցին մի քանի թշնամիներու ջերմ արիւնը, որպէս  
պատարագ քաւութեան :

Արդեօք քաղաքակիրթ կոչուած Եւրոպան ալ ,  
արդեօք քրիստոնեայ համարուած Եւրոպան ալ այս վե-  
հագի ղէյթուենցիներու , այս ափ մը քաջարագուկ չայե-  
րու ունեցած քրիստոնէական նախանձայուղութեան  
մէկ տասներորդը կը կրէ՞ իւր սրտին մէջ : Աւա՛ղ , կը  
տարակուսինք . . . Հարիւր հազարաւոր անմեղ հայոց  
խժդժարար թափուած արիւն իբրև յաւիտենական բո-  
ղոք դեռ եւս կը ծանրանայ քրիստոնեայ աշխարհի խըղ-  
ճին վրայ : Կեցցէ՛ Ձէյթուեն , որ կարող է աղնուութեան  
կենդանի տիպար մը հանդիսանալ տիեզերահոչակ Եւ-  
րոպային :

Կ .

## ՁԷՅԹՈՒՆՅԻՈՅ ՈՒ ԹԵՂԻՐՂԻՅԻՈՅ ԹՇՆԱՄՈՒԹԻՒՆԸ

1850էն սկսեալ շարունակ պատերազմ :

Ինչպէս յիշեցինք ասկէ առաջ՝ Թեճիրլիցիք հաշտ  
չէին ղէյթուենցւոց հետ եւ բազմիցս արիւնահեղ կռիւ-  
ներ մղած , այնպէս որ 5 տարուան մէջ 10 անգամ պա-  
տերազմ ունեցած են իրարու դէմ , որ կը պատահէր  
միշտ դարնան եւ աշնան՝ Թեճիրլիցւոց ամարանոց եր-  
թեւեկելու ժամանակ :

Աոցա թշնամութեան պատճառն էր այս վաչկատուն  
ցեղին յափշտակիչ ու աւարատու բնաւորութիւն մ' ունե-  
նալը , որուն երեսէն հանդիսա չունէին Ձէյթուենի ջորե-  
պաններ եւ միշտ կը կողոպտուէին , կըսպաննուէին ի-  
րենց ուղեւորութեան ատեն , երբ ասոնց վրաններուն  
քովէն կ'անցնէին առանձինն : Ձէյթուենցիք չի կրնալով  
Թեճիրլիցւոց մեասել անոնց վրաններու ցիրուցան եւ ի-  
րարմէ շատ հեռու տեղեր շարուած ըլլալուն պատճա-  
ռաւ՝ կըսպասէին դարնան եւ աշնան եղանակներուն ,  
յորս նոքա խմբովին կը չուէին ամարանոց կամ կը դառ-



նային անտի . զինեալ յարձակելով անոնց վրայ՝ ընդ միոյ երեսուն եւ ընդ միոյ հարիւր կը փոխարինէին անոնց գործած չարիքները , այնպէս որ անոնք իրենց երթեւեկութեան ճահքան՝ որ ի սկզբան Ձէյթունի շուկային մէջէն էր , պարտաւորեցան հետզհետէ կ'անկրօտ , անկէ ալ Չ ու ր օ ի ս , Ս ու ւ չ ա թ ը , Մ է յ ր է մ շ ի ւ , Ք ի ի ս է ճ ի ք փոխադրել (այս վերջինը քաղաքէն 20 ժամ հեռու է) :

Բազմաթիւ ընդհարումներու մէջ կը պատմենք միայն 1855 թուականի կռիւը՝ յորում վերջնականապէս պարտութիւն խոստովանելով Թեճիբիքիք առաջարկւած հաշտութեան պայմաններն յանձն առին և թշնամութիւնները երկուստէք դադրեցան :

Նոյն թուականին դարնան եղանակին , երբ անոնք կը պատրաստուէին դարձեալ Իւնկիւթիւ կամուրջէն անդնելով ամառանոց երթալու՝ զէյթունցիք դնացին բռնեցին կամուրջը , որ ձգուած է Ջահան գետին վրայ Մարաշէն 3 ժամ և Ձէյթունէն 9 ժամ հեռաւորութեամբ , ասոր հարաւային կողմը :

Գետը սաստիկ յարդած ըլլալով՝ ջուրէն անցնիլ անկարելի էր . կամուրջի գլուխն ալ հայերը բռնած էին . ուրիշ ճար չի կար , — կա՛մ կռուիլ , կա՛մ հնազանդութիւն ցուցնել պէտք էր . կռուելու համար իրենց դիրքը շատ աննստաստ էր թէև Մարաշի բոլոր թուրքերը իրենց ետեւէն էին : 15 օր իրենց կիներով , զաւակներով և ամէն անասուններով այնտեղ ապասելէ յետոյ վճռեցին հնազանդութին յայտնել ու հաշտուիլ զէյթունցեաց հետ :

Իրենց ցեղապետները , ուսերնուն վրայ պատանքի ձեւով ճերմակ կաւ ձգած՝ իրրեւ նշան խոնարհութեան , եկան մինչև կամուրջին մէջտեղը , ուր կեցած էին մեր մեծաւորները՝ չորս իշխան մէկ կողմը և Տէլի-քէչիչն ու Պալճեան Մ . Հալւոր ազան միւս կողմը դէմ առ դէմ : Յեղապետները այնտեղ «մեղայ» գոչելով և իրենց կրօն-

քի ու աւանդական սովորութեանց համեմատ ամենա-  
ծանր համարուած երդումները արտասանելով՝ հնազան-  
դութիւն յայտնեցին ու հաշտութիւն խնդրեցին : Մեր  
խշիտանք ընդունեցին առաջարկուած հաշտութիւնը՝ պայ-  
ման դնելով, որ յետ այնորիկ չի համարձակին անոնք  
զէջթուեցիներէն մէկուն կամ անոր անասնոյն մէկ մա-  
ղին անդամ դաշելու : Այնուհետեւ Տ. Օհան կամուջին  
բարձրագոյն կէտին վրայ կանգնած՝ սուրը երկնցուց ու  
անոր տակէն անցան բալոյ, ցեղապետները, ապա թոյլ  
տուին անոնց, որ ամէնը 1000 տուն էին, երթալ ամա-  
րանոց :

Բայց հաշտութեան այս դաշինք հազիւ չորս տարի  
տեւեց. Թեճիրլիցիք նորէն սկսան իրենց նախկին ըն-  
թացքը բռնել, վասն զի Մարաշի թուրքերը զանոնք  
գրգռեցին ըսելով՝ «ամօթ չէ՞ ձեզի՝ որ կեալուրներու  
առջեւ այդպէս խոնարհիք նուաստութեամբ, ձեր թիւն  
ալ անոնց թուոյն հաւասար է, մանաւանդ որ դուք Ս.  
կրօնքի հղօրագոյն պատնէշն ունիք (սիդաէ տին դուվ-  
վէթի վար) : դուք գործեցէ՛ք ըստ առաջնոյն և եթէ  
խնդիր ծագի՝ մենք ալ անտարբեր չենք մնար, կ'օգ-  
նենք ձեզ» :

Այսպէս ըսելով նպատակնին էր դարձեալ խռովու-  
թիւն ձգել մեր և աշիրէթներուն մէջ և մէկզմէկ ջար-  
դել տալ իրարու, վասն զի ինչպէս մեզմէ, նոյնպէս և  
Թեճիրլիցիներէն դժգոհ էին, իրենք ալ շատ անգամ  
մնասուելուն համար անոնց երեսէն : Յերեկ ատեն, շու-  
կային մէջ յայտնի համարձակ յափշտակութիւններ գոր-  
ծել՝ սովորական բաներ էին Թեճիրլիցւոց համար, և  
այդ շահատակութիւններ կը գործէին ամենուն վրայ ա-  
ռանց ազգի և կրօնքի խարութեան : Ուստի թուրքեր  
չի կրնալով անոնց ուղղակի բան մ'ընել, կ'աշխատէին  
անուղղակի կերպով մնասել, անոնք ալ յիմարաբար

գործիք դարձած այդ թուրքերուն նենգաւոր թելադրու-  
թեանց՝ սկսան իրենց հին փողը հնչեցնել :

Չէյթուէնցիք խորհուրդ անելով՝ որոշեցին այս ան-  
գամ գործը հիմնապէս կարգադրել առանց արհիւնահե-  
ղութեան . բողոքելով ասոնց անզուսպ ու բիրտ ընթա-  
ցից դէմ կեդրոնական կառավարութեան առջեւ՝ պա-  
հանջել որ Չէյթուէնէն 30 ժամ հեռաւորութեամբ տեղ  
մը փոխադրուին անոնք ու հաստատուն բնակարաններու  
մէջ զետեղուին :

Այս գործին համար ընտրուեցան Մեսրոպ վարդա-  
պետն ու Տ. Մովսէս քահանան , որոնք Պոլիս երթալով  
1859ին՝ յաջողեցան իրենց խնդիր ընդունել տալու Սուլ-  
թան Մէճիտ կայսեր , որ զանոնք տեղաւորեց Չ ու ը-  
ք ու ը-0 վա կոչուած տեղը՝ Չէյթուէնէն 3 օր հեռաւորու-  
թեամբ : Սակայն տեղւոյն կլիմային սաստիկ տաքութեան  
չի կրնալով դիմանալ անոնք , շատեր ջարդուեցան .

Թեճիրլընոց այս կռուոյն ժամանակ Պալեան Հաճի  
Հալւոր ազան ոչ միայն քաջալեր ու խրախոյս հանդի-  
սացաւ իւր ազգու խօսքերով , այլ և նիւթական մեծա-  
մեծ գործողութիւններ արաւ աղքատ պատերազմիկնե-  
րուն տալով յօժարակամ ինչ որ պէտք ունէին՝ հաց ,  
զէնք , ռազմամթերք եւ այլն գրեթէ ամբողջ շարունակ :

ԻՒ .

Տ - ՕՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Թէեւ իրենց քաջագործութիւններով մեծ անուն կը  
ստանային Չէյթուէնցիք , ցաւալի բան էր սակայն , որ  
կրթական գործին համար իրենց ունեցած անհողութեամբ  
ժամանակին պահանջած անհրաժեշտ դաստիարակու-  
թենէն ու լուսաւորութենէն անմասն կը մնային :

Այս պէտքը մասամբ լրացնելու աշխատեցաւ Գառնեցի Տ. Օհաննէս վարդապետը, որ 1848ին Չէյթուէն գալով՝ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ մօտը դպրոց մը շինել տուաւ ու սկսաւ ինքը դասախօսել, օգնութեամբ տեղացի Տ. Ղազար քահանայի, և առաջին անգամն ըլլալով՝ ուսուցանել Չէյթուէնցի մանկանց հայերէն հին և նոր լեզուները, որոնք բոլորովին անծանօթ էին այնտեղ. նոյն իսկ վարժարանը ինչ բան ըլլալը չը գիտէին. հետեւաբար և այս արժանաւոր եկեղեցականը դարձաւ հիմնադիր մեր կրթական գործին. այնուհետեւ դպրոցներն անընդհարար պահեցին իրենց գոյութիւնը Չէյթուէնի մէջ թէեւ արտաքին ձեռնաուղծեամբ ու ազդեցութեամբ:

Օհաննէս վարդապետի ձեռնարկութենէն ութ տարի վերջ 1856 թուականին Կ. Պոլսէն եկաւ Սաչատուր պատուելի Իւթիւճեանը<sup>(\*)</sup>, և առաջնորդ Տ. Յովհաննէս եպիսկոպոսի ու Պալճեան Մ. Հալւոր աղայի աջակցութեամբ և չորս իշխանաց հաճութեամբ, ձեռք զարկաւ վարժարանի մը շինութեան՝ քաղաքին դիմացը գանձուած մեծ ալտի մը վրայ, որ կը պատկանէր Պալճեանի և որ յիշեալ Հալւոր աղան նուիրեց վարժարանին: Հիմնարկութիւնը եղած ատեն եպիսկոպոսին հրաւիրմամբ բոլոր ժողովուրդը խուռն բաղմութեամբ դիմեց նոյն արտը, Վարդավառի երկուշարթի օրը, յորում հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց առաջնորդ սրբազանը, եւ յետ աւարտման՝ Իւթիւճեան պատուելին ազդու բանախօսութեամբ ուսման և կրթութեան կարեւորութիւնը ըզգացնելով հանդերձ, ի սէր և ի միութիւն յորդորեց ժողովուրդը: Իմիջի այլոց ըսաւ նաեւ, «Դուք, ո՛ր Չէյթուէնցիք, որ ազատ էք և ազատութեան համար կը

(\*) Ողբացեալը զրկուած էր Աղաթօն Մկրտիչ էֆ.ի կողմէն:

կռուիք, գերութեան նշաններ կը կրէք ձեր վրայ. ձեր երիտասարդաց և պատանեաց ականջներէն կախուած գինդերն դարաւոր գերութեան մը յայտարար նշաններն են. մէկդի նետեցէ՛ք ատոնք, վասն զի գերի չէք դուք»։ Ներկայ գտնուող բոլոր երիտասարդք ու պատանիք զգածուած այս խօսքերէն՝ իսկոյն հանեցին գինդերը իրենց ականջներէն՝ այլ ևւս չը գործածելու հաստատ մտադրութեամբ։

Ափսոս, որ այս ազնիւ անձնաւորութիւնը դեռ ևս չը հասած իւր ցանկալի նպատակին՝ վաղահաս մահը շուտ խլեց զայն մենէ, շէնքը՝ կատարելապէս աւարտ չի հասած, որուն համար Պալճեան իւր քսակէն շատ ծախք արաւ և որ այժմ փլատակ մը դառնալով՝ հողի ու քարի կոյտ մը միայն մնացած է։

Պատուելին գերեզմանը կը գտնուի Զէյթունի Ս. Յոսիաննէս եկեղեցւոյն գաւիթը։

Հինգ տարի վերջ — 1861ին՝ Մաշկերացի Շարօեան(\*) Սարգիս պատուելին եկաւ Զէյթուն դասատուութեան, բայց նա ալ երկար չի կրնալով ապրիլ՝ երեք տարի վերջը մեռաւ։

1863 թուականին դասատու կարգուեցաւ բնիկ Զէյթունցի Յարութիւն էֆ. Չաքըրեան, որ իւր ուսմունք առած էր Կ. Պոլիս, Ղալաթիոյ դպրոցին մէջ։ Այս ատենն էր, որ Քահիրէ բնակող Արաբկերցի Պօղոս էֆ. կարասկեան ազգասէր անձը Զէյթունի դպրոցներուն նուիրեց 400 ոսկի՝ դպրոցական ուրիշ ամեն պէտքերով հանգերձ։ Միեւնոյն ատեն Ալէքսանդրաբակ Զմիւռնացի Թագւոր բաշա Յակոբեան ալ 200 ոսկի նուիրեց նոյն նպատակաւ, իւր կողմէն դասատու ըրկելով Պ. կարասկեան Տէր Մինասեան (հանգ. Վահան վարդապետ)։ Այս

(\*) Այս ալ Աղաթոն Մկրտիչ էֆ.ին ըրկած էր։

հաւիրատուութիւններն կարեւոր զարկ մը տուին Ձէյթունի կրթական գործին :

1880 թուականին ալ Հայոց Միացեալ ընկերութիւնը, ինչպէս շատ տեղեր, Ձէյթունի մէջ ալ վարժարան մը բացաւ իւր կողմէ անօրէն-դասատու կարգելով յաջողաբար Բարսեղ Վարդուկեան, Պոյաճեան, Ալլահ-վէրտեան, Պոյաճեան Բ.րդ անգամ, Սմբատ Բիւրատ Տէր Ղազարեան էֆէնտիները, ի վերջոյ Աւետիք էֆ. Կէսիսանեան որ 1895ի պատերազմին մէջ արիարար կռուելով հաստակուեցաւ և վարժարանն ալ փակուեցաւ՝ 16 տարի անընդմիջապէս շարունակուելէ յետոյ : Սակայն երկու տարի վերջը վարժարանը վերաբացուեցաւ Պատրիարքարանի կողմէ և այժմ դասատուութիւնը կը շարունակուի նոյն վարժարանի հին շրջանաւարտներէն երկուքին ղեկավարութեամբ :

Գառնեցի Տ. Օհաննէս վարդապետը իբրև դասատու վարժարանին մէջ անձնուիրաբար աշխատելէ զատ, իբրև տիպար ճշմարիտ ու պարտաճանաչ եկեղեցական-նութեան՝ տաճարին մէջ ու անկէ դուրս ալ անդադար խօսած իւր հոգեշունչ խրատներով բոլոր ժողովրդոց, մանաւանդ չորս իշխանաց մէջ եղած միութիւնը և համերաշխութիւն աւելի ևս ամրապնդեց : Սորա խորհրդով Պոլիս դրկուեցան չորս երեւելի հայեր հին հրովարտակը նորոգել տալու սուլթան Մէճիտի ևս : Այս անձիքն էին՝ Մ. Յովհաննէս Եօլբօեան ու Նազարէթ Սուրէնեան իշխանք և Մ. Հալւոր Պայճեան ու Մ. Յակոբ Չազրրեան, հարուստ դասակարգէ, որոնք յաջողեցան ի գլուխ հանելիրենց յանձնուած պաշտօնը Մատթէոս Պատրիարքի և վառօդապետ Տատեան Պողոս պէյի միջնորդութեանց շնորհիւ :

ԻՔ.

Ի ՈՒՐՇԻՏ ԲԱՇԱ

Թեճիրլիցւոց գործին համար 1859 թուականին Պոլիս գնացող Մեսրովալ վարդապետը և Տ. Մովսէս քահանան նոյնպէս աշխատեցան այս հրովարտակը կրկին նորոգել տալու սուլթան Մէճիտէն, բայց չյաջողեցան. ընդհակառակն կառավարութիւնը ջանաց, որ զօրաւոր հարուած մը տալով Չէյթուէնի սարսափի ազդեցութեան տակ աւելցնէ անոնց 24,000 դահեկանի որոշեալ տուրքը և ի վաղուց անտի հաստատեալ դրութիւնը վերցրնէ անկէ: Ասոր համար Մարաշի կառավարիչ Սուրչիտ բաշան 1860 յունիս 8 ին 12,000 կանոնաւոր ու բազմաթիւ անկանոն զօրքով եկաւ Ջահան գետին և զերքը բանակեցաւ և թուրքաց միւս մասանց մէջ հաստատուած եղանակաւը տուրք պահանջեց Չէյթուէնէն, 12 տարուանը մէկէն:

Չէյթուէնցիք երեք սուլթաններէ հաստատուած հրովարտակին պատճէնը ցոյց տալով անոր՝ ըսին թէ մենք 30,000 դահեկանէ աւելի տուրք չենք ճանչնար, անոր ալ կէսը մեր եկեղեցիներուն կը պատկանի: Բաշան հրովարտակին կարեւորութիւն չտալով ըսաւ. «Պէն ֆէրման թանրմամ, — ես հրովարտակ չեմ ճանչնար»: Այն ատեն Ծովրօեան Հազօր (Ղազար) աղան պատասխանեց. «Եթէ դուք այդ հրովարտակը չէք յարգեր, մենք կը յարգենք և անով մեզի տրուած առանձնաշնորհման պահպանութեանը համար պատրաստ ենք յօժարակամ մեր արիւնը տալու»: Մի և նոյնը հաստատեցին միւս իշխանք ալ և պատգամաւոր եկող Մարաշցի Թօփլամ-օղլուի Ալի էֆէնտիի ձեռքով իրենց գրաւոր պատասխա-

հը հաղորդեցին բաշային իրենց սիրած ոտանաւորի հակիրճ ոճովը :

Շօվրօղլու տա տէտի սէօյլէմէմ գըսա փուսա ,  
Եարտըմճըմըղ վար տըր հաղրէթի Իսա ,  
Պասպամ վասիյէթի պու ալթմըչ քիսէ ,  
Վէրիպ սանա գարչը տուրուր Զէյթուէնլու :  
Թարգմ . Շօվրեանն ալ ըսաւ կարճ կը կապեմ ես .  
Տէր Յիսուս Քրիստոսը օգնական է մեզ .  
Վաթսուն քնակ կտակ եղած է հօրմէս .  
Կուտայ քեզի , դէմ կը կենայ Զէյթուէնցին :

Փաշան սաստիկ կատլեցաւ , երբ որ այս խրոխտ լեզուով գրուած պատասխանը կարդաց , ու մեծ սպառնալիքներով նոյն Ալի էֆէնտին , որ թիւ ֆէն կը լիւս աշի էր , միւս անգամ զրկեց զրամը պահանջելու : Մերայինք պատասխանեցին՝ « Մատէմ քէնտիսի իւչ փատիշա՛ւարըն ֆէրմանընր թանըմայօր՝ պիղ տէ քէնտիսինի թանըմայըղ . — քանի որ ինք երեք թագաւորաց հրովարտակը չի ճանչնալ , մենք ալ զինքը չենք ճանչնար » :

Այս միջոցին Պոլիս գանուող երկու եկեղեցականներէն նամակ մը հասաւ զէյթուէնցւոց , որով հրովարտակի մասին իրենց ձեռնարկի անյջողութիւնը ծանուցանելով եւ այս առթիւ մղուելիք պատերազմն ակնարկելով կ'ըսէին՝ « մի՛ վախէք , Նլըպըցէ՛ք ուր բամպօկն իլլէ — մի՛ վախնաք , զարկէ՛ք որ բամբակն ելլէ » :

Նամակի այս խրախուսիչ լեզուն եռապատկեց իրենց եռանդն ու ոգեւորութիւն , եւ առիւծի նման մը ունչալով անցան Զահան գետը , կատաղաբար յարձակեցան Սուրչիտի վրայ , որ շփոթած ուղեց փախչիլ , բայց ճամբան ալ կտրուած ըլլալով՝ նեղը մնաց ու աղաչեց , որ կրակը դադրեցնելով՝ թոյլտուութիւն անեն իրենց Մարաշ գառնալու Ախրատաղէն :



Մեր իշխանք վեհանձնարար շնորհեցին խնդրուած  
Թոյլտուութիւնը եւ Խուրչիտի այնքան մեծադժոժ աղ-  
մուկով սկսած պատերազմը ջուրի պղպջակի մը նման  
ցնդեցաւ առանց հետք մը թողելու :

Ահաւասիկ Խուրչիտի բաժինն ալ .

Խուրչիտ բաշա տէտի՝ եազըզլար պանա ,  
Ախրրտաղնա ասքէր էմրինիզլէ տէօնէ ,  
Չօգ դուրպան ատատրմ էվէլքի կիւնէ ,  
Գօչ գօյուն ավազլը Խուրչիտ բաշա պու :

Թարգմ. Խուրչիտ բաշան ըսաւ . «ինձ հազար աւաղ ,  
Թոյլ տուէ՛ք զօրքերուս դառնալ Ախրրտաղ ,  
Առջի օրը խոստացեր եմ շատ մատաղ ,  
Խոյի ձայնով Խուրչիտ բաշան է սհա :»

ԻՒ,

## ԼԵԻՈՆ ԻՐԲԵԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՔԱՐՈՉԻՉ

### ԱՉԻՉ ԲԱՇԱ

Անցան մի քանի տարիներ՝ գրեթէ խաղաղ ու հան-  
դարտ , մինչ 1861 ին ձմեռը Հաճընէն Չէյթուն եկաւ  
Լեւոն անուն մէկը , որ ինքզինքը իշխան կ'անուանէր ,  
ու չորս ամսոյ շափ մնալով այնտեղ՝ հանրագրութիւն  
մը պատրաստեց նոյն ժամանակի Փրանսայի վեհապետ  
Նարօլէօն Գ. կայսեր ներկայացնելու համար : Հանրա-  
գրոյն իմաստը այն էր թէ՛

«Մենք— Տօրոս լերանց մէջ բնակող հայերս՝ 70.000  
դէնք բռնելու կարող մարդ ունինք , կը փափաղինք որ  
մենք մեզ կառավարելու առանձնաշնորհումն ունենանք ,  
ասոր համար կ'աղաչենք Ձեր կայսերական վեհափա-  
ռութիւնը , որ հաճիք միջնորդել թիւրքիոյ կայսեր մօտ ,

որ մեր ցանկացած ազատութիւնը շնորհելով մեզ՝ հայ  
իշխան մը նշանակէ մեր վրայ իբրև կառավարիչ» :

Փարիզ գնալով Լեւոն ներկայացուց սոյն հանրա-  
գիրը Նարոլէօնի՝ որ կարեւորութիւն տալով անոր՝ այս  
իմաստով հրահանգ եւս դրկեց Պոլսոյ Քրանսական դես-  
պանին, սա ալ իւր կարգին դիմեց մեծ Եպարքոս Ալի  
բաշային, որ այսպիսի անակնկալ միջնորդութեան մը  
հանդէպ շուարած՝ վեց ամիս պայմանաժամ խնդրեց  
հարկ եղած քննութեան ձեռնարկելու համար. ապա  
փութաց ծպտեալ պաշտօնեաներ նշանակելու, որոնք,  
գալով նախ Հաճըն, ապա Մարաշ, Ջէյթուէն, ամեն բան  
աչքէ անցուցին, բայց նախայիշատակեալ 70,000 զին-  
եալ մարդիկը ոչ ուրեք տեսնուեցան : Ջէյթուէն ունէր  
1000 տոբն, Մարաշ 3000, Հաճին 5000 տուն՝ որոնք  
անկարող էին այդչափ թուով զինավարժ մարդ հանել,  
ուստի այս իմաստով տեղեկագրեցին Ալի Բաշային,  
բայց Ջէյթուէնի մասին կարեւոր ակնարկութիւններ կե-  
նալուն՝ խորամանկ եպարքոսը միտքը դրաւ մէջտեղէն  
վերցնել այս փոքրաթիւ, բայց անհանդարտ տարրը, եւ  
յատուկ այս նպատակաւ իբրև կառավարիչ Մարաշ դր-  
կեց Աղիզ բաշան, որ երիտասարդ դպրոցաւարտ մ'էր  
եւ հրահանգ ունէր Ալի բաշայէն ո՛ր եւ է պատրուակաւ  
Ջէյթուէն մտնելով կարճ ժամանակի մը մէջ բնաջինջ ա-  
նել զբնակիչսն : Այս առիթն ալ շուտ ներկայացաւ քէթ-  
մանցի երկու թուրքերու մէջ տեղի ունեցած առեւան-  
գութեան խնդրոյ մը պատճառաւ : Առեւանդող Իսլրա-  
հիմը պարտէղին մէջ սալոր հաւաքած ատեն իւր հակա-  
ռակորդ Իսլիշի կողմանէ սպաննուեցաւ. այս դէպքն  
իմանալուն, անոր ազգականները երբ որ եկան դիակը  
վերցընելու, Իսլիշ ընդիմացաւ անոնց, սպառնալով որ  
գիրենք ալ կը մեռցնէ, վասն զի անթաղ պահելով  
զայն՝ կ'ուզէր գազանակեր ընել տալ զայն : Անոնք ալ

ճարտաստեալ դրակից Պէշէն գիւղ դիմեցին, եւ անոնց-  
մէ օգուտ չը տեսնելով Արեգին գիւղի Կարապետ քե-  
հեանային դիմեցին, որպէս զի այս գործին միջամտելով  
ազատէ դիակը այդպիսի անպատուութեան մը ենթար-  
կուելէ:

Այն միջոցին Ենի-տիւնեա Աստուածատուք իշխանի  
եղբայր Փանոս բաշան, որ չիլ բ ա շ ա եւս կը կոչուէր,  
Կարապետ քեհեայի մօտ դանուելով՝ կը հաւանի եղած  
առաջարկին եւ կը յորդորէ Կարապետ քեհեան օգնել  
Իպրահիմեանց՝ որպէս բարի դրակից: Նա ալ իւր փեսան՝  
Վարդանեան Յակոբ քեհեան եւ ուրիշ տասն անձինք  
հետն առած գնաց Իպիշի մօտ եւ առաջարկեց, որ թոյլ  
տայ դիակը վերցնելու, բայց անի դարձեալ յամառե-  
ցաւ, եւ երբ այս կողմէն յարձակում եղաւ իւր վրայ՝  
չարագործ Իպիշը գնդակն արձակելով Յակոբ քեհեան  
ալ սպաննեց ու փախաւ:

յն ատեն երկու դիակներն ալ վերցնելով՝ Յակոբ  
քեհեան Փրկչի վանքը եւ Իպրահիմը իւր յատկացեալ տեղը  
թաղեցին: Յետոյ Կարապետ քեհեան Արեգինէն 70 հայ  
զինեալներու գլուխն անցած՝ գիշերով գնաց Քեթման  
գիւղը, ուր ապաստանած էր Իպիշ, ու ՂԱ թուրք սպան-  
նեց, բայց չկրցաւ դժբաղդաբար ձեռք անցնել չարա-  
գործ Իպիշը: Մարաշցի թուրք խաղախորդ մը՝ Կիւլ Ալի  
կոչուած՝ հոն կը գանուէր, իւր ազգակցաց պատահած  
այս անցքէն յուզուելով՝ ՂԱ սպանելոց արիւնաթաթաւ  
չապիկներն ի ձեռին գնաց բողոքեց բաշային քեթմանց-  
ւոց կողմանէ:

Սոյն պատահարը պատուական առիթ մ'էր Ազիզ  
բաշային՝ իւր ծրագիրը առաջ տանելու համար: Ուստի  
փութաց Չէյթունի չորս իշխանաց ուղղեալ պաշտօնաւ-  
որով մը պահանջելու այն 70 անձինքը՝ որպէս զի ըստ  
օրինի պատժուին իրենց գործած ոճրին համար: Նամա-

կարեր քիւրտը եկաւ Փրկչի վանքը ու պաշտօնագիրը յանձնելով վանահայր Մամբրէ վարդապետին՝ պատասխան պահանջեց : Վանահայրը իրեն կանչելով չորս իշխանները՝ նամակը տուաւ անոնց , որոնք թուրքի մը կարգալ տալով իմացան եղելութիւնը , մինդեռ անկէ առաջ բան մը չը գիտէին այս պատահած անցքերու մասին . նոյն իսկ Յակոբ քեհեայի մահը չէին լսած : Այսու հանդերձ եղածը եղած էր , պէտք էր պատասխան մը տալ փաշային , ուստի նոյն թուրքին գրել տուին թէ՛ « Այս ամեն չարեաց պատճառը Իսկիչն է , որ ազատօրէն կը քալէ . պէտք է դանի ձերբակալելով պատժէք , այնուհետեւ ալ մենք այն 70 անձինքը կը պատժենք այստեղ » :

Նամակը յանձնեցին քիւրտին , երբ փաշան առնելով զայն կարդաց՝ սաստիկ բորբոքեցաւ եւ երկրորդ նամակաւ մը կրակ ու բոց թափելով զէյթունցւոց գլխուն՝ խստիւ կը պահանջէր յանցաւորները , հակառակ պարագային՝ սպառանալով Չէյթունը բնաջինջ կործանել : Իշխանք առանց խռովելու այս խոշոր խօսքերէն միւս անգամ պատասխանեցին .

« Բաշա էֆէտի , ձեր դրութիւններէն բացայայտ կ'երեւայ , թէ մտադրած էք անպատճառ մեր հետ դարնուելու . հրամանեցէ՛ք , պատրաստ ենք ձեզի դէմ . մենք ոչ թէ 70 հայ՝ 70 հաւ ալ չենք զրկեր ձեզ . այսպէս դիպցած ըլլաք . կ է լ է ճ է յ ի ն վ ա ր ի ս է՝ կ է օ ը է ճ է յ ի ն տ է վ ա ր . գալը կայ , տեսնալն ալ կալ (եթէ դաս՝ կը տեսնես) : Եթէ դուք ձեր թագաւորին ապաւինած էք՝ մենք ալ մեր Աստուծոյն ապաւինած ենք » :

Ազիզ բաշան մոլեռանդութեան բոլոր թափուլը ողբերուած՝ շուկաները , փողոցները մուսնետիկ կանչել տուաւ , որ զէնք բռնելու կարող ամեն իսլամ կամաւոր գրուի այն բանակին , որ պէտք է որչա-

էք Չէյթուն : Եւ ահա քաշաքէն ու շրջականերէն դուռն  
դադուող եկան խառնուեցան ահագին բազմութեամբ  
խաժամուժ ամբոխի մը ամեն կարգի ներկայացուցիչնե-  
րը՝ իրենց յատուկ տարազներով, պէյեր, շէյխեր, մօլ-  
լաներ, էսնաֆներ, գեղջուկներ ևլն : Ասոնց մէջ կարե-  
ւոր տեղ մը կը բռնէին շէրքէզները, որոնց խոստացած  
էր Ազիզ բաշա Չէյթունի մէջ բնակեցնել դիրենք, եթէ  
յաջողի նուաճել դայն :

12000է բազկացեալ սոյն խուժամուժին գլուխն ան-  
ցած Ազիզ փաշան եկաւ Ջահան գետին եզերքը բանա-  
կեցաւ 1862 յունիսի վերջերը : Մեղմէ 500ի չափ ան-  
ձինք Ենի-տիւնեա Աստուածատուր և Ծօլբօեան Հազօր  
աղաներու առաջնորդութեամբ գնացին անոնց բանակին  
առջեւը դաշտանման վայր մը, որ Չ ա ք ը ր-տ է ր է յ ի-  
Ք է փ ի ր կը կոչուի, ու այնտեղ դիրք բռնեցին թշնամ-  
ւոյն անցքն արգիլելու համար : Այս դիրքը անյարմար  
ըլլալով մըւս իշխանք ընդդիմացան անոնց ծրագրին,  
բայց անօգուտ, վասն զի անոնք սխալեցին իրենց սրտչ-  
ման վրայ : Թշնամիք գիշերայն Ղամզա կոչուած տե-  
ղէն գաղտագողի անցնելով գետը՝ ամենայն զօրութեամբ  
յարձակեցան մերայնոց վրայ, որոնք մեծ յաջողու-  
թեամբ ու ոգնւորութեամբ կռուեցան թէեւ, սակայն  
տեղւոյն անյարմարութեան և իրենց թուոյն անհամե-  
մատ սակաւութեան պատճառաւ նահանջեցին ու խոյս  
տուին մինչեւ Չէյթուն, կուռոյն վայրը թողլով 72 հայ  
մարտիրոսներու դիակը, որոց վրայ մինչեւ այժմ կ'ող-  
բայ ժողովուրդը : Այստեղ ինկան 7 տեւ նախայիշատակ-  
եալ երկու թուրք անձնուէր նահատակները (տես «Նա-  
խագիտելիք»ի վերջը) : Այս անձնական կարեւոր կո-  
րուստներնեքէ զատ նիւթական մեծ մլասներ ալ եղան,  
վասն զի այն օրը այրեցին թուրքերը ամբողջ Արեգին  
գիւղը, իսկ Չէյթունի վրայ եղած արշաւանաց ատենն

ալ աշիրէթներն այրեցին Աւագ-Կալ գիւղը (\*): Թշնամու-  
ւոյն կորուսան էր 200 հոգի, բայց յաղթութիւնը իրենց  
կողմն ըլլալով ամենամեծ ուրախութեամբ նոյն օրն իսկ  
յառաջացան մինչև Աերմուկի դաշտը, որ Ձէյթունէ մէկ-  
ուկէս ժամ միայն հեռաւորութիւն ունի, իսկ մերայինք  
դիրք բռնեցին Սաղիր կոչուած տեղը Թշնամուոյն բա-  
նակին դէմ՝ կէս ժամ հեռու անկէ:

Կացութիւնը ծանր էր և վտանգը մեծ, որոյ նմանն  
անցելոյն մէջ չէր պատահած: Բայց Ձէյթունցին յու-  
սանատիւ չը գիտէ բնաւ: Ամբողջ Ձէյթուն ոտք ելաւ,  
նոյն իսկ ձերերն ու պատանիները և դէնք բռնելու կա-  
րող կիները: Չորս իշխանք ի խորհուրդ գումարեցին  
վանքին մէջ և լուրջ դիտողութիւններ փոխանակելէ  
յետոյ իրենց զինւորական կարգադրութիւններն արին:  
Ամբողջ պատերազմողներու թիւն էր հինգ հազար, ո-  
րոնք մասերու բաժնելով՝ ամեն մէկուն տեղն ու պաշ-  
տօնը նշանակեցին՝ խիստ կարգապահութիւն պատուի-  
րելով: Յիշատակաց արժանի է այն որոշումը, որով դե-  
ռահաս կանայք և օրիորդ ինքզինքնին Շուղուր գետը  
պիտի նետէին լպիրշ թուրքերու անարգ կրից չմասնե-  
լու համար, երբ պատերազմին բազդը ձախօրդ երթար:  
Այս պատճառաւ անոնք ամենն ալ հաւաքուեցան Եա-  
ղուպեան թաղի մէջ բարձր կամուրջի տուները:

---

(\*) Այն օրն իսկ Ս. Փրկչի վանքը խուժելով հոն  
գանուող Չմշկածագցի Մամբրէ վարդապետը և Արե-  
գինցի Կարապետ անուն երիտասարդը սպաննեցին և  
չուն մը մ'ալ գարնելով վարդապետին քովը երկնցուցին՝  
բերանը անոր բերնին մօտ դնելով: Այդ վարդապետը  
մնացեր էր վանքը ուշք չը դարձնելով Մնացական Սէ-  
մէրճեանցի խորհուրդին և նախազգուշութեան, որ (Սէ-  
մէրճեան) զօրքին գալէն մի ժամ առաջ Ձէյթուն փախ-  
ցուց վանքէն այնտեղի բոլոր սրբազան անօթները:

Պատերազմը չսկսած՝ բաշային կողմանէ պատգամաւոր եկան կեալուր-տաղիի և Պուլանըզի տէրէպէյի Ֆէդդա՝ օղլի Ագչէ պէյ և մարաշցի դաթըրճիպաշի Ղարաճա անուն հայր, որոնք յայտարարեցին թէ՛ «վաղը յարձակման պիտի սկսուի, սակայն բաշան խղճալով ժողովրդեան վրայ կը փափագի, որ գործը խաղաղութեամբ վերջանայ, ուստի կը պահանջէ որ կարապետ քեհեան և Վարդանեան Չափարը իրեն յանձնէք, այս չափով գո՛ւ մնալով պիտի ձգէ երթայ» :

Իշխանք պատասխանեցին. «Մենք մեր նախկին որոշման վրայ հաստատ կեցած ենք, հաւ մըն ալ չենք յանձներ բաշային» : Այս պատգամաւորութիւնը կըրկնուելէ յետոյ երկրորդ անգամին բաւական զիջում անելով՝ բաշային ներկայացուցիչները ըսին՝ «Եթէ պահանջուած մարդիկը յանձնելը հաճելի չէ ձեզ, գէթ երկու ուրիշ աննշան անձնաւորութիւն անոնց փոխարէն կըրնաք զրկել, որպէս թէ բաշային ուզած մարդիկն են. ասով չարիքը մէջտեղէն կը վերնայ» : — «Անկարելի է այդպիսի նենգութեամբ երկու անմեղներ զոհել նոյնպէս», պատասխանեցին իշխանք. — «Եւ սակայն, յարեցին պատգամաւորները, բաղժութիւնը խիստ մեծ է և հետըզհետէ աւելնալու վրայ. բաշային հրամանին տակ գտնուած 40,000 կամաւորներէն(\*) զատ 12,000 ալ 12 պէյերու հրամանին տակ կը գտնուին. այսչափ ահագին բաղժութեան չէք կարող դիմադրել» :

Այն ատեն Եօվրոյեան Հազօր իշխանը լի ցասմամբ և խորին արհամարհանօք գոռաց. «Ձեր այդ 12 պէյերն ալ, անոնց ընկերացող Օսման պէյն ալ, հրամանատար Ազիզ բաշան ալ ձանձերու չափ արժէք չունին մեր աչքին» :

(\*) Մարաշ այն ժամանակ կանոնաւոր զօրք չկար : Այդ 40,000 կամաւորներու հետ կային միայն 50 զինուոր, այն ալ թնդանօթաձիգ :

ինչ որ կրնան թո՛ղ անեն անյապաղ . գնա, այսպէս բա-  
րեւ խօսէ . մենք շատ պէյեր ու բաշաներ խայտառակա-  
բար փախուցած ենք , Աստուծով ասոնք ալ իրենց փառ-  
քին կը հասցընենք , մենք ամենափոքր զիջում մ'իսկ  
չենք աներ , ընդհակառակն՝ կ'ուզենք , որ յարձակուժը  
տեղի ունենայ , որպէս զի մենք ալ պատեհութիւն ու-  
նենանք այն սպաննուած 72 անձանց և վանքին մէջ  
բարբարոս փաշային խժժարար սպաննել տուած վար-  
դապետին ու իւր ընկերոջը վրէժը լուծելու» :

Բանակցութիւնը դեռ լրացած չէր՝ երբ Չէյթուենի  
մօտէն դիւղացի թուրք մը , Թօուուէն-օղլու Ահմէտ անուէն ,  
հեւ ի հեւ եկաւ իշխանաց լու : տալու , թէ Պայազիտ-  
օղլու Ահմէտ բաշան 5000 դօրքով կուգայ և արդէն  
Աւազ կէտիկի կիրճը մտած է . ես կերպով մը համոզե-  
ցի զինքը , ըսաւ , որ այնտեղ սպասէ քիչ մը , և ահա՛  
ձեզ կ'իմացնեմ , վտանդի ես վայելած եմ ձեր բարիքը» :

Ասի այն Ահմէտ բաշան էր , որ Չէյթուէնցւոյ պաշա-  
տանութեամբ Մարաշի կառավարիչ եղած էր և այժմ  
ալ ապերախտութեամբ անոնց դէմ կուուելու կուգար :  
Ուստի ամենէն առաջ այս անպիտանին լաւ դաս մը  
տալու համար պատգամաւորները այնտեղ արգիլեցին ու  
500 սպառազէն հայեր զատելով զրկեցին անոր դէմ :  
Ասոնք երթալով իրիկուան մօտ յարձակեցան թուրքե-  
քերուէն վրայ՝ երբ անոնք կերակուր ուտելու զբաղած  
էին , և բաւական մարդիկ կոտորելով 15 հոգի ալ գերի  
բռնած՝ կէս գիշերին վերադարձան յազմական եր-  
գել : երգելով :

Մինչդեռ հայք ոգեւորուած յաջորդ օրուան մեծ  
պատերազմին կը պատրաստուէին(\*) , Ահմէտ բաշայի փա-

---

(\*) Իշխանք կարգադրեցին այսպէս . Եաղուպեան  
իշխան 1,500 Չէյթուէնցիներով պէտք է կանգնէր Աւազ-



Խատական գուճուքը խուճապով հասնելով մեծ բանակը՝  
իւր երկիւղի սարսուռը կը ծաւալէր բոլոր զօրաց վրայ :  
Քրեթէ միեւնոյն երկիւղի ազդեցութեան տակ վհատե-  
ցուցիչ լեղուաւ խօսեցան պատգամաւորներն ալ, որոնք  
այլ եւս արտօնուած ըլլալով վերադառնալու՝ հազոր-  
դեցին սպայակոյտին հայոց տուած պատասխանը :

Այն գիշերը քահանայք հսկում կատարեցին Ս.  
Աստուածածնի վանքը, որուն ներկայ գտնուեցան բո-  
լոր զէյթուէցիք (\*) եւ շատեր հազորդուելով Քրիստոսի  
Ս. մարմնոյ եւ արեան՝ հոգեւորապէս ալ սպառագին-  
ւեցան : Այնուհետեւ եկեղեցականաց ու իշխանաց կող-  
մանէ համառօտ բանախօսութիւններ ըլլալով ժողովրդ-  
դեան ունեցած խանդն աւելի եւս արծարծեցաւ, այն-  
պէս որ անհամբեր կը սպասէին պատերազմի սկզբնա-  
ւորութեան ժամուն : Արտասանուած բանախօսութեանց  
համառօտ բովանդակութիւնն այս էր թէ՛ « Քրիստոնեայ

կալ գիւլը բանակած զօրքին դէմ (12 պէյերու ս է կ-  
մ է ն ներու դէմ), Սուրէնեան եւ Շօլրօեան իշխանք  
պէտք է բանակէին Չէյթուէի դիմաց քայքայուած ճե-  
մարանի մէջ 1,500 հոգւով, եւ Ենի-տիւնիա իշխանն  
ալ 1,500 մարդով պէտք է դարան մտնէր Սաստուածած-  
նայ վանքի եւ Չէյթուէի մէջտեղը գտնուող ձորին մէջ .  
ատկէ զատ իշխաններու եղբարց հրամանատարութեան  
տակ դրուեցան 500 հոգի, որոնք պատուէր ստացան  
մօտ երկու ժամ կռուիլ թշնամոյն դէմ եւ ապա յաղ-  
թուած ձեւանալով փախուստ տալ դէպի Չէյթուէն և այդ-  
պիսով դարանակալներուն վրայ բերել թշնամին : Այդ բո-  
պէին, ըստ կարգադրութեան, Չէյթուէի մէջ կոչնակները  
պիտի հնչեցնէին՝ դարանակալներուն իմացտալու համար :

(\*) Մեր պատերազմիկները նոյն գիշերը քիչ մը ա-  
ռաջ վերադարձեր էին Սաղիբէն, այնտեղ թողլով քսան  
հոգի պահակներ, եւ այժմ կը գտնուէին վանքը :

ըլլալնուս համար է, որ այսչափ կը հալածուինք, ուս-  
տի անվախ պատերազմինք՝ հաւատարով թէ մեր կրօնի  
հիմնադիր երկնաւոր Վարդապետը մեզ պիտի պաշտպա-  
նէ. եթէ մեռնինք, նահատակաց ու մարտիրոսաց կար-  
գը պիտի դասուինք, եթէ մեռցնենք ու յաղթանակը  
չանինք, խաչը պիտի բարձրանայ եւ Ս. եկեղեցին փա-  
ռաւորուի մեզմով » :

1862, օգոստոս 2ին, երբ առաւօտ եղաւ, թուր-  
քաց գլխաւոր բանակը, 40,000 կամաւորներէ բաղկաց-  
եալ եւ 2 թնդանօթներով, Աղիզ բաշային հրամանա-  
տարութեամբ յառաջ խաղաց Սաղիրի գծով, եկաւ  
«Պիւ չախչիւնց մօտ» (Պու չախչիւնց բլուր) ըսուած տեղը  
կայնեցաւ. Աւագ-կալ գիւղի մօտ բանակած 12,000  
թիւրքմէն աշիրէթներն ալ Պայաղըտ-օղլու Սուլէյման  
բաշայի որդի Օսման պէյին հրամանատարութեամբ՝ 2էյ-  
թունի հարաւէն մէկուկէս ժամու հեռաւորութեամբ ծը-  
ռելով իրենց ճանապարհը՝ անցան 2էլթիքի դաշտէն ու  
Անի ձորէն եւ եկան մեծ բանակէն քառորդ ժամու հե-  
ռաւորութեամբ շարուեցան մեր ճեմարանի մարտկոցին  
դէմ : Այդ թիւրքմէն սէկմէններուն (պաշրպօզուկներուն)  
հեռանալէն ետքը, Եաղուպեան իշխան իւրայիններուն  
հետ՝ ակռանին կրճտելով ձեռնուենայն ետ դարձան եւ  
միացան ճեմարանի մէջ դառնուած 1,300 դէյթունցիներ-  
ուն, որով 3 000 հոգի եղան այդտեղ : (\*)

Մեր իշխանները պատուիրեցին մեզ հրացան շար-  
ձակել հեռուէն, խնայել մեր գնդակներուն, մինչեւ  
թշնամիք ախքան մօտենան, որ «վառօդն ալ գնդակին  
հետ փորերնին մտնայ» :

(\*) Չմոռնանք յիշելու, հետաքրքիր իրողութիւն  
մը նոյն ժամուն Մնացական Սէմէրճեան՝ Սաղմոսէն վի-  
ճակ մը բացաւ : Հետեւեալ համարն էր «սուրք նոցա  
մտցնն ի սիրտս, եւ աղեղունք նոցա փչրեցցին» այս

Թուրքերուն թնդանօթները սկսան քիչ մը հտք ու  
րոտալ, իսկ թիւրքմէններու կողմէն առաջին անգամ  
Ղարաքեհեա-օղլու Ղարաքեհեա նախամարտիկը ձիար-  
չաւ ըրաւ դէպի ճեմարանի մարտկոցը: Եաղուպեան  
թաղի Խըզխըրտեան մըխսը (մահտեսի) Վանէս յայտնի  
նշանառու հրոսակը խնդրեց իշխաններէն, որ իրեն  
թոյլ տան առաջին գնդակը նետել այդ յանդուգն  
թիւրքմէնի վրայ, և թոյլտուութիւնն առնելով առա-  
ջին հարուածով ձիուն վրայէն գետին տապալեց անօ-  
րէնը, որուն մէկ թուշէն մտեր՝ միւսէն ելեր էր գըն-  
դակը, թափելով բերնին ակռաները: Մինչեւ այժմ ալ  
այդ թիւրքմէնը կայ, Օսմանիա գիւղաքաղաքը Գեա-  
վուրտաղի մէջ կ'ապրի և թուշերուն վէրքերը ցոյց  
տալով կ'ըսէ, «Ձէյթուն եատիկեարը» (Ձէյթունի յիշա-  
տակն է):

Վիրաւորուած թիւրքմէնը գլորուած տեղէն կաղա-  
լով, սողալով փախաւ իր բանակատեղին: Ընկերները՝  
ադ տեսնելով սարսափաճար եղան և այլեւս մէկն ալ  
տեղէն չչարժեցաւ: Այդպիսով այդ կողմը կռիւր գրե-  
թէ դեռ չսկսած դադարեցաւ:

Մինչ այդ՝ միւս կողմը Պուշախցոնց բլուրէն սկսան  
դէպի Աստուածածնայ վանքը քալել գլխաւոր բանա-  
կին չորս դրօշակակիրները, անոնց հետեւէն ալ 200ի  
չափ շէյխեր ու տէրվիշներ ձեռքերնին տեսակ տեսակ  
գործիքներով, գոռգոռալով, անէծք թափելով Ձէյթուն-  
ցոց վրայ և օգնութիւն հայցելով Ալլահէն թուրքերու  
համար. «Հիւ, Ալլահ, հիւ, քիւֆֆարը հէլաք էյլէ,

---

վիճակը մեծ ուժ տուաւ ժողովրդեան արձագանք տա-  
լով իրարու, 3000 մարդու գոռում գոչումը մեր բանա-  
կին մէջ, թշնամիք լսելով այս անագին որոտընդոստ  
ձայնը, սարսափեցաւ, ճիշդ եւ ճիշդ, ըստ թրքաց ժամը  
ճին. Սաղմոսին ըսածին պէս իրագործուեցաւ. թշնամ-  
եաց սուրերը իրենց սրտերը մխուեցան:

Իսլամա գուլվէթ վէր. — Ով Աստուած, անհաւատ հայնոյիչը ջախջախէ, Իսլամին զօրութիւն տուր» :

Վանքին պաշտպանութիւնը յանձնուած էր 73 ամեայ հերոս Մարտիրոսեան մահտեսի Գրիգոր աղային (մըխար Գուգուր էղէն), որ իրեն հետ ունէր 7 հրոսակ և մի քանի 10—15 տարեկան դպրոցականներ ամէնքն ալ դինեալ :

Գրոշակակիրները մօտենալով վանքին դիմեցին աւոր մեծ դուռը, բայց զանազան անկիւններէն արձակուած գնդակները գետին փռեցին չորսին ալ դիակները : Այն ատեն թուրք բանակէն խուճը մը կռուողներ նետուեցան դէպի նոյն տեղը և սկսան կացիններով ջարդել դուռը, բայց ներսէն պարպուած հրացանները շատերուն սպաննելով սարսափ ազդեցին անոնց և ի փախուստ դարձուցին : Այդ թուրքերու ձեռքով սպաննուեցաւ վանքի միաբան Գալուստ վարդապետը, որ անխոհեմաբար այդ վտանգաւոր պահուն վանքին պարտէզն իջեր էր դդուճ ժողվելու, չուզելով պտուղը թողնել թշնամիին :

Այնուհետեւ թուրքերը վանքը հանգիստ թողին և մօտ հազար հոգի վանքի վերեւէն Ղաթ կամ Քարթօշքօր ըսուած տեղէն ուղեցին անցնել Ձէյթուն իջնալ : Սակայն այդտեղ անոնց կըսպասէին 500 կարիճ Ձէյթունցիներ, որոնց նախօրէն պատուիրած էին իշխանները քիչ մը կռուելէն վերջ յաղթուած ձեւանալով փախչիլ դէպ իրենց դարանակալ ընկերներու կողը : Անոնք տեսնելով թուրքեր սկսան կատաղի ուլ մը, թնդանօթները կորոտային անդադար և հրացանի գնդակները կարկուտի նման կը տեղային : Մերայինք 2 ժամի շափքաջ դիմադրութիւն ցոյց տալէն ետքը իբր պարտեալ ի փախուստ դարձան : Թուրքեր սկսան հալածել անոնք՝ դիմելով այն կողմ, ուր Ենի տիւնեա իշխանը դարան էր մտած իւրայիններով :

Գարամուտք սպասեցին մինչ մեր կտրիճներուն  
փախուստէն քաջալերուած թուրքերը խրոխտաբար ան-  
ցան արեւելեան ձորին կամուրջը եւ «Անբնայ քարտօկ»  
ին ( Անբանի քարտա՛լ ) մօտ չէր քէզներէն մէկը բռնեց  
պաշտէզներէն վերադարձող Մաւրըր անունով հայ կնոջ  
մը թեւէն : «Ձիս սպաննեցէք, ճշաց հայ կինը, չէր քէզ-  
ները զիս չի տանեն» : Իր վեհան, որ դարանամուտնե-  
րէն մէկն էր, քարի մը ետեւէն հրացանը պարպեց, եւ  
չէր քէզը վայր իյնալով գլորուեցաւ ձորը եւ Մաւրըրն  
փախաւ Չէյթուն : Այդ բազէին Չէյթունի մէջ սկսան  
զարնել կոչնակները (ընկուզի փաշտէ եւ պողպատէ շի-  
նուած) : Գարանամուտք դուրս ցատկեցին իրենց թա-  
գստեան տեղերէն եւ շրջապատեցին թուրք զօրագուն-  
դը : Այնպիսի ազմուկ մը բարձրացաւ, որ կարծէք եր-  
կինք երկիր գսուաց : Թնդանօթներուն որտար, հրացան-  
ներուն ձայնը, կռուողներուն սղաղակները, կոչնակ-  
ներուն դղրդիւնը, անասուններուն բառայր իրար խառ-  
նուեցան : Հայերը այնպիսի ճշդութեամբ կրակ կ'ընէին,  
որ հարուածներէն եւ ոչ մէն կը վրիպէ : Իւր նպատակէն,  
եւ թշնամիներուն գիտկանս զէզ ի դէզ կը կուտակուէ-  
ին ձորին մէջ, որ այնուհետեւ սկսաւ «Կոտորածի ձոր»

(Գրրգըն-տէրէսի) կոչուել :

Թշնամի զօրքին այդ զօրագունդին մեծամասնութիւ-  
նը եւ ամենէն աւելի եռանդով կռուողները չէր քէզներն  
ըլլալով ամենէն շատ կորուսան ալ անոնք տուին 756  
դիակ թողլով ճակատամարտին տեղը իրենց 9 պէյերուն  
հետ, որոնց անունները գրուած էին իրենց սուրերուն  
վրայ : Այդ ջարդը այնքան սաստիկ ազգեց մինչեւ այն  
ատեն Չէյթունի նկատմամբ անփորձ չէր քէզներուն վրայ,  
որ մինչ այժմ կ'ըսեն՝ «Մարաչ տուրաղան, Չէր քէզ վա-  
րաղան, Չէյթուն վուրաղան, աման աման, փեւի ք  
եաման» (Մարաչը կեցեր է, չէր քէզը կը յարձակի, զէյ-

Թունցին կը գարնէ, վա՛յ մեզ, վա՛յ մեզ, շատ ան-  
խիղճ են) :

Մինչդեռ արեւելեան ձորին մէջ մեր դարանակալք  
այսպէս դաս կուտային չէրքեզներուն, անդին 10 բոպէ  
հեռաւորութեամբ մեր քայանայից դասը մէկ ձեռքին  
մէջ դէնք, միւսին մէջ խաչ ու աւետարան՝ կը կարդար  
Սիմէոն կաթողիկոսի յիշատակաց երգը՝ «Արի, Աստու-  
ած հարցն մերոց, որ ա՛ղաւէնդ ես նեղելոց. հաս յօգ-  
նութիւն ծառայից քոց, լեր օգնական աղգիս հայոց»,  
եւ անոնք շրջապատող սպառազէն խումբը կ'աղաղակէր  
բարձրաձայն՝ «Կեցցէ հայ, կեցցէ քրիստոնէութիւն» :  
Այդտեղ կը գտնուէր մեր դրօշակակիրը՝ Աստուածածնայ  
վանքի տիրացու Մկրտիչ Զօփուռեանը (\*) որ ուսին  
յնած կը պահէր երկար ձողի մը ծայրը գամած Խ ա չ  
է լ է մ ը (խաչվառը) Ս. Աստուածածնայ հրաշագործ  
մեծ պատկերով : Անոր քովն ալ տէր Ղազար ուսեալ  
աւագ քահանան երկիւղածութեամբ կը կրէր Գող Վասի  
հռչակաւոր Աւետարանը իբրեւ տապանակ ուխտի :

Այստեղ երեւան եկաւ ճշմարիտ հայրենասիրութեան և  
անձնուիրութեան այն վսեմ ոգին յանձին Մարկոս աղա  
Թաշճեանի, որ հազուադէպ իրողութիւն մը չէ սակայն  
դէյթուցեաց համար : Սա մօտենալով աւագ քահանայ  
տէ : Ղազարի, որ կը նախագահէր բանակին մօտ հսկում  
կատարող եկեղեցական դասուն, յայտնեց անոր իւր  
խորհուրդը, որ յղացած էր շուտով վերջ տալու համար  
այս վտանգաւոր պատերազմին :

«Տէր հա՛յր, պիտի երթամ Թնդանօթածիզն սպան-  
նեմ», ըսաց նա հանդարտութեամբ : — « Անմի՛տ, աղա-  
ղակեց քահանան, մեռնելո՞ւ կ'երթաս » : — « Այո՛, պա-  
տասխանեց քաջասիրտ Մարկոսը. գիտեմ թէ պիտի մեռ-  
նիմ, բայց ուրիշները պիտի ապրեցնեմ » : — « Օրհնեալ

---

(\*) Յետոյ վարդապետ ձեռնադրուեցաւ Յովհաննէս  
անուամբ :

ըլլատ, որդեա՛կ, ըսաց քահանան յուզեալ սրտով. գը-  
 նա՛, Տէրը յաջողէ՛: Եւ իսկոյն անհետացաւ մեր վե-  
 հագի Մարկոսը. մերթ սողալով, մերթ քալելով՝ ամե-  
 նայն զգուշութեամբ մօտեցաւ թնդանօթածիգին, քա-  
 շեց հրացանի բլթակը եւ թաւալազլոր ձգեց մարդը  
 հրամանատար Ազիզ բաշայի ոտքերուն տակ. թշնամիի  
 գնդակ մ'ալ զինքը տապալեց, բայց նա արդէն հասած  
 էր իւր նպատակին:

Բաշան այս անակնկալ յանդգնութենէն եւ չէր քէզ-  
 ներուն պարտութենէն զարհուրելով վճռեց փախչիլ,  
 բայց սարսափի տպաւորութիւնը այնքան մեծ էր, որ  
 ամբողջ մարմնով կը դողար եւ իրեն ներկայացուած  
 ճիին վրայ չէր կրնար նստիլ, վասն զի ծունկին կապե-  
 րը թուլցած էին. հարկ եղաւ վերջապէս մարդու մը  
 շալակ դնելով զայն փախցնել այնտեղէն: Այս բաշայա-  
 կիր անձն էր Շաքարենց Գալուստ անուն հայազգին,  
 որ իբրեւ ջորեպան բանակին մէջ կը ծառայէր: Չայս  
 տեսնելով միւս պետերը եւ զօրքերը սկսան իրենք ալ  
 խառն ի խուռն փախչիլ՝ շատ զէնք եւ ուղմամթերք  
 թողլով բանակին մէջ Չ թնդանօթներով միասին, (\*)  
 զորոնք մեր մարդիկ Ձէյթուն փոխադրեցին մեծ հան-  
 դիսով, իսկ փախստական զօրքերը մինչեւ Չահան գե-  
 տը հալածելով՝ բաւական մարդիկ ալ այնտեղ կոտորե-  
 ցին՝ մեծաւ մասամբ չէր քէզ. շատեր ալ գետամոյն ե-  
 դան: Ձէյթունցիներն այսօր իսկ կը յիշեն իրենց քաջ  
 հերոսը ամեն անգամ, երբ Ազիզ բաշայի պատերազմի  
 վրայ խօսք ըլլայ:

(\*) Այս չմուռցուիք որ պարտեցաւ թշնամին ճիշտ ժա-  
 մը Ն ըստ թրքաց, և Սատուածային հրաշք մը և ուղաւ  
 երբ անագին թնդանօթի ձայն մը որոտաց ամէն մար-  
 դու վրայ սարսափ եկաւ, ատոր համար թէճիրցի աչրէթ  
 վրանաբնակները ըսին թէ (գուտրէթ թօփու աթըլտը)

«Հէյ կ'առի Տէչճիւնց Մերկիւս աղօ, գեղջէն համօր  
իգէն տիօլ, Թօփճին կալուց, զգեղջէն էա հիգէն խը-  
լափց» :

— Այս, Թաշճեան քաջ Մարկոս աղան, գիւղին (Ա)  
համար հոգին տուաւ, Թնդանօթաճիգը սպաննեց, գիւ-  
ղին հոգին ալ ազատեց» :

Պատերազմը վերջացաւ կէսօրին եւ մենք վերա-  
դարձանք Աստուածածնայ վանքը : Այդտեղ մեծ հան-  
դիսով թաղեցինք վանքի գերեզմանատան մէջ մեր հինգ  
հաստակները՝ վերոյիշեալ Գալուստ վարդապետն ու  
Մարկոս աղա Թաշճեանը եւ երեք ուրիշ քաջեր՝ Ա-  
բարտեան Զօպու, Թորոսնց Յակոբ ու Գուգուրեանց  
Փանոս (վերջին երկուքը Արեգին գիւղէն) :

Թաղումէն ետքը սկսան հնչեցնել ուրախութեան  
կոչնակները, եւ բոլոր ժողովուրդը փութաց եկեղեցի-  
ու սկսաւ ծնկաչոք երգել Յովնանու ապաշխարութեան  
չարականը՝ ապա Յարութեան շարականը, որ շատ կը  
յարմարէր դէպքին՝ «Փարաւոն հանդերձ կառօքն ընկղ-  
մեցաւ ի հասանս ջուրց եւ որդիքն Իսրայելի գնացին  
ընդ ցամաք ի մէջ ծովուն» : Արարողութիւնը վերջա-  
նալէն ետքը ամենքը ողջոյն կուտային իրարու «չնոր-  
հաւոր նոր տարի» ըսելով (թէպէտեւ օգոստոս Զն էր) :  
որովհետեւ այդ օր Զէյթուն ահուկի վտանգէ մը ազա-  
տեցաւ :

Թչնամիներուն դիակներն ալ անուշադիր չթողին  
մերայինք : Զէյթունի առաջնորդ Սարգին եպիսկոպոսը  
կանչեց իր քով դէյթունարնակ թուրքաց մօլլա Մուս-  
թաֆան (որ այնքան հայասէր էր, որ Զէյթուն մզկիթ  
չըլլալուն՝ ամեն կիրակի Հայոց եկեղեցի կուգար իր

---

(Ա) Զէյթունը գեղ, (գիւղ) կը կոչուի միշտ տեղացւոց  
լեզուով :



աղօթքն ընելու) եւ հրամայեց անոր, որ երթայ սպաննուած թուրքերուն դիակները թաղէ ըստ իսլամի օրինաց: — «Մեծ մեղք կ'ընեմ, առարկեց մօլլան, եթէ իսլամի ծիսօք թաղեմ այդ անպիտանները, վասն զի անմեղներու արիւնը խմելու եւ մեր կանանց պատիւը բռնաբարելու եկած էին անոնք»: Սակայն եպիսկոպոսը պնդեց իր ըսածին վրայ եւ մօլլան մեծ փոս մը փորել տալով ըազմաթիւ դիակները թաղեց մէջը:

Պալճեան մահտեսի Հալվոր աղա դիակի գլուխ երեսուն փառա վճարեց թաղող թուրքերուն:

Այդպէս ուրեմն այդ պատերազմին մէջ թշնամուոյն մօտ երկու հազար սպաննուածներուն ու խեղդուածներուն դէմ մենք ունեցանք ընդ ամենը 77 կորուստ՝ 72ը առաջին օրը Չաքըր-տէրէի եւ Յը մեծ կռուին մէջ: Թշնամիին արձակած թնթանօթերու 44 ոււմբերէն միայն սեւ էջ մը սատկեցաւ, որ կ'արածէր Պոստանենց արտը եւ որ անմահացաւ Չէյթունի իրգերուն մէջ:

Սէնէ պին սէքիզ եիւզ ալթմըշ իքիտէ,  
Բումի աղօսթօսուն հէման իքիտէ,  
Չէքէզլէր գըրըլտը գըրգըն քէօփրիւտէ,  
Լաշէլեր չօգլուղու գուշլար իւրքիւտէ:

Ազիզ բաշա կէլտի՝ թօփունու գուրտու,  
Գըրգ պիւ կիւլլէ աթուպ՝ պիր մէրքէպ վուրտու,  
Թաշճեան էլիլէ թօփու վուրուլտու,  
Բաշա գօրգուպ հեման կէրէ սէքիլտի:

Բաշանըն տիզլէրին պաղը չէօզիւլտիւ,  
Գօրգու թէլաշընտան պաղըր իւզիւլտիւ,  
Չէքէզլէր գաֆասը եէքտէն էզիլտի,  
Օրտու գըրգ պին իքէն հէման պօզուլտու:

Բարգմ. Հազար ութ հարիւր վաթսուն երկուքին,  
Յունական օգոստոս ամսուն երկուքին,

Չէր քէզ ք շարդուեցան Գրբգրնի քէօփրին .  
Դիակաց կոյտերը թռչունները վախցրին :

Աղիղ բաշան եկաւ թնդանօթ լարեց ,  
Քառասուն մէկ ոււմբ նետեց , մի էշ գլտորեց .  
Թաշճեանը թօփչիին ղարկաւ տապալեց ,  
Քաշան ալ սոսկումէն գետին փռուեցաւ :

Քաշային ծունկերուն կապը քակուեցաւ ,  
Վախ ու սարսափէն լեղին սլատուեցաւ ,  
Չէր քէզաց գլուխը մէկէն ճղմուեցաւ .  
Քառասուն հազար զօրք էր՝ իսկոյն ցրուեցաւ :

Աղիղ բաշայի բանակին իբրեւ օգնական եկած էին  
հազարական եւ աւելի զօրքերով հետեւեալ աշիրէթ-  
ները .

- |                     |                        |
|---------------------|------------------------|
| 1. Չափալը քիւրդ     | 7. Նետիրլի յիւրքմէն    |
| 2. Աղմալը քիւրդ     | 8. Պէկթաշլը թիւրքմէն   |
| 3. Սինեմէնլի քիւրդ  | 9. Գումարլը թիւրքմէն   |
| 4. Գրլըճլը քիւրդ    | 10. Պօղտուղան թիւրքմէն |
| 5. Ավշար թիւրքմէն   | 11. Ճէրիտ թիւրքմէն     |
| 6. Ռէհանլը թիւրքմէն | 12. Թեճիրլի թիւրքմէն   |

Ասոնց ամենուն հրամանատարն էր մարաշցի Պայ-  
աղիտ օղլու Օսման պէյը , որ իւր բանակը ի սկզբան  
դրաւ Աւազ-կալ գիւղը եւ յետոյ միացաւ մեծ բանա-  
կին հետ :

Թէպէտ Գօղանի լերան տիրապետող Նուսուֆ աղա-  
յին ալ առաջարկուեցաւ , որ մասնակցի այս սուրբ սա-  
տերազմին , սակայն նախատեսելով նա իրաց անյաջող  
վախճանը , Չէյթունի վրէժխնդրութենէն ալ վախնալով ,  
մերժեց՝ «բարեկամիս հետ թշնամի ըլլալ չեմ ուզեր»  
ըսելով :

ԻԴ-

### ԳՕԶԱՆԻ ՊԵՅՅԵՐԸ

Տեղն է այժմ, որ ուղղենք 1894ին Ս. Պետերբուրգ հրատարակուած «Կիլիկիա» անուն գրքուկին մէկ սխալք, որով հարկատու կը ներկայացնէ Ձէյթունը Գօզանի պէյերուն: Յիշեալ գրքի 338 երեսին մէջ այսպէս կը գրէ պատուարժան հեղինակը. «Վիկտօր Լանգլուայի Կիլիկիա այցելած ժամանակ (1832) Ձէյթունը վայելում էր ինքնավարութիւն չորս իշխանների ներքեւ, որոնք տարեկան հարկի կէսը վճարում էին Գօզանեան բռնակալին և կէսը Սսոյ կաթողիկոսին»:

Այսպիսի հարկավճարութիւն բնաւ չէ պատահած Ձէյթունի՝ ո՛չ ՅՁին, ո՛չ անկէ առաջ, ո՛չ անկէ ետքը. Վիկտօր Լանգլուա սխալած է այս բանին մէջ, ինչպէս որ սխալած է նաեւ իւր տուած ուրիշ շատ մը տեղեկութեանց մէջ ալ, վասն զի չկրնալով Ձէյթուն մտնել Սիսէն ետ դարձած է, հետեւաբար և իւր տեղեկութիւնք անհաւատարիմ աղբիւրներէ քաղուած, թէպէտ 1896ին Վենետիկ տպուած «Պատմութիւն ժամանակակից» անուն գիրքը կ'ուզէ հաստատել թէ, Ձէյթուն մըտած է նա: Ասոր մէջն ալ շատ սխալ ծանօթութիւններ կան Ձէյթունի մասին, բայց անոնք մի առ մի ներքելը մեր նպատակէն դուրս է:

Գօզանցիները ոչ տուրք կ'առնէին և ո՛չ ալ կրնային առնել Ձէյթունէն, ընդհակառակը իրենք գրեթէ ամեն տարի նուիրատուութեան տակ տուրք մը կը վճարէին մեր չորս իշխանաց — ձիեր, գորգեր, մուշտակներ ևլն: Յիշենք այստեղ այգօրինակ նուիրատուութեան դէպք մը, որ կատարուեցաւ հաճրնցի Գալէնտէրեան մակահուն և այլ մը միջոցաւ: Թանկագին պարգեւներն ըն-

ծայելէ յետոյ Գալէնտէրեան կը հրաւիրէր իշխանները Գողան երթալ, Եռսուֆ աղային հետ տեսակցելու: Ամենուն կողմէն գնաց Եաղուպեան իշխանը, որ մեծ պատիւներով ընդունուեցաւ և մի քանի օր վերջ դարձաւ նորանոր պարգեւներով: Եթէ կայ ճշմարտութիւն մը այն է, որ հաճընցիները կը վճարէին տարեկան տուրք մը յիշեալ սէյերուն, և այդ լուծն ալ, ինչպէս կը պատմէ աւանդութիւնը, իրենք ստեղծեր էին ինքնաբերաբար: Եւ ահա ինչպէս:

Այնթապու մէջ գանուող մաղազործ գնչուներէն, որոնք խրդան(1) (չինկեանէ, աղքատ) կը կոչուէին, երկու եղբայր՝ Քրիստոսի 1640 թուականին՝ կուգան Հարգան (Հաճին): Ասոնք իրենց արհեստը ժամանակ մը գործածելէ յետոյ՝ յանկարծ բաղդերնին կը բացուի: Հաճընցի հայերը այդ ժամանակ խնդրոյ մը պատճառաւ սաստիկ երկպառակուած էին ու չէին կրնար համաձայնութիւն գոյացնել մէջերնին, վասն զի ամեն մարդ կ'ուզէր, որ իւր խօսքն առաջ երթայ: Խեղացիներէն ոմանք այս չարեաց դարման մը տանելու համար նոր դիւտ մը կ'ընեն, կը խորհին այս նորեկ գնչուներն իրենց պետճանչնալ ու ամեն խնդիր անոնց դատաստանին յանձնել: «Ասոնք մոլեռանդ թուրքերուն պէս չեն, ուղած ատեննիս ալ կրնանք դանոնք վարել մեր մէջէն» ըսելով կը հաւանին ամենն ալ այս խորհուրդին ու խղաններն իրենց իշխան կ'ընդունին: Բայց քիչ ժամանակէն այդ երկու մաղազործները կը դառնան մէյմէկ բռնաւոր և նեղելով, հարստաձարելով կը մեծանան, սիւննի մահմետականութեան ալ յարելով՝ թուրքաց առջև հա-

---

(1) Այս ցեղը թէև մահմետականաց յատուկ անուններ կը գործածէ, բայց իսկապէս մահմետական չէ, այլ տեսակ մը աղանդ, որ ոչ աղօթք կը կատարէ և ոչ ծով կը պահէ:

մարում կը ստանան : Այդ ժամանակն է, որ իրենց իւր զանն անունը դօզանն օղլուի կը փոխեն : Յետ ժամանակաց կրտսեր եղբայրը Հաճընէն ելնելով Սիս կ'երթայ, վրան լարելով կը նստի ու այնտեղի հայոց, մանաւանդ վանքին վրայ կը բռնանայ, այս ալ կը կոչուի **Չատրրճօղլու** :

Գօղանցիներու համար այս տեղեկութիւնք երեւան եկան Սուլթան Աղիզ կայսեր 1862ին գաղանապէս դրուած լրտես պաշտօնէից քննութեամբ : Այս թուականէն երեք տարի վերջն ալ 1865ին Տէվրիշ և Իսմայիլ բաշաները բաւական զօրութեամբ ասոնց վրայ գալով երկու հայերու աջակցութեամբ՝ կամ աւելի ուղիղ կ'ըլլայ ըսել մատնութեամբ՝ ձեռք անցուցին Գօղանեանց ամբողջ ցեղը և շատերը սպաննեցին : Այս Գօղանեանց անունով **Տօրոս** լեռը կոչուեցաւ Գօղանի լեռ :

ԻՆ.

## ԱԶԻԶ ԲԱՇԱ ԵՒ ԶԷՅԹՈՒՆՅԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ

Աղիզ բաշա զինու զօրութեամբ չկրնալով նուաճել զէյթունցիները, ուղեց ուրիշ եղանակաւ փճացնել զանոնք և իւր խղճալի պարտութեան վրէժը լուծել : Իրեն իշխած գաւառին ամեն կողմը հրաման հանեց, որ իսլամութիւն գաւանդ ամէն անձ ուր որ հանդիպի զէյթունցիի մը՝ պարտաւոր ըլլայ զանի մեռցնելու և անոր ունեցած գոյքն յափշտակելու :

Վատաս իրտ թշնամիին համար ասկէ աւելի հրապուրիչ միջոց մը չէր կրնար ըլլալ քրիստոնէից դէմ իւր ունեցած ատելութեան ծարաւը մարելու, համար, մեռցընե ու կողոպտել — ահա՛ այն միակ իտէալը, որունը հետամուտ կ'ըլլայ ամէն բռնակալ կառավարութիւնն իւր հիմնարկութիւնէն ի վեր, և այն միակ շաւիղը, որուն վրայէն քալած է նա անընդհատ, դարուց ի դարս,

սարսափի, արհաւիրք, սոսկում ազդելով ամենուրեք մեռցնել ու կողոպտել առանց ամենափոքր պատասխանատուութեան երկիւղ մ'ունենալու ո՛չ աշխարհիս և ո՛չ հանդերձելոյն մէջ, ընդհակառակն երկնային վարձատրութեան սպասելով այն համեմատութեամբ՝ ինչ թափով ու չափով գործադրուած է նա իւր այս քստմնելի պարտականութիւնը :

Բայց եթէ անցելոյն մէջ իւր վիթխարի գորութեան մրակ խարխիսը կը կազմէր այն, ներկայիս մէջ ալ իւր գահավէժ անկման կարասիտը եղած է. ինչ որ ժամանակաւ սնունդ մընէր կենսատու՝ այժմ թոյն է մահատուգարուց ի վեր իւր ծովացուցած աշեան ուկիանոսին մէջ վերջապէս պիտի խեղդուի բռնակալութիւնը :

Աղիզ բաշա եթէ ճշմարիտ դիւնորական մը չէր, ճշմարիտ խալամի մը ամեն առաւելութիւնն ունէր, ուստի պատերազմի դաշտին վրայ իւր կորուսած պատիւը մոլեռանդութեամբ ձեռք բերելու ջանաց այնպիսի նուաստացուցիչ նրաման մը հանելով, այնպէս որ այլ եւս անկարելի կը դառնար զէյթունցւոց իրենց երկրէն դուրս ելնելը, հետեւաբար և մօտաւոր սովի մըրկիւղը սկսաւ տագնապել զանոնք :

Այս աննախանձելի վիճակին դարման մը ասնելու համար վճռեցին նոքա պատգամաւորութիւն մը զրկել Պոլիս պատրիարքարանի և ընդհանուր ազգին ուշադրութիւնն նրաւիրելու համար Չէյթունի վրայ : Եւ Տէլի-քէչիշեան Տէր Յակոբ քահանան, որ նշանաւոր Տօնանի հօրեղբորորդին էր, ու աշխարհական մը՝ որ, եթէ յիշողութիւննիս չի խաբեր մեզի, Սէմէրճեան Մնացական էֆէնտին ըլլալու էր՝ պատգամաւոր նշանակելով ճամբայ հանուեցան : Ասոնք մինչեւ Հաճին լեռնային ճամբաներով հետիոտն գնացին, անկէ Գօզանօ օղլուի պաշտպանութեան տակ ապահովապէս Սսոյ կտ-

Թողիկոսին մօտ հասնելով՝ հարկ եղած գրութիւններն ստացան ու Մէրսինի նաւահանգստէն Պոլիս մեկնեցան 1862 սեպտ. 18ին և հասան նոյն ամսոյ 27ին :

Բոլոր զգայուն հայոց սրտերն ուրախութեամբ կը բարախէին արդէն ի լուր քաջագործութեան Չէյթունի հայոց, ուստի մեծ ընդունելութիւն արին այս նորեկ պատգամաւորներուն և անոնց ամեն պէտքերը հոգացին : Ամենէն առաջ փութաց անոնց այցելելու մեծանուն հայ բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշլեան, որ հիացմամբ ու յափշտակութեամբ կ'ունկնդրէր Չէյթունի գործած մէն մի դիւցազնութեանց կենդանի պատմութիւնը՝ զոր ճշմարիտ գոյներով կը ներկայացնէր պատգամաւոր Մնացական Սէմէրճեան էֆէնտին : Լարուած հետաքրքրութեամբ լծեց նաեւ պատմութիւնը Բասմեան Մելքիսեղի, որ Չախըր-տէրէի-քեփիրի պատերազմող հայոց մէջ երկու տեղէ ծանր վերքէր առնելով ինկած էր, բայց յետոյ ինքզինք ժողուելով կրցած էր հասնիլ մինչեւ Փրկչի լեռը ու այնտեղ մնացած, ձեռքով աւճուր բռնելով փորին վրայ բացուած սուրի ահագին վէրքը, որ դէս զի ալիքները դուրս թափելէն արդիւէյանկարծ այնտեղ կը հանդիպին քիւրտեր և մեռեալ կարծելով զանի ականջներն ալ անոնք կը կտրեն, քաջասիրտ զէյթունցին մեռեալ ձեւանալով լուռ կը տանի այս տնդամահատութեան պատճառած տաժանելիցաւերն ալ, ուր ուրեմն դիշերուան մէջ այնտեղ հանդիպելով իւր մայրն, որ դիականց ու վիրաւորելոց մէջ ժամերով շրջելով զինքը կը փնտռէր՝ կ'ողջագուրէ զայն ու կը համբուրէ, և պատերազմի ելքն, իրենց ու թրչնամեաց ունեցած կորուստը մի առ մի պատմելէ յետոյ իւր սիրասուն զաւակը կը փոխադրէ տուն, ուր պէտք եղած դարմանը տանելով կ'առողջացնէ զայն :

Այլ պատմութեան հետեւեալ օրն իսկ պատգամա-

ւորաց և այլոց առջեւ կարգաց անմա՛ն բանաստեղծը  
իւր յօրինած «Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ» գե-  
ղեցիկ երգը :

ԻԶ.

## ԲՈՂՈՒՔ ԱՌ ՆԱԲՕԼԷՈՆ Ք - ԿԱՅՍՐ

Զէյթունի նկատմամբ հայ ազգին սէրն ու համա-  
կրրանքն այնչափ վառ էր, որ պատգամաւորաց գալէն  
առաջ Պոլսէն Բարիզ դրկուած էր արդէն հանգուցեալ  
Գրիգոր վարդապետ Արարդեան, կայսեր բողոքելու հա-  
մար տեղի ունեցած այս ամեն անհանդուրժելի բռնու-  
թեանց ու հարստահարութեանց դէմ :

Գրիգոր վարդապետը՝ միանալով հոգելոյր կարապետ  
վարդապետ Շահնազեանի հետ՝ որ այն ժամանակ Բարիզ  
կը գտնուէր՝ բողոքը ներկայացուց կայսեր, երբ կառ-  
քով կ'անցնէր նա, և ապահովութիւն ստացաւ՝ պէտք  
եղած ուշադրութիւնն ընծայելու իրենց խնդրոյն, և ի-  
րօք քիչ ատենէն Պոլսոյ ֆրանսական դեսպանին հրա-  
հանգ եկաւ, որ Բ. Դուան քով միջնորդէ ի նպաստ Զէյ-  
թունի՝ դադրեցնելու, համար թշնամութիւնները այդ  
սակաւաթիւ, բայց արիասիրտ քրիստոնեայ ժողովրդեան  
դէմ :

Մէկ կողմէն Նաբօլէոնի այս միջամտութիւնը, միւս  
կողմէն մեր բարձրաստիճան ամիրայից միջնորդութիւնը  
թուրքաց մեծամեծ պաշտօնատարաց քով՝ իրաց վիճակը  
կերպարանափոխեցին, և ոչ միայն Զէյթունի վրայ քալե-  
լու համար նոր ճամբայ հանուած զօրքերը ետ դարձու-  
ցին, այլ և Ազիզ բաշան պաշտօնանկ անելով Սիւլիյ-  
մանիա դրկեցին և անոր տեղ Աշիր բաշան նշանակե-  
ցին, որ սակայն նոյնպէս հայատեաց թուրք մըն էր .



զէյթունց երթեւեկութեան դէմ հանուած ամէն արգելքներ ալ վերցուեցան :

Բացի ատկէ քննիչ յանձնախումբ մը կազմուեցաւ որ Մարաշ երթալով պիտի քննէր, իմանար այս ամէն չարեաց նղինակը և պատասխանատուն, վասն զի Բ. Գուռը կ'ուրանար Ազիզ բաշային յարձակումը իւր խորհրդով ըլլալը : Հայոց կողմանէ այս յանձնախումբի անդամ ընտրուեցաւ Եօզղատի առաջնորդ Մատթէոս վարդապետ, որ դեռ ճամբայ չելած՝ մահը վրայ հասնելով վախճանեցաւ, իսկ անոր տեղ նշանակուեցաւ Սասգիւղի քարազիչ Ներսէս վարդապետ Վարժապետեանը (\*) : Այս ալ Ստանա հասնելով իբրև ճանապարհածա'սս իրեն արուած 100 ոսկին գործածեց Սոսյ կաթողիկոս կիրակոս Բ. սրբազանէն եպիսկոպոս ձեռնադրուելու համար և յաջողեցաւ ատանացի նշանաւոր հայազգի Սամուրլաչեան Մանուկ պէյի միջնորդութեամբ :

Եպիսկոպոսանալէ յետոյ երբ միւս անգամ Ստանա վերադարձաւ՝ այնտեղ գտաւ Չէյթունի իշխաններէն Աստուածատուր աղա Ենի-տիւնեա և Հազօր աղա Ծօլքօեանը ու Տէր Մովսէս քահանան՝ որոնք Պոլիս պիտի երթային Չէյթունի իրաւունքները պաշտպանելու համար : Ներսէս եպիսկոպոս փոխանակ Մարաշ երթալու՝ ասանց ձեռ Պոլիս վերադարձաւ՝ համոզելով զանոնք, որ Պոլսոյ մէջ ինքն աւելի օգտակար պիտի ըլլար իրենց, և յիրաւի շատ օգտակար եղաւ :

Պատրիարքարանը և ամիրայք սաստիկ բարկացան Ներսէսի այս ընթացքին համար՝ սակայն Չէյթունցի իշխանաց միջնորդութեամբ հրաժարեցան անոր նկատմամբ նկատմամբ իրենց մտադրած պատիժը գործադրելէն :

---

(\*) Ետքէն Պատրիարք :

Այնուհետեւ իշխանք Վարժապետեանի առաջնորդութեամբ Ալի բաշայի ներկայանալով ամէն բան մանրամասնաբար հասկուցուցին անոր և իրաւունք ու արդարութիւն պահանջեցին, եպարքոսը խոստացաւ արդարութիւն անել հարկ եղած քննութիւնը կատարելէ յետոյ ի նորոյ կազմելի յանձնաժողովի մը միջոցաւ :

Նախկին պատգամաւորք<sup>(\*)</sup> վերջնոց գալէն 15 օր յետոյ Պոլսէն մեկնեցան դէպի Չէյթուէն Գաղղիոյ դեպանատան Բ. Թարգման Պ. Ժիւլ-Րօպէրթի հետ, որ 21 օրի չափ մնալով Չէյթուէն՝ շատ մը բաներ քննելէ, աչքէ անցնելէ վերջ վերադարձաւ Պոլիս : Իսկ այնտեղ գտնուող մեր իշխանք տարիլի մը չափ ուշացան Պոլիս :

## ԻԷ.

### ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԸ . ՊՅԱՄԵԱՆԻ ՍՊԱՆՈՒՄԸ

Մեծ եպարքոս Ալի բաշայի խոստացած յանձնախումբը շուտով կազմուեցաւ հետեւեալ անձերէ .

1. Շահին պէյ՝ իբրեւ ներկայացուցիչ Բ. Գրան .
2. Սարգիս էֆ . Աղարեկեան՝ ներկայացուցիչ հայոց Պատրիարքարանի .

3. Տավուտ էֆ . ներկայացուցիչ կաթողիկ հայոց :

Ասոնք եկան ու նախկին կարգը վերահաստատելով մեկնեցան առանց որ և է փոխարինութիւն անելու Չէյթուէնի կրած այնքան մեծամեծ միասնեբուն, ո՛չ ալ հիմնական կարգադրութիւն մ'արին խաղաղութիւնը մշտապէս հաստատելու համար : Ուստի կառավարութեան ու մեր մէջ և մեր ու շրջակայ բարբարոս ցեղերու մէջ յարաբերութիւնները մնացին նոյնը . — անոնք մեզի դա-

(\*) Տ. Յակոբ Տէլի-քէչիշեան և Մնացական Սէմէրճեանց .

բանամուտ կ'ըլլային, մենք ալ անոնց՝ որ ատեն ոչ պատեհութիւն գտնէինք :

Այսպէս 1863 մայիսին Պոյամեաններու տունէն մէկը Եարփուզէն Չէյթուն վերադառնալու համար Չավտար-պէլ կոչուած կիրճէն անցնելու ատեն գնդակահար սպաննուեցաւ չէրքէզէ մը՝ որ ժայռի մը ետեւ պահուած էր : Չէյթունցիք իմանալով՝ դիակը բերին թաղեցին, բայց գերեզմանէն տուն չդարձած ուխտեցին անոր վրէժը լուծել ու այնպէս դառնալ, ուստի զէնքերնին բերել տալով սպառազինուեցան 70 մարդիկ ու դիմեցին նոյն չէրքէզի գիւղը, որ Չէյթունէն 10 ժամ հեռաւորութիւն ունի, անոնցմէ 6 մարդ սպաննելէ վերջ ամբողջ գիւղն ալ աւարի տալով վերադարձան, իրենց պարտականութիւնը կատարողի մը զգացած խղճի հանդարտութեամբ :

ԻՐ .

## ՉԷՅԹՈՒՆԻ Ա. ԳԱՅՄԱԳԱՄԸ

Չէյթունի պատուածանաչութեան ու աղատասիրութեան այս ոգին՝ որ միշտ դէպ ի վրէժինդրութիւն կը մղէր զինքը, անհաճոյ էր թուրք կառավարութեան, և — ինչպէս կ'ըսէին և դեռ կը կրկնեն տաճիկները — ակռայի ցաւ մ'էր Չէյթուն սուլթանին համար, որ չէր կրնար հանգիստ մնալ՝ մինչեւ որ միւս գաւառներու վարչական վիճակին շնթարկէր զայն : Ուստի 1863 թուականին կեդրոնական կառավարութեան հրահանգովը Մարաշի զօրաց հրամանատար Քէլ Հասան բաշան առաջարկեց մեր իշխանաց, որ Չէյթունի համար նշանակուած թուրք գայմադամը յօժարակամ ընդունին ու Մարաշ երթալով իրենք անձամբ տանին հաստատեն

դայն իւր պաշտօնատեղին, հակառակ պարագային ըս-  
պառնալով զինու. զօրութեամբ գործադրել Բ. Գրան  
հրամանը :

Իշխանք լրջութեամբ մտածելով իրաց վիճակին  
վրայ և հանգամանքները նկատողութեան առնելով  
լաւագոյն համարեցին առժամանակեայ ընդունելու-  
թեամբ վերահաս չարիքէն խուսափել, և մէկ ամիս վերջ  
Տ. Մովսէս քահանան Մարաշ դրեցին իբրև հրաւիրակ  
նորընտիր գայմագամին, որ Սալէն էֆէնտի կը կոչուէր :  
Անոր հետ եկան նաև գատաւոր մը և հազարապետ մը՝  
որպէս բարենորոգիչ պաշտօնեայ՝ Հիւսէյին պէյ անուամբ  
հայատեաց երիտասարդ մը :

Սոքա սկսան ժողովուրդը նեղել, իրենց կարողու-  
թենէն շատ վեր ծանր տուրքեր բեռնաւորելով անոր  
վրայ. հակառակ Սուլթան Մուրատի և յաջորդ երկու սուլ-  
թաններու խաթիթը շէրիֆներով հաստատուած առանձ-  
նաշնորհումներու՝ որոնք այսպէս վերջ կը դանէին Սուլ-  
թան Ազիզի օրով :

Իշխանք տեսնելով այս վիճակը դառնացան և կը  
սպասէին յարմար ժամանակի մը թօթափել իրենց վրա-  
յէն այս ծանր լուծը, բայց յիշեալ հազարապետը միջոց  
չտալու համար անոնց՝ խարդախութեամբ առաւ զանոնք  
Մարաշ տարաւ, անկէ ալ Հալէպ, ուր մնացին երկու  
ամսոյ չափ ժամանակ : Այնուհետև կուսակալ ձեւաթ-  
բաշան Պոլիս դրկեց զանոնք, ուր մնացին մէկուկէս  
տարի թագթագեան Պօղոս պատրիարքի օրով, որ փո-  
խանակ Չէյթունի իրաւունքները և անոր տարագրուած  
իշխանները պաշտպանելու՝ յիմարաբար կը համոզէր զա-  
նոնք, որ թողուն Չէյթունը ու գաղթեն Ադրիանուպո-  
լիս, խոստանալով անոնց՝ թագաւորին կողմանէ թոշակ  
սահմանել իրենց գերդաստանի ամէն անդամներուն,  
նոյն իսկ օրօրօցի մանկանց : Իշխանք միաբերան պա-

տառխանեցին՝ «Սրբազան հայր, մենք ո՛չ թոշակ կ'ուզենք, ո՛չ ալ ուրիշ շնորհք, այլ մեր երկիրը և մեր հողն ու ջուրը. անոր մեզի տուած չոր հացը օտար երկրի մը կարկանդակին հետ չենք փոխեր. մենք կը մեռնինք և ուրիշ տեղ չենք գաղթեր» :

Իշխանաց այս հաստատ որոշումը տեսնելով՝ Պոլսեցի ականաւոր ազգայինք աղաչեցին սուլթանը և ուրիշ պաշտօնեաները արտօնել զանոնք իրենց տեղերը դառնալու : Սուլթան Ս. զիզ զիջանելով անոնց թախանձանաց և նորընտիր Գէորգ Բ. Կաթողիկոսի ասաց և Իգնատիէի զեպանի միջամտութեամբը թոյլատրեց զանոնք վերադառնալու, էֆէն տի ու թեան տիաղոս և միանգամայն անոնց ճանապարհի ծախուց համար պէտք եղած դրամն ալ շնորհելով, և այսպէս անոնք ողջ առողջ : ու պատուով դարձան երկիր ի մեծ ուրախութիւն համայն զէյթուէնց :

Այս ատենները Հալէպի առաջնորդական տեղապահ Տիգրանեան Մկրտիչ վարդապետը Չէյթուէն գալով Շահնազարեան վարժարանը աշակերտելու համար 7 պատանիներ ընտրեց ու տարաւ Պոլիս, այս ընտրեալներէն կա՛նէ որ տեղ մը կը բռնէ այժմ Փիլիպպոս էֆէնտի Սարգիսեան : Ինչ վերջն ալ Երուսալէմի միաբաններէն զէյթուէցի Ստուրեան Սթանաս վարդապետը հոգելոյս Եսայի պատրիարքի կողմանէ գալով Ս. Յակոբայ վանքին մէջ բացուած Ժառանգաւորաց վարժարանին համար 9 աշակերտներ առաւ Չէյթուէն, ասոնց մէջ ալ արժանաւոր տեղ բռնած են Մանուկ էֆէնտի Չգօնեան, Սմբատ էֆէնտի Տէր-Ղազարեան, Տ. Կարապետ քահանայ Տ. Կարապետեան ի Ֆրնուզ և Տ. Սահակ քահանայ Եղուպեան ի Չէյթուէն :

ԻՅ .

## ՏԱՎՈՒՏ ՆԻԱԶԻ ԷՖԷՆՏԻ

Իշխանաց վերադարձէն յետոյ բաւական տարիներ խաղաղութիւն ունեցաւ Չէյթուն, բայց 1875ին Տաւուսու Նիազ էֆէնտի անուն միականի գայմադամին օրով նորէն վրդովեցաւ այդ խաղաղութիւնը այդ անդիտան պաշտօնէին պատճառաւ : Սա դրամ կորսնցնելով թօփուղեան Յարութիւն անուն հայ ոստիկանին վրայ կը կասկածի և կը սկսի զանի նեղել, տանջել, անօթի թողուլ, և երբ ո՛ր և է յայտնութիւն մը չի լսեր անոր բերնէն՝ իւր բնակած տան յարդանոցին մէջ կախելով խեղդամահ կ'անէ զայն :

Ժողովուրդն իմանալով խուռն բաղմութեամբ դիմեց կառավարական պալատը ու իսկոյն կտոր-կտոր պիտի անէր ոճրագործ գայմադամը, եթէ Աղճապեկեան Ստեփան վարդապետը աղաչելով, պաղատելով չկասեցընէր զանոնք. հետեւեալ օրն ալ այս գործին համար Մալաշէն հաղաւթապետ մը և Տէվլէթ էֆէնտի հալազդին քննիչ գալով համոզեցին ժողովուրդը, թէ գայմադամին պէտք եղած պատիժը պիտի տրուի, ուստի հարկ չկայ յուղուելու, նորանոր խռովութիւններ յարուցանելու :

Յուղեալ ամբոխը թէև առժամապէս հանդարտեցաւ, բայց մի քանի օր վերջը իմանալով, որ ոճրագործին ազատ թողուած է Մարաշի մէջ, սաստիկ զայրացաւ և գայմադամը ձեռքէ հանած ըլլալով բոլոր բարկութիւնը թափեց կառավարական շէնքին և մզկիթին վրայ, որ դեռ նոր շինած էին, զոր հիմնադատակ կործանեց՝ մին այրելով և միւսն քանդելով : Ասոնց տեղը այժմ բանջարանոց եղած է :

Այս դէպքէն վերջ երեք տարի շարունակ ազատ  
ապրեցան զէյթունցիք առանց դայմագամի, ըստ վա-  
ղեմի դրութեան ինքզինքնին կառավարելով Մարաշէն  
անկախ :

Լ .

## ՀԱՃԻ ՄԱՄԲՐԷ ԵՒ ԵԱՅՃՕՂԼԻ

Հին վիճակին դառնալով՝ զէյթունցիք սկսան  
ազատ շունչ քաշել մանաւանդ այն ծերուկագայլերը,  
որոնք արձակ-համարձակ լեռները շրջելու վար-  
ժուած ըլլալով՝ թուրք կառավարութեան մուտ գտնելէն  
ի վեր կաշկանդուած էին : Այսպիսի մէկն էր Վէ-  
զիր-օղլու Մամբրէ անուն ծերունին, որ ամբողջ կեան-  
քը լեռներու ու պատերազմներու մէջ անցուցած է գրե-  
թէ և որ իրեն այնքան սիրելի եղած դէնքը մէկ կողմ  
դնելու ստիպուած ըլլալով՝ միշտ կը հառաչէր եւ այն  
երջանիկ օրերուն վերադարձին կըստասէր ակնդէտ : Ա-  
մէն օր սովորութիւն արած էր սա կրակին վրայ քիչ մը  
վառօղջայրելով գլուխը անոր վրայ բռնել ու անոր հոտը  
ծծել անյագարար, որպէս թէ վարդ ու մեխակ կը հոտ-  
ւըտար :

Երջանկութեան գագաթնակէտը հասաւ հաճի Մամ-  
բրէ երբ իւր ցանկացած վիճակին մէջ տեսաւ նորէն  
Չէյթուն, ուստի 1878 թուականին օր մը 30 զինեա-  
լներնետով գնաց Պունտուխ գեղի լեռը և սկսաւ հրա-  
ցանաձգութիւններ անելով զուարճանալ : Անտրոքնի  
բռնակալ Եայճօղլին, որ այն կողմը ամարանոց ելած էր  
Ղ ա ո ղ ա - չ ա յ իր կոչուած տեղը, իրեն դէմ ցոյց մը  
համարելով որ Վեզիրեանի ընկերներ սակաւաթիւ են,  
շուտ մը մարդիկ հաւաքեց իւր քով՝ գրնթէ 500ի չափ՝

ու յանկարծ անոնց վրա յարձակեցաւ, երբ անոնք կերակուրի նստած էին. երկու կողմէն սկսան դնդակներ տեղալ իրարու վրայ և հակառակ իրենց սակաւութեան՝ մերայինք յաջողեցան զանոնք վանելու: Այս լուրը հասնելով Ֆրնուզի վանահայր Նիկողոս եպիսկոպոսին՝ փութաց երթալ կուռոյն վայրը, իսկ նորա սարկաւազ Մինաս էֆ. (այժմ Բարթողիմէոս վարդապետ) 200ի չափ մարդ հաւաքելով՝ անոնց պէտք եղած բաները, զէնք, դնդակ, վառօղ — իւր իսկ ծախքովն հողաց ու հեւտեւեալ օրը դնաց միացաւ եպիսկոպոսին՝ Նայճօղլիի յանդգնութիւնը չափելու և պատժելու համար: Միեւնոյն ժամանակ բռնաւորն ալ զգալով՝ որ այս բանին հետեւանքը սուղի պիտի նստի իրեն՝ կապանու քեհեաւ վարդիվար աղա Գրրծըլեանը պատգամաւոր զրկեց եպիսկոպոսին ներողութիւն խնդրելու համար, հրաւիրելով միանգամայն եպիսկոպոսը, որ հաճի իրեն երթալ բանակցի ու հաշտութեան վրայ՝ որպէս զի պարապ տեղը արիւն չթափուի:

Գնաց եպիսկոպոսը մի քանի մարդերով, բայց Քիչ վերջը այնտեղ հասաւ սարկաւազը հարիւրէ աւելի զինեալ բազմութեամբ, ի տես որոց զարհուրելով Նայճօղլին՝ սկսաւ դողալ ու եպիսկոպոսին ոտքն իյնալ, որ գլխաց ու իրենց կենաց խնայէ՝ յետ այնորիկ մշտնջենական բարեկամ եւ իրենց հրամանին հնազանդ մնալու հաստատ խոստումներ ու ծանր երդումներ տալով: Ասկէ զատ իբրեւ նուէր ձի մը և հարիւր ասկի ներկայացուցին սրբազանին, բայց նա մերժեց ու իրենց դարցուց երկուքն ալ՝ պատուիրելով որ հաւատարիմ գըտնուին իրենց խոստման, եւ ապա գատուեցան իրարմէ:



ԼՍ.

ՊԱՊԻԿ ՓԱՇԱ(\*). ՓՕՅՐԱԶ ԱԼԻ

1875—1878 թ., երեք տարուոյ ազատ շրջանին մէջ նշանաւոր հանդիսացաւ Ենի-տիւնեա Մարկոս աղայի որդին Պապիկ բաշան, որոյ գործոց մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ Պօղոսողան աշիրէթին հետ ունեցած կռիւը, ուր սպաննուեցաւ աղ աշիրէթին պետը — Փօյրազ Ալի :

Սա՛ իբրեւ թուրք տէրէպէյի՝ իրաւունք կը համարէր իրեն կապանցի հայոց կորեկի ցանքն կերցնելու իւր ա- նասնոց, իջեւանելով անոնց արտերուն մէջ իւր բոլոր ցեղակիցներով, որոնք 300 տունէ կը բաղկանային :

Կապանու Վարդիվար քեհեան՝ Մարաշ երթալով կառավարչին բողոքեց այս բռնաւորին դէմ, բայց նա՝ «Պօղոսողանցիները չեմ կրնար զսպել ես, դուք ալ այս

(\*) Պապիկ բաշա Ենի-տիւնեա իշխան Աստուածա- տուր աղայի հօրեղբորորդու՝ Մարկոս աղայի տղան էր : Այս մեծագործ անձը իւր կենաց մէջ գրեթէ 15 տարի շարունակ աղգօգուտ հերոսութեան գործերով զբաղեցաւ : Սայիտ բաշայի, ապա Քեամիլ բաշայի ջանքերը հպատակութեան բերել զայն՝ ի դուր անցան : Իր բաշա- յութեան տիտղոսը թագաւորաց կողմէն չէր տրուած, այլ իւր մեծամեծ գործերուն համար հասարակութիւնը զինքը այս անունով պատուեց : Չէ թէ միայն աղգայ- նոց կողմանէ բաշա կը կոչուէր, այլ և տաճկաց կող- մէն : Այս պատուական անձը բնական հիւանդութեամբ իւր մահկանացուն կնքեց 1886 օգոստոս Չլին քառա- սուն տարեկան հասակին մէջ ու թաղեցաւ մեծաւ հան- դիսիւ Ս. Աստուածածնայ վանքի բակը գանուող գե- րեզմանոցը, և զէյթունցիք բազում արտասուօք կոծ մեծ արին ի վերայ նորա :

տարի կորեկ հաց մի՛ ուտէք» ըսելով քովէն դուրս վա-  
նեց : Քեհեան գալով իւր գիւղակիցներուն մօտ՝ բա-  
շային տարօրինակ պատասխանը հաղորդեց անոնց , ո-  
րոնք յուսահատ՝ դիմեցին զէյթունցւոց պաշտպանու-  
թեանը :

Պապիկ բաշա ընդունելով սիրով անոնց առաջար-  
կը՝ նուիրական թմբուկը(\*) դարնել տուաւ : Բոլոր լսող-  
ները — թուով 300 — եկան հաւաքուեցան անոր մօտ ,  
և Պապիկ փաշա անոնց գլուխն անցած գնաց կապան՝  
որ Զէյթունէն 16 ժամ հեռաւորութիւն ունի , դարկաւ  
Ալի պէյը , որ իբր նախամարտիկ արշաւեց անոր դէմ , և  
ապա պօզտօղանցւոց վրանները , անասունները , — ուղտ ,  
եղ , կով , ձի , էջ , ոչխար , — հազարաւոր թուերով կիներ ,  
աղջիկներ , պղտիկ լամուկներ գերի վարեց ի Զէյթուն ,  
սակայն ըստ վաղեմի սովորութեան կանանց և աղջկանց  
պատուոյն բնաւ չդիտան զէյթունցիք , այլ մարդկու-  
թեան պահանջած պայմաններուն տակ հանգիստ պա-  
հելով զանոնք՝ ապա վերադարձուցին , իսկ կենդանի-  
ները բոլոր զէյթունցւոց մէջ բաժնելով՝ առատ-առատ  
վայելեցին զանոնք , այնպէս որ նոյն տարին լ օ գ մ ա  
ս է ն է ս ի (պատառի տարի) կոչուեցաւ , վասն զի ամէն  
տուն մէյմէկ սպանդանոց դարձած էր :

Այս յաղթանակի ամբողջ նշանակութիւնը հասկա-  
նալի դարձնելու համար յիշենք և այն , որ զէյթունցիք  
ամէնքը , բացի Պապիկ բաշայէն և անոր գրագիր Մեր-  
կերիոս էֆէնտիէն , հեախտան էին , մինչդեռ թշնամին  
ամբողջովին հեծեալներէ կը բաղկանար , և կռիւը տեղի  
ունէր բաց դաշտի մէջ :

---

(\*) Այս թմբուկը օժած էր Սարգիս եպիս . կիլիկ-  
եան , որպէս զի անոր ձայնը լսողը անհրաժեշտաբար  
հետեւի անոր՝ սրբազան կոչ մը համարելով զայն :

ԼԲ.

## ՉԱՏԸՐՃԻՑՂԼԻ - ԵՕԹԸ ՓԵՇԻՆ ՏԱՐԸՆ

(ԵՕԹԸ ԲԱՇԱՅԻՆ ՏԱՐԻՆ)

Մինչեւ 1878 թուականը շարունակուեցաւ Չէյթու-  
նի այս ինքնազուխ վիճակը, որ ատեն ռուս-թրքական  
պատերազմը այլ եւս վերջացած ըլլալով՝ կառավարու-  
թիւնն սկսաւ նորէն ուշադրութիւն դարձնել Չէյթու-  
նոց վրայ:

Այն ատեննեւն էր, որ Սսոյ տէրէպէյի Չատրըճօզլի  
Ահմէտ պէյը՝ որ սուլթանէն բաշա տիտղոսը ստացած էր,  
Պոլսէն խոյս տալով Հաճին եկած էր և կ'աշխատէր հա-  
մողելու ժողովուրդը, որ միաբանելով իւր հետ՝ ապրս-  
տամբի թուրք կառավարութեան դէմ. «Վասն զի, կ'ը-  
սէր, արդէն բաժնուելու վրայ է անոր երկիրը Պերլինի  
վեհաժողովին մէջ և փոխանակ ուրիշները տիրանալու  
այս երկրին՝ մենք բնիկներս տիրենք. Գօզանի լեռներն  
ալ շատ ձեռնտու են մեր այս խորհուրդին»: Այս իմաս-  
տով Չէյթուն ալ նամակ գրած էր նա, սակայն հաս-  
տատ ու որոշ պատասխան մը դեռ չտրուած անոր՝ հա-  
ճրնցի Հայոց մատնութեամբ Ատանայի կուսակալը եւ  
Սսոյ կառավարիչը ուրիշ երեք զինուորական բաշաներու  
հետ բազմաթիւ զօրքերով պաշարեցին Ահմէտ պէյը և  
ձերբակալելով աքսորեցին զայն:

Կարգը եկած էր Չէյթունի, բայց գիտնալով որ  
դիւրամարս պատասխան մը չէր այն՝ աւելի զգուշութիւն-  
ներ ձեռք առին: Արդէն եղած զօրութեան վրայ Հա-  
լէպի կուսակալը և Մարաշի կառավարիչը Վէյսի բաշան  
ալ զինուորական մեծ զօրութեամբ աւելնալով հանդերձ  
չհամարձակեցան ուղղակի Չէյթունի վրայ քալելու, այլ  
իրենց սովորական եղած խարդախ միջոցներուն դիմե-

ցին : — Հաճրնի առաջնորդ Պետրոս եպիսկոպոսը համա-  
զեցին՝ որ Չէյթուէն երթայ ու այնտեղի իշխանները և  
ուրիշ երեւելիները յորդորէ հրաժարիլ ասպատակու-  
թիւններէ և հնազանդիլ թուրք կառավարութեան : Ի-  
րենց հնազանդութեան գործնական ասպացոյց մ'ըլլալու  
համար պէտք է որ, ըսին, անձամբ գան ներկայանան  
բանակին հրամանատարներուն և իրենց համար ընտրը-  
ւած գայմագամն ալ հետերնին առնելով վերադառնան :

Եպիսկոպոսը եկաւ և այս մտօք սկսաւ յորդորել<sup>(\*)</sup>  
մեծաւորները, որոնք միամտաբար խարուեցան ու անոր  
հետ գնացին մինչեւ բանակը, որ կը գտնուէր Ջահան  
գետին եզերքը : Երբ սոքա — թուով 12 անձինք — բա-  
նակը մտան, զօրականները՝ զինուորական փողեր, հնչե-  
ցընելով իսկոյն շրջապատեցին գանոնք և իբրև կալա-  
նաւոր պահեցին իրենց մօտ : Միեւնոյն ժամանակ իրենք  
ալ Չէյթուէնի մօտ գալով բանակեցան և սկսան հան-  
դիպածնին բռնելով գերի տանիլ Մարաշ՝ այր թէ կին՝  
300ի շափ անձինք, որոնց մէջ էին Պապիկ բաշայի մայ-  
րն ու կինը, սոցա պաշտպանութեան համար ինքնա-  
բերաբար Հալէպ գնացին միասին Պապիկ բաշայի եզ-  
րայրը (Նազարէթ աղան) և աներորդին :

Չէյթուէնցիք շուզեցին այս անգամ դիմադրել թուրք  
բաշաներուն, վախնալով որ թշնամւոյն ձեռքը գը-

---

(\*) 1864ին ճիշդ այսպէս համոզելով Մարաշի առաջ-  
նորդ Աջապահեան Նիկողոս եպիսկոպոսը, որ յետոյ  
ինքնած կաթողիկոս եղաւ Սսոյ, Մարաշ տարաւ Չէյ-  
թուէնի գլխաւորներէն Ենի-տիւնեա Փանոս բաշան, Ա-  
րեզինի կարապետ քեհեան և Վարդանեան Չափաուր,  
որոնք այնտեղ բանտարկուեցան : Փանոս բաշան թու-  
նաւորուելով բանտին մէջ մեռաւ, միւսներն ալ 3—4  
տարի բանտը մնալէ յետոյ հազիւ ազատեցան :

ևող մեծաւորներուն կեանքը կը վտանգուի : Սակայն Պապիկ բաշան՝ որ միւս իշխանաց հետ գնացած չէր, իւր հրամանատարութեան տակ գանուող 400ի չափ հրոսակներով սկսաւ պատերազմիլ թրքաց դէմ աջակցութեամբ Փրնուզի վանքին վանահայր Նիկողոս եպիսկոպոսի և Յարութիւն պատուելի Չաքրբեանի, որոնք գերի բռնուեցան այս պատերազմին մէջ Նոխուտեան Փանոսի հետ, բացի այդ՝ երկու ուրիշ հայեր ալ մեռան այդ կռուին մէջ՝ Պետրոս Հասէսեան և Պաշեր Գէորգեան անուամբ, իսկ թուրքաց կողմէն ընկան 60 հոգի և շատեր ալ վիրաւորուեցան :

Պապիկ բաշա սաստիկ բարկացած և զայրացած Պետրոս եպիսկոպոսի դէմ որ անգիտարար մատնիչ մ'եղած էր, յարձակեցաւ Ս. Աստուածածնի վանքին վրայ, ուր կը գտնուէր նա, որպէս զի սպաննէ զայն, սակայն վանահայր Սահակ վարդապետը (վախճ. կարապետ եպիսկոպոս) գաղտուկ տեղ մը պահելով զայն՝ ստեց Պապիկի՝ «Այստեղէն փախաւ» ըսելով : Եւ իրօք ալ վրէժխընդիր իշխանի մեկնելէն վերջ փախաւ, հաղիւ կրնալով հասնել Հաճին շնչասպառ :

Իսկ գերի բռնուած Նիկողոս եպիսկոպոսը իւր երկու ընկերներովը թուրքերը խիստ անարգութեամբ ու խայտառակ վիճակի մէջ տարին Մարաշ, ուր մըսթըր Մօնթքօմբի ամերիկացի հայասէր միսիօնարը տեսնելով ասոնց անտանելի կացութիւնը՝ դիմեց կառավարութեան ու ասոնց համար երաշխաւոր ըլլալով պահանջեց որ արձակուին, բայց կառավարութիւնը մերժեց ասարկելով մանաւանդ թէ նա՝ միսիօնար մ'ըլլալով իրաւունք չունէր քաղաքական գործերու խառնուելու, մինչդեռ անգլիական հիւպատոսի փոխանորդութիւնն ալ կը վարէր, և այս պաշտօնին իրեն տուած ուժին կոթնելով թէեւ պնդեց իւր պահանջման վրայ սակայն կառավարութիւնն

անդրդուելի մնաց իւր որսչման մէջ, խիստ լեզու գործածելով նաև անոր դէմ :

Մըսթըր Մօնթքօմբին հեռագրել ուղեց ի Պոլիս, բայց հեռագիրը մերժեցին « արգիլուած է » ըսելով. նա ալ ձին հեծնելով Այնթապ դնաց 10 ժամէն, մինչ 18 ժամու հեռաւորութիւն ունէր, որպէս զի այնտեղէն հեռագրէ, բայց հոն ալ մերժուեցաւ : Ազնուասիրտ ամերիկացին չյուսահատելով ուղղուեցաւ դէպի Հալէպ և այնպիսի խուճապով կը վարէր իր նժոյգը, որ չկրնալով դիմանալ խեղճ կենդանին -- որ 120 ոսկի կ'արցէր -- սատկեցաւ կէս ճամբան : Ուր ուրեմն հասնելով Հալէպ՝ ամերիկացի միսիօնարը տեսնուեցաւ հիւպատոսներուն հետ և անոնց խորհրդով հեռագիր տուաւ Անգղիոյ դեսպանին, Բ. Գրան և հայոց պատրիարքարանին՝ Չէյթունի և բանտարկելոց անտանելի վիճակը նկարագրելով :

Դեսպանն ու պատրիարքը այս հեռագիրն ի ձեռին դիմեցին Բ. Գրան և պահանջեցին, որ բաշաները և քաշունին Չէյթունի առջեւէն, և Նիկողոս Եպիսկոպոսն ալ Պոլիս բերուին երկու ըներներովը մէկտեղ : Իսկուք համակերպելով այս պահանջման՝ պէտք եղած հրամանները տուաւ ուր որ անկ էր, ու այս խնդիրն ալ փակուեցաւ այսպէս :

Բոլոր Չէյթունցիք խորապէս զգածուած ազնուասիրտ միսիօնարին այս արիական գործունէութենէն՝ սրբտաղին շնորհակալութիւն մատուցին նմա՝ երբ վերադարձաւ Մարաշ :

Այս թուականը տեղական բարբառով կը կոչուի « Եօթը փէչին տարրն-եօթը փաշային տարին », որովհետեւ թուրքաց զօրքը կը գտնուէր երեք զինուորական բաշաներու հրամանատարութեան տակ և բացի այդ՝ անոնց հետ էին Ատանայի, Հալէպու, Սսոյ և Մարաշու բաշաները :

ԼԳ.

ՊԱՊԻԿ ԲԱՇԱ ԵՒ ԲԱՆՏԱՐԿԵԱՆԻՔ

Զօրաց ետ քաշուելովն իրերը առերեւոյթ հանդարտութիւն մը ստացան թէեւ՝ բայց սրտերը նոյն էին, լի ատելութեամբ միմեանց դէմ, և այդ զգացման մարմնացումն էր զէյթունցւոց մէջ Պապիկ բաշա, որ իւր հերոսներով կը շրջէր տակաւին լեռները, գլխաւորապէս Փիսիք(\*) կոչուած լեռը իրեն օթեւան ընտրելով: Իւր մօր, և տիկնոջ հետ խարդախութեամբ բոլոր զէյթունցիք Մարաշի և Հալէպի բանտերուն մէջ կը հեծէին դեռ եւս, և միջոց մը կը փնտռէր քաջ հերոսապետը զանոնք ժամ առաջ և անմնաս իրենց տեղերը վերադարձնելու: Այս նպատակաւ բաշաներուն մեկնելէն 3 ամիս վերջօր մը յանկարծ Զէյթուն իջաւ իւր հերոսներով և կառավարութեան պալատը զգուշութեամբ պաշարման մէջ դնելէ յետոյ՝ ինքը ներս մտաւ գայմագամին և այլ պաշտօնէից հետ տեսնուելու: Այնտեղ սուրճ հրամցուցին իրեն, որմէ յետոյ ոտքի ելաւ՝ որպէս թէ մեկնիլ կ'ուզէր. տխմար գայմագամը հրամայեց, որ տեղէն չը շարժի. «վասն դի, ըսաց, հիմա ոստիկանք քեզ պիտի առաջնորդեն քու արժանաւոր բնակարանդ (բանտը). դու այնչափ ատեն տէրութեան երկիրը և զօրքերը անհան-

---

(\*) Զէյթունի տկար ժամանակը Պեշէն գիւղի թուրք պէյերը Աստուածածնի վանքին վրայի լեռը գալով՝ վերան կը լարեն կը նստին եզեր. զէյթունցիք ալ իրենց չսիրած անմաքուր բաները որովհետեւ փիսիս կը կոչէին, ամէն անգամ որ այս պեշէնցիք կուգան՝ փիսիս երբ եկան կ'ըսեն եզեր, այսպիսով տեղւոյն անուներ մնացեր է Փիսիք, որ այժմ Պապիկ բաշայի տան կալուածն է:

գիտատ արիր, մեծամեծ ծախքերու դուռ բացիր, այնչափ անմեղ մարդոց բանտարկուելուն պատճառ դարձար ու ինքդ ազատ շրջեցար առանց ձեռք անցնելու. այժմ բաղդը այնպէս բերաւ որ թռչունի մը պէս ինքնին եկար, ծուղակի մէջ բռնուեցար. «՛ն ուրեմն բանա...» :

Ծիծաղեցաւ քաջ գէյթունդին ու ըսաց՝ «դու ինքդ ալ իմ ձեռքիս մէջ կը գտնուիս այժմ բոլոր պաշտօնեաներովդ հանդերձ. «՛ն ուրեմն երթանք, ես ձեզի աւելի լաւ տեղ պատրաստած եմ վանս յին մէջ...» :

Ապշեցաւ գայմագամը այս անակնկալ պատասխանն առնելով և պատուհաններէն դուրս ժուռ ամելով իւր ակնարկ՝ տեսաւ որ կատարելապէս պաշարուած էր, ու արձանի մը պէս անշարժ մնաց : Գերերը շուտ փոխուեցան : — Հիմա կարգը եկած էր, որ թշնամին խոնարհի ու հայր հրամայէ : Թուրքախան ընտարութեան յատուկ եղած գձձութեամբ մը, որ տխարին առջեւ ը գտնուած ատեն ամպերուն մէջէն կ'որոտայ իր պատգամը, իսկ զօրաւորին առջեւ՝ անոր ստքին տակ կը սողայ, գայմագամն ալ իսկոյն կեր ը փոխելով՝ «Տէ՛ր իմ, կակազեց, թոյլտուութիւն արա՛ ինձ գէթ միանգամ տեսնուելու ընտանեացս հետ, այնուհետեւ պատրաստ եմ հրամանդ կատարելու» : — «Վանքին մէջ կրնաք տեսնուիլ, պատասխանեց Պապիկ, վասն զի ամբողջ ընտանիքդ հոն փոխադրուած է արդէն» :

Խեղճ գայմագամը յուսահատ ու կորագլուխ հնազանդեցաւ հայ իշխանի հրամանին և դատաւորին ու այլ պաշտօնակալաց հետ — թուով 22 անձինք — հրոսախուժէն շրջապատուած ելան վանք, ու շղթայուելով դրուեցան ախորճերու մէջ :

Հերոսապետի հրամանով Մարաշի կառավարութեան աւղչեալ նամակ մը գրեց գայմագամը, ուր իրենց այս ծանր վիճակը նկարագրելով կ'աղաչէր որ ժամ առաջ ար-



ճակեն հայ բանտարկեալները, որ իրենք ալ ազատուին :  
 Ամբարտաւան կառավարութեան համար ս'ըջափ ծանր  
 պայման . բայց ինչ կարող էր անել : Չէյթուենցին լաւ  
 սերտած էր մովսիսական օրէնքը — «աչքի տեղ՝ աչք,  
 ախոայի տեղ՝ ախոայ», մանաւանդ աւելի առտջ կ'երթար  
 նա, — մէկ աչքի տեղ՝ տասն աչք կը հանէր, մէկ ախ-  
 ոայի տեղ ալ՝ ամբողջ գլուխը կը ջարդէր շատ ան-  
 գամ :

Կամայ ախամայ ստիպուեցան կատարել դայմագա-  
 մին խնդիրքը և անմիջապէս արձակուեցան թէ՛ Հալէ-  
 սի և թէ՛ Մարաշի մէջ բանտարկուած բոլոր Չէյթուեն-  
 ցիները . այն ատեն Պապիկ բաշան ալ ազատ թողուց  
 իւր բանտարկած պաշտօնեաները, որոնք լռիկ մնջիկ  
 նորէն անցան իրենց պաշտօնի գլուխը :

ԼԳ -

### 250 ՉԻՔԷՉՆԵՐՈՒ ԶԱՐԴԸ

(1879) Մարաշի կառավարիչը կաս'ածելով որ միւս  
 անգամ կը կրկնուի նոյն անհաճոյ դէպքը՝ օրական  
 վարձքով 250 գողթական չէրքէզներ դրկեց Չէյթուեն,  
 հազարադետի մը հրամանին տակ, ի պաշտպանութիւն  
 կառավարական պաշտօնէից և իրենց ընտանեաց :

Սակայն ասոնք դեռ ևս քաղաք չմտած՝ մեծ գե-  
 րեզմաննոցին քով Պապիկ բաշա դէմերնին ելաւ իրենց  
 գաղստեան պատճառն իմանալու համար, և երբ անոնք  
 յայտնեցին իրենց ինչ պաշտօնով գալը, հերոսադետ  
 ապահովեց զիրենք՝ թէ այսուհետեւ այդ զաները պիտի  
 չըլլան և կրնան իւր խօսքին վստահելով դառնալ իրենց  
 տեղերը, «քանի որ այսչափ եկեր էք, ըսաց, երեք օր  
 ձեզ կը հիւրընկալեմ տուներու մէջ, այսուհետեւ պէտք  
 է երթաք :

Անոնք պատասխանեցին թէ՛ «Մենք բաշային հրահանգին միայն կը հնազանդինք և ըստ այնմ կառավարութեան ապարանքը պիտի երթանք» : — «Լա՛ւ ուրեմն, կրկնեց իշխանը, սպէտք է զէնքերնիդ ինծի յանձնէք ու առանց զէնքի մանէք Ձէյթուն» : Անոնք այս առաջարկն ալ մերժեցին : — «Ուրեմն ասկէ վերջը պատահելիք չարեաց պատասխանատուն դուք էք», ըսելով քաշուեցաւ դնաց Պապիկ բաշա, անոնք ալ դընացին կառավարութեան ապարանքը, ու հազիւ մէկ շաբաթ տեւեց, իրենց ի՛նչ ստոր արարածներ ըլլալը շուտով երեւան եկաւ : Գրեթէ ամեն օր զինուորավազրիւրներուն գլուխը կը հաւաքուէին ու ջրկիր կանանց և աղջկանց անվայել ու անպարկեշտ խօսքեր կը զրուցէին լիտի ու շուայտ շարժումներով :

Իրենց բարոյական սրբութեան ծայրայեղապէս նախանձախնդիր՝ բոլոր կանայք, խորապէս յուզուած այս անառակ իսլամներու լիրք վարմունքէն, զիմեցին Պապիկ բաշային և խսախու պահանջեցին, որ այն օրն իսկ հանէ Ձէյթունէն այս վատազգի «նուզաները», «ազաթէ ո՛չ, ըսին, մենք զինուորով կը ջարդենք զանոնք, այն ատեն ձեր ֆէտը մեր գլուխը դրուի, մեր «շեաշն» ալ (շղարշը) ձեր գլուխը» :

Այս գանդատէն օգուտ քաղելով հերոսապետը իսկոյն ժողովի հրաւիրեց քաղաքին գլխաւորները և խնդիրը անոնց ներկայցնելով պահանջեց, որ իրենց որոշումը տան : Երկար խորհրդածելու պէտք չկար, շուտով տուին նոքա իրենց որոշումը — պատերազմ :

Հանգիստ նստել ճակատագրուած չէր երբէք զէյթունցիին, և խաղաղութեան հաղուադէպ ժամանակներն ալ կարճատեւ զինազաղարներ էին իրեն համար : Արի՛ւն ու սո՛ւր — այս էր իւր բաժին, ազատութի՛ւն կամ մահ՝ — այս էր իւր սկզբունք : Ուստի վճռեց նորէն

դուրս քաշել սուրը իւր պատեանէն՝ ուր կատարելապէս մխուած չէր արդէն և որուն վրայ տակաւին թարմ կը մնային թշնամւոյն արեան վերջին կաթիլները:

Պապիկ բաշա օծեալ թմբուկը դարնել տալով իւր մօտ հաւաքեց 300 զինեալ հերոսներ ու անոնց գլուխն անցած՝ գնաց պաշարեց կառավարական շէնքը, ուր կը գտնուէին չէրքէզները, յետոյ բարձրաձայն հրաւէր կարգաց անոնց, որ դուռը բանան ու յայտնեն իրեն, թէ արդեօք իրենց ձեռքը բարձրագոյն տեղէ մը հրամանագիր ունէի՞ն այստեղ դալու և այսչափ սանձարձակ վարուելու:

Անոնք փոխանակ դուռը բանալու՝ հրացան մը պարպեցին՝ «մեր հրամանը մեր հրացանին բերանն է» ըսելով: Հերոսապետը շարունակեց, «կը դժամ ձեր վրայ լաւ կ'անէք, որ խաղաղութեամբ ելլէք հեռանաք այստեղէն, պատուոյս վրայ կ'երդնում որ ձեզի վնաս պիտի չհասցնեմ ամենեւին, և մեր երդումը, նոյն իսկ պարզ խոստումը՝ ձեր խարդախ պաշտօնեաներու երդումէն հազարապատիկ աւելի արժէք ունի. վստահ եղիք ու գնացէ՛ք»: Ներսէն ձայն մը պատասխանեց — «Մեր օրէնքը թոյլ չի տայ մեզ կեալուրի մը հնազանդիլ, եթէ կեալուրին հնազանդիլ ուղէինք՝ Մոսկոֆին մէջ կը մընայինք»: — Սրիւն ձեր ի գլուխ ձեր, — գոռաց հայ հրամանատարը, — պէտք է ուրեմն ջարդուիք»: Իսլամի այս նորընծայ ձագերը ճշմարիտ հաւատացեալի մը ներքին համոզումով ազազակեցին՝ «կեալուրի գնդակը մեզի չի ներգործեր»: — «կրակ» որստաց Պապիկ բաշա: Եւ ահա շէնքին ամեն կողմերէն գնդակներու տարափ մը տեղալ սկսաւ. 230 չէրքէզներէն միայն Յը ողջ մընաց, բոլորն ալ այնտեղ ինկան՝ երկնային փառաց պսակը վայելելու համար անդիի աշխարհին մէջ: Հազարապետն ալ նստոյ տեղէն դարնուեցաւ, եւր խոյս

կուտար ու յետոյ Բանիչոսեան հաճի Կարապետ աղայի  
տունը տարուելով՝ այնտեղ դարմանուեցաւ : Կենդանի  
մնացած Յ հոգին Մարաշ Վէյսի բաշային դրկեցին , որ  
երթան իրենց տեսածին պէս պատմեն : Այս կուտայն մէջ  
հայոցմէ երկու հոգի միայն նահատակուեցան :

Է Վ Է Ա Չ Ք (Ա Ի Ա Չ Ք)

Վէյսի բաշա տէտի՝ Չէյթուսա վարամ ,  
Երին վիրան իտիւպ , մալլէրին ալամ ,  
Չէյթուս թէքքէսինտէ պիր գէման դալամ ,  
Եագարըմ Չէյթուսու նառ իլէ , պէլլէր :

Պապիկ բաշա տէտի , քիմսէյի թագմամ ,  
Հալէպ վալիսինին աղզընա պագմամ ,  
Եիւզ պին աակէր կէլսէ՝ երիմտէն գալգմամ ,  
Ալամանկ շու պիզի լաֆ իլէ , պէլլէր :

Վէյսի բաշա տէտի՝ աակէրիմ չաղլար ,  
Աթարըմ կիւլլէլէր , տեվիրիր տաղլար ,  
Չարպըմտէն թիթիրէր , Չէյթուս դան աղլար ,  
Եագարըմ Չէյթուսը նառ իլէ , պէլլէր :

Պապիկ բաշա տէտի՝ պէլլէ վատընը ,  
Չիպիլ իսարարընա գոյաոււմ գատընը ,  
Պրագմամ Մարաշտա կ ե տ վ ու ը ր ա տ ա մ ը ն ը ,  
Եագարըմ Հալէպի նառ իլէ , պէլլէր :

Վէյսի բաշա տէտի՝ աղզընա պագմաղ ,  
Կեովուր հալի յիլ իսլամ պըրագմաղ ,  
Ճանի ա՛վալլէրին տէ պըրագմաղ ,  
Յնոսոււմ երգարըմ գոն իլէ , պէլլէր :

Այս բանքսընդամբն իմ իմաստընդամբն իմ իմաստընդամբն

Պապի՛ բաշա տէտի՛ գրլըճը չէքաիմ ,  
Բերթիզ , Բիւրթիւլ , Նեաիրլի պրագրամ ,  
Պողտողան աշիրէթին աթէչէ եագրամ ,  
Պիլլա՛ի սուսաաւլմ զանիլէ , պէյլէր :

Թարգմ . վէյսի բաշան ըսաւ . «Ուլնիա երթամ ,  
Տեղն աւերեմ , ինչքերն ալ աւարի տամ ,  
Զէյթունի վանքն ալ ատեն մը մնամ .  
Հրով կը վառեմ Զէյթունը , իշխաններ» :

Պապի՛ բաշան ըսաւ . «Մէկն ալ չեմ ճանչնար ,  
Հալէպի վալիին ահանջ չեմ ի տար ,  
Հարիւր յագար դօրք բերես՝ տեղէս չեմ հրերար ,  
Մեզ խօսքերով չէք կրնար առնել , իշխաններ» :

Վէյսի բաշան ըսաւ . «Կ'սրտտան իմ զինւորները ,  
Ռուսները կ'արձակեմ , կը տապալեն լեռները ,  
Երկիւղէս կը դողան , արիւն կուլան Զէյթունցիները  
Հրով կը վառեմ Զէյթունը , իշխաններ» .

Պապիկ բաշան ըսաւ . «Մխաթդ պա՛է քու երդոււմը  
Աղբի պարկին մէջ դրի ձեր մարգը ,  
Մարաշի մէջ չեմ թողուր կեալուրանունը ,  
Հրով կը վառեմ Հալէպը , իշխաններ» :

Վէյսի բաշան ըսաւ . «Բերնին չի նայիր ,  
Կեալուր հալուիւ ալ տաճիկ չի ձգեր ,  
Իր արեան դօրծերը մխաթը չի բերեր .  
Պատիւդ կը քանդեմ բռնի , իշխաններ» :

Պապիկ բաշան ըսաւ . «Աւերը քաշեցի ,  
Բերթիզ , Բիւրթիւլ , Նեաիրլին ալ ձգեցի ,  
Պողտողան աշիրէթը ի հուր վառեցի ,  
Սասաւաճ վկայ , արեան ծագաւ եմ , իշխաններ» :

ԼԵ-

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՐ

(1879) Չէրքէղները կտարելէն երեք օր վերջը Մարաշէն վեց անձէ բաշկացեալ մասնատողով մը եկաւ, որոց երկուքը թուրք, երկուքը լուսաւորչական հայ, մէկ կաթողիկե եւ մէկ բողոքական հայ էր: Ասանք հարցաքննութիւն բանալով տեղեկագիր մը պատրաստեցին՝ հիմնեալ գլխաւորաբար վերաւոր հազարապետին յայտարարութեանց վրայ, որ արդարեւ ճշմարտութիւններ էին: Սակայն Մարաշ զրկուելէ վերջը այնտեղի թիւրք պաշտօնեայք իրենց սովորութեամբ համեմատ խարդախեցին հարազատ տեղեկագիրը եւ իրենց ուղածին պէս երկրորդ մը պատրաստելով՝ Մարաշ դարձու յանձնատողովոյ անդամոց ալ ստորագրել տալին. միայն բողոքականաց ազգապետ Ռուսպեանը ամեն անձնական նկատումները արհամարելով՝ քաջութիւն եւ ազնուութիւն ունեցաւ այս անիրաւութեան դէմ բողոքելու եւ չըստորագրեց ալ: Արկուեցաւ սակայն սոյն անհարազատ տեղեկագիրը Պոլիս եւ Հայէո՛ւր քննութեան առնուելով՝ հարկ դատուեցաւ վերագործնելու Մարաշ Ռուսպեանին ստորագրութիւնը չկրելուն համար, ստոր վրայ պարտաւորեցան ճիշդ տեղեկագիրը դրկել, որով արդարացան զէյթունցիք եւ վէյսի բաշան ալ Մարաշի կառավարչութենէն պաշտօնանկ ըլլալով փոխադրուեցաւ Կեսարիս, ուր մի քանի շաբաթ վերջ, կառավարական շէնքը յանկարծ վրան փլչելով, չարաչար սատկեցաւ, իւր հետ տանելով զէյթունցիներուն քաղցր յիշատակը եւ իւր պատճառաւ կեանթերնին կորուսանող չէրքէղներու ընտանեաց սրտաբուխ օրհնութիւնները:

## ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Սուլթան Համիտի գահակալութեամբ և արեւելեան պատերազմին յառաջ բերած հանգամանքներու շնորհիւ նոր շրջան մը բացուած էր Թիւրքիոյ համար՝ խիստ վըտանգարեր հպատակ քրիստոնէից, մանաւանդ դէպի ազատութիւն ձգտող ժողովրդոց : Զէյթուն ի հարկէ իւր կարեւոր բաժինը պիտի ունենար թրքական կամ — աւելի ճիշդը — համիտական այս նոր քաղաքականութեան մէջ : Բայց կանուխ էր դեռ ժամանակը, ուստի լաւ համարեց սուլթանը պատեհութեան սպասել չար մտադրութեանց գործադրութիւնը յաջողցնելու համար, առ այժմ խաղաղական միջոցներով Զէյթունը սիրաշահելու քաղաքականութեան հետեւելով :

Այս ուղղութեամբ 1879ին սուլթանը առանձին իրատէով Զէյթունը զրկեց Մաղ'ար բաշան և Նուրեան էֆէնտին, որոց ապա ընկերակցեցան Հալէպի անգլիական հիւպատոս ժեներալ Ճերմասայտ և Կիլիկիոյ հայոց Տ. Մկրտիչ կաթողիկոսը, որոնք յանուն կայսերական կառավարութեան ներում հրատարակեցին թէ՛ Պապիկ բաշայի համար՝ զոր քաղաքապետութեան նախագահ կարգեցին, և թէ՛ իւր հերոսական ամբողջ խումբին համար՝ որոց ամեն գործած հակակառավարական արարքները չեղեալ համարուեցան : Բայց յայտցանէ որովհետեւ զէյթունցիք խստիւ կը գանգատէին հետզհետէ իրենց վրայ ծանրացող տուրքերու քանակութեան մասին, այդպէս ուշադրութեան առնելով՝ տուրքերը շատ նուազեցուցին : Իսկ խաղողի այգիներուն համար ըստ հաճոյից տուրք առնելու դրութիւնը ջնջելով՝ տարուէ տարի 9000 գահեկանի որոշ տուրք մը սահմանեցին :

Այնուհետեւ բաշան ընդհանուր ժողով գումարելով՝  
բանախօսութիւն մ'ըրաւ այնտեղ, յորում Չէյթուհի  
նախորդ թուրք պաշտօնէից արարքը քննադատելով՝  
դատապարտեց իրենց անխոհեմութեան և անհեռատե-  
սութեան համար, որոց այս ուղղութեան վերադրեց  
պատահած ամեն անկարգութիւնները: Ապա Չէյթուհի-  
ւոց դառնալով ըսաւ՝ «դուք ալ քիչ ա դ ու (թոյն)  
չէք. թագաւորը իւր առատասրտութեամբ ներեց ձեզ,  
բայց չգիտեմ Աստուած ալ պիտի ներէ»:

Այս բանախօսութենէն վերջը դօրաց համար ձմե-  
րանոց մը շինելու խնդիրը մէջ դրուելով՝ թեր ու դէմ  
չատ մը վիճաբանութիւնք եղան և վերջապէս յաջողե-  
ցան համոզելու Չէյթուհիները, որ ասոր դէմ արգելք  
մը չհանեն, և իրենք անձամբ չէքնին հիմնարկութիւնն  
ընելով(\*) մեկնեցան, նորընտիր դայմագամին խոհեմու-  
թեանը թողլով Չէյթուհի խաղաղութեան պահպանման  
ծանր հոգը: Երբ դօրանոցի շինութիւնը աւարտեցաւ,  
800 ալ կանոնաւոր դօրք դալով՝ դայմագամի հսկողու-  
թեան գործը բաւական դիւրացուց և այսպէս անցաւ Յ  
տարի առանց միջադէպի:

Լէ.

### ՉԵՅԹՈՒՆԻ ՀՐԴԵՀԸ

1884 թուականը շատ աղէտալի եղաւ Չէյթուհի  
համար՝ պատահաւ մեծ հրդեհին պատճառաւ, որ ամբողջ  
քաղաքը մոխիրի վրայ նստեցուց: Կրակը Սուրէնեան  
թաղի Եղեկիէլեանց տան յարգանոցի մէջէն ելաւ պա-

(\*) Սոսյ կաթողիկոսը ինքը դօրանոցի հիմքին ա-  
ռաջին քարը դրաւ, ըսելով հայերուն՝ «աս դօրանոցը  
իրօք ձեր դօրքերուն համար է, այնպէս գիտցէք»:



տանամբ, կէս գիշերին ատենները, և հրշէջ գործիքներու չգոյութեան պատճառաւ ծաւալեցաւ ամեն կողմը, այնպէս որ չորս թաղերէն միայն Շովրօեան թաղի կէսը ազատեցաւ: Գրեթէ ամենն ալ իրենց տան հետ բոլոր գոյքերնին և ուտեստնին ալ կորսնցուցին: Կացութիւնը շատ ծանր էր և վտանգն անխուսափելի՝ եթէ օգնութեան չհասնէին ազգը և կառավարութիւնը կարեւոր գումարներով, որով քիչ ատենէն կենդանութիւն ստացաւ Զէյթուն: Ուրիշ շէնքերու հետ այրեցան նաեւ չորս եկեղեցիք իրենց մէջի անօթներով ու դարդերով, մանաւանդ հին ձեռագիր մատեաններով և այլ կարեւոր հնութիւններով: Եղած նպաստներու շնորհիւ ինչպէս մանաւորաց տուները՝ նոյնպէս Ս. Աստուծածին ու Ս. Լուսաւորիչ եկեղեցիները վերաշինուեցան գեղեցիկ ու փառաւոր կերպով, մանաւանդ առաջինը:

Սակայն բնութիւնը, օձին խայթելու յատկութիւնը միայն տուած է և ոչ երբէք սիրելու, չէր կրնար ուրեմն Համիտի պաշտօնեան բարերարել՝ առանց ցոյց տալու իւր իսկա՛յան բնութիւնը, առանց ի հանդէս բերելու իւր ճշմարիտ դերը, որուն սահմանուած է նա էապէս իւր գոյութիւն ունեցած թուականէն ի վեր, — կեղեքե՛լ, հարուածե՛լ, խայթե՛լ: Այսպէս Տէտէ բաշա, որ պաշտօն ունէր կառավարական նպաստը բաժնելու արկածա՛ար ժողովրդեան, մէկ ձեռքով ցանածը միւս ձեռքով քաղելու համար սկսաւ նեղել արեգինցիները տուրքի համար, իրենց ունեցած պարտքին կրկնապատիկը պահանջելով անոնցմէ, առաջկելով թէ իրենք վրնասուած չեն հրդեհէն: Անոնք իրենց ազքատութիւնը մէջ բերելով կը մերժէին համակերպիլ այս պահանջման, բայց նա կը մնար միշտ անողոք, վերջապէս գործը այն աստիճանին հասաւ, որ արեգինցիք բացէ ի բաց ապրատամբելով՝ իրասխուճբեր կազմեցին ու կարեւոր դիր-

քեր բռնելով՝ ասպարէզ կարդացին բաշային : Այդ ա-  
պրատամբութեան պարագլուխ հանդիսացաւ Շամը-քէ-  
շիշեան անուն երիտասարդը , որ՝ իբրև յաջորդ Պապիկ  
բաշայի՝ հրոսակութեամբ կը շրջէր լեռները : Բաշան զօրք  
դրկեց անոնց վրայ նոյն տարւոյ Յունիս Չփին , բայց  
կարճատեւ ընդհարումէ մը յետոյ զօրքերը յալթուեցան  
ու ստիպուեցան հաշտութիւն խնդրել :

\*  
\* \*

Անցողակի կերպով կը յիշենք այստեղ մասնաւոր  
դէպք մը եւս , որ բացայայտ կերպով ի վեր կը հանէ  
դէյթուեցւոց ազատ կամքի և անկախ բնաւորութեան  
տէր լինելը :

1886ին Բացախ մականուանեալ Փանոսին երկու  
ջորիները վարձել կ'ուզեն թուրք զինուորները՝ Ալպուս-  
թան աազմամթերք փոխադրելու համար . Բացախ չու-  
զեր տալ , զինուորները — թուով 50 — բռնի կ'առնեն  
ջորիները և կը հեռանան . Բացախ զայրացած թշնամիներ  
բու այս բռնաւորական ընթացքէն՝ իւր առնելով 12 ան-  
ձինք կ'երթայ զինուորներու ետեւէն մինչև 2 ժամ հե-  
ռու և անոնց հետ սաստիկ կռիւ մղելով՝ կը յաղթէ չա-  
րաչար . թշնամին երկու վիրաւոր թողլով այնտեղ՝ կը  
փախչին զօրանոցը , փոխանակ Ալպուսթան երթալու ,  
իսկ Բացախ իւր շորիներն առած կուգայ Չէյթուն՝ հան-  
դիստ կը նստի իւր տուն : Կռիւը մղած էին 0 գ-գ ա-  
յասը կոչուած տեղը :

ԼԸ .

ՍԱԼԷՂ ԲԱՇԱ . ԼՐՏԵՍԻ ՄԸ ՍՊԱՆՆՈՒՄԸ

Չէյթունի նախկին գայմագամ Սալէն էֆէնտի բա-  
շայութեան տիտղոսով 1890ին Մարաշ եկաւ իբրև կա-

ըստ վարիչ և բոլոր հրոսակներուն ներման հրովարտակ բերել տալով եկաւ Չէյթուն և իրեն կանչեց զանոնք՝ իրենց պարագլուխ Եամբ-քէշիշեանի հետ, որ իւրաքանչիւրին դրամ բաշխեց 60 մէծիտէն մինչեւ 10 մէծիտ. թանրը կոչուած տաճկարնակ դիւզն ալ անոնց տրամադրութեան տակ դրաւ, որ անոր տասանորդն իրենք ստանան, պատուիրեց միանգամայն Գայմազամ Գատըր պէյին, որ տուրքի համար չնեղէ զանոնք և բոլոր զէյթուցիները, այլ կաշեւի և լածին չափ ազատ թողու։ Այս կարգադրութիւններն ընելէ յետոյ դարձաւ Մարաշ։

Հազիւ չորս ամիս անցաւ ասկէ ու Չէյթուն ալեկոծուեցաւ Օսման-չափուշ անուն տեղացի թուրքի մը պատճառաւ, որ Հաճըն գացած էր լրտեսութիւն ընելու համար և վերադարձին Եամբ-քէշիշեանի խմբակին ձեռամբ սպաննուեցաւ քաղաքին մէջ Պալ-աղբիւրին դէմը, Սաշվերացի մեռելոցի օրը։ Մարմնոյն վրայ 72 վէրք, որմէ բացայայտ կ'երեւէր սպաննողներուն զայրոյթը իւր վարած անարգ պաշտօնին դէմ։

Կսեց Սալէ՛ բաշա այս դէպքը և սաստիկ կատղեցաւ. ոչ միայն կառավարութեան՝ այլ և իւր անձին դէմ նախատինք մը համարելով Լինչի օրինաց այս աստիճան իսիտ գործադրութիւնը՝ եկաւ Չէյթուն և ինքն ալ նոյն աստիճան խտաւթեամբ ուղեց պատժել անոր հեղինակները։ Բայց անոնք իրենց ամուր դիրքերը քաշուած հանգիստ կը սպասէին։

Փաշան իրեն կանչելով հայոց գլխատօրները՝ պահանջեց, որ իրեն յանձնեն այդ հրոսակաւորը, սակայն անոնք պատասխանեցին թէ ատոր համար իրենք խընդիր հանել չեն ուզեր. ինք, որ կառավարութենէն ատոր համար ռոճիկ կը ստանայ, կրնայ բռնել ու պատժել զանոնք։ Այն ատեն Սալէ՛ բաշա զօրանոցը դանդաւած զօրքերով սեպտեմբեր 24ին սկսաւ քալել Ս. Յով-

հաննէս եկեղեցւոյ վրայ, որ ազատանամ էին հերոս-  
ները, բայց ասոնք այնպիսի սաստիկ կրակ մը թափեցին  
թշնամի դօրաց վրայ՝ որ անոնք բաւական կորուստ տա-  
լով ստիգուեցան մեծ գերեզմանոցի քովէն եւ քաշ-  
ւիլ: Այնուհետեւ հրոսակները կառավարական շէնքն աը  
գրաւելով՝ ազատեցին այնտեղ գանուղ բոլոր բան-  
տարիւնները: Այս բանը աւելի եւս բորբոքեց քաշային  
բարկութիւնը, տեսնելով թէ Չէյթուսի ժողովուրդը  
տրամաշիր չէ պատերազմելու՝ սխաւ ալ ու ձա՛ն ձեր-  
բակալութիւններ ընել որու որ հանդիպեցաւ, միւս  
կողմէն Չէյթուսի ապագա՛ն ալ մեռցնելու համար ան-  
լուր ու խուժուժ միջոց մը ձեռք առաւ:

Ինչպէս Փարաւուն Իսրայէլի նորածին մանկիկները  
խեղդելու համար գալտնի իրահանգ տուած էր դայ-  
եակներուն, Իժոխքի այս գաղանարարոյ ձեան ալ իրա-  
հանգ տուած էր Չէյթուս եկող Մարաշի Ապուճուս բը-  
ժիշկին, որ պատուաստի միջոցաւ թունաւորէ Չէյթուս-  
ցի մանուկները: Այս անագորոյն գաղանութեան գո՛-  
գնացին 500է աւելի անմեղ մանկաւորք, որուն չկարո-  
ղանալով հանդուրժել այլ եւս ժուշովուղը՝ իւր առաջ-  
նորդ կարասկտ սրբազանի միջոցաւ հեռագրեց Բ. Գը-  
րան և Պատրիարքարանի՝ բողոքելով նորա թէ՛ այս և  
թէ՛ սերիշ ամեն չարութիւններուն համար: Ասոր վրայ  
Սալէ՛ պաշտօնանկ ըլլալով՝ իրաման եկաւ իրեն, որ  
Տէրիդօր մեկնի, բայց նա Մարաշ իջնելով գործին տար-  
բեր գոյն տալու համար ինք ալ հեռագիր տուաւ Բ.  
Գրան ալ և ալ զրդարտութիւններ կուտելով գլխա-  
ւորաբար եկեղեցականաց վրայ: Չանոնք ընդհանրա-  
պէս կը ներկայացնէր իբրև խռովարա՛ւ և բոլոր հրո-  
սակներու պարագլուխ ու թելադիր, և նոյն իսկ Տըբ-  
նուղի վանքին նոյն ատենուան վանահայր Բարթողի-  
մէոս վարդապետին հողային խնդրոյ մը համար Ատանա

դատաւարութեան երթալը յեղափոխական խորհուրե-  
րու վերադրելով՝ կ'ամբաստանէր զայն :

Գուռը կարեւորութիւն տալով իւր խարդախ պաշ-  
տօնէին նենգամիտ հեռագրին, ձերբակալման հրաման  
արձակեց անոնց համար, ուստի Բարթոլիմէոս վարդա-  
պետէն զատ՝ որ արդէն բռնած ու բանտարկած է-  
ին, հետզհետէ կարապետ եպիսկոպոսը, Նիկողոս ե-  
պիսկոպոսը, Գիգոր վարդապետը, Տ. Նշան և Տ. Ղե-  
ւնդ ձէնանեան քահանաները, Անդրէասեան Մարտիրո-  
սը, Կիւլիվանէսեան մանտէսի Յարութիւնը, Մերկէնեան  
Մ. Գէորգը, Պօղօղլեան Յարութիւնը, Մօզեան Փանոսը,  
Տիրացուեան Աստուածատուրը և Եղիսաբէթ անուն օ-  
րիորդ մը — ընդամենը 33 անձ — ձերբակալելով Հա-  
լէպ տարին բանտարկեցին, ուր դատելով ոմանք Տ,  
ոմանք ԱՅ տարուան, մի քանիները մշտնջենական թիա-  
պարտութեան, Տ. Ղեւոնդ քահանան ալ ի մահ դատա-  
պարտեցին : Իսկ Չէյթուհի աւագ քահանայ Տ. Ղազա-  
րի որդին Պ. Ամբաստ-Բիւրատ, որ երեք տարի Սամսոնի  
մէջ իւր հիմնած դպրոցը վարելէ յետոյ հայրենիք վե-  
րադարձած ատեն իւր տիկնոջ ու 4 տարեկան զաւակի  
մը հետ Եարփուզի մէջ՝ ձերբակալուած ու Մարաշ դրկը-  
ւած էր, (ուր մէկ ամիս ետքը բանտին մէջ ծնած էր իւր  
երկրորդ որդին) այն ալ Հալէպ փոխադրելով դատե-  
ցին ու թէև չկրցան ո՛ր և է բան հաստատել վրան, սա-  
կայն ընդհանուր դատախազը ատեն ճիգ թափեց զայն  
ալ դատապարտել տալու համար՝ իբր հայ և միանգամայն  
զէյթունցի, մանաւանդ դասատու ըլլալը բաւական  
յանցանք համարելով իրեն, և յաջողեցաւ Յ տարուան  
պատժոյ դատաստարտել տալու զայն, որ այդ պատիժը  
ամբողջովին լրացնելէ յետոյ միայն կրցաւ ազատիլ :

Սա բանտին մէջ ցոյց տուած իւր գործունէութեամբ  
և անիրաւութեանց դէմ մղած իւր պայքարներովն սար-

աափ ազդեց կառավարութեան. բանտի մութ անկիւն-  
ներուն մէջ գործուած ու ցայն վայր լոյս աշխարհին  
անժանօթ մնացած ամեն խժեթութիւնք հրապարակ հա-  
նելով մինչև Պ. Կլատտիօնի ականջը հասցուց ու անկէ  
միջիթարախան պատասխան իսկ ստացաւ: Ս.յառ հան-  
դերձ մի քանի անձինք բանտային խտութեանց շկա-  
րողանալով դիմանալ՝ մեռան (օրինակ, պոլսեցի Վրթա-  
նէս վարժարպետ) և միւսներն ալ յետ ժամանակաց նե-  
րդութեամբ արձակուեցան:

Պէտք է այս տեղ յիշել, թէ Համիտեան արդարու-  
թիւնը 500 ոսկւոյ պատկառելի դումարի մը շնորհիւ,  
դոր իբրև համեղ կրծսօն յաջողած էր խլել մեր 3 մե-  
ծաւորներէն, անդարտ արձակեց 22 անձինք մէկուկէս  
տարուան բանտարկութենէ յետոյ:



Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

Ա-

ՋԵՅԹՈՒՆԻ ԳԱԻԱՌԱԿԸ

ՄԵԾ ԳԻԻՂԵՐ

Աւագ-կալ . (տաճկ . Մխալ) — Արեգինս (տաճ . Ալապաշ) . — Ծրնուզ կամ Խժոտ . (զուտ հայաբնակ) :

ՓՈՒՔՐ ԳԻԻՂԵՐ (զուտ հայաբնակ)

Խէպի , Բէլլօր , Բէլիւնք կամ Ֆէնկ , Ղօղջուղաղ , Էյլէնճէ , Աճը-թէյէկինց (աղարակ) , Խընըխէօղ (աղարակ) , Հաճի-տէրէ :

ՓՈՒՔՐ ԳԻԻՂԵՐ (տաճկաբնակ)

Պէշէն , Բէթման , Սարը-կէօղէլ կամ Բիւրէճիկ , Գապագ-թէփէ , Մալաթճա , Ալիշար , Ամպարճըք , Ալըլ-օպասը , Գարա-թուր , Սօյսալը , Էրիճէկ կամ Էսէնտէրէպօղաղը , Թօմպագ , Գարամանլը , Բերդուս , Պէյ-թէմուրլը , կամ Պայ-Տէմիլլի , Տէօնիւքլէր կամ Տօնիկենք , Չուգուր-հիսա : կամ Կանչի՛ Տէօնկէլ , Թանլըր :

Բ .

ԱԻԱԳ-ԿԱԼԻ ՇՐՋԱԿԱՅԻԸ (\*) (աղարակներ)

Խէրէզէճ (Խարաղաճ) , Չաթալ-աղբըր (Երկճիւղ աղբիւր) , Գարու-գայա , Ղուււր , Ալապօղան կամ Անդրէասինք) , Թէքիր , Առխըղճա , Գայա-փոււնար , Եղիինք , Աղարիկոնք , Ղաղբըրինք , Դէգէլիւրինք , Սիսնէ , Եայլաճուխ :

---

(\*) Ասոնք զուտ հայաբնակ են , ընդամենը 130 տուն բնակիչներով :

Գ.

ԱՐԵՎԻՆԻ ՇՐՋԱԿԱՅԻՆ (ազարակներ)

Զուտ հայաբնակ , (ընդամենը 300 տուն բնակիչներով)

Աւագլօր կամ Աւագինք , Եղիաինք կամ Ղալըճինք ,  
Եկանինք , Թօփալինք , Տանտանինք , Սիւլիինք (Սեւեանք)  
Մրխայիլինք , Գիւղիւրինք , Ղըրմանուկինք , Մնայա-  
կանինք , Քէօնպէճինք , Քէօնտէլինք , Հանէսինք , Մա-  
կարինք , Մէրկէրիոսինք , Քիղթիկինք , Աղնոզինք , Վար-  
դանինք , Մկրտիչինք , Սարգիսինք , Թարխանինք , Չի-  
լինք , Անանիկինք , Ղայնատինք , Ջահանինք , Իօի-  
փինք (Յովսէփեանք) , Ճուլֆինք , Սահակինք , Ելիինք ,  
Մըխսը-փէնիւսինք , Մաճառինք , Պարոտանինք , Մինա-  
սինք , Ղազրինք , Ղուրտեկինք , Մըխսը-Գանիլինք , Ետլ-  
լինք , Խայեալինք , Մալխասինք , Մէնարիկինք , Բէլի-  
վանինք , Թիւրիւսինք (Թորոսեանք) , Ճօ՛ստուրինք ,  
Ղըլլինք , Չիլի-Մարտիրոսին ազարակը :

Գ .

ՖՐՆՈՒՉԻ ՇՐՋԱԿԱՅԻՆ (ազարակներ)

Զուտ հայաբնակ (ընդամենը 300 տուն բնակիչներով)

Կուչոզ , Աւինի կամ Հին-գիւղ , Ղափու-սալըխ ,  
Շուղուր , Կանչի կամ Զուգուր-հիսար(\*) , Ղըշլինգըր ,  
Ղարա-թութ , Ծըմօկ աղբըր (Ծմակի աղբիւր) , Պայեա-  
ղը , Պուղուրինք , Պօզօղլինք , Թէլէմէլիք , Վասսա-  
պինք , Խուղուզինք , Մերգէրիկ :

---

(\*) Կանչի կամ Զուգուր- Հիսար երկու ուրոյն մա-  
սերէ կը բաղկանայ . տաճկաբնակ մասը անմիջապէս Չէյ-  
թունի կը պատկանի , իսկ հայաբնակ մասը , Ֆրնուզէն  
գաղթած ըլլալով , Ֆրնուզին կը պատկանի :



## Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն

### ՁԷՅԹՈՒՆԻ 1895Ի ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մենք այս տողերով պիտի աշխատինք քիչ չստ  
թուել այն դիտար պատճառները, որոնք ցաւալի ա-  
ռի՛թ եղան Ձէյթուէն կրկին պատերազմի թատերաբեմ  
դարձնելու, 1893 թուին: Ձէյթուէն մէջ կ'իշխէին մը  
շարք Գայմագամներ, որոցմէ մէկն եղաւ Թէֆիք պէյ,  
որուն զազրեցի բռնակալական գործոց մանրամաս-  
նութեանց մէջ չիյնալու համար, պէտք է ըսենք՝ որ  
սա պաշտօնանկ եղաւ կիլիկիոյ հանգուցեալ Մկրտիչ  
կաթողիկոսի ազգու բողոքներուն շնորհիւ և երկար  
ժամանակ անգործ թափառեց Հալէպի փողոցներուն մէջ:  
Այս բանը հատարուեցաւ 1893 ին: Ասոր տեղ յաջորդեց  
Պէյլանու Գայմագամը, որ 12 օրէն յետոյ հիւանդու-  
թեամբ մեռաւ, առանց իր խեղական գոյնը կարենալ  
ցոյց տալու:

Վերջինիս փոխանորդարար յաջորդեց տեղւոյ գա-  
տին (թուրքաց շէրիի օրինաց հսկողը, կրօնապետ): Այս  
մարդ 30 տարեկան մուսուանդ թուրք շրջանաւարանե-  
րէն էր. սա երբ կրօնապետութեան հետ մէկտեղ գայ-  
մագամութիւն ալ ձեռք բերաւ, իւր խորամանկ ան-  
գթութիւններով նախորդները գերազանցեց և նորա-  
նոր տուրքերով և այլանդակ խիստ պահանջներով  
սկսաւ նեղել ժողովուրդը: Սա թէ՛ իւր լրբութեամբ և

Թէ՛ դօրքերի թոյլ տալով ջանաց փճացնել Չէյթունի մաքուր բարոյականը և ընտանեկան պատիւը որոնք շատ բարձր տեղ կը բռնեն Չէյթունի մէջ : Այս բաներուս իբրեւ սպացոյց բաւական է մէջ բերել մի քանի դէպքեր , որոնք կը կատարուէին կամ այդ Գատի-գայ-մադամի ձեռքով և կամ անոր անուղղակի թելադրութեամբ : Այս դատինն այնքան չարացաւ իւր հարկանաւարութեան մէջ , որ մի աղքատի երեք էշ վերցուց , որոնց ամէն մէկը կ'արժէր 200ական դանեկան , և ի հաշիւ տէրութեան գանձուն երեքը մէկտեղ ծախսեց Մարաշի թուրքերուն 50 դանեկանով : Չէյթունի Ազգ. խառն ժողովը արդար զայրոյթ դգաց այդ բանի համար և Ա.ռ.աջ . փոխանարդ . Տ . կարապետ քահանայի միջոցաւ բողոքեց դատիին թէ «այդ բանը շատ մեծ անգթութիւն է» . և պահանջեց որ այդ էշեր տիրաջ ետ դարձուին . իրենք կը վճարեն աղքատի 50 դրշ . պարտքը . հակառակ պարագային սպառնացան դատիին՝ որ «եթէ իրենց այդ օրինաւոր պահանջին չլսէ . մեծ փորձանքներ կուգայ իւր գլխուն» :

Սակայն գաղանացած դատինն պատասխանեց . «ես հրահանգ ունիմ իմ սիրելի թագաւորէս՝ այդպէս վարուելու , որպէսզի դուք ալ գրգռուիք մի խլրտում հանէք , այն տանն թագաւորը բարկանայ և դձեղ ալ Սասնոյ տառասին (վիճակին) հասցնէ :

Ղատինն յիշեցնելով Սասնոյ կատորածին թարմ խրնդիրը՝ երկու գլխաւոր հրէշաւոր միտք ունէր , նախ՝ ի սրտէ կը ցանկար խռովութեան պատճառ մը գտնել և Չէյթունցիները ջարդել տալ , երկրորդ՝ կը մտածէր այսպէս սարսափեցնել անվեհեր Չէյթունցիները , որպէս զի իւր շարագործութիւններուն աչք փակեն և լռեն : Սակայն այս տխուր և լիրը յայտարարութիւնը հակառակ սպաւորութիւն թողուց քաջ Չէյթունցիներու վրայ :

Անոնք զատիի ոճրագործ բերնէն կրկին լսելով Սասնոյ նախատակներուն կոտորածը՝ վրէժխնդրութեամբ բորբոքւեցան և սկսան միջոցներու վրայ մտածել : Այս դէպքը պատահեցաւ 1895 թուականի Մայիս ամսուն, թէև հայեր կը մտածէին իսկոյն լաւ պատասխան մը տալ զատիի այդ շփացած պատասխանին, սակայն ինչ ինչ պատճառներով կը սպասէին իրենց ցանկալի դեկտամբուն : Մանաւանդ քաղաքական հարիզանի վրայ կ'երեւնային լուսատու ամպեր, որոնք կը ստիպէին անհամբեր Ձէյթունցիները մի քիչ ալ սպասել :

Ինչպէս ըսինք, թէ՛ տեղական այդ շարագործ զատիի, թէ՛ կառավարական այլևայլ անդամներու և թէ՛ զօրքերու ձեռքով անպակաս էին քստմնեցուցիչ դէպքեր, որոնք պայթեցուցիչ բուռներու նման խռովութեան և ապստամբութեան կրակը կը վառէին Ձէյթունի խաղաղ աղգարնակութեան մէջ : Ղատիի բռնակալական գործէն քիչ յետոյ առաջ եկաւ մի ուրիշ դէպք, որ իբր գրգռիչ պատճառ պակաս չէր առաջինէն : Տեղւոյն Մալմիւտիւրիի (Ս. քունական դանձու տեսուչ) մեծ որդին մի անգամ Ակ ըսուած աղբիւրի վրայ, որ կէս ժամ հեռի է քաղաքէն, ակնարկներով և սուլոցներով կ'անարդէ Ձէյթունցի մանկամարդ հարս մը, սակայն արիասիրտ հարսը պարտախնները (կուժ) վար դնելով կը թկսի հայնոյել ու քարկոծել թուրքը, ըսելով. «Իբր սրիկայ, ինչ որ կը բերէք ուրիշ տեղեր մեր քայրերու գլուխ, կ'ուզէք այնտե՞ղ ալ գարծ դնել, չգիտէ՞ք որ այստեղ Ձէյթուն է և ձեզ պէս շուներուն երես չենք տար մենք. սպասիր, մարդուս ըսեմ, տես ինչ կը խաղայ քու գլխին» : Հարսը շիտա՛յ տուն կը դառնայ և եղելութիւնը կը պատմէ իւր էրկան : Մարդը զինուելով աղբիւրի գլուխը կը վաղէ լիբր սրիկան պատժելու, սակայն նա շատոնց չքացեր էր այն տեղէն : Երիտա-

սարդը չի հանգստանար, գիշեր ժամանակ գաղանի Մալմիւտիւրիին տունը կը մտնէ և պատէն կախուած բոլոր զէնքերը կը հաւաքէ և իր տուն կը տանի: Ասիկայ մեծ ցոյց մընէր որ ըսել կ'ուզէր, եթէ մի անգամ ալ այդպէս լրբութիւններ ընելու ըլլաք, զձեզ անով տեղով սրէ կ'անցնեմ: Ասոր համար ալ կառավարութիւնը հետեւեալ օր՝ կարգ մը անմեղ երիտասարդներ բանտարկեց: Ան տան հարսի էրիկը կառավարութեան ներկայացաւ և Մալմիւտիւրիի տղուն անբարոյակահութիւնը մէջտեղ բերելով, ըսաւ որ զէնքերը ինք գողցած է: Ղատին բարկացաւ և զինքը բանտարկեց: Ազգայիները պահանջեցին որ Մալմիւտիւրիի տղան բանտարկուի և կամ աքսորուի այդ տեղէն, սակայն Ղատին դարձեալ յամառեցաւ, այն տան հայեր ի ցոյց՝ դատի ննջասենեակի օճախէն (բուխերիկ) հրացան պարպեցին, ձիուն պոչը կտրեցին սկսան հրապարակային կերպով ծաղրել և անսարգել զինքը, որ վախէն մի շարաթ հիւանդացաւ և չէր կարող դուրս գալ: Սակայն հաղիւ անցաւ մի քանի շարաթ, պատահեցաւ աւելի մեծ դէպք մը:

Զէյթունի Պօղպայիր թաղեցի Շերամեան Պօղոսի տղան, երկրորդ անգամ ամուսնացեր էր մարաշցի մանկամարդ գեղեցիկ կնոջ մը հետ, ինչպէս էր եղեր, այս կինը իւր բաց երեսութեամբ ծանօթացեր էր տեղական քանի մը զիւորներու հետ: Տեղացի երիտասարդներ տեսնելով որ զինուորներ կը յաճախեն այս կնոջ տունը, ձու առնելու պատրուակով, նախ քաղաքավարի կերպով կը բողոքեն դատիին և հաղարապետին, որ զինուորները զգուշացնեն և այդ կինն ալ աքսորեն Մարաշ: սակայն դատին իր ծանօթ վաւաչութեամբը կը պատասխանէ, «Ի՞նչ ընեմ, միթէ զինուորներն ալ մարդ չեն, եթէ այս կին չի սիրեր զինուորներ, թող չթողու որ եր-

Թան իւր տուն» : վերջապէս երբ հայերը շատ կը պնդեն ,  
զատին կը պատասխանէ որ «ես ուրիշին կինը չեմ կա-  
րող աքսորել» . հայերը այս տխուր պատասխանը առ-  
նելով դատիէն , կ'ըսեն . «լա՛ւ , սպասեցէք թէ ինչ կը  
ընենք» : Չ'անցնիր մի քանի օր , հայ երիտասարդներ  
այդ տան մէջ կը բռնեն մի քանի զինւորներ եւ մի լաւ  
դաս տալով (ծեծելով) կ'ըսեն , «գէ , գացէք ինչ որ տե-  
սաք պատմեցէք ձեր աղաներուն» . բայց զինւորները ի-  
րենց վախէն մէկու մը չեն պատմեր :

Անցնելով քիչ մը Ժամանակ , դարձեալ անբարոյա-  
կանութեան շարունակութիւն կը տեսնուի : Այս ան-  
գամ զէյթունցիք կը դիմեն վերջնական նպատակին . մի  
քանի երիտասարդներ հաւաքուելով՝ գաղտնի , գիշերով  
կրակ կը ձգեն այդ տունը այրելու . ընտանիքը լեղա-  
պատառ դուրս կը փախչի , իսկ երեք երիտասարդները  
«հրդեհ» է ըսելով կը սկսին տունը հիմնիկեր քանդե-  
նքպէս զի կրակը չը տարածուի միւս տուներու վրայ :  
Երկրորդ օրը կառավարութիւնը քննելով խնդիրը՝ իւր  
սուր հաստատութեամբ այս եղակացութեան կուգայ որ  
տեղացիներ դիտմամբ այրած են այդ տունը՝ որ աղա-  
տին այդ կնսջ գարչելի ներկայութենէն : Այս բանը կա-  
ռավարութիւնը իրեն նախատինք համարելով՝ բռնեց  
10-12 աչքի իյնող երիտասարդներ , բանտարկեց , ըսելով  
«երբ հրդեհ էր ինչո՞ւ մեզ լուր չտուիք» : Ասոր վրայ  
հայերը աւելի եւս յուզուեցան եւ սկսան այլեւայլ խիստ  
բողոքներ եւ ցոյցեր ընել . վերջապէս յաջողեցան այդ  
փճացած կինը հեռացնել Չէյթունէն , սակայն երիտա-  
սարդները չկրցան աղատել բանտէն : Հայերը կառավա-  
րութեան հետ այսպէս լարուած էին երբ դուրս եկաւ մի  
աւելի գրգռիչ խնդիր :

Չէյթունի դօրքերու հաղարապետ ճիաղիմ էֆէն-  
աին , թէ՛ հայերու համարձակ բողոքներէն վախցած կամ

այլ ի՛նչ չար դիտաւորութեամբ, բարձրագոյն հրամա-  
նաւ, սկսաւ զօրանոցի չորս կողմը մեծ խրամներ բա-  
նալ: Հայեր ուժգնութեամբ բողոքեցին այս բանի դէմ.  
բայց երբ իրենց ձայնը անլսելի մնաց, սկսան յայտնի  
ցոյցեր ընել: Ասոր վրայ Մարաշի կառավարիչը՝ հայերը  
հանդարտեցնելու կամ լաւ ևս է ըսել, քնացնելու հա-  
մար, թէ՛ դատին, թէ՛ պաշ քեաթիօղը և թէ Մալ միւ-  
տիւրին պաշտօնանկ ըրաւ. կամ աւելի ճիշդ, աւելի  
բարձր պաշտօնով ուրիշ տեղ զրկեց: Ասոնց յաջողեցին  
բողորովին նաք պաշտօնեաներ, դատի տեղ Գայմազամ  
եկաւ Ալիսի պէյ: Այս նոր Գայմազամը օրով մը քանի  
չաքաթ հայեր յոյս ունեցան որ խաչազուծիւն պիտի  
տիրէ Չէյթունի մէջ, բայց շուտով համազուեցան որ  
բողորովին սխալեր են: Այս Գայմազամն ալ սկսաւ ծա-  
նօթ դատիի փողը հնչեցնել և այլ և այլ միջոցներով  
ժողովուրդը նեղել: Այն ատեն Չէյթունցիք իրենց վա-  
ղեմի սովորութեան համաձայն սկսան այս Գայմազամը  
և տեղական կառավարութեան դէմ ալ յայտնի և հա-  
մարձակ ցոյցեր ընել, որոնք քիչ ժամանակէն այնպիսի  
բարդ դրութեան հասան, որը պատմութիւնը մկրտեց  
Չէյթունի 1893ի պատերազմ անունով: Այս միջոցնե-  
րուն՝ այսինքն՝ Յուլիս ամսոյ վերջերը, երբ հայ ժողո-  
վուրդը այսպէս բորբոքուած և լարուած դրութեան մէջ  
էր, Արեգին գիւղը յայտնուեցան մի քանի օտար հա-  
յեր: Մարաշի կառավարութիւնը երբ հոտ առաւ որ օ-  
տարականներ կան Արեգին գիւղի մէջ, իւր Գըր—սեր-  
տար (չրջուն զինուորական) Չէրքէզ Ասլան պէկը խուճք  
մը սասիկաններով հոն զրկեց, կերպով մը այդ օտա-  
րականները ձեռք բերելու համար: Ասլան պէկ Օգոս-  
տոս 3ին (\*) եկաւ Արեգին տուրք պահանջելու պատրը-

(\*) Պէտք է գիտնալ որ մենք ամսաթիւեր կը  
դորձած ենք մեր ամբողջ պատմութեան մէջ ըստ հին  
տոմարի:

նւակով. գիւղացիները սլառասխանեցին՝ որ «այժմ դը-  
քամ չունինք, երբ ունենանք՝ կը վճարենք»: Ասլան  
պէկ բարկացաւ և ուղեց ճեճել և բանտարկել Սաչեր  
քէնեան (գիւղապետ): Տեղն է ըսել որ այս Սաչեր քէն-  
եան համբաւաւոր կարապետ քէնեայի որդին էր, որ  
1862 թուին մեծ անուն և համբաւ հանած էր Աղիզ բա-  
չայի պատերազմին, Քէթման գիւղի մէջ. (երկար ժամա-  
նակէ ի վեր թէ՛ ասոնց տունը և թէ ներկայ արժանաւոր  
յաջորդ Սաչեր քէնեան մեծ համարում կը վայելէին  
ժողովրդէն): Անա թէ ինչու Արեգիւնցիներ ոտք ելան և  
Ասլան պէկը անարդանօք գիւղէն վաճակեցին. իսկ երբ  
Ասլան պէկ բացարձակ յայտնեց որ այդ տեղ օտարներ  
կան և պէտք է յանձնուին իրեն, այն ատեն գիւղացի-  
ներ ըսին. « մենք այժմ ո՛չ տուրք տալու ժամանակ  
ունինք և ո՛չ ալ կրնանք մեր սիրելի հիւրերը ձեր ան-  
գութ կառավարութեան ձեռք յանձնել. աւելի լաւ է  
քոյրս միասին ջարդուինք քան թէ այդ վատութիւնը  
կատարենք »: Ասլան պէյ կորագլուխ և ամօթապարտ  
ետ գնաց:

Անցաւ մի քանի շաբաթ, Օգոստոս 30-ին Սաչեր  
քէնեան կրկին Ջահան գետի եզերքը թեթեւ ընդհա-  
րում մը ունեցաւ Չախալցի ըսուած Աշիրատ քիւրտե-  
րու հետ, որոնք Ասլան պէկի թելադրութեամբ գաղանի  
խումբով եկած էին Հայոց դրութիւնը լրտեսելու և օ-  
տարանայերը ձերբակալելու համար: Փակադժի մէջ  
պէտք է ըսենք՝ որ այս քիւրդեր հայոց հնազանդ էին  
և միշտ ձի, կով ընծայելով հայերուն, թոյլտուութիւն  
կը ստանային Եայլա (Սմարանոց) գնալու: Սակայն  
այժմ Մարաչի կառավարութեան դրդումով կ'ուղէին  
նոր պատուոյ և փառքի հասնիլ:

Այս միջոցներուն՝ Արեգին գիւղի և Ջահան գետի ե-  
զերքի դէպքերը ևւ այն տեղեր երևան ելած նորեկ օ-

տարածուածներու լուրը խլրտում եւ իրարանցում ձգած էին Չէյթուէնի ժալորդեան մէջ : Չորս իշխաններու ներկայացուցիչ պատկառելի ծերունի Եօլրոյեան Հազար (Ղազար) իշխան իրեն կանչելով Ֆրնուղի փոխ. վանահայր Տ. Բարթոլոմէոս վարդապետը, դադանի հրահանգներով դրկեց ի Գարանլըզ-Տէրէ ըսուած տեղը՝ նորեկներու հետ բանակցելու և ճշգրիտ եղելութիւնը իրեն տեղեկագրելու համար : Վարդապետը հնազանդեցաւ ժողովրդական այս քաջարի իշխանի հրամանին և դադանի գնաց ի Գարանլըզ-Տէրէ :

**ԳԱՐԱՆԼԸԳ-ՏԷՐԷԻ ԺԱՂՈՎԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ**

Չէյթուէնի գիւղապետած հաւաքումն ի Գարանլըզ-Տէրէ (\*) 1895 սեպտ. 16ին օտարականաց հարցաքննութիւնը. Գիւղապետաց խորհրդակցութիւնը կառավարութեան հետ պատերազմելու որոշումը. Տէր Բարթոլոմէոս վարդապետի ատենաբանութիւնը :

Մի կողմէ ԾՅԻ սկիզբէն ի վեր Հալէպէն մինչեւ Չէյթուէն Հայոց վրայ ի գործ դրուած թրքական անարդար դատաստանը և հարստահարող միջոցը, միւս կողմէ հայաբնակ գաւառաց մէջ թիւրք ժողովրդեան կողմէ ի գործ դրուելու համար Բ. Դոնէն դրկուած խժդժութեանց հրահանգներ՝ թէեւ սթափեցուցած էին Չէյթուէնցիները և տեղի տուած խորհելու իրենց երկրի պատուոյն և ազգութեան վրայ, մասնաւորապէս սա-

(\*) Գարանլըզ տէրէ (մութ ձոր) ըսուած տեղը Չէյթուէնէն 6 ժամ հեռու՝ հարաւային կողմն է :



կայն Յ հայ օտար հիւրերուն գալուստը առիթ առնին  
 Հազար իշխանին՝ Բարթողիմէոս վարդապետը դրկելու  
 Չէյթունի գիւղապետները հաւաքելու ի Մութ ձոր,  
 հասկնալու համար անոնց պաշտօնը և խորհելու իրենց  
 վերջին կացութեան վրայ: Ահա թէ սրոնք էին ի Մութ  
 Չոր հաւաքեալները:

Ֆրնուզի վանահայր Տէր Բարթողիմէոս վարդ. 40  
 Ֆրնուզցիներով, Արեգին գիւղէն Սաչեր քեհա՝ 30 Ա.  
 րեգինցիներով, Աւաղկալ գիւղէն Գոճաեան Յարութիւն  
 Աղա 30 Աւաղկալցիներով: Հոն ատեան կազմեցին 100  
 անձինք, իրենց նախագահ՝ ունենալով Ֆրնուզի վանա-  
 հայր Բարթողիմէոս վարդապետը և ատենապետ Աւաղ-  
 կալ գիւղի Գոճաեան Յարութիւն Աղան:

Ատեանը բացուած էր Մ. Բարթ. Հօր Ս. աղօթիւք:  
 Հաւաքման նպատակն էր, ինչպէս վերեւ ըսինք,  
 կացութեան վրայ խորհիլ, և գործելու եղանակը վճռել:

Ըստ այսմ՝ իրրեւ սկիզբն այս խորհրդակցութեան՝  
 ժողովը պատշաճ դատելով նախ հասկնալ Յ օտարակա-  
 նաց ո՞վ ըլլալը, ուրի՞շ գալը և ինչ պաշտօն և նպա-  
 տակ ունենալը, կանչեց զանոնք իւր ներկայութեան:

Ատենապետ. Յարութիւն Աղա, օտարականաց ուղ-  
 դելով խօսքը.

— Բարի եկեր էք. Գուք ո՞վ էք, պարոններ.

Գաղափարական քարոզիչք:— Մենք ընկերութեան  
 մը գործիչներն ենք.

Յ. Աղ.— Գանի՞ անձ էք.

Գ.— Վեց.

Յ. Ա.— Ո՞ր ազգութեան կը պատկանիք.

Գ.— Հայ ազգութեան.

Յ. Ա.— Հայ ազգութեան ո՞ր կրօնին.

Գ.— Հայաստանեայց, այն է՝ Ս. Լուսաւորչի ուղ-  
 դափառ կրօնին.

Յ. Ա.— Անուանիդ ի՞նչ է.

Գ.— Աղասի, Հրաչեայ, Ապահ, Նշան, Մլէն, Կարասիտ.

Յ. Ա.— Պետերնիդ ո՞րն է.

Գ.— Աղասին է.

Յ. Ա.— Դո՞ւ ես ասոնց պետը (Աղասիին ուղղելով խօսքը).

Գ.— Այո՛, ես եմ.

Յ. Ա.— Անուանիդ կե՞ղծ, թէ աւազանի անուն է. ճշմարիտ խօսէք.

Գ.— Աւազանի անուն է.

Յ. Ա.— Ամէնքդ մե՞կ քաղաքէ, թէ տարրեր քաղաքներէ էք.

Գ.— Տարրեր քաղաքներէ.

Յ. Ա.— Ո՞ր քաղաքներէն էք.

Աղասի.— Այդ մանրամասնութիւնները չենք կրրնար յայտնել, որովհետեւ ընկերութեան երդուեալ անդամներ ենք.

Յ. Ա.— Ես կասկած ունիմ Ձեր անուանց ճշդութեան վրայ ալ, թէեւ ճշմարիտ խօսքը հարցուցի.

Աղասի.— Անուանիս ուղիղ խօսած ենք, բայց ծննդավայրնիս չենք ըսեր.

Յ. Ա.— Ծննդավայրնիդ անյայտնի պիտի մնայ, փոյթ չէ, թէ անուանիդ ալ ըլլայ ուղիղ կամ կեղծը: Ըսիք թէ մենք ընկերութեան մը գործիչներ ենք, ի՞նչ ընկերութիւն է այդ և ո՞ւր կը գտնուի.

Աղասի.— Լոնտոն, Անգլիոյ մայրաքաղաքը.

Յ. Ա.— Ի՞նչ է այդ ընկերութեան նպատակը, ո՞վ է անոր վարիչը.

Աղ.— Նազարէիեան և նպատակն է ազգը փրկել համիտեան բռնակալութենէն.

Յ. Ա.— Ի՞նչ եղանակաւ.

Աղ. — Դրամ հաւաքելով, և ի ձեռն առաքելութեան հայկական գաւառներու հայերուն զրկելով, որ զէնք ևւ ուտեստ գնեն, և այս կերպով զօրացած բռնութեանց դիմադրեն.

Յ. Ա. — Մինչև ո՞ր աստիճան.

Աղ. — Մինչև սպաննուելու և նա՛ստակուելու աստիճան.

Յ. Ա. — Լա՛ւ, հայր ունեցաւ զէնք և ուտեստ և տեղ տեղ բռնաւոր թիւրքերու հետ մարտնչելով սպաննեց և սպաննուեցաւ, հետեւանքը՞.

Աղ. — Չորս մեծագոյն պետութիւնք՝ հայոց օգնելու խոստովը տուած են, թրքական լուծը իսպառ թօթափելու և առանձին կառավարուելու համար.

Յ. Ա. — Ի՞ր չորս պետութիւնք.

Աղ. — Ռուսիա, Անգլիա, Գաղղիա և Իտալիա.

Յ. Ա. — Շատ կանանաւոր և օգտակար ընթացք, եթէ ենթադրութիւն չէ. ինձ սակայն անհաւատալի կը մնայ եւրոպական չորս պետութեանց հայոց ի նպաստ գործելու կարողութիւնը.

Աղասի. — Ի՞նչ կ'ըսես, ուրեմն աշխարհավարութեան և քաղաքականութեան վրայ լուր չունի՞ք. այսօր բոլոր Եւրոպա Հայկ. խնդրոյն վրայ կը խորհի և յիշեալ չորս պետութիւնք միարան անոր յաջողութեան օգնելու արամադիր են. արդէն Իսկէնտէրունի ծովախորշը լեցւած են Անգլիոյ մարտանաւերով և հազարաւոր զօրքերով, ո՞չ ապաքէն զմեզ զրկողն ալ այն է.

Յ. Ա. — Չձեզ Անգլիան զրկեց.

Աղ. — Ոչ միայն Անգլիա այլ ևւ վերոյիշեալ պետութիւնք միանգամայն.

Յ. Ա. — Ըսել է թէ պատգամաւոր ալ էք.

Աղ. — Այո՛.

Յ. Ա. — Ո՞ւր են ձեր պաշտօնական գրութիւնները .

Ա.դ. — Թուրքիա մանուղին այդպիսի գրութիւն կըրելը վտանգաւոր է և բռնուած ատենը՝ պատկանեալ պետութեան նախատինք ըլլալով՝ հարկ չէ տեսնուած . ալ մօտ օրէն կ'ապացուցուի այն , երբ հայկական ընդհանուր շարժումը տեղի ունենայ և փոքրիկ պատերազմ մը հետեւի , չորս պետութեանց ծովային և ցամաքային օգնութիւնը շուտ կը հասնի .

Յ. Ա. — Ձեզ յատակագիծը բաւական մեծ է , որովհետեւ կ'ըսէք թէ ամբողջ Ա.դ.ը պիտի փրկուի . այդ ամբողջ ազգը զինելու և պարենաւորելու բաւական դրամ ունի՞ ընկերութիւնը .

Ա.դ. — Ընկերութիւնը շատ հզօր է , միլիոնաւոր դրամ ունի և ամեն օր ալ հաւաքելու վրայ է .

Յ. Ա. — Ուրեմն դուք մեզի եկած էք իբրեւ պատիրակ և օգնական .

Ա.դ. — Այո .

Յ. Ա. — Ի՞նչ կը հրամայէ մեզ ընկերութիւնը .

Ա.դ. — Ձէնք առնել .

Յ. Ա. — Յետո՞յ .

Ա.դ. — Ձէյթունի սահմաններու օտար բնակիչները հալածել և սպաննել .

Յ. Ա. — Ըսել է պատերազմիլ .

Ա.դ. — Այո .

Յ. Ա. — Լաւ , բայց երբ պատերազ միլ հարկ ըլլայ անոնց հետ , ադէն սկսեալ ամէն ինչ կանխապատրաստելու է . այժմ ի՞նչպէս կը յաջողի այդ , երբ մենք անպատրաստ ենք և պատրաստութեան ժամանակը անցած է , մանաւանդոր դրամ չունինք . երկնառաք մանանայտ՞իլ պիտի կերակրուին պատերազմիկները .

Ա.դ. — Ձեր ուղածը դրամ թող ըլլայ , երկու ա-

միս է որ մենք Չէյթուհի շուրջ դրամ կը սփռենք ան-  
խընայ և տակաւին պիտի սփռենք, ա՛նա նոր դրամ կը  
հասնի մեզի, և որպէս զի դադարաւ մ'ուենենաք մեր  
հերոսութեան վրայ, կը յաւելուենք թէ ցարդ 400 ոսկի  
ծախսած ենք.

Յ. Ա. — Այո՛, յսած եմ, բայց ոչ 400 այլ 200  
ոսկիի չափ, այսինքն 100 ոսկի կէօյէրչիլէ (բորակ) և  
100 ոսկի ցորեն ու ալ. (ալը Արեգին գիւղի չամար, և  
ցորենը Փրնուզի) : Հաճեցէք չասկցնել ինձի, ի՞նչ ըսել  
է հերոսութիւն, զոր պա՛ մը առաջ արտասանե-  
ցիք.

Ա. զ. — Ազգին անձնուէր, ամէն կերպով զո՛ւուող  
քաջ և նա՛ատակուող ըսել է.

Յ. Ա. — Եւ այդ դո՞ւք էք.

Ա. զ. — Այո՛ :

Յ. Ա. — Զարմանք, որ ի դմին ծնեալ սնեալ և աճ-  
եալ Չէյթուհիին չունենայ այդ անուէր և դուք՝ այս-  
օրեայ պլուզներդ ունենաք, որ թշնամիի չանդէպ ելած  
չէք տակաւին, ոչ մէկ գնդակի կուրծք տուած կամ  
վառօղի հոտ կլլած էք.

Ա. զ. — Այո՛, Յարութիւն աղա, չիտակ է ձեր ըսա-  
ծը թէ Չէյթուհիին գործնական հերոս է, բան մը զոր  
Ազգը ընդունած է պարծանօք. բայց և մենք ազգէն  
ընտրուած վստա՛ացուած և այնպէս կոչուած ենք այս  
պաշտօնին, մեր պաշտօնը կը պարտաւորէ զմեզ ոչ մի-  
այն խրախուսել հայր, այլ և առաջնորդել անոր ամե-  
նախտանգաւոր պարագային, թէև Հայկական այս ընդ-  
հանուր շարժում չպիտի ունենայ այնքան վտանգաւոր  
պարագայ. ի շնորհս անմիջական օգնութեան եւրոպա-  
կան մեծագոյն պետութեանց, երբ մանաւանդ Եւրոպա-  
կան պետութեանց օրէնքով, տէրութիւնը իր չպատակաց  
վրայ չպիտի կրնայ զօրք դրկել կամ թնդանօթ դարձնել :

Յ. Ա.— Հը՛, հը՛, հը, խնդալս կուգայ Ձեր խօսքին վրայ. Սասունի վրայ զրկուածը գօրք և թնդանօթ չէ՛ր. Սասուն մարթինի և թնդանօթի գնդակներէ չաւերուեցա՞ւ. մաս մը կտրիճ հայ՝ որ Ձեզի պէս գործիչներու՝ պատուիրակներու և հերոսներու հաւատաց, այսօր թշուառ վիճակի մէջ, իւր մարտիրոսները, տունը, տեղը կուլայ, կը նստի անօգնական. Եւրոպացիք ոչինչ չեն խօսիր և Սուլթանը Ձէքի բաշայի քաջութիւնը կը պատկէ նշանով :

Հոս Յարութիւն աղան հառաչ մը քաշելով և խորհրդաւոր լռութիւն մը անցնելով, խօսքը ընդհանուրին ուղղեց և ըսաւ.

— Եղած հարցութիւնը ամենքդ լսեցիք. լսեցիք նաև թէ այս պարոններ ո՛վ են և ի՞նչ պաշտօնի ու կամքի տէր. ասոնք պարզապէս ՚ըսեն մեզ՝ թէ նիւթականապէս կ'օգնենք Ձեզի, պատերազմեցէ՛ք թըշնամիին հետ : Ի՞մ կարծիքով թուրքին հետ պատերազմելու հաշիւ չմնաց, նկատի առնելով վերջին խնդիրներ՝ որոնք արդէն մեր խորհրդածութեան նիւթ եղած էին, և մեր նախնիքներուն սովորութեանց համեմատ, հարկ էր այդ չարիքները խափանելու միջոցներ ձեռք առնել, այն ալ գրեթէ գոհացուցիչ կերպով լուծուած կը համարուի : Գամասկեցի դատրին, մալմիւլաիւրիի տղուն բարբարոս արարքներուն, որոնք վերեւ յիշուած են, վրէժն ալ լուծուեցաւ ուղածնուն պէս : Թիւրքին հետ պատերազմելու ալ ոչինչ ունինք : Այս պարոններուն խօսքին նայելով մեզի կը մնայ ազգային պատերազմ մղել թիւրքին դէմ : Թէև այդ խօսուորդը լաւ է, ի՞նչ ընենք որ նախապատրաստութիւն չունինք, պարոնները սակայն մեզի կուզեն համոզել որ եւրոպացիք թէ դրամով և թէ զինու գօրութիւնով պիտի օգնեն :

Եւրոպացիներու դրամին և անոնց օգնութեան

վատահիլ, ըստ իս ձախորդ ձեռնարկութիւն է: Եւրոպայացիք դրամով լեցուն շատ մը պանքաներ ունին, շատ զօրք և զէնք, շատ դրահաւոր և թընդանօթ ունին, ստոյգ է, բայց թէ ատոնց բոլորը հայոց փրկութեան պիտի գործածուին, ինչպէս այս պարոններ կ'ուզեն հաստատել, բոլորովին անհաւատալի է ինծի համար և խնդրեմ ձեզմէ կղբայրներ, որ դուք ալ այդ պիտի կեղծիքներու հաւատացող չըլլաք: Եւրոպայացիք ապստամբող ազգերու ապստամբութեան գործին համար դրամ չեն տար, բայց արկածեալներու օգնութեան կը փութան, գիտենք, անոնց մարտանաւերը ծովերու մէջ, հոս հոն նաւահանգստի առջեւ կը կենան, իրենց կառավարութեան հրահանգաւ և ծովակալներու հրամանաւ՝ այսպէս կրնայ ըլլալ որ վերջինի հրամանաւ միջերկրական գտնուած ըլլան կամ Իսկէնտէրունի առջեւ խարսխած, այս սովորական երեւոյթին ուռուցիկ մեկնութիւն տալ և ուղղակի Հայոց համար հոն եկած են ըսել, ըստ իս ոչ միայն տղայական այլեւ յիմարական է: Ազգային շարժման միայն ազգը պարտաւոր է օգնել, որովհետեւ անոր օգուտը իրեն կը պատկանի. Ազգը՝ ըսելով, անշուշտ աղբի կարողներ պէտք է հասկընալ: Իսկ անոնց համար Ազգային փրկութեան բնաբանը օտար կը հնչէ. վասն զի նախ իրենց դիրքը պէտք չունի այդպիսի նորութեան, և երկրորդ իրենք շահերով կապուած ըլլալով թիւրք կառավարութեան հետ չեն կրնան այդպիսի խնդրոյ մը դրամ տալ: Քալով այլ կարգի ազգայնաց՝ որոնց օրինակ է մեզի համար, 5000 տունէ բաղկացեալ Հաճինը, նա ալ թխսող հաւերու նման հաւկիթի վրայէն չ'ելլեր, թէև նիւթապէս մեզմէ կարող է: Ի՞նչ կ'ըսէք, աս ամենուն հետ մէկտեղ հաւատահնք թէ Եւրոպայացիք դրամով կամ զէնքով, կամ այս պարոնները և բիւս հեռաւոր ազգայինք նիւթապէս

և անձամբ կարող պիտի ըլլան օգնել մեզի, պատերազմի ընթացքին... Կրկնեմ թէ ինձի համար այս ենթադրութեանց վստահիլ և գործի ձեռնարկել մեծ սխալմունք է, և յօյժ աղիտարեր հետեւանք կ'ունենայ վասն զի մենք այսօր մեզմէ միայն Չէ ժամ հեռաւորութիւն ունեցող մեզի դրացի և նիւթապէս մեզմէ կարող Հաճինցիներուն չենք վստահիր, անանելով իրենց անփութութիւնը, ս'եր մնաց հեռաւոր ազգայինք կամ Եւրոպացիներ: Չգաստօրէն խորհեցեք, վասն զի հարսանիքի և կոչունքի խնդիր չէ, մահու և կենաց խնդիր է պատերազմը: Տէր մի՛ արասցէ, եթէ մենք ջարդըւինք, մեր արեան դինը փնտռող չըլլար, և մեր բնտանիքներ ու զաւակներ թշնամեաց ձեռք դերի կ'իջնան, կը լկուին և կը թշուառանան:

Աղասի.— (Յարութիւն ալայի խօսքը ընդմիջելով), ըսաւ. Ես զՁեզ խելահաս մէկը կը համարէի, բայց այժմ խենթ մ'ես պիտի ըսեմ:

Յ. Ա.— Պատճա՞ռ...

Աղ.— Վասն զի մեղկութիւն, դասալքութիւն կը քարոզես՝ ի բնէ քաջարի ժողովրդին:

Յ. Ա.— Դու կը սխալիս, պարսն, որովհետեւ մեր ժողովուրդը այնպիսի խօսքերով չ'իմուարարիր, բայց իրօք խենթ դուք էք, որ և անուանիդ և քաղաքնիդ կը պահէք և Եւրոպական պետութեանց կողմէ զրկուած պատուիրակներ և հերոսներ կ'անուանէք զձեզ:

Աղ.— Քաւ լիցի, եթէ խենթ կամ խարերայ ըլլայինք այսքան դրամ չէինք վատներ այս սամաններու ժողովրդեան վրայ:

Յ. Ա.— Չէյթունցիք Ձեր հիւրութեան վարձ պահանջող չեն:

Աղ.— Մենք իբրև վարձ դրամ մը տուած չենք, այլ բորակի, աղի և ցորենի: Չէյթունցոց հիւրասիրու-



Թիւնը և իրենց նահապետական դրութեան հետեւող ըլ-  
լայր, մեր հետ բոլոր ազգը գիտէ, այդ մասին ըսելիք  
չունինք. շնորհակալ ենք Ձեզի :

Յ. Ա. — Ձէյթունցին 200 ոսկիով չի բաւականա-  
նար և շնորհակալութիւն ալ չի մատուցաներ, պարոն,  
դուք լաւ խորհեցէք. 4500 տունէ կը բաղկանայ Ձէյ-  
թունը, 800 ալ Արեգին, Ֆրնուդ, Աւագկալ գիւղեր,  
ըսել է որ 2300 տունէ կը բաղկանայ ընդամենը, որոնք  
6000 պատերազմիկներ կրնան հանել, ասոնց համեմատ  
ոսկի կրնա՞ք տալ. մարդագլուխ առ նուազն 20 ոսկի  
պէտք կ'ըլլայ. և 6000ին ալ 4000ը թէև հրացան ունին  
հին տեսակներէն, 2000 մարդ չունի. դոնէ Յ տարի ա-  
ռաջ ոսկիները պատրաստ ըլլային որ հրացան գնէինք,  
պատրաստէինք, այն առեւնը շնորհակալ կ'ըլլայինք.  
հիմա մա՞րդ դուռը բերեր էք, ինչէ՞ն շնորհակալ ըլլանք,  
չէ որ ձախորդ շարժում ունեցանք: Ըսաւ ու լռեց :

Նախագահ Տէր Բարդուղիմէոս վարդապետը լռե-  
ցուց ներկաները և ներկայից ուղղելով խօսքը ըսաւ.

— Յարութիւն աղան լաւ պարզեց մեր համախորմ-  
բութեան նպատակը. մենք այստեղ հաւաքուած ենք  
վերջին անցքերուն և լուրերուն վրայ խորհելու, այ-  
սինքն վճռելու թէ ի՞նչ պէտք է մեզի ընել, եթէ նման-  
օրինակ անցքեր միշտ յաճախեն և առնուած լուրեր  
իրականանան: Այդ շատ ստոյգ է թէ Համիտ յոյժ  
կատաղած է հայոց դէմ, և եթէ ձեռքէն դայ Սելճուդ-  
եան բռնաւորներէն՝ Թիմուրլէնկին Սերաստիոյ մէջ ը-  
րածին պէս հայոց արեամբ աւազան մը պիտի լեցնէ և  
մէջը լողանայ. թէև Յարութիւն աղայի խրատներուն ալ  
կատարելապէս համաձայն եմ, այսինքն ձախորդ հետե-  
ւանք չի կրելու համար խո հեմութեամբ շարժելու, բայց  
ինձի կը թուի թէ առանց պատերազմի չպիտի կրնանք

մեր երկիրը ապահովել թշնամեայն բռնութեան դէմ և  
խաղաղութիւն լեննալ մեր շուրջ տեղի ունեցած պա-  
րագաներուն հետեւանօք : Երբ մեր բոլոր հայ եղբարց  
նկատմամբ անդադար ի գործ դրած քրդաց և թշնամեաց  
խժդժութեանց վրայ խորհինք , այն ժամանակ անշուշտ  
յոյժ աւելի իրաւունք ունեցած կ'ըլլանք վրէժխնդրու-  
թեան : Այս նկատումներուն վրայ կ'աւելնան ներկայ  
պարտներուն պատերազմելու համար մեզի բրած թա-  
խանձանքը , մանաւանդ ուշադրութեան արժանի սա-  
խօսքը , «Ձեր պատերազմելու փոքրիկ մի ցոյցին պիտի  
հետեւի արտաքին օգնութիւն և բոլոր հայ ազգին ազա-  
տութիւնը» : Հայ ազգին ազատութիւնը , «ասկէ սիրելի  
ի՞նչ կայ մեզի համար . ո՞ր մէկիս սիւսը կը վերցնէ ,  
Սասունցիին եղած նախատինքը , չէ՞ որ ան ալ մեր հա-  
մազգին է , մեր արեւակիցն է . մեր եղբայն է , գոնէ  
ասոր վրէժը լուծենք : Ես կ'ըսեմ , պատերազմինք , ու-  
րս ինտել . Ա . որպէս զի արիութեան ոգին չմարի մեզի  
կեանքով , Բ . որպէս զի թշնամին մեզի տիրելու պատ-  
րաստութիւնը և փափաքը մէկդի դնէ . Գ . որպէս զի  
գէ՛թ մասամբ վրէժ լուծած լինինք մեր ճնշեալ համազգ-  
եաց , Դ . ո՛ր գիտէ՝ կարելի է մեր այս պատերազմով Աստ-  
ւած հաճի ազգը փրկել թշնամիին ձեռքէն : Պատերազ-  
մինք , մեզ համար հանգիստ ընել չը վայլեր քանի որ  
բոլոր ազգը ծանր բռնութեան տակ կը հեծէ , պատերազ-  
մինք , որ քիչ մը թշնամիին քիթը խոնարհի և ակռաները  
թափին , որ Հայոց ոսկորը չկարենայ կրծել :

Ազ . — Ընդհատելով Վարդապետին խօսքը . «Ապ-  
րիք , ա՛յրիք , հայր սուրբ , Լուսաւորիչն ալ դուն ես ,  
Ղեւնդ երեցն ալ դու ես , քաջ Վարդանն ալ դու ես» :

Նախա . — Գովութեան արժանանալու համար չեմ  
խօսիլ , պարտն , յուզուած եմ Հայոց ազատութեան և  
փրկութեան խօսքին վրայ . ա՛խ , ո՛րչափ ժամանակ է որ

այս ազգը իւր ազատութիւնը կորուսած է և անհաւատ  
ու անօրէն թշնամոյն բռնութեան տակ կը հեծէ, քիչ մը  
հացեր է, որ կորսուի ու ջնջուի հայութիւնը. Հայաս-  
տան, Մայր հայրենիք, դրախտի երկիրը օր ըստ օրէ կը  
պարպուի. իւր հայազատ որդիք և թնակիչք օտար եր-  
կիր կը գաղթեն, օտար ազգերու կը խառնուին, իսկ  
մէջը մնացողք կը հեծեն և կը փճանան: Պատերազմինք,  
եղբարք, ջարդուինք հող չէ, թող ազգը ազատուի:

Ա.դ. — Ի՞նչ կ'ըսէք Հայր սուրբ. չպիտի ջարդը-  
ւինք. փոքր խլրտում մը բաւական է, օգնութիւն և  
ազատութիւն անմիջական պիտի ըլլան, այս է կեդրոնի  
հրահանգը, մեր Լոնդոնի կեդրոնը չսխալիր, անպատ-  
ճառ պիտի իրագործուի իւր ծրագիրը:

Նախ. — Սիրտ լաւ, Ձեր սուտին իբրեւ իրաւի կը  
հաւատանք: Այս ըսելով ոտքի ելաւ, և համախմբուած  
հայերուն այսպէս խօսեցաւ Ձէյթունի լեզուով.

« Ժողովուրդ մե՛ր գեղացրք չիւ՛ր: հուամօ շօտ ծեծվո-  
ծին թուրքին հիտը. չիրք բանը համոր գիտէք. իս ա-  
սիմ ձիգ պաշխօ բանը համոր չէ. իլլէ միլլաթը. ու-  
րինքէ. և հէյուն հուզըն ազատութրնը համոր, ըմսը  
մեր տուչմօնը ըլլմօն չի կանցօնք կըշնըցըց. էօսիւր հա-  
մոր պէտքէ ուր նիւրիկէն ծիծվընք թուրքին հիտը իրինց  
ուճախնըն անցընինք. մինէվիւր պիտի գիտանէք ուր էս  
տէօկիւշը առջէ տէօկիւշնուն կիմի չէ էս շօտ մինծէ.  
հէմ իտէմիտէննէ. չիւնքիւ պիւթին հէյուն ազա-  
տութրնը համոր պիտի ծիծվընք. էս տէպէն ամէն մորդ  
մէնըլը ջարդըվըլը ճակօտը թուղ առնուլ մէնընքնը  
հէյուլ համոր է. էկկէր էս տէպէն իւթէօվ իլլինքնը պիւ-  
թիւն օզգը ազատվոժ կունը. էկէր Ասպոժ չէնէ ջարդը-  
վընք նը նահատակ, մէրտիւրիւս կունընք. ըմմը պիւ-  
թիւն օզգը մուղն իղրէն կունը. դօքէ ինտէս տէօկիւշիւ  
էջ չոց գըտնըվըլ պէտքէ գիտէք. ուր օզգը չըկըշնըվը

ու ազատութիւն գրանօ . չոց ուր անրթը ասլօն մը օվը  
գրանիլօ համար կու բլլըվը ու կու բլլըվը իփուր  
գրանօնը իւժէօվմը վիրէն կու չուքէ գինտէն կիմի  
պէտքէ չուքէք տուչմունըն վիրէն . էս ըսնտ գիտացէք  
տիւչմօնը չրսպանօժ մէնօղը նէ մէրտիւրիւս կունը նէտէ  
արքավութիւն կանը Իրթօ , նէ օղգ կու հէսէպվը . ծըծ-  
կըվիցէք հօտ մը իղիլ ըսպանիլլօ . չոց ուր ամէն մարդ  
էս ասօնիս կիմի ծիծվընը մինք միւճէրրէթ պօղմուչ  
կէնինք տուչմօնը էտիւր համար հիւգմէնէք :

« Հէսը գիտացօժ նըք ուր մէկմը գինտէս տէօկիւ-  
չիւ մէջ իւժէօվ չէ կանը նը , Քիւրիւստիւսիւ վիրօ  
իւղիւրդ հավոտք չուսնօ նը . էօտիւր համար հոլմմօ ա-  
լայուտէ կօսիմ պէտքէ ըլլմօն հավոտք ուսնէք : էսէ  
թէմպէն կէնիմ ձիգ ամմէն մարդ , էրիկ , կընըկ , հէլվիւր ,  
պառօպ , տէլիղանլը , էրկէն , Աղջկին , չիւր մօնարը  
մանտրրտէք ալայիտէ պէտքէ եարօխ շալկէք : Թիֆօնք  
ունցնէօղը թիֆօնք , տապանչալու ունցնօղը տապանչա-  
լու , փալադանոկ ունցնէօղը փալադանոկ , դամօ ուն-  
ցընէօղը դամօ , վից դնգուն ունէցօղը վից դնգուն , էս  
բանիրը չունցնէօղը կիւչիւչէօվ , ճըկիււէօվ , մօնարը  
դանկէօվ , շամփուրէօվ , փիտէտէօվ , մանկըղէօվ , հիւ-  
տիւցէօվ , քէրէօվ , փէտէօվ , շաքուչէօվ , սիլանլանմըչ  
թուղ նը . իւնչ վոխտ ուր տուչմունը խառնըվընքնը  
հրմմըն չապրիս չապրիս փիրիը խէթիցէք , խէթիցէք ,  
հանիցէք . աղըքնը , մաղմըղըքը դօրս վէղիցէք , հիչ մի  
վախէք Քիւրիւստիւս մէր դէհօն է . դաթը գիտէք ուր  
տիւչմէնը վէխկիւտ կունը . էօտիւր համար հէչ մըթք մէ-  
նէք , իւժէօվէ կիլլինք :

Հասիկ Աւետարօնը Քիւրիւստիւս կօսէ թէ իւվիւր  
ինծէ համար ինք գինք կըչնըցընէնը էն կապը . իւվուր  
ինք գընք պէնէ չի մէնըմ տէյի էն կու կըչնըվը . հոլմ-  
մօ հասկըցէք Քիւրիւստիւսիւ շուռիրը . էօտիւր համար

կուրհիմ գձեզ ուր՝ Քիւրիւստիւսո շուսիրէն դօրս չէք  
 իլլէք. հէմ օղզնէ իր փառքէօլը կու մինձնոյ հէյուէն եւ-  
 սիրութըննէ հիչ չէ մընօ : Հուամօ մինձ թէմ.զէ՛մէ ու-  
 նրմ ձիղ թիֆօ՛ք փրս՛սիլօ ասինն ըսրնա նիչօն առէք .  
 մի հասիրէք գաք՛ու փրս՛սիլօ կիմի փրսխիցէք . հէմ  
 խըռուամէն մի փրսխէք . շօա միւտէն փրսխիցէք ուր թի-  
 ֆանքին թիւթիւնը տա՛սի փիւրը մըանօ էսձիձին հիտը  
 մէկտեղ :

Մեր գեղջէ տէօ՛րիւշնին մէր պաղիրուէն էտէթնէ ին-  
 տէս էր , էկէր չէք մառցի նը , իլլէ իլլէ մէօտէն փրս-  
 խիցէք : Հը՞ էսէ թէն.զէ՛ կէ՛սիմ ձիղ . էս դըրսըցը մի-  
 սաֆիր՛սին ուր մէ , աշխօրը իկոձին բէրէօլ հինք հազոր  
 բէրէօլ իկիրին . հէսէ.զինք թէ Աստուծոյ թարաֆէն ի-  
 կոձին՝ չէ թէ սատանին գէ՛նն . չիրք պիտինընը էն  
 կուէնը : Մէկ մըաքէօլ լըք : Եէօսիւնց մըաքնէ քէօթիւ չէ :

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆ

Ժողովուրդ , մեր գեղացիք(\*) մինչեւ հիմայ շատ  
 պատերազմ մղեր են թշնաւոյն գէմ , ի՞նչ բանի համար ,  
 գիտէ՞ք . . . : Ես ըսեմ Չեզ՝ ուրիշ բանի համար չէ՞ այլ՝  
 ազգի , օրէնքի , հայրենիքին ազատութեան համար ,  
 բայց մե , թշնամին լման մը չկրցանք ջնջել . ատոր հա-  
 մար պէտք էր որ այս պատերազմը անցեալ պատերազմ-  
 ներու համանեցնենք . ասիկա շատ մեծ է և վերջինն է ,  
 վասն զի երկրին ազատութեանը համար պէտք է պա-  
 տերազմինք . այս անգամ մեռնիլը , Չարդուբուրդ ըլ-  
 լալը աչքն թող առնէ . ասկէ ետքը մեռնինք հայրե-  
 նիքին համար , ազրինք հայրենիքին համար : Եթէ այս  
 անգամ յաղթանակը մերը ըլլայ՝ հայրենիքը ազատած

---

(\*) Չէյթուէնի անուէնը Չէյթունցիք գեղ կ'արտա-  
 սանեն իրարու հետ խօսած ատենին :

պիտի ըլլայ. եթէ Աստուած մի արասցէ յաղթունք՝  
(Չարդունք) մարտիրոս կ'ըլլանք, բայց և այնպէս ազգը  
թշուառ կը մնայ :

Այսպիսի պատերազմի մէջ ի՛նչպէս դանուիլ պէտք  
է դիտէ՞ք՝ որպէս զի ազգը չկորսուի ու ազատութիւն  
դանայ, ինչպէս որ անօթի առիւծ մը կ'ելլէ իրեն օրսը  
դանելու համար կ'ըպարտի և երբոր դանայ, ուժով մը  
վրան կը վազէ, անոր պէս դուք ալ թշնամիին վրայ  
յարձակելու էք. այս լաւ դիտնաք՝ թշնամիին չ'սպան-  
նած՝ մեռնողը ոչ մարտիրոս կը սեպուի, ոչ ալ արքա-  
յութիւն կրնայ երթալ, ոչ ալ ազգ կը սեպուի : Աշխա-  
տեցէ՛ք մի հատ աւելի սպաննելու :

Եթէ ամեն մարդ իմին ըսածիս պէս կը պատերազ-  
մի, մենք անսպասճառ կը յաղթենք թշնամիին, ատար  
համար հոգ մ'ընէք :

Բայց և այնպէս՝ դիտյաժ ըլլաք, որ մարդ մը այս-  
պիսի պատերազմի մը մէջ յաղթող չկրնար ըլլալ՝ եթէ  
Քրիստոսի վրայ կատարեալ հաւատք չունենայ. անոր  
համար է որ ամենուդ ալ ա՛նա կը խօսմ, պէտք է լման  
հաւատք ունենաք :

Այս ալ կը պատուիրեմ Ձեզ՝ ամեն մարդ, կնիկ  
մարդ, ծեր և պառաւ, երիտարդ թէ օրիորդք, մինչեւ  
փոքր մանկունք, ամենքդ ալ պէտք է զինուիք, հրա-  
ցան ունեցողը՝ հրացան, ատրճանակ, դաշոյն ունեցողը՝  
դաշոյն, երկսայրի ունեցողը երկսայրի, վեց հարուածեան  
ունեցողը՝ վեցհարուածեան, այս վերոյիշեալները չու-  
նեցողը՝ հետեւեալ գործիքներով բաւականանան, հա-  
տոցով, կացինով, մանր դանակով, շամփուրով, փե-  
տատով, մանգաղով, մանր հատոցով, քարով, մինչեւ  
անգամ մուրճով, զինուեցէ՛ք. որ ժամանակ որ թշնա-  
միին խառնուինք՝ արագ-արագ փորերնին խօթեցէ՛ք,  
թշնամուոյն աղիքները դուրս թափուին. ամենեւին մի

վախնաք . Քրիստոս մեր կողմէն է , արդէն գիտէք որ  
թշնամին վախկոտ կ'ըլլայ , ատոր համար քնաւ չմտա-  
ծէք , մենք ուժով կ'ըլլանք :

Ահա՛ Աւետարանը , Քրիստոս կ'ըսէ , «Ով որ ինք-  
զինք ինծի համար կը կորսնցունէ , անիկայ կ'ապրի . ով  
որ ինքզինք չմեռնիմ ըսելով պահէ , անիկայ կը կոր-  
սուի » : Հիմա հասկցա՞ք , Քրիստոսի խօսքէն դուրս չէք  
եղլեր և հայրենիքն ալ կը փառաւորուի ու կը մեծնայ ,  
հայն ալ ստրկութենէն կը խալըսի :

Հիմա մեծ պատուէր մ'ալ ունիմ ձեզի : Հրացանա-  
ծրդութեան ատեն լաւ նշան առէ՛ք , մի՛ արտորաք ,  
կաքաւի որսի նետելու սէս՝ նետեցէք , ու հեռուէն մի՛  
նետէ՛ք , շատ մօտէն նետեցէ՛ք որ հրացանի ծուխը կա-  
պարին հետ միատեղ փորը մտնայ : Մեր Ձէյթունի կը-  
ռիւնները այսպէս կ'ըլլային , չէ՞ որ պապենական սովո-  
րութիւն է՝ եթէ մոռացած չէք . ահա ասիկայ ստիպ-  
եալ կը պատուիրեմ , մօտէն ըլլայ հրացանածգութիւն-  
նիդ :

Հա՛ , չմոռնամ , այս ալ կը պատուիրեմ ձեզ , այս  
դուրսէն եկող հիւրերը , որ մեր երկիրը եկեր են՝ բարով ,  
հինգ հազար բարով եկեր են<sup>(\*)</sup> , համարինք որ Աստու-  
ծոյ կողմէն են՝ ո՛չ թէ սատանայի կողմէն , ինչ որ պիտի  
ըլլայ՝ այն կ'ըլլայ , միամիտ եղիք , անոնց նպատակն ալ  
գէշ չէ : — Ձեր վրայ պահպանիչ մը ալ ըսեմ , ըսաւ ,  
ու վերջ տուաւ ժողովին : Ժողովը ծափահարութեամբ  
ցրուեցաւ , վասն զի Ձէյթունցւոց համար պատերազմի  
որոշումը հարսանեաց հրաւէր կը սեպուէր :

---

(\*) Ձէյթունցու սովորութիւն է որ մարդ բարեւելու  
համար մէկէն՝ հազար բարով եկար , կամ թէ հինգ հա-  
զար բարով եկար , կ'ըսեն : Հայր սուրբն ալ նոյն սովո-  
րական լեզուն կը գործածէ :

Իսկ դործին բնաբանը չ'մոռնանք : — Վերոյիշեալ ժողովին մէջ՝ որ տեղի ունեցաւ Գարանդրդ տէրէ ըս-  
ւած տեղը, Զէյթունի Մեծագործ իշխան Շովրայեան  
Հաղոր աղան(\*) արդէն յանձնարարած էր Ֆրնուզի վա-  
նասայր քաջասիրտ Տ. Բարդուղիմէոս վարդապետին  
նորեկ հիւրերը հարցաքննել և ըստ այնմ շարժիլ : Հայր  
սուրբը՝ ըստ հրամանի պատկառելի իշխանին, պէտք ե-  
ղած քննութիւնը ի դործ դրաւ, ինչ—ինչ գաղափար-  
ներ հասկցաւ, անմիջապէս տեղեկագրեց առ իշխանն :  
Իշխանը գրութիւնը կարդաց, շտապով մը հանգուցեալ  
Պապիկ բաշայի եղբայր Նաղարէթ չավուշը(\*\*) քովը  
կանչեց ու պատուիրեց : «Հրաժարէ, ըսաւ, Համիտին  
ծառայելէ, այսուհետեւ հայու և հայրենեաց համար  
պէտք է ծառայես, խուժք մը հայ զինուորներով գնա ի  
Գարանդրդ տէրէ Բարժուղիմէոս վարդապետին, անոր  
աջակցութեամբ պէտք եղածը խորհրդակցեցէ՛ք : Նորեկ-  
ներու ինչ ըլլալնին հասկցուեցաւ : Վարդապետը մեզ  
չ'արցունցած պատերազմի որոշումը տուէր է, արդէն իմ  
գաղափարս ալ այդ էր, չի մերժենք վարդապետի որո-  
շումը, ևս ընդունեցայ, կարծեմ դուք ալ կ'ընդունիք» :  
Նա ալ . « — Այո՛, կ'ընդունիմ » ըսաւ . — «Սա թըշ-

(\*) Այս իշխանը հին 4 իշխանաց մին էր և կը կոչ-  
ւէր Հաղոր (Ղաղար) աղա . միւս 3 իշխանք մեռած էին ,  
ու պատկառելի ծերունին 73 տարեկան հասակին դեռ  
ուլջ էր ներկայիս : (մեռած է 1896ին)

(\*\*) Նաղարէթ չավուշ (վարոցաւոր) Եէնի-տիւնա  
Աստուածատուր աղայի հօրեղբօր թոռը՝ Մարկոս աղայի  
աղան ու Պապիկ բաշայի եղբայրն է . մինչ ցայ դ այս  
քաջարի երեսասարդը թուրք կառավարութեան ճիա-  
ւոր չավուշն էր . բայց ներքնապէս հայրենեաց նուիրուած  
մի հերոս էր , և չորս թաղեցւոց ալ միանգամայն սի-  
րելի :



նամիին հետ անգամ մ'ալ չափուինք, գրգռուած եմ  
թշնամւոյն գէմ որոնք, Սասունցի(\*) եղբայրներուն քիչ  
չարիքներ չ'ասուցին, այս անօրէններէն մի քիչ վրէժ  
լուծենք, ծերութեանս մէջ թաքուն և թմրնալ մնացած  
վառօղներուն անուշաճուտ բուրման անգամ մըն ալ եւս  
արժանանանք, գոնէ երբոր մեռնիմ՝ միւս երեք իշխան  
եղբայրներու լուր տանիմ, անոնք անդիի աշխարհը  
աչքերնին բաց, աչքի լոյս աւետեմ ու ըսեմ, «հանութ  
հայ տղգին համար պատերազմեցանք ու յաղթեցինք,  
նախահնամութիւնը զմեզ կատարեալ պաշտպանեց, Նո-  
րին ամենակարողի շնորհիւ յաղթող հանգիսացանք աշ-  
խարհի առջեւ», ըսաւ ու լուց: Անոր խօսքերուն մէջ  
մարդարէական շեշտ մը ու հաւատք մը կար: Նազարէթ  
չավուչ պատասխանեց. «Արդէն ես աղգային խնդրոյ  
համար խմորեալ մարդ մ'եմ, իմին ալ փափաքս նոյնն  
է, ընդունած եմ ձեր հրամայածը, վաղ առաւօտ ան-  
պատճառ կերթամ կը գտնեմ Բաթուղիմէոս վարդապե-  
տը, եթէ կ'ուզէք նամակ մ'ալ գրեցէք վարդապետին,  
անոր հետ աջակցելով պէտք եղածը կը խորհինք և ձեզ  
կը հաղորդենք»: Հաղոր աղան նամակ մը գրեց և տուաւ  
հերոսապետին ձեռքը: Հայրենասէր չավուչը պատկառելի  
իշխանին ձեռքը համբուրեց և ըսաւ, «Մտաք բարով»: Նա  
ալ անոր փայլուն ճակատը համբուրելով «երթաք  
բարով» մայթեց: Միւս օր մի խումբ հայ դինւորներ  
դնացին հասան ի Գարանլըգ տէրէ (մութ-ձոր) Զէյթու-  
նէն վեց ժամ հեռի: Վարդապետը և Նազարէթ դիրար  
տեսածնուն պէս ողջագութեցան մեծ ուրախութեամբ,  
ցնծալով, հիւրերն ալ նոյնպէս ըրին: Վարդապետը նա-  
մակը բանալով կարգաց որուն պարունակութիւնը հե-

(\*) Այն ժամանակ Սասունէն դատ կոտորած եղած  
չէր, ատոր համար իշխանը Սասնոյ անունը կուտայ  
միայն:

տեւեալն էր. «Արժանապատիւ հա՛յր պատուական : Ստացանք ձեր տեղեկագիրը նորեկ պարոններուն մասին, գրածիդ լիովին տեղեկացանք, որչափ որ ատոնց տուած տեղեկութիւններու չենք հաւատար՝ հոգ չէ, անոնք ալ չէ՞ որ մերայինք են՝ հայ են, արեւակից են, հիւրեր են, խաթերնին չգպչիք, իբրեւ սիրելի հիւրեր՝ զիրենք պատուեցէ՛ք. կարծեմ թէ ատոնք պատելազմի համար նորրնծայ կը սեպուին. այս ալ վարժութիւն մ'է, թող տուէք որ սորվին :

Ատոնց սուտերուն իբրեւ իրաւ հաւատանք ու գործենք, վասն զի միջոց չիկայ, ժամանակը լրացած է, եթէ հոգ մը ունինք՝ այն է որ՝ անպատրաստ ենք. այս հոգն այ նախախնամութեան ապաւինելով, նորին անհուն ողորմութեան, գթութեան, զօրութեան թողունք, նա կարող է զմեզ փրկել մեր թշնամիներէն : Երբոր մենք և մեր պապերը կը պատերազմէինք, միթէ՞ մեր օգնութիւնը Լոնդոնէն կուգար, կամ թէ օտարականաց խումբեր կուգային, կ'օգնէր՞ս. ո՛չ, ո՛չ, այնպէս չէ. «մեր օգնութիւն ի Տեառնէ եկեացէ որ արար զերկինս և զերկիր» . այս անգամին գործը ուրիշ օրինակի չեմ կրնար նմանեցունել, այն է՝ որ անպատրաստ բառը կուղեմ նմանեցունել Հայր Աբրահու դէպքին՝ երբոր իւր սիրելի զաւակ Իսահակին հետ կ'երթային որպէս թէ մատաղի զենման համար, Սահակ զգածուելով հարցուց հօրը ըսաւ. «Հա՛յր, ահա՛ հուր և ահա՛ փայտ, ս'ւր է ոչխար յողջակէզ» : հայրը պատասխանեց. «Որդեակ, Տէր պատրաստեացէ» : Ըստ հօր Աբրահամու մեր պիտոյքը Աստուծոյ խնամքին կը ձգենք, անիկայ հօր Աստուած է, կարող է իրեն հրեշտակներով մեր բանակը պաշտպանել : Այս կտորին վրայ կատարեալ վստահեմ. դուք ալ վստահ եղիք. «սուր Տեառն ու Գէդէոնի» եղաւ Իսրայել լացուոց ժամանակ, հիմա ալ սուր Տեառն և Զէյթունի

պիտի կանչուի, աղանով եղիք: Յալթութիւնը մերը  
պիտի ըլլայ, այս յուսով, այս հաւատքով, այս սիրով  
պէտք է աղբինք ամենքս ալ, որով մնալու եմք առ  
այս: Ես կը մնամ Ձեր Ս. Աղօթքի օժանդակութեան  
փափաքող, Խ. Ծ. Հազոր Շովրայեան:

Յ. Գ. — Աւագ-կալ գիւղացի Ատենապետ Յարու-  
թիւն աղա Գօճայեանի սիրով կարօտով բարեւս յիշե-  
ցէք: Կը գովեմ իրեն հեռատեսութիւնը, ինքը այժի հօ-  
տերու հովիւ մը ըլլալով հիւրերուն պես պարօն Աղա-  
սին կատարեալ հարցաքններ է, դուք եւս լաւ քններ  
էք, ուրեմն աղբիք: Այդ մասին խորին շնորհակալիքս  
կը յայտնեմ Ձեզ: Ինչ Պ. Աղասիին ալ բարեւ ըրէք,  
տեղեկութիւն կը հաղորդեմ իրեն, վաղը տեղւոյս թիւրք  
գայմագամը մի քանի պատգամաւոր պիտի գրկէ իր քով,  
Տ. Կարապետն ալ ի միասին, աղուէսութեամբ հար-  
ցումները պիտի ուղղէ իրեն՝ այդ աղուէսին պատասխա-  
նը շէնքով—շնորհքով պէտք է տայ, չըլլայ որ խոր քը-  
նացող աղուէսը արթնցունէ, ասիկայ նուրբ քաղաքա-  
կանութիւն մ'է, իրեն այսպէս գուրուցեցէք, այսչափ»:  
Վարդապետն ալ մէկիկ մէկիկ գրուցեց այս նամակի  
պարունակութիւնը սրն, Աղասիին:

Միւս օրը գրիւեցան պատգամաւորները(\*) տեղա-  
կալի կողմէն: Տէր Կարապետ հայրը տեղակալին գուր-  
ցած հարցումները հաղորդեց Պ. Աղասիին սասպէս. «Տե-  
ղակալը կը հարցունէ, ի՞նչ է ձեր պահանջը, ինքտում-  
ներ կը տեսնեմ ձեր մէջը, պահանջնիդ ըսէ՛ք, ընդհուպ  
գոհացում տանք, թագաւորի մը դէմ դնելը՝ արէկ բան

---

(\*) Պատգամաւորները ասոնք են, Տ. Կարապետ քա-  
հանայ, Կէսիսանեան Աւետիք էֆէնտին, և Եղեկիէլեան  
Աստուածատուր աղան: Ասոնք Սեպտ. Չին տեսնուե-  
ցան Աղասիին հետ, Անդրէասեանց գիւղը:

չէ : ինչո՞ւ զուր տեղ արիւն թափուի : Պատասխանեցէ՛ք որ տեղակալին հաղորդեմ » : Տէր Կարապետի այս հարցման՝ Աղասին պատասխանեց .

«Մեր պահանջները իւր ձեռնհասութեան տակ դրանուզ փոքրիկ խնդիրներ չեն , որոնց ինքն կարենայ գոհացում տալ , անոնց գոհացում տալը միայն սուլթանին անկ է : Տէր հա՛յր , Բուք չէ՞ք գիտեր մե պահանջը . չէ՞ք յիշեր Պէրլինի Վեհաժողովի ՅԱերորդ յօդուածը . ահա՛ մեր պահանջը ատոր իրադործունիս է » : «Միտտ ալէկ , զաւակս , ինչ որ է պահանջումնիդ՝ ըսէք , իրեն հաղորդեմ , կրցաւ կը կատարէ , չի կրցաւ , կը պատասխանէ » : — Լա՛ւ , լսեցիք մեր պահանջը , հաղորդեցէ՛ք ուրեմն , կ'ուզէ կատարէ , կ'ուզէ պատասխանէ . միայն քանի որ ինքը զձեզ պատգամաւոր նշանակած և մեզ՝ զրկած է մեր կամքը իմանալու , հաղորդելէ յետոյ ձեզ մեր պահանջը՝ ԱՉ օր միջոց կուտանք վճռական պատասխան մը առնելու : Եթէ այս ԱՉ օրուան մէջ կրցաւ մեր պահանջին գոհացում տալ , լա՛ւ , թէ չի կրցաւ՝ կառավարութեան պալատը թող պարզէ և մեզ յանձնէ . վասնզի վեց հզօր տէրութեանց մեզ տուած հրահանգը և կամքը այս է . հակառակ պայագային հետեւանքը չար պիտի ըլլայ և աղաչանքը ու պաղատանքը անօգուտ պիտի մնան » : Քահանան հարցուց . «Մնդրեմ վեց տէրութեանց հրահանգի պաշտօնագրերը ինձիցոյց տաք , որ ևս ալ տեղակալին հաղորդեմ » — «Տէր հա՛յր , ըսաւ Աղասին , գաղղիերէն լեզուաւ դրուած են անոնք և կարծեմ դժբաղդարար դուք ալ գաղղիերէն չէք կրնար կարդալ » : Տէրտէրը պատասխանեց . «Բու կարդա՛ , աղաս , ևս քեզի կը հաւատամ » : Աղասին ըսաւ . «Բուք ևւս Աւագկալցի չօպան Յարութիւն աղայի պէս կուզէք զիս յոգնեցնել . ան տէլի Արթինը (խենթ Յարութիւն) լսենթ ուխելառ խօսքերով ու հարցերով շատ

ու շատ յոգնեցուց զիս, արդարեւ յոյժ յոգնած եմ, ատէր հա՛յր, պատուոյս կ'երթնում, թէ նոյնքան ճշմարիտ է վեց պետութեանց կողմէ իմ ունեցած հրահանգը, որքան ճշմարիտ է ձեր քահանայական կոչմամբ առ Աստուած ունեցած հաւատքը» : Տէրտէրը բացագանչեց . «է՛, հէ՛, այդպիսի խօսքերով չեմ խաբուիր ես, պարո՛ն, դու պահ մը առաջ գրութիւններ ֆրանսերէն են կ'ըսէիր, բայց թուղթի կտորն անգամ չի տեսանք, հոգ չէ, միայն ես տղայ չեմ և պատերազմի խնդիրը տղայի խաղալիք չէ, այլ կենաց և մահու խնդիր . պէտք է հետեւապէս կատարեալ խօսք խօսիլ և ոչ սուտ ու պատիր բաներ . որովհետեւ որչափ որ գայմագամն է հարցունողը, պէտք է նկատել՝ թէ այդ միակ չէ և իրմէ վերագունի միջոցաւ, մինչեւ թագաւորի կապուած է, հրամանները կայծակի արագութեամբ կը հասնին ամէն կողմ՝ անակնկալներ ստեղծելով . պէտք է նկատէք հրամանի մը դալը, բանակի մը կազմուիլը, Ձէյթունի վրայ քալելը, և ումրակոծումը ամենակարճ միջոցի մէջ ըլլալու բաներ են : զգուշացէ՛ք որ այսպիսի մանկական ու տլայական խաղերով ազգին ու հայրենեաց գլխուն վրայ վտանգ մը չը բերէք . մանաւանդ այսպիսի պահու մը, յորում Ձէյթունցիք ո՛չ պաշար և ո՛չ կատարեալ զէնք ունին դիմագրելու . ա՛րդ, թէ և ձեզի չափ չենք դիտեր ներկայ քաղաքականութիւնը, քանի որ դուք եւրոպայէն կուգաք, բայց երկրին քաղաքականութիւնը և բնաւորութիւննալ մենք խիստ լաւ դիտենք . ուստի որպէս զի ձեզի վստահինք, պէտք է բացարձակ խօսիք մեզի, թէ ձեր գորութիւնը և ոյժը ո՞ւր կը կայանայ . քանի որ հետագրաթելը կա՛յ և եթէ ձեր գրուցածները նոյնութեամբ հաղորդենք գայմագամին, ո՞րչափ վտանգաւոր կը լինի, գոնէ հետագրաթելերը կտրտած լինէինք, որպէս զի գէթ հաղորդակցութիւնը խափանուէր, և այս կողմէն գործ մը տեսնել կարելի ըլլար» :

— «Տէր հա՛յր, պատասխանեց Աղասի, թեւ կարելու հարկ չի կայ, եթէ կ'ուզեն երկինք հեռագրեն, օգուտ չունի. ներկայ քաղաքականութեան բերմամբ կանոնաւոր դօրք և թնդանօթ զրկել Չէյթունի վրայ անհրնար է, ատոնց բոլորն ալ ուսումնասիրուած և այնպէս եկած ենք այս տեղերը»: «Ուրեմն, վրայ բերատէրտէրը, բոլոր ձեր ըսածները նոյնութեամբ հաղորդե՛մ տեղակալին և ըսեմ ՂԶ օր միջոց կայ ատոնց պահանջները դո՛ւացնելու, հակառակ պարագային պալատը պարպելու և իրենց յանձնելու ես». «Այո՛, պատասխանեց Ա. ասին, մի առ մի հաղորդէ՛, բնաւ մի՛ քաշուիր երբէք մնասակար հետեւանք տեղի չի պիտի ունենայ»: Տէրտէրը ըսաւ. «Շատ լաւ, միայն եթէ չար ըլլայ, թափուելիք արիւնք ձեր գլխուն վրայ, իսկ թէ բարի, ի Հօրէ Ամենակալէ օրհնալ ըլլաք»: Եւ մնաք բարով ըսելով՝ ընկերներովը Չէյթուն վերադարձաւ:

Տէր կարապետ Չէյթուն հասնելով՝ շունչը չառած իսկոյն ժողով մը կազմեց Չէյթունի աւագանիէն, սուրբ Աստուածածնայ եկեղեցիին առաջնորդարանը: Պատմեց անոնց պարոն Աղասիին բոլոր դուրցածները, որու վրայ ատենապետ Շովրայեան, խօսքը ներկայից ուղղելով՝ «Ես, օր առաջ լուր զրկած էի այդ պարոնին (Աղասիին), շէնք շնորհք պատասխան տալու՝ պատուիրակութեան կողմէ ըլլալիք հարցմանց, ատո՞նք են ատոր շէնք շնորհք պատասխանները, հազա՛ր ափսոս: Ի՞նչ տեղի կայ այդպիսի գոռոզ պահանջումներ ընելու. այդ կերպով խօսիլ՝ ամենահզօր տէրութեան մի միայն անկ է որովհետեւ «Մօսկոֆ թէքլիֆի»է այդ ըսածները(\*):

Եւ պահ մը մտածելէ ետքը. — «Տէր հա՛յր, ՂԶ օր

---

(\*) Չէյթուն առածի կարգ անցած է այս խօսքը, մեծարաններուն այսպէս կ'ըսեն:

պայման դնել ի գոհացումն պահանջից և հակառակ պարագային կառավարական պաշտօնարանը պիտի գրաւենք, ըսելը՝ անշուշտ բացէ ի բաց տղայամտութիւն է և վտանգը փութացնելէ, ուստի չ'ըլլայ որ այդ կարգի մասակար խօսքերէն որ և է բառ մը խօսիս սեղակալին, մշնչեւ մենք մեզի որոշենք ընելիքնիս և պատրաստ ըլլանք» :

Այդ ստոյգ է թէ մենք բոլորս ալ թշնամւոյն անըզգամութենէն զզուած և իւր անհեթեթ արարքներէն յուզուած ենք, իսկ զճ Սասունցոց ինչն'ը չըրին, արդ, իմ մասնաւոր կամքս է, ոչ թէ խօսք, գոնէ մեր Սասունցի եղբարց վրէժը լուծելու համար զէնք վերցնենք, թշնամւոյն վրայ իյնանք և Սասուծոյ ապաստանած անոր հպարտութիւնը խոնարհեցնենք, ու ակռաները խորտակենք, որպէս զի նուազ կրծէ հայու ոսկոր, ինչպէս ըսի, իմ կամքս այս է և ո՛վ որ պատերազմի կողմն է միայն ձեռք բարձրացնէ» . ներկայք այնքան համաձայն գանուեցան Շովրայեանի առաջարկին, որ իւրաքանչիւր անձ փոխանակ մէկ ձեռքի երկու ձեռք վերցուց, և ծափահարութեամբ վճռեցին պատերազմը : Ատենապետ Շովրայեան բաց աստի ի լուր ամենեցուն հետեւեալ հրահանգը արտասանեց . —

«Նախ պէտք է թշնամի պաշտօնեայք հսկողութեան տակ դրուին մեր կողմանէ, որպէս զի ասոնք ժամանակ գտնելով չի փախչին և հեռաւոր իշխանութեանց չ'հաղորդեն ըլլալիքը, ապա զօրանոցը կը գրաւենք, նորեկ պարոններն ալ կանչենք հոս, հանգիտ ընեն, հերիք է լեռները թափառին .

«Բ. Արեգին, Թրնուզ և Աւագ-կալ գիւղերը պարպուին հոս մեզի գան, իսկ պատերազմի գործողութեանց ձեռնարկելու համար հարկ է որ ամեն մէկը զատ զատ արթուն լինի, որպէս զի շփոթութիւն չլինիս, նաեւ

խոհական՝ և ոչ ամբարտաւան ու յանձնապատան ,  
միշտ ընկերի հակելով և մեծի անսալով . վասն զի Ձէյ-  
թունցոց համար թէեւ ազգային հարսանիք մ'է պատե-  
տերազմը , և մի և նոյն ժամանակ սակայն՝ անշուշտ  
չէք մտնար մեր պապերուն խոհեմութիւնը :

«Երկու օր առաջ Նազարէթ չալուշը խուճք մը  
զինւորներով Բարթուղիմէոս վարդապետին դրկած էի  
Մութ-ձոր , ուր Բարդուղիմէոս վարդապետ ալ իւրային-  
ներուն հետ խորհրդակցելով՝ իմ որոշմանս համանման  
որոշում տուած էր , զոր լսելով շնորհակալ եղայ , ըստ  
որում ինձ կատարեալ գաղափարակից գտնուած էր» :  
և Եէր հօր դառնալով ըսաւ , — պատուէրս մի , մու-  
նաք , Աղասիի խիզախ պատասխաններէն ո՛չ մին տե-  
ղակալին չի հաղորդէք , ետքը սուղի կը նստի մեզի , և  
«ուզար պոչէն վերցնել հարկ կ'ըլլայ( )» : Ասոր վրայ  
ցրուեցաւ ժողովը :

Նոյն գիշեր Շովրայեանի հրամանաւ խուճք խուճք  
մարտիկներ դրկուեցան Ձէյթունի հեռաւոր կիրճերը ,  
թշնամի պաշտօնէից փախուստը խափանելու : Այս պա-  
հուս Եէր կարապետն ալ տեղակալէն կանչուեցաւ եղած  
քննութեան արդիւնք , հաղորդելու . տեղակալը ման-  
րամասնաբար հարցուց տէրտէրին օտարականաց կամքն  
ու գաղափարը . տէրտէրը որպէս թէ նոյն միջոցին մտ-  
ցած ըլլալով Շովրայեանի պատուէրը( ) և տեղակալին  
«չիտակը գուրցէ» հրամանէն զայրանալով՝ առանց բան

---

(\*) Այս առած մ'է Ձէյթուն և դործը դժուարու-  
թեան մատնել կը նշանակէ :

(\*\*) Սակայն մենք կը կարծենք որ դա աւելի հա-  
մոզուած է եղեր Աղասիի տուած յանդուգն խորհուրդէն  
քան մեր իշխանի վերջին պատուէրէն , թէ «մի առ մի  
չյայտնէր Գայմազամին» :



մը վերապահելու օտքի վրայ կ'ելլէ և ցամառալից կը  
խօսի հետեւեալը . — Գայմագամ էֆէնտի, երկար խօս-  
քերու տեղի չկայ. վերջերս Եւրոպայէն եկած իշխան-  
ներուն հրամանն է . — տասներկու օրուան մէջ ինչ որ  
պիտի մտածէք՝ մտածեցէ՛ք այստեղը պէտք էր պար-  
պէք և յիշեալ իշխաններուն յանձնէք. այս ալ ըսեմ,  
որ այս օրէն սկսելով այս պալատը ձերը չէ, այլ ազ-  
գին է, ազէկ գիտցէ՛ք, ուրիշ ըսելիք չունիմ» : —

— «Տէր հա՛յր, այսպէս առանց պայմանաժամի  
գործ կ'ըլլա՞յ, ես չեմ կրնար կատարել, ինչ որ իրենք  
կը պահանջէին» : — «Անոնց պահաջը փոքր բան մը չէ,  
բայց դուք կարո՞ղ էք գործադրել» : — «Ա՛խ, տէր  
հա՛յր, խնդրեմ՝ մի անգամ ըսէք սա բանը» : — «Եր-  
լինի դաշնագրին պայմաններուն համեմատ Հայաստանի  
անկախութիւնը» : — «Ատկէ դիւրին ի՞նչ կայ, տէ՛ր,  
հիմա հեռագրին գլուխը կ'անցնիմ, եթէ իրենց փափա-  
գըն այս է, կատարումն ալ ինձնէ խնդրէ. ինչպէս որ  
ձեզի յայտնի է՝ մեր վեհափառ տէրը շատ գթասիրտ է,  
մանաւանդ թէ դիս դատ կը սիրէ, միմիայն տեղեկու-  
թիւն մը բաւական պիտի ըլլայ» : — Կը սխալիք, դուք  
կը կարծէք թէ ասոնք միայն Զէյթունի մասին կը մը-  
տածեն, այդպէս չէ. — ամբողջ ազգին անկախու-  
թիւնը կը պահանջեն. ա՛րդ, դուք այսքան մեծ գործի  
մը կարո՞ղ էք» : «Ա՛յո՛, կարող եմ, չըսի՞ ձեզի թէ տէ-  
րութիւնը դիս շատ կը սիրէ. այս խօսքին վստահ ե-  
ղիք» : — Պարոն գայմագամ, թուրքն ու հայը հայրե-  
նակից լինելով՝ իրարու բնութիւնը չաւ կը ճանչնան,  
բայց և այնպէս ձեր ազուէսի հաշիւները մենք ալ ու-  
նինք. եթէ չունենանք ալ՝ հասկնալու կարող ենք. ին-  
չէ՞ն յայտնի է, թէ հիմա երբ հեռագրի գլուխն անց-  
նիք մէզի դէմ չպիտի խօսիք. չէ՞ք գիտեր թէ օսման-

ցին անվստահելի մարդ է. ախսո՞ւս, այս բանը օրօրոցի մանուկն ալ գիտցաւ, սակայն, ես ըսելու մոռցած էի՞ ձեզ թէ անկարելի է հեռագրին գլուխն անցնիլ, որովհետեւ ըստ էրոչման ազգային ժողովոյն այդ բանը արգելուեցաւ. այս ալ չմոռնամ ըսել, թէ չըլլայ որ իմ ըսածներու կարեւորութիւն չտալով հեռագրատուն(\*) երթալու համարձակիս, որովհետեւ այս ու այն անկիւնը գտնուած պահապաններէն մէկէն անպատճառ գնդակ մը կուտէք, մեղք էք, բարեկամ էք՝ անոր համար կը մեղքընամ ձեզի» , ըսաւ աւ մեկնեցաւ : Եւ տուն երթալով փութաց անմիջապէս քանի մը հերոսներ զրկել զօրանոցի ճամբան, որ հսկեն տեղակալի անցքին. թեւ տեղակալը չի կրցաւ զօրանոցը երթալ՝ Տէրտէրին խօսքերուն համոզուելով, սակայն խորամանկութեամբ փողահար երկնուորին հրամայեց փողով եղելութիւնը միրալային հաղորդել. դիտուորը ըստ հրամանաց Գայմագամին հընչեցուց փողը հասկցնելով միրալային որ զօրանոցը ընդհուպ պիտի գրաւի հայերէն, գիտցած ըլլաք : Միրալայը լաւածին պէս՝ Մարաշ հեռագրեց, երեք օր վերջը Բերդիզ չայ(\*) ըսուած տեղը կանոնաւոր զօրքով լեցուեցաւ. միայն այսչափ չէ, նաեւ կը պատրաստուէին Ձէյթունի վրայ քալել, (հակառակ մեր պարոն պատգամաւորի (Ս. Ղասիի) խոստումին, որով կը համոզէր Ձէյթունցիները, թէ օսմանեան կառավարութիւնը բնաւ կանոնաւոր զօրք չի կրնար քալեցնել ձեր վրայ՝ թէ պետութեանց կամքին կը դպչի, մինչդեռ թուրք զօրքը կանոնաւոր բանակի վերածուելով Բերդիզ չայ կ'ամբանար,

---

( ) Հեռագրատունը կը գտնուի զօրանոցին մէջ որ քառորդ ժամ հեռու է Ձէյթունէն :

(\*) Բերդիզ չայ 7 ժամ հեռի է Ձէյթունէ դէպի արեւելահարաւ :

դոր Զէյթունցի լրտեսները տեսնելով եկան և հաղորդեցին Նազարէթ չալուչին, և հիւրերու պէս Պ. Աղասին) : Ահա պատերազմական գործողութեանց սկիզբը կամ Զէյթունցոց հարսանիքը : Եւ որովհետեւ ա՛լ անտարբեր մնալ կարելի չէր, Նազարէթ իշխան Արեգին գիւղացիներէն խումբ մը կազմելով Ջահան գետի աւազիի եզերքը ամրանալու և պահպանելու գնաց, որպէս զի թուրքաց արգիլէ այն գծով Զէյթունի վրայ քալելը : Իշխան Նազարէթի հետ կը գտնուէին հետեւեալք, Փանոս Ծամու Քէշիշեան, Պապեր քէհա Կարապետեան, դարձեալ Արեգինցի Փանոս Միքայէլեան, Կոկիսոնի թաշ-օլուխ գիւղէն Կարապետ Արփանոսեանց (ճէլլառ) և Պ. Աղասի իրեններով :

Թշնամի բանակի ներկայութիւնը և յառաջխաղացութիւնը անշուշտ հետեւանք եղաւ մեր Պ. Աղասիի գործողութեանց և Մօսկօվական առաջարկին այն է՝ Աջօր պայմաժամին, որ ուրիշ բան չէր, եթէ ոչ թիւրքի հացին եղ քսել, և աժանը սուղի նստեցնել. ինչ օգուտ ուսումը և քաղաքագիտութիւնը, երբ ասանք պատերազմական ձեռնարկութեանց և գործառնութեանց չեն պատշաճիր. աւելի լաւ էր փոքրիկ փարձառութիւն մը, քան այսպէս յիմարական գիտութիւն : Որչա՛ փ լաւ պիտի ըլլար տէրտէրի առաջարկը, հեռագրաթելը կտրելու մասին, որով թուրք բանակը թէև երեւնար, սակայն խիստ ուշ մնալուն Զէյթունցիք պէտք եղածին չափ միջոց պիտի ունենային լաւ կերպով պատրաստուելու ինչ որ է, եղածը եղաւ, օգուտը միայն սաչափ է, որ ապագայ սերունդը այսպիսի ձախորդ ձեռնարկութեանց վնասակար հետեւանքները կարդալով պատմութեան մէջ դատմը պիտի առնէ և զգոյշ ըլլայ :

Արդ, երբ լսուեցաւ թէ Բերդիդ չայ թշնամի բանակեցաւ, Շովրայեան փութաց ժողով մը կազմելով և Տէր Կարապետը կանչելով հարցուց. «Տէրաէր, դուն խօ-

սեցար գայմագամին ինչ որ քեզի պատուիրած էի չը  
խօսիս» : Տէրտէրը չ'ուրացաւ . «Այո , դուրցեցի ըսաւ ,  
բայց ներեցէք որ պատմեմ եղելութիւնը . «Ձեր որոշման  
համեմատ երբ գացի գայմագամին հաղորդել հիւրերուն  
կամքը , թէեւ մոռցած էի ձեր ինծի պատուիրածը , բայց  
նոյն ժամանակ իւր հարցապնդումն ալ զիս չափազանց  
նեղելով առանց բան մը պահելու ամբողջ եղածը գրու-  
ցեցի . այսու ամենայնիւ ինք չպիտի երթար հեռագրա-  
տունը , որովհետեւ չափէն աւելի անարեկեցի զինքը և  
չեմ ալ յուսար որ գացած է , որովհետեւ պահնորդներ  
դրած էի , անպատճառ պիտի իմացուէր այդ . ինչպէս  
կ'ըլլայ այս կը զարմանամ և սակայն գալանիք մը ըլ-  
լալու է ասոր մէջ : Գայմագամը կանչուեցաւ . Շովրայ-  
եանը հարցուց գայմագամին . — «Դո՞ւն տուիր այս հե-  
ռագիրը» : — «Ո՛չ , տէր իմ , հեռագրատունը զօրանո-  
ցին մէջ է , իսկ ես՝ ինչպէս որ տէր հայրն ալ գիտէ .  
զօրանոց չգացի» : — «Ուրեմն այս հեռագիրը ո՞վ զար-  
կաւ» . — «Աստուած վկայ՝ չ'գիտեմ» : — «Լա՛ւ , կա-  
րող էք երթալ . այս անգամ միրալայը կանչուեցաւ՝ ա-  
տենապետը հարցուց» : — «Դո՞ւն բերել տուիր այս զօր-  
քը . դո՞ւն զարկիր հեռագիրը» : — «Այո՛ , տէ՛ր» —  
«Պատճա՛ռ» : — «Ձեր ժողովքի երեկոյին պարոն գայ-  
մագամը փողով զօրանոցը լուր տուաւ , թէ գիշերով  
հայերը զօրանոցը պիտի գրաւեն , ես ալ իմ պաշտօնէս  
վախնալով խնդիրը Մարաշ յայտնեցի» : — «Կեցցե՛ս ,  
ճշմարիտը ըսելուդ համար սիրեցի քեզ , դնա՛ չըլլայ որ  
գայմագամին հետ տեսնուիս , հսկողութեան տակ ես» :  
— «Նորէն գայմագամը կանչուելով հարցուց իշխանը ,  
— ինչո՞ւ համար այս վատութիւնն ըրիր , մինչդեռ մենք  
կ'ուզէինք խնդիրը անուշ տեղը կապ'ել , դուն ինչո՞ւ  
գործը մեծցուցիր և այսչափ զինուոր մեր վրայ բերել  
տալ կը ջանաս . գէշ մարդիկ էք վերջապէս , խաղաղու-

Թիւնը չէք սիրեր, բայց հոգ չէ, ինչ որ պիտի ըլլայ այն կ'ըլլայ, տեսնենք. դուք ձեր թագաւորին ու ձեր տէրութեան կը վստահիք, իսկ մենք, որ թագաւոր և իշխանութիւն չունինք մի միայն Աստուծոյ կ'ապաւինինք:

Գայ. — Ներեցէ՛ք Տէր, ես խաղաղութիւնը կը սիրեմ, խռովութիւնը կ'ատեմ, դուք ինձ հարցուցիք, թէ հեռագրատուն գացի՞. ես ալ երդում ըրի, թէ չը գացի: Եւ իրօք ալ այսպէս է:

Իշխ. — Փողահարի միջոցաւ տեսեր էք գործը:

Գայ. — Այո՛, տէր, երկիւղը գիտէ՛ք. երկիւղէս լուր տուի. այս պատճառաւ յանցաւոր կամ խովարար չեմ համարուիր: Եթէ դուք զիս յանցաւոր կը համարէք, ձեր նէրուշութիւնը կը խնդրեմ, ա՛նձեր քուրը, ա՛նձմեր վիզը, կարող էր ձեր ուղածն ընել: Բարձեալ ներողութիւն կը խնդրեմ: Այսպէս կը քծնէր Գայմադամը:

Իշխ. — Մ'նք ձեզ պէս չենք, արդէն ներուած է, ապահով եղիք, միայն մի՛ մոռնա՛ք, թէ հսկողութեան տակ էք և ձեզ արգիլուած է միրալային հետ տեսակցիլ, մինչեւ որ տեսնենք թէ վերջը ո՞ւր կը հասնի: Դուք կը վախնաք, այս ձեր խօսքէն յայտնի է: Դուք կը վախնաք, թէ մէկը ձեր վրայ գնդակ կ'արձակէ, բայց ապահով եղի՛ք, ձեզ սպաննող չըլլար եթէ դուք ձեզի տրուած հրամանին համեմատ շարժիք: Կրնաք երթալ:

Գամադամը հրաժեշտ տալով մեկնեցաւ: Յետոյ իշխանը:

Ապա իշխանը կանչելով եկեղեցականները հրամայեց որ եկեղեցին մեծ պաքի պէս սգաւորուի, բոլոր ժողովուրդը ապաշխարութեան աղօթքներ ընէ և նախախնամութեան օգնութիւնը հայցէ: Բաջալեր կարգաց նաև ամէն կարգի մարդոց, այրիներու ու կիներուն, աղօթել ու պատերազմիլ, մասնաւորապէս քաջասիրտ եւ հուժկու կիներուն կը յորդորէր որպէս զի աղամարդու

պէնք առնեն ու կռուին, որովհետեւ առիւծին արձը և  
էզը չրլար հըսէր: Իսկ եկեղեցականները երկու պաշ-  
տօն ունէին հոգեւոր և մարմնաւոր, աղօթել եկեղեցիին  
մէջ և դուրսը խրախուսել հայրենիքի զինաւորները, ի-  
րենք իսկ քաջասիրտ կռուողի օրինակ հանդիսանալով  
աշխարականներուն: Մեր նախնիք, կըսէր իշխանը, ի-  
րենց ազգութիւնը, հայրենիքը ու կրօնքը զէնքով  
միայն պաշտպանեցին, և վստահ եմ, որ Աստուած այդ-  
պիսիներուն չի խնայեր իր օգնութիւնը. ուրեմն մեր  
հայրերու յիշատակը թող առաջնորդ ըլլայ մեզի:

Քահանաները միաբերան և սիրով ընդունեցին իշ-  
խանին առաջարկը, ապա օրհնելով ժողովուրդը և հա-  
մայն ազգը ցրուեցաւ ժողովը:

Ժողովը ցրուելէն ետք չորս եկեղեցիներու կոչնակ-  
ները սկսան հնչել: Քահանաները հարկ և ամ յորդոր-  
ները տալէ յետոյ սեղաններու վարագոյրները գոցեցին,  
ինչան սգոյ, մինչեւ չոր ամիս, 1895 հոկտ. 12էն մին-  
չեւ 1896 փետր. 1: Այս սգոյ օրերուն հարսներ ու օ-  
րիորդներ քուրճ հագած ու իրենց զարդերէն մերկացած  
էին, այնպէս որ բոլորին ուշադրութիւնը կռուին վրայ  
կեդրոնացած էր միայն:

Հայերը յաղթականօրէն կը դիմադրէին թշնամիին և  
մեծ ջարդ կուտային, այն պահուն երբ թիւրք կառա-  
վարութիւնը ամբողջ Հայաստանը արիւնով կը լեցնէր:  
Հայերուն կողմէն կռող 6000 հոգի էին, որոնց 4000ը  
միայն զինաւած էին և 2000ը ասպարով, դաշունով և  
ուրիշ մահացու գործիքներով. թշնամին ունէր ըստ  
թրքաց վկայութեան 110.000 կանոնաւոր ու պաշիպօ-  
զուք զօրք, անթիւ ռազմամթերքով ու 13 թնդանօթ-  
ներով, որոնց մէկ փոքր մասը բաւական էին Ձէյ-  
թունցիներուն՝ ամբողջ հեռաւոր շրջաէաներուն տէրը  
տէրը դառնալու համար: Հակառակ անեղ զօրութեան,

Ձէյթունցիք բաւական զօրք սպաննեցին, զօրանոցը<sup>(\*)</sup> գրաւեցին, միրալայ Իֆֆէթ պէյը և յիսունի չափ սպայ, 600 զօրք և Ձէյթունի գայժագամը՝ Աֆնի պէյ, գերի բռնեցին :

Այս դէպքերուն՝ Ձէյթունցիներուն համար յաջող և պատուաւոր վախճանէն ետքը, Ձէյթունցիներուն միակ խորին և անկեղծ սուգ պատճառող բանն եղաւ Հազոր Շովրայեանի մահը, Ձէյթունի ժողովրդին չորս սիրելի իշխաններէն մէկը որ հեռատես խոհականութիւնով ու փորձառու իմաստութիւնով, թէ խաղաղութեան և թէ պատերազմի ատեն կ'աշխատէր ժողովրդին եռանդը, հաւատքը, հայրենասիրութիւնը, արթուն և վառ պահել : Մեռաւ 1896ի Յունիսի վերջերը 76 տարեկան, և որուն, Ձէյթունի երախտագէտ ժողովուրդը, ամենափառաւոր թաղում մը ըրաւ, անոր մարմինը ամփոփելով Ձէյթունի դիմաց մեծ գերեզմանոցին մէջ :

Իշխան Շովրայեանի մահը, Նեստորը Ձէյթունի, անփոխարինելի կոչուստ մըն էր իր սիրած ժողովրդին համար :

Այո վերջի կռիւը, միանգամ ընդ միշտ ապացուցեց թէ Ձէյթունցին դրսէն եկած քարոզներու և խորհուրդներու շատ չի կարօտիր կռուի ժամանակը և տակտիկը գիտնալու համար : Արդէն եօթէն եօթանասուն տարեկան ամէն մարդ գիտէ զէնք գործածել և գիտնն նաեւ իրենց երկրին բոլոր պայմանները, գաղտնիքները : Ինչ որ կը պակաս իրենց դրամն է ուրիշ ոչինչ :

---

(\*) Չօրանոցը գրուած պտհուն մէջը զօրք և պաշտօնեայ գրեթէ 600 հոգի կը գտնուէին, պաշտօնեաները իրենց ընտանիքով ազատ արձակուեցան : Իսկ զօրքերու ջարդուելուն պատճառը Ձէյթունի կիներուն կողմէն, կը պարզենք իր կարգին :

ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱՄ, ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչդեռ Ձէյթուն գերմարդկային ճիգեր թափելով կը մաքուէր այսպէս բռնակալութեան դէմ իւր խիստ սահմանափակ ուժերով, և իւր դարաւոր իրաւանց ու աղատութեան սլանալանութեան համար յօժարակամ կը զոհէր իւր կեանքն ու իշքը, այն ատեն թուրք կառավարութիւնն ալ Սուլթան Համիտի նախագահութեան տակ իւր կոտորածի ծրագիրը կը պատրաստէր աւելի ընդարձակ յատակագծով մը:

Ազատասիրութեան ոգին և ինքնավարութեան ճրգտումը ո՛չ միայն Ձէյթունի, այլ և ամբողջ Հայաստանի հայ ժողովրդեան մէջ երթալով ընդարձակ ծաւալ կը ստանար. ժամանակի բերումը, քաղաքական հանքամանքները և ազգին հետզհետէ ունեցած մտաւոր ու բարոյական զարգացումը յառաջ բերած էին հոգեկան այս նոր փոփոխութիւնը և նպատակի այս նոր ուղղութիւնը խաղաղութեան այնքան սիրահար հայ տարրին մէջ:

Միւս կողմանէ թուրք բռնապետութեան աճեցուն ճնշումները քրիստոնէից դէմ և Հայաստանի ամեն գաւառաց մէջ իրենց շահատակութիւններն արձակ համարձակ գործող կիսավայրենի ցեղերու հարստահարութիւնները մեծապէս կ'օգնէին այս հոսանքը մտցնելու ժողովրդեան ամէն խաւերուն մէջ:

Հայն ու թուրքն սկսած էին այլ եւս ծուռ աչքով նայիլ իրարու, զիրար թշնամի նկատել և իրարու սպառնալ: Լոյսի ու խաւարի, յառաջադիմութեան ու յետադիմութեան, ազատութեան ու բռնակալութեան ոգիներ էին, որ դէմ առ դէմ կուգային. պէտք էր վերջապէս որ մին կամ միւր յաղթանակէր:

Սուլթանի ծրագիրը պարզ էր ու բացայայտ. —



Չարդել, փշրել ինչ որ կը հակառակէր իւր բռնապետական սկզբունքներուն, արդ, հային ձգտումները չէին երբէք համապատասխաներ իւր ուղղութեան, ուտի վճուեց ընդհանուր կոտորածով մը վերջ տալ ամեն գայթակղութեան և գինքն անհանգիս ընող հայկական խնդրոյ, որու հիմը դրուած էր նախ Սան-Ստեփանօի դաշնագրին և ապա Պերլինի վեհաժողովին մէջ :

Հասաւ վերջապէս 1895ի աղէտալի թուականը, և մայրաքաղաքէն գնացած բարձրագոյն հրամանին համեմատ սահմանադրութիւններէն սկսած մինչեւ Կ. Պօլիս ամեն քաղաք և ամեն գիւղ, ուր որ հայ կար՝ սկսան կոտորել անխնայ, ո՛չ հասակի խնայեցին և ո՛չ սեռի, ո՛չ աստիճանի և ո՛չ դիրքի. մանուկը իւր մօր գրկէն, կիներ իւր ամուսնէն, հայրը իւր զաւակներէն անջատելով՝ անոնց աչքին առջեւ խողխողեցին, յօշօտեցին դադանարար. ո՛չ մանկական արտասուքները, և ո՛չ ծնողական պաղատալից հառաչանքները կ'ազդէին անոնց քարոզեալ սրտերուն : Թուրք խուժանը, որ սուլթանի կամակատար գործիքն էր, մոլեռանդ շէյխերու գրգռիչ քարոզութիւններէն աւելի եւս բորբոքած մէկ ձեռքով կը Չարդէր, միւսով կը կողոպտէր, և ինչ որ չէր կարող իրեն սեփականել՝ կը քանդէր և կը փշրէր, կը վառէր, մոխիր կը դարձնէր :

Այս վիճակին կուզէին ենթարկել նաեւ Չէյթուներ որ վաղ իսկ զգացած անոնց այս չարագուշակ միտումները՝ մանաւանդ Չէյթուներէն Յ ժամ հեռաւորութեամբ դէպի հարաւ գտնուող Գարանլըգ-Տէրէ (մութ ձոր) Բարդաւղիմէոս վարդապետի տուած ազդու յորդորներէն խրախուսուած՝ ասպարէզ չիջողաւ թշնամիին անակնկալ յարձակումներով իրագործել իւր կործանարար խորհուրդը, այլ անկէ առաջ Քինքը պատերազմ հրատարակեց անոր դէմ հետեւեալ տեքստով

գործողութիւնները կատարելով յաջորդաբար :

Ա. Երկու հայագէտ թուրք ոստիկաններ, որոնք կանխաւ չարիք գործած էին շրջակայ գիւղերը հարկապահանջութեան պատճառաւ և Դամասկոսցի շարասիրտ ու հայատեաց դատաւորին նրամանաւ շարագործութիւնները իրենց գազաթնակէտին հասուցած էին, որպէս թէ իրենց պաշտօնէն հրաժարած ըլլալով ոստիկանութենէ կուզեն հայ հրոսակներու խուճրին մէջ մտնել, ուստի առաջարկեցին յեղափոխականներէն միոյն, որ հաճի գոհացում տալ իրենց փափագներուն, անմիտները կուզէին այս կերպով լրտեսել յեղափոխականաց շարժումը ու աւելի հիմնական չարիքներ հասցնել Զէյթունի՝ բայց երկու գնդակի հարուածներ երկուքն ալ շուտ հասուցին իրենց փառքին : Արեգիւնցերը իսկոյն անխեղացուցին ասոնց դիակները, զոր ի գուր փնտուեց երկար ատեն մեր աչալուրջ կառավարութիւնը. այս դէպք պատահեցաւ Սեպտ. ամսուն :

Բ. Ըալլատ անուն հայ հրոսակը սեպտ. ի մէջ կապանէն գալու ժամանակ Սէկ կոչուած կիրճը խուճք մը Ղուճարլըցի թուրքմէններու հանդիպելով կռուեցաւ անոնց հետ երկու ընկերներով և անոնցմէ երկու հոգի ապաննեց ու երկու ալ վերաւորեց, և բոլոր ունեցածնին գրաւելով՝ Յեղափոխական խուճքին յանձնեց :

Գ. Հոկտեմբեր Ծին, ուրբաթ օրը Հաճընէն թուրք հարիւրապետ մը Մարաշ երթալու համար Յրնուզ եկաւ իւր ընտանեօք և սկսաւ խիստ լեզուաւ մը անարգել հայերը ազատա հայնայութիւններ ընելով անոնց կառավարութեան դէմ բռնած իրենց ըմբոստ վարմունքին համար, և կը սպառնար իրենց արժանաւոր պատիժը տալու համար՝ կառավարութեան ձեռք առնելիք ազդու միջոցներուն գլխաւոր գործադիրներէն մին ալ ինքըն ըլլալով յիմաք արարածը յայտնի կերպով մահուան հրաւէր կը կարգաբար : Այս նա-

խատին քներլէն ունկնդիր Քրնուզցիք չի կրնալով հան-  
դուրժել՝ տեղն ու տեղը սպաննեցին զայն իւր կնոջ և  
երկու զաւակաց հետ մէկտեղ :

Դ. Առամարլըցի թուրքերու սպանութեան դէպքին  
քննութեան համար Մարաշէն հազարապետ մը գալով՝  
Սէկ գնաց և այն տեղէն Քրնուզ գալով հոկտեմբեր 10ին  
տեղւոյն հայ միւտիրը և ուրիշներն ալ քննութեան են-  
թարկել կուղէր, մինչդեռ կարգ մը անմեղ հայեր ար-  
դէն ձերբակալած էր իբրեւ կասկածելի կամ իբրեւ հե-  
ղինակ ոճրին և անոնց շատ նեղութիւններ տուած :  
Քրնուզցիք լսելով զայս՝ Սու-չաթը կոչուած տեղը ա-  
նոր դէմը ելան ու շարաչար սպաննելով զայն հետը  
գտնուած 7 թուրք ոստիկաններով մէկտեղ, ազատեցին  
կալանաւորները :

Այն միջոցին այնտեղէն կանցնէին խուճաք մը չէր-  
քէղներ, որոց ապաստանեցան ոստիկաններէն երկուքը,  
անոնք ալ աղաչեցին հայոց, որ իրենց սիրոյն համար  
խնայեն անոնց կենաց, և որովհետեւ Զէյթունցիք կան-  
խաւ խաղաղութեան դաշինք կապած էին չէրքէզաց հետ,  
չուղեցին երկու թուրքի համար աւրել հաստատուած  
դաշինքը ու թոյլ տուին, որ երթան խաղաղութեամբ :

---

Ա.

ԲԵՐԴԻՉ ՉԱՅԻ(\*) ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մարաշի կառավարութիւնը տակաւին անգէտ այս վերջի դէպքերէն, սակայն իւր առաջադրած չար խորհուրդը ապահովապէս ի գործ դնելու համար պէտք եղած հասխահոգ միջոցները ձեռք առնելով՝ կուզէր աւելցնել Չէյթուէի զօրանոցին ուժը: Երբ որ Չէյթուէի զօրանոցի գնդապետէն ալ հեռագիր ստացաւ բաշան ամենայն կատաղութեամբ գունդ մը զօրք ճամբայ հաննց Մարաշէն, որոնք մինչեւ Ջահան գետին միւս եզրը Բերդիգ չայը կոչորած տեղը հասան Սեպտ. 28ին:

Այս լուրը հասնելով յեղափոխականաց պետ Պ. Ա. դասիի և Ենի-Տիւնեա նազարէթ իշխանի՝ վճռեցին անոնց մուտքն արդիւլել զինու զօրութեամբ Շամր-քէշիշեանի, Սաչէր քէհեայի, Միսայէլեանի և Ճալլաղի հետ միասին, և անմիջապէս 130 քաջարի հայոց գլուխն անցած գնացին մինչեւ Բերդիգ չայը որ տափարակ դաշտ մ'է, յարձակեցան զօրաց վրայ. կռիւը տեւեց երեք ժամ և անոնցմէ 33 հոգի սպաննեցին ու 12 ալ վիրաւորեցին, մնացեալները ամեն բան թողլով փախչելու կը պատրաստուէին՝ երե Բերդիգցի հազարաւոր զինեալ թուրքեր սկսան Չէյթուէնցւոց վրայ քալել. այդչափ բազմութեան դիմադրել խիստ դժուար էր մանաւանդ

(\*) Բերդիգ կամ Բերդուս նշանաւոր էր Ռուբինեանց ժամանակ իբրեւ իշխանանիստ քաղաք: 1107ին կը գտնուէր Գող-Վասլի ձեռքը, որոյ մահէն յետոյ 1137ին Թորոս Բ. տուաւ դայն Գըլըճ Ասլանին՝ իբրեւ երաշխիք խախաղութեան: Ասոր բնակիչները, որ ժամանակաւ հայ էին, բռնութեան և հալածանաց երեսէն մահմէտական կրօնը ընդունեցին:

տեղւոյն դաշտային դիրքին պատճառաւ ապաստանե-  
լու տեղ չի կար, ո՛չ մարակոց և ո՛չ պատնէշ ու-  
նէին հայերը, ուստի լաւագոյն համարեցին մէկ կողմէն  
կռուիլ, միւս կողմէն յետս նահանջել. այս կերպով ան-  
ցան Ջահան գետը գրեթէ անմնաս, վասն զի 150 հո-  
գիէն ճալլադ-կարապետը և երկու ալ ուրիշ Արեգին-  
ցիներ նահատակուեցան և Նազարէթ իշխանը ուրիշ ե-  
րեքի հետ ոտքէն վիրաւորուեցաւ, որ ապա առողջա-  
ցաւ իւր մօրը տարած դարմաններու շնորհիւ: Այս ա-  
ռաջին նահատակ ճալլադի գլուխը թուրքերը կտրեցին  
տարին Մարաշ՝ «Նազարէթ չավուշի գլուխն է» ըսելով.  
Թուրքերը մխիթարուեցան ոչ սակաւ:

Բ .

### ԶՕՐԱՆՈՑԻ ԳՐԱԻՈՒՄԸ

Բերդիզ չայի կռւոյն գիշերն իսկ որոշուեցաւ գրա-  
ւել զօրանոցը, ուստի խուճք մը պատերազմիկներ առաջ  
դրկուեցան որ երթան զօրանոցի շուրջը պատնէշներ կանգ-  
նեն, իսկ մնացեալ զօրքը Ալապաշի Օյնախ կոչուած  
տեղը քիչ դադար առեր է ու կերակրուելէ յետոյ 100ի  
չափ Քրնուզցիներով իրենց օգնութեան եկող Տ. Բար-  
դուղիմէսս վարդապետի ընկերակցութեամբ արշալոյսի  
մօտ հասան զօրանոցին քով, զոր ամեն կողմանէ պա-  
շարեցին և պատնէշներու վրայ կանգնեցին խաչանիշ  
դրօշակները: Ապա հոգ տարին հեռագրական թելերը  
խզելու որպէս զի Մարաշի հետ ունեցած յարաբերու-  
թիւննին կտրեն: Թէև այս գործողութիւնը կանուխէն  
հարկ էր ընել զոր Աղասիի անսալով չրրին:

Հոկտեմբեր 12ի առաւօտը երբ կատարելապէս լու-

ապացաւ՝ երկու կողմէն սկսաւ հրացանաձգութիւնը։  
Զօրքը — թուով 540 — զօրանոցին մէջ ամբողջած, մա-  
նաւանդ պէտքեղածէն աւելի ուտեստ ու ռազմամթերք  
ունենալով քովը՝ չէր ուղեր անձնատուր ըլլալ, իսկ մե-  
րայինք պատնէշներու ետեւ կանգնած ու յարթանակի  
սիրովը վառուած յամառութեամբ կը կռուէին, պաշա-  
րողաց թիւը հետզհետէ ստուարանալով գրեթէ 100 հա-  
զիի հասաւ, այսու ամենայնիւ տակաւին պարտութիւն  
չէին խոստովաներ թուրքերը, և հարկ եղաւ երեք օր  
անընդհատ կռուիլ (Ա) միեւնոյն ժամանակ կառավարա-  
կան պալատն ալ, ուր 60ի շափ զինուոր կը գտնուէին,  
պաշարուած ըլլալով՝ երկու օրէն անձնատուր եղան ա-  
նոնք, և Գայմազամ Աւլի պէյ գերի տարուեցաւ և  
յանձնուեցաւ Բասիլօսեան Մ. Կարապետ աղայի տան  
հակողութեան, որը տեսնելով թէ ո՛ր և է մնաս չի հաս-  
նիր իրենց՝ լուր տուաւ զօրանոցը զինուորական փողի  
միջոցաւ որ անոնք ալ անձնատուր ըլլան, գիտնալով որ  
հակառակ պարագային կրա՛յ պիտի տրուէր զօրանոցին ։  
Հրամանատար գնդապետն ալ, որ արդէն պատրաստ էր  
յանձնուելու՝ սակայն իրենց կեանքէն կը վախնային, այս  
տպանովիչ տեղեկութենէն խրախուսուած անձնատուու-  
թեան նշանը տուաւ և խնդրեց մէկը, որ երթայ իւր

---

(Ա) Այս միջոցին զօրանոցի դրօշակակիր Մօտ Մար-  
տիրոս Եօղուենեան կամ Սերաբեան կը հսկէր Յովհաննէս  
եղբօրը հետ, յանկարծ զօրքերէն յիսնապետ մը յար-  
ձակեցաւ դրօշակը ձեռք ձգել, քաջարի Մարտիրոս իր  
չախմախու հրացանը ուղղելով զինուորին յանուն Յիս-  
թրս, ըսաւ ու բլթակին տպաւ, անմիջապէս զինուորը  
տապալեցաւ ու անշնչացաւ, այս կտրիճը կայծակի ա-  
րագութեամբ իրրեւ արծիւ սլացաւ ու դիակին ստքէն  
քաշելով բոսին մէջ նետեց ։

մօտ այս մասին պէտք եղած բանակցութիւնները կատարելու համար :

Թէ՛ յեղափոխականաց և թէ՛ իշխանաց կողմանէ պատշաճ և արժանաւոր դատուեցաւ Ֆրնուդի վանքի արիասիրտ վանահայր Տ. Բարդուղիմէոս վարդապետը, որ սուրը կշտին և խաչը կուրծքին վրայ, պաշտօնական վեղարն ալ դիխին սպիտակ ձիու վրայ նստած անվեհեր ու համարձակ դնաց թուրք սպայից մօտ, որոնք արժանավայել յարգանօք ընդունեցին դինքը : Բանակցութիւնը աւարտելէ յետոյ դուրս ելաւ հայրենասէր եկեղեցականը, սուսերամերկ կանգնեցաւ զօրանոցի դրան մէկ կողմը, իսկ անոր հանդէպ՝ փոքր ինչ հեռաւորութեամբ կանգնեցան «Հնչակեան» պարոնայք Աղասի, Ապահ, Հրաչեայ, Մլէն, Նշան կարապետ և Չէյթունի իշխանք ու իշխանազունք՝ նոյնպէս սուսերամերկ : Այնուհետեւ յետոյ մը-մը դուրս ելնել սպայք և զօրքեր վարդապետին բարձրացուցած սուրին տակէն անցնելով Չէյթունի դրօշակին խոնարհութիւն կ'ընէին «Էյվալլահ» ըսելով : Միւսոյն ձեւակերպութիւնը կատարեցին. նաեւ զօրանոցը ապաստանող թուրք տիկնայք, որք ի միջի այլոց կ'ըսէին «Նաշասըն էրմէնի միլլէթի վէ Չէյթուն իկիտլէրի, զիրա ախլագլարը թէմիզ տիրլէր, տէյիլ պիղիմ թիւրքլէր կիպի պօղուգ. — կեցցէ հայ ազգը և կեցցեն Չէյթունի քաջազունք, վասն զի մաքուր բարոյականի տէր են և ո՛չ մեր թրքաց նրման ապականուած» : Չօրանոցի կատարելուպէս գրաւումը կատարուեցաւ հոկտ. 17ին չորեքշաբթի օրը (1) :

---

(1) Չօրանոցի մէջ 650 հոգի զօրք, կին և երախաներէ զատ, Չէյթունցիք գրաւեցին 120,000 փամփուշտ, 2 կրուքի թնդանօթ, 600 մարթին հրացան, 170 սուսեր, 2 տակառ վառօղ, 2 գարիի ամբար լիքը, 2 բրինձի և

Բոլոր ների ինկած այս զինւորերը(1) Զէյթունցիք իրենց տուներուն մէջ տեղաւորեցին մաս-մաս, կիներն ալ կանանց մօտ դնելով՝ հանգիստ ու ապահով պահեցին, ընտանիք ունեցողներն ալ իրենց ընտանեաց հետ միասին Ալպուսթան դրկեցին: Իսկ Զօրանցի Միրալային Իւֆֆէտ պէկը, Կիւլվանէսեան Նազարէթ աղայի տունը դրուեցաւ իբրեւ գերի հսկողութեան տակ:

Զօրանցի գրաւումը շատ օգտակար եղաւ Զէյթունցւոց, ո՛չ միայն իբրև ապաստան և իբրև մարտկոց ծառայեց նա հայոց, այլ և անոր մէջ գտնուած զէնք, պաշար և այլ ռազմամթերք երկու թնդանօթներով հանդերձ հայոց ձեռքն անցնելով՝ ի վերջոյ սասակացող պատերազմին մէջ մեծապէս նպաստեցին մեր շահողութեան:

Ի պատիւ Զէյթունցւոց պէտք է այստեղ նշանակենք այն կարեւոր պարագան, որ ամեն օտարաց և նոյն իսկ թշնամի թուրքաց կողմանէ մեծապէս գնահատուեցաւ, այն է՝ որ գերի ինկող պարտօնէից և սպաներու կանանց պատիւն կատարելապէս անվճար պահ-

լուքիայի ամբար, 30 հատ վառարան, 40,000 քիլօ ալիւր, 30 տակառ ձիթաիւղ, 1500 գուլպայ, 300 զօրքի համազգեստ, 6 ջորի, երեք ձի, 1 դեղարան:

(1) Զօրքերու անձնատուր եղած ժամանակ, նայերը բարձրաձայն «Ապաւինեցաք ի Սաչ քո» կ'երգէին զօրանցի աշտարակին գագաթէն, ի նշան ուրախութեան ուրկէ կոչնակ մըն ալ կախած էին իսկ զինաթափ զինւորները, միրալայի հրամանով «ողբաձայն նուագ» անկողով, յաղթական հայ պատերազմիկներու առջև ինկած Զէյթուն մտան: Թրքաց համար սրտաճմլիկ տեսարան մըն էր, հայոց համար ազգային հին փառքերու յարութիւն մը:



ուելէ դատ՝ անոնց վրայ գտնուած մեծաքանակ դրամ-  
ներն և կանացի գոհարեղէններն ու զարդերը նոյնպէս  
իրենց թողաւեցան, ո՛չ ոք ձեռք երկնցուց անոնց, թէև  
ամէն հայ գիտէր, թէ թուրքը ամեն տեղ հայ կանանց  
և օրիորդաց պատիւը բռնաբարելէ յետոյ՝ ո՛չ միայն ան-  
ոնց ամեն զարդերը, այլ և իւր մերկութիւնը ծածկող  
միակ դգեստն իսկ լրջաբար և անդժաբար քաշած ա-  
ռած էր անոր վրայէն, գլխովին մերկ թողլով զայն :  
Ահա անոնց՝ և Չէյթունցւոց միջեւ եղած անհուն տար-  
բերութիւնը :

Գ.

ՉՈՒԳՈՒՐ-ՀԻՄԱՐԻ ԳՐԱՒՈՒՄԸ

Չօրանոցի գրաւուած օրը լուր եկաւ, թէ Յրնուզի  
վերաբերող Չուգուր-Հիսար գիւղի թուրքերը շրջակայ  
չերքէղներու հրուէր կարդալով պատրաստուած են ի-  
րենց մէջ գտնուած Զ) տուն հայերը(\*) ջարդելու :

Մեծամեծաց խորհրդով Յրնուզի հայ միւսիւրը հե-  
տը 100ի չափ մարդ առած դիմեց նոյն գիւղը, յորդո-  
թելու թուրքերը որ հանգիստ կենան, հասկցնելով մա-  
նաւանդ, թէ հայերը, թուրք հասարակութեան հետ  
գործ չունին, կուզեն հաշտ ապրիլ անոնց հետ, իրենց  
վէճը կառավարութեան դէմ է և այլն :

Այս խօսքերը չի ներգործեցին բնաւ անոնց դրդու-  
եալ մտքին վրայ, և անոնք բացէ ի բաց յայտարեցին

(\*) Ասոնք Յրնուզէն եկած փոքրիկ գաղթականու-  
թիւն մըն են, և Չուգուր-Հիսարէն կէս ժամ հեռու կը  
բնակին :

իրենց ունեցած հաստատ մտադրութիւնը : Մերայինք  
պնդեցին , թէ թոյլ պիտի չի տան , որ այնպիսի ցաւալի  
դէպք մը տեղի ունենայ Ֆրնուզէն : 3 ժամ միայն հեռա-  
ւորութիւն ունեցող գիւղի մը մէջ , և այս մասին ապա-  
հով ըլլալու համար կուզեն թուքաց զէնքերը ժողովել ,  
անոնք մերժեցին իրենց զէնքերը յանձնել կեովուրնե-  
րու , ընդհակառակն յարձակման ալ սկսելով Ֆրնուզցի  
մը սպաննեցին և ուրիշ մը վիրաւորեցին : Այն ատեն  
հրամայեց միւտիւրը , որ փոխադարձ կրակ անեն անոնց  
վրայ , որոնք քիչ մը ատեն դիմադրելէ յետոյ անձնա-  
տուր եղան , ոմանք ա այլ և այլ տեղեր փախան : Այս  
կուռոյն մէջ Չուքուր-Հիսարցեաց կորուստը եղաւ 40  
մարդ : Այս դէպք , այսինքն Չուքուր-Հիսարի գրաւումը  
կատարուեցաւ հեկտ . 19ին :

Գ .

### ԵԱՅՃ ՕՂԼՈՒԻ ՅԱՐՁՍԿՈՒՄԸ ԱՆՏՐՈՒՆԻ ՎՐԱՅ

Չուքուր-Հիսարի թուրք փախստականները սոսկալի  
գոյներով նկարագրեցին Չէյթուհեաց և Ֆրնուզեաց ա-  
րարքները՝ ամէն կողմ գրգռելով թուրքերը , մասնա-  
ւորաբար Եայճօղլի տէրէպէյին , որ կատարելով , բաղմա-  
թիւ պաշտ պօզուզներ հաւաքեց գլուխը ու եկաւ Շի-  
վիլկի կոչուած հայ գիւղին վրայ , որ Անտրունի գայ-  
մագամութեան տա՛լն է՝ անկէ երեք ժամ հեռաւորու-  
թեամբ և կուզէր այնտեղի հայերը ջարդել Չուքուր-Հի-  
սարցեաց վրէժը լուծելու համար . հայերը աղաչեցին , որ  
այդ չարիքը չի գործէ իրենց դէմ , վասն զի իրենք տէ-  
րութեան հաւատարիմ են« : — Եթէ հաւատարիմ էք՝  
յանձնեցէ՛ք ուրեմն զէնքերնիդ «ըսաւ պէյը» : — Ո՛չ ,  
պատասխանեցին նոքա . չենք կուռիր ձեր հետը , բայց  
չենք ալ յանձներ զէնքերնիս» :

Այս պատասխանին վրայ թուրքաց կողմանէ սկսաւ հրացանաձգութիւնը. հայերն ալ տուներու և պատնէշներու ետեւէն փոխադարձաբար կրակ անելով անոնց վրայ, կռուեցան ամբողջ երեք օր: Այդ միջոցին Տ. Յարութիւն անունով քահանայ մը ինքզինքն աղատելով անոնց մէջէն, խոտորնակ ճամբաներով հասաւ Բարթուղիմէոս վարդապետին մօտ և իրենց նեղ վիճակն անոր հասկըցնելով օգնութիւն խնդրեց: Վարդապետն առանց ժամանակ կորսնցնելու հետն առաւ 200 Ֆրանսուզցիներ ու աճապարեց իւր սիրելի հօտի պաշտպանութեան: Բարերադրաբար կէս ճանապարհն հանդիպեցաւ Շիվիլկիցի հայերու, որոնք աւելցնին իրեն՝ հայոց յաղթանակը և թուրքաց փախուստը՝ սպաննելոց ականջները թաշկինակով ներկայացնելով վարդապետին որ թէպէտ ուրախացաւ այս յաջող ելքին համար, սակայն աստիճանով չի սեպեց այլ եւս անոնց՝ գիւղին մէջ մնալը, և իրենց անասուններովը մէկտեղ գիւղէն հանելով զանոնք բերաւ Ֆրանսուզ ամենայն ապահովութեամբ:

Տակաւին ճանապարհին մէջ էին՝ երբ իմացան թէ Անտրուսիի գայմադամութեան կեդրոնը 150ի չափ բանտարկեալ հայեր կան, զորոնք թիւրքերը պատրաստուած են սպաննելու՝ եթէ չ'աղատուին: Ուստի արդէն գրաւուած զինուորներուն վրայ 100ի չափ շիվիլկիցիներ և 100 ալ Չէյթուէն օգնութեան եկող հայեր աւելցնելով գրեթէ 400 հոգևով գնացին Անտրուս և թուրքի մը ձեռքով նամակ մը գրեցին գայմադամին, որ կալանաւոր հայերը անմիա՛ս արձակէ. և իրենք պատրաստ են առանց զէնք մը պարսկելու վերադառնալ իրենց տեղը բայց ո՛չ նամակին պատասխան տրուեցաւ, ո՛չ ալ բանտարկեալներն արձակուեցան, ընդհակառակն կանխապատրաստուած պատնէշներէ սկսան կրակ թափել հայոց

վրայ : Մերայինք ալ արդէն անձնուրաց զինւորներ՝ եկեղեցական-զօրավարի կենդանի օրինակէն առաւել եւս խրախուսուած մէկ ժամի չափ ամենայն քաջութեամբ կռուելէ յետոյ սաստիկ աղաղակներով յարձակեցան թուրքաց վրայ , որոնք իրենց դիրքերը թողլով փախան : Սրտերնին վախ ինկաւ մանաւանդ երբ իրենց հրամանատար Ապաղ օղլու Տուրտու պէյին եւ Եուսուֆ չավուչին մէկ գնդակի հարուածով սպաննուիլը տեսան վարդապետէն : Այն ատեն մերայինք կառավարութեան պալատին վրայ քալելով գրաւեցին ու բանտարկեալ հայերը ազատեցին : Ափսո՛ս որ անոնցմէ 40ի չափ սպաննուած էին արդէն եւ կարգը միւսներուն եկած էր , որոնք տեսնելով իրենց ազատարարները՝ անբացատրելի ուրախութեամբ լեցուած կը համբուրէին վարդապետին ձիուն ոտքերը : Երեք գեղանի օրիորդներ ալ բռնի կըրօնափոխ ընելով ամուսնացուցած էին թուրք երիտասարդաց հետ : Այս օրիորդները 7 ամիս վերջը Եէնիճէ Գալէ փախցնելով Փրանսական հիւսպատոսին յանձնեցին Մուրսալեան Տէօվլէթ եւ Սանդուրեան Աղէքսանդր անուն երիտասարդները :

Հայերը այնուհետեւ կառավարական շէնքը այրելով եւ ամբողջ գիւղը աւարի տալով՝ մէջը գտնուած բոլոր հայերը Ֆրնուզ փոխադրեցին : Այս կռուոյն մէջ Բարդուղիմէոս վարդապետէն զատ-որուն դէմ ուղղուած բազմաթիւ գնդակներ կարծես հրաշիւք իմն պարապը կ'երթային՝ մինչդեռ իւր գնդակներ անվրէպ հասնելով նպատակին՝ իրարու ետեւէ կը տապալէին թշնամիները , — նշանաւոր հանդիսացան նաեւ Ենի-Տիւնեա Նշան , Չաքրեան Փանոս , Թեամեքերեան , Ալաճաճեան Մանուէլ , Պըթըր , Աշըգ Նշան եւ Հաճի Չինիկէօղեան եւ այլն՝ անուրանալի է արդէն ամեն պատերազմիկներու ալ քաջութիւնը : Թուրքաց փախուստի ժամանակ Տաշ օղլուգ-

ցի ճօղտուր օղլի Մարտիրոս քեհեան և Քիրէճճեան Հա-  
ճի կարապետ ծաղրելով զանոնք կը պոռային «Գապագ-  
ճը տոմուզլա՛ր, դաչմայրն, կէլէն էրմէնի տիր, Օմուզը  
սալմալը Զէյթունլու տուր. — դղմակեր խողե՛ր, մի՛  
փախչիք հայն է որ կուգայ, Սլոքաւոր(\*) Զէյթունցին  
է որ կուգայ»: Անարունի գրաւումը տեղի ունեցաւ  
նոյեմ. Տին:

Ե-

### ԵՆԻՃԷ ԳԱԼԷԻ ԲԼՈՒՐԻՆ ԿՌԻԻԸ

Անարունի յաղթութիւնը տանելէ վերջ երբ Ֆրնուզ  
կը վերադառնային հայերը՝ Պունտուխ գիւղին մէջ նա-  
մակ մ'ստացաւ Բարդուղիմէոս վարդապետը Ենիճէ դա-  
լէի լատինաց Մանուէլ վարդապետի կողմանէ հայերէն  
գրուած, որ թիւք զինւորներու ձեռքով հայր Սալվա-  
տորի և ուրիշ 12 անձանց կենդանւոյն այրած և վանքը  
աւարի տրուած ՚ըլլալը ծանուցանելով անմիջական օգ-  
նութիւն կը խնդրէր, հակառակ պարագային իրենք ալ  
կըսէր, «անխուսափելի կորստեան պիտի մատնուէին»:

Նամակը կարդալուն պէս վարդապետը այնտեղ քո-  
վը գանուողներէն 200 հոգի դատեց, մնացեալները ի-  
րենց յոգնութեան պատճառաւ թողուց. Զէյթունէն Շա-  
մը-Քէշիշեան Պ. Փանոսի առաջնորդութեամբ 100 զօրք  
օգնութեան եկած ըլլալով Պ. Հրաչեայ ալ ասոնց հետ  
մէկտեղ ընդամենը 300 հոգի գնացին Ենիճէ գալէի վան-

---

(\*) Սլոք (թէզանիք) շապիկի թեւերուն երկայն մա-  
սրն է, որոնք իրարու կապելով գլխնին ետեւէն ան-  
ցուցած ուսերուն վրայ կը ձգէ Զէյթունցին, թուրքե-  
րէն կը կուչուի Սալմա:

քը գիշերեցին : Թէ՛ գիւղին և թէ՛ վանքին մէջ քնաւ մարդ մնացած չէր, ամենն ալ խոյս տուած էին ձորի մը մէջ, ուր ոչխարի նման պիտի մորթուէին բարբարոս դօրաց և խուժանին կողմանէ՛ եթէ պատահմամբ այն կողմը հասնող 20 Ձէյթուհիներու կողմէն պաշտպանուելով անոնց վրայ եկողներն ի փախուստ դարձուցած չ'ըլլային :

Այս գիշեր թուրք զօրքն ալ Մուճուք տէրէսի կոչուած լատինաց վանքը կը գտնուէր. այս երկու վանքերու հեռաւորութիւնն էր 2 ժամ և մէջտեղը կը գտնուէր բարձր բլուր մը :

Հետեւեալ օրը հայերը բլուրին մէկ կողմէն վեր կը բարձրանային թուրքաց արշաւող խումբը գտնելու և անոնց լաւ դաս մը տալու համար, իսկ թուրք զօրքը միւս կողմէն կը բարձրանար ուրիշ գիւղերու վրայ իւր արշաւանքը շարունակելու համար : Եւ ահա՛ բլուրին վրայ յանկարծ իրարու պատահեցան մէկ քառորդ հեռաւորութեամբ. ու պատերազմն սկսաւ երկաւստէք. սաստիկ կատաղութեամբ. թուրքաց դիրքն աւելի նըպաստաւոր էր, քան ղէյթուհիներունը, այսու ամենայնիւ դարձեալ յաղթական ելան Ձէյթուհիք և Փըրնուզցիք առանց կորուստի, այնէս որ հայու մը քիթն անդամ չ'արիւնեցաւ, իսկ թշնամին 8 ժամ տեւող այս կռւոյն մէջ 41 դիակ և 10 վերաւոր թողլով ի փախուստ դարձաւ :

Եթէ Ձէյթուհիք պէտք եղածին չափ ղէնք և այլ ազգամարթերք ունենային այս կռւոյն մէջ՝ ամենայն յաջողութեամբ կարող էին մինչեւ Մարաշ իջնել, ինչպէս նաեւ նոյն պայմաններով Անտրուէն ալ մինչեւ Ղարս-Պազարի և անտի Սիս հասնիլ :

Այս փառաւոր յաղթութենէն առաջ տեսնելով, որ խումբ մը փախստականներ ձիերով լատինաց մէկ վան-

քին գոյքերը կը փախցնեն՝ իսկոյն մի քանի հայեր՝ ա-  
նոնց ետեւէն հասնելով բռնեցին զանոնք. ու բոլոր կո-  
ղոսութեաները ետ առնելով, երեք կողոսպտիչներ ալ վան-  
քին դրան առջև բերին՝ սպաննեցին :

Իբրեւ կողոսպտա այս պատերազմին՝ վեց ձի մնաց  
հայոց : Յետ կռւոյն, երբ կը վերադառնային հայերը,  
նախայիշատակեալ ձորին մէջ ապաստանող հայերը և  
կաթալիկ հայերը հետերնին առած ողջամբ հասուցին  
Ֆրնուղ : Իսկ հայոց մեկնելէն յետոյ խուժանը լատինաց  
վանքերը և հայոց եկեղեցին ու գիւղը այրեցին, մոխիր  
դարձուցին : Հայր Սալվատորի նաճատակուիլը նոյեմ.  
Տին էր. իսկ Նէնիճէ գալէի կռիւը նոյ. 9ին էր. թուր-  
քերը այրեցին վերայիշեալ հայ Գիւղեր նոյ. 10ին :

Զ.

ԿԱՊԱՆԻ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Ատանայի կանոնաւոր և անկանոն զօրաց ընդհա-  
նուր հրամանատար քէլ Հասան փաշայի տղան Ալի պէյ  
(յետոյ բաշա) իւր բանակը բերելով Կապանուր Ձէյթու-  
նի արեւմտեան կողմը կը գտնուի՝ անկէ 13 ժամ հեռաւո-  
րութեամբ. — թէ՛ նոյն անուամբ գիւղը, որ 300 տունէ  
կը բաղկանար, և թէ՛ Պունտուխը ամբողջ կողոսպտել  
տալէ յետոյ այրեց, 150ի չափ ալ մարդ կոտորեց : Մը-  
նացեալ ժողովուրդը սարսափահար հազիւ կրցաւ կեան-  
քըն ազատել Ֆրնուղ ապաստանելով :

Այս դէպքը ծանր տպաւորութիւն գործեց հայոց  
վրայ, ուստի մերայինք 1500 հոգիէ բաղկացեալ բանա-  
կով մը Շամը Բէշիշ Փանոսի հրամանատարութեամբ  
նոյեմ. 19ին գիշեր մտան Կապան՝ Ալի պէյի բանա-  
կը խորտակելու համար : Սակայն թուրքերը նախա-  
տեսելով այս յարձակումը բանակը այն տեղէն Սիս-

նէ փոխադրած էին. Չէյթուհիք ալ չուզելով ձեռնու-  
նայն վեարադառնալ՝ յառաջապահ գունդէն միայն  
50ի չափ անձինք կապանի թուրք գիւղին վրայ յար-  
ձակեցան, ամեն բան խորտակեցին ու ամբողջ գիւ-  
ղը անարի տուին, 50ի չափ թշնամի սպաննեցին ու գրե-  
թէ նոյնչափ ալ կանայք և աղջկունք գերի վարեցին,  
զորոնք քիչ մը ատեն պահելէ յետոյ անմնաս արձակե-  
ցին իրենց տեղերը:

Բոլոր այս խառնաշփոթութեանց ատեն իրենց կեան-  
քը ապանովելու համար Անտրունի և Ֆրնուզի շրջա-  
գայքը գտնուած գիւղօրէից հայ բնակիչք Ֆրնուզ ա-  
պաստանեցան հետեւեալ թուով և անուամբ. —

|     |                     |                 |
|-----|---------------------|-----------------|
| 40  | տուն կէօքսիւն       | կոկիսոնի գաշտէն |
| 50  | « Տէիրմէն տէրէսի    | « «             |
| 20  | « կէօլ փուհար       | « «             |
| 90  | « Բիրէճ             | « «             |
| 100 | « Տաղ օլուխ         | « «             |
| 300 | « կապան             | կապանի գաշտէն   |
| 40  | « Թավութլու         | « «             |
| 20  | « Անտրունի կեդրոնէն | « «             |
| 100 | « Շիվիլկի           | « «             |
| 60  | « Պուհատուխ         | « «             |
| 40  | « Սիանէ             | « «             |
| 120 | « Եէնիճէ գալէ       |                 |
| 30  | « Չիւրուկ դօզ       |                 |
| 35  | « Մուճուգ տէրէ      |                 |
| 25  | « Տիքիլի թաշ        |                 |

1040 տուն ընդամէնը, որոյ վրայ աւելցնելով 300  
տուն Ֆրնուզի բնակիչքը՝ ընդամենը կ'ըլլայ 1340 տուն:

Այսքան հոծ բազմութեան մը ահադին բեռան տակ  
ճնշուած Ֆրնուզ ամեն զոհողութիւն ըրաւ խեղճ փա-  
խստականներուն, ապանովութեանն ու հանգստութեանը



համար, Ս. Կարապետի վանքին հետ մասնաւորաց շէնքերն  
ալ անոնցտրամադրութեան տակ դնելով: Սակայն թշնամին  
այնտեղ ալ հանգիստ չը թողուց զանոնք. վասն զի 1893  
դեկտեմբեր 1ին Ալի պէյ 30,000 հոգիէ քաղկացեալ ա-  
հագին բանակով մը երեք կողմէ յարձակեցաւ Փրնուզի  
վրայ, որ 1500 պատերազմող ունէր, անոնք ալ չախ-  
մախու հրացաններով զինուած, հազիւ 50ի չափ մար-  
թին հրացան կը գտնուէր անոնց ձեռքը, իսկ վառօդ,  
գնդակ իսիստ սակաւ քանակութեամբ: Այսու ամենայ-  
նիւ անոնք մեծ քաջութեամբ դիմադրեցին թշնամուոյն  
անհամեմատ բազմութեան, և 3 օր անընդհատ տեւող  
արիւնահեղ ու սոսկալի պատերազմի մը մէջ բազմաթիւ  
թուրքերու, մանաւանդ ականաւոր անձանց դիակներով  
ծածկուեցաւ պատերազմի վայրը, սակայն վերջնական  
յաղթութիւնը մնաց թուրքին, վասն զի հայոց ռազմա-  
մըթերքը սպառելով՝ պարտաւորեցան, խոյս տալ և ա-  
պաստանիլ լեռներն ու քարայրները(1), ոմանք ալ Զէյ-  
թուն անցան. հոն դիմեցին նաև Փրնուզ ապաստանող  
բոլոր գաղթական ընտանիքները: Հայոց պարտութեան  
պատճառներէն մէկն ալ Նեաիրցի թուրքերուն վրայ ար-  
չաւանքի երթալով իրենց մեծագոյն մասին պատերազմի

---

(1) Լեռներն ապաստանող այս Պրնուզցիներն էին,  
որ Ատանայէն Ալի պէյի բանակին զրկուած նպարներն  
Սեկի մօտ Աղալը կոչուած տեղը գրաւելով Փրնուզ բե-  
րին ու անոնց շնորհիւ ապրեցան երկար ատեն, վասն զի  
իրենց ուտեստները արդէն սպառած էին ու սաստիկ  
կարօտութեան մէջ կը գտնուէին. պաշարի կարավանը  
տեսնելով հեռուէն ռազմամթերք կարծեր էին, և թէ-  
պէտ 200է աւելի էին բերնակիր կենդանիները, սակայն  
հազիւ 40 բեռը կրցան գրաւել՝ 1 հոգի միայն լինելով  
այդ յանդուգն գործին ձեռնարկուները:

վայրէն նախապէս բացակայ մնալն էր, որով թշնամին պատե՛նութիւն գտաւ կարեւոր դիրքեր գրաւելու :

Դէպի Չէյթուն տանող ճանապարհը, որ ի սկզբան բաց էր, փախուստի ժամանակ այն կողմն ալ փակելով թուրքերը՝ սկսան յետամնաց ժողովուրդը, մեծ մասամբ ծերունի, տղայ ու կին, անխնայ կտորել էգու ձոր կոչուած տեղը՝ 600է աւելի անձինք, որոնք անձնապաշտպանութեան համար ո՛չ զէնք ունէին և ոչ փախչելու կարողութիւն. 400ի շափ ալ գերի բռնեցին : Ատոնց մէջ էին Կապանի Շահան-ֆէշիշեան Տ. Թորոս, Պուշտուխի Տ. Օհաննէս, Ենիճէ դալէի Թախաճեան Տ. Կարապետ և Տ. Գրիգոր քահանաները, զորոնք սպաննելէ յետոյ ծառերէ կախեցին, մի քանիներ ալ վանքին ետեւի կողմը պատին վրայ խաչաձև դամեցին ի նախատինս քրիստոնէութեան. իսկ շատ կիներ և օրիորդներ, որոնք չուզեցին դադանարատոյ աւազակներուն ձեռքը իյնիլ, բարձր ժայռերու վրայէ լինքղինին վար նետելով անձնասպան եղան : Թշնամւոյն ձեռքն անցան բացի այս գերիներէն բազմաթիւ կենդանիներ և մեծաքանակ նըպարեղէն ամբարուած վանքի և դիւղերու մէջ :

Փոստուղի հայոց այս նահանջի ժամանակ երկրորդ անգամն ըլլալով անխուսափելի մահէ մը ազատեցաւ Տ. Բարդուղիմէոս վարդապետը իւր ընկերակից Պ. Ապահի և Պ. Նշանի հետ. զորս ճանչնալով թշնամին իրենց արտաքին կերպարանքէն առանձին ուշադրութեամբ գնդակներու տարափ մը տեղալ սկսաւ իրենց գլխուն, ինչպէս ի վերջոյ խոստովանեցաւ հրամանատար Ալի սէյի ներկակութեան էտնէմ բաշայի և օտար հիւպատոսաց ու այլ բազմաթիւ անձանց, սակայն այն գնդակներէն և ոչ մին հանդիպեցաւ անոնց, և վարդապետն իւր ընկերներով անվնաս հասաւ Չէյթուն՝ պարզ կարկուտէ մը բռնուող մարդու մը անտարբերութեամբ :

Ֆրնուզէն գաղթելով Չէյթուն աստատանող վերոյիշեալ

1340 տուն Հայոց հետ հոն ասպաւինեցան նաև

150 « Աւագ-կալ (Մխալ), որ կը բաղկանայ 14 մանր գիւղերէ

30 « Ֆէնկ

300 « Արեգին՝ 44 կտոր մանր գիւղերէ բաղկացեալ

15 « Գօղճուղաղ

15 « Հաճի տէրէ

ասոր վրայ աւելցնելով 1300 տուն Չէյթուն քաղաքին բնակիչքը՝ կը ստացուի ընդամենը

1500 Չէյթուն

1750 դուրսի եկւորներ

-----  
3250 տուն

Այսչափ բաղմութիւն հաւաքուելով Չէյթունի մէջ, միւս կողմէն գերի ինկած թուրքերն ալ սնուցանելու հարկին մէջ գտնուելով հայերը՝ Պ. Աղասիի խորհրդով գնդապետ Իֆֆէթ պէյի (գերիներուն գլխաւորը) նամակ գրել տուին մեծ հրամանատարին թէ՛ «հայ ջորեպաններու հետ ուտեստ դրկեցէք մեզ, որ ապրինք, հակառակ պարագային սովամահ պիտի լինինք, նոյնպէս եթէ շարունակէք այրել հայ գիւղերը՝ տեղիս իշխաններն ալ տարբեր գիրք պիտի բռնենմեզի դէմ»։ Գերիներու այս նամակը գրուեցաւ դեկտեմբեր 7ին։

Այս նամակը տանող թուրք զօրքերուն այսպէս պատասխանեց հրամանատարը. «Կորի՛ք անմիտներ, տէրութիւնը շատոնց աչքէն հանած է ձեզ»։

է .

ԵԶԻՏՆԵՐԻ(\*) ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մինչդեռ Ալի պէյի բանակը Ֆրնուզի կողմէն այսպէս կը յառաջանար Զէյթունի վրայ, Մուստաֆա-Տէմզի փաշան ալ իւր մեծ բանակովն Ջահան դեան անցնելով եկած բնակած էր Վարդանլը կոչուած բլուրին դիմաց Զէյթունէն Յ ժամ հեռաւորութեամբ :

Կը մօտենար վճռական ժամը, յորում պիտի որոշէր Զէյթունի ճակատագիրը՝ յաղթութեամբ հասնելու իւր ցանկացած ազատութեան կամ պարտութեամբ ամեն ինչ կորուսանելու, անցեալ փառքը, ինչպէս և ապագայ յոյսը, մանաւանդ ներկային մէջ վայելած իրենց անսահման ազատութիւնը, շնորհիւ հայկական նորահաստատ վարչութեան, որ հիմնուած էր իրաւանց, արդարութեան ու հաւասարութեան սկզբունքներուն վրայ : Ուստի բոլոր ժողովուրդը ոգեւորուած պատրաստ էր իր անձը դնելու ի սահմանութիւն այս երջանկաւէտ ու բարեբար դրութեան :

Որչափ մեծ էր թշնամւոյն նիւթական ոյժը, նոյնչափ և աւելի ևս մեծ էր հայոց բարոյական ոյժը, որ կ'ապահովէր իրենց վերջնական յաղթանակը : Այս բարոյական ոյժը կը ներշնչէր իրենց դարաւոր պատերազմական ոգին, երկրորդ՝ կրօնական անկեղծ ու ջերմեռանդ հաւատքը, որով Զէյթունն անմատչելի և անբռնարարելի կը դաւանէին շնորհիւ նախախնամական բացառիկ պաշտպանութեան, երրորդ՝ քահանայից ազատասիրական ոգւով տուած քարոզները, մանաւանդ

---

(\*) Զէյթունի արեւելեան կողմը կը դանուախ սոյն գիւղը մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ :

ճինչև այն վայրկեանին զանազան կէտերու վրայ սրղմուած մասնաւոր պատերազմներու մէջ իրենց ունեցած յաջողութիւնը :

Յեղափոխականներու և Զէյթունցի խելահաս ու կարեւոր անձնաւորութեանց խորհրդովն ու համերաշխութեամբ թակցութեամբ ռազմագիտական ամեն կարգադրութիւնք եղած էին և ամեն ոք կը սպասէր տրուելիք հրամանին : Եւ ա՛նա՛ դեկտեմբեր 12ին շարաթօր թշնամի բանակէն գունդ մը ձիաւոր զօրք յանդուգն սպայի մը հրամանատարութեան տակ Եղիտէր կոչուած հայաբնակ գիւղին վրայ քալել սկսաւ, սակայն գիւղը ապաստանող Պօղպայիրցի և կարկալարցի հայոց կողմանէ զօրաւոր դիմադրութիւն տեսնելով ընկրկերացաւ : Հետեւակներէն 3000 զինուոր ալ Ա հաս կրուբի թնդանօթներով Ս. Փրկչի վանքին կողմը յառաջացած՝ սկսան ռմբակոծել զայն ու երկու անգամ յարձակում գործելով՝ այնտեղ ամրացած հայ ձիախուճբի կողմէն սաստիկ դիմադրութեամբ ետ մղուեցան . իրիկուան դէմ երրորդ անգամ լինելով անվեհեր սպայի առաջնորդութեամբ միւս անգամ յարձակեցան, բայց Զօլագեան Փանոսի մէկ գնդակնյերկիր տապալելով հրամանատար սպան՝ անոր ետեւէն երկու գնդակներ ալ ուրիշ երկու պաշտօնատարներ իրարու ետեւէ ձգելով՝ պարտաւորեց. յարձակող բանակը խոյս տալ՝ հրամանատարի սպիտակ ձին յիշատակ թողլով մեր քաջ Փանոսին :

Խայտ տուող բանակը Զվերադարձաւ սակայն իրեն օգնութեան հասնող 2000 զօրքերու ներկայութենէն խրախուսուած և առաջիններէն աւելի կատաղութեամբ յարձակեցաւ վանքին վրայ շրջանակաձեւ, անոր հաղորդակցութիւնը ամէն կողմանէ կտրելու դիտոււմով : Եստ տազնապալի էր մերայնոց յիճակը և ներելի չէր այլ եւս մնալ հոն : Ուստի հերոսական քաջութեամբ

ճեղքելով թշնամեաց շղթան ասորափի նման տեղացող  
 գնդակներու մէջէն անցան ու ասպատանեցան Մուր-  
 թաալար կոչուած հայաբնակ գիւղը, կրակ տալէ յետոյ  
 վանքին շուրջը դանուած բոլոր շէնքերուն, իսկ վանքն  
 ալ թիւրք զինուորներն այրեցին, ինչպէս այլաժ էին  
 Ֆրնուզի վանքը. և այսպէս ձմեռային կարեւոր ասպա-  
 տանէ մ'ալ զրկուեցան :

Ը.

ՍԱՆՏՈՒԽԻ ԿՌԻԻԸ, ԳԵՐԵԱՑ ՍՊԱՆՆՈՒՄԸ

Հետեւեալ օրը կիրակի դեկտեմբեր 13<sup>ու</sup> էր. հայկա-  
 կան գունդը 1390ի չափ սպառերազմիկներ Սանտուխ կոչ-  
 ւած արեւելեան լեռան վրայ մարտկոցներ շինելով սպա-  
 րաստուեցան նոր ճակատամարտի մը, որ տեղի ունեցաւ  
 սոյն օրը խիստ կատաղութեամբ և արիւնահեղ կերպով :  
 60,000է աւելի զօրաց ահագին բազմութեան առջև  
 ոգի ի բռին չորս ժամ սպառերազմելէ յետոյ հայերը ընկ-  
 ճուեցան ուր ուրեմն և սկսան խոյս տալ դէպի Ս. Աստ-  
 ւածածնի վանքը և զօրանոցը, սակայն Սուրէնեան ցե-  
 ղէն Բասիլոսեան կարապետ աղան (\*), որ իւր 70 ամեաց

(\*) Այս Բասիլոսեանն էր, որ սոյն սպառերազմին  
 ժամանակ Զէյթունի մէջ բնակող 23 տուն թուրքերն  
 ժողովելով տարաւ իրեն բերդը պատասպարեց ու մինչև  
 հաշտութիւն կնքուիլը մարդասիրական ամեն խնամք և  
 հոգածութիւն ցոյց տալով՝ ամենա արձակեց զանոնք ի-  
 րենց տեղերը, մինչդեռ շատ մը անպաշտպան վայրերու  
 մէջ թշնամիները իրենց տունը ասպատանող դրակից հայե-  
 րը ամենաստոր ցածութեամբ իրենք իսկ սրախոխող ը-  
 րած են :

ծեր հասակին մէջ իսկ չէր ուզած զուրկ մնալ այս մեծ պատերազմի փառքէն ալ, իբրեւ տիպար, ճշմարիտ Ձէյթուհիի մը՝ որ երբէք կռնակ դարձուցած չէ թշնամւոյն առջեւ՝ չի հանդուրժելով այս վիճակին՝ բարձրաձայն աղաղակեց. մի փախչէք, տեղէա՛ք, մեր կնկացը քէովը մեռնիլուն իսէ՛՛ հէօս լեռը մեռնընք բարը է» :

Քաջ ծերոյնւոյն սոյն աստիտական խօսք սլաքի մը նման թափանցեց բոլոր փախչողներու սրտին մէջ և ամենը մէկէն վերադառնալով մարտկոցները՝ սկսան շարունակել կռիւը աւելի մեծ եռանդով : Թշնամիք հակառակ իրենց անհամեմատ բազմութեան կամաց կամաց կը թուլնային և պատերազմի վայրը 400է աւելի դիակներ և մէկ թնդանօթ թողլով սկսան նահանջել. քայց անոնց մէկ մասը Պերզինկայի դադաթէն միւս անդամ յարձակելով՝ հայոց մարտկոցը մէջտեղ առին :

Երկու կրակի մէջ մնալով իսպառ ջնջուելու վրտանդն ակներեւ կը նշմարուէր, ուստի այլեւս առանց ժամանակ կորսնցնելու զօրանոցը և վանքը փախան ամենն ալ իրիկուան ժամը ԱՍին ատենները : Այս անեղ կռւոյն մէջ նահատակութեամբ ինկած էին Պապիկ փաշայի որդին Աւետիքը, Տէր Կարապետ քահանայի որդին Վարդելւարը և ուրիշ 4—5 անձինք : Միշտ պատերազմը կատաղի կերպով կը շարունակուէր նաև Աթլըխ, Ուզօր, Աւաղ-Կէտիկի, Ախ-տաղ, Էշէք-մէյտանի և այլն տեղերու մէջ :

Նոյն կիւրա՛է օրն էր, որ Ձեթուհի կանայք դայրացած դերի ընկող թուրք զօրաց վատութեան վրայ, որոնք հակառակ իրենց տեսած մարդասիրութեան և վայելած հանգստութեան՝ կ'աշխատէին դադանի հըրդեհել Ձէյթուհի տները կառավարական շէնքին՝ կրակ տալով, բոլորն ալ սպաննեցին կացիններով և միս կըտրելու դանակներով : Դիւցազն այրերու արժանաւոր

գիւցաղնուհի կիներ որոնք այդ արիւնաճեղ ճգնաժա-  
մին փրկեցին Չէյթունը մոխիր ըլլալէ և ներքին սպառ-  
նացող թշնամիէ, որ այդ պահուն կարող էր աղիտա-  
քեր ըլլալ Չէյթունի շարժման :

Այն օրն էր, որ Ֆրնուզէն փախչող տէր Բարդու-  
ղիմէոս վարդապետ Չէյթուն հասնելով Շուղրի կա-  
մուրջին աղբիւրին առջեւ տեսաւ կին մը արիւնաշա-  
ղախ, որ բան մը կը լուար նայնպէս արիւնոտ : Սովո-  
րական ողջոյնէն վերջ վարդապետը հարցուց անոր .  
«Մինձ անա չի՞րք է վլաժոցդ» : — Առնախն մէջը կի-  
նող էսկերը ջարդիցոնք, էօնոնց սուտումուտը կովո-  
լոնք (\*)» պատասխանեց կինը հայրենասիրական դորձ  
մ'ըրած ըլլալու գոհունակութիւնով . Իեկտ . Աի՛ն վերո-  
յիշեալ տեղեր պատերազմը կրկնուեցաւ սաստկութեամբ :  
ԱՅին կատարուեցաւ Քարթոչքօրի պատերամըր : Իեկտ .  
ԱՅին կրկին Քարթոչքօրի պատերազմը . Իեկտ . Ային Մա-  
րաչի կառավարիչ բաշան մի քանի պատգամաւորներ  
դրկեց Չէյթուն, պատուիրելով անոնց որ աշխատին հա-  
մոզելու հայերին անձնատուր լինելու, գերի զօրքերին  
աղատելու և եթէ հնար լինի հայոց դիրք և վիճակ  
քննելու համար : Մարաչի պատգամաւորներ ասոնք էին :  
Թորօղլու քահանայ, Պետրոս Սալաթեան, Յարութիւն  
Մաւրատեան, Յովսէփ Տիշչէքէնեան և Կօստան Տ . Յով-  
հաննէսեան : Ասոնք Չէյթունցւոց կողմէն մի քանի օր  
բանտարկուեցան և ձեռնունայն կտ դրկուեցան : Ասոնց  
հետ Աղասին նամակ գրեց Մարաչի կառավարչին՝ թէ  
Ձեր դրկած մարդիկ խաբերայ լրտեսներ են և մենք կա-  
րելորութիւն չ'ենք տար ո՛չ Ձեզ և ո՛չ Ձեր Առաքեալ-

---

(\*) Մե՛ծ մայր, ի՛նչ է լուացածդ : — Պալատին  
մէջը կեցող զօրքերը մեռուցինք, անոնց զգեստեղէնը  
կը լուանք» :



ներին : Բաշան՝ կատարած խելն պատգամաւորներուն  
քանտարկեց , «Թէ դուք գնացիք , աւելի քաջալերեցիք  
Չէյթունց» :

Թ .

ՐԷՄՁԻ ՓԱՇՍՅԻ ՊԱՀԱՆՋՈՒՄՆԵՐԸ

Սանտուխի կարեւոր դիրքերը գրաւելով Հայոց ձեռ-  
քէն՝ Չէյթունի գրաւումն այլ եւս ապահովուած կար-  
ծեց թշնամին , ուստի ընդհանուր հրամանատար Մուս-  
տաֆա-Տէմզի բաշա բանակը հրաւիրեց հայոց գլխաւոր-  
ները՝ նոյն պատերազմին հետեւեալ երկուշարթի օրը՝  
սուլթանին Իրատէն անոնց հաղորդելու համար : Մե-  
րայինք արդէն պատեհութիւն կը փնտռէին թուրք բա-  
նակը լրտեսելու համար , վասն որոյ սիրայօժար յանձն  
առնելով այս հրաւերը՝ քանի մը գլխաւոր անձինք իր-  
բեւ պատգամաւորք գնացին բաշային մօտ :

Հրամանատարը ցոյց տալով անոնց կայսերական  
պատկամագիրը՝ ըսաց . «Վաղը Չէյթուն պիտի մտնեմ  
և 15 տարուանէ վեր ու 60էն վար եղող բոլոր ժողո-  
վուրդը սուրէ պիտի անցնեմ ըստ բարձրագոյն հրամա-  
նի , և կենդանի մնացածները Պաղարճըք<sup>(\*)</sup> պիտի բը-  
նակեցնեմ . և որպէս զի այս սոսկալի պատուհասէն  
զերծ մնաք՝ փութացէք կատարել հետեւեալ պահանջ-  
ներս : —

Ա . Նաղարէթ իշխանը (առաջ չափուչ) և յեղափո-

(\*) Պաղարճըք Մարաշու հարաւային կողմը կ'իջնայ  
7 ժամ հեռու , գայմագամլըք մըն է և ազականեալ օդ  
մը ունի :

խաղան առաքելութեան բոլոր անդամները պէտք է ին-  
ծի յանձնէք :

Բ. Ձէյթունցիները, որ այդ յեղափոխականաց գոր-  
ծակից ըլլալով կարեւոր դեր կատարեցին այս պատե-  
ր սզմին մէջ, նոյնպէս յանձնէք :

Գ. Չորանոցը՝ մէջի եղած ամեն ռազմավթերքնե-  
րովը, վանքը և գերի ինկած զօրքերը ինծի դարձնէք :

Դ. Ամեն ունեցածե՛ղ-գէնք, ստացուածք, կահ-կա-  
րասիք և անասուններ թողլով՝ մի միայն ձեր կանանց  
ու զաւակաց հետ բանակը գալով անձնատուր ըլլաք :

Մերայինք առերեսս յանձն առնելով այս պայման-  
ները թոյտուութիւն խնդրեցին մեկնելու, հրամանատա-  
րը քնն մը դժժա՛նա՛նութեամբ թողուց զանոնք, սակայն  
բանակէն բաւական հեռանալէ յետոյ գնդակներ արձա-  
կել տուաւ անոնց վրայ, ոմանց ալ ժամացոյցը և ստակ-  
ները կողոպտեցին անարգալից խօսքերով. գնդակներէ  
վիրաւորուեցան պատգամաւորաց հետ բանակը գնացող  
Մարաշցի հայ կաթուղի վարդապետը թեւէն և բողոքա-  
կանաց քարոզիչ պատուելին ստքէն, և առանց ուրիշ  
փնաս մը կրելու կարողացան հասնիլ Ձէյթուն :

Ժ .

### ԶՕՐԱՆՈՅԻ ԱՅՐՈՒՄԸ

Ի հարկէ այս ծանր և անպատուարեր պայմանները ան-  
կարելի էր որ ընդունէին, ընդհակառակ ձևեցին նոքա մի-  
աչերան կռուիլ մինչև վերջինչունչը և տրեան վերջին կա-  
թիլը : Այս սգւով հարկ եղած նորանոր կարգադրութիւն-  
ներն արին անյապաղ, խրախուսուելով մանաւանդ պատ-  
գամաւոր Բասիլսեանի և իւր ընկերաց քաջալերիչ խօս-  
քերէն, որք Ձէյթունցւոց սովորական եղած ձեւով կը

կր'նէին անդադար «նիչ մի՛ վախէք, տեղէա՛ք չիրքուր պիտի նընը՝ էն կուենը, ինչ որ պիտի ըլլայ՝ այն կ'ըլլայ» :

Բէմդի բաշան տեսնելով որ իւր պահանջներն անգործադրելի մնացին և անձնատուութեան համար ո՛ր և է շարժում չի տեսնուիր հայոց կողմանէ՝ վճռեց վերսկսել պատերազմը և քաշել նախ դորանոցին վրայ, որ հայոց ձեռքը անցնելէն յետոյ ռազմագիտական կարեւոր փոփոխութեանց ենթարկուած էր, և այժմ իբրև մարտիոց կը ծառայէր հայոց : Յարձակումն սկսու գեկա . 18 չորեքշաբթի օրը սասա՛ղ ուժով, բայց մեծ կորուստով ետ մ.լուեցաւ . շարունակեց իւր յարձակումներն այնուհետև ամէն օր տաղէր, ժամանակներու մէջ, մերժ առաւօտը, մե՛րժ երեկոյին, մե՛րժ գիշերը, և ամեն անգամին ալ իւր դօրքը տասանորդելով ետ կը դառնար ձեռնուհայն : 2) օրի չափ գրեթէ այսպէս շարունակ աշխատեցան դրաւել դայն, բայց չի յաջողեցան :

Վերջապէս օր մը օշին մէջ ա՛րտւ թանձր մտաւախուլէն օգտուելով գաղտագողի ու լուկեայն մեծ թըւով կեկան ապաստանեցան դորանոցին մօտ գանուած երկու մեծ շէնքերուն և մզկիթին մէջ : Չայդ տեսնելով հայերը դորանոցը կրակեցին ներսէն և իրենք գաղտնի դռնէ մը-որ վերջը բացած էին-փախան Չէյթուն առանց տեսնուելու՝ ընդամենը 400 հոգի :

Թշնամիք կարծելով թէ այլ եւս թակարդին մէջ թանուած են հայերէն իրենք ալ դուրսէն կրակ տուին դորանոցին, և այսպէս երկրորդ խիստ կարեւոր դիրքէ մը և ձմեռնային ապաստանէ մը գրկուեցան : Սմբողջ երկուք ու կէս ամիս մնացած էր այն հայոց ձեռքը :

ԺԱ.

ՎԱՆՔԻՆ ՌՄԲԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ. ԵՆԻ-ՏԻՒՆԵԱ. ԵՂԻԱ.

Թշնամիք հետզհետէ յառաջ դալով Պերզինկայի սասրոտը Ղաթ անուն տեղը՝ դիրքեր բռնեցին Չէյթու-նէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ ու սկսան այն տեղէն ուժակոծել Ս. Աստուածածնի վանքը : Էյլէն-ձեցի խուճաք մը հայ դիւղացիք, որ Պերզինկայի քա-րայրին մէջ ամրացած էին կանխաւ ու վրաններէն դուրս ելլող ամեն զօրքերը դնտակահար կը տադալէին, տես-նելով այսպէս վանքին ուժակոծութիւնը՝ թնդանօթա-ձիգն ալ սպաննեցին : Այս բան մեծ վախ ձգելով թըշ-նամեաց վրայ՝ թնդանօթն ալ հոն ձգեցին փախան, ու վանքն անփնաս ազատեցաւ :

Այս անահնկալ օգնութենէն առաջ վանքը ադաս-տանող հայերէն ոմանք կը մտածէին կրակ տալ անոր՝ որ թշնամեոյն ձեռքը չիյնի, սակայն Ենի-Տիւնեա Աւետիս աղայի որդի Եղիա աղան հակառակելով այս խորհուր-դին՝ արդիւնց զայն :

Յաւիտենական անմահ յիշատակաց արժանի է այս ազնիւ ու ճշմարտապէս հայրենասէր անձի օրինակելի քա-ղաքործութիւնը, որ խիստ վնասեցուց թշնամին իւր մղած վճռական ճակատամարտիմէջ, և այս որ թերեւս ամենամեծ ազդեցութիւնը ունեցաւ Չէյթունի ճակատագրին վրայ :

Եզա աղան ձմրան այն սաստիկ ցուրտ եղանակին գիշեր ատեն 30 արիասիրտ հայերով Պենզինկայի լեռ-նէն «Եա՛ սուրբ Փրկիչ» ըսելով յանկարծ յարձակեցաւ թշնամեոյն բանակին վրայ, սուսերամերկ իյնելով շփո-թած զօրքերուն մէջ 400էն աւելի դիակ փռեց դետինը և 20 հաս մարթին ու մէկ վրան խլելով անոնցմէ՝ հե-ռացաւ, իւր քաջարագուկ ընկերներէն 3 հոգի միայն զո՛ն տալով իրենցը՝ արտաքոյ կարգի յանդգնութեանը

համար : Այս ճակատամարտը տեղի ունեցաւ դեռ . 19/ի  
դիշեր : Ասոնց մեկնեւէն վերջն ալ զօրաց մէջ տիրող  
խառնաշփոթութիւնն ու սարսափը շարունակելով՝ ի-  
րար կը ջարդէին անգիտարար , որով մեծապէս վնաս-  
ւեցան և խիստ շատ վնասեցան : Այն ատենն էր , որ Մա-  
րաշիի Հաճի Եասին օղլու հարիւրապետը և չէրքէզ պէ-  
ցերը յայտարարեցին Մուստաֆա-Րէմզիի , թէ անկա-  
րելի է առնել Չէյթուներ , և նոյն իսկ անոնց նախնջը  
թակարդ մ'է Օսմանեան բանակին : «Այս եղանակաւ ,  
կըսէին պէցերը , 30 տարի առաջ ջարդեցին 733 չէր-  
քէզներ կոտորածի ձորը՝ Եղիզ բաշայի պատերազմին  
ատեն» :

Գոռոզ հրամանատարը , որ քիչ ժամանակ առաջ կը  
մտածէր ամբողջ Չէյթուներ հիմնայտակ կործանել ու  
ժողովուրդը սուրէ անցընել , այժմ սկսաւ գլխիկոր ու  
սրտաբեկ խորհիլ , թէ ի՞նչպէս կրնար ելք մը գտնել  
այս դժուարին կացութեան . իւր երկնաստիճան բարձ-  
րութենէն խոնարհեցաւ մինչև և հաշտութիւն խնդրելու  
նուաստութեան :

Իւր կողմանէ վերոյիշեալ Հաճի Եասին օղլու հար-  
իւրապետը նամակ գրելով Նաղարէթ իշխանին՝ կ'աղա-  
չէր որ աշխատի հաշտութիւն գոյացնել Չէյթուներուց և  
թուրքաց միջև , որուն ի վարձատրութիւն կը խոստա-  
նար սուլթանին կողմանէ հաղարապետ կացուցանել  
զինքը Չէյթուների : Եղիա աղան , որ Նաղարէթ իշխանի  
մերձաւոր օղդականն էր , համոզեց զայն օր չի պատաս-  
խանէ անոր : Նամակը կրկնուեցաւ ու երրորդուեցաւ  
բայց դարձեալ անպատասխան մնաց :

Այն ատեն Րէմզի բաշան յուսակառուր հեռագրեց  
սուլթան Համիտի , թէ 110,000 զօրքով անկարելի է գը-  
րաւել Չէյթուներ , եթէ 50,000 զօրաց նոր բանակ մըն ալ  
օգնութեան չի հասնի :

Սուլթանը սրանելած պաշտօնանկ արաւ Րէմզին որպէս ապիկար զօրապետ մը և անոր տեղ նշանակեց Էտէմ բաշան ընդհանուր հրամանատար Չէյթուէնի բանակին :

Րէմզի բաշան յուսակտուր եղած էր ո՛չ միայն արեւելեան բանակի այսպէս տկարանալէն այլ նաեւ Ալի պէյի հրամանատարութեան տակ գտնուող արեւմտեան բանակի ծանր կորուստներ կրելէն : Վասն զի բազմը քիչ մը ժամանակ Համիտի այս հաւատարիմ գործակալին ալ քիթին խնդալէն վերջը՝ երես դարձուցած էր անկէ :

ԺԲ .

ՀԱՅ ԹՆԴԱՆՕԹԱԶԻԳԸ ԵՒ ԹՈՒՐԻ ԹՆԴԱՆՕԹԱԶԻԳԸ

Ալի պէյ Ֆրնուզը գրաւելէն յետոյ եկաւ Աւագ-կալ , որուն բնակիչներն արդէն գաղթած էին Չէյթուէն , և ամայացած բոլոր գիւղերն այրեց ու սկսաւ դէպի Չէյթուէն քալել : Նոյն ուղղութիւնը բռնեցին նաեւ չէրքէզները հիւսիսային արեւմտեան կողմը կէտիւկ կոչուած տեղէն իրենց հրամանատար Մէնէմէտ պէյի առաջնորդութեամբ , ու հասաւ մինչեւ Հեմիւնց բարձր կոչուած տեղը , ուր դեկտ . 20 հինգշաբթի օրը սաստիկ պատերազմի բռնուելով՝ հրամանատար Մէնէմէտ պէյ սպաննուեցաւ 23 հոգի ուրիշ չէրքէզներու հետ : Ասով մեծ լքում առաջ եկաւ չէրքէզաց մէջ , վասն զի անոնց համար մէկ պէյը 1000 մարդ կ'արժէր : Հայք կորուսին միայն Ուսկանեան Սաչերը Չէյթուէնէն և Տ . Յովակիմի որդի Պօղոս Աւագ-կալ գիւղէն :

Գեկտեմբեր 21 , ուրբաթ օրն ալ նմանօրինակ կռիւմը տեղի ունեցաւ Եաղուպեան թաղի գերեզմանատան

«Տօս», ուր հասած էին Ալի պէյի 35,000 զօրքերը Քերեք-  
սիներ (քարայր տներ) կոչուած տեղէն և ամբողջ Սօ-  
լադ-տէտէի լեռը գրեթէ ծածկած էին մարդով, մինչ-  
դեռ մեր մարտիոյներուն մէջ կը գտնուէին միայն 1000ի  
չափ հայեր: Պատերազմը տեւեց 4 ժամ յոյժ արիւնա-  
հեղ կերպով, բայց տակաւին ո՛չ մին և ո՛չ միւսը կ'ու-  
շէր սպարաութիւն խոստովանիլ:

Այս անհաւասար կռւոյն ի հեռուստ հանդիսատես  
եղող Տ. Բարդուղիմէոս վարդապետը այն պահուն զօրանոց  
կը գտնուէր իրեն ընկերացող Պ. Սպահի, Շամր-Քէշիշ-  
եանի և այլոց հետ. պատերազմի սկիզբէն մինչեւ վերջը  
իրեն միակ զօրավիգ հանդիսացող անկեղծ ու ջերմե-  
տանդ հաւատքի զօրութեամբ ուղեց վերջ տալ այս  
կռւոյն ալ՝ անարեկելով թշնամին:

Թուրքաց բազմաթիւ թնդանօթներուն դէմ զօրա-  
նոցին բակին մէջ կար միայն մէկ թնդանօթ (միւսը  
Քերծեր տարած էին), զոր մերթ ընդ մերթ կ'արձակէր  
Շամր-Քէշիսեան թշնամի բանակին վրայ: Վարդապետը  
«Պահպանիչ» մը կարդալով քաջարի հերոսապետին վը-  
րայ՝ առաջարկեց անոր, որ թնդանօթին բերանը ուղ-  
ղակի թուրք բժրածիգին վրայ դարձնելով կրակ  
տայ. կատարուեցաւ վարդապետին խնդիրը և ուռմբը  
առանց վրիպելու գնաց ջարդակոտոր արաւ Ալի պէյը  
բժրածիգը՝ մեծ սարսափի մէջ ձգելով հրամանատարը  
և բոլոր զօրքերը, որոնք սկսան նահանջել օգնութիւն  
խնդրելով միանգամայն Բէմզի բաշայէն: Այս պատե-  
րազմին մէջ 30 հոգի կորսնցուցին թուրքերը և 3 ալ  
հայերը:

Հասաւ պահանջուած օգնութիւնը, սակայն օրը  
աւարածած ըլլալուն չի կրցան շարունակել պատերազ-  
մը և երկուստէք դադար առնելով հետեւեալ օրուան  
համար ծրագիր կը պատրաստէին: Թանձր մառախուղով

ու միգամած օգուվ մը լուսացաւ վերջապէս չորեքշաբթին և հայերը առանց սպասելու թշնամւոյն պատերազմի յայտարար նշանին, փութացին իրենք գործադրել իրենց ծրագիրը՝ պարագայէն օգտուելով :

ԺԳ -

### ԱՂԻ ՊԷՅԻ ԲՆՆԱԿԻՆ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ

130 կարէն հայեր առջեւնին ունենալով 10,000է աւելի բաղկացեալ սեւ այծերու երամակ մը դիմեցին դէպ ի Ալի պէյի բանակը : Միշտ կողոսպտելու և յափշտակելու վարժ ձրիակեր թշնամին տեսնելով այս մուսրեալ հօտի ստուար խուճրը՝ ուրախութեամբ յարձակեցան անոր վրայ, ջանալով ամեն մին հարուստ աւար մը խլել անկէ :

Այս ընդհանուր իրարանցումի ժամանակ մեր 130 սպառազէն քաջեր, որը հրացանի հարուածներով, որը սուսերամերկ յարձակելով բանակին վրայ շատ մարդիկ ջարդեցին : Նոյն իսկ թուրքերը, այս անակնալ հարուածէն խուճած և մառախուղին պատճառաւ ալ բոլորովին շփոթած՝ սկսան մէկզմէկ կտորել, այնպէս որ կանոնաւոր կերպով մզուած պատերազմներէ շատ աւելի սուղի նստաւ այս, որովհետև նիւթական մեծ կորուստէն զատ բարոյական թուլութիւն ձգեց զօրքերու մէջ որ շատ աւելի վտանգաւոր է քան նիւթական տկարութիւնը :

Այս ընդհանուր սրտարեկութեամբ անոնք չի կարողացան այլ եւս քայլ մ'իսկ առաջ քալել դէպ ի Զէյթուն, թէ և Ընծակ ֆերեի վրայ ալ 17 օր անընդհատ պատերազմ մղեցին՝ ջանալով կարսի կամուրջն անցնիլ :



սակայն անկարելի եղաւ սաստիկ դիմադրութիւն տեսնելով իրենց դէմ և բաւական կորուստներ կրելով : Այս կուռոյն զո՛ր գնացին մենէ Մերկենեան Պապաղան և ուրիշ երկու անձինք :

Իրաց այս վիճակին մէջ Հալէպէն եկաւ նորընտիր հրամանատար էտ՛էմ բաշան, որ մի քանի անյաջող պատերազմներէ վերջ՝ պարտաւորեցաւ ինքն ալ իւր նախորդին նման օգնական նոր բանակի մը անհրաժեշտ պէտքն զգացնել սուլթանին, առանց որոյ Չէյթուէնի նուաճումն անկարելի ըլլալը յայտարարելով :

Մուստաֆա-Րէմզի բաշայի և իւր յաջորդ էտ՛էմ բաշայի այս միօրինակ յայտարարութիւնք անժխտելի ապացոյցներ էին Չէյթուէնի ճշմարիտ յաղթանակին և օսմանեան բանակին տկարութեան, ուստի փութաց սուլթանը դեպքանայ միջամտութիւնը խնդրելու, դեկտեմբերին հիմնական հաշտութեամբ մը պատերազմին վերջ տալու համար : 1893՝ յունվար 3ին թուրք զինուոր մը ճերմակ դրօշակ բռնած մի հեռագիր, բերաւ Չէյթուէն, որ հեռագրուած էր Հալէպի հիւպատոսների կողմէն : Մարաշէն, որոնք եկած էին այն տեղ և կուզէին Չէյթուէն գալ հաշտութիւն կայացնելու : Հեռագրի թուականն էր 1893 դեկտ. 29 թիւ :

Հիւպատոսներ ստորագրած էին հեռագիրը իրենց յատուկ ստորագրութեամբը և ահա .

Ե քիմանսքի՝ ուսական հիպատոս

Բարթէլըմի, ֆրանսական փոխ »

Պարնէրան, աւստրիական »

Բարընէմ, անգղիական »

Վիթօ իտալական, »

Զոլէնկըր, գերմանական »

Չէյթուէնցիք այս հեռագրի վրայ երկար բարակ թերու դէմ վիճարանութենէ յետոյ, պատասխանեցին թէ

«եկէք» : Հիւսպատոսները 1895 յունվար 11ին մասն 2էյթուն, ուր դեռ պատերազմը այս ու այն կողմ սովորական սաստկութեամբ կը շարունակուէր : Հաշտութեան պայմանների մասին սկսան բանակցիլ յունվ. 13 թուին, որ վերջացաւ պատուաւոր հաշտութեամբ նոյն ամսոյ 28ին :

ԺԴ-

ՊԱՏԵՐԱԶՄ ԻՆ ԵՏԵՒԱՆՔԸ

Ամբողջ պատերազմը տևած էր 45 օր 110,000 հոգիէ բաղկացեալ հսկայական ուժի մը դէմ 6000 հայերու ընդդիմադիր ուժով մը, թշնամոյն 13 թնդանօթին դէմ-որ 3800(\*) ուումբ արձակած էր-հայերը ունէին 2 թնդանօթ զօրանոցէն դրաւուած, այսու. ամենայնիւ թուրք բանակի Թապուր քաղաքի վկայութեամբն

(\*) Թշնամի բանակին հետ սաստիկ պատերազմը 1895 դեկտ. 6, չորեքշաբթի օրէն սկսելով մինչև 24 տևեց. այդ միջոցին մէջ թշնամոյն կողմանէ արձակուած ուումբերուն թիւն է. —

| Դեկտ. | ուումբ           | Դեկտ.        | ուումբ           |
|-------|------------------|--------------|------------------|
| 6     | 72               | 14-15-16     | եչ. ուր. շ. 594  |
| 7-8-9 | եչ. ուր. շք. 470 | 17-18        | կիր. բչ. 438     |
| 10    | կիր. 98          | 21           | եչ. երեկ. առ 667 |
| 11    | բչ. 395          | 22           | ուր. 90          |
| 12    | 72. 482          | 23           | շք. 298          |
| 13    | 72. 345          | 24           | կիր. 223         |
|       | գումար 1790      |              | գումար 2010      |
|       | Համագումար 3800  | որոց 170ը չէ | պայթուած         |

իսկ հաստատուած է որ բացի անկանոն զօրաց կորուստէն և ցուրտի պատճառաւ և թէ գնդակաւոր մասաւածներէ 32 վաշտ կանոնաւոր զօրք փճացած են : Ըստ գեղին տետրակ (էջ 84-85) 1895-96ի հաշուոյն , թշնամուոյն կորուսար 20,000 էր , 13,000ը կանոնաւոր զօրք , իսկ մնացեալ պաշը պօղուք : Բանակը կը բաղկանայ և զեր 30,000 զօրքէ , 20,000 կանոնաւոր և 30,000ը պաշը-պօղուք :

Սակայն մեր քաղած ճշգրիտ պատմութիւնը , թուրքական տղբիւրներէ , թագուր-քեաթիպի , Սուստաֆա էֆէնտիի պատմածին նայելով բանակը կը բաղկանար 110,000 զինուոր , 40,000ը կանոնաւոր և 70,000ը պաշը-պօղուք (անկանոն , քիւրա , թուրք , և չէրքէզխուժան) :

Գեղին տետրակին մէջ նշանակուած հաշուին և Սուստաֆա էֆէնտիին տուած հաշուին մէջ հակասութիւն կայ : — Սուստաֆա էֆէնտիին ըսածին նայելով , թշնամուոյն բանակը 23,500 մարդ կուսուէցուցած է , մենչդեռ հայոց սեղակի պատերազմին մէջ ունեցած կորուսան է 71 անձ , իսկ յետոյ թուրք զօրաց մէջ ինկած տարափոխի՛լ հիւանդութիւնն Հայոց մէջ ալ ճարակելով բնիկ Ձէյթուցիներէն 300 հոգի և գաղթական հայերէն ալ 3000 հոգւոյ չափ զո՛ւ տարաւ ամեն տեւէ ու հասակէ :

Այս համաճարակն յառաջ եկաւ գլխաւորապէս անթալ մնացած դիակներու և անդին քանակութեամբ անսուարաթեամբ սատկած անասնոց գարշանտաութեանէն : Հայոց հիւանդութեան պատճառ կրնայ համարուիլ նաև անլի (անաղի) հացի և կերակրոյ գործածութիւնը , վասն զի սակաւ քանակութեամբ դանուած ալը պատերազմի ժամանակ սպառելով , 1000 տրամ աղը մինչև 150 դահեկանի բարձրացած էր :

Այս առթիւ պէտք է յիշատակել Պալճեան, Կիւլ-  
վանէսեան, Բասիլոսեան, Մելիկե՛նեան, Չաղըրեան,  
Անդրէասեան և այլ կարող տուներու եղբայրսիրական և  
ընկերսիրական առատածեռնութիւնը, զոր հանդէս բե-  
րին սքանչելի ազնուութեամբ, ինքնաբերաբար անկա-  
րողներու մէջ հաւասարապէս բաժնելով իրենց ունեցա-  
ծը-հաց, աղ, մրգեղէն, վառօդ, կապար և այլն :

Պատմական սակեղարը կամ քրիստոնէական թուա-  
կաններու առաջին օրերը վերադարձած էին կարծես,  
յուրում ամենայն ինչ հասարակաց էր և ոչ ոք իրեն կը  
վերապահէր բան մը՝ որպէս ուրոյն սեփականութիւն :  
Երջանիկ օրեր-արդիւնք անկեղծ սիրոյ ու ճշմարիտ եղ-  
բայրութեան : Անմտանալի է մանաւանդ Պալճեանց մա-  
տուցած զո՛հութիւնը, ըստ իրենց նախնական բարի  
սովորութեան, որով ամբողջ զէյթուցւոց երախտադի-  
տութեանը արժանացած են, ինչպէս Թեճիրլիցւոց կըրո-  
ւոյն, Խուրշիտ և Աղիզ բաշաներու պատերազմաց ատեն՝  
այս անգամ ալ կարօտ հայերու պէտքերը հոգալէ զաս  
զօրանոցի մէջ գանուող հայ պատերազմիկներուն շա-  
բունակ մեջեօվ Բուճօ(\*), չամիչ, պաստեղ, սուճուղ,  
և այլն կը դրկէին :

Այս 45 օրեայ ա՛նկ պատերազմին մէջ Բէմզի և  
էա՛նէմ բաշանները սուլթան Համիտ Բ.ի փափաքին հա-  
մեմատ բոլոր Չէյթուցիները բնաջինջ կորսնցնելու ծը-  
րադիրը եթէ չի յաջողեցան դարձադրել, գէթ անոնց  
պարտէզներու և այգիներու ծառերը արմատախիլ ընե-  
լով ամայի անասլատ մը դարձնելու մեծ քաջութիւնն  
ունեցան. մարդոց գլուխներու տեղ ծառոց բուները  
կտրելով իրենց դադանային կրից յազուրդ տալ կար-

---

(\*) Մտով ու ձաւարով պատրաստուած կերակուր  
մ'է գնտածել, զոր շատ կը սիրեն Չէյթուցիք :

ծեցին. դիւղեր և աւաններ-Թուով ԳՅ-, նաեւ եկեղեցիներ ու վանքեր այրելով նուիրական պարտականութիւն մը կատարած համարեցին, և այդ է արդէն իրենց կոչումը :

Ո՛ր դարու մէջ ալ ապրի Մոնկոլը միշտ Մոնկոլ է, վայրենի և անոպայ, Թշնամի քաշաքաղըրթեան, Թշնամի յառաջդիմութեան, կը քանդեն, միշտ կը քանդեն՝ առանց երբէք շինելու. բուերու նման աւերաններու վրայ կուզեն իշխել Մոնկոլական ամեն վայրագութեանց իսկատիպ պատիւերը և ճշմարիտ մարմնացումն եղող սուլթանը չենք գիտէր ինչ մտքով յանկարծ հաշտուելու որոշում տուաւ այժմ, որուն իրրեւ միջնորդ՝ Պօլսոյ դեսպանատանց հրահանգովը Չէյթուն եկան մեծ տէրութեանց Հալէպի հիւպատոսք, և Հայոց երեւելիները սրանք յեղափոխականները ի ժողով դումարելով՝ յիտ ընդերկար բանակցութեան՝ համաձայնութիւն գոյացուցին հետեալ պայմաններու վրայ :  
«Բարդուղիմէոս վարդապետը լիազօր ներկայացուցիչ կարգուեցաւ Չէյթունի Հայոց կողմանէ, որ իրեն խորհրդա՛լից առաւ պարոն Ս. Ղասին Չէյթունի հանրութեան հաճութեամբ :

---

ԺԵ .

ՉԷՅԹՈՒՆԻ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Չէյթունացիներն անպայման կերպով կը մերթեն յանձնել Օսմանեան կառավարութեան իրենց նորեկ պարագլուխները(\*) :

---

(\*) Հակառակ պարագային Չէյթունացիները կը սպառնան շարունակել պատերազմը : Չէյթունացիները այդ նըպատակով ցոյցեր արին արդէն :

2. Զէյթունի «նորեկ» վեց պարագլուխները պիտի ձգեն Օսմանեան հողը, Բ. Ղուռը երաշխաւորութիւն կուտայ 6 պետութիւններու Կ. Պօլսոյ ներկայացուցիչներուն, որ այդ «նորեկներուն» մեկնումը մինչեւ եւրոպա պիտի կատարուի ապահով ու անվնաս կերպով և հարկ եղած պատուով, Օսմանեան տէրութեան ծախսով :

3. Բանադող հիւպատոսներու միջոցաւ դեսպանները երաշխաւորութիւն կուտան 6 «նորեկ» պարագլուխներուն Յօդ. 2ի ճշգրիտ գործադրութեանը, նոյն եղանակաւ՝ որպէս կը կատարուի եւրոպական հպատակներու և հիւպատոսներու նկատմամբ :

4. Կատարեալ և ամբողջական ներում ո՛չ միայն Զէյթունցիներուն, այլ և այն տեղ ապաստանած գիւղացիներուն, ճամբուղիներուն և հայ հրոսակային խումբերուն :

5. Պիտի հաստատուի մի քրիստոնեայ կառավարիչ, որ պիտի ընտրուի եւրոպական տէրութիւններու հաւանութեամբ .

6. Զէյթունի սատիկանութիւնը, հարկահանները, սատիկանները, դինւորները և կառավարական պաշտօնեաները պիտի ընտրուին և կազմուին նոյն իսկ Զէյթունցիներէն :

7. Զէյթունցիները չը պիտի վճարեն յետամնաց տուրքերը (պադայէ)(\*) և հինգ տարի պայմանաժամով տուրք վճարելէ ազատ պիտի լինին :

8. Հաստատումն հարկերու համեմատական դրու-

---

(\*) Զէյթուն ունէր իբրեւ պագըյէ ամեն տեսակ տուրքերէ զատ, ինչպէս, տասանորդական, դինւորական, կալուածական և այլն, նոյնպէս և երկրագործարժական դրամատունէն (պանքայէն) մօտ 70,000 սակի փոխառութիւն ըրած էր :

Թեան իւրաքանչիւրի կարողութեան համեմատ :

9. Չէյթուհիներու կեանքը, ինչքը, պատիւը և կրօնական ազատութիւնը կ'ապահովուի և կ'երաշխաւորուի եւրոպական սկստութիւններու կողմէն :

10. Չէյթուհի ապաստանած բոլոր հայ գիւղացիներու, ինչպէս և Թիւրքիոյ այլ և այլ վայրերէն եկած և այնտեղ դուժարուած բոլոր հայ խումբերու և անհատներու ապահով և անվնաս վերադարձը իրենց տեղերը պիտի կատարուի բանակցող հիւպատոսներու անմիջական հսկողութեան տակ :

11. Չէյթուհիներու ձեռքով զօրանոցէն գրաւուած պատերազմական դէնքերու (մայ, Թինլիներու և երկու թընդանօթի) յանձնուէն Օսմանեան կառավարութեան՝ այն պայմանով սակայն, որ Չէյթուհի շրջակայ գաւառներու ամեն թուրք և չերքէզ գիւղացիներէն ուոյնպէս վերցուին նոյն օրինակ դէնքերը : Չէյթուհիներուն պիտի մնան իրենց սովորական դէնքերը :

12. Համաձայն Չէյթուհիներու մերժման՝ ասոնք չը պիտի վերաչինեն այրուած զօրանոցը. — այդ վերաչինութիւնը կը վերաբերի Օսմանեան կառավարութեան :

13. Օսմանեան բանակը պիտի ձգէ Չէյթուհի գաւառակը և հեռանայ, միայն պիտի մնայ մի գունդ վինւոր, այդ գունդը որ և է իրաւունք չունի միջամտելու Չէյթուհի բոլոր ներքին գործերուն և անոր խաղաղութեան պահպանման :

14. Եւրոպական բանակցող հիւպատոսները Չէյթուհիէն չը պիտի մեկնին մինչև ներկայ պայմանագրի տրամադրութիւններուն անթերի գործադրութիւնը (\*) :

---

(\*) 14 Յօդուածին համաձայն Չէյթուհիներու կողմէն պաշտօնական բանակցութիւնները պահանջ դրին նաև միջազգային երաշխաւորութեան պայմանի մը ար-





քոպա ուղեւորեցան շնորհիւ Չէյթուհուց յանդուգն պնդումներին : Սոյն պատմութեանց մանրամասնութիւնք հետեւեալները են :

Բանակցութեանց մէջ էստէմ բաշայի և հիւպատոսներուն առաջին պահանջը այս վեց պարոնայքն էին . որ պէս զի էսհեմին յանձնուին այն ալ Պօլսոյ Սուլթանին նուէր զրկէ , որ ուղածնուն պէս բզքտեն : Երբոր Չէյթուհիք այս անիրաւ կարգադրութիւնը լսեցին , բոլորովին յուզուած , անմիջապէս ժողով դումարեցին և որոշեցին այդ պահանջը բացաձակապէս մերժել . հակառակ պարագային պատերազմը նորոգելու ու շարունակելու պատրաստ էին : Հետեւապէս Փրնուզի վանահայր Բարթուղիմէոս վարդապետը իրենց կողմէ լիազօր ներկայացուցիչ կարգեցին հիւպատոսաց և էսհեմի ժողովի նիստին մէջ բանակցութեանց հանդէպ մաքառելու համար . ուստի հիւպատոսաց ժողովին բացման՝ նախ և առաջ կրկնեցին իրենց առաջարկը , այսինքն օտար հիւրերու էսհեմ բաշայի յանձնուիլը . անվեհեր վարդապետը բացազանչեց «ատիկա ոչ կարեմք» և սա ալ աւելցուց ըսելով որ՝ —միթէ կարելի է դարիբ մարդիկ թուրքի ձեռք յանձնել . չէ՞ք գիտեր թէ Չէյթուհիք վեհանձն բնաւորութեան տէր մարդիկ են . ո՛չ թէ մարդ , այլ հաւ մը անգամ թուրքի ձեռք չենք տար . այդ սարկութիւնը չենք ընդունիր և դուք դեռ պնդել կը կամիք . միթէ՞ կ'ուզէք որ պատերազմը շարունակելու նշան յայտարարեմ , ո՛չ թէ անոնք ձեզի կը յանձնենք այլ իրքեւ հայ , իբրեւ Չէյթուհի պէտք է որ անոնք մեզի հետ մէկտեղ բանակցութեան մասնակցին :

— Այս խօսքին վրայ քանի մը վայրկեան լռութիւն տիրեց , տեսան թէ դժուարութեան բաղեցան . ուստի հիւպատոսը բաշային հետ խորհրդակցելով՝ ամէնը մէկ

բերան հաւանութիւն տուին որ՝ Աղասեանք ալ իբրեւ Չէյթուէնցի բանակցութեանց մասնակցին . (այս վերջին խօսքը , որ ըրաւ վարդապետը , մեծ շնորհակալութեամբ ողջունուեցաւ Չէյթուէնցւոց ժողովին կողմանէ , վասն զի տեղեակ չէր այդ երկրորդ հարցի մասին . այլ վարդապետը ինքն իրմէն յղացաւ այդ յանդմեզն խօսքը ու քաջութեամբ արտասանեց) :

Չէյթուէնցիք անմիջապէս հանրագրութիւն ըրին և 6 պարոններու պետը Աղասին իրենց կողմանէ վարդապետին խորհրդական կարգեցին , հիւպատոսաց և էտհէմ բաշայի գումարման առջեւ՝ Չէյթուէնցւոց դատը պաշտպանելու համար : Պայմանագրութեան ամէն յօդւածները լրանալէն վերջը էտհէմ բաշա հիւպատոսներուն դիմեց և ըսաւ որ եթէ Չէյթուէնցիք այս 6 պարոնները մեզի չյանձնեցին՝ Ստամպոլ դրկելու համար , գոնէ Եւրոպա դրկուին» : Հիւպատոսք բաշային խոստացան այդ խնդիրը կարգադրել և դայն Չէյթուէնցւոց առաջարկեցին . Չէյթուէնցիք ալ հաւանութիւն տուին հետեւեալ պայմանաւ : — Նախ ասոնց անուշ հոգիները մենք թուրք կառավարութեան չենք վստահիր , եթէ 6 տէրութեանց հիւպատոսք երաշխաւոր կ'ըլլաք ապահովելու ասոնց ճամբորդութիւնը , առաջնորդելով զանոնք հանգիստ և հանդարտ ձեր դաւաղներով և թարգմաններով մինչև Մերսին և անկից Եւրոպիոյ շողենաւը , կը համակերպինք ձեր առաջարկին . — «ապա թէ ո՛չ թուրքին վստահ չենք հա» . պոռաց կտրիճ Հայր Սուրբը և միանգամայն հիւպատոսներէն գրաւոր երաշխաւորութիւն պահանջեց ու անոնք ալ երաշխաւորագիրը ստորագրելով յանձնեցին վարդապետին ու ամենայն վստահութեամբ ճամբայ դրին սիրելի հիւրերը :

Ի վերջոյ վարդապետին և հիւպատոսաց միջև խելմը զրոյցներ անցան՝ սապէս , հիւպատոսք վարդապետ-

տին հարցուցին թէ՛ «Չէյթուհիք ինչ խելքի ծառայելով այս 6 օտար հիւրերուն համոզուեցան և տէրութեան դէմ ապստամբութիւն հռչակեցին» . արի վարդապետը պատասխանեց . «Ո՛չ , այս հիւրերը յանցանք չունին , այլ մեր Չէյթուհի ժողովուրդը նպատակ ունէր ապրատամբութեան դրօշակ բարձրացնելու , ես ալ ապստամբագետ , զզուած էինք Հախսեան ռեժիմին անարդար վարմունքներէն , այս անարդարութեանց որ մէկը թուեմ , բայց մին ըսեմ՝ ազով բաւականացէք : Տարի մ'առաջ Շամցի Ղատը (դատաւոր) մը ունեցանք որ դայմագամի փոխանորդի ալ պաշտօն վարեց . այս անձը տէրութեան տուրքի համար ալքատի մը երեք էշը 50 դրուչի ծախսեց Մարաշցի տաճիկներուն : Այս անարդար վարմունքին դէմ բռնութեցինք , բայց ինքը սապէս պատասխանեց . — Ես դիտմամբ կ'ընեմ , որ խլրտում մը հանէք և մեր թագաւորը դձեզ բնաջինջ ընէ» : — Այս վերջին խօսքին վրայ հիւպատոսք լռին և խոժոռ նայլածք մը ուղղեցին էտ՛էմ բաշային , նա ալ ամօթալի դիմօք հիւպատոսաց նայեցաւ : «Է՛հ , ինչ ընեն այս մարդիկ , դանակը սակորին հասեր է , միթէ իրօւունք չունին ապստամբելու» , ըսին հիւպատոսք որուն վրայ էտ՛էմ բաշա գլխիկոր մնաց և իրենց կառավարութեան նզովք կը մրմռար : Այսպէս փակուեցաւ այս հարցը :

Ոմանք ապսպրած էին Հայր Սուրբին որ պարագային համեմատ հիւպատոսաց ժողովին մէջ բացորոշ յայտնէ իւր ապստամբութեան պարագլուխ ըլլալը ինքն ալ խոստանալով որ միշտ պատրաստ է իւր ազգին սիրոյն համար զո՛ւռելու : Երբ պարագան եկաւ ամբողջովին կատարեց իւր խոստումը , ինչպէս «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» :

---

ՀԻՆ ԳԱՂԹԱԿԱՒ ԶԷՅԹՈՒՆԻ ՄԷՋ ՀԵՏԵԻԵԱԼՆԵՐՆ ԵՆ

|    |                                 |
|----|---------------------------------|
| 1  | Տուն ֆայասցի                    |
| 1  | « Չաթցի (սօղօխ)                 |
| 1  | « Մաղնիսացի                     |
| 3  | « Կիւրիւնցի                     |
| 1  | « Տարէնտացի                     |
| 4  | « Թէյեկցի (կես վուր տալ) այժմ   |
| 1  | « Շիվիլկիցի (Անաէրուն) Անարուրն |
| 2  | « Կապանցի « «                   |
| 2  | « Շամցի                         |
| 1  | « Պաղտատցի                      |
| 1  | « Մոսկուլացի                    |
| 1  | « Շապէնաէրեանք (Պարսկաստանցի)   |
| 1  | « Պըզմըշէնցի (Սարբերդ)          |
| 1  | « Ատանացի                       |
| 1  | « Հաճընցի                       |
| 6  | « Պօղօխցի                       |
| 5  | « Մարաշցի                       |
| 1  | « Ամըքցի (Անախոքի կողմ)         |
| 1  | « Տէրէցի (Մարաշու գել)          |
| 24 | « Լազ թուրք (Տրա պիղոն)         |
| 1  | « Կեսարացի                      |

—  
60

Վերոյիշեալ դադթականները ժամանակին Չէյթուն  
եկող ապաստանողներ են, իբր աղատ երկիր : Ատենով  
չատ տեղերէ մարդիկ եւր յանցանք մը գործէին, փո-  
խանակ թիւրք բանաերու մէջ տանջուելու, կը վաղէին  
Չէյթունի պաշտպանութեանը կապաստանէին :

ՍՈՒՐԷՆԵԱՆ, ԵՍՂՈՒՊԵԱՆ, ԵՆԻՏԻՒՆԻԱ ԵՒ  
ՇՕՎՐՈՆԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆՔ

Սուրենեան իշխանի գերդասանք

- 1 Սիւրէնյին (Սուրէնեանք)
- 2 Սիթինք (Սէթեանք)
- 3 Բէսիլիսինք (Բասիլոսեանք)
- 4 Կէյկոնք (Կէյիկեանք) (Գէորգեանք)
- 5 Մըխսը Վարդըվրինք (Մահաթսի Վարդևիվարեանք)
- 6 Աղպաչինք (Աղպաչեանք)
- 7 Թումիկոնք (Թումիկեանք)

Եաղուպեան իշխանի գերդասանք

- 1 Խեչիրինք (Խաչերեանք)
- 2 Տէր Սահակինք (Տ. Սահակեանք)
- 3 Թիւրիւսինք (Թորոսեանք)
- 4 Սըրըբսինք (Սերովբեանք)
- 5 Կարապիտինք (Կարապետեանք)
- 6 Ասպրճատուրինք (Աստուածատուրեանք)
- 7 Մնացակնինք (Մնացականեանք)

Ենիսիսիւնեա իշխանի գերդասանք

- 1 Ասատուրինք (Աստուածատուրեանք)
- 2 Աւետիսինք (Աւետիսեանք)
- 3 Փէնիւս փէչինք (Փանոս փաչայեանք)
- 4 Նշանինք (Նշանեանք)
- 5 Փիրչինք (Քրիչեանք)
- 6 Մըխսը Փէնիւսինք (Մահաթսի Փանոսեանք)
- 7 Մարկուսինք (Մարկոսեանք) (այժմուս Նազարէթիչ-  
խանը Մարկոս աղայի որդին է և Պապիկ բաչայի եղբայրը) :

Շովրոյեան իշխանի գերդասանք

- 1 Սարգըսինք (Սարգիսեանք)
- 2 Պուտուսինք (Պոտոսեանք)
- 3 Չափառինք (Չափառեանք)
- 3 Հարապիտինք (Հայրապետեանք)



ՅՈՒՑԱԿ ՉԻՅԹՈՒՆԻ ԱՄԲՈՂՁ ՊԱՏԵՐԱԶԴՆԵՐՈՒ

ԵՒ ԴԻՊԹԵՐՈՒ

1780—1895

ԹՈՒԱԿԱՆ

| Թիւ |  | պատերազմ. դեպք |
|-----|--|----------------|
| 1   | Էօմեր Բաւա   | 1780           |
| 2   | Ալի Բաւա   | 1782           |
| 3   | Գալէնսէր Բաւա  | 1808           |
| 4   | Չափան օղլու Մեհմէտ Բաւա  | 1810           |
| 5   | Քեօսէ Բաւա   | 1829           |
| 6   | Պայազիտ օղլու Սիւլէյման Բաւա. ներքին խռովութիւն                                    | 1831           |
| 7   | Իպրահիմ ուսադիներու ջարդը եւ Սիւլէյման Բաւա  | 1832           |
| 8   | Մարաշ գիպէյերու գերութիւնը եւ Թժսուն Բա.   | 1835           |
| 9   | Շարաւի իշխանի Թոփալեանի սպանումը. Իպրահիմ Բաւա եւ Տէյի Քեօիտ                       | 1836           |
| 10  | Աղնա Տաղի պատերազմը  | 1840           |
| 11  | Խասէֆի պահանջումը  | 1841           |
| 12  | Թեհիրլեցլոց կռիւր եւ Նուսուֆ Բաւա  | 1842           |
| 13  | Չէյրունցլոց՝ քեհիրլիեիցերու հետ բռնամտութիւնը եւ հինգ տարի տարունակ մղած պատերազմը | 1850           |
| 14  | Ալպուսանցի Հան աղա   | 1842           |
| 15  | Թոփալ Սաւօ   | 1847           |
| 16  | Հայրաները եւ Աբօլուղի կռիւր  | 1847           |
| 17  | Ավտարներու հետ պատերազմիլ Կոկիսունի Չինչին պօղազի (նաննի բերդի կիրնը) բռնած տեղը   | 1848           |
| 18  | Պայազիի օղլու Ահմէտ Բաւա   | 1853           |
| 19  | Խուրչիտ Բաւա   | 1860           |

| Թիւ |   | պատերազմ. դեպք |
|-----|---|----------------|
| 20  | Քերմանցի 14 թիւքերու սպանումը                                   | 1862           |
| 21  | Ազիզ բաշա   | 1862           |
| 22  | Պայազիս օղլու Ահմէս բաշա  | 1862           |
| 23  | Պոյամեանի սպանումը  | 1863           |
| 24  | Տափուսու Նիազի էֆենտի միականի գայմազամը                         | 1875           |
| 25  | Վեզիր օղլու հանի Մամբէ եւ Նադն օղլու                            | 1878           |
| 26  | Պապիկ բաշա, փոյրազ Ալի  | 1878           |
| 27  | Եօրբ Բաշա Նիկողայոս Էպիս. Չաֆրեան Պապիկ բաշա եւ Նօխուսեան Փանոս | 1878           |
| 28  | Պապիկ բաշա եւ բանսարկեալք                                       | 1878           |
| 29  | 250 Չեքեզներու ջարդը  | 1878           |
| 30  | Տէսէ բաշա եւ Արեգիկներ  | 1884           |
| 31  | Քացախ Փանոս   | 1886           |
| 32  | Սալէհ բաշա  | (*) 1890       |
| 33  | Տերօրական գործողութիւնք Արեգիկ գիւղացիներէն                     | 1895           |
| 34  | Թիւրք հազարապետի եւ հարիւրապետի քրնուզցիներէ սպանուիլը          | 1895           |
| 35  | Բերտիզ Չայի պատերազմը   | 1895           |
| 36  | Զօրանցի գրաւումը  | 1895           |
| 37  | Զուլալէ Հեսարցլոց անձնատուութիւնը                               | 1895           |
| 33  | Անսրարնու գրաւումը Բարթուղիմէոս վարդապետի ձեռամբ                | 1895           |
| 39  | Եկնիճէ գալէի բլուրին կռիւր                                      | 1895           |
| 40  | Կապանի վրայ յարձակում   | 1895           |
| 41  | Եկզիսներու պատերազմը եւ Բեմզի բաշա                              | 1895           |
| 42  | Սանդուղի կռիւր  | 1895           |
| 43  | Թիւրք գերեաց սպանումը կանանց ձեռ.                               | 1895           |
| 44  | Զօրանցի այրումը   | 1895           |

| Թիւ | պատերազ. դեպք   |
|-----|---|
| 45  | Վանիին ումբակոծումը, Եկնիսիւնեա Եղիայի<br>յարձակումը թիւք բանակին վրայ 1895 |
| 46  | Հայ եւ թիւք բնդանօթաձիգները 1895  |
| 47  | Ալի պէյի բանակին խորսակումը եւլն.<br>եւ Էսհեմ բաշայի գալուսը(*) 1895        |

Թիւ 13ի մեջ ցուցուած Չէյրունցիներուն եւ Թե-  
նիբցիներու հնգամեայ պատերազմը, 10 կանոնաւոր  
բախումներով 10 զաւս պատերազմ ընդունուած է:

Համապոլումարն է 41 պատերազմ եւ 16 դեպք:

---



### Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ



Բացի թաշային մի քանի խանութներէն Ձէյթուէնի մէջ կայ շուկայ (Պեզուր տեղական լեզուով) մը, որ կը գտնուի քաղաքին ճիշտ կեդրոնը Սուրենեան իշխանի պատկանած միջին թաղին մէջ : Այս շուկան գրեթէ 60ի չափ խանութներէ կը բաղկանայ և որոնց մէջ կը վաճառուին ամեն տեսակ ապրանքներ, սակայն իւրաքանչիւր խանութի մէջ կը ծախուին խառն ի խառն մէն մի տեսակ ապրանք, — Նպարեղէն(\*), մանիֆաթուրայի տեսակները (Բամպակեղէն, Բրդեղէն և մետաքսեայ կերպասներ) մանրավաճառի առարկաներ, ծխախոտ և թէմպէքի, մրգեղէնք(\*\*) և Բանջարեղէնք : Շուկան կը գտ-

---

(\*) Ձէյթուէնի արտադրութիւններէն յիշելու արժանիներն են, իւղը, պանիրը, մեղրը, ուռուպը, չամիչը միայն ասոնց շարքէն մածունը կը պակսի. զի քաղաքին շուրջը արօտատեղի չը լինելուն համար, Ձէյթուէնի մէջ կաթնատու նախիր չի պահուիր, տարուան մը մէջ հաղիւ ամիս մը (ապրիլ 15էն մայիս 15) մածնավաճառութիւն կրնայ ըլլալ, վասն զի խանջարածները կը հեռանան քաղաքէն 5-6 ժամ հեռուն դէպի հիւսիս Պերիս լերան ստորոտները :

(\*\*) Ձէյթուէնի խաղողը, նուռը, խնձորը, տանձը, նոյնպէս մէն մի ծանօթ պտուղ և բանջարեղէնները խիստ գովելի են : Կան քանի մը տեսակ պտուղներ, որոնք Մարաշ քաղաքէն կուգան ինչպէս. — ծիրանը, ձմերուկն ու սեխը և բարլընանը, այս վերջինները թէև Ձէյթուէնի մէջ կը բուսնին բայց սակաւ են :

հուրի հատ մը հացի փուռ : Կան հոյնպէս ամեն տեսակ արհեստաւորներ՝ բացի դարբիններէն՝ որոնք մասնաւոր տեղեր կ'աշխատին, նաև կան շուրջ վեց հատ հաստատուած մսավաճառ՝ բացի Աղնիպոս քաւած տեղւոյն մսավաճառներէն (Շովրոյեան իշխանին թաղին մէջ պղտիկ շուկայ մը) :

Կերակուրներ. — Ի բաց առեալ քանի մը տեսակ կերակուրներ՝ Ջէյթուրի մէջ կը պատրաստեն հետեւեալ կերակուրները. — Մսով ֆիւֆթե (\*\*), որը առօրեայ սովորութիւն դարձած է. բացի պահք օրերէն՝ այս կերակուրը երեք տեսակի կը բաժնուի, հում ֆուֆսօ, Գրլէօր ֆուֆսօ, Մէջէօլ ֆուֆսօ, ասոնք կը պատրաստեն ձաւարով (պուլղուր), փուխ (իւղազուրկ թարմ միս) մսով, միսը կը ծեծեն և խմորի պէս ընելէ յետոյ ձաւար, սոխ, ազատգեղ, հաւէճ (պղպեղ) խառնելով կը շաղեն և պըղտիկ վարուելի ձեւով կը շինեն Հում ֆեօֆսէն և առանց եփելու հում հում կ'ուտեն :

Բ. Կլոր ֆեօֆսէն կը շինեն ընկուզի մեծութեամբ, յետոյ գէրջօրի (մսի ջուր) մէջ կ'եփեն և հոյն մսի ջրին հետ կ'ուտեն :

Գ. Մէջէօլ ֆեօֆսէն գնաճև հարնջի մեծութեամբ կլոր կը շինեն և յետոյ զըյմա (միսը մանր կտորներու վերածած և սոխի և անուշաճու ծաղկանց հետ իւղի մէջ տապկած) ալ մէջը լեցնելով վերոյիշեալ մսի ջրին մէջ կ'եփեն և կ'ըլլայ մէջէօլ ֆիւֆսէ. ինչպէս որ վերեւ քսինք, ասոնց երեք տեսակներուն ալ խմորը (ծեծուած միս և ձաւար) մի և հոյն է :

Մանաւանդ Հում ֆիւֆսէն կարմիր պղպեղով (պի-

---

(\*\*) Փաքր Ասիոյ հարաւային պատկանեալ կերակուր մը :

պէս) մեծ ախորժակ կուտայ զայն ուսողներուն . արդեօք բժիշկները այս կերակուրը տարօրինակ պիտի չը գտնեն : Գալով Գրչմախի և խորովածի մասին , ասոնք պատրաստելու ատեն կրնամ ըսել թէ իւր անուշա՛տութեամբ քանի մը վայրկեան հեռաւորութենէ զգալի կ'ըլլայ . ասոր համեղ լինելուն պատճառն ալ այն է որ մտառու կենդանիները խոտաւէտ և ծաղկաւէտ արօտատեղիներու մէջ կ'արածուին հետեւեալ լերանց վրայ , զոր օրինակ . Պէրիտ , Ուզոր , Իւկէճ . Աւաղ-՛նէտիկէ , Աթլըխ Անկըզուկ , Ալաշայիր եւլն . Այս վայրերուն խոտն ու ջուրը մինչև անգամ կենդանեաց ախօաներուն սակեոյ փայլ մը կուտան :

Գալով Հերիսա ըսածին՝ թէև հայաստանի ծանօթ կերակուր մըն է , գրեթէ չի կայ հայ մը որ զայն չը գիտնայ , բայց և այնպէս Զէյթունցոց համար այն ալ իւր մասնաւոր օրերը ունի . ինչպէս , Վարազայ խաչի , Հրեշտակա պետի , Յիսնակաց , Ս . Յակօբայ և Ս . Սարգսի պահոց շարաթ օրերը և մանաւանդ Բարեկենդանի , Վարդանանց հինգշաբթի օրը ամեն տուն այս կերակուրը կը պատրաստէ , նոյնպէս նոյն օր ճիրիտ կը խաղան և նշանաւթեան համար հրացանաձգութիւններ կը կատարուին : Օրուան խօսակցութեան նիւթն ալ Ս . Վարդանանց մասին կը լինի : Մինչև անգամ Հերիսային համար ալ ծերերը զանազան մեկնութիւններ կուտան , ըսելով որ Հերիսան Հար իսա ի ալաւաղումն է . երբոր մանկունք կը հարցնեն իրենց նախահարց սոյն Հար զարի նշանակութիւնը , մեծ հայրերը կ'ըսեն այսպէս . հա՛ր զսա զարկ ասիկայ , այսինքն զարկ պարսիկը , ինչպէս որ Ս . Վարդանանք զարկին պարսիկները : Նոյնպէս այդ նպատակաւ է որ այս օրը Զէյթունցիներս ալ նշանաւթեան և մականաձգութեան (ճիրիտ) խաղեր կը խաղանք և կերակուրնիս ալ Հերիսա կ'ըլլայ , մինչև անգամ մեր

ժողովուրդը նոյն օրը Հիբիսիւսի եօրը (Հերիսային օրը) կ'անուանեն, այսինքն ընդհարումի օր :

Նոյն գիշերը որ ուրբաթ պիտի լուսնայ՝ խանձով փայտի կտորներ տանց վրայ, և փողոցներու մէջ կը նետեն, սոյն գիշերուան տեսարանը հիանալի կ'ըլլայ, կարծես թէ գիսաւոր աստղեր կը տեղան քաղաքին վրայ, այս սովորութեան համար ալ ծերունիները սա հետեւեալ մեկնութիւնը կուտան. — Ժամանակաւ հայերը երբ կրակապաշտութիւնը մերժելով անոնց նուիրական կրակները եկեղեցեաց մէջէն ցիրուցան ըրին և մոգերն ալ վռնտեցին, այս է պատճառը որ սոյն պատմութեան իբր յիշատակ այդ խանձողները ասդ անդ կը ցրուեն :

Պատ. ընթերցողքս թող չը դարձանան այս աւելորդապաշտպանութեան վրայ, իրողութիւն մըն է որ կը պատմեմ ես. արդեօք այս հին սովորութիւնը բոլոր հայեր կը կատարեն թէ մինակ Ձէյթունցի հայերը, այդ ալ ինծի համար մութ է : Բայց և այնպէս այս սովորութիւնը Ձէյթունցիք դադրեցուցին 1864 թուէն ի վեր՝ հրդեհներէ զգուշանալու համար :

Առողջապահութիւն. — Թերեւս ընթերցողք պիտի դարձանան երբ ըսեմ թէ Ձէյթունցիք բժիշկէ ալ զուրկ մնացած են : Երբ Ձէյթունցին հիւանդանայ, տաներէց քահանան կը կանչեն, նա կուգայ և չորս գլուխ բժշութեան աւետարան և «Փարատեա» աղօթքը կարդալէ յետոյ՝ կը մեկնի, հիւանդը ասոր վրայ թեթեւցայ ըսելով կը քաջալերուի և օրըստօրէ կ'աղէկնայ, թէև ոմանք ալ կը մեռնին, և այս վերջիններուն համար ալ կ'ըսեն՝ աճուրդ իկիք մեռօվ (Ճակատագիրը այս է եղեր) :


Ձէյթունի մեծամասնութիւնը համարւտ էր բժիշկ մը ունենալ նախապաշարմունքներէ զերծ մնալու համար, և այդ առթիւ 1890 թուին դիմեցին Մարաշու կառավարիչ Սալէհ փաշային՝ որ իրենց խնդիրքին համեմատ

անոնց զրկեց Մարաշարնակ Այնթապցի Հէքիմ-Սպուճան հայ Բժիշկ մը, որը դրդուած էր փաշայի կողմէն Ձէյթունցոց ուէ վնաս մը հասցնելու համար, և սոյն տրխմար և ազգատեաց բժշկին գործածած թունաւոր դեղերէն հինգ հարիւրէ աւելի անմեղ մանուկներ զո՛ գացին քիչ ժամանակի մէջ (մանրամասնութիւնք տես, Ս. Բիւրատի Բանիս Բանի Ս. հատոր մէջ) :

Անա այս աղետալի և մահաբեր դէպքէն յետոյ Ձէյթունցիք բժիշկ ունենալու նպատակէն ետ կեցան : Այժմ ոչ բժիշկ կայ Ձէյթունի մէջ և ոչ ալ դեղարան, բաց ի մի քանի նախնի վիրաբուժներէ :

Բայց և այնպէս նորէն բժիշկ խնդրողներու թիւը մեծամասնութիւն կը կազմէ, ըսելով թէ. — Հիւանդին համար բժիշկ պէտք է, իսկ հողեւորութեան համար ալ Տէր պապա (քահանայ) :

Ձէյթուն ոչ թէ միայն բժիշկի կը կարօտի, այլ նաև աճազին հիւանդանոցի մը. Ձէյթուն իր գիւղորայքով հանդերձ կը պարունակէ իւր մէջ 3370 տուն զուտ հայ. ի՞նչո՞ւ չունենայ մի հիւանդանոց : Ո՞րչափ կարիճներ հասակնին չառած՝ կը յանձնուին սեւ հողին, հիւանդանոցի չգոյութեան պատճառով :



Ա.

### ՁԵՅԹՈՒՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ձէյթունցիք ընդհանրապէս այգեգործ, երկաթագործ բանուորներ և ջորեպաններ են : Մանաւանդ այս վերջինները կարեւոր տեղ մը կը բռնեն : Իւրաքանչիւր

տուն, հարուստէն սկսեալ մինչև աղքատը, ջորի կամ էշ  
կը պահէ, եթէ ոչ՝ չկրնար ապրիլ, վասն զի ցորենը,  
գարին և այլ ընդեղէնները դուրսէն պիտի բերուին,  
այսինքն՝ Ալպուսթանէն, Եարփուղէն, Կոկիսոնէն (Կէօք-  
սիւն) : Ամէն տուն վերոյիշեալ բեռնակիր անասուննե-  
րէն 1-8 հտտ կը պահէ : Զէյթունցիք սեպտեմբերէն  
սկսեալ մինչև դեկտ. 10) երթեւեկութիւնը կը շարու-  
նակեն հացահատիկներ քաղաք կրելով : Հարուստը կ'ու-  
նենայ 1-2 հարմանտօ, որ տեղական լեզուով կը նշա-  
նակէ վարձեալ ջորեպան :

Այս կտրիճներու չարքաշ ճամբորդութիւնը կը նը-  
կարագրեմ ճշգրիտ իրողութեամբ : Ըստ թրքաց գիշեր-  
ւան ժամը 4ին կը մեկնին քաղաքէն, 8, 9 և 10 ժամ (\*)  
տեւող լեռնային օձապտոյտ ուղիներէն և դժնդակ քա-  
րոտ ապառաժներու, ելեւէջներու մէջէն անցնելով կը  
թողուն լեռնային ճամբան, ալ անոնց առջև կը պար-  
զուին Կոկիսօնի, Եարփուղի և Ալպուսթանի ընդարձակ  
դաշտերը : Գիշեր ցորեկ անդադար քալելով (\*\*) 3 օր-  
ւան մէջ, կը կտրեն այդ հեռաւորութիւնը և անասուն-  
ներ բեռներով բարձած կը վերադառնան, մէկ բնօր  
8-18 քիլէ (\*\*\*) կը կշռէ, էն ուժեղ ջորին 18 քիլէ  
կրնայ կրել, որոնք այժի մաղէ հիւսուած երկու քուր-

---

(\*) Զէյթունէն մինչև Կոկիսօն լեռնային ճամբան 8,  
իսկ դաշտայինը 4 ժամ կը տեւէ, ընդամէնը 12 ժամ :

(\*\*) Զէյթունէն մինչև Ալպուսթան լեռնային ճամ-  
բան 9, իսկ դաշտայինը 4, որով ամբողջ ճամբան 13  
ժամ կը տեւէ : Զէյթունէն մինչև Եարփուղ լեռնէն 10  
ժամ, իսկ դաշտէն 2, ընդամէնը 12 ժամ :

(\*\*\*) Այդ Զէյթունի բարբառով քիլէ ըսուած չափը  
6 օկկայի (քաշ) արժէք ունի, Ալպուսթանի թուրքերէն  
լեզուով սիլմէ կը կոչուի :

ձերու մէջ զետեղուած են : Որովհետեւ մեր լեռնագա-  
ւառի քարերը մեզ հաց չեն տար , ստիպուած ենք մենք  
տնտեսական աննախանձելի վիճակի մէջ ապրիլ : Եթէ  
քարերար ազգայինք Չէյթուէնի տնտեսական վիճակը  
բարւոքելու նպատակով իրենց ջանքերը չխնայեն , Չէյ-  
թուէնցին խեղճ և ողորմելի կացութեան մէջ չապրիր :  
Եթէ մի քանի կէտեր մեր քարերարները ի նկատի առ-  
նեն և դործադրեն , Չէյթուէնցին բաւական կ'օգտուի  
թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս : Մին այն է , որ Չէյ-  
թուէնի մէջ երկաթի դործարան մը բացուի , որով տեղ-  
ւոյն ժողովուրդին միջոց կը տրուի իր նիւթականը ըստ  
կարելւոյն ապահովել . երկաթը թէ՛ առատ է և թէ՛  
լաւ (\*) : Երկրորդ՝ գինիի դործարան մը բանալ Չէյ-  
թուէնի մէջ : Չէյթուէն ունի 29 տեսակ պատուական խա-  
ղող , միթէ չէ՞ կարելի ատոնցմէ Պօռտօ և Շամբանիա  
գինիներու պէս ազնիւ գինի պատրաստել , մինչդեռ  
տեղացւոց պատրաստած պատուական գինին երկար չի  
դիմանար : Թէև Չէյթուէնցին պանդխտութիւնը (\*\* ) չսի-

---

(\*) Այդ պատուական և անսպառելի մետաղը Պէրիտ  
լեռը կը գտնուի : Կարծիք կը յայտնուի նաև թէ այդ  
լեռանը մէջ քարածուխ ալ կը գտնուի , բայց տակաւին  
պեղուէնմներ եղած չեն , բայց Չէյթուէնցիք իրենց ան-  
տառներու առատ փայտովը այդ պակասը լեցուցած են  
փայտածուխ պատրաստելով : Ասկէց 30-40 տարի առաջ  
Չէյթուէնցիք այդ հանքը կը շահագործէին նահապետա-  
կան ձեւով , այժմ գրեթէ դադրած են , զի Եւրոպայի  
մէջ պատրաստուած երկաթը աւելի աժան գնով կը  
ծախուի :

(\*\*) Միայն 30 տարիէ ի վեր Չէյթուէնցիք փոքր  
թուով (60-70) Ատանայ կ'երթան աշխատելու և 3 ամ-  
սէն կը վերադառնան իրենց պաշտելի հայրենիքը :

քեր, և այդ շատ գովելի է, որովհետև Չէյթուն ի հարկին կտրիճի պէտք ունի, բայց լաւ կ'ըլլայ, իր անասական վիճակը բարւոքելու համար, մի քանի ուշիմ պատանիներ Եւրոպա զրկուին երկաթագործութիւն, գինեգործութիւն և կաշեգործութիւն սորվելու: Անոնք դարձեալ վերագառնալով իրենց հայրենիքը շատ օգտակար, ծառայութիւններ կրնան մատուցանել: Ուրիշ հարց մը, Չէյթունի դպրոցները տեւողական ընելու համար, որովհետև հաստատ եկամուտ չըլլալով, երբեմն շարունակութիւնը կ'ընդհատուի, խորհուրդ կուտամ կրթասէր Ազգայնոց Չէյթունի մէջ բաշնիք մը բանալ: Եթէ միայն 1000 ռսկի ծախսուի՝ լաւ բաշնիք մը կարելի է շինել և Չէյթուն ջուրով ու միայտով առատ երկիր մը ըլլալով, կրնայ ա'դ բաշնիքին հասոյթով՝ դասատուները ապահով կերպով ապրեցնել: Քաղաքը կը բաղկանայ 1500 տունէ:

Ուստի կոչ կ'ընեմ ներկայիս ազգասէր բարերարաց այս ծրագիրը իրագործել: Եթէ բարերարք կամին՝ կարող են այսպէսով մեծ ծառայութիւն մը մատուցած ըլլալ մեր ժողովուրդին:

Պատ. ընթերցողաց մէջ դուցէ գտնուին այնպիսիներ, որոնք առարկեն թէ Չէյթունցին ինքն իր գլխուն հարը թող գտնէ և դուրսէն օգնութիւն չակնկալէ: Բայց ինչպէս վերը յիշեցինք, Չէյթունցիք նիւթապէս անկարող են, բառին բուն նշակութեամբ աղքատ. ինչպէս առածը կ'ըսէ. Հաւը սագի հաւկիթ չէ կարող ածել:



Ք .

Ջէյթունի նշանաւոր Խանութի ըսուած անտառը, Ուխտա-  
սեղի մը, մեղուի Փեթակներուն հովիտը եւ Խաւ-  
նարածներու նշանաւոր Եայլան (արօտալայրը):

Ջէյթունի արեւմուտքը, երկու ժամ նեռաւորու-  
թիւնով, Խանութի ըսուած տեղը կը գտնուի Ջէյթունցի-  
ներու վառելու փայտի անտառը: Անտառը գնալու ճամ-  
բան Սախօր էդէէն կ'անցուի, և անտառէն կէս ժամ  
ասդին իսկի Աղբըրէկ (Ոսկեաղբըրիկ) անուն պաղ ջուր  
մը կայ ճանապարհին ճիշդ մէջտեղը, բոլոր անցնող  
գարձողները անպատճառ այդ կենդանարար և մարսե-  
ցնող ջրէն կը խմեն, մանաւանդ իւրանդները այդ ջրէն  
խմածնուն պէս իրենց մարմնոյն մէջ առողջութիւն մը  
կը զգան և գրեթէ բժքի պէտք չեն ունենար:

Հարսնիքներու ատեն հարսնեւորներ այդ ջուրէն շիշ  
մը ջուր կը տանին նետերնին ու կը խմցունեն հարսին  
ու փեսային, որպէս զի ոսկին շատկեկ շահին իրենք  
կամ իրենց զաւակները: Այս սովորութիւնը Ջէյթունցւոց  
մէջ ընդհանրացած չէ, այլ այն պարագային մէջ կ'ը-  
նեն, երբ մօտակայ Հանի-սեքե և Ղօղնուղազ հայ գիւ-  
ղերէն իրենց քաղաքը հարս բերեն:

Վերոյիշեալ Խանութի ըսուած անտառը խորունկ և  
տարտարոսային ձոր մ'ըն է Անտուղ գետին երկու կող-  
մը: Անտառը լեցուն է խիտ առ խիտ նինաւուրց հե-  
ղեթափ, խոշոր ու հսկայ ծառերով՝ որոնք այնքան  
զառամած ու փտած են՝ որ այլ եւս փայտահարը կա-  
ցինի քանի մը հարուածներով գարաւոր կաղնիները գե-  
տին կը տապալէ: Կը պատմուի՝ որ այդ անդնդային

ձորէն հասող Անտոլայ դետակին մէջ շատ թէճիւրիցի  
թիւրքմէններ իրենց վերջին քունը քնացած են, Ձէյ-  
թունի հերոսներու ձեռքով :

\*  
\* \*

Ձէյթունէն արեւմտեան հիւսիս՝ երկու ժամ հեռա-  
ւորութիւնով ուխտատեղի բնական քարայր մը կայ, որ  
կը կոչուի Սուրբ Մինէկիւսնիւց (Միայնակեաց) : Աւան-  
դութիւնը կ'ըսէ թէ այնտեղ ժամանակով մենաւոր մարդ  
մը կը ճգնէ եղեր : Երբ Ձէյթունցիք կ'ըստիպօտէին պա-  
տերազմներ ունենալ թշնամիին դէմ, ճգնաւորը զինուած  
ու ճերմակ ձիու մը վրայ նստած կը վազէր հայ մար-  
տիկներու բանակին մէջ և կը խրախուսէր զանոնք ըսե-  
լով . « Մի վախէք, տեղաէք, սուռը (յաղթութիւն) մերն  
է, մինք իւժեօ՛վ պիտի իլլինք, էսէգիշիր Գաբրիէլ հը-  
րեշտակասկետ, Ս. Սարգէս, Ս. Գէօրգ, Ս. Մինոս,  
Ս. Մէակէաէօս, Ս. Թիւրիւս, Ս. Վարդօն իմ քէօվս  
իկին՝ ասըն թէ՛ ըզմեզ Քիւրիւսաիւս ուղուրկից ձիւ  
եարտըմ էսիլօ համօր, վօղը ալայիսէ ձեր օրտուրն մէջը  
կու գանրվընք ըմմը՝ ալայուտէ չինք ըրվըննօ պաղը  
մարդկօնց կըրվընսնք, թիւֆէնկնուդ ըռընտ մուխայէթ-  
լըք, գեղը էռճիճը պարաքաթլամըչ կէնինք, հէչ մի  
քէչվէք, կըպըցէք ուր բամպօկն իլլէ : (Մի վախնաք,  
տղաք, յաղթանակը մերն է, մենք ուժով պիտի ըլլանք,  
այս գիշեր Գաբրիէլ հրեշտակասկետ, Ս. Սարգիս, Ս.  
Գէօրգ, Ս. Մինաս, Ս. Մէրկէրիոս, Ս. Թէօդօրոս, Ս.  
Վարդան քովս եկան և ըսին, որ Քրիստոս զմեզ խրկեց  
ձեզի օգնելու համար, վաղը ամէնքս ալ ձեր բանակին  
մէջ կը գանուինք, բայց ամէնուն ալ չենք երեւար,  
մէկ քանիներուն միայն կ'երեւանք : Հրացաննուդ լաւ  
հսկողութիւն ըրէք, ձեր վառօղը, արճիճը կը շատ-

ցունենք, բնաւ մի քաշուիք, զարկէք որ բամպակը  
դուրս ելլէ) :

Այդ ճգնարան քարայրը, արու զաւակ չունեցող  
կիներուն ուխտավայր է, ուր կ'երթան մանչ զաւակ  
խնդրելու : Երբ մանչ ունենան, երախային անունը կը  
դնեն Մինէկիւսնիւց :

Սոյն քարայրէն ժամ մը անդին, դէպ ի հիւսիս,  
ապառաժոտ և անտոխկ ճանապարհներէ անցնելով, աչ-  
քիդ առջեւ կը պարզուի գեղեցիկ տեսարան մը. մանա-  
ւանդ գարնան եղանակին, այդ վայրը կը կոչուի Աղան  
առը, Պէրիտ լեռան ստորոտը : Զէյթունցիք սովորա-  
բար, մեղուի փեթակները, ամբան երեք ամբաները այդ  
տեղ կը փոխադրեն՝ ուր մեղուները կը սնանին ամենա-  
հոտաւէտ և դրախտաբոյր ծաղիկներու հիւթով : Աղան  
առի մէջտեղէն կը վազէ Շուղուր արծաթափայլ և վճիտ  
գետակը՝ կազմուած Պէրիտէն բղխող կենդանարս ր ջրե-  
րէն : Շուղուրը կ'անցնի Զէյթունի քովէն և կը հայթայ-  
թէ քաղքին պատուական խմելու ջուր. մեղուներն ի-  
րենց ծարաւը կը յագեցնեն ծծելով այդ անուշ ջուրէն,  
ատոր համար է որ ամենալաւ մեղրը կ'արտադրեն, բիւ-  
րեղի պէս ճերմակ և խնկաբոյր ու անուշահամ : Զէյ-  
թունէն Եարփուղ (էփեսոս, Երփրսոս) ճանապարհը  
Աղան-առըն կ'անցնի :

\*  
\* \*

Ծէօվք (ծովք), Զէյթունի արեւմտեան հիւսիսը, ե-  
րեք ժամ հեռու, խաշնարածներու հովիտ մըն է, տա-  
փարակ դաշտ մը, Սօլախսէսէ լեռան ետեւը, չորս կող-  
մէն շրջապատուած լեռնաշղթայով մը : այնպէս որ պա-  
րտապապա շրջափակի մը ձեւն առած է : Զմեռ ատեն  
այդ տեղ ձիւն կը հաւաքուի. երբ գարունը կուգայ,


կուտա՛յուած ձիւնը հալելով ահագին լիճ մը կը կազմէ ,  
ուր՛իէց առած է իր Յեովֆ անուը . Յունիսին լիճը կը  
ցամքի և այդ ցամքած տեղը կը վերածուի դրախտի  
պէս մարգագետին հովիտի մը՝ պճնուած գոյնզգոյն  
նունուֆար ծաղիկներով : Չէյթուէն՝ խաշնարածները ,  
վեր՛ի եայլաները (արօտատելի) Խընրխէօզ , Ալաչայի բ  
ըսուած տեղերը ձգելով , Յուլիս 15ին , 50-60 տուն կու-  
գան իրենց վրանները կը հաստատեն այդ դալարաւէտ  
արօտավային մէջ , ուր կը մնան մինչև օգոստոսի  
վերջերը : Այդ տեղի ընտիր և դով ջուրը խմողները հա-  
մեմատարար շատ կ'ապրին(\*) Սեպտեմբերին Կանկրօս  
կ'իջնան , Սօլախատէտէ լերան ստորաքը , ուրկէց Չէյթուէնը  
սանդխաձեւ կ'երեւայ , մինչև անգամ տուներն կրնան  
մի առ մի համրուիլ , մէկուկէս ժամ հեռուն :

Այդ ժամանակն է որ հայ հովիւներ առաւօտեան  
արշալոյսին իրենց դաւալները (սրինգ) կ'ածեն այնքան  
քաղցր և ներդաշնակ՝ որ դմայլում կը պատճառէ մտիկ  
ընտղներուն : Նոյն իսկ Չէյթուէնի մէջ կը հասնի դաւալի  
ձայնը Չէյթուէնցիք բացօդեայ տանիքներու վրայ գի-  
շերելով այն տանները հրճուանքով կը վայելեն առա-  
ւօտեան սրինգներու քալցր հնչիւնը :

---


(\*) Չէյթուէնի մէջ մարդիկ առ նուազն 70 , 80 , 80 ,  
100 և մինչև անգամ 120 տարի կ'ապրին : Արեգ-  
նի գիւղին մէջ Չիվի-Մէրաիւրիւն (Մարաիրոս) անուն  
մարդը 125 տարեկան էր և քաջառողջ : Նոյնպէս և Չէյ-  
թուէնի Եաղուպեան թաղէն Մնացական Կիւրճեանը 108  
տարեկան էր , իսկ մըխսի (մահտեսի Փոլիոն 95 տարեկան  
որոնք դեռ կ'ապրէին , մինչև 1895 թ . և դեռ շատեր . . . :





ԶԷՅԹՈՒՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն



Ծննդականի (պէպէրը) դայեակ կ'երթայ (կնքապո-  
պին) կնքաօր և տաներէցին կը յայտնէ ըսելով պատ-  
րաստ եղէք, այս ինչ մարդուն մի երախայ եղաւ, այ-  
սօր ութ օր (8 օրէն յետոյ) պիտի մկրտենք: Կնքաօր-  
ը երբ կ'իմանայ տղայ լինելը, կ'ուրախանայ և կ'ըսէ,  
օխ, չախ-մախ (հրացան) մ'ալ իւրցով մեզի, կը պատ-  
ւիրէ դայեակին որ լաւ աղ ցանէ, որ վազվզելու ժա-  
մանակ էճուկները և անութները քրտինքէն չ'իսաչին և  
թէ կռիւներուն մէջ ալ ամուր և կտրիճ ըլլայ: Տղայ ե-  
րեխայի համար կնքաօրը կ'առնէ կանգունուկէս դուդ-  
նու (մետաքսէ կերպաս) կտոր, մկրտութեան ժամանակ  
երեխայի վրայ ծածկելու համար, իսկ աղջկայ համար  
կանգունու կէս պաւսա (տգածոյ չիթ) կ'առնէ: Այ-  
նուհետեւ կնքաօրին ու տաներէցը կը պատրաստուին,  
կնքաօրը կը խոստովանի, կը հաղորդուի և թէ' կըն-  
քաօրը և թէ' քա՛անան իրենց կիսերէն ութ օր մե-  
կուսի կը պառկին: Արու զաւակ կնքելը կը լինի լաւ  
մատաղով և հանդիսաւոր պատարագով: Քա՛անային  
մէկը կը պատարագէ, իսկ տաներէցը մկրտութիւնը կը կա-  
տարէ: Պատարագէն յետոյ կնքաօրը երախան գիրկը  
առած և դոյզ մը վառուած մամեր ձեռք բռնած, քա-  
հանայք փորուրարով ու բարվառով և տիրացուներ  
«Լոյս ի լուսոյ» շարական երգելով մկրտեալին տունը  
կուգան: Այդ միջոցին ծննդականը նստած է մինտէրի  
վրայ և ծածկուած է իւր հարսնութեան մեծ սավանով:  
Կնքաօրը երեխայն կը դնէ ծննդականի առջեւ դրուած

փոքրիկ բարձիկի մը վրայ, ըսելով. Աստուած մնացա-  
կան էնէ, հօրով մօրով մեծնայ: Սանամայրն ալ կը ծռի  
կնքահօ: ոտքը կը պագնէ. իսկ եթէ մկրտուածը աղ-  
ջիկ է՝ կ'ըսէ Աստուած խայրլու (շնորհաւոր ընէ. Քա-  
հանան և տիրացուները մի շարական կ'երգեն, հանդէսը  
կը վերջանայ քահանայի մը պահպանիչով որ շնորհա-  
ւորելով ծննդականը և տնեցիները, կ'երթայ սեղանի  
գլուխ կը նստի և կը հրաւիրէ հանդիսականները որ ա-  
մէնքը նստին: Կնուէք: հացը (ճաշ) աւարտելէն յետոյ  
ամէն ոք կրկին շնորհաւորելով երախայն և ծնողքը՝ կը  
մեկնին: Ծննդականը մինչեւ ցմահ անխօս է կնքա-  
հօր հետ և նա քառասուն որ տնէն դուրս չելնէր, արև  
չի տեսներ: Սանամէրը (ծննդական) գրեթէ ամէն տարի,  
ական (նշանաւոր) օրերու մէջ մէկ մէկ ծրար նուէր կը  
դրկէ կնքահօրը՝ որու մեջ կը լինի, մի շիշ օղի, գինի,  
մի քանի տեսակ մրգեղէն՝ թաշկինակ, և այլն: Ասոր  
փոխարէն, ինչպէս տեսանք, կնքահայրն ալ կը հոգայ  
մկրտութեան ծախսը (այսինքն 1-5 դահեկան քահանա-  
յին մկրտութեան վարձք, 1-5 դահեկան եկեղեցուն, և  
մի ծածկոց երախային համար:

---

Խնամախօսութիւն, Նշանադրութիւն, Պսակ եւ  
Բարոյական Խրատ

Զէյթունի մէջ խնամախօսութիւնը կը սկսի երբեմն  
օրօրոցէն: Շատ անգամ տղայի մայրը երբ կը տեսնէ մի  
նորածին գեղեցիկ աղջիկ, կը խնդրէ Աղջկայ մօրմէն  
զայն իւր տղին նշանելու: երբ նա ալ հաւանի, այն ա-  
տեն երկուստեք մէկմէկ քերդ (նշան) կանեն տղայի և  
աղջկայ օրօրոցի վրայ. սա կը լինի նշան անոնց խնա-

մախօսութեան, և այնուհետեւ այդ երկու մայրերը, հե-  
տեւաբար երկու տուները կը սկսին աւելի և աւելի  
իրարու մօտենալ և միշտ իրարու խնամի կ'անուանեն :  
Պէտք է ըսել որ այս տեսակ դէպքեր շատ չեն, սա-  
կայն երբ երեխաները անվտանգ կը մեծնան (այստեղ  
չափահասութեան տարիքը ընդունուած է աղջկան 12-14  
իսկ տղուն 15-17) ծնողաց կողմէն կ'ամուսնացուին :  
Այժմ դանք բուն հարսնախօսութեան գործին : Երբ  
տղան վերոյիշեալ տարիքին կը հասնի, անոր մայրը կը  
սկսի աղջիկ փնտռել տղայի համար. պէտք է ասել որ  
սիրահարութիւն չ'կայ այստեղ, տղան սլարտաւրուած է  
ծնողաց հնազանդիլ և այս ինչ կամ այն ինչ ցոյց տուած  
աղջկան հաւանութիւն տալ : Երբ մայրը տղայի հաւա-  
նութիւնը առաւ, այս անգամ կը սկսի հարսնախօսու-  
թեան կամ զրուցաւութեան (խօսքկապ) գործը կարգի  
դնել, երբ մայրը խօսք առաւ, այն ատեն տան երէցը կը  
դրկէ խնամախօսութեան : Տէրտէրը տղայի կողմէն կու-  
տայ աղջկայ ծնողաց կամ մի զոյգ ապրուօն (ապարան-  
ջան) և կամ մի զոյգ դազի ոսկի (մի ոսկի 20 դրչ. ար-  
ժէ). սա կը կատարուի աղջկայ հարսնախօսութեան նը-  
շանն, տէրտէրը պահպանիչով մը կը հեռանայ տունէն :  
Հարսնախօսութիւնը կը տեւէ մի տարիէն մինչև 3 տա-  
րի : Այդ ժամանակամիջոցէն մինչև հարսանեաց օրը աղ-  
ջիկը և տղան չեն տեսներ զիրար. եթէ պատահամբ  
ասոնք իրարու պատահին, երեսնին ծռած ամէն մէկը  
մէկ կողմը կը փախչին : Միայն երկու տուները իրարու  
խնամի կ'ըսեն և գնալով իրարու կը մօտենան ու կը  
բարեկամանան և տղայի ծնողքը միշտ գլխաւոր ախան  
օրերը, իրենց ազգականներով և բարեկամներով, հան-  
դէսով և ընծաներով, հարստեսի կ'երթան, որ տեղական  
լեզուով կ'անուանի Նշանածտես, երեստես) :  
սակայն աղջրկայ նշանը չեն օրհներ մինչև հարսանեաց

օրը, մտածելով թէ մի գուցէ մա՛ պատահի տղային, այն ատեն նշանածը կը բերեն փեսացուի փոքր եղբօր կամ եղբօր տղային, կամ վերջապէս աղջիկը ձեռքէ չփախցնելու համար կը պսակեն տան մի որ և է տէլիզանլըի (երիտասարդի) հետ: Նշանադրութեան ժամանակ հարսնացուն միշտ անխօս է տղայի ազգականներուն հետ և անոնցմէ կը փախչի, երեսը կը ծածկէ:

Հարսանիք.— Սկսելէն առաջ՝ տան երեցը աղջրկամ ծնողաց տունը կ'երթայ հարսնախօսութիւնը կտրելու տէրտէրը կը յայտնէ որ այս ինչ տղան հարսնիք ընելու կը պատրաստուի, եթէ մի բան ունին խօսելու խօսին: Երբ աղջկայ ծնուլքը հաճին, այն ատեն տղայի ծնողքը կը սկսին պատրաստուիլ, ասոր համար նախ տղայի հօր հրամանաւ, դրացի ջորեպանները 15-20 ջորիով լեռը կ'երթան հարսանեաց փայտ բերելու: Ասոնք փայտ կը բերեն ձրի, բայց գնալու և գալու ծա՛սը տղայի հօր վրայ: Այս ջորեպանները առատ մսով, օղի ու գինիով կ'երթան Ձէյթունի արեւմտեան հարաւային կողմը 2 ժամ հեռաւորութեամբ Պանօս ըսուած անտառը՝ մի գիշեր այնտեղ կը մնան քէֆ կ'ընեն, հետեւեալ առաւօտուն, բեռնաւորուած, քաղաքի դիմաց բարձր բլրակի մը վրայ հասած ժամանակ կը սկսին հրացանաձգութեամբ կիւլպենկ (հրախաղութիւն անել) ընել, յետոյ տավուլ ու զուռնան ասոնց ընդառաջ գնալով մեծ ուրախութեամբ ու թմբկահարութեամբ բեռները կը բերեն և տղայի տունը կը թափեն: Միայն 2 ջորեբեռ փայտ կը դրկեն աղջկայ տունը: Այս փայտը հարսանեաց սկսելու նշանն է: Հարսանեաց տէրը մեծ և առատ ճաշկերոյթով մը ջորեպանները ճամբայ կը դնէ: Այս օրը ջորեպաններու քէֆի օրն է: Ասոնց երթալէն յետոյ տնեցիք կը սկսին մեծով պղտիկով և բոլոր դրացիներով հարսանեաց պատ-



բաստութիւն տեսնել : Այդ օրը ամբողջ տունը շարժման ,  
իրարանցման մէջ է , անիկա կը նմանի մի գործարանի .  
մի աղջիկ ալիւր կը մաղէ , միւսը կը շաղէ , մէկը կը  
գնտէ , մէկը օճախ կը վառէ , միւսը հաց կ'եփէ , մի ու-  
րիշը մլար կը ծեծէ , միւսները տոլմա , քէօֆիթէ և այլն  
տեսակ տեսակ կերակուրներ կը պատրաստեն : Վերջա-  
պէս մի քանիներ կան որ տունը կ'աւլեն կը մաքրեն ,  
ոմանք ալ կան որ միայն սիկառէթի և նարկիլէի (կըլ-  
կրլակ) պատրաստութիւն կը տեսնեն : Հարսանեաց սկիզ-  
բէն արդէն հարսնացուն և փեսացուն ներքին-նօգեկան  
պատրաստութեան մէջ են , անոնց ամէն մէկը ծով և  
պահք կը պահէ , կը խոստովանի , կ'ապաշխարէ և եթէ  
հարուստ են՝ ողորմութիւն կը բաժնեն աղքատաց :  
Հարսնացուն և փեսացուն շատ դուրս ներս ալ չեն ելներ :  
Այս պատրաստութե ամբ վերջապէս կը հասնի ցանկալի  
ուրբաթ օրը . այդ օրը , լոյս շարաթ առաւօտեան , բուն  
հարսանեաց , այսինքն պսակի օրն է : Ուրբաթ կէս օրին  
հարսնեւորները քահանաներով , տիրացուներով և իշ-  
խաններով աղջկայ տունը կ'երթան ճարդրում (ղարդա-  
րանք) կատարելու : Հանդիսականները հարսնացուի դու-  
ռը հասած ժամանակ կը սկսին «կիւլպէնկ» (հրախաղու-  
թիւն) անել : Աղապ պաշին , սկտեղը գլխուն վրայ դրած  
փեսայի կողմէն հարսին կը տանի մի ձեռք ղութնի  
խումաշ , ասուի զգեստ և զոյգ մը դեղին կօշիկ : Կի-  
ները առնելով այդ սկտեղը՝ տան մէկ անկիւնը կը տա-  
նին ուր աղջկայ տաներէց կիներ կը հագցունէ հարսին  
այդ լաթերը , ձեռքերն ալ կը ներկեն հինայով : Այդ ա-  
տեն քահանայք և տիրացուք կ'երգեն հետեւեալ երգը .  
«Յնկի ծառի նման ես , բարի պտուղ բերկրեալ ես , դու-  
քաղցր պտուղ համ ես : Աստուածածին , մեղայ քեզ» :  
Հանդէսը կը վերջանայ քահանայի մէկ պահպանիչով ,  
այս տեղ ճաշ չկայ , բոլորը ուղղակի կը վերադառնան  
փեսայի տունը :

Թագաւորը և թագաւորեղբայրը մեծ մեծ դրդիչոննե-  
րու (կոնք) մէջ տաք ջուրով և սապոնով լաւ մը կը լո-  
ղացնեն «Այս օր անճառ» շարականը երգելով ծնծղա-  
ներով : Յետոյ թագաւորը և թագաւորեղբայրը տունը թող-  
նելով իրենք խմբովին կը դիմեն եկեղեցի՝ նշանօրնու-  
թեան հանդէսը կատարելու : Սեղանի վարագոյրները կը  
քաշեն և հանդիսականները ծնկաչոք կը նստին ամեն  
մէկը իւր տեղը : Նշանը մէջ տեղ կը դնեն, որ կը լինի  
մի ապարանջան փեսայէն տրուած հարսին և մի մատա-  
նի՝ հարսէն նուիրուած փեսային : Այս նշանները իրարու  
կապուած են մի գունաւոր մետաքսեայ թելով : Ա. քա-  
հանան աջ կողմը կը կայնեցնէ ալայի կնքաձայրը, իսկ  
ճախ կողքը աղջկանը, և խօսքը ուղղելով աղջկայ կրն-  
քաձօր կրսէ. «Աստուածային հրամանաւ, Առաքելոց կա-  
նոնաւ, Արքաղան յայրապետաց օրինադրութեամբ, դասք  
քաձանայից և երամք ժողովրդոց վկայութեամբ, այսինչ  
տղայի, այս անուն աղջիկ, այս ինչ տղայի այս անուն  
տղային տուի՞ր : Կնքաձայրը կը պատասխանէ, Այո, Աս-  
տուծոյ հրամանաւ, տուի : Յետոյ քաձանան միեւնոյն  
խօսքերով կը հարցնէ տղայի կնքաձօրը թէ առի՞ր, Այո,  
առի՛ : Եւ քաձանան երեք անգամ միեւնոյն խօսքերով  
և շեշտով կը հարցնէ կնքաձօրերէն և անոնց հաւանու-  
թիւնը առնելով կը սկսին նշանի օրնութիւնը «Նշանաւ  
ամենայաղթ խաչիւղ քո Քրիստոս» շարականը երգելով  
ծնծղայով : Հանդէսը կը վերջանայ պա՛պանիչով մը : Ե-  
կեղեցւոյ այս արարողութիւնը լմնաղէն յետոյ, Աղապ-  
պային եկեղեցւոյ դռան կայնած մէկ մէկ բուռ շամիչ և  
լէպլէպու կը բաժնէ հանդիսականներուն ըսելով, տա-  
նօսը ձեր զաւակին, ևայ :

Այդ օրը բոլոր ներկաները կ'երթան փեսային տունը  
թագաւորը հագուեցնելու : Այդ օրուան ընթրիքին պա՛պ  
կերակուրները կը պատրաստուին թագաւորեղբօր կողմէն :

Այդ ատեն Աղապ-պաշինն հագած տեղական կարմիր թանկագին ապան, վրայէն կապած թարապուլուս գօտին, ծոցերը կը լեցնէ շատ մը մանր գաթաներ(\*) և կը սկսի բոլոր թաղերը շաժնել կոչնականներուն իբրև հրաւիրագիր: Այդ օր ամենէն աւել բազմութիւն կը լեցուի փեսայի տունը, ուր փառաւոր կերպով ուտել խմելուց յետոյ, Աղապ-պաշին մի պնկով փող կը հաւաքէ քահանաներուն և տիրացուներուն համար, ուրկէ յետոյ թագւորը և թագւորեղբայրը մէջ տեղ կը բերեն և՛ կ'սկսին հաշուեցուիլ, քահանայք և տիրացուք ծնծղաներով կ'երգեն «Այսօր երկնային» շարականը: Թագւորի լաթերասոնք են, պարեգօտ մը (Շամղութնուսի), գօտին Շամթարապուլուսի, անոր վրայէն կը հագուեցունեն վարդապետական սև վերարկու մը(\*\*), գլուխը կը դնեն դավուխ (տէրտէրի մի տեսակ սև գլխարկ, որու բոլոր փաթաթուած է 2-3 կանգուն սև փօշուն (մետաքսեայ սևազոյն կերպաս), իսկ ոտնամաններն են Այնթապուկիւլ շէֆթալը կոչիկ: Թագւորեղբայրը, որ միշտ կը լինի 8-10 տարեկան, միւսոյն ձեւով կը հագցունեն, միայն անոր սև վերարկուի տեղ կարմիր վերարկու կը հագցունեն: Այս արարողութենէն յետոյ Ա. քահանան թագւորն, թագւորեղբայրը և Աղապ-պաշին ծունր կը շոգեցնէ և անոնց գլխուն պահանջ մը կ'ըսէ, յետո՛

---

(\*) Այս գաթա ըսուածը փոքրիկ կլոր անիւղ հաց է, որ կը պատրաստուի յատուկ այդ օրուան համար, մասնաւոր փուռերի մէջ: Զէյթունի ամեն թաղի մէջ կայ մէկ մէկ փուռ, որ միայն կը գործածուի հարսանեաց և կաղանդի օրեր:

(\*\*) Այդ վերարկուն կը ստանան վանքի վանահօրմէն Յ դահեկան վճարելով, յանուն Աթուի Սոոյ կաթողիկոսութեան:

Թուր մը առնելով պատկանիչ մըն ալ Թուրի վրայ կ'ըսէ .  
«Ա՞՞՞՞՞ զո՞րք ընդ մէջ քո հզօր, որպէս վայելչութեան և  
գեղոյ քո», սակաւ յաղթեցես զթշնամիս քո, առ և  
ամաւր պահիր : Թագաւորը ընդունելով սուրը իւր ընկեր-  
ներով կը համբուրէ բոլոր կոչնականաց ձեռքը . անոնք  
ալ կ'ըսեն . «Աստուած շնորհաւոր արասցէ» : Կոչական-  
ները կը ցրուին : Այնուհետեւ երիտասարդները առանձին  
հարսերն ու աղջիկներն ալ առանձին (\*), կ'սկսի տա-  
վուլով, զուռնայով պարել երգել մինչև լոյս : Բայց  
դեռ չը լուսցած՝ Ազապ-պաշին դարձեալ կը հաւաքէ  
կոչնականները և քահանաներով և փեսայով մէկ տեղ  
կ'երթան հարսնացուի տունը . քահանան առնելով հար-  
սի ձեռքը փեսային կուտայ և կը կատարէ նախապա-  
կը : Յետոյ հարսը ձեռք մը, իսկ Թագաւորը և Թագաւորի  
եղբայրն ալ ջորիներու վրայ հեծցուցած՝ կը տանին ժամ  
(եկեղեցի) :

Այնտեղ պատարագի ժամանակ, բատ կանոնի, աղջ-  
կայ տաներէցը կը կատարէ պսակը : Թագաւորի գլխուն  
մետաքսէ ժապուէնով մի փոքրիկ խաչ կը կախեն և վի-  
զը կը փաթաթեն խաչ աձև մի ուրաք . ձեռքը կուտան  
ծայրերը մետաքսեայ ծոպերով մը թաշկինակի մէջ դըր-  
ուած նարինչ կամ խնձոր, որը քթի առաջ կը բռնէ մին-  
չև հարսնիքի դադրիլը . հարսի գլուխն ալ կը կախեն  
մի փոքր խաչ : Պսակի ժամանակ Ազապ-պաշին միշտ  
Թուրը պատեանէն հանելով խաչաձև կը բռնէ Թագա-  
ւորի և Թագունու գլխու վրայ : Պսակը աւարտելէն յե-  
տոյ բոլոր ժողովուրդը կարգով կ'անցնի պսակեալներու  
առջևէն, մարդիկ Թագաւորին խաչը կը համբուրեն և կը

---

(\*) Երիտասարդներուն բոլորովին արգիլուած է կի-  
ներու մէջ գնալ . եթէ յանդգնի մէկը այդ բան անել  
կը պատժեն նախատինքով և տուգանքով :

չնոր՝ աւորեն, իսկ կիներ՝ հարսի խաչը: Պէտք է ըսել որ հարսը ծածկուած է միշտ սպիտակ մեծ քօղով մը: Եկեղեցիէն դուրս գալուն երգեցիկ դասը կը բաժնուի երեք խումբի. 1. տէրտէրներ և տիրացուներ, 2. դպրոցականներ, 3. երիտասարդներ: Առաջին անգամ քահանայք կ'երգեն «Արեգական արդարութեան» շարականը ծնծղաներով: Դպրոցականները կ'երգեն մի սևէ աղգային երգ, իսկ յետոյ երիտասարդները՝ հետեւեալ թուրքերէն խաղը և Եաշմուր եաղար եէր եաշ օլուր, ձևմի դուշլար պիր խօշ օլուր, կիիզէլ սէվէն սէրխօշ օլուր կէլին սալլանը, սալլանը (անձրև կը տեղայ, երկիր կը թացնայ բոլոր թռչնոց հաճոյք կը ըլլայ, աղուորը սիրողը գինով կ'ըլլայ, եկէք շարժելով շարժելով ևլն): Յետոյ բոլոր երիտասարդները միաձայն կը բացագանչեն, լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ... որ կը նշանակէ բոլոր հարս ու փեսան: Այսպէս խրախճաններով, մեծ աղաղակներու, պարելով, երգելով, թափօրը կ'առաջնորդուի դէպի փեսայի տունը: Ճանապարհին անցած ատեն ամեն մի ծանօթ տունէն օղի և մրգեղէն կը հանէ թափօրի դիմաց: Երբ թափօրը փեսայի տան բակի դուռը կը հասնի, դեռ հարսը ձիու վրայ, աղապ-պաշին կոնք մը կը ներկայացնէ հարսին, որ ձեռքերը կը շարժէ կոնքին մէջ, խմոր շաղելու ձեւով: Այդ ատեն փեսայի մայրը վերէն մի բուռ փէնէզ(\*) կը ցրցքէ հարսի և փեսայի վրայ: Իսկ աղքատները փէնէզի փոխարէն գարիկը սփնեն: Այդ ատեն իշխանը կը հարցնէ փեսայի հօրմէն, ա՛ա հարսդ, ի՞նչ նուէր կուտաս, ըսէ տեսնենք: Փեսայի հայրը ըստ իւր կարողութեան կը նուիրէ հարսին 300-1000 թուփ (օրթ) խաղողի: Այս նուիրուած օրոշ թիւը մինչև վերջը, նոյնիսկ

---

(\*) Մէկ փէնէզ, մէկ փարայի հաչուով, դեղին թիթեղեայ փուլեր են:

եղբայրներու բաժանման ժամանակ, կը մնայ հարսին բաժին: Յետոյ հարս ու փեսայն՝ կ'իջեցնեն իրենց ձիերէն և կը բարձրացնեն տուն: Բայց տան դուռը փակ է հարսին առաջ, նուս մը կուտան հարսին ձեռքը, որ որքան ոյժ ունի կը զարնէ դռան և նուսը կը լինի կտոր կտոր և հատերը կը ցրուին: Բոլորը միասին կ'աղաղակեն «կեցցէ հարսը», և իրարու մէջ կը խօսին թէ նուս հատեր շատ թափուեցան, իշալլահ մեր հարսը շատ զուակ կուեննայ, Աստուած տայ տղայ շատ լինի: Տան դուռը կը բացուի և դոյզը ներս կը մտնէ: Հարսը կը զատեն, կը տանին հարսնետունը, որը կանանց կողմը վարագոյրով մը բաժնուած է էրիկ մարդոց կողմէն: Հանդիսականները և կոնչնականները կը բազմին սեղանի շուրջը: Թագուորը թուրը մէկ ձեռքը, խնձորը թաշկինակով մը միւս ձեռքը, ոտի կը կենայ իշխանի կամ Աւագ քահանայի ետև, թագուոր եղբայրն ալ անոր քով: Աղապպաշին և երիտասարդները ծառայութիւն կ'ընեն: Հանդիսականները առատ մատաղն ուտելէն և գինին խմելէն և հարսին ու փեսային համար բիւր բարեմաղթութիւններ ընելէն յետոյ կը մեկնին: Վերջին անգամ կը մեկնի քահանան պահպանիչ մը ըսելով բոլոր անեցոց և գերդաստանի վրայ: Այն ատեն կը նստին թագուորը, թագուորեղբայրը և հարսանեաց սպասաւորներ: Կսկսին ուրախ դուարթ ճաշել: Վարագոյրի ետևն ալ կնիկներ կ'աշխատին հարսը կերակրել: Ճաշէն յետոյ երիտասարդները և աղջիկները առանձին խումբերու բաժնուած նուագարաններով ուրախութիւն կ'ընեն մինջև կիրակի երեկոյ, կիրակի հարսի տունէն պսոյզը (օժիտ) կը բերեն մի մեծ սնտուկով, որ կը լինի շապիկ, թաշկինակ, գուլպայ, քսակներ, ևլն, նաև մանր գործուած քներ, որոնք կը բաժնուին փեսայի ազգականներուն:

Երկուշաբթի հարսանիքը կը դադրի, սակայն հարսն

և փեսան պսակի ժամանակ հաղորդ առնելու պատճառաւ մինչև ութ օր չեն կարող առագաստ գնալ : Փեսան միշտ կնքահօր տունը կը գիշերէ և հարսանեաց սպասաւորները ամեն օր աւօր հրաւէր կուտան ճաշկերոյթի : Ով որ այդ ութը օրուան մէջ սխալմամբ փեսային թագւոր չ'ըսէ և գայն կոչէ իւր բուն անունովը , տուգանք կուտայ մի ոչխար կամ մի տաւար , որը կը մորթեն և ընկերներով քէյֆ կ'ընեն :

Վ. Ութ օրէն յետոյ պսակող քահանան կուգայ և ըստ կանոնի ամուսնացողներու վրայէն ուրար և խաչը վերցնելով , նախ քան առագաստ մտնելնին , նորապսակներուն — որոնք ծնկաչոք պատկառանքով կը նստին քահանային առջև — հետեւեալ խրատները կուտայ :

«Չաւակներս , հիմա դուք գրեթէ նոր աշխարհ կաք , ասկէ առաջ երախաներ կը սեպուէիք , իսկ այժմ խելահաս մարդերու կարգն անցաք , և ինչպէս Աստուած ըսեր է «աճեցէք և բազմացարուք և լցէք գերկիր» , այդպէս ալ դուք պիտի աճիք և բազմանաք , զաւակներ պիտի ունենաք , որոնք հոգւով և մարմնով առաքինութեամբ պիտի կրթէք , անոնց համար , իբրև ծնողներ , Աստուծոյ առջև պատասխանատու դուք էք : Չեր զաւակները հոգեւոր գինուորներ պիտի ըլլան եկեղեցիին համար , իսկ ադգին ու հայրենեացյց համար ալ մարմնաւոր գինուորներ պիտի հաղխանան : Պսակադրութեան ատեն տուած խրատներս համառօտելով այս տեղ կը կրկնեմ , որ Աստուծոյ առջև երկուքդ ալ հաւասար մարդիկ էք , այնպէս որ մէկդ միւսի վրայ պէտք է որ չիշխէք , մասնաւորապէս դուք , փեսայ , ձեր կողակիցն իբրև սարուկ կամ ծառայ չպիտի նկատէք : Այժմ խօսիմ ձեր մերձաւորութեան պայմաններու մասին , և , իբրև խոստովանահայր , հոգեւոր հայր մի քանի անհրաժեշտ խրատներ ևս տամ այդ մասին , որոնք մինչ ցարդ ձեզ համար դադար-

նիքներ են, և որոնք սակայն պէտք է գիտնաք, իբրև  
ճշմարիտ հետեւողներ մեր եկեղեցիի, Ս. օրէնքներուն:

Առաքեալի հրամանաւ՝ ամուսնութիւնը սուրբ է,  
սակայն ոչ սանձարձակ ու արտակարգ հեշտասէր ամուս-  
նութիւնը. մեր հայաստանեայց եկեղեցին, արգելքներ  
դնելով արտակարգ հեշտասիրութեան դէմ, իր հաւա-  
տացեալները դէպի առաքինութիւն կը մղէ, և մերձա-  
ւորութեան արգելքները հետեւեալներն են: Մէկ շա-  
բաթուան մէջ երեք օր- չորեքշաբթի, ուրբաթ և կի-  
րակամուտք օրերը, պէտք է որ ժուժկալութեամբ անց-  
նէք ու չմերձենաք, ինչպէս նաև ժուժկալութեամբ  
պէտք է անցնէք շաբաթապահօքներուն, մեծպաքին, յի-  
նանց և այլ տէրունական օրերուն. Արգելք մը եւս որը  
անհրաժեշտ է որ գիտնաք: Երբ յղութեան յայտարար  
նշաններ տեսնուին, պէտք է նոյնպէս անպայման կեր-  
պով դադրեցնէք ձեր յարաբերութիւնները. յղութեաց  
երեւան դալու օրէն սկսեալ մինչև ծննդաբերութեան  
օրէն քառասուն և ութը օր յետոյ պէտք է ժուժկալու-  
թեամբ անցնէք: Ահա՛ ասոնք են մեր եկեղեցիի օրէնք-  
ները, որոնք եթէ չյարգէք՝ թէ եկեղեցիի և թէ Աստու-  
ծոյ առջև մեղանշած պիտի ըլլաք. և եթէ գաւազներ  
ունենաք, փոխանակ բաղդաւոր ըլլալու ակտաւոր կըլ-  
լան— ապուշ, դժբաղդ, անյաջող, փորձանքոտ և ջը-  
լախտաւոր կ'ըլլան. քաջասիրտ շնն ըլլար, այլ վախկոտ  
և թուլամորթ, վերջապէս ճաղատ, կաղ, կոյր, գօսաց-  
եալ ու արտակարգ խենթ կ'ըլլան: Ահա հազորդելով  
այս խրատները, կատարեցի իմ պարտականութիւնս,  
որով անպարտ եմ առաջի Աստուծոյ, դուք այլ եւս  
ինչ որ արժանի է խորհեցէք»:

Այսպէս քահանան վերջացնելով իր խրատները, կը  
չնորձաւորէ նորապատկները և պահպարտիչ մըն ալ ըսե-  
լով կը մեկնի:



Պսակադիր քահանայի խրատ տալու սովորութիւնը մինչեւ այժմ ալ գոյութիւն ունի, սակայն հետաքրքրութեան համար աւելորդ չենք համարիր այդ սովորութեան հետեւանք եղող իրողութեան մը պատմութիւնն ընել այստեղ :

Բուլոքականութիւնը՝ Այնթապ և Մարաշ նոր մուտք գտած ատենները, Չէյթուենի մէջ քահանայ մը մի նորապսակ երիտասարդի իր սովորական խրատները տալով երբ կ'ուզէ մեկնիլ, երիտասարդ փեսան տէր հօր քղանցքէն պինդ մը բռնելով կը կեցնէ և կ'ըսէ : Տէր հայր, ո՞ւր կ'երթաս, խնդրեմ նստի՛ր, եթէ հրաման կուտաս մի քանի խօսք ալ ես ունիմ ըսելիք» : Խօսէ՛, դաւակա, կը պատասխանէ քահանան : «Ձեր խրատները ուշի ուշով մտիկ ընելով մի բան յղացաւ միտքս, կ'ուզեմ նախ քան մեկնելնիդ, հաշիւներս վերջացնել ձեզ հետ» : Քահանան, այլայլած կը պատասխանէ, ի՛նչ հաշիւ, դաւակա : «Ահա թէ ի՛նչ հաշիւ, կը յաւելու, փեսան, հարսանիքը 5,000 դրուշի նստեցաւ մեր տան վրայ, սա փողերը տուր : հարսն ալ առ և ուր կ'ուզես այն տեղ տար : Մեր եկեղեցին այդքան խստապահանջ է եղեր ամուսնացողներու նկատմամբ, ես կը կարծէի որ երբ ամուսնանան, կ'աշխատին կարելի եղածին չափ շատ դաւակնել ունենալ, իսկ ձեր ըսածները մեզ որդեծնութենէ զրկելու խրատներ են, նոյն եկեղեցին իր ժողովուրդին թշնամին է եղեր, բան մը, որուն խելքս չհասաւ : Երբ եկեղեցին մէջ ժողովուրդ չլինի, այդ սրբավայրին խերը տես : Ի՛նչ է այս, այսօր չորեքշաբթի, վաղը չէ միւս օր ուրբաթ, իսկ աւելի միւս օր կիրակնամուտ, շաբաթապահք, մեծպահք, Յինուէնք և տէրու նական օրեր և այլն : Առաջիններուն համակերպինք, իսկ սա մեծ պահքին և յինուէնքին ի՛նչ կ'ըսէք, տէր

հայր, կ'ուղէ՞ք որ ատոնց հաշիւը տամ ձեզ, ահա: Յիսուսն օր մեծ պահօք, յիսուսն օր ալ յինուսք, կ'ընէ հարիւր օր, մօտաւորապէս 3 ու կէս ամիս. ասիկա կը տարուի՞, թէ փեսային և թէ հարսին համար՝ միանգաման անտանելի է այդ արգելքը: Յղութեան մասին բան մը չեմ ըսեր, տասը ամիս տասն օր ամենասրբութեամբ կը պահեմ այդ պատուէրը, անասուններն անգամ յղութեան ժամանակ չեն մերձենար միմեանց, օրինակ ձիւերը յղի է, ոչ արուն կը մօտենայ և ոչ ալ էգը թոյլ կուտայ որ իր մօտ արու ձի կրթայ, եթէ մենք յղութեան մասին օրինազանց ըլլանք՝ անասուններէն ալ վարնոց կը սեպուինք: Շատ լաւ, զաւակս կ'ըսէ քահանան, բայց մեր եկեղեցիին օրէնքներն այսպէս են, և և մեր Ուլնիոյ ժողովուրդը բոլորն ալ եկեղեցիին օրէնքները յարգելով ամուսնացած են, չէ որ քու հայրդ ալ այս սովորութիւնները յարգելով ամուսնացած է և դուք եօթ եղբայրներ էք, եօթդ ալ կտրիճ երիտասարդներ, բացի այդ, Յակոբ նահապետի նման, 12 եղբայրներ ունեցողներ ալ կան, այնպէս որ եթէ մեր եկեղեցին սանձարձակ և հեշտասէր ամուսնութեան դէմ արգելքներ դրած է, այդպէսով մեր Ուլնիոյ ժողովուրդը աւելի օգտուեր է քան թէ մնասուեր, ասկէ զատ մեր երկրի կիները ընդհանրապէս քաջառողջ և արու զաւակներ կը ծնանին: Իգական սեռը նուազ է Ձէյթունի մէջ, շատեր հարսերը դուրսէն կը բերեն, և այդ քաջ սերունդի շրնորիւ է, որ այս աղքատիկ լեռնոտ երկրին մէջ, մենք ամի մը Ձէյթունցիներս, կարողացած ենք մեր ազատութիւնը պահել: Փեսան դեռ եւս չհամոզուելով տէր հօր ըսածներուն՝ իր ըսածին վրայ պնդելով կը շարունակէ. «Լսեցի որ Այնթապ, Մարաշ, տեսակ մը միլլէթ (աղգ) եկած է, շատ հայեր անոնց կրօնքին կը յարին եղեր, այդ միլլէթը փրօթէսթանթ կ'ըսուի, որոնք ոչ պահօք,

ոչ տէրունական օր, ոչ ալ յղութեան առթիւ պահեցողութիւն ունին, ոչ եկեղեցիի մէջ արարողութիւն, ոչ պատարագ, ոչ կանուխ ելնել եկեղեցի երթալ և ոչ ալ երեկոյեան ժամերգութիւն ունին եղեր, միայն կիրակիէ կիրակի, նախաճաշերնին ընելով, ժողովարան ըստած տեղ մը կը հաւաքուին ու մէկը ելնելով աւետարան կը քարոզէ եղեր, կարգացածնին ալ աւետարան է կ'ըսուի, ուրիշ շարական, մեղեդի կամ ուրիշ ներդաշնակ բաներ չունին. ժողովուրդին այսպիսի ծանր պատուէրներ ալ չեն ցուցներ եղեր, ես եղբայրներէս կը զատուիմ, կ'երթամ Մարաշ և փրօթէսթանթ կ'ըլլամ, տահա (տակաւին) ըսելիք մը ունի՞ք ինձ»:

Քահանան երբ փրօթէսթանթ անունը կը լսէ, կը թուլանայ և գրեթէ բոլորովին գունաթափ ըլլալով կ'ըսէ. — Զաւակս, կ'ափսոսամ քու վրագ, կրօնդ եթէ փոխես՝ ազգութիւնդ ալ մէկ տեղ կը կորսուի, գոնէ կրօնքդ մի փոխեր, եկեղեցիի պատուէրները քու կամացըդ կը ձգեմ, «արիւն քո ի գլուխ քո, անպարտ եմ յաւուրն դատաստանի», միայն սա խօսքն ալ ըսեմ ու երթամ, երեսուն տաքի է որ քահանայութիւն կ'ընեմ, այսպիսի դժուարութեան չէի բաղխած: Այդ միջոցին երիտասարդը ոտքի ելնելով տէր հօր ձեռքէն բռնելով կը նստեցնէ ու արտասուելով կ'ըսէ. — Տէր հայր, ներողութիւն, երբ ազգութիւնդ ալ կրօնքիդ հետ կը կորսուի ըսիք, նպատակս փոխեցի, ինչ ըսել է, հաճոյքիս համար, ազգութիւնս և կրօնքս մէկ տեղ փոխեմ, երբէ՛ք, թոյլ և անժուժկալ մարդ մը եղած պիտի ըլլամ. տէր հայր, ասկէ յետեյ ապահով եղիր, բոլոր փրօթէսթանութիւնը մեր եկեղեցիի «Նորաստեղծեալ» երգին հետ չեմ փոխեր, ես (հասցա) «Այսօր անձառ»ը... խնդրեմ, տէր հայր, ձեզ շատ ձանձրոյթ պատճառեցի, ինձ ուղարկեցի մը ըսէք ու գնացէք: Տէր հայրը անհունս ու-

բախանալով հայաստանեայց եկեղեցիի հաւատացեալի մը  
չկորսուելուն, կը սկսի բողոքականութեան մասին մի  
քանի տեղեկութիւններ ալ իր կողմէն աւելցնել: «Չա-  
ւակս, դեռ դուք ինչ գիտէք, ատոնց բողոքական ալ  
կ'ըսուի, Լուտերական ալ կ'ըսուի, Հռովմայէն Լուտեր  
անուն կաթոլիկ վարդապետ մը փրոթէսթանթ ըսուած  
կրօնքը հնարեց, Մատթէոս պատրիարքը «բարի մարդ,  
բարի Քրիստոնեայ» անուն գիրք մը հեղինակեց, անոր  
մէջ բողոքականներու բոլոր արարքները գրուած են,  
թէ անոնք ալ մեր հաւատացած Քրիստոսին կը հաւա-  
տան, բայց մեր եկեղեցին ատոնց եկեղեցիէն շատ տար-  
բեր է: Աւետարանը գուշակութիւն ըլլած է արդէն,  
սուտ Քրիստոս պիտի գայ, հրաշքներ ալ պիտի գործէ,  
բայց չհաւատաք, աւելի սոսկալին ըսեմ, որ պիտի գայ  
որ մեր հաւատացած իշաւ Քրիստոսին ալ չհաւատացող-  
ներ պիտի ըլլան և մինչև անգամ Աստուծոյ գոյու-  
թիւնը ուրացողներ պիտի ըլլան, ոչ թէ աամիկները, այլ  
բարձր ուսում ունեցողներն անգամ. այդ մասին Ս.  
Գրքին մէջ մարգարէութիւններ կան, պէտք է որ մենք  
հաստատ կամքի տէր մարդիկ ըլլանք, զանազան կրօնք-  
ներով չհետեւինք, դեռ ևս «սկիզբն է երկանց», մըթէ  
ամէնուն ալ հետեւելո՞ւ է, շնիկներուն՝ ամպի շուքի  
ետեւէն հաչելուն պէս: Մենք ժամանակաւ հեթանոսի  
կրօնքով ազգ մըն էինք, Ս. Գրիգոր հայրապետը մեզ  
Քրիստոսի կրօնքը սորվեցուց, որով Լուսաւորիչ կոչ-  
ուեցաւ. պէտք է այս շաւիղէն քալենք ու շշեղինք  
Լուսաւորիչը բոլոր ազգեր ալ կը ճանչնան և յարգան-  
քով կը վերաբերուին, մենք պէտք է մեր եկեղեցիի օ-  
րէնքներուն հաւատարիմ ու նախանձախնդիր ըլլանք  
որպէս զի աշխարհի և թէ հանդերձեալի մէջ վայելինք  
նախախնամութեան բարիքներն»: Քահանան վերջացնե-  
լով իր յորդորները, ողորմեսցին կրտայ և տեսնելով

փնտայի դէպի հայաստանեայց եկեղեցիին հաւատարիմ մնալու փափաքը, շնորհակալութեամբ և գոհ սրտով կը մեկնի :

Հարսնիքի մը քնդնանուր ծախքին հաշիւք

|     |       |                                   |
|-----|-------|-----------------------------------|
| 250 | Ղրուշ | Մէկ դանթար (*) գինի               |
| 160 | »     | 20 լիտր օղի 50 քաշ (օխա)          |
| 160 | »     | 8 տաւար ութը օրուան մէջ           |
| 100 | »     | Ծխախոտ, սիկարա (գլանիկ)           |
| 200 | »     | Թէմպէքի, Նարկիլէի (կլկլակ)        |
| 200 | »     | Գեղ (վառօղ)                       |
| 200 | »     | Հաց                               |
| 100 | »     | Իւղ                               |
| 100 | »     | Պրլղուր (ձաւար)                   |
| 100 | »     | Ըռուղ (քրինձ)                     |
| 200 | »     | Մեղր, մրգեղէն կամ անուշեղէն       |
| 200 | »     | Նուագածուներու վարձք              |
| 100 | »     | Քահանայից (**) տիրացուած և վանքին |
| 50  | »     | Սոխ, պղպեղ եւ այլն, և այլն :      |

2120 Ղրուշ Ընդհանուր Գումար.

Միայն պէտք է այստեղ դիտել տալ որ հարսանեաց համար այս մեծաքանակ ծախսը հին է, այժմ գոյութիւն չունին այդ բաները, գրեթէ բոլորովին վերջացեր են, այնպէս որ հիմա համեմատաբար կէս ծախսով և միայն մէկ գիշերուան մէջ հարսնիք և պսակա-

(\*) Մէկ դանթարը 100 լիտր է, Չուկէս օխա (քաշ իսկ մէկ օխան ալ 400 տրամ է :

(\*\*) Զէյթունի եկեղեցականք գրեթէ ձրիաբար կ'աշխատին ժողովուրդը հովուելու համար, և անոնք միշտ կ'ապրին իրենց սեփական կալուածներովը :

դրութիւն կ'ընեն և կը վերջացնեն. հին բարի ժամա-  
մակները այս մեծ հարսնիքներու ատեն քանի մը աղ-  
քատ երիտասարդներ ալ կը պատկուէին ի հաշիւ. ունե-  
ւորաց, առանց իրենք ստակ մը ստխտելու:

Հարսին մեղրալուսինն անցնելէն յետոյ 40րդ օրը  
զայն կը տանին իր հօրը տունը. տեղացիք այս դարձն  
կ'անուանեն ի ՏԱԼՆ, այսինքն իւր հօր տուն գալը: 15  
օր, հարսը իւր հօրը տունը մնալէն յետոյ՝ տան երէց  
կիներ կ'երթայ հարսը կը բերէ փեսային տունը: Հարսը  
չի խօսիր սկեսուր պապի (կեսրայր) և կեսուրին հետ,  
մինչեւ զաւակ ունենալը. կեսրայրին հետ կը խօսի  
միայն խորին ծերութեան ժամանակ. այսուամենայնիւ  
հարսը մինչեւ խորին ծերութեան կեսուրին և կեսրայրին  
խոնարհ և հլու ծառան է: Անոնց ձեռքին ջուր կը լե-  
ցունէ և անկողինը կը մաքրէ: Երբ տունը հիւրեր գան,  
հարսը անոնց ոտքերը կը լուայ: Փեսան ալ փոխադար-  
ձաբար զըբըչպոպին (աներ) և զըբըչմէրին (զոքանչ)  
հետ չի խօսիր, և անոնց տունն ալ չերթար մինչեւ որ  
ստիպողական հարկ մը պատահի (Հարսնիք ևն.) այն  
ատեն հարսուլը մէկտեղ կ'երթայ աներոջ տունը այնտեղ  
առիթներ կ'ուսնենայ հարսի նման խոնարհաբար զոքան-  
չին և աներոջը հետ խօսելու: Իսկ եթէ հարկեր պա-  
տահին, նա կը սպասէ մինչեւ զաւակ ունենալը. իսկ  
եթէ զաւակ ալ չունենայ՝ երեք տարիէն յետոյ կ'երթայ  
աներոջը տունը:

---

### Մահուան եւ բաղման սովորութիւններ

Մահամերձ հիւանդին տէրտէրը կուգայ խոստովանե-  
ցնելու և հաղորդելու: Մեծ մեղք և դժբախտութիւն է

ով որ առանց հաղորդի կը մեռնի : Այս արարողութեան տեղացիք կ'անուանեն վերջին թոշակ կամ տեղական բարբառով՝ իտէմիտէ պէշօր, այսինքն, վերջի պաշար : Մա՛ռւան ժամանակ կ'աշխատին իսկոյն բերանն ու աչքերը փակել, ձեռքերը խաչաձև կուրծքի վրայ դնել և մարմինն ուղղել դէպի արեւելք : Այդ ատեն քահանայն կուգայ մի հոգոց կ'ըսէ, և յետոյ դիակը կը տանին տան մէկ կողմը լայն տախտակի մը վրայ տաք ջուրով և սաղսնով լաւ մը կը լուան : Այն կրակը, որով ջուր տաքցուցին, իսկոյն կը մարեն և խանձողները, (այրուած փայտերը) դուրս հեռու տեղ կը ձրգեն և ոչ ոք չի վերցնել այդ փայտը իրենց տունը տանելու որ մօտ ժամանակին իրենց տունն ալ մահ չպատահի : Ի՛նչպէս 7 կանգուն անլուայ կտաւով կը պատանքէն : Լուացող և պատանք կարողը տղայմարդոց՝ տղայ, և կ'ներուն՝ կին կը լինի : Պատանքի կարած ժամանակ դիակի բերանը կը դնեն մի կտոր նշխարնք և ձեռքի ափերու մէջ Երուսաղէմի խունկ ու մոմ : Պատանքի վրայէն ալ կուրծքի վրայ կը կարեն Երուսաղէմի լուսոյ պատանք (լոյս պատանք), քահանայք և տիրացուք, կուգան տանը կարգը կը կատարեն և դիակը «լէշփէտի» (\*) (դագաղի) վրայ կը դնեն և «Զարնուրեալ դողացաւ» սրտաճմլիկ շարականը երգելով կը տանին եկեղեցին : Եթէ հարուստ է՝ ննջեցեալը երկրորդ օրը պատարագէն յետոյ կը տանին թաղելու, եթէ ոչ՝ նոյն օրը եկեղեցւոյ սովորական կարգը կը կատարեն և եկեղե-

---

(\*) Զէյթունի դագաղը կը լինի շինուած երկու ձողէ, մէջը սանդուղի ձեւով կարգ կարգ երկաթէ շրջթայ : Ի՛նչպէս մէջը կը դնեն այդ սանդուղաձև դագաղի վրայ, և չորս մարդ ուսերով կը տանին մինչեւ եկեղեցին և անկէ դերեզման :

ցական հանդէսով մը կը տանին գերեզմանատուն, ճա-  
նապարհին երգելով «տեսեալ զքեզ մահու լուծաւ», շա-  
րականը : Այժմ խաչելէմով թաղումը նոր սովորութիւն  
է. 15 տարի առաջ աշխարհական ննջեցեալը անշուք  
կերպով կը թաղէին, միայն քահանաներուն վերասպա-  
ռած էր խաչելէմով թաղումը : Ննջեցեալի թաղման կու-  
ղեկցին մինչեւ գերեզմանատուն, նոյն թաղի հարուստ  
թէ ազքատ մարդիք անխափր : Արարողութենէն յետոյ  
դիակը կ'իջեցնեն գերեզման, Նորամուտ սովորութիւն  
կայ, որ երբեմն հարուստները սնտուկով կը թաղեն ի-  
րենց ննջեցեալը : Երեկոյեան բոլոր թաղեցիք, ծանօթ  
անծանօթ, իշխան իշխանապետօք և քահանաներով  
ննջեցեալի տունը կ'երթան և «սուրբ հոգւով մխիթա-  
ուիք» ըսելով կը սփոփեն ննջեցեալի տէրը : Այդ երե-  
կոյեան կը տրուի «քահանայից և տիրացւոց մեռելա-  
ճաշ : Միւս օրը քահանայք գերեզմանատուն կ'երթան  
Այգուց կատարելու, այնտեղ ներկայ կը լինին արդէն  
սգաւոր կանայք և ծանօթ ու անծանօթ թաղեցիներ :  
Այդ օրը եթէ օդը պարզ է՝ մեծ ճաշկերոյթ կը լինի, կե-  
րակուրները կը բերեն դրացիները և ազգականները : Իսկ  
եթէ օդը լաւ չէ՝ այս ճաշկերոյթը կը կատարուի ննջեց-  
եալի տունը և այգուց արարողութիւնն ալ եկեղեցիին  
մէջ կ'ընեն :

Կալկաններ. — Զէյթունի մէջ լալու սովորութիւնը  
շատ խիստ է. ննջեցեալի մայրը, քոյրերը և ազգակա-  
նուհիները, անոր զգեստի ամէն մի մասը ձեռքը առած  
զովասանքներով և բարձր երգեցողական եղանակներով  
լալով կ'երթան մինչեւ գերեզմանատուն : Այս ընդհա-  
նուր սովորութենէն բացառութիւն կը կազմէ պատե-  
րազմի մէջ մեռնողը այն ատեն բարձր ձայնով լալ՝ ա-  
մօթ և նտխատինք կը համարին նահատակի յիշատա-  
կին, ատոր համար զիրար կը զգուշացնեն որ բարձր



չըլլան, ձայն չհանեն որ հաճատակը (հաճատակ) չը վի-  
րաւորուի, առանց լացի հա երջանիկ է իւր փառքի  
մէջ: Սովորութիւն կայ որ երբ ջրկիր կանայք կէս ճա-  
նապարհին կամ հոյնիակ մինչեւ իրենց դրան առջեւը  
հասած ժամանակ լսեն որ մահ պատահեր է, սափորին  
ջուրը կը թափեն և կը վերադառնան հորը բերելու, սա  
հշան է հոյն թաղի ննջեցեալի տիւոջ սգակիր լինելուն և  
թաղման այս ընդհանուր սովորութենէն շատ կը տար-  
բերի քահանայի թաղումը: Քահանայի վախճանելու  
հշանը այս է որ իսկոյն հոյն եկեղեցւոյ կոչնակը (\*)  
(Ձէյթուն խոշոր դանգակէ զուրկ է) կը սկսի տխուր և  
երկար դողանջիւնով գուժել ժողովրդեան քահանայի  
մահը, որու նշխարքը հոյն օրը եկեղեցի կը տանին և  
եկեղեցւոյ գաւթին մէջ լուանալով դադադով կը դնեն  
եկեղեցւոյ մէջ, շրջապատուած մոմակալներով, որոնց  
վրայ մինչեւ լոյս մօմեր կը վառեն: Երկրորդ օրը կը  
կատարուի պատարագով վերջին օժումը վանահօր ձե-  
ռամբ: Քահանայի թաղման օրը կը լինի արտաքոյ կար-  
գի տխուր հանդէս, գրեթէ Ձէյթունի չորս թաղեցիքն  
ալ, թէ, արհեստաւոր թէ բանուոր թէ վաճառական և  
հոյն իսկ դարբինները ու երկաթագործները (\*\*\*) կիրակի

---

(\*) Կը լինի պաշպատեայ և ընկուղի տախտակէ, որոնց վրայ մուրճով կը դարնեն ժողովուրդը եկեղեցի հրաւիրելու համար:

(\*\*\*) Ուրիշ ամէն արհեստաւորի համար աշխատանքը դադարեցնելը համեմատաբար աւելի դիւրին է մի-  
եւնոյնը չէ սակայն դարբիններու և երկաթագործներու  
համար, որոնց աշխատանքի ձեւը տարբեր է միւսներէն և  
եօթնական հոգի է բաղկացած խմբեր են ատոնք, որոնք  
կէս գիշերէն առաջ կը սկսին գործի մինչեւ երեկոյ:

կը պահեն և կը մասնակցին թաղման հանդէսին : Քահանայի կողոպուտը , Փիլօն և զգեստեղէնք , կը խրկուին վանք : Քահանայի թաղման հոգեձաշը կը պատրաստէ և կը հոգայ , նոյն քահանայի օրհնութեան կնքահայրը իւր մասնաւոր ծախքովը :

Պ .

Չեռնադրութիւն եւ կարգապահութիւն Ձէյթունի  
Քահանաներուն :

Չեռնադրութիւն . — Ձէյթունի քահանաներուն ձեռնադրութեան խնդիրը , Ձէյթունցիի աւանդապահութեան և ներքին սովորութիւններու տեսակէտով , ունի նաեւ իր հետաքրքիր կողմերը , որոնց ամփոփ նկարագրութիւնով մեր ընթերցողը որոշ դաղափար կազմած պիտի ըլլայ Ձէյթունի քահանաներու թէ՛ մտաւարական և թէ՛ քարոյական յատկութիւններու վրայ :

Ձէյթունի ո և է թաղի եկեղեցիին մէջ , երբ քահանայի մը պահանջը զգացուի , այդ թաղի իշխանը , թաղականները , երէցփոխանը ու քահանաները հաւաքուելով , նախնական ժողով մը կը կազմեն և իրենց թաղեցիներէն քահանայութեան արժանի մէկը կ'ընտրեն ,

Ատոնց համար աշխատանքը դադարեցնելը գրեթէ անկարելի է , որովհետեւ մեծ կորուստներ կ'ունենան , սակայն խիստ կրօնասէր ըլլալուն՝ անոնք ալ կը դադրին գործելէ կոչնակի սուր ձայնը լսածնուն պէս , ի յարգանս քահանային :

(առ հասարակ քահանայա՛յան օճախէ կ'ընտրեն), յետոյ  
այդ որոշումը վաւերացնելու համար, կրկին ժողով մը  
կը կազմեն, որու մէջ ձայն ունին բոլոր թաղեցիները :  
Իշխանն ու երէցփոխանը կը յայտնեն իրենց ընտրած ու  
քահանայութեան արժանի դատած անձնաւորութեան  
անունը, և կ'առաջարկեն ժողովուրդին որ եթէ թեր  
կամ դէմ կարծիք մը ունին այդ անձի նկատմամբ՝ յայտ-  
նեն : Քահանայական պաշտօնն այնքան սուրբ և նուիր-  
ական է Չէյթուեցիներու համար որ, որ և է մէկը քա-  
հանայ ձեռնադրելու համար, այդ անձին ամբողջ ան-  
ցեալ կեանքը նկատի կ'առնեն, և այդ պատճառով ալ  
թաղին ամբողջ բնակչութիւնը ժողովի կը հրաւիրեն, որ-  
պէս զի դան և տեղեկութիւններ տան ընտրելի ար-  
ժանաւորութեան մասին, և այս կերպով ի հարկէ ա-  
ւելի լայն քննութիւն մը կատարած կ'ըլլան ընծայացուի  
մասնաւորապէս բարոյականի նկատմամբ, որ մեծ կա-  
րեւորութիւն ունի Չէյթուեցիներու աչքին : Պէտք է  
գիտնալ նաև որ քահանայական ընտրութիւններու մէջ,  
մեծամասնութեան և փոքրամասնութեան խնդիրը զանց  
կ'առնեն Չէյթուեցիները, մինչև իսկ ժողովրդի մէջէն  
միայն մէկ հոգի եթէ դժգոհութիւն ցոյց տայ որոշուած  
անձի քահանայ ձեռնադրուելուն դէմ, ամբողջը կը հե-  
տաքրքրուին և կը պնդեն որ անպատճառ յայտնէ իր  
դժգոհութեան պատճառը, ամէն կողմէ կը պահանջեն  
թէ ինչ յանցանքի մէջ որ տեսած է քահանայացուն՝  
քսցէ ի բաց յայտնէ ժողովին : Կը հարցնեն թէ արդեօք  
մարդասպանութիւն ըրած է, կամ գողութիւն կամ  
հայնոյութիւն, թէ ոչ իր կինը ծեծած կամ նախատած  
է : Եթէ դժգոհութիւն յայտնող անհատը այս յանցանք-  
ներէն մէկը ապացուցանէ և կամ նոյն իսկ ապացուցա-  
նէ որ, այգիէ մը մինչև իսկ ողկոյզ մը խաղող փրցու-  
ցած է առանց տիրոջ գիտութեան, իսկոյն ընտրութիւնը

կը բեկանեն, իս' լն է՛նակառա'կը, երբ բողոքողը յայտնէ որ այս յանցանքներէն և ո՛չ մէկը գործած է, բայց այս ինչ պատերազմի ատեն, իր ներկայութեան մարդ մը սպաննած է, այն ատեն ամէնն ալ կը ծիծաղին, պատասխանելով միանգամայն թէ՛ շատ ուրախալի է որ հայրենիքի վրայ յարձակող թշնամի մը սպաննած է: Ատիկա յանցանք չէ և ոչ ալ ոճրագործութիւն (\*): Զէյթունցին քահանայ կը ձեռնադրէ այնպիսի մէկը, որը ոչ թէ միայն քիչ թէ շատ ուսած և Հին ու Նոր կտակարանի ծանօթ ըլլայ, ոչ թէ միայն իր գաղափարները գրչով կամ խօսքով յայտնելու կարող ըլլայ, այլ ֆիզիքապէս ալ առողջ և քաջասիրտ պէտք է ըլլայ. վերոյիշեալ ուսմանքներէն զուրկ ըլլայ ալ նէ հոգ չեն ըներ, հերիք է որ ազգասէր, հայրենանուէր և մանաւանդ պատերազմասէր ըլլայ:

Ժողովը որոշ եզրակացութեան հասնելէ յետոյ կը կանչեն ընծայացուն և կը յայտնեն որ որոշած են զինք քահանայ ձեռնադրել, բայց արդեօդ ինք համաձայն է ժողովուրդի կամքին, որը զինք քահանայութեան արժանի դատած է, որովհետև կ'ըսեն «քահանայութիւնը ըստ հոգւոյ կեանք է և ըստ մարմնոյ մահ» ինչպէս եթէ

---

(\*) Տէր Յակոբ Տէլի Քէչիշեանի ընտրութեան ատեն առարկութիւն եղաւ թէ ընծայացուն մարդ սպաննած է, բայց Տէր Յակոբ, որ Մղսի Թորոս կը կոչուէր, առանց քաշուելու յայտնեց թէ, այո, թշնամին իմ վրայ հրացան պարպեց, ես ալ սպաննեցի, թշնամիի գնտակը դեռ սրունքիս մէջն է. ժողովականները տեսան և ուրախացան, աւելցնելով միանգամայն թէ թշնամիի գընտակը քեզ չհանդիպեր ալ. եթէ սպաննած ըլլայիր՝ դարձեալ մեղք գործած չէիր ըլլար և արժանի կ'ըլլայիր քահանայութեան:

ո և է պատերազմ տեղի ունենայ, դուք որ հիմայ քահանայ պիտի ըլլաք, դուք իբրև առաջամարտիկ զինուոր, մաներնիդ աչքերնիդ առնելով պիտի կռուիք թըշնամիի դէմ և խաչ ու սուր բարձրացուցած պիտի խըրախուսէք ժողովուրդը, որպէս զի յանուն հայրենիքի պատուով մեռնին, դասալիք չդառնան և այլն:

Զէյթունցիի համար պատերազմի և զէնք կրելու հարցերը սովորական բաներ ըլլալով, առ հասարակ այդ խնդիրներու համար ընծայացուները առարկութիւն չեն ըներ և չեն ըրած և ընդհանրապէս ժողովուրդի կամքին կը դիմանին, միայն թէ նախապէս թոյլտուութիւնը կը խնդրեն խորհրդակցիլ իրենց կնոջ հետ, որը կրնայ ըլլալ որ համաձայն չէ իր ամուսինին հետ, և եթէ ունէ ընծայուցուի կինը համաձայն չէ իր ամուսինին քահանայ ձեռնադրուելուն՝ ժողովուրդը այդ պարագային բընաւ չպնդեր և ոչ ալ համոզելու ձեռնարկներ կ'ընէ, ընդհակառակը, նախ քան ձեռնադրութիւնը, կրկին հարց ու փորձերով քահանայական պաշտօնի ծանրութիւնները մատնանիչելով թէ քահանայացուին և թէ իր կնոջ կատարեալ յօժարութիւնը առնելով՝ ձեռնադրութիւնը կը կատարեն: Այսպէս կը թողուն որ մի ամբողջ օր ընծայացուն խորհրդակցի իր կնոջ հետ, մտածէ և յետոյ պատասխանէ թէ համամիտ է թէ ոչ: Ընծայացուն ժողովի ցանկութիւնն իմանալով կ'երթայ իր կնոջ կը յայտնէ թէ՛ ժողովուրդը կուզէ զինքը քահանայ ձեռնադրել, կինը երբ հաւանութիւն տայ, միւս օրը կուգայ ժողովին կը յայտնէ թէ, ինչպէս ինքը նոյնպէս և կինը համաձայն են կատարել ժողովուրդի ցանկութիւնը: Ժողովը այս պատասխանը դեռ ես բաւական չհամարելով՝ մի առանձին պատուիրակութիւն ևս կ'ուղարկէ իր կողմէն, ընծայացուի կնոջ յօժարութիւնը ստուգելու, աւստի քահանայացուի տան խոստովանահայր երէցը ըն-

կերանալով անոր կնոջ հետ կրկին հարց ու փորձ կը կատարէ, իր կողմէն աւելցնելով և բացատրելով քահանայական պաշտօնի ծանրութիւնը կ'ըսէ որ այս օրուրնէ ամուսինդ քեզ համար մեռած է, իսկ դուն ալ նալ ամուսինիդ համար, ամուսինդ քահանայ պիտի ըլլայ, իսկ դուն երէցկին, և եթէ դժբաղդութիւն մը պատահի, այսպէս կամ այնպէս ամուսինդ մեռնի, կրկին ամուսնութիւն չկայ, երբէք մի ամաչեր, խորէ և համարձակօրէն պատասխանէ» : Ընծայացուի կինը, եթէ չուզեր իր ամուսինին քահանայ ձեռնադրուիլը, կը յայտնէ իր խոստովանանք, իսկ եթէ համաձայն է, բացարձակապէս ամեն դժուարութիւն Աստուծոյ կամօքին յանձնելով նոյնպէս կը յայտնէ իր յօժարութիւնը, այդ պարագային քահանան մի քանի օր'նութիւններ կուտայ, և մէկ բաձի վրայ ծերանաք ըսելով դարձեալ երէցխոխանին հետ կոողայ ժողովին յայտնելու ընծայացուի կնոջ պատասխանը : Ժողովը երկաող մը դրելով Ս. Աստուածածնայ վանքը, եպիսկոպոսին կը յայտնէ որ այսինչ թաղի մէջ քահանայ պիտի ձեռնադրուի, ուստի թող հաճի խարտաւիլակ վարդապետ մը և առաջնորդական փոխանորդ քահանան խրկել, որպէսզի անոնք ալ վաւերացնեն ընծայացուի արժանաւորութիւնը :

Հետեւեալ օր խարտաւիլակ վարդապետը և առաջնորդական փոխանորդ քահանան կուգան իշխանին տունը և մրանալով երէցփոխանին, թաղականութեան քարտուղարին և ընծայացուի տան երէց քահանայի հետ կը կազմեն վեց անդամներէ բաղկացած միջնորդ ժողով, կրկին կը կանչեն ընծայացուն և այս անգամ խարտավիլակ վարդապետը կսկսի քննութեան հարցումներ ուղղել ընծայացուին, Հին և Նոր կտակարանի մասին, եկեղեցական օրէնքներու և կանոններու մասին : Երբ ընծայացուն գոհացուցիչ պատասխաններ տայ, խարտա-

ւիլակ վարդապետը կը վաւերացնէ ընծայացուի արժա-  
նաւորութիւնը, հիմնուած իր քնութեան և նախորդ ժո-  
ղովներու մէջ քահանայացուի Բարոյական արժանաւո-  
թեան մասին կատարուած քննութիւններու հիմերու վը-  
րայ : Այս վաւերացումէն յետոյ ժողովը մի ընդարձակ  
տեղեկագիր պատրաստելով կ'ուղարկէ վանքը՝ առաջ-  
նորդ եպիսոպոսին, հարցնելով թէ ե՞րբ կարող է գալ  
ձեռնադրութեան : Եպիսկոպոսը իսկոյն կը պատասխաս-  
խանէ յայտնելով թէ կամ յառաջիկայ շաբաթ օր իջնե-  
լով Ձէյթուն՝ կիրակի կը ձեռնադրէ : Եպիսկոպոսին ո-  
րոշած օրը ընծայացուի կնքահայրը, իշխանը, երէցփո-  
խանը, ընծայացուին պատկանած եկեղեցիին քահանա-  
յական դասը, իշխանին տասն և երկու դասպատայիները  
(ղինակիրները, որոնք թաղական կը սեպուին), այն ե-  
կեղեցիի ուսուցիչներն ու ձայնաւոր աշակերտները ա-  
ռաւօտուն խմբովին վանք կ'երթան եպիսկոպոսը Ձէյ-  
թուն բերելու համար : Ճաշէն յետոյ ժածը Ղին (ըստ Ե.  
Ղին) կը պատրաստուին դառնալ Ձէյթուն : Կնքահայրը,  
նախ քան մեկնելնին, վանքին ընծայ մը կ'ընէ և յետոյ  
ճանապարհներով կարելի է Ձէյթուն գալ, եթէ ձեռնա-  
դրութիւնը Ս. Լուսաւորչի և Ս. Ստուածածնայ եկե-  
ղեցիներու մէջ տեղի պիտի ունեա՛յ թափօրը վերի ճա-  
նապարհէն Աբընայ- քարտօք էն (Անբանի քարտաք) կը  
մտէ Ձէյթուն, իսկ եթէ ձեռնադրութիւնը Ս. Յովհանն-  
նէս և Ս. Սարգիս եկեղեցիներու պատկանի, վաթի,  
այսինքն Ս. Պետրոս Պօղոսի կամուրջի ճանապարհէն  
Ձէյթուն կը մտնէ թափօրը : Բայց նախ քան թափօրի  
Ձէյթուն մտնելը, գրեթէ ամբողջ ժողովուրդը Ձէյթունի  
չորս թաղերէն խումբ խումբ եպիսկոպոսին ընդառաջ  
կ'երթան, բոլոր եկեղեցիներու քահանաները, ուսուցիչ-  
ները ու տիրացուները կարգով կը փութան դէպի այն  
ճանապարհը, ուրկէ եպիսկոպոսը պիտի դայ : Երբ առաջ-

հորդը հասնի իր ուղեկիցներով Պետրոս-Պողոսի կամուր-  
ջը, ուր խուռն բազմութիւն մը իրեն կ'սպառէ, վար  
կ'իջնէ ձիէն և շուրջառ կ'առնէ վրան, ու մէկ ձեռքը  
խաչ մը, իսկ միւս ձեռքը եպիսկոպոսական գաւազան  
բռնած, պահպանիչով մը կ'օրհնէ ժողովուրդը և յետոյ  
շրջապատուած, շուրջառներով զգեստաւորուած չորս ե-  
կեղեցիներու քահանաներէն, կուղեւորի դէպի այն եկե-  
ղեցին, ուր պիտի կատարուի ձեռնադրութիւնը» : Չայ-  
նաւոր աշակերտները, եկեղեցական շապիկներ հագած,  
կ'սկսին քաղցր ձայնով ծաղկազարդի «զՔրիստոս թա-  
գաւոր» շարականն երգել, իսկ ժողովուրդը ուրախ և  
զուարթ կը հետևի թափօրին մինչև եկեղեցիին գաւիթը :  
Եպիսկոպոսը, քահանաներու հետ կը մտնէ եկեղեցի և  
պահպանիչով մը կ'ազդարարէ ժողովուրդին թէ կոչման  
հանդիսատես ըլլալ փափագողները երեկոյեան եկեղեցի  
թող հրամմեն : Այս ազդարարութեամբ ժողովուրդը կը  
սկսի մաս մաս քաշուիլ եկեղեցիին գաւիթէն, իսկ ու-  
մանք կը մնան ընծայացուն լոգցնելու արարողութիւնը  
տեսնելու համար, մեծ կաթսայ մը ջուր կը տաքցնեն և  
եկեղեցիի գաւիթին մէջ դրդիւշիւն(\*) մը դնելով ընծա-  
յացուն կը լուան : Լոգցնելու գործողութիւնը կը կա-  
տարէ կամ նոյն ինքն կնքաձայրը և կամ կնքաձօր կող-  
մէն նշանակուած մի ուրիշ անձատ, մինչև լոգանքի  
գործողութիւնը լմնայ, տիրացուներ և քահանաներ  
ծնծաղներով կ'երգեն «Այսօր անձառ» սովորական երգը :

---


(\*) Իրդիւշիւնը մեծ կոնք մըն է, որուն մէջ Չէյ-  
թունցիները բուպ (պէքմէզ), կ'եփեն, այնպիսի մեծ գլր-  
դիւշիւններ կան, որոնց մէջ մինչև իսկ երկու մարդ հան-  
գիստ կարող են լուացուիլ : Ասիկայ դաշդիչոնին տղա-  
ւաղումն է :



Երեկոյեան եկեղեցիի կոչնակները կը սկսին զարնը-  
ւիլ, և որովհետեւ հոգեւորական հանդէս մըն է որ պի-  
տի կատարուի, երկու կոչնակներ, մին պողպատեայ,  
իսկ միւսը ընկուզի փայտէ շինուած, միասին սովորա-  
կանէն աւելի երկար ատեն կը զարնուին :

Կոչնակներու հրաւերի առաջին արձագանքին, Զէյ-  
թունի չորս թաղերուն ամենանեաւոր անկիւններէն՝  
հաւատացեալներ խումբ խումբ կը փութան եկեղեցի,  
ուր արդէն ներկայ են բոլոր քահանայները, եպիսկոպո-  
սը և ընծայացուի պատրաստ կոչման : Սողովուրդի խումբն  
բազմութեան ներկայութեան կոչումը կը կատարուի  
հանդիսաւոր կերպով «Մայր Մաշտոցի» և Լուսաւորչա-  
կան եկեղեցիի կանոններու համեմատ, իսկ հետեւեալ  
օրը, կիրակի առաւօտեան, եպիսկոպոսը պատարագելով  
ընծայացուն քահանայական աստիճան կուտայ և կ'օծէ  
քահանայի նոր անուն տալով : Զեռնադրութիւնը վեր-  
ջանալէն յետոյ, եթէ օրը ուտիք է, այսինքն եթէ մեծ  
պահքի մէջ չէ կատարուած ձեռնադրութիւնը՝ կնքա-  
հայրը մատաղ կ'ընէ, երկու երեք ոչխար և կամ ընծուող  
մը մտրթելով և մօտաւորապէս 100 մարդու համար սե-  
ղան կը պատրաստէ : Այդ ճաշկերոյթի մէջ բացի եկե-  
ղեցական դասէն և իշխաններէն մեծ տեղ կը բռնէ հա-  
սարակ դասակարգը Սեղանի վրայ բաժակներ պարպե-  
լով բարեմաղթութիւններ կ'ընեն նորընծայի և երէցկիւնի  
արեւչատութեան համար, յետոյ իշխանները կը խմեն  
բոլոր ուղղափառ եպիսկոպոսաց կենացը, ներկայ եզող  
եպիսկոպոսին կենացը առանձին չեն խմեր, այլ իրենց  
խօսքը ուղղելով սոյն եպիսկոպոսին կ'ըսեն, եթէ դուք  
ալ ուղղափառ էք՝ այդ բոլորի մէջ դուք ալ կը գըտ-  
նուիք :

Նպիսկոսպոսն ալ փոխադարձաբար կ'ըսէ . բաժակ կ'առաջարկեմ բոլոր Աստուածասէր իշխաններու կենացը , և կը յուսամ թէ դուք ալ Աստուածասէր էք : Բաժակներ 'կ'առաջարկեն նաև քաջամարտիկ հասարակութեան և բոլոր հերոսներու կենացը : Հասարակ դասակարգէն ճարտարախօս մը ոտքի ելնելով փոխադարձաբար բաժակ կ'առաջարկէ հասարակութեան կողմէն , բոլոր անձնուէր հոգեւոր հովիւներու և ուղղամիտ իշխաններու կենացը , յայտնելով երախտագիտութիւն և խորին յարգանքներ :



### Կարգապահութիւն Զէյրունի Քահանաներուն

Չեռնադրութեան օրէն սկսեալ , նորընծան քառասուն օր եկեղեցւոյն խուցը փիլօնով ծածկուած աղօթքով և ծովապահութեամբ կը ճգնի : Առաւօտէն մինչև ժամը ինը (Նպ-Յ) նորընծան առանց բան մը ուտելու , ծով կը պահէ և իր ժամանակը կ'անցնէ Սաղմոս քաղելով , Նարեկ կարդալով , երբեմն ալ ուտեալ քահանայ մը դալով պատարագելու կանոնները կը սովբեցնէ , իսկ ժամը Գին (ըստ թրքաց) պահոց կերակուրով ծովը կը բանայ : Նորընծա՛ի կերակուրը 40 օր ժողովրդեան կողմէ կը մատակարարուի , ամեն երեկոյ այլ և այլ տուներէ 3-4 տեսակ պահոց կերակուրներ առանց ձիթանդի , շուշմայով կամ դահինով պատրաստած կը բերուին նորընծայի խուց : Այս պահոց կերակուրները այնքան խրհամքով կը պատրաստեն Չէյթուհիները որ շատ անընդարար և համեղ կ'ըլլան . որովհետև , ինչպէս ըսինք , մեծ քանակութեամբ ամեն երեկոյ այլ և այլ տուներէ միաժամանակ կ'ուղարկեն , այնպէս որ նորընծան քիչ մը բան կարողանալով սպառել , մնացեալով 10-20 տուն աղքատներ կը խնամուին :

Քառասունքը մինչև լմնայ, ամեն երեկոյ Նորրնծա-  
յի գանուած եկեղեցիին մէջ եկեացէի Աղօթք կը կատար-  
ուի և մի գլուխ Աւետարան կը կարդացուի, Նորրնծան  
Փիլօնը բերնին բռնած, Նոր հարսի նման եկեղեցիի պա-  
հարանէն ելնելով կուգայ և գրքակալին առջև գլուխը  
խոնարհեցուցած ծնկաչօքիը նստի, իսկ Աւետարանն ան-  
միջապէս աւարտելէն յետոյ, նոյն ձեւով կը վերադառ-  
նայ պահարան :

Այս քառասուն օրուան միջոցին վրայի շապիկը  
չփոխեր գրեթէ, գօտին ալ չքակեր, որով անկողնոյ մէջ  
գրեթէ հանգիստ չկրնար քնանալ (\*) : Խեղճը այդ խստա-  
կրօնութեան մէջ շատ կը նեղուի, բայց և այնպէս հո-  
գեւոր ուրախութեամբ՝ դո՛ւ սրտով կը տանի : Երբ որ  
ցանկալի 39 օրը ամբողջանայ, խոշոր կաթսայով ջուր կը  
տաքցնեն, մեծ կոնքի (գաշտիչոն) մը մէջ կստեցնեն Նոր  
րնծան և քահանայ մը զայն կը լուայ, այս միջոցին  
քահանաները և տիրացուները սովորական «այսօր ան-  
ճառ»ը կ'երգեն ծնծղաներով, ասկից յետոյ նոր ճերմա-  
կեղէններ և հագուստներ կը հագցուին, վերջապէս պա-  
րեգօտ, գօտի, վերարկու (\*\*), որոնք, ամենքն ալ նոր են  
և այս զգեստեղէնները քահանային կնքաօր կողմէ կը  
նուիրուին : Կնքաօրը եպիսկոպոսին ալ աջահամբոյր  
մը կուտայ, որուն փոխարէն եպիսկոպոսն ալ Փիլօն մը  
կը նուիրէ նորրնծային, այսպէսով անուշ տեղը կը կապ-  
ուի :

Հետևեալ առաւօտ առաջին պատարագը կը մատու-  
ցանէ հանգիսաւոր կերպիւ, չորս եկեղեցեաց քահանա-

---

(\*) Երանի թէ մեր եպիսկոպոսք այդ նախասպաշար-  
եալ սովորութիւնը դադրեցնէին :

(\*\*) Մէրտին մաշլա՛րը ըսուած, սև վառվռուն կեր-  
պաս մը :

ները հոն ժողովուած կ'ըլլան, ինչպէս նաև խուռն բազմութիւն կը գտնուի, պատարագէն վերջը նոյն զգեստով ու շքեղ թափօրով «Աշակերտք Քրիստոսի» շարականը երգելով քահանային տունը կ'երթան, ուր մատաղ պատրաստուած է կնքա՛օր կողմէ. հոն եփուած մատաղին վրայ նորընծան իւր անդրանիկ օրհնութիւնը կ'ընէ ու նոյն թափօրով եկեղեցի կը վերադառնան(\*):

Նորընծան եկեղեցական զգեստները մերկանալէ վերջը տուն կը վերադառնայ, ուր սեղանակից կ'ըլլայ հանդիսականներու՝ որոնք այսպիսի հանդէսներու հացկերոյթին առնուածն ՅՈ հոգի կ'ըլլան: Անա այս առթիւ նորընծան առաջին անգամ ըլլալով իւր պա՛քը կը լուծէ, բայց միայն մէկ օրուան համար: Այսուհետև ամբողջ տարի մը իւր տունը ոտք չի կոխեր, այլ եկեղեցիին սենեակը կը պառկի. այս մէկ տարուան միջոցին միշտ պահոց կերակուրով կը սնանի, բացի շաբաթ և կիրակի օրէն, այս երկու օրն ալ ոչ թէ մսեղէն այլ իւղով կերակուր կ'ուտէ. իսկ եթէ մատաղ տեղի ունենայ, կրնայ ատոր մասնակցիլ: Ջերմեղանդ ժողովուրդը գրեթէ նոյն

---

(\*) Ասկից ՉՅ տարի առաջ խիստ տղեղ սովորութիւն մը կար, այսինքն թէ երբ քահանան տուն կ'երթար թափօրով, երէցկիներ ուրիշ երէցկիներէ շրջապատուած գլուխը սաւան մը ու վերմակ մը առած և ականջներն ալ բամպակով գոցած կը գտնուէր և նորընծան ալ անոր գլխուն մի քանի տուն Աւետարան կը կարդար ու այնպէս կը մեկնէր: Կը կարծուէր որ, երբ երէցկիներ քահանային ձայնը լսէ, անմիջապէս կը մեռնի. (անգամ մը պատահաբար այսպիսի դէպք մը տեղի ունեցած է եղեր). վախճանեալ կարապետ եպիսկոպոսը այդ տղեղ սովորութիւնը ջնջեց:

տարին մատաղը անպակաս կ'ընէ շաբաթ և կիրակի օրերը՝ սիրելի նորընծայի խաթրին համար :

Ընդհանուպէս Քահանայք Ս. պատարագի պատրաստութեան համար հետեւեալ ճգնութիւնները կը կատարեն : Երեկոյեան ընթրիքէն վերջ ութը կանոն Սաղմոս կը քարդէ, այնուհետև Նարեկ : Գօտին քակել, սաւանով ծածկուած Անկողնոյ վրայ երկնեալ պառկել չիկայ, այն դեշեր նստած տեղը կրնայ քնանալ քիչ մը : Կէս գիշերուն ժամկոջին հետ կը սկսի նշխարք, մաս գործել հետեալ արարողութեամբ որք են «ճաշու երեք ողորմեան, յետոյ մի ձայն հանգստեան շաբականը, այնուհետև այսօր անճառը» Եթէ եկեղեցին սարկաւազ ունի, նա ալ այս արարողութեանց կը մասնակցի : Ժամերգութիւնք կը սկսին արշալոյսին և շաբաթ գործի օր ըլլալուն՝ դեռ արև չծագած կը վերջանան ժամերգութիւնները, որով ամեն մարդ կրնայ իւր գործին եթալ : Կիւրակէ օր, արևը ծագելու ատեն իւղարերից աւետարանը կարդացուի, արք և կանայք ծերք և տղայք եկեղեցի կը դիմեն, Զէյթունի մէջ առօրեայ եկեղեցի չերթալը անգամ ամօթ համարուած է, վերջապէս ամէն ոք եկեղեցի կ'երթայ, բացի հիւանդներէն, սա խիստ սովորութիւնըն ալ ունին որ, ժամերգութեանց ամբողջովին չաւարտելէն առաջ ոչ ոք եկեղեցիէն դուրս կ'ելլէ, եթէ նոյն իսկ մէկը դուրս ելլէ, ժողովրդեան առջև ամօթահար կը մնայ(\*) : Ս. յսքան սպասող ժողովուրդը «օրհնալք և

---

(\*) Թագին իշխանը կամ տաներէց քահանան կը հարցնեն թէ՛ ինչու կ'իսատ թողուց արարողութիւնը և դուրս ելաւ. եթէ անիկա հիւանդութիւնը ցուցնէ, իրեն կ'ըսուի թէ՛ հիւանդ էր՝ պէտք չէ եկեղեցի դալ և ժողովրդեան դայթակղութեան պատճառ ըլլալ :

Կռիւ և հրդեհ կրնան միայն պատճառ ըլլալ եկե-

դերուք»-ի միջոցին թափօրի շարքով մէկիկ մէկիկ քահանային բռնած Ս. Աւետարանը կը համուրեն սա խօսքը արտասանելով . «Օրհնայ Տէր, Մեղայ Աստուծոյ», որուն կը պատասխանէ քահանան՝ «Աստուած թողութիւն շնորհեցէ» . ա՛նա այսպիսով կ'արձակուին եկեղեցիէն :

---

դեցիէն դուրս ելլելու . այս պարագաներուն բոլոր ժողովուրդը դուրս կ'ելլէ մինչև անգամ նոյն եկեղեցւոյ աւագ քահանան : Անգամ մը Տեառնընդ առաջի կիրակամուտքի իրիկուն եկեղեցւոյն նախատօնակի հանդիսաւոր արարողութեան ատեն Ս. Սարգիս եկեղեցւոյ աւագ քահանան՝ համբաւաւոր Տէլի Քէշիշ Տէր Օ՛ան , ժողովրդեան մէջ թափօրի խնկարկութիւն կատարած միջոցին մէկը ականջէն բան մը փափսաց , որուն վրայ Տէր Օ՛ան բուռվաւոր միւս քահանաներէն միոյն յանձնելով , վրայի շուրջաւոր և փիլօնը ձգելով եկեղեցիէն դուրս նետուեցան . նոյն եկեղեցւոյ իշխանին (Եաղուպեանի) հետ . պատճառն այն էր որ շօվրոյեան իշխանի և Սէմէրճեանց գերդաստանի միջև կոխ մը ծագած էր . սուկալի հրացանաձգութիւն տեղի կունենար , մինչև որ Տէր Օ՛ան և Եաղուպեան իշխանը հասան և միջամտելով դադրեցուցին կոխը . 12 տարեկան անմեղ պատանեակ մը՝ որ շապիկ հագած , մոմ ի ձեռին , կը մասնակցէր Տեառն ընդ առաջի տօնին , Պօղպոյսի թաղի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ դաւթին մէջ , հրացանի գնտակի մը հարուածէն վայրկենապէս մեռաւ :

Այդ պատանեակը ծանօթ դարբին վարդեա Մանուկին տղան էր , այս խեղճ դո՛ն ոչ թէ դիտմամբ այլ պատահարաւ եղած էր : Եթէ Տէր Օ՛ան աւագ քահանայի և Եաղուպեան իշխանի միջամտութիւնը քիչ մը ուշանար՝ իւրաքանչիւր կողմէ 10-20 մարդ կրնար զոհուիլ :

Չէյթուենի մէջ քահանաներուն և ժողովրդեան կրօնասիրութիւնը իւր ծայր աստիճանին հասած է. սա ալ չմոռնանք յիշելու որ սոյն խստակրօն եկեղեցականք, եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, տիրացու, սարկաւազ, ամէնքն ալ թշնամւոյն հետ կռիւ մը ծագելուն պէս, մէկ մէկ առիւծ դարձած, բոլորովին զինեալ, պատերազմի դաշտը կը դիմեն, յարմար պարագային սպաննել և սպաննուիլ աչքերնին առնելով, ինչպէս 1860ին Սուրշիտ Փաշայի պատերազմին ատեն (\*):

Չէյթուենի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս էօքսիւղեան զինեալ ներկայացաւ մեր բանակին մէջ՝ Ջահանգեանին աստի ի եղերքը: Սրբազանը Մարաշի ապա մը հագած էր, մէջքը կը կրէր ջուխտ մը ատրճանակ, քովէն կախած էր սուր մը, ձեռքը արծաթեայ ապարանջանով հրացան մը, գլուխը ֆէս մը և վրան մետաքսեայ քէֆիէ մը, ոտքը հագած էր փօստալ (\*\*), իսկ իր հետը բերած էր յատկապէս տասը ջորիի բեռ՝ զանազան պաշար Չէյթուենի պատերազմիկներուն համար: Չորս իշխանք ըսին եպիսկոպոսին. «Սրբազան Հայր, թէեւ հինաւուրց սովորութիւն է Չէյթուենի եկեղեցականաց զինուելը, բայց դուք այդ ձանձրութիւնը չաննէիք, ձեր ազօթքը բաւական էր արդէն»: Սրբազան Հայրը սապնս պատասխանեց. «Պատարագի ատեն կ'ազօթեմ, բայց այսպիսի դժուարին կացութեան մը մէջ պէտք է որ մասնակից ըլլամ ազգայնոցս պատերազմին, եթէ

---

(\*) Տես Ա. մաս, 101 երես:

(\*\*) Փոկով կապուած տեսակ մը կօշիկ, եթէ պատերազմի ատեն ձին վիրաւորուի՝ մարտիկը հետիոտն կրնայ պատերազմիլ այդ թեթեւ ոտքի կօշիկով և կաքաւի պէս ասդին անդին ցատկել:

ինծի պէսներ թոյլ գտնուին՝ ի՞նչ սրբապիղծ արարքներու պիտի մատնուի մեր կրօնքը, մեր եկեղեցիները, մեր ազգութիւնը, և մեր հայրենիքը (Զէյթուն) ոտնակոխ պիտի ըլլայ այդ գաղանաբարոյ ժողովուրդէն (\*)» : Սուրէնեան Նազարէթ իշխանը ըսաւ . « Սրբազան, երբ իսրայելացիք կը պատերազմէին թշնամւոյն հետ, Մովսէս կ'աղօթէր լեռան գագաթը, պէտք էր դուք ալ աղօթելով բաւականանայիք» . բայց եպիսկոպոսը սա իմաստալից պատասխանը տուաւ . « Մովսէս դրեթէ այդ ատեն ծերացած՝ սուր և ասպար կրելու ուժը չունէր, ատոր ալ բաժին ինկած էր աղօթք ընել, իւր երիտասարդութեան ժամանակ չէ՞ր միթէ որ Նդիպտացի մը սպաննեց և աւազին մէջ թաղեց » : Իշխանները թէեւ այս պատասխանէն գոհացան՝ Շորվայեան իշխանը սա նկատողութիւնն ալ ըրաւ . « երբ հայերը Պարսկաց հետ կը պատերազմէին, Մեծն Ներսէս հայրապետն ալ Նպատ լեռան գագաթը աղօթքի կեցաւ . — Օ՛հ, չէ՞ որ Ներսէս ալ երիտասարդութեանը հայոց թագաւորին զինակիրն էր, բնական էր որ ծերութեան ժամանակ կը մընար միայն աղօթել, զի զէնք չէր կարող կրել . Փառք Աստուծոյ, ես դեռ ժիր եմ, յիսուն տարեկան առոյգ, առողջ և զէնք կրնամ կրել, մտքով կ'աղօթեմ, պատե՛ն աթիւ ալ զէնք կը գործածեմ » :

Զորս իշխանները շնորհակալութիւն յայտնեցին Սրբ-

---

(\*) Այս՝ իմ ժողողուրդի բնութիւնը այդպէս է, գաղան օգլու գաղան է, Մարխասսա էֆէնտին շիտակ զուրցեց, համաձայն եմ, ըսաւ Զէյթունի ԶՅ անուոր տաճիկներուն իմամը, Մուլա Մութաֆան, որ թէ լաւ տաճկագէտ և թէ լաւ հայերէն կը խօսէր : Սրբազանին քովիկը նստած կ'ունկնդրէր : Այս ալ իւր ժողովրդով զինեալ մեր բանակին մէջ կը գտնուէր :



բազանին ազնիւ զգացումներուն և իմաստալից պատասխաններուն համար :

Սրբազանին այս անձնուէր վարմունքը այնքան յուզեց հանդիսականները և հայ զինուորեալ բանակը, որ խանդավառօրէն ծափահարութիւններով ու հրացանածգութիւններով օղը թնդացուցին, այնպէս որ թըշնամուն բանակը՝ որ դիմացը կը գտնուէր, անուսարսափ զգաց մէկէն :

Ե .

Զէյրունի Երչակայ տէրապետները (աւասական) :

1. Մարաշ (Գերմանիկ) (Զէյթունի արեւելեան հարաւային կողմը 12 ժամ հեռու), այստեղ կը գտնուին խումբ մը հին Այաններ (մեծամեծ) 1. Տուլ գասր օղու (Զիւլգասարեանք) ցեղը՝ որ ինքզինք թագաւորական տոհմէ կը համարի սերած ըլլալ և ժամանակով երկարատեան Մարաշու և շրջականերուն տիրած է, կէս մրն ալ Զէյթունի, 2. Պայազրս օղու, 3. Էմիր Մահմուտ օղու, 4. Ղասիլք օղու, 5. Վելի Էֆենտ օղու, 6. Ղասր գասե :

2. Ալպուստանի (Էլլէսթէյն) (Զէյթունի արեւելեան հիւսիս 13 ժամ հեռու) մէջը կան Հան Աղա գասելեր և Սալք օղու տէրէպէյիները :

3. Եարփուզ (Եփեսոս), (Զէյթունի հիւսիս արեւմտեան կողմը 12 ժամ հեռու), ունի մէկ տէրէպէյի Հանի աղալար :

4. Սիս (Կիլիկիա), (Զէյթունի արեւմտեան հարաւ

ւը, 33 ժամ հեռու), մայրաքաղաք հայոց), ունէր Չա-  
տրրճը օղլու տէրէպէյի ցեղը: Չատրրճը օղլու համա-  
նուն ցեղին պետք կ'իշխէր Սիսու, Ղարս Պաղարու և  
Չուխուր օվա բնակող թիւրքմէններուն ոմանց վրայ:  
Այս տէրէպէյին էր որ մեծանուն կիրակոս կաթողիկոսը  
թունաւորելով մեռցուց, Սիսու քանի քանի կաթողի-  
կոսներ ասոր հրամանով դահը կը բարձրանային և գը-  
րեթի ասոր հրամանով ալ... կը վախճանէին:

5. Հանրն (Հարգան) Տօրոս լեռան մէջ. Չէյթու-  
նէն 24 ժամ հեռու արեւմտեան հիւսիս կը գտնուի:  
Հաճրնի և չրջականերուն, ինչպէս Ֆեֆե (Վանկայ), Ու-  
ռումլու, Ֆարսախ, Շար Տէրէսի (կիլիկիոյ հայոց թա-  
գաւորներուն ամարանոցը) և այլն, կ'իշխէր Գօղան օղ-  
լու տէրէպէյի ցեղը: 1863-4ին Չատրրճը և Գօղան օղ-  
լու տէրէպէյու թիւնները ջնջուեցան Սուլթան Աղիզի  
հրամանով:

6. Կեալուր տաղը (հայու լեռ) ( այժմ ճէպէլի Պէ-  
րէքէթ սանճաղը կը կոչուի) Չէյթունի արեւմտեան հա-  
րաւը 20 ժամ հեռու, որ կը սկսի Պուլանըք գաղաէն  
(Պանճէ գիւղաքաղաք), Հովտու լեռան վերջացած տե-  
ղէն, և կ'երթայ մինչև Փայաս, Իսկէնտէրուն (հայոց  
ժոց) Չէյթունէն 45 ժամ հեռու: Երբեմն այս լեռան  
բնակիչներուն վրայ կ'իշխէին չորս տէրէպէյի ցեղեր.  
1. Կիւջջիւ հալլ օղլու, 2. Հաճի էօմէր օղլու, 3. Ալի  
Պէքիր օղլու, 4. Ֆէդգա օղլու:

Այս վերջինը, Ֆէդգան օղլու Աղճա պէկ, կ'իշխէր  
Պուլանըք գաղային, որ իրեն հպատակ ունէր չորս հա-  
յու գիւղեր՝ որոնց արիւնը տղրուկի պէս կը ծծէր. 1.  
Պանճէ, թրքախառն և ծննդավայրը Աղճապէկին, 2. Հա-  
սան պէկլի (ղուտ հայ), 3. Լափաչլը (ղուտ հայ), 4.  
Խառնը (ղուտ հայ):

Այիպէքիր օղլու կիշխէր էկպեղ հայ գիւղին և շըր-  
ջականերուն :

Հաճի էօմէր օղլու Տէլի Սալիլ կ'իշխէր Թեյեկ հայ  
գիւղին և շըջակայ քիւրտերուն , երբեմն մինչև անգամ  
Քիլիս քաղաքին :

Կեալուր տաղըն նուաճելու համար եկած էին Եր-  
զընկայու չորրորդ բանակին հրամանատար Տէլրիչ փա-  
շան , ձէվտէթ Ահմէտ էֆէնտին (1864-1865) , Ալաշկերտու  
կողմէն՝ Չէրքէզ Ասլան փաշան , և նոյնտեղի քիւրտ տէ-  
րէպէյիներէն Սիւրմէլի Մէհմէտ պէկը իր տիգաւորնե-  
րու խմբով : Տէրվիչ փաշան , լիազօր իշխանութիւնով ,  
Սուլթան Ազիզ կայսեր փոխանորդի տիտղոսը կը կրէր ,  
ձէվտէթ էֆէնտին ալ Շէյխ իւլ իսլամէն փոխանորդի  
պաշտօնով եկած էր : Կեալուր տաղիի գործը , առանց  
արիւնահեղութեան կարգադրուելէն յետոյ , ձէվտէթը՝  
փաշա տիտղոսով՝ Հալէպու կուսակալ եղաւ և իրեն  
տեղ Տէրվիչին օգնական արուեցաւ Գուրտ Իսմայէլ փա-  
շան , որոնք Կեալուր տաղիի նուաճումէն յետոյ անցան  
Տօրոս լեռը և բնաջինջ ըրին Գօզան օղլու տէրէպէյիներ-  
ըր : Գօզան օղլու Եուսուլի ալան հրացանի բռնեցին ,  
իսկ իր եղբայրը , հաճի պէկը շարաշար սպաննուած Գուրտ  
Իսմայիլ փաշայէն , որ զայն իր երկաթապատ կօշիկնե-  
րուն տակ առնելով , «տէօվլէթ խայինի» ըսելով , չլոխ-  
կուտելով սպաննեց : Այդ տէրէպէյիներէն մնացածները  
Եօզլատ աքսորեցին և Չաարրճի օղլու Ահմէտ «էկին  
ալ փաշայի տիտղոս տուին և աքսորեցին Ազրիանապօ-  
լիս : Այսպէս այդ երկու ցեղն ալ բոլորովին սչնչացան :

7. Փայասու տէրէպէյի Կիւջջիւ հալլ օղլու Մըստըխ  
պէկը կ'իշխէր չորս հայ գիւղերու , 1. Չօք Մէրզիւլան  
(տէօրթ ևօլ) , 2. Օճագլը , 3. Էօզէրլի , 4. Չայ , և շըր-  
ջակայ մէկ քանի թիւրք գիւղերու վրայ : Մըստըխ պէ-

կրն ալ փաշայի տիտղոսով տեղ մը աքսորուելով թէ  
Կեալուր տաղին և թէ Գողան տաղին մաքրեցին տէրէ-  
պէյիներէն :

Ց. Անտէրուն (Անտրուն, Անաառին) կամ Գրունք  
Կիլիկիայի, (հին աւուրց անտառուտ հիանալի երկիր մը  
Սիսի արևելեան հիւսիսը իսկ Չէյթունի արևմտեան հա-  
րաւը 18 ժամ հեռու անկից) : Անտէրուն, Գայմադամու-  
թեան կեդրոնատեղին, աննշան գիւղ մըն է. կ'իշխէ Կո-  
կիսոնէն մինչև Քէշիշ ըրմաղը և կը պատկանի Մարաշու  
Սանճագին (Գաւառ) և անմիջապէս Ստանայի կուսակա-  
թեան սահմանակից է :

Անտէրունի կ'իշխէին չորս տէրէպէյիներ, 1. Ապաղ  
օղլու, 2. Եայճ օղլու, 3. Ջիլֆար օղլու, 4. Կէով Ահ-  
մէտ օղլու, 1860 թուին կառավարութիւնը ջնջեց ա-  
տոնց ազդեցութիւնը և տէրէպէյութիւնը, այժմ եղած-  
ները դիմակաւորներ են, ծածուկ տէրէպէյիները : Երբ  
Չէյթունի հետ պատերազմ ընել հարկ ըլլար, կառավա-  
րութիւնը անոնց դիմակը վար կ'առնէ, որոնք նորէն հին  
տէրէպէյիներու հովեր կ'առնեն : Եայճ Առաջ օղլուն բա-  
ցէիբաց տէրէպէյի է և հարուստ ալ է շնորհիւ հայ ճո-  
րտա գիւղերուն : Գայմադամն ալ անոր ճորտն էր, զոր  
ուզած ատենը պաշտօնանկ ընել կուտար, շնորհիւ Մա-  
րաշու Սյաններուն (մեծամեծ), որոնք Եայճ օղլիին մար-  
դկին էին և իր գողակիցները : Այս տէրէպէյիին դեռ  
ազատութենէն առաջ մնայուն է :

Կէով Ահմէտ օղլուն կ'իշխէր 1. Նիւրփէտ (Նորփայտ  
2. Անրճըխ (Անեցիք) 3. վարի Չօխախ. 4. վերի Չօխախ  
հայ և քանի մը թիւրք գիւղերու :

Ջիլֆար օղլու կ'իշխէր Շիվիլիլի հայ մեծ գիւղին :

Եայճ օղլու մինչև ժօտերս կիշխէ 1. Աճէմլի Պարսկահայք, 2. Տրդատլը, 3. Թաւուտլու հայ գիւղերուն և քանի մը թիւրք գիւղերու :

Աղաղ օղլու կիշխէր 1. Կապանու, 2. Պունտուխու 3. Տէյիրմէն տէրէյի, 4. Թաշօլուքու, 5. Կէօլփունարի հայ գիւղերուն, որոնց միշտ ջերմ պաշտպանն է Ֆրնուզի այժմու Նիկողայոս եպիսկոպոսը :

Անտէրունի տէրէպէյինները, Եայճ օղլուն, Աղաղ օղլուն և այլն կը դողան հայ եպիսկոպոսէն և մինչև իսկ անունը չեն ուզեր լսել. ընդհակառակը եպիսկոպոսին գործն ալ միշտ ան կողմերն է, այսինքն մինչև Քէշիշ ըրմաղըն Ֆրունզի վանքին վիճակը կը սեպուի : Երբ եպիսկոպոսը ինքը, կամ իր ձեռնասուն Բարթողիմէոս վարդապետը վիճակին այցելութեան ելլեն, տորէպէյինները ընդառաջ կուգան բարի գալուստ մաղթելու և կըսեն. «Պունլար սայկըլը ֆուրթունա տըր, Պունլարլա խօշ կէշինմէլը» :

Ծ. Իշ-Նահիէ(\*) (Շուղուր անապատ), ուր կար Անապատ վանքը (Զէյթունի արեւմտեան հարաւ 20 ժամ հե-

---

(\*) Ժամանակաւ այդ տեղին անունը Շուղուր անապատ կը կոչուի եղեր. ետքէն երբ օսմանցիները տիրեր են այդ երկրին՝ Իշ-Նահիէ ըսուեր է : Կիլիկիոյ վանքերու շարքին մէջ, այս Շուղուր անապատի կարմիր վանքն ալ հռչակուած էր : Անիկա համբաւաւոր ուսման կեդրոն եղած էր, ուր Ստեփաննոս մանուկի հոգելից դաստիարակութեանը տակ կը սնանէին ու կը զարգանային մտքով ու սրտով Գրիգոր Պա՛լաւունին և իր հարազատը Ներսէս Շնորհալին, որոնք յետոյ հայ եկեղեցւոյ նշանաւոր հայրապետներն եղան :

ուի) այժմ թուրքերուն իբր գոմ կը ծառայէ : 1849ին Գառնեցի Օճաննէս վարդապետը շատ աշխատեցաւ այդ վանքը շէնցնել, որու համար բաւական ստակ ևս վատնեց իր քսակէն, բայց ոչ Սիսու Միքայէլ կաթողիկոսը ոչ ալ պատրիարքարանը աջակցելով՝ երեսի վրայ մնաց շինութիւնը և խեղճ վարդապետին ըրած ծախքերը ջուրը ինկան : Եթէ վարդապետին ձեռնարկը յաջողէր, գոնէ այսօր լատինները հոն բոյն չէին դներ :

Իշնահիւն զատ տեղ մըն է, ոչ Տօրոս լեռան, ոչ Կեավուր տնդիի, ոչ Անտէրունի, ոչ ալ Չէյթուէի հետ կապակցութիւն ունի : Այս նահիէին կեդրոնատեղին Ենիճէ-գալէ կոչուած գիւղն է, որուն մօտերը՝ Մուճուգ տէրէսիի վայրը, լատին կղերականք 1866ին վանք մը շինեցին : Այդ վանքին վանահայրը, հայր Սալվատոր, 1893ին Չէյթուէի ծանօթ կռուի ժամանակները, թիւրք զինուորներու կողմէն անդթօրէն և բարբարոսօրէն նստատակուեցաւ, և յանցաւորները անպատրժ մնացին :

Մինչև 1848-9 այդ նահիէին միւսեւիլիմը (միւտիք) տէրէպէյի Գայիշ օզլու Սիւլէյման աղան, իբր տէրիպէյի, կիշխեին քանի մը հայ գիւղերու վրայ, ինչպէս Ենիճէ գալէ, Տիքիլի թաշ, Տէօնկէլէ և տարին մէն անգամ ալ հեծեալներով, թմբուկներով, Ֆրնուզ կուգար, անխտիր կ'իջեանէր վանքը կամ գիւղը և աղքատ Ֆրնուզցին կը կողոպտէր ու կը մեկնէր(\*) : Չէյթուէիք ակռայ կը կըրճըտէին այս թիւրքին ըրածին դէմ, բայց հին նիկողա-

---

(\*) Բայց ուղածին պէս չէր կրնար կողոպտել, վասն զի Ֆրնուզցիք հին նիկողայոս եպիսկոպոսէն գաղանի կը դիւէին Չէյթուէն՝ Եաղուպեան իշխանին, նա ալ եղբօր որդին կը դրկէր Յ-Յ մարդով : Տէրէպէյին կատուի պէս կը քծնէր իշխանազունին ոտքին առջև և քիչ կողոպուտով մը գոհ ըլլալով կը քաշուէր Ֆրնուզէն :

յոս եպիսկոպոսը, խոհեմութիւնով՝ չէր ուզեր որ Ձէյթուհիք օգնութեան գան իրեն, լման մը դաս տան : Նոր Նիկողայոս եպիսկոպոսը, հինին եղբօրորդին, որ ան ասեն տիրացու Եղիա կը կոչուէր և փոքրաւորն էր իր հօրեղբօր, կը ստիպէր այս վերջինը որ Ձէյթուհիներուն դէմէ և գազաններուն աղւոր դաս մը տալ տայ : «Ձէ, կ'ըսէր ծերունի եպիսկոպոսը, դուն չես գիտեր, նահիլ ես, մարդ մը պէտք է հեռատես ըլլայ» : Ձէյթուհիք խենթ ջորիի կը նմանին, աքացին պակաս չեն ըներ թիւրք կառավարութեան, երբեմն ալ կը տեսնես, թիւրք կառավարութիւնը բանակ կը կազմէ, Ձէյթուհիք բնաջինջ ընելու համար : Շատ փաշաներ փորձեր ըրին Ձէյթուհիներուն դէմ, թէև բան մը չի կրցան ընել, բայց և այնպէս Ֆրնուզի ալ չի դպան, եթէ Ձէյթուհիներուն դիմենք, մեզի դէմ ոխանալով մեր փոքրիկ գիւղը քար ու քանդ կընեն : Թուրքերէն առածը կըսէ, «աթլար թէփիչի, արատա էշէկ էօյիւր (ծիերը գլխար կ'աքացեն, մէջտեղը էշը կը սատկի)» :

Գառնանք մեր նախկին պատմութեան : Ծերունի եպիսկոպոսը, ինչ ըլլայ ըլլայ՝ կ'ուզէր Գայիշ օղլու տէրէպէյին հեռացնել Ֆրնուզէն, ուստի Թախաճեան Յովհաննէս վարդապետը կանչեց և խորհուրդ հարցուց՝ գազանը հեռացնելու համար : Ան ալ նոյնը ըսաւ ինչ որ ըսած էր տիրացու Եղիան, այսինքն Ձէյթուհիներուն դիմել : Եպիսկոպոսը նոյն խոհեմ քարոզները կը կարդար նորէն : «Սրբազան, յարեց վարդապետը, բամբակով ակուայ չի քաշուիր, այլ պողպատէ աքցանով կը քաշուի, կամ դիմելու ենք Ձէյթուհիներուն, որ բոլոր ակուաները գան փեղղեն, կամ Պոլիս երթալու է որ այս դօրծը կարգադրուի» : Եպիսկոպոսը այս վերջինին համակերպեցաւ, իսկոյն կանչելով Ֆրնուզի Պըլարըեան Ս.Ռ.աքել աղան՝ որ վառօղապետ Պօղոս պէյի ա-

գարակին Յ տարի տեսչութիւն ըրած ըլլալուն, Պոլիսը  
լաւ կը ճանչնար: Երեքը մէկ եղած Պոլիս գացին և  
Տատեան Պօղոս պէյի հիւրերն եղան, որ մխիթարեց և  
ապահովեց զանոնք ըսելով որ ինքն ալ պիտի աշխատի  
գործին յաջողութեանը և մինչև իսկ խոստացաւ Եպիսկոպոսը  
երջանակայիչատակ Սուլթան Մէճիտին ներկայացնել:

Բարեբաղդարար այդ ժամանակ Սուլթանը գործի  
մը համար Պօղոս պէյը քովը կը կանչէ և մինչև իսկ կը  
հրաւիրէ որ իր հետ ճաշի նստի այդ օրը: Ճաշի ատեն,  
տաքտաք, Սուլթանին կը յայտնէ պատգամաւորութեան  
մասին. «Վեհափառ Տէր, կ'ըսէ, այս օրերս ծառայիդ  
հիւր եպիսկոպոս մը եկած է Մարաշու կողմէն, Ֆրնուզի  
վանքէն: Ալեզարդ, հիանալի և փառաւոր մարդ մը,  
աղամորդիներուն մէջ եզական դէմք մը եթէ չը տես-  
նէք և յետոյ իմանաք որ այդ տեսակ մարդ մը եկեր և  
ձեր վեհափառութեան չեմ ներկայացուցեր, կը վախ-  
նամ որ ձեր բարկութեան կ'արժանանամ. ատոր հա-  
մար ահա, խոնարհարար, փափաքեցայ իմաց տալ, մանա-  
ւանդ որ ինքը, եպիսկոպոսն ալ, կը ցանկայ Ձեր վե-  
հափառութեան ներկայանալ»: Սուլթանը իսկոյն հրա-  
ման կ'ընէ որ եպիսկոպոսը իրեն ներկայացնեն:

Իսկապէս եպիսկոպոսը հիանալի դէմքով՝ պատկա-  
ռելի և հոյակապ ծերունի մըն էր. այդ ժամանակ տա-  
րիքը թէև 73 էր, բայց վարդի պէս երես, ձիւնի պէս  
ձերմակ մօրուք ունէր, քիչ մը մեծաքիթ և աչքերը  
բազէի աչքերու կը նմանէին. մօրուքը, ըսես, քառան-  
կիւնաձև այնքան փառաւոր որ մինչև ծունկերը կ'իջ-  
նէր: Մարդ չէր կշտանար անոր երեսը նայելէ:

Պէկը կուգայ Այ Ստեֆանօ, իր տունը և Սրբազա-  
նին կաւետէ ու կ'ըսէ անոր, «աչքդ լոյս. վարը թագա-  
ւորին պիտի ներկայանաս, վրայ, կը կարդաս». յետոյ  
կը քաջալերէ և խորհուրդ կուտայ պէկը Սրբազանին որ



համարձակ ըլլայ և չի ծամծմէ ըսելիքները . աղւոր ձեռք  
մըն ալ հագուեստ հագցնելով՝ երեքշաբթի օր մը կը պատ-  
րաստուին ներկայանալ թագաւորին : Մեկնելէ առաջ՝  
Թախաճեան Յովհաննէս վարդապետը կը կրկնէ Սրբազա-  
նին այն կէտերը՝ պէտք է խնդրեր կայսրէն 1. Մեր  
վանքը 14 հայ գիւղ ունի իր վիճակին մէջ , որոնց տուր-  
քը վանքին յատկացուի , վազրձ ընէ , 2. Գայիշ օղլու  
Տէրէպէյին ալ ցմա՛ պաշտօնանկ ընել , որպէս զի ան-  
գամ մըն ալ Ֆրնուզ և ուրիշ հայ գիւղեր ոտք չի կոխէ :  
Եպիսկոպոսը կեցցե՛ս , կ'ըսէ վարդապետին , իմ նպատա-  
կըս ալ աս էր , բայց կասկած կը յայտնէ թէ կը կա-  
տարո՞ւի արդեօք իր խնդրքը , Պօղոս պէյ կը խրախուսէ  
զայն պատուիրելով որ առանց քաշուելու յայտնէ թա-  
գաւորին իր խնդիրքը :

Պալատ կերթան : Եպիսկոպոսը կը ներկայանայ  
թագաւորին և աղօթքը կը կարգայ : Թագաւորը զմայ-  
լած կը նայի ու կը նայի եպիսկոպոսին փառանեղ դէմ-  
քին և սա խօսքերը կ'արտասանէ . «մաշալլա՛ , մաշալ-  
լա՛ , էլ՛նէմտուրլլա՛ խալիզի էզտանէ ինտինտէ միլլէթ  
թէֆրիգաթը եօգ տըր , պէն տախի թէպաամըն հիշ պիրի-  
սինին միլլէթ , մէզնէպ թէֆրիզ իթմէմ : Ինտիմտէ ճիւմ-  
լէսիտէ սէվկիւլիւմ տիր» : (Աստուած պաշտպանէ , Աստ-  
ուած պաշտպանէ , փառք Աստուծոյ , Սրարչին բարձրե-  
լոյն , իրեն քով աղգի խտրութիւն չի կայ . ես ալ միւշե  
անգամ հպատակներուս ոչ մէկին աղգ , կրօնք չեմ ու-  
րոշեր , ինձի համար ամէնքն ալ սիրելի են) :

Թագաւորը կ'ըսէ եպիսկոպոսին .

«Մուրախիսաա , տիլէ , տիլէտիքլէրին հէր նէ իսէ  
վիրիլսին» (եպիսկոպոս , խզրէ՛ խնդիրքներդ ինչ է նէ  
թող կատարուին) . — Գահ , թագաւորութիւնդ հաս-  
տատ մնայ , կը պատասխանէ եպիսկոպոսը . — Շնորհա-

կալ եմ բարեմաղթութիւններուդ համար, կ'աւելցնէ կայսրը, եթէ աշխարհային խնդիրներ ունիս, ըսէ, մի քաշուիր:

Եպիսկոպոսը սկսի մէկիկ մէկիկ պարզել:

«Գայիշ օղու Տէրէպէյի մը ունինք, որ միշտ կուգայ մեր Ֆրնուզու ծառաներուդ նեղութիւն կուտայ ու կը ժողվէ. կը խնդրուի մը անգամ մըն ալ սաք չկոխէ մեր գեղը:

— Աղլ (պաշտօնանկ ըրի, կ'ըսէ թագաւորը: Դեռ ի՞նչ կ'ուզէք կը հարցնէ:

— Մեր գիւղին տուրքերը թեթեւցնէք, դի շատ ծանր են. 10000 զրուշ է, 4000ի իջեցուի, կը խնդրէ եպիսկոպոսը:

— Այդպէս ըլլայ, կը պատասխանէ կայսրը:

Մէյ մըն ալ կ'աւելցնէ եպիսկոպոսը, մեր գիւղը Տիւրղի թող չիգայ, ինչու որ աչքերնիս վախցեր է տիրուիներէն, մենք 4000 զուրուշը Պօղոս պէկին կը խրկենք. անկէց ստացուի:

— Դեռ ի՞նչ կ'ուզէք, կ'ըսէ թագաւորը:

— Մեր ցորեններէն տասանորդ է մեր տաւարներէն յատկացեալ տուրքը չ'առնուի (այն ատեն տաւար գըլուխ 12 փարայ կ'առնուէր):

— Խնդիրք ունի՞ս դեռ, կ'աւելցնէ թագաւորը:

| Ոչ, վեհափառ Տէր, կ'ըսէ եպիսկոպոսը:

— Շատ լաւ, կը պատասխանէ կայսրը, բոլոր խընդիրքներդ կատարուած են, ոչ թէ մինակ քու վանքիդ, այլ իմ կառավարութեանս մէջ եղած բոլոր վանքերուն տուրքը բաշխեցի, ամէնքն ալ վազըֆ ըլլան, փող մը չվճարեն:

Եպիսկոպոսը չմեկնած, կայսրը կը կանչէ Պօղոս պէյը և կ'ըսէ՝ Սիգտէն մէմնուն օլտում, Պօղոս, չօքճա կէօրիւշաիւմ, տէյիւ մի ե՛ա, աղիդ միւսաֆիր էթ

մուրախիստան պապայը) (գո՛հ մնացի ձեզմէ, շատ տե-  
սակցեցայ չէ՞, լաւ հիւրասիրէք առաջնորդ հայրը) :  
Կայսեր քղացքը հանմբուրելով կը մեկնին և կերթան Մեծ  
վէզիրին : « Մեր վեհափառը ձեզ սիրեց, ես ալ կը սի-  
րեմ՝ », կըսէ վէզիրը : Եւ ի յիշատակ նուէր մը կ'ուզէ  
տալ եպիսկոպոսին, սակեղօծ արծաթէ քթախոտի տուփ  
մը, վրան իր, վէզիրին, պատկերը նաեւ սաթով և սա-  
թով և աղամանդով շիպուխ էր :

Տուփը կուտայ բայց Պօղոս պէյ կ'ըսէ որ լաւ կ'ըլ-  
լար որ լեցուն ըլլար, որովհետեւ եպիսկոպոսը ոչ ծխա-  
խոտ կը դործածէ և ոչ ալ քթախոտ : Պէյին առաջար-  
կին վրայ վէզիրը սակիով կը լեցնէ ու այնպէս կուտայ :

Եպիսկոպոսը և Պօղոս պէյը կուզան տուն : Յով-  
հաննէս վարդապետը եպիսկոպոսին կ'սկսի դանդաղիլ,  
որ իր ուղածները չէ ըսած : Ի՞նչ կ'ըսես, պապանձու՛մն  
Չաքարիայ եղայ, դիտես թէ ես ամէն օր թագա՛ւոր  
տեսած եմ, ինք եթէ չի հարցնէր, այդքան ալ չէի կրնար  
ըսել, կը պատասխանէ եպիսկոպոսը : Պօղոս պէյ կը  
խնդայ, կը հանդարտեցնէ զանոնք ըսելով, որ թագա-  
ւորը նախ պատշաճութենէն աւելի տեսնուեցաւ եպիս-  
կոպոսին հետ և մանաւանդ որ բոլոր վանքերուն տուր-  
քերը բաշխեց, ինչ որ պղտիկ բան չէ, բաւականացէք  
եղածով :

Թագաւորին ներկայանալէն 19 օր ետք մենաշնորհ-  
ներու ֆէրմանը, նշանը և 120 սակի ճամբու ծախք բե-  
րին յանձնեցին եպիսկոպոսին՝ Պօղոս պէյի տունը, ուր-  
կէ ետքը երեք ամիս ալ մնալով Պոլիս, Մայր եկեղե-  
ցին հանդիսաւոր պատարագ մըն ալ ըրաւ և խուռն  
բազմութեան պերճախօս քարոզ մ'ալ խօսեցաւ, և ա-  
պա վերադարձաւ Չէյթուն :

Եթէ եպիսկոպոսը թագաւորին առջեւ չի պապան-

ձէր, կամ անոր տեղը Թախաճեան վարդապետը ըլլար՝  
կարող էր շատ բան ըսել, բայց եղածը եղած էր :

Պօղոս պէյ վանքին շատ մը թանկագին անօթներ  
նուիրած էր : Եպիսկոպոսը ընկերակցութեամբ Պրլտրեալ  
Առաքել աղայի՝ Պոլիսէն Մարաշ հասաւ առօք փառօք :  
Յովհաննէս Վ. Թախաճեանն ալ գաւառները խրկուած  
էր աւետելու վանքերուն՝ տուրքերը բաշխուելու լուրը :

Մարաշ, կառավարութեան պալատին մէջ յոտնկայո  
Ֆէրմանը (\*) կ'արդացուեցաւ և Եպիսկոպոսին ալ մեծ  
յարգանքներ եղան :

Եպիսկոպոսը ժամանեց վանքը ի մեծ ուրախութիւն  
Ֆրնուզցիներուն և Ջէյթուհիներուն : Իսկոյն Գայիշ օղ-  
լու Տէրէպէյին պաշտօնանկ եղաւ 1848ին : Յանկարծ տա-  
րի մը ետքը նոյն պէյը, հեծելազօրքի մը գլուխը ան-  
ցած, թմբուկներ ածելով եկաւ Ֆրնուզ մտաւ նորէն :  
Եպիսկոպոսը ճարահատ Մարաշ գնաց բողոքեց կառա-  
վարիչին, որ պատասխանեց. ի՞նչ ընենք, խաթրիդ հա-  
մար տարի մը անպաշտօն թողուցինք, հերիք է, այդ-  
քան ապաշխարանք կը բաւէ, ան ալ միւսիլման է,  
մեղք է, խղճի դէմ է, նայէ դուն ալ այս ծերու-

---

(\*) Այդ Ֆէրմանին կոթնելով՝ այժմու Ֆրնուզի  
վանահայր Նիկողայոս Եպիսկոպոսը, և թէ իր ձեռնա-  
սուն յաջորդը, վանահայր Բարթոլոմէոս վարդապետը,  
ոչ ցորենի տասանորդ, ոչ ալ աւարի տուրք վճարեր են  
կառավարութեան : Ջէյթուհի գայմադամները քանիցս  
փորձ ըրին այդ տուրքերը առնելու համար և չի կարու-  
ղացան. առաջ տաւարի գլուխ 12 փարա տուրք կ'առ-  
նէին, հիմակ 3 զրշ. է : Վանքը և Ֆրնուզ գիւղը տե-  
սակ մը մենաշնորհեալ են : Այդ Ֆէրմանը ցարդ կը պահ-  
ուի ապահով տեղ մը :

Թեանդ, մինչև Պոլիս գնացիր քու ժողովուրդիդ՝ քու ազգիդ սիրուն, աս ալ մեր մարդարէին Մուհամմէտի ուղղափառ կրօնին պատկանող ժողովրդէն մէկն է, չենք կրնար երեսի վրայ թողուլ, պիտի ապրի, կեամբուներու շնորհիւ» : Ետոյ կ'աւելցուէ. Մուրախիսաժ սայի, էշէկին գաղանձը աթ իչին տիր (իշուէ շահաժը ձիուն համար է), այսինքն կեամբուները վաստկին, թուրքերը ուտեն :

Եպիսկոպոսը, այս վերջի նախատալից խօսքը լսելուն կ'ըսէ կառավարիչ Մուսթաֆա փաշային. «ձեր օրով հայերուն ապրիլը հարամ է» : Յուսահատ ու տրտում դարձաւ Ֆրնուզ, երբ Գայիչ օղլու դեռ հոն էր :

Եպիսկոպոսը իսկոյն Չէյթուն եկաւ և օգնութիւն ուղեց (1849) : Չէյթունցիք լաւ մը պատժեցին այս գաղանք (տես Չէյթ ա ց, ներկ, Ա, մասին մէջ 70) որ ալ խածնելու կարողութիւն չ'մնաց վրան, և եղելութիւնը իսկոյն իմացուցին Պօլոս պէյին, որ աշխատեցաւ նորէն Գայիչ օղլուի խնդիրը կարգադրելու : Քանի մը ամիս ետք Մարաշու կառավարութենէն յանձնախումբ մը եկաւ Գայիչ օղլուէն այսքան տարուան փութք պահանջելու, այնպէս որ Տէրէպէյին մոխիրի վրայ նստեցուցին. նոյն իսկ իր տանը վառելիք փայտը բռնցնելու էշ մը իսկ չունենալով, շալակով կ'երթար լեռներ փայտը կը բերեր : Սակայն որքան որ ալ Գայիչ օղլուն իր պատիժը ստացաւ, դժբաղդարար հանդուցեալ Նիկողայոս եպիսկոպոսին Սուլթան Մէճիտէն բերած ֆէրմանն ալ ազարդիւն մնաց, որովհետեւ վանքն ալ, Ֆրնուզն ալ վանքին վիճակուած տասն և չորս գիւղերն ալ, բոլորը քարուքանդ եղան 1895ի մեծ կոտորածին : Թէև Սուլթան Մէճիտի այդ ֆէրմանը մինչև հիմա պահուած կը մնայ, բայց և այնպէս Բերմանի տրմանի իստի. հողելոյս Տէլիքէշիչ Տէր Օհանի նշանաւոր խօսքն է այս :

Վերոյիշեալ Տէրէպէյիներէն ոչնչացածներն են հետեւեալները .

|                  |       |                |
|------------------|-------|----------------|
| 1. Գօզան         | օղլու | Տօրոս լեռէն    |
| 2. Չատրըշը       | »     | Սիսէն          |
| 3. Գայիշ         | »     | Իշ-նահիլէն .   |
| 4. Կէօվահմէա     | »     | Սնատրընէն .    |
| 5. Ջիֆար         | »     | »              |
| 6. Ապաղ          | »     | »              |
| 7. Ֆէթղահ        | »     | Կեալուր տաղիէն |
| 8. Ալի պէքիր     | »     | »              |
| 9. Հաճի էօմէր    | »     | »              |
| 10. Կիւջլիւ հալլ | »     | »              |

Ասոնք կործանեցան և բնաջինջ եղան շնորհիւ Սուլթան Աղիզին : Մնացածներուն հետ Չէյթուէնցիք միշտ բարեկամ կը մնան . իրենք ալ երբեմն կուզան Չէյթուէն երգումներով և խոստումներով բարեկամութիւն կը հաստատեն : Սակայն պատերազմի ժամանակ կը միահան թիւրք բանակին , երբ յաջողութիւնը Չէյթուէնցիներուն կողմն է , նորէն կը սկսին քծնիլ և ստախօսել . ելով թէ ինչ ընենք մենք , շէինք ուզեր կուտիլ , թագաւորնիս մեզ զօնով բերաւ :

Ձ

ՄԱՍՆԱԻՈՐ ԴԷՊԲԵՐ

Կ Ե Ս Ա Ր Ի Ո Յ Ո Ի Խ Տ Ա Ի Ո Ր Ք

Ժամանակով 15 Չէյթուէնցի կեաարիոյ Ս . Կարապետի վանքը ուխտի գնալով՝ վերադարձին թուրքերը առնոցմէ իբր «Խարաճ» (տեսակ մը գլխահարկ) վաժխու-

հական զրշ . կը պահանջեն : Ասոնք կառավարութեան  
կը բողոքեն , ըսելով որ Սուլթան Մուրատէն Ֆէրման  
ուենինք այդպիսի սուրքերէն ազատ մնալու համար :  
Կառավարութիւնը մտիկ չընեն , « դուք ազատ էք Ձեր  
երկրին մէջ » , կ'ըսէ , « այս տեղ կեսարիա է , հայտէ վը-  
ճարեցէք » : Այն ատեն կարաւանապետ Շէյխան Չէքի-  
ճեան Մըխսը Եփրեմ ազան ըսաւ , լաւ , թէ մենք ալ  
կրցանք կրկնապատիկը կ'առնենք փոխարէն : Այս յան-  
դուգն խօսքը կառավարութիւնը իրեն նախատինք հա-  
մարելով , ասոնք կը բանտարկէ , միայն ասոնցմէ մէկը ,  
Պուլմուսեան Եգիա ազան , ինչպէս կը լինի՝ ազատ կը  
մնայ : Բարեսիրտ կեսարացի հայ մը այս մարդը իւր  
տունը կը տանի միսիթարելու : Մարդը տեսնելով կեսա-  
րացու փառաւոր դարդարուն տունը՝ կը զարմանայ և  
կ'ըսէ , « Ազա , դուք այսպէս ճոխ հարստութեան մէջ էք ,  
ապա ինչո՞ւ թողուցիք որ մեր ազաները բանտարկուին :  
Միթէ մեր վրայ չէ՞ք գլխար , չէ՞ որ մենք ալ հայ ենք ,  
արենակից ենք , վեց օրուան ճանապարհ քշեր , եկեր  
ենք ձեր վանքին ուխտ ընելու համար , այսպէ՞ս է միթէ  
հայութիւնը , եղբայրութիւնը » :

Այս խօսքերուն վրայ կեսարացին մի քիչ մտածե-  
լէն յետոյ ըսաւ , դուն հանգիստ եղի՛ր և ճաշդ ըրէ ,  
տեսնենք վաղը կ'աշխատինք , ինչ որ կրնանք ընել  
կ'ընենք , սակայն այն ալ ըսեմ քեզի որ դու մի զար-  
մանար մեր այս հոյակապ տան շքեղութեան և արդ ու  
զարդի վրայ , վասն զի ձեր աղքատութիւնը մեր այս  
ճոխ հարստութենէն հազար անգամ նախամեծար է , և  
դուք հազար անգամ մեզմէ ազատ և երջանիկ էք , ին-  
չու որ ունիք թէև քիչ՝ ձերն է և դուք ձեր արդար  
բազկի ուժով և սուրի ու հրազէնի միջոցաւ կը պաշտ-  
պանէք ձեր կեանքն ու ինչքը » : « Կը տեսնե՞ս , յարեց  
կեսարացին , այս մուշտակները , գեղեցիկ ոսկեթել վը-

առոցները և ծածկոցները, ասոնք բոլորն ալ գէշ են, քանի որ օտարը միշտ կ'անարգէ, մինչև իսկ կը բռնահարարէ մեր ընտանեկան պատիւը: Մենք այստեղ մեր հարսնիքներն անգամ գողի պէս գիշերով կը կատարենք: Իսկ թէ մեր ննջեցեալներու վիճակը ինչ է՝ հետեւեալ պատմութիւնը կը ցուցնէ իրողութիւնը: Որքան կը յիշեմ Սուլթան Մուսթաֆա Բ.ի (1695) օրէն մինչև Սուլթան Մահմուտի ժամանակ թէ մեր և թէ Յունաց ննջեցեալները կը թաղէին տեղական Միւֆթիի հրամանով: Այդ հրամանագրի օրինակը ստացուած է եղեր այն ատեն սապէս:

Այդ հրամանագրին պատճենը սա է:

Լապիսի լիպարը գաթրանի, համիլի թաճը Շէյթանի, Մահրուսի տէրկեանի բապպանի, պէտ էսաս գօճա փափաղ,

Իննա օլունուր քի, Կիրուհի քէֆէրէի, մէքրուհէնիզտէ ֆիլան քիւֆէրանըն օղլու, ֆէլան քէֆէրէ, միւրա օլմըշ օլտըղընտան, լաշէի մէքրուհէսինի թիւրապ տախի գապուլ էթմէզ իսէտէ, նէ չարէ, նէ չարէ, նէ չարէ քի, թէէֆիւնիւ միւհիւքէսի օրթալըքտան գալգմասը իչիւն, Շէրին թըշարըսընա կէօթիւրիւպ պիր խէնտէկ գաղուպ իչինէ պրրագուպ իւղէրինէ թօփրաքլայիւպ չըյնայուպ, թէփէլէյուպ կէլէսին գօճա փափաղ:

Միւֆթի Էֆենտի:

Ղաթրանի (խիստ սև) պէս տարազ հագուող, սատանայի գլխարկ կրող, Աստուծոյ ասլարանքի դռնէն զրկուող, վատ սկզբունքի տէր, պառաւեալ երէց:

Կը ծանուցուի որ Ձեր հայհոյիչ գարշելի ժողովըրդէն, այս ինչ հայհոյիչի տղան այն ինչ հայհոյիչը սատկած ըլլալով թէև գարշելի պիղծ դիակը հող անգամ



չրնդունիր, ինչ օգուտ, ինչ օգուտ, որ այս զղուելի  
գարչահատու թիւնը մէջտեղէն վերցուելու համար քա-  
ղաքէն դուրս հանէք, խորունկ փոս մը փորել տաք,  
մէջը ձգէք, վրան հողով ծածկէք, լաւ մը տրորէք,  
կոխկռտէք ու գաք, պառաւեսալ երէց) :

Կնիք Միւֆթիի.

Մեռիլ թաղիլօ հրամանագիր(\*)

Թուրքին գէգէվիւրնուն առլթան Մաւստաֆաին  
էօրէօլը Քրիստիոնէ նէօղնիւն թաղիլօ համօր Միւֆթիւցնէ  
հրամանը թուխտ մը կառնրվէր հասցօ կօլթաղվէր, էաս  
հրամանը թուխտը, էան վախտըն կունտէն ուղուրկուվիր  
էր գինձօ գրվիլէօլ :

Ղաթրօն կիմի լաղրը հազնէօղ, Սատանի թօքը  
գլօխը շալկէօղ, Աստուծոյ ապարանքին գըռօնը գրկը-  
վէօղ, վօտ բնարանը տէր հէլվիւր իրէց : Անհալօտ գար-  
չելի ժողովուրդըն մէջէն ֆլօն, անհալօտ իւշիւցքին տէ-  
ղէն, Վլօն անհալօտը սատկիլօն համօր, էօնիւր փիս  
լէշը հիւղը պիլօ չէ բնդունը իսէ տէ՛ չի՞րք էնիմ, չի՞րք  
էնիմ, չի՞րք էնիմ, մունտօն փիս հիւտը մէր մըջէն վըր-  
ձըվիլիլօն համօր, Քաղաքէն դօրս հանէք խանտոկ մը  
փիրէք էօնիւր մէջը բձքէք, վիրէնէ ՚հիւղէօլ ծածկէք,  
ուտէօք կէխ'ըռտէք թըրըտէք ու իգէք, հըլվիւր իրէց :

Միւֆթիւ Էֆենսի

Ահա, սիրելիս, միւֆթիի տուած հրամանագիրը մեր  
հնջեցեալներու թաղման համար. միայն ասկից մի քա-  
նի տարի առաջ Կեսարիոյ հայերը Պեղճեան Յարուժիւն  
Ամիրայի միջոցաւ կարողացան արգիլել տալու 1808ին

(\*) Զէյթունի լեզուով :

Սուլթան Մահմուտ Բ-ի հրամանաւ այդ գարշելի հրամանագիրը: 1693էն սկսեալ մինչև 1808 տներ է այդ անարգական գրութիւնը, սակայն դեռ մինչև այսօր թուրքեր կը շարունակեն ծաղրել, անարգել, հայնոցել և քարկոցել մեր ննջեցեալներն և մեռելաթաղ քանանահերը, ըսելով, «կեալուր կէտէրիկի կիտիյօր, հա՛ (անհաւատի սատկած կերթայ): Ճերմակ մօրուքաւորներօխանակ յանդիմանելու զանոնք, հա՛ հա՛ կը ծիծաղին<sup>(\*)</sup>: Եղիա աղան վերոյիշեալ հրամանագրի օրինակը իւր հետ Ձէյթուն կը բերէ և հրապարակ եղած տեղերը կը կարդայ, ուր Ձէյթունի բարբառով թարգմանուելով շատերը անդիր կը սովրին, ուրիշց վերցուած է վերոյիշեալ պատճէնը: Ս.յնուամենայնիւ զառնանք մեր բուն պատմութեան: Իրաւօր, կեսարացին կ'աղատէ Ձէյթունցիները, որոնք ճանապարհ կ'ելնեն և «էգրէկ» գիւղի մօտ կը պատահին, խումբ մը կեսարացի թուրքերու, մօտաւորապէս թուով 50 մարդ՝ գլօխնին կանաչ ու ճերմակ փաթաթուած: Ձէյթունցիները փախա գանակները (տեսակ մը դաշոյն) պատեանէն կը հանեն շողշողուն կերպով, և խարճի թուղթեր անոնց յանձնելով կըսեն, առէք թուղթերը, մենք ասիկա կարդալ չենք գիտեր. թուրքերէն գրուած է: Թուրքերը կը պատասխանեն. «Չորպաճինեյ, մենք միւսիւլման ենք, այս թուղթերը մեզի չեն վերաբերիր, ասոնց «խարաճ քեաղըտը» կըսեն: Ձէյթունցիք կը պատասխանեն. մեզի ալ չի վերաբերիր մենք Ձէթունցիքս գուլաղը թողլու (Փոշոտ ականջ)

---

(\*) Ձէյթունցիք ընդհակառակն թուրք մեռեալներու հանդէպ ալ քարաքավարութեամբ կը վարուին և շատ անգամ դրացիներուն կ'երթան միսիթարելու, ըսելով, Սլլահ՝ բահմէթ էյլէսին ճանընա (Աստուած ողորմի հող գիին) և այլն:

կեալուր չ'ենք» : Վերջապէս հայերը որ ամէն մէկ թուղթը գնածէին ՅՕական դահլիճանի, վաթսուներն վրայ վաթսունն ալ շուք աւելցնելով՝ 120ական դրշ. պահանջեցին թուրքերէն, պատուիրելով որ այդ թուղթերը տանին իրենց կառավարութեան յանձնեն և փոխարէնը ետ վերցնեն իրենց տուած դրամները : Մենք իրենց զրուցեցինք. պիտի վճարեն Ձեզի այդ ստակը՝ ըսին Ձէյթուցիք : Թուրքերը կըսեն՝ լա՛ւ, բայց մենք ստակ չ'ունինք, ունեցած ստակնիս տալով «էգրէկ» գիւղէն դարի գնեցինք, ա՛նա մեր բնաները դարի են՝ եկէք նաչեցէք, ստակ ունինք նէ առէք, հելալ բլլայ ձեզի պէս կարիճներուն : Ձէյթուցիք տեսան որ իրաւ ստակ չկայ, մի ջորի գատեցին կարաւանի մէջէն դարիի բնով, և իրենց հետ բերին Ձէյթու, ջորին աճուրդի հանեցին, 2) ոսկիի ծախսուեցաւ, որ 15 մարդ իրենց մէջ բաժնեցին խարածի տուած ստակի փոխարէն : Այն թուրքերը իրաւ գնացեր են կեսարիա և այդ խարածի թուղթերը ներկայացնելով կառավարութեան առեր են իրենց մնասը : Այնուհետև որքան որ Ձէյթուի հայերը կեսարիոյ և այլն կողմներ կ'երթային, ոչ միայն խարածի թուղթ չէին ուղեր, այլ նոյն իսկ անցադիր չէին հարցներ անոնցմէ, և մինչև այսօր կեսարիոյ թուրքերը կըսեն. «այս կեալուրներու հետ քիչ մը «Եալաշ» (մեղմ) վարուելու է, քանի որ մեր գործերը միշտ այն կողմերը և Հալէպի հետն է» :

Մինչև ցարդ կը խօսին կեոարացիք, թէ՛ հայ թէ՛ թուրք՝ «Ձէյթուելուար խարած քեաղըտընը օսմանլըարտ ճէպրի սաթարլար» : (Ձէյթուցիք գլխահարկի թուղթը օսմանցիներուն բռնի ծախսեցին) :

Անգամ մըն ալ Քիթիչեան Իսէփ (Յովսէփ) անունը  
Չէյթունցի կտրիճ մը երեք չորիով Այնթապ գացած և  
իր գործը տեսնելէ յետոյ Չորիները սապօնով բեռցու-  
ցած՝ մեկնելու վրայ էր, երբ կեալուր մէյտանը կոչ-  
ւած հրապարակը չորս ոստիկաններ մարդուն Չորիները  
կառնեն և կը հրամայեն որ Հալէյ գնայ կառավարու-  
թեան ձրի իրեղէններ փոխադրելու համար: Չէյթունցին  
կ'սկսի աղաչել պաղատիլ, ըսելով որ կին և զուակներ  
ունի և թէ մինչև Հալէյ երթալ գալը ամիս մը կը տևէ  
և ինք կը մնասուի: Ոստիկանները կ'սպառնան «այս-  
տեղ Այնթապ է, ձեր Չէյթունը չէ», կ'ըսեն, «կամայ  
ակամայ հնազանդելու ես կառավարութեան հրամանին»: Չէյթունցին  
կը հասկնայ որ աղաչանք պաղատանք օ-  
գուտ չունի, կը քաշէ Փալան (երկայն դաշոյն մը) «էր  
եկիտէ տառ եէր օյմաղ» (արի կտրիճին նեղ տեղ չըլ-  
լար) ըսելով դանակին բուժ կողմով ոստիկաններու դըլ-  
խին մէյմէկ կ'իջեցնէ և գետինը կը փռէ զանոնք:

Այս գէպքին ներկայ եղող ոչ մէկ թուրք կը միջա-  
մըտէ, և Չէյթունցին ազատ համարձակ Չորիները առ-  
ջեւը ձգած քաղքէն կը մեկնի: Չինւորները քիչ յետոյ  
յրենց նուազած վիճակէն կ'սթափին և կ'սկսին փնտր-  
ուել Չէյթունցի կեալուրը: Երբ կ'իմանան որ Չէյթուն-  
ցին արդէն գացեր է, կը վազեն կառավարութեան կը  
պատեն եղելութիւնը: Քայմազամը իսկոյն հրաման կը-  
նէ տասը հեծեալ զինւորներու, որպէս զի երթան բռնեն  
բերեն: Ոստիկանները ձիարշաւ կը հասնին Սամ քէօյիի  
մօտ և զայն բռնելով այդքան հեռուէն ետ՝ Այնթապ  
կը դարձնեն: Քայմազամը կը հրաւիրէ դատի, միւֆ-  
թի, թիւրք և հայ երեւելիները, կանչել կուտայ նաեւ  
ծեծ ուտող ոստիկանները և Չէյթունցին, այս վերջինին  
սը հարցնէ՝ «դո՞ւն ծեծեցիր ոստիկանները» . — «Չէ, ես  
չէի ծեծողը» . կը պատասխանէ Չէյթունցին, «այլ, սա

մէջքէս կախուած փալա դանակն էր» : Գայմազամը և ժողովականները հա՛, հա՛ կը խնդան : — է, այս մարդիկը իրենց Գաւարուբայով փոխադարձաբար քեզի չի զարկի՞ն, կը հարցնէ Գայմազամը, — Ես զիրենք մէկ դանակով չըրախ հանեցի, կը պատասխանէ Չէյթուհին, և ի՞նչպէս կարող էին դիմադրել Չէյթուհիի մը. երկրորդին եթէ մնար, դանակին բերանը կը դարձնէի և մեռած օրերնին է : — Ինչո՞ւ առաջին անգամ սուր բերնովը չի զարկիր. — Մենք կուոյ ատեն դանակին սուր բերնով զարնելը քաջութիւն չենք սեպեր, այլ վախկոտութիւն :

Հարցաքննութիւնը լմնալէն ետքը՝ Գայմազամը ափէրիմ (կէցցես) Չէյթուհի, կ'ըսէ, առ քեզի ոսկի մը նսւէ, և դնա բարով խաղաղութեամբ : Յետոյ դառնալով քովիններուն կ'ըսէ. քաջ մարդուն, ինչ ազգ ալ ըլլայ՝ անխտիր պատուելու ենք» : Անմիջապէս ծեծ կերող չորս ոսկիկաններուն համազգեստները հանել տալով պաշտօնանկ ըրաւ զանոնք : Այս Գայմազամը կը կոչուէր Սաարգ էֆ. Յարդ կը խօսուի այս Բիթիչեանի նըշանաւոր խօսքը «էր եկիտէ տառ եէր օլմազ» :

\*  
\* \*

Օր մըն ալ Խզդրդեան Մըխսը Վանէսը (Օհաննէս), նշանաւոր կտրիճի մը, երկու ջորիներով Եարփուզ գընալու ատեն Չավտար պէլ ըսուած տեղը չորս հատ Ղաթաթութցի աւազակներ գէմը կելլեն և կըսեն որ Թեւալիմ (անձնատուր) ըլլայ : Անձնատուր ըլլա՞լ, կը պատասխանէ Չէյթուհին. ա՛հաւասիկ հրացանս՝ ուղղակի քիւլահիտ, չերերաս. կրակ կ'ընէ և աւազակին գլխարկը կը թռցնէ : «Ե՛վ դուք», կ'աւելցնէ անվախ Չէյթուհին «իմի կ'ըսեն նշանաւոր խրզդրդըն քէլի (ճաղատ). ձեզ պէս աւազակներո՞ւղ մնացեր է զիսր կողոպտել. հեռա-

ցէք, հիմակ գիտցէ՛ք, ամէնքնիդ ալ մէկիկ մէկիկ գըն-  
դակէ կ'անցնեմ հա՛ : Աւազակները սարսափահար կը հե-  
ռանան և հերոսը կը շարունակէ իր ճամբան :

\*  
\* \*

Նոյն Չավտար պէյը Մալախեան Փանոս աղան Պէ-  
րիթ լեռը (\*) իր երկաթի գործարանը գացած ատեն երեք  
աւազակ առջևը կ'ելլեն : Փանոս աղան ձիաւոր էր և ջո-  
րիներուն չամիչ, պաստեղ, շարոյ բնոցած, իր բանւոր-  
ներուն ընծայ կը տանէր : Երբ կը տեսնէ որ աւազակ-  
ները իրեն սավառակա կըսեն՝ վարպետ մարդ խոհեմու-  
թեամբ մը ձիէն վար կ'իջնէ և աւազակները կը կանչէ,  
«աղաներ բազդը ձերն է եղեր, բանւորներուն տարած  
ընծաները ձեզի թող ըլլայ : Այս ըսելով բռնները կ'իջե-  
ցնէ և բանալով անոնց առջև կը փռէ ամէն տեսակ ու-  
տելիքներ : Աւազակները կը նստին, ինքն ալ հետերնին  
քէյֆ կը սարքեն :

Աւազակները ուրախ ուրախ կ'ուտեն և կը դովեմ  
կետվուր չորպաճիին խելացիութիւնը որ առանց դի-  
մադրելու անձնատուր եղաւ : Մըխսը Փանոսը Գէօրօզ-  
լուի հէքեաթը սկսաւ պատմել և պատուիրեց աւազակ-  
ներուն որ իրենք շարունակեն ուտել մինչև հէքեաթը  
լմնցնէ ինք . մէջընդմէջ Փանոս աղան խաղեր ալ կը  
կանչէր : «Աֆէրիմ, չորպաճի», կըսէին լեռան հիւրերը .

---

(\*) Սոյն լեռան ձիւնը մշտապէս է, տարուէ տարի նո-  
րը հինին վրայ դիզուելով կորդնտի . ճեփ ճերմակ է որդ-  
մը՝ մեծութիւնն ալ ճկոյթ մատի կիսուն չափ է : Չէյ-  
թունցի մետաղահան գործաւորները մեծկակ կոնքի մը  
մէջ ջուր լեցնելով այն որդերէն մէկ հատիկը կը դնեն  
ջուրին մէջ որ անմիջապէս կը ցրտանայ և համով ալ է :  
Որդին շարժիլը հաղիւ թէ կը նշմարուի :

«ինչ աղէկ մարդ ես եղեր, ձայնդ ալ շատ քաղցր է» : Մըխասին ինքզինքը լաւ մը կշռելով յանկարծ բազկի ահագին ուժով մը երկուքին ճակատը իրարու զարնելով չա՛թ խօսեցուց : Երկու աւազակներն ալ ուշաթափ ինկան, երրորդը փորձեց փախչիլ, ան ալ գնդակահար անշունչ ինկաւ և մեռաւ : Երկու ուշաթափները լաւ մը ծեծեց ու ծեծեց, մինչև որ սարսափահար «աման չորսլաճի» սկսան աղաչել պաղատել, աման խրխտիան աղա, խնայէ մեր հոգիին, կ'ըսէին : Մըխասին լաւ ծեծ մը տալէն ետքը կողոպտեց զանոնք, բայց շսպաննեց, այլ բաւականացաւ անոնց մէյմէկ ականջները կտրելով և հրամայեց որ իրենց գեղը երթան պատմեն տեսածներն և վաղ անցնին այլ եւս Զէյթունցի կողոպտելու գաղափարէն, աւելցնելով, «ինձի Մալախօղլու Մըխատէսի Փանոս աղա կ'ըսեն, գացէք այսպէս զրուցեցէք» :

Փանոս աղան զէնքերը, լաթերը բռցուց ձ'ուն ու իր ճամբան շարունակեց : Այդ զէսքին ատեն Մըղտեսին 60 տարեկան, շատ քաջառողջ հսկայ ըմբիշ մըն էր, որուն մօրուքին վրայ դեռ ճերմակ մաղ չէր տեսնուեր : Տեսաւ 1862ի Ադիգ փաշայի պատերազմը ուրկէ ետքը մեռաւ բնական մահով 87 տարեկան հասակին մէջ :

\*  
\* \*

1840 թուին Շամը Բէշիշեան Տ. Մարգար, Պօղպոյսի թաղի Ս. Յովհաննէս եկեղեցու քահանաներէն, Եարփուղ գացած էր : Այդ ժամանակ այդ տեղի թիւրք հաճաղաներու հարսնիքը կը կատարուէր, որի առթիւ մեր քահանան ալ իրրեւ պատուաւոր Զէյթունցի հարսնիքի կը հրաւիրուէր : Հարսնիքին ի պատիւ շուկային հրապարակ ըմբշամարտութիւն տեղի կունենայ, բաղմութիւնը, ըսես, ասեղ ձգելու տեղ չիկայ : (Եարփուղ Զէյթունի հս. 12 ժամ է, ունի 6-700 տուն, որուն 100ը

հայ, ունին դպրոց և եկեղեցի) : Տէր Մարգարը՝ որ յարգանքով Հաճաղաներու կրսէ որ, եթէ ամօթ չէք սեպեր, ինքն ալ փէյիլիվանութեան ելլէ : Թիւսքերը սիրով կ'ընդունին, «քաջութիւնը, կ'ընն, ինչ ալ ըլլայ՝ պէտք է պատուել» : Կ'առաջարկեն Տ. Մարգարին որ ըմբիշներու եղով օժած կաշիէ զգեստը հագնի և իր վրայի վերարկուն հանէ : Քաճանան կը մերժէ ատոնք բոլորը : Այդ տեղ կը համբաւաւոր փէյիլիվան Զօբալինին օղլու Մէյէմէտ՝ որ իւղած կաշէզգեստները հագած հայ տէրտէրին կը մօտենայ և ծափիկ զանելով «պտտէ, նայիմ, քոշիշ էֆէնտի» կրսէ : Քաճանան կը պատասխանէ, «տօլան, տօլան, եանըմա կէլ» (սլլտտէ պլտտէ, քուլա եկուր) : Թիւսք ըմբիշը երբոր կը մօտենայ քաճանային, տէրտէրը սաքէն բռնածին պէս՝ եւ Սուրբ Փրկիչ, ըսելով, վեր կրպակներուն երգիքը կը նետէ : Իսկոյն ամէն կողմէն կը պոռան, «Նաշա, չօք եաշա, Զէյթունլու «քէշիշ պապա» : Հարսանիքի տէրը, փեսային հայրը, 20 ոսկի արժող բաճիվան ձի մը կը նուիրէ և նոր ձեռք մըն ալ քաճանայի հագուստ, ան ատեն Թիւսքերը կըսեն, «Զէյթունուն քէշիշի պիլէի իկի» օլուր» : Ծերերը կը պատմեն որ այս քաջարի Տ. Մարգար քաճանան Շուղուր գետի 33 մէթր բարձր կամուրջի վերաշինութեան ատեն, առանցին գերանի մը վրայէն հողաթափով մէկ կողմէն միւսը անցեր է : Տ. Մարգարը վախճանեցաւ 111 տարեկան հասակին մէջ :

\*  
\*\*

1843 թուին անգամ մըն ալ, Չորս Զէյթունցիներ, թաշճը օղլու Միսը Ադօմ (մահտեսի Ադամ), Մէթիւս օղլու Մըխսը Գէօիւրգ (Մաթոսեան հաճի Գէորգ), Ղատէմ օղլու մըխսը Սարգիս, Ղարաւլասլ օղլու Վակիմ (Յովակիմ), ընկերովի ձմեռ ատեն Չուղուր օլա կ'երթան



(Չուգուր օվա՝ Չէյթունի հարաւ-արեւմուտքը 40 ժամ հեռի կիլիկիոյ դաշտին անունն է) առեւտուր ընելու, չորսն ալ մէյ մէկ զոյգ ջորի և չորս օր գնալիք ճամբայ ունին: Երկրորդ իջեւանին, Հովտու լեռան վերջացած տեղը, որ Չուգուր օվան կ'սկսի, Թէճիրլի աշիրէթին էլ օղլու աշիրէթ Թիւրքմէններուն տէրէ պէյի Գարամէ՛մէտ օղլու Տիւստէ՛մ աղային տունը հիւր կ'ըլլան, և նոյն տեղը կը յաջողին իրենց առեւտուրի գործողութիւնները կարգադրել: Բայց Տիւստէ՛մ աղան բացակայ ըլլալով, աղային Խարունը կը հիւրասիրէ զանոնք իր օպային մէջ, (վրանակոյտ):

Չէյթունցիք այլ ևս հեռու երթալու պէտք չեն ունենար և տեղնուտեղը գործերնին տեսնելով, կը բնահասն ջորինին և մնաս բարովի կերթան խաթունին: Բայց, յանկարծ խաթունին «եւէգէ հիւղին մէջ», կը նշմարեն տասը զինուած անծանօթ Թիւրքմէններ: Խարունը պատմէ կը պատմէ հայերուն որ այդ Թիւրքմէնները իմացած ըլլալով իրենց Չէյթունցի ըլլալը՝ կողոպտելու եկեր են զիրենք և ջորիններուն մէջէն ճերմակ ջորին որ 1200 դահեկան կ'արժէր, կ'ուզէին առնել, բայց խաթունը խարած էր Թիւրքմէնները ըսելով որ անոնք Չէյթունցի չեն, այլ՝ Հաճընցի: Չորս Չէյթունցիները աս լսելով, միաբերան կը պոռան «Գրու գաթըր տա կիտէրսէ տէ Չէյթունը օղլու Չէյթուլը իզ» (ճերմակ ջորին ալ երթայ նորէն մենք Չէյթունցիի դաւակ ենք) և խաթունին կը հասկցնեն անուշ կերպով որ զիրենք ազատելու համար, իրենց ուր տեղացի ըլլալը կեղծելը չեն ընդունիր: «Գրու Գաթըրտա կիտէրսէ Չէյթունը օղլու Չէյթուլը», ցարդ կը գործածուի սոյն նշանաւոր խօսքը Չէյթունի մէջ, նաև Մարաշ ու եւն, կողմերը: «Ասլընը ինքեար իտէն հարէ՛մզատէ տիր» (Իր

ծագումը ուրացողը անպիտան է) : Յետոյ դառնալով  
աւազակներուն կը հարցնեն — ի՞նչ պատճառով ճերմակ  
ջորին առնել կ'ուզէք : Աւազակները կառարկեն որ ան-  
ցած ասրի Եայլա (հս. հովիտ) չու ընելու ատեն , Ձէյ-  
թունցի Ղըրաւֆիլ օղլու քէօսէ Մըխսի Փանոսը , իրենց  
Չ) ոսկի արժող ուզար բռնի առած է Հայթա դըրան  
ըսուած տեղը . (Ձէյթունէն 6-7 ժամ հեռի) : Ապա կը  
հարցնեն Ձէյթունցիք , ո՞ր օպա էն էք . — Ղուրդլար  
(Գայլ) օպայէն . — շատ աղէկ կ'ըսեն , հայերը , դուք  
գայլեր էք եղեր , իսկ մենք Ձէյթունցի ասլաններէն  
ենք (առիւծ) . ուրեմն ի՞նչպէս գայլը առիւծին հետ կը  
համարձակի կռուի բռնուիլ : Այստեղ եթէ դուք համար-  
ձակիք մեր ճերմակ ջորին առնել՝ ասնախրուհիին ար-  
ժանապատութիւնը վիրաւորած կ'ըլլաք . վաղը մենք  
ճամբայ կ'ելլենք , հրամեցէք ճանապարհին մեզ կողոպտե-  
լու , եթէ յաջողիք՝ կողոպուտանիդ հէլալ ըլլայ . մենք ,  
կ'աւելցնեն հայերը՝ պատերազմի կայօտը կը քաշենք և  
և վառօղի հոտը շատոնց է մեր քթին չէ դարկած :  
Թիւրքմէնները , նայելով անոնց վրայ , «կեամվուրներ ,  
ձեր աչքէն շէք (փորձանք) կը վաղի , մենք կը հրաժա-  
րինք մեր դիտաւորութեան , գնացէք խաղաղութիւնով» ,  
կը պատասխանեն ու կը մեկնին :

Միւս օրը հայերը ճամբայ կ'ելլեն դէպի Ձէյթուն և  
օպայէն վեց ժամ հեռացած էին , մէյ մըն ալ նոյն թիւրք-  
մէնները ձիերու վրայ նստած դաշտին մէջ ասոնց առջևը  
կը կարեն : «կեամվուրներ , կ'ըսեն հայերուն , երէկ խա-  
թունին (տիկին) քով գոռող գոռող կը խօսէիք , հիմակ  
«Ալլահըն պօլ եէրինատէ ինսանըն տառ եէրինատէ» (Աստու-  
ծոյ առատ տեղը մարդոց սակաւ տեղը) կը գանուիք ,  
ուրեմն կողոպտուեցէք և ջորինիդ մեզ յանձնեցէք : Երէկ  
մինակ ճերմակ ջորինիդ պիտի առնէինք , այսօր ամենքն  
ալ մեզի յանձնելու էք» : Ձէյթունցիք , խորամանկօրէն

կ'ըսեն, «չատ աղէք, բախար ձերն է, համբերեցէք, կաշիի բեռները քակենք ու ջորիները ձեզի յանձնենք, վասն զի դուք միւսիւլման ըլլալով, չենք ուզեր որ ձեր ձեռները պղծուին խողի կաշիներէն» : Թիւրքմէնները իրաւունք կուտան : Չէյթունցիք բեռները քակելով անմիջապէս իրարու վրայ կը դիզեն և ամուր մարտկոց մը կը շինեն, որոնց կտեւէն կը սկսին կրակ ընել և տասը ճիւղերներէն ութը կը սպաննեն ու երկուքն ալ կը վիրաւորեն : Հայերուն կողմէն Յովակիմի աչքը միայն կը վիրաւորուի պղախկ արճիճով, որ թէև լաւացաւ յետոյ, բայց միակայնի մնաց : Չէյթունցիք աւազակներուն տասը ձիերը և զէնքերը առնելով խրոխտանալով Չէյթուն դարձան :

Ճ.

1844ին Քիլիս քաղաքի (Չէյթունի հարաւային կողմը 42 ժամ հեռաւորութիւն ունի) իշխանները Պայրամեազ, և Սիլահան, Չէյթունի Առաջնորդ Տ. Սարգիս Եպիսկոպոս Սանդքորեանի իրենց ստորագրութիւնով նամակ մը կը գրեն և յատկապէս մարդու մը ձեռքով կ'ուղարկեն անոր : Առաջնորդը նամակին պարունակութեանը վերահասու ըլլալէ յետոյ, իշխանները վանքը կը հրաւիրէ և անոնց կը կարգայ նամակը ուրուն մէջ կ'իմացնէին որ կիւրիւնցի Սէֆէր անուն հայ մը իր ընտանիքով տաճկցեր է. ընտանիքը կը բաղկանար հինգ հոգիէ երկուքը տղայ, Թօլօ (Թորոս) և Ակօ (Յակոբ) և երկու հարս : Կառավարութիւնը Սէֆէր էֆէնտիին Նայիպուքեանի (շատաւորի փոխանորդ) պաշտօն տալէ ետքը Յատիմէ անուն այլազգի մը աղջկան հետ կ'ամուս-

նացնէ : Նամակը կը խնդրէր առաջնորդէն որ այս ուրա-  
ցողները հրաժարեցնեն իրենց նոր կրօնքէն : Իսկոյն չորս  
իշխաններու , Եպիսկոպոսին , Տէլի Բէշիչ Տ . Օնանի և  
Պալաճեան Մահտեսի Հալւոր Աղայի հրամանով տասը  
կտրիճներ Բիլիս դրկուեցան , քսան ջորի նեաերնին , որպէս  
զի ուրացեալ ընտանիքը սղջամբ Ձէյթուն բերին : Տաս-  
նեւհինգ օրէն կտրիճ երիտասարդները սղջ առողջ բերին  
այդ ուրացող ընտանիքը և յանձնեցին Սրբաղանին : Ա-  
ռաջնորդը ժողովուրդը վանք հրաւիրելով , անոնց ներ-  
կայութեան , Սէֆէր էֆէնտին և Փատիմէն հանդիսաւոր  
կերպով մկրտեց և Փաթիմէի անունն ալ Մարիամ դրաւ .  
մկրտելէն յետոյ էրիկ կնիկ նորէն պսակեց հայ ծէսով  
ու այսպէս վերջացաւ խնդիրը :

Այս տիկինը շատ ջերմեռանդ քրիստոնեայ տիրու-  
հի մը եղաւ : Ասոնց սերունդը կը բնակի այժմ Եաղուպ-  
եան թաղին մէջ և կը կոչուին Բիրքճան կամ Թէրզեան  
կտրիճներ :

Թէ ինչպէս Ձէյթունցի տասը քաջերը յաջողած էին  
Բիլիսէն փախցնել Սէֆէր և իր ընտանիքը , պատմենք  
համառօտիւ :

Ձէյթունցի քաջերը նախապէս քսան ջորիները եր-  
կաթով և պայտով կը բեռնաւորեն իրր թէ Բիլիս տա-  
նել ծախելու համար : Այնտեղ ծախելնէն և պանդոկին  
հետ հաշիւներնին մաքրելէ յետոյ կը ձեւացնեն թէ  
ալ կը մեկնին և քաղքէն դուրս կ'ելլեն . բայց օր առաջ  
ուրացողին տունը տեղը լաւ մը լրտեսեր էին : Երբ կէս  
գիշեր կ'ըլլայ և ամէն մարդ խոր քնոյ մէջ , տասը ե-  
րիտասարդները իրարու վրայ սանդխածեւ բարձրանա-  
լով տանը պարիսպին վրայ կ'ելլեն ուրկէ մէկը չուանով  
կ'իջնէ բակը և ձայնձուռն չը հանած՝ տան բակի սան-  
դուխը կ'երկնցնէ ընկերներուն , որոնք եւս վար կ'իջ-  
նեն : Ուղղակի կը դիմեն տանը դուռը և տաճկերէն

լեզուով կ'ըսեն. «հրդեհ կայ, դուռը բացէք, ձեզ ազատելու եկեր ենք» : Ներսիսները թուրքերէն լեզուով այդ խօսքը լսածնուն՝ կը վազեն դուռը կը բանան և ճրագը վառելով իրենց առջև կը տեսնեն ութը զինւած մարդ : Մենք, կ'ըսեն երիտասարդները, եկած ենք ձեզ Ձէյթուն տանելու և միայն ձեզի ազատելու համար. հրդեհ չկայ, սուտ է. շուտով պատրաստուեցէք, ժողովեցէք կահկարասիքնիդ և շտապեցէք ճամբայ ելլել : Պատիժէ հանրմը, երբ կռահեց որ եկւորները կեանքներէն կը խօսին և տածիկ չեն, բարձրաձայն ճչեց, անմիջապէս բերանը թաշկինակով փակեցին և սպառնացան կտոր կտոր ընել՝ եթէ սուս չի կենայ : Հանրմը լռեց և Ձէյթունցիները իսկոյն վեց հողին ջորիի վրայ հեծցնելով և տասը ջորիներու ալ կահկարասիք բեռընելով, ճամբայ ինկան և խոտորնակ ուղիներէ, առանց Այնթապ և Մարաշ հանդիպելու, շիտակ Ձէյթուն հասան :

\*  
\* \*

1847ին Մնացական Կիւճիւքեան անուն Ձէյթունցի հերոս մը քսան ընկերներով Պէշէանի (Ձէյթունի արևել. Հարաւ 36 մամ հեռի) քաղաքը կ'երթան երկաթ և պայտ ծախելու համար : Ապրանքնին ծախած և դնամնին ըրած մեկնելու վրայ էին. Կիւճիւքեանը չպուխին Ղալեանը (ծիւափայտ) լեցուցած վրան արեւի դրած ծրխելով կ'երթար շուկային մէջէն, երբ յանկարծ իր ծոճրակին ահագին բռունցք մը իջեցուց մէկը ետեւէն. ձեռքին չպուխը կը թռի գետին և հերոսին աչքերէն կայծեր կը ցատկեն : Շուարումը անցնելէ ետքը աստին անդին կը նայի և կը խնդրէ որ իրեն դարնողը ցուցը նեն, կը ցուցնեն մէկը որ կը կոչուէր Աշրղըն օղլու Մէ-

հէմմէտ, հերոսը կը մօտենայ և փառաւոր ազտակ մըն ալ ինք կ'իջեցնէ անոր: Ասոր վրայ տաճիկները կատաղած կը վազեն լաւ մը կը ծեծեն հայը՝ ըսելով. «բամազանը շէրիֆի օրով խընզըր կեալուրի մը կը վայլէ՞ շուկային մէջ ծխել»: Միւս Չէյթուհի ընկերները երբ կը լսեն որ իրենց ընկերը կը ծեծեն, կը վազեն օգնութեան և լաւ ընդհարում մը տեղի կ'առնենայ շուկային մէջ. երեք թուրքի գլուխ կը պատուի, երկու ալ Չէյթուհի: Կառավարութեան սատիկանները կը հասնին և կ'ազատեն կռուարարները:

Չէյթուհիք ճամբանին կը շարունակեն և հազիւ 5 ժամ քաշքէն հեռացած էին՝ կը հանդիպին խուժը մը պէշէանցի խալամներու, որոնք ջորիներով փայտ կը տանէին: Չէյթուհիք անոնցմէ 12 ոսկի արժող ջորի մը կ'առնեն և կ'ըսեն. «գնա ջորիիդ գինը Աշըզըն օղլու Մէշէմմէտէն պահանջէ, ան գիտէ և քեզի կը վճարէ»: Եւր ջորիին տէրը, Հիւսէյին, կը յամառի ջորին տալ՝ կը ծեծեն և թեւերը կազած Պէշէանիէն 12 ժամ հեռու ետերնին կը տանին ու կ'արձակեն: Հիւսէյինը վերադարձին կը վազէ շիտակ Աշըզըն օղլու Մէշէմմէտին ալտուր և անոր ջորին առած իր տունը կը տանի: Հիւսէյինը և Մէշէմմէտը կռուի կը բռնուին և գործը կ'իջնայ դատարանին. Աասին Հիւսէյինին իրաւունք կուտայ: Հինգ տարի ետքը Կիւճիւքեանը նորէն Պէշէանի կ'երթայ իր երեք ջորիներով երկաթ կը տանի (ան տանները եւրօգտկան երկաթները հոն չէին մտած, բոլոր շրջակաները Չէյթուհի երկաթը կը գործածէին): Աշըզըն օղլու Մէշէմմէտը կուգայ պանդակ, տասներչորս Չէյթուհիները տուն կը հրաւիրէ և անոնց ճոխ սեղան մը կը պատրաստէ: Չէյթուհիք կասկածելով որ զիրենք կը թունաւորեն՝ ձեռք չեն դպցներ կերակուրին, տանտէրը զանոնք ապահովելու համար, նախ ինք կը

ճախակէ բոլոր կերակուրներէն ուրկէ յետոյ հիւրերը լաւ  
ճաշ մը կ'ընեն : Տանտերը սուրճ ալ կը հրամցնէ , բայց  
Չէյթուենցիք սովորութիւն չունինք ըսելով կը մերժեն ,  
և իրաւ Չէյթուենի մէջ սուրճ խմելու սովորութիւնը չի  
կար ժամանակով : Այսպէսով կը հաշտուին . բայց Մէ-  
հէմմէտի ջորին վրայ գնաց : Կիւճիւքեանը մեռած ատեն  
105 տարեկան հասակին մէջ էր : Ամէն մարդ կը ճանչնար  
դինքը Կիւճիւքեան Մնացական աղա անունով : Ունէր  
երկու կարիճ աղաքներ , մէկ աղջիկ և թոռներ :

Ը.

Ձեյրունյւոց աթոսներուն հետք Չինչին Պողազրն  
(նաննի բերդի կիրճը) ունեցած կռիւներուն  
պ ա ս մ ու ը ր իւ ը ը

1848 թուականին առաջին անգամ ըլլալով այս  
աֆշարները նպատակ ունեցան նոյն տարին Կոկիսոն  
բնակիչ ամարանոցի համար և եթէ հաւանէին՝ տարուէ  
տարի պիտի շարունակէին նոյն ԵՈՒՔՐ (ամարանոցի  
բնակարան) յաճախել : Անոնց նախկին Եուրտերը Սարըզ  
ըսուած Եայլան (Հովիտ) էր , Կոկիսոնի հիւսիսային  
կողմը ձ ժամ հեռաւորութեամբ : Կոկիսոնի բնակիչք ,  
թէ թուրք և թէ հայք , չուզեցին որ աֆշարները իրենց  
երկիրը յաճախեն . ուստի դիմում ըրին իրենց տիրա-  
պետող (\*) Պայազըտ օղլուներուն «մենք արդէն երկու ա-

---

(\*) Կոկիսոնը ատոնց հովանաւորութեան կը պատ-  
կանէր հին ժամանակներէն մինչ Սահմ . հռչակումը :

շիրէթներուն (Ճէրիտ և Պօղատուղան) ցաւերը քաշելէ  
զգուած էինք, հիմա աֆշարներուն ալ տէրտը պիտի  
քաշենք, այդ չենք կարող տանիլ, խնդրենք մեզի խը-  
նայեցէք և «ֆշարներուն կոկիսոն գալն արգիլեցէք» :  
Մարաշցի Տէրէ Պէյի(\*) Պայազըտ օղլու Ահմէտ Պէյը  
(եաքէն Փաշա) կը խորհի ատոր վրայօք և տեղւոյն Մա-  
րաշու Մութասարըֆ Փաշային կը դիմէ աֆշարներուն  
կոկիսոն գալը արգիլելու համար : Մութասարըֆը կը  
մերժէ աւատականին առաջարկը ըսելով . «Աֆշարները  
ինձի չեն պատկանիր, անոնք ձեռքուր-օվա բը-  
նակելնուն համար Ատանայի կուսակալութեան կը պատ-  
կանին, պէտք է անոր դիմէք» : Ուստի կը գրեն Ատա-  
նայի կուսակալին բողոքագիր մը աֆշարներու մասին,  
նա հետեւեալ պատասխանը կը հաղորդէ Մարաշու Մու-  
թասարըֆին . «Ատիկայ իմ գործս չէ, այլ պէտք է որ  
Ձանթը շահանէին (Թագաւոր) դիմէք, ես ժամանակ  
չունիմ խոշոր աֆշար աշիրէթին դէմ պատերազմելու,  
այդ բանը Թագաւորին պատկանեալ բան մըն է» : Թէ՛  
Պայազըդ օղլուն և թէ՛ կոկիսոնցիք իրարու համերաշխ  
ըլլալով ճարահատեալ կը դիմեն Չէյթունի հայերուն ,

---

(\*) Հին ժամանակները ատոնք տեսակ մը մշտական  
պահեստի գինուորներ կը սեպուէին, և սիփահի անունը  
կը կրէին : Երբոր թիքաց Մութաններու պատերազմը  
բացուէր, նոքա անմիջապէս պատերազմի դաշտը պիտի  
գանուէին՝ առանց վիճակահանութեան ձեւակերպու-  
թեան նայելու : Իրենց պաշտօնն ալ դրօշակակրութիւն  
էր, կ'ստանային հանգստեան թոշակ Թագաւորական  
գանձէն : Երկրագործներու տղուկներն էին և անոնց  
արիւնը կը ծծէին, երբոր միւլթէզիմ չի կար, սիփահի-  
ները կը չափէին կալերը, իրենց ալ սրոշեալ կալմասը  
հանելով :



իոկ քաջարի Չէյթուհիք անոնց դիմուժը չը մերժելով սիրով կ'ընդունին : Չորս իշխանք անմիջապէս կը հաղորդակցին և որոշում կուտան աֆշարներու կոկիսոնի մէջ ոտք կոխել չի տալու և ի հարկին անոնց հետ պատերազմելու : Չորս թաղերէն 30ական մարդ, 200 պատերազմիկ կարիճներ, ճամբայ կը հանեն իշխանաց զաւակներու հրամանատարութեան ներքեւ և ուղղակի գալով Չինչին-Պօղազը (Ճանճի բերդի կիրճ) կոչուած տեղը դիրք կը բռնեն : Այս Չինչինը Չէյթուհի արեւմտեան հիւսիս ԱՅ ժամ հեռաւորութիւն ունի : Սոյն դէպքը գարնան կզանակին իննելով աֆշարներն ալ 1500 անուոր՝ իրենց արջառներով Չուգուր-Օվայէն չուերեկեր էին Մէյրէմչիլ բերդին (կապանու բերդ) քով Պելլըսուած տեղը իջեւանած էին :

Չէյթուհի Սէկմէններու (անկանոն զօրք) հրամանատարները չորս մարդ էին, Վիզիր օղլու Մամրէ և Ղըրանֆիլ օղլու քէօսէ Փանօսը, Սինկիեան Յարութիւն և Աճի Թէյէկ մըխար Սարգիսը, պատգամաւոր կը խրկեն աֆշարի ցեղապետներուն, որպէս զի իզուր տեղ արիւն չը թափելու համար անոնց իմաց տան կոկիսոն երթալնին արդիլեալ ըլլալը : Հալլ օղլու Սէյֆի Պէյ և Ապէտին օղլու Չէրքէզ պէյ, ահա ասոնք էին ցեղապետները : Չէյթուհի պատգամաւորները սրախօս և սրտոտ մարդիկն են իննելով արատասանեցին հետեւեալը. «Մեր իշխանագուհները ձեզի բարե նուիրեցին, Չինչին Պօղազը կը դանուին, կը խնդրեն անոնք որ կոկիսոն երթալու նըպատակէն վաղ անցնիք և նոյն իսկ կոկիսոն գալու նպատակնից փոխելով ձեր նախկին Եուրար Սարըղ երթաք, հակառակ պարագային հետեւանքը աղետալի կ'ըլլայ» : Անոնց պէյերը պատգամաւորաց սապէս պատասխանեցին. «Ատանայի վալին և Մարաշու մութաւարը չը կարողացան մեզի արդիլել կոկիսոն երթա-

լու, հիմա Չէյթուենի ափ մը կեալուրներո՞ւն զիջում  
ընել՝ մեր արժանապատուութեան հարուած մը կը սեղ-  
ուի», և սա խօսքն ալ աւելցնելով ըսին, «գնացէք  
ձեր իշխանազուներուն լուր տուէք որ Չինչինու կիր-  
ճէն հեռանան. հակառակ պարագային անոնց ամենքն  
ալ թռչուն ագռաւներուն կեր կ'ըլլան: Այո, լսեր ենք  
թէ Չէյթուենցիք քաջ մարդիկներ են, բայց իրենց քա-  
ջութիւնը իրենց երկրին մէջ է. այստեղ Չինչինէ, խել-  
քերնին գլուխնին ժողուելով հեռանան, և իրենց քա-  
ջահամբաւ տիտղոսներուն արատ չի բերեն, համբա-  
ւաւոր անուննին կորուստի չի մասնուի. տեսէք, բա-  
րեկամ պատգամաւորներ, շրջահայաց եղիք 1500 տըն-  
ուսը աշիրէթը աճադին բանակի ձեւ առած է, ինչպէս  
համարձակեցաք Չէյթուենէն մինչև հոս գալ, քաջ աշի-  
րէթներուն դէմ գնելու համար, կ'ափսոսանք ձեզի,  
ինչ տղայամտութիւն, Պեյ եւ Թիւրքմէն-Ղօնա ըսուած  
դաշտը լարուած վրաններով լեցուն՝ բանակի մը ձեւը  
ունէր: Ինչպէս որ կ'ըսուի, ասեղ ձգելու տեղ չի կար:  
Հայ պատգամաւորները հետեւեալ խօսքը արտասանելով  
մեկնեցան: — Չէ՞ որ Պէյերը ըսին թէ ասիկայ Չէյթու-  
ենի լեռները չէ, այլ Չինչին կ'ըսեն այս տեղաց, Չէյ-  
թուեն 15 ժամ հեռու, — պատգամաւորներուն ջիղերուն  
դպաւ այդ խիստ զրոյցները, անոնք ալ սապէս խօսե-  
ցան. «Նահու եր եկիսկ սար եեր օլմազ, ալքսա գալա-  
նրն հանր չրգարն, պուլիսան պեօլիէ եհլու էյալլարն,  
վեպալլարը պօլնուլնուլա օլսուն, ինչպէս կ'ըսուի. (ս'վ  
դուք, քաջ կարիճի մասին նեղ տեղ չ'ըլլար, ներքե  
մնացողին հոգին ելլէ, այսուհետև՝ ընտանեաց կնիկնե-  
րուն և երախաներուն քաշելիք արկածներուն պատաս-  
խանատուութիւնը (մեղքը) ձեր վիզը ըլլայ): Մայիս ամ-  
սու օրերն էին, օդը գեղեցիկ էր, միւս օրը արեւածա-  
ղէն առաջ աֆշարները վրանները վըցուցին և ուղտե-

բուն բեռնակցութիւնն չուն շարունակելու վրայ էին  
Թիւրքմէն-Ղօնա բաւած տեղէն դէպի Կոկիսոն : Վաւ  
նարնակաց չուն զմայլելի տեսարան կ'ունենայ , մանաւ  
ւանդ աֆշարներուն չուն : Ուղտերուն կը բեռնեն թան-  
կագին իրեղէններ նախ չուն կարգեաներով կը վարա-  
գութեն , անոր չորս կողմն ալ զիլ ձայն տուող կլկլուն  
զանգակներ կը շարեն որ զանազան ներդաշնակ ձայներ  
կը հանեն , վրան ալ նոր հարս մը կը հեծցեն , ուղտա-  
պանն ալ , մօտ քսան տարեկան գեղեցիկ Թիւրքմէնու-  
հի մը , Փէշէնկ ուղտին պատուրձէն կը քաշէ , ձեռքն  
ալ քրման մը բուրդի թելերը մանելով , ուղտերն ալ  
շարքով Թիւրքմէնուհիւ ետեւէն շարժելով շարժելով  
կ'երթան :

Կ'ուզեմ մի միջանկեալ խօսք ըսել այս տեղ քա-  
ղաքացի և գիւղացի իգական սեռի տարբերութեան մա-  
սին : Քաղաքի օրիորդներուն գեղեցիկութիւնը մեծաւ  
մասամբ շինծու կ'ըլլայ , թէև բացառութիւն կայ , այդ  
ուրիշ , բայց գեղջուկներու և Թիւրքմէննեալ գեղեց-  
կութիւնը բնական է , մանաւանդ վրանարնակներուն  
թէ հայոց թէ թրքաց , և ասոնց չուի ատեն , ինչպէս որ  
վերեւ ըսինք , գեղեցիկ տեսարաններ կը պարզուին ,  
մէկ կողմէն կը տեսնես նմոյգ ձիեր կը խննջան , միւս  
կողմէն կարծրուկ կովերու բարաշը , ոչխարներու մայլե-  
լը , ապտալներուն տավուլ զուրնայի հնչումը , այս աղ-  
մրկայի տեսարանը մարդս կը զմայլեցնէ : Նոյնն էին այս  
աֆշարներուն կէօշի ատենը , բայց ինչ օգուտ որ մօ-  
տալուտ աղէտը երբէք մտքերնին չէին բերեր և չէին ալ  
երազեր իրենց բազմութեան աղաւինելով . չէ որ իրենց  
ուղեգիծը այն պողոտան էր որ Չինչինու կիրճէն պէտք  
էր անցնիլ , զի Կոկիսոնը այդ կողմէն ասկէ զատճամբայ  
չունէր : Չուելով եկան Չինչինու գաղաթը դիպեցան  
պատի պէս անկուելով՝ մօտաւորապէս 1000 աֆշար ձիաւ-

ւոր և սկսան դիտել : Այս կողմ այն կողմ նայեցան  
ոչ մի Չէյթուէնցի չը տեսան . Չէյթուէնցի որսորդները  
առզմական տեսակետով շատ խորամանկ են : Չինչինու  
էրկու կողմը աջ և ձախ դիրք բռնած , չորս տեղաց ի-  
րենք դիրենք թաքստոց դարանի մէջ պահելով խմբը-  
ւած էին , ծրագիրնին շատ յաջողակ էր , լսիկ մեջիկ և  
ձայն ձուէն չէին հաներ , աֆշարները իրենց հին փողը  
հնչեցնելով ազմուկով մը պռռացին . « Չէյթուէնցի կեա-  
վուրներ , ս'ւր էք , դուրս ելէք որ հասակնիդ չափենք ,  
այս տեղը Չէյթուէնը չէ , Չինչինն է » : Երբէք պատաս-  
խան չիկար և մարդ մըն ալ չը նշմարուեցաւ . աֆշար-  
ները ըսին . « Ուրեմն փախեր ճէ՛հննէ՛մ եղեր են , չէ՞ որ  
երէկուան օր անոնց պատուիրեցինք և խրատեցինք որ  
հեռանան երթան , մեր չոր ու ցամաք որսարնդոսա զը-  
րոյցներէն կեավուրները վախնալով դասալիք եղեր  
կորսուեր դնացեր են , այսուհետեւ քէֆէրնիս նայինք » :  
Իրենց մէջ սա որոշուէն ալ գոյացուցին որ « կէօշէրնիս  
առաջ քշենք , իսկ մենք այս տեղ մնանք , գուցէ խո-  
րամանկութեամբ դարանի մէջ պահուած կ'ըլլան . եթէ  
այդպիսի բան մը նշմարուի՝ անմիջապէս Չինչինու կիր-  
ճը պաշարենք , 7—8 տեղերէ մէջտեղ առնենք և ու-  
ղածուս սէս անխնայ ջարդ մը տանք , հարկաւ այն  
ատեն անձնատուր կ'ըլլան , նայինք որ չի խնայէք , բու-  
լորն ալ սուրէ անցուցէք . հերիք է որ երկու մարդիկ  
ողջ մնան , ոչոնք երթան իրենց Չէյթուէնը և գոթեն  
աղետալի լուրը » : Այս որոշման վրայ կանգ առնելէն  
յետոյ , սկսան առաջ քշել կէօշը , և երբ տեսան որ  
կէօշը անվտանգ հանդարտօրէն և յաջող կերպով դաշ-  
տը իջաւ , կ'աահեցին որ ձայն ձուէն չի կայ , սու սփուս ,  
խաղաղութիւն ամէնեցուն լինելը հասկնալով իրենք  
ալ սկսան ճամբան շարունակել : Չէ՞ որ Չէյթուէնցիք  
ճանապարհին երկու կողմն ալ բռնած էին , չորս տեղե-

րէն յանկարծ տեսնես մէկէն հրացանաձգութիւնը պայ-  
թեցաւ, ապառաժ քարոտ տեղերու մէջ հրացանի պոմպ  
պոմպ ձայնը մեծ արձագանգ տալով ապառաժ քարե-  
րուն, աֆշարներուն քանիները իրենց ձիերուն վրայէն  
թութի պէս վար թափեցան, գետին փռուեցան, ցե-  
ղապետ շէրքէզ պէյին ալ ձին դարնուելով իրեն ալ  
ոտքը գնտակ մը մխուեցաւ, թէ ինք և թէ ձին գետին  
գլորուեցան: Աֆշարներն ալ սկսեցին պատասխանել,  
բայց ի՞նչ օգուտ, աֆշարներուն գնտակը ապառաժ  
քարերուն կը փակչէր, իսկ հայերուն նետածը իրենց  
նպատակէն շէր վրիպեր. այս անգամ հայերը ալմուկ  
բարձրացուցին՝ էյ աֆշարներ, մեզի ի՞նչ կը կարծէիք,  
դուլաղը բօզլու կեավու՞ւր (ականջը փոշոտ հա՞յ), մենք  
Չէյթուենցի ենք, գուլաղը թողլուներէն չենք. նորէն  
ձեր վրայ կը խղճանք, զինաթափ եղէք. արդէն ձեր  
կէօջը մեր կողմը անցաւ, անոնք մեր գերիներն են,  
հակառակ պարագային ամէնքդ սուրէ կ'անցնենք:  
Հալլ օղլու Սէյֆի Պէյը իրեն չորս կողմը նայելով տե-  
սու որ հաղար ձիաւորէն հաղիւ հարիւր ձիաւոր մնա-  
ցեր է, ամենքն ալ փախեր են, ճարահատ սափազուեցաւ  
անձնատուր լինելու նշանը ցուցնել, ճերմակ դրօշը  
բարձրացուցին. «Ահա զէնքերնիս տասը մարդկանց նետ  
ձեզ կը զրկենք, անձնատուր ենք, դուք ալ մեր կէօջը  
խնայութեամբ ետ խրկեցէք. այժմ հասկըցանք որ այս  
երկրին վալին ալ դուք էք՝ Փաշան ալ՝ Պէյն ալ. մեր  
աշիրէթը ձեր երեսէն դասալիք եղաւ» ըսելով, տասը  
մարդով զէնքերնին ձիերու վրայ բռնցուցած Չէյթուեն-  
ցոց զրկեցին: Երբոր զէնքերը իրենց յանձնուեցան, մե-  
րայինք սկսան բոլոր կէօջը խլրփշտել (յափշտակել).  
(այս բառը Չէյթուենցոց բառ մըն է, յափշտակելուն  
խլրփշտել կ'ըսեն), կէօջին մէջէն թէ աղջիկք և թէ կա-  
կանայք անձնատուր եղած էին, բայց և այնպէս Չէյ-

Թունցոց ողջախոհութիւնը չափ գովելի է. ոչ մէկուն արատ չի բերին: Յափշտակուած աւարներն հետեւեալներն են. հազարաւոր ոչխար, ձի, կով, կարպետ, քեշի (թաղիք) արծաթեղէնք և այլն և այլն: Ատոնց ամէնքն ալ Չէյթուէն տարուեցան, իսկ մնացեալ մանկանացուք ողջ առողջ ետ դարձուցին, չէ՞ որ խոստացան ետ դարձնելու, և ըսին. «Այսուհետեւ դէպի կոկիսոն չըլլայ որ երազնուդ մէջ տեսնէք, հին տեղերնիդ Սարըղ գնացէք»: Գոռող աֆշարները աղաչեցին ըսելով. «Ինզրենք յարձակուած մի ընէք մեր վրայ, մեր դիակները թաղենք, անցնինք երթանք. Չէյթուէնցիք թոյլտուութիւն ըրին, ըրէք նայինք ըսելով. անոնք ԱՅ դիակ ունէին և ԱԱ ալ վիրաւորեալ, իսկ մերայնոցմէ ալ Տէլի-Քէշիշեան Գուգուր (Գրիգոր) սրունքէն զարնուած էր, բայց շուտ մը առողջացաւ: Վէրքի համար Չէյթուէնցոց մինչև անգամ կնիկները վիրաբոյժ են, այս մարդը յետոյ քահանայացաւ և Տէր Մարգար եղաւ:

Այժմ թիւրքմէնները իրենց թաղման (գերեզման) գործը լրացուցին և շարունակելով իրենց ճամբան դէպի Սարըղ խոստորնակ ճանապարհներով նախկին Եուրսերնիկ գացին գտան: Սա ալ չի մոռնանք ըսելու թէ Չէյթուէնցոց հրացանաձգութեան ժամանակ՝ այն թիւրքմէն կիւղէլներէն (թրքուհի գեղեցիկներ) մօտաւորապէս 30ի շափ աղջիկներ փախչելով ժայռերու խոռոչներուն մէջ պաշտօնաւոր էին, անօթի ծարաւ՝ երեք օրէն յետոյ կիսակենդան կէօչին հետքերը գտնելով Սարըղ իրենց տունները հասեր էին: Մինչև հիմա կ'ողբան աֆշարները այդ աղետալի դէպքը որ կրեցին Չէյթուէնցիներէն: Աֆշարներուն աշուղը Ապտուլլահ՝ այդ աղետին վրայ սա հետեւեալ ողբը կ'երգէր: Այդ երգէն երկու տունը դուկը յիշեմ, ուստի աւելորդ չեմ համարիր այստեղ հիւրընկալելու այդ ողբերը:

Ավշար Չուգուր-Օվատան կէօրիւի վէրաի ,  
 Կէօքսիւն արդուլայուպ սէչաի իլք կուրաու ,  
 Չէյթուենու Չինչինաէ աֆշարը վուրաու ,  
 Փէրուչան աչրէթին հալը կիւճ օլաու :

Թրգմ . «Ավշար Չուգր-Օվայէն առաւ ու քալեց ,  
 Նախօրօք Կոկիսոն բնակիլ որոչեց ,  
 Ճանճի-Կիրճ՝ Չէյթուենցին աֆշարը դարկեց ,  
 Թշուառ ցեղին վիճակ խիստ դժւար եղաւ » :

Աչըխ-Ապտուլլահըմ պէն քէնաիմ եասլը ,  
 Պուլուենմազար աչրէթաէ աֆշարն միսլի ,  
 Պուրնու Խըրզմալըտա եալպրատա Կէսլի ,  
 Ճէնկ իչինաէ գալան զըզլար նիճ օլաու :

Թրգմ . «Աչուխ-Ապտուլլահն եկ ես՝ սուգ ապիկար  
 Աֆշար աչիրէթին ալ նմանը չըկար ,  
 Ֆէուոր օրիորդաց քթերնին գինդ կար ,  
 Ընդհարման մէջ մնացող աղջկունք ի՞նչ  
 եղան » :

Կոկիսոնի թուրքերը և Մարաչու Պայազրա օղլու-  
 ները խորին շնորհակալութիւն յայանելով՝ Չէյթուենցի  
 քաջերը Կոկիսոն հրաւիրեցին , անոնց մէյմէկ ոսկի նուէր  
 տուին , իսկ չորս իշխանաց ազաքներուն ալ մէյ մէկ  
 նժոյգ ձի նուիրեցին , և երգմամբ խոստացան մշտնջե-  
 նաւորապէս հաւատարիմ մնալ Չէյթուենցոց Քեռիներուն  
 (այս բառը այն կողմի տաճիկները կը գործածեն , հայե-  
 րուն՝ Քեռի ըսելով , ասով անոնց յարգանք մը մատու-  
 ցած կը սեպեն . այս անգամ ալ Չէյթուենցիք Կոկիսոնի  
 թուրքերէն քեռի կոչուեցան : Սակայն այս ապերախտ  
 Կոկսիցուենցիները Ազիզ-Փաշայի պատերազմին ժամանակ  
 Պայազրա օղլու Օսման Պէյը Չէյթուենի Աւազ-Կալ գիւ-  
 ղը հրդեհեց , իսկ անոր հօրեզրայը Անմէտ-փաշան ալ  
 Աւազ-Կէտիկի կոչուած կիրճէն 3000 Սէկմէններով (ան-  
 կանոն) Չէյթուենի վրայ յարձակումներ ընել փորձեց ,

բայց չը յաջողեցաւ : Չէյթուհիք անոր բանակին վրայ յարձակում ըրին , Կոկիսոնցիք ջարդու փշուր ըլլալով փախան՝ թողլով 15 հաս գերիներ մերայնոց ձեռքը . զարմանալի բան այդ գերիներուն ամենքն ալ Կոկիսոնցի թուրքեր էին : Ասոնց պարագլուխնուն անունը յիշեմ , Ղուշ-Պէքիր կ'ըսուէր : Երբոր ասոնք Չէյթուհի մէջ եկան , սպանուելու վախով սկսան «Մենք հայ կ'ըլլանք» ըսել , իսկ Չէյթուհի իշխանները «մենք ձեզի պէս ապերախտները հայութեան չենք ընդունիր» պատասխանեցին և առողջ իրենց հայրենիքը խրկեցին : Չէյթուհիք փորձով , թուրքամէններուն ինչ ապերախտ ըլլալը գիտնա :

Թ .

Ձ Է Յ Թ Ո Ի Ն Յ Ի Ո Ի Խ Տ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Մարաշու թիւրքերը իմանալով որ Չէյթուհի բազմաթիւ ուխտաւորներ պիտի անցնին իրենց քաղքէն Երուսաղէմ դնալու համար , խորհուրդ տուին միւթէսարըֆ Միւնիք Մուհամէտ փաշային որ եկածնուն պէս զանոնք կողոպտէ , ինչպէս կ'ընէին իր նախորդները : Փաշան(\*) համակերպեցաւ թիւրքերուն խնդիրը կատարել :

1855ին 82 Չէյթուհի՝ անտեղեակ իրենց դէմ լարուած դաւաճանութեան , իրենց սիրելի առաջնորդ Յով-

(\*) Չէյթուհիք տարին զօրով Պայաղիտ օղլու Անմէտ փաշան Մարաշ կառավարիչ ըրին և Միւնիք Մուհամէտ Փաշան որ Միւթէսարըֆ էր , վաճառեցին : Այժմ այս վերջինը այդ վրէժն էր որ կը լուծէր Չէյթուհիներէն :



հաննէս եպիսկոպոս և իշխաններէն ալ Եէնի Տիւնեա Աստուածատուր ազայի և ուրիշ շատ մը հարուստներու հետ, առօք փառօք ճամբայ ելան Երուսաղէմ ուխտի գնալու: Բոլոր Ձէյթունցիք «ճանապարհ բարի Քրիստոս» և շարականներ երգելով ժամ մը ուղեկից եղան ուխտաւորներուն: (Տեղական սովորութեան համաձայն և Երուսաղէմէն վերադարձին ալ, ընդառաջ կ'երթան և մեծ հանդէսով կ'առաջնորդեն զանոնք ուղղակի եկեղեցին, յարութեան շարականներ երգելով՝ անկէ ալ իրենց տուները կը տանին: Այս սովորութիւնը ուրիշ քաղաքներու և գիւղերու մէջ ալ կայ, բայց Ձէյթուն միայն ազատ համարձակ և անվախ կերտով կը կատարուի այդ հանդէսը իբր թէ ազատ Հայրենիքի մը մէջ եղած ըլլար):

Ուխտաւորները Մարաշ մտնելուն հիւրընկալուեցան տեղին հայերէն, որոնք ևս կառավարութեան սարքած դաւադրութենէն լուր չունէին: Երկրորդ օրը կառավարութիւնը բացի եպիսկոպոսէն, մէկիկ մէկիկ այդ ուխտաւորները պալատը հաւաքելով բոլորն ալ կողոպտեց՝ իրենցմէ 1000 ոսկիի չափ գումար մը առնելէ և ամիս մըն ալ բանտը պահելէ ետքը արձակեց բանտէն: Ուխտաւորները, այլ ևս Երուսաղէմ չի կրցին գնալ և եպիսկոպոսի հետ միասին վերադարձան Ձէյթուն:

Ձէյթունցիք կառավարութեան այդ անխղճութեան դէմ սաստիկ կատաղած, վճռեցին վրէժխնդիր ըլլալ: Իմանալով որ Մարաշու թամբադորձներու և կաշեգործներու կարաւանը կեսարիայէն պիտի վերադառնար՝ ուր անազին քանակութիւնով ապրանք ծախելու գացեր էին, աւազակաց խումբ մը կազմեցին և գացին Սուչաթը ըսուած ճամբուն վրայ՝ ուրկէ պիտի անցնէր հարուստ կարաւանը, դիմաւորեցին իրենց որսը: Ձէյթունցիք կա-

բաւանը բռնեցին և իր բոլոր մարդիկներով, 26 հոգի և  
Ձէյթուէն գերի բերին և բանտարկելով հրաման ըրին ի-  
րենց որ Մարաշու փաշային գրեն ևղելութիւնը և ըսին  
որ ուխտաւորներ կողոպտելը ատանկ չըլլար, ասանկ  
կ'ըլլայ: Ասոր վրայ Մարաշու առաջնակարգ Պէյզասէ-  
ներէն Արսաքիւր օղլու Նէճիպ էֆէնտի Ձէյթուէն եկաւ  
անուշի կապելու համար. իշխաններին աղաչեց, պաղա-  
տեց, վերջապէս գերիները ազատեց:

Ձէյթուէնցիք կարաւանուորներու վրայէն 2000 ոսկի  
առին և ըսին որ երթան իրենց դրամը փաշայէն առ-  
նեն: Կողոպտուողները Մարաշ գնալնուն փաշայէն զօ-  
րով գանձեցին իրենց փողերը, այնպէս որ փաշան գող-  
ցածին կրկինը վճարել ստիպուեցաւ:—Տեղն է յիշել որ  
Մարաշու այդ արհեստաւոր մարմինը, այսինքն սար-  
բաճները և կաշեգործները, քաղքին էն վարնոց մուկ-  
աանդ դասակարգը կը կազմեն:

Ի՞նչ

1877ի Ձէյթուէնի ապսամբական երջանք

Ձէյթուէնի կողմերը գտնուող չէրքէզները՝ կեսա-  
րիայէն Մարաշ, Մարաշէն կեսարիա գացող եկող կա-  
րաւաններուն առջեւը ելլելով հայերը կը կողոպտէին և  
թիւրքերը ազատ կը ձգէին: Ձէյթուէնի իշխանները չի-  
կրնալով այլեւս հանդուրժել հրոսակախումք մը կազ-  
մեցին, հանգուցեալ Չազրեան պատուելիի խմբապե-  
տութեամբ, և ղրկեցին Աւիլիսըրդ պէլը (լեռան մը գա-  
գաթը), որպէս զի իրենք ալ չէրքէզներուն օրինակին  
հետեւին: Կեսարիայէն եկած կարաւանը առաջին ան-  
գամ կողոպտեցին հայը թիւրքէն զատելով: Անգամ  
մըն ալ հրաման ըրաւ հայ աւազակապետը որ կարա-  
վանին մէջի հայերը մէկ կողմ թիւրքերը մէկ կողմ

կայնին : Աւելի ազատով ըլլալու համար որ քրիստոնեաներուն մէջ թիւրքեր չեն մտած , Չազրեան ամէնուն ալ խաչակնքել և «հայր մեր» զրուցել տուաւ : Ժամանակ մը միայն խաչակնքել կուտային , բայց կիւրինցի թիւրքեր հայ ձեւանալով կը խաչակնքէին և կ'ազատէին : Այդ անպատեհութեան առջեւը առնելու համար աւազակապետը «հայր մերն» ալ արտասանել կուտար : Օր մը Քրիստոնէից մէջէն մէկը «հայր մերը» ըսաւ բայց չի խաչակնքեց , երբ հարցուցին պատճառը , մարդը պատասխանեց որ ինքը բողոքական ըլլալով սովորութիւն չունի խաչակնքելու :

Բայց , կ'ըսեն աւազակները , պէտք է գիտնալ որ հոս ժողովարան չէ , այլ լեռան մէջ էք աւազակներուն ներկայութեան , խաչակնքէ ու ազատ ելիր գնա 'նորէն բողոքական մնացիր : Բողոքականը , երբ կը յամառի , տաճիկներուն կողմը կը դասեն զայն , կը կողոպտեն ու կ'անցնի կ'երթայ : Այս մարդը համբաւաւ որ Տօգտէօր Գարեգինն էր որ իր կնոջ հետ Մարաշ կը մեկնէր : Քանի մը օր ետքը Մարաշէն յատկապէս Չէյթուն եկած էր Մարաշու բողոքականաց ազգապետին Ռուպեան էֆէնտիի հետ , որուն պատուոյն համար Չէյթունցի չորս իշխանները գողցուած իրեզնները անմիաւ ետ դարձուցին :

Իրեզնները յանձնելով իշխանները Տօք . Գարեգինին , իրենց զարմանքը յայտնեցին որ այդքան խելացի մարդ , հայ աւազակներուն ներկայութեանը , խաչակնքելը ամօթ սեպեր է , վախնալով որ դժոխքին տակը կ'երթայ : Ի՞նչ անմտութիւն , յարեցին իշխանները , ժամանակով մեր նախնիքները արքայութիւն երթալու համար իբր մարտիրոս կը սպաննուէին , բայց մենք Չէյթունցիներս , մեր առանձին հաւատածքը ունինք , սպաննէ՛ մի սպաննուիր , կողոպտէ՛ մի կողոպտուիր , ծեծէ՛ դուն մի ծեծուիր , և դարձեալ արքայու-

Թիւն կ'երթաս : Քրիստոս երբէք չըսեր վախկոտ եղիր և քաջ մի ըլլար :

Տօքտէօր էֆէնտին իրաւունք ունիք, ըսաւ, հաւատափոխուած շեշտով մը :

\*  
\*\*

1896 Մայիսի վերջերը Հալէպու մեծ բանար կը գըտնուէին քանի որ Ձէյթունցիներ, Գալուստ Հայտուեան, Մկրտիչ Պիւլպիւլեան, Պօղոս Գաւիթեան, Կարապետ Չազրեան, Գաբրիէլ Պօստան Երէցեան : Այս վերջինը պետերնին կը սեպուէր : Նոյն օրերը խուճք մը եւրոպական գլխարկով կարգ մը ամերիկահայատակ հայեր եւս բերին բանար : Երկրորդ օրը մեծ բանտէն զանոնք փոքր բանար փոխադրած ատենին, լկտի տաճիկ բանտակեալները սուլեցին զանոնք շիլ, շիլ (արաբերէն անարգանք) պոռալով ետեւուն : Ձէյթունցիք սուլողներուն հայնոյեցին, ասոր վրայ բանտին մէջի տաճիկ խուխանը կատաղած բանտապաններուն հետ մէկտեղ Ձէյթունցիներուն վրայ յարձակեցան, բայց ասոնք վրանին պահուած դանակ ունենալով պաշտպանեցին իրենք զիրինք, բանտապան մը ձախ ծիծէն և ուրիշ երկու թիւրքեր նմանապէս վիրաւորուեցան մինչեւ որ Ալայ պէկը և ոստիկանութիւնը հասան ու աղատեցին կռուարարները : Ալայ պէկը լաւ մը ծեծելով Ձէյթունցիները՝ մութ դնտանի մը մէջ նետեց զանոնք, ուր ՉԱ օր արեւի երես չտեսան(°) :

Եւրոպական գլխարկով հայերը Սվէյտիա նշակեան գործիչներ էին, որոնք, Սվէյտիացիներու ստիպման վրայ և սպառնալիքին, ակամայ անձնատուր եղած էին Անտիոք կառավարութեան, որու գայմադամը զանոնք Հալէպու վալիին յանձնած էր :

(°) Հայերուն եղած նախատինքը իրենց ջգերուն դպչելով՝ խլրտում հանեցին, որի համար ՉԱ օր դնտանը պահուեցան : Լէյլէկեան Թորոս աղան, Այնթապցի, գրեթէ ամեն օր խորոված գառ կը դրկէր անանդ :

## Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

### ԴԷՊԻ ՄԸ ՖՐՆՈՒՋԻ ՄԷՋ

Ասկէց ՉՅ տարի առաջ երբ Ֆրնուզի յայտնի Տէր Յովակիմ քահանան վա՛սճանեցաւ, թաղման հանդէսին՝ պատահմամբ, Ղուճարլը աշրէթէն թուրք մը կը դըտ-  
հըւէր հոն, մոլեռանդ և ռամիկ թուրքը սկսաւ ծաղ-  
րել հանդիսի Արարողութիւնը: Տէլի Սաչէր անուն  
կտրիճ մը տեսնելով թուրքին ծաղրելը, ըսաւ անոր.  
«Կորսուէ ասկէ, ան զիտան մա՛րդ, հիմա քեզ գնտա-  
կով մը չրա՛ս կը հանեմ», իսկ յիմար թուրքը պատաս-  
խանեց, որ կեալուրին գնտակը թուրքին մարմնոյն մէջ  
չի մտներ, աս ըսելով անմիջապէս մեկնեցաւ: Թուր-  
քին վերոյիշեալ խօսքը, տէլի Սաչէրին ջղերուն դպչե-  
լով, լաւ մը կը զինուի, թուրքին ետեւէն հասնելով,  
Ղօսուխ ըսուած կիրճը, կ'ըսէ, կ'ուզեմ փորձել, թէ  
կեալուրին գնտակը քեզի պէսին մտնի կ'անցնի թէ ոչ:  
Արդարեւ տէլի Սաչերի հրացանին գնդակը, բսպէապէս  
թուրքը գետին կը տապալէ, սակայն այս դէպքը մի  
քիչ մեասակաւ հետեւանք ունեցաւ, որովհետեւ Չու-  
գուր Հիսարի և Ղուճարլի թիւրքերը միանալով՝ Կո-  
կիսոն: ճամբոսն Ֆրնուզցիներու համար գոցեցին, ուրկէ  
Ֆրնուզցիք ցարեն կը բերէին: Այս աղբիքը տեւեց ա-  
մրսներ: Աւոր վրայ Մինաս սարկաւազ (այժմ Բարդո-  
ղիմէոս Մ. վարդապետ) յիսուն կտրիճ երիտասարդներով  
ճելքեց տաճիկներու շղթան (ստնք երեք կէտերէ ճամ-  
բան գոցած էին) անցաւ Կոկիսոն ու միեւնոյն ճամբով  
վերադարձաւ: Թիւրքերը սարսափած եկան և պաղա-  
տագին ներողութիւն խնդրեցին Մինաս էֆէնախէն, որ  
այսպէս պատուէր տուաւ անոնց. «Այսուհետեւ Ֆրնուզ-  
ցի ջորեպանի մը մաղին մի դպչիք, հակառակ պարա-  
գային ձեր գեղերը տակնուվրայ կ'ընեմ»: Թիւրքերը

հաշտուեցան, թողլով որ իրենց ընկերը սպաննող տէլի  
Մաչերը, անդիլի աշխարհք իր պատիժը գտնէ: Այսպէս  
սով վերջացաւ այս դէպքը:

\*  
\*\*

Մինաս սարկաւազ, ու ձեռնադրուելով կոչուեցաւ  
Բարդսղլիմէոս վարդապետ, իր հայրենասիրական քաջա-  
գործութիւններով 1893ի Ձէյթունի դէպքին մեծ դեր  
խաղաց: Երբ Ատանայէն, Այտրնէն եկած ահաբիւն բա-  
նակները թէ Թոնուզի առաքելաշէն Ս. Կարապետ վան-  
քը հիմնադրատակ ըրին, հաշտութեան բանակցութիւննե-  
րու մըջոցին կառավարութիւնը խոստացաւ 500 ոսկի  
վճարել վանքի վերաշինութեան համար (թէև վանքին  
կրած վնասը 5000 ոսկին կ'անցնի, զի բոլոր թանկագին  
անօթները կողոպտեցին): Քիչ ժամանակ վերջը վարդա-  
պետը կառավարութենէն պահանջեց այդ գումարը, ո-  
րու վրայ, օրին մէկը, ստիկան մը Մարաշէն նամակ մը  
բերաւ Բարդսղլիմէոս վարդապետին, որուն պարունա-  
կութիւնը հետեւեալն էր:

Բահիպ էֆենտի.

Շուտով դաս ստիկանին հետ, վասն զի Կ. Պոլսոյ  
Կեդ. վարչութենէն վանքիդ վերաշինութեան համար դրամ  
եկաւ, զոր կուղեմ ուղղակի քեզի յանձնել և տեղէս  
ճարտար սրմնադիրներ վերցնելով սկսիս վերաշինու-  
թիւնը»:

Վարդապետը առանց կասկածելու ուրախութեամբ  
Մարաշ գնաց, բայց հոն հասնելուն պէս զինքը ուղղակի  
բանտը առաջնորդեցին: Քաջարի եկեղեցականը բանտին  
մէջ սկսաւ առիւծի պէս մռնչել. Միւթէսարըֆին երեսին  
ալ անարգական խօսք շմեաց որ չըսէր, ստախօս, ան-  
պիտան մարդ, ցած, եւն: Քանի մը ամիս բանտը մնալէն  
ետքը Հալէպի օտար հիւպատոսներու միջամտութիւնով  
ազատ արձակուեցաւ: Այդ ատենը Ձէյթունէն լուր ե-

կաւ իրեն որ Երուսաղէմի պատրիարքին դիմէ, զի հա-  
րուստ ըլլալով, գուցէ հաճի հոգալ վանքի վերաշինու-  
թեան ծախքը: Վարդապետը անմիջապէս իր սեպհա-  
կոն նժոյգ ձին ծախեց և ճամբայ ելաւ դէպի Երուսա-  
ղէմ: Անցադիրը ձրի տրուեցաւ իրեն: Վարդապետը մեկ-  
նելէ առաջ նախ այցելեց Մարաշու Ֆրանսական փոխ  
հիւպատոսին Պ. Բարթօլէմէի որ զինքը շատ կը սիրէր  
իր քաջութեանը համար: Հիւպատոսը իր անուանակից  
վարդապետին խորհուրդ տուաւ Հռոմ երթալ ու Ս. Պա-  
պին դիմել, յոյս յայտնելով որ պապը վանքին համար  
անպատճառ 1000 ոսկի կը նուիրէ, պակսածն ալ խոս-  
տացաւ ինք լրացնել, բայց վարդապետը վախ յայտնեց  
թէ Հռոմի մէջ դաւանանքի խտրութիւն կը դնեն, որու  
մասին հիւպատոսը չի կրնալով երաշխաւորել, վարդա-  
պետը նախ ընտրեց իշխաններուն պատուէրին համեմատ  
Երուսաղէմ գնալ: Հիւպատոսը նուէրներով ճամբայ դը-  
րաւ հայ եկեղեցականը:

Երուսաղէմ հասնելուն վարդապետը պատրիարքին  
ներկայացաւ և անոր յանձնեց Չէյթունէն իր յանձնա-  
րարական նամակները: Այդ միջոցին Չէյթունի առաջնորդ  
Կարապետ և Կիսկոպոսն ալ հոն կը գտնուէր, որ ամէն  
կերպով յանձնարարեց վարդապետը, բայց Յարութիւն  
Պատրիարքը մերժեց վարդապետի խնդիրքը առարկելով  
թէ Երուսաղէմ այդպէս տալու կանոն չունի: «Սրբազան  
հայր, պատասխանեց վարդապետը, Ձեր այդ կանոնը  
երկնային պատգամ չէ, այլ մարդու շինած ու տնօրի-  
նածն է, եթէ դուք օգնէք մեր վանքին շինութեան, ոչ  
Ս. Յակոբեանք կը սրդողին, ոչ Յիսուս Քրիստոս»:  
Պատրիարքը անդգայ մնաց ըսելով որ կանոնէն շեղիլ  
անկարելի է և թէ ուխտաւոր եկեղեցական մը կրնայ,  
ըստ աւանդական սովորութեան, պատարագ մատուցա-  
նելով կէս մէծիտիէ ժամուց միայն առնել, ոչ աւելի ոչ  
ալ պակաս:

Վարդապետը սրբողած պատասխանեց, «Ես ոչ ուխտաւոր եկեղեցական եմ և ոչ այ կէս մէծիտիէի համար պատարագ մատուցանելու եկած եմ: Հիմա կը հասկնամ Ձեր կարգ կանոնը, դուք տալու համար կանոն չունիք, բայց առնելու համար լաւ կանոն ունիք»: Երբ վարդապետը վրդովուած կը մեկնէր, պատրիարքը խորհուրդ տուաւ աւնոր դիմեն Պոլսոյ պատրիարքին: Առանց վարանելու վարդապետը խնդրագիր մը դրեց Պոլսոյ Պատրիարքին որմէ երեք ամիս յետոյ պատասխան ստացաւ որ համբերէ:

Ի վերջոյ յուսախար և գլխիկոր հայրենասէր վարդապետը, առանց հոյն իսկ նուէր մը ընդունելու և ոչ ալ Պատրիարքին աջը համբուելու մեկնեցաւ Ա. քաղաքը ուր հայ դպրոցականութիւնը և թաղականութիւնը լսած ըլլալով աւոր համբաւը սիրալիր ընդունելութիւն ըրին և յանձն առին հոգալ անոր պէտքերը:

1897էն ի վեր արի և անձնուէր վարդապետը Ա. քաղաքի եկեղեցուն սենեակին մէջ մինչև Աղատութիւն սպասեց և անտի թուրքիա մեկնեցաւ և այժմ Իզմիր կը դանուի իր իղձերուն և իր սիրած վանքի վերաշինութեան իրագործմանը Յարգ շքանուեցաւ ճշմարիտ և բարեյօժար անգղային մը որ ըսէր. «Հայր սուրբ, առ սա 500 ոսկին և դնայ վերականգնէ ժողովրդիդ փլած տունը, սրով նաև և դուն քու հօտիդ քաջ և արժանաւոր հովիւն ես»:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ

ԿԵՆՍԱԼԻՆՈՒԹԻԻՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻԻՆ

ԴԱԻԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Դաւիդ վարդապետ (Տղայ-Սարգիս) 1828-1875. — Տղայ-Սարգիսի հայրը կը կոչուէր Առաքել, որը բնիկ Խարբերդցի էր և ջուլհակութիւն կ'ընէր: 1826 թուա-



կաններուն թողլով Խարբերչը կուգայ Մարաչ և բնակելով հայոց թաղին մէջ (կեալուր մանալէսի), կ'սկսի դարձեալ ջուլհակութիւն ընել: Քիչ յետոյ Առաքել սիրելի ըլլալով Մարաչի Ս. Աստուածածնայ եկեղեցիին յայտնի տէր Գաւիթ աւագ քահանային, անոր աղջկան հետ կը նշանուի: Պատկի օրը, հարսնեւորներուն եկեղեցիէն տուն դառնալու ատեն, թիւրք մը մօտենալով փեսային՝ անոր ձեռքի մովին դարնելով կը մարէ, այս անկարգութեան վրայ հարսնեւորները զրգուելով կը յարձակին այդ ըմբոսա թիւրքին վրայ, լու մը կը ծեծեն ու կրկին թափօր կազմելով կը շարունակեն իրենց ճանապարհը, իսկ թիւրքը վրէժ լուծելու համար, իսկոյն մէկ երկու հատ սուտ վկաներ գտնելով, կ'երթայ կառաւարութեան կը բողոքէ թէ՛ Հայերը զինք ծեծեցին և հարսնեւորներուն մէջ գտնուած ըլլալուն համար ալ փեսան հաւատքին հայտնեց: Կառաւարութիւնը առանց ստուգելու բողոքին իբաւացի կամ վկաներու ճշմարիտ ըլլալը, իսկոյն կը բանտարկէ Առաքելը, սրոշելով ըստ օրինի կա՛մ լեղուն կտրել և կա՛մ տաճկըցընել: Բայց նախ քան վերջնական որոշում տրուիլը, Տէր Գաւիթ հազար զրուշ կաշառք կերցնելով դատաւորին—մի գուժար, որը մեծ կարեւորութիւն ունէր այն ժամանակի համար— կը յաջողի ազատել Առաքելը: Աւելորդ չենք համարիր այստեղ մէջ բերել կաշառւած դատաւորի վճիռը, մի անգամ ևս պատկերացնելու համար քանիկ դատաւորներու ուղղամտութիւնը: Գատաւարութեան օրը, դատաւորը կը հարցնէ բողոքող թիւրքին— ո՞վ էր հաւատքիդ հայտնողը, կը ճանչնաս՞, այո՛, կը պատասխանէ թիւրքը, զիս ծեծողն ու հաւատքիս հայտնողը սա կեալուրն էր, ցոյց տալով Առաքելը: Գատաւորը կը կրկնէ, այս կեալո՞ւրը, և կը սկսի մի քանի մաշած ու փոշոտած գրքեր թերթել, և վերջապէս գտնելով վճիռը, կ'ըսէ Առաքելին, ո՛ր ինք ազատ է, իսկ դառնալով թիւրքին կը յայտնէ ո՞ք «կեալուր տէմէք—քեաֆիր տէմէք, քեաֆիր տէմէք—

քիւֆիւր աէմէք, հիշ պիր վագթ քեաֆիր քիւֆիւրտէն  
խալի տէյիլ» — (կեալուր ըսել-անհաւատ ըսել է, հայ-  
հոյանք ըսել է, ոչ մի ժամանակ անհաւատը հայհոյան-  
քէ գերծ չէ) որով բնաւ կարեւորութիւն չունի անհա-  
ւատի մը հայհոյանքը, ե՛թէ հաւատացեալ ըլլար հայ-  
հոյողը՝ մեծ պատիժներու կ'ենթարկուէր: Այսպէսով  
Առաքելը թէեւ կը յաջողի ազատիլ բանտէն, բայց ան-  
յարմար ըլլալով այլեւս Մարաշ մնալ, բարեկամներու  
խորհրդով նոյն օրն իսկ կը փախցնեն Ձէյթուն, և ի-  
րօք, հեռեւեալ օրը, այս տարօրինակ դատավարու-  
թիւնը թիւրքերու զայրոյթը գրգռելով, կը սկսին Ա-  
ռաքելը փնտռել, բայց իմանալով անոր Ձէյթուն փախ-  
չիլը, շուտով կը հանդարտին: Մի քանի օր վերջ Ձէյ-  
թունցի ջորեպաններ Մարաշ կ'երթան և ազատ շա-  
մարձակ, օր ցերեկով Առաքելի կիսն ալ կը փոխա-  
դրեն Ձէյթուն, ու այնտեղ երկու նորապսակները,  
Գարկլար թաղի մէջ համբաւաւոր Տէլի քէչիշ տէր Օ-  
հանի հետամքին կը յանձնուին:

Ձէյթուն հասնելէն տարի մը վերջ՝ Առաքել արու-  
զաւակ մը կ'ունենայ, այս երախտն Ձէյթունի Ա. Սար-  
գիս եկեղեցիին մէջ Տէլի քէչիշ Տէր Օհանէն մկրտուե-  
լով, եկեղեցիին անունով կը կոչուի Սարգիս (1828):  
Սարգիս հազիւ 15 16 օրուան կ'ըլլայ, երբ մայրը ծը-  
նրնդարերութեան հեռեւանքով կը մեռնի, այսպէսով  
փոքրիկ Սարգիսը կը մնայ որք: Առաքել շուտով կ'ա-  
մուսնանայ Ձէյթունցի Անազան անուն մի այրի կնոջ  
հետ, որմէ կ'ունենայ մի ուրիշ զաւակ ևս Գաւիթ ա-  
նունով: Առաքել իր որք Սարգիսը սիրելու ատեն միշտ  
սղայ Սարգիս կը կոչէր, այս յորջորջումը Ձէյթունցի-  
ներու տարօրինակ կը թուի, որովհետեւ Ձէյթունցին  
տղային տղօ կ'ըսէ, իսկ Սարգիսին-Սարգես, բայց ո-  
րովհետեւ Առաքել Սարքերդցի էր, շկրնալով Ձէյթուն-  
ցիներուն նման խօսիլ, իր գաւառի բարբառով կը կոչէր  
իւր երախտն, ուստի Տղայ-Սարգիս բառը Ձէյթունցիներ  
ըր սկսան մակդիրի ձեւով գործածել և փոխանակ Սար-  
գիսի՝ կոչել Առաքելի որդին Տղայ-Սարգիս:

Տղայ-Սարգիսի հայրը երկար չապրեցաւ, Ձէյթուն  
գալէն երեք տարի յետոյ մեռաւ, թողլով Ձէյթունցի-

ներու խնամքին իր երկու որբերն ու այրի Անազունը :  
Այդ թուականներուն Չէյթուէնի մէջ դեռ վարժարան  
գոյութիւն չունէր , որպէս զի այդ որբերը վարժարան  
դրուէին : Տղայ-Սարգիս մտաւորապէս 16, 17 տարե-  
կան էր թէև , բայց Չէյթուէնի թաղերուն մէջ անգործ  
թափառելով չարութիւններ կ'ընէր և օրը մէկ տան մէջ  
կը կշտացնէր իր փորը : Տղայ Սարգիս իր ստանալու-  
թեան ու անհանդարտ բնաւորութեան վարձատրութիւնը  
չուտով ստացաւ : Օրին մէկը , Տղայ-Սարգիս թուժ ու-  
տելու ն գատակով , պարտէզներէն մէկը կը մտնէ , բայց  
հազիւ ծառը կը բարձրանայ , պարտէզին տէրը , Տա-  
րախճեան Վարդելիար , վրայ կը հասնի : Տղայ-Սարգիս  
խոյս տալու համար աճա գարանքով ինքզինք ծառէն  
վար կը նետէ , բայց սրունքէն վիրաւորուելով չկրնար  
փախչիլ , պարտէզին տէրը կ'ըսէ . չե՞ս գիտեր որ մեզ  
համար թուժը կարեւորութիւն չունի , ի՞նչ հարկ կար  
ծառէն վար նետուիլ , և ցաւելով որք Տղայ-Սարգիսի  
վրայ՝ իր տունը կը տանի և կ'սկսի խնամել : Բայց նա  
միշտ կազ մնաց յետոյ : Այդ միջոցին Գասնեցի Յով-  
հաննէս վարդապետի նախաձեռնութեամբ առաջին ան-  
գամ ըլլալով Չէյթուէնի մէջ վարժարան բացուեցաւ :  
Տարախճեան Տղայ-Սարգիսը վարժարան տանելով՝  
Յովհաննէս վարդապետի շովանաւորութեան յանձնեց :  
Յովհաննէս վարդապետ անիկա վարժարանի դռնապան  
կարգելով , սկսաւ կարգալ ալ սորկեցնել : Տղայ-Սար-  
գիս դռնապանութիւն ընելով հանդերձ մէկ տարուան  
մէջ հասարակ ընթերցանութիւնը բաւական սովբեցաւ ,  
այդ միջոցին Երուսաղէմէն Չէյթուէն դարձաւ աւխտա-  
ւորներու մէջ , Չմիւռնիացի բարեգաշտ ազգային մը  
տեսնելով Տղայ-Սարգիս ընդունակութիւնը , իրեն հետ  
տարաւ Չմիւռնիա ու այն տեղ իր պաշտպանութեան  
տակ Մեսրոպեան վարժարանը դրաւ :

Տղայ-Սարգիս Մեսրոպեան վարժարանի մէջ վեց  
տարի մնալով , Պր . Սարգիս անունով շրջանաւարտու-  
թեան վկայական կը ստանայ : Այդ միջոցին Սերաստի-  
այէն վաճառական մը գործով Չմիւռնիա կուգայ և  
այն տեղի վարժարաններու բարեկարգ վիճակէն ոգեւո-  
րուած՝ Չմիւռնիացիներէն կը խնդրէ որ Սերաստիայի

համար կարող ուսուցիչ մը ցոյց տան : Զմբուհիացիները  
կը ներկայացնեն Զէյթունցի Պր. Սարգիսը , որն իսկոյն  
Սերաստացի վաճառականին նեա կը մեկնի իր պաշտօնա-  
տեղին-Սերաստիա , ու այնտեղ ազգային վարժարանին  
մէջ հայկարանութեան ուսուցիչ կը կարգուի :

Սերաստիայի մէջ Պր. Սարգիս այլ ևս պատուելի  
Սարգիս անունով կարճ ժամանակի մէջ մեծ ժողովրդա-  
կանութիւն կը շատի , կը շիմնէ Սենեքերիմեան ընկերու-  
թիւնը , լսարաններ կը շիմնէ ու կը սկսի եռանդուն տ-  
անաբանութիւններ ընել , ուսման և գիտութեան անու-  
նով ժողովուրդն սգեւորել , և խօսուցներու մէջ պատ-  
ուելի Սարգիս առաջինն ըլլալով , առ հասարակ բոլոր  
Սերաստացիներէն և մասնաւորապէս ազգեցիկ ու հա-  
րուստ հայեւէն շատ կը սիրուի , որու շնորհով վարժա-  
րանը կը բարեկարգուի : Սարգիս պատուելի իր երկու  
պաշտօնակիցներու , Վարդան և Մանուկ պատուելիներ  
բու նեա ձեռք ձեռքի առած Սերաստիայի կրթական  
գործին մեծ զարկ մը տալով , կուտան այնպիսի շրջանա-  
ւարաներ , որոնցմէ ամանք հեռագրատան պաշտօնեայ ,  
ամանք բժիշկ , ամանք վաճառական և ամանք ալ քաջ  
հոգեւոր հովիւներ եղան հայ ժողովրդի մէջ : Սերաստի-  
այի կրթական գործի բարգաւաճումը ազգեց նաև շր-  
ջականերու վրայ , Եօզղագ և Կեսարիա , որ մինչև այն  
ատեն մտածի մէջ էին իրենց վարժարաններով և կրթ-  
թութեամբ , սերաստացիներէն օրինակ առնելով , տակաւ  
սկսան հոգ տանիլ վարժարաններու բարեկարգութեան  
վրայ :

Պատուելի Սարգիսի համբաւը հասաւ մինչև Զէյթուն :  
Զէյթունցիները լսելով որ Տլայ-Սարգիսը Պատուելի  
Սարգիս եղեր է , ուղեցին բերել Զէյթուն , ուստի բնիկ  
Զէյթունցի առաջնորդ Էօքսիւղեան Յովհաննէս եպիսկո-  
պոսը , իր մօտ կանչելով Տարախճեան Վարդեվար ազան ,  
կ'առաջարկէ որ երթայ Սերաստիա և իր որդեգիրը Զէյ-  
թուն բերէ , բացի այդ՝ մասնաւոր նամակով կը գիմնէ  
Սերաստիայի Առաջնորդ Կարապետ եպիսկոպոսին ու  
մեծամեծներուն , և Զէյթունի մէջ այդպիսի գործիչի մը  
անհրաժեշտութիւնը ցոյց տալով կը խնդրէ որ անպատ-  
ճառ պատուելի Սարգիսը Զէյթուն ուղարկեն : Այս առ-

Թիւ Տարախճեան Վարդելար աղան կ'երթայ Սերաստիա :  
Սերաստացիները՝ թէև չեն ուզեր զրկուիլ իրենց աշխոյժ  
պաշտօնայէն-պատուելի Սարգիսէն, բայց Չէյթուհի-  
ներու խնդրանքը չմերժելու համար, պատուելի Սար-  
գիսը մեծ թափօրով մինչև Գարտաշար-թէփէսի ըսուած  
տեղը բերելով՝ իր խնամակալին հետ ճանապարհ կը դը-  
նեն դէպի Չէյթուհի :

Անանիա առաքելալի տօնին օրը, Չէյթուհիները  
ամեն տարի վանք հաւաքուելով մեծ տօնախմբութիւն  
կը կատարեն : Այդ տօնի և ուրախութեան օրը, պատ-  
ուելի Սարգիս խուռն բազմութեան առջև եռանդուն և  
զգայուն ձառ մը կը խօսի, այն ճառը մեծ գոհունակու-  
թիւն կը պատճառէ բոլոր ներկայ եզօղներու, ասոր վը-  
րայ Չէյթուհիները կուզեն պատուելի Սարգիսի ուսուց-  
չութեան պաշտօն սալ Չէյթուհի վարժարանին մէջ,  
բայց եպիսկոպոսը, որը նայնպէս զգածուած էր պատ-  
ուելի Սարգիսի իմաստալից ատենարանութիւնէն, կը  
համոզէ ժողովուրդը թէ՛ ինք Չէյթուհի համար Պօլսէն  
ուրիշ ուսուցիչ բերել կուտայ, իսկ պատուելի Սարգիսը  
աւելի լաւ կ'ըլլայ՝ եթէ վարդապետ ձեռնադրեն, իս-  
կապէս, եպիսկոպոսը չնայելով որ պատուելի Սարգիսը  
կաղ էր, և կաղ մը վարդապետ ձեռնադրելը լուսաւոր-  
չական եկեղեցիի օրինաց հակառակ է, վարդապետացուէն  
քարոզչի մը անհրաժեշտ բոլոր առաւելութիւններն ի  
նկատի ունենալով՝ կը յայտնէ Չէյթուհիներուն ըսելով  
թէ, իրաւ որ կաղ մը վարդապետ ձեռնադրելը թէև մեծ  
եկեղեցիի օրինաց դէմ է, բայց այդ մեզքն ես իմ վը-  
րայ առնելով պատուելի Սարգիսը վարդապետ պիտի  
ձեռնադրեմ, այսպէսով քիչ յետոյ պատուելի Սարգիսը  
Չէյթուհի Ս. Ատուածածնայ վանքին մէջ նախ սար-  
կաւազ և ապա վարդապետ կը ձեռնադրուի Գաւիթ ա-  
նունով, 30 տարեկան հասակին մէջ :

Գաւիթ վարդապետ մէկ տարիէն ծայրագոյն իշխա-  
նութիւն տանալով Յովհաննէս եպիսկոպոսի ձեռքով,  
իրբև քարոզիչ Չէյթուհի իջաւ և առաջին քարոզը խօ-  
սեցաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցիի մէջ, որուն բնաբանն  
էր Ս. Աւետարանի հետեւեալ հատուածը «բռունք յափ-  
շտակեն զարքայութիւնն երկնից», այս բնաբանը մկկն-

ման կէտ առնելով սկսաւ խրատուել Չէյթուհիները  
ըսելով, հայրենակիցներ, քաջերն են որ կը ժառանգեն  
Աստուծոյ արքայութիւնը, եթէ պաշտպանէք կրօնք,  
ազգութիւն և հայրենիք, քաջ կ'ըլլաք և այդպէսով  
ապահով եղէք որ Աստուծոյ արքայութիւնը ձերը պիտի  
ըլլայ. եթէ դասալիք ըլլաք, օտարները կուգան սանա-  
կոխ կ'ընեն ձեր հայրենիքը, կը կործանեն ձեր եկեղեցի-  
ները, կը ջնջեն ձեր ազգայնութիւնն ու կրօնքը, որոնք  
իրարու հետ սերտ կապակցութիւն ունին: Եւ պատմու-  
թիւնէն փաստեր ու օրինակներ բերելով յայտնեց որ  
ազգ մը պահպանող այս գլխաւոր պայմանները զէնքով  
կարելի է պաշտպանել, ուրիշն տէր եղէք ձեր զէնքին  
և երբէք մի կասկածիք որ ձեր ազգութեան ու կրօնքին  
սպառնացող մը սպաննելով իր զօրք կ'երթաք, առ  
հասարակ այս ազգին և մասնաւորապէս Չէյթուհի-  
ցիին ամենաճաշատարիմ պաշտպանը զէնքն է: Օտարը  
ձեզ ու ձեր կրօնքը նախատեսելու համար կեալուք  
կ'անուանէ, բայց որպէս զի դուք կեալուք չըլլաք,  
որ անձաւատ ըսել է, պէտք է պաշտպանէք ձեր կրօնքը,  
որով հաճելի գո՞ւծ մը կատարած պիտի ըլլաք ձեր Ա-  
րարչի համար: Օտարը նախատեսելով ձեզ, նախատած  
կ'ըլլայ Աստուծոյ պատուիրանները, նախատելով Աստու-  
ծոյ պատուիրանները, նախատած կ'ըլլայ ձեր Արարիչը,  
այդպիսի պարագայի մէջ, ձեր կրօնքը, ձեր Արարիչը նա-  
խատեսելով եթէ սպանէք, մեզք գործած չէք ըլլար, այլ յա-  
նուն քրիստոնէութեան՝ մի սուրբ պարտականութիւն: Եւ  
կեանքէն ու աւետարանէն զանազան օրինակներ բերելով,  
եկաւ սաւ եզրայացութեան թէ, եթէ ձեզ կողոպտել ուզեն,  
կողոպտեցէք, եթէ ձեզ սպաննել աշխատին, ճարպիկ  
դանուեցէք՝ դուք սպաննեցէք, արքայութիւնը ձերն է,  
անա իւրջարանս: Գաւթի զարդապետ ամբողջ մէկ տարի  
մնաց Չէյթուհի և ամեն շարաթ մէկ եկեղեցիի մէջ կը  
քարոզէր: Օր առաջ իւրաքանչիւր եկեղեցիի աւագ և  
բէջները կը ծանուցանէին թէ որ եկեղեցիի մէջ քարոզ  
պիտի խօսի Գաւթի զարդապետը, այդ օրը այդ եկեղե-  
ցին խուռն բազմութեամբ կը լեցուէր, Չէյթուհի չորս  
թաղերէն բազմութիւնը կ'աճապարէր դէպի այն եկեղե-  
ցին ուր պիտի քարոզէ: Գաւթի զարդապետ: Մէկ տա-

րի յետևոյ Եպիսկոպոսը գաղափարական քարոզիչ ա-  
նունով հրաման տուաւ Բաւիթ վարդապետին որ, երկրի  
որ կողմն որ կուզէ՛ երթայ և քարոզէ հայ ժողովուր-  
դին : Այսպէսով Բաւիթ վարդապետ դարձաւ գաղա-  
փարական մի շրջուն քարոզիչ, Չէյթունի կարիճներէն  
իրեն ընկեր մը առնելով զինուած սյսաւ քաղաքէ քա-  
ղաք, գիւղէ գիւղ շրջել ու ինքնաճանաչութեան ու  
անվեհերութեան խրատոյսներով ոգեւորել հայ ժողո-  
վուրդը :

Հալէպի յայտնի քահանաներէն մին հետեւեալը կը  
պատմէ յանձին Բաւիթ վարդապետի : Ուրֆացի Յակոբ  
եպիսկոպոսի առաջնորդութեան սրով, Չատկին Բաւիթ  
վարդապետը Հալէպ եկաւ և խնդրեց որ թոյլտու-  
թիւն ընեն իրեն, որ կիրակի առաւօտեան քարոզ խո-  
սի : Առաջնորդի հրամանաւ Բաւիթ վարդապետ բեմ  
բարձրացաւ և իր քարոզն սկսաւ հետեւեալ կերպով . —  
«Նախ ձեզ և մեզ մեծ աւետիս, «Քրիստոս յարեաւ ի  
մեռելոց» : Հազար ութ հարիւր այսքան տարի է որ  
Քրիստոսի յարութեան տարեդարձի տօնը կը կատարուի  
ամբողջ քրիստոնեայ եկեղեցիներու մէջ, Քրիստոս  
յարեաւ ի մեռելոց, բայց ձեզի և մեզի ի՞նչ, Քրիստոս  
իր աստուածային զօրութիւնով յարութիւն առաւ,  
մենք հայերս հինգ հարիւր տարիներէ ի վեր կենդանի  
մեռեալ ենք, մենք ե՞րբ յարութիւն պիտի առնենք և  
մընչեւ ե՞րբ Յովնանու քունը պիտի քնանանք, մենք  
հայերս ալ պէտք է յարութիւն առնենք, և եթէ Քրիս-  
տոս իր աստուածային զօրութեամբ յարութիւն առաւ,  
մենք մեր բազկի զօրութեամբ պէտք է յարութիւն  
առնենք, և եթէ մենք այսօր կ'ուրախանանք Քրիստո-  
սի յարութիւնը տօնելով, Քրիստոս ևս պիտի ուրախա-  
նայ մեր յարութիւնը տեսնելով» :


Այս քարոզը ժողովուրդի վրայ ա՛յնքան մեծ տը-  
պաւորութիւն կը թողու և հաճելի կ'ըլլայ որ հալէպ-  
ցիները միաճայնութեամբ կը խնդրեն վարդապետէն որ  
Հալէպ մնայ, բայց Բաւիթ վարդապետ կը մերժէ, ըսե-  
լով որ հոգեւոր հայրս չթոյլատրեմ ինձ մէկ կէտի վրայ  
հաստատուիլ մնալ, իմ պաշտօնս տարբեր է, ևս պէտք  
է պտտիմ և քարոզեմ ամէն տեղ : Ժողովուրդը կ'ա-

առաջարկէ որ գոնէ պատարագ մը ընէ և քարոզ մը ևս խօսի : Գաւիթ վարդապետ ընդունելով հայէպօղոսներու այս առաջարկը, մեռելոցի օրը պատարագ կը մատուցանէ և քարոզ մը ևս կը խօսի հետեւեալ խմաստով թէ մեռելները Աստուծոյ ա՛ռարկու փողահարութեամբ յարութիւն պիտի առնեն, իսկ հայ ժողովուրդը իր հոգեւոր հովիւներու փողահարութեամբ պիտի զարթնուի իր խոր քունէն :

Ուր որ երթար Գաւիթ վարդապետ մեծ սգեւորութիւն կուտար ժողովուրդին, ամէն տեղ մեծ ընդունելութիւն կը գտնէր այդ համեստ քարոզիչը, յագնել չէր գիտեր բնառ Գաւիթ վարդապետ, մի քանի տարի Չէյթուէնի վանքը մնայէն ևաքը՝ տասնեակ տարիներ իր կեանքը ճանապարհորդութեան մէջ անցուց : Ամէն տարի կը մեկնէր և ամիսներով կը պտտէր, օրինակ Կիլիկիայի բաժնին մէջ, Փայաս, Պէյլան, Անտիոք, Սուէյաթիա, Քիլիս, Այնթապ, Ուրֆա, վերջապէս մինչեւ Սերաստիայի կուսակալութեան այլ և այլ կողմերը մինչև որ 1875ին մա՛ր վրայ հասաւ և Գաւիթ վարդապետ օտարութեան մէջ Սերաստիայի կուսակալութեան Վէլլիքքէօփրիւ գիւղաքաղաքին մէջ 47 տարեկան հասակին մէջ վախճանելով, թաղուեցաւ Վէլլիքքէօփրիւի եկեղեցիին դաւիթը : Գաւիթ վարդապետի այս անձնուէր հոգեւորականի մա՛ր մեծ սուգ պատճառեց առ հասարակ բոլոր : Չէյթուէնցիներուն և ամէն անոնց, որոնք պատկերութիւն ունեցած էին, գոնէ մի անգամ, իսկ ինքնաճանաչութեան քաղցր յորդորները : Գաւիթ վարդապետ իր ստանձնած ծանր պաշտօնէն զատ, ունէր անտիպ աշխատութիւններ : Կիլիկիայի աշխարհագրական կազմութեան վերաբերմամբ մը ուսումնասիրութիւն, որը եթէ տպուէր, մեծ օգտակարութիւն կարող է մատուցանել ներկայ սերունդին : Բայց ամսո՛ւս որ Չէյթուէնի մեծ հրդեհին Գաւիթ վարդապետի բոլոր գրութիւններն ևս այրեցան ու չքացան :

Վ Ե Ր Ձ





❁ ۲۰۲۰ ۲۰۲۰ ❁

---

دوسه ادت سلطان حمام مولاطاشي مطبعه\* واغناك س. پوراد





5186

12013

